# Անցյալից
## հեղինակ՝ Լեո

**Բովանդակություն**


Երկու խոսք
Ներածություն
Գլուխ առաջին։ 1888 – 1896 թվականներ
Գլուխ երկրորդ։ Անկում և բարձրացում
Գլուխ երրորդ։ Հաղթանակ Թուրքիայում
Գլուխ չորրորդ։ Սկիզբն անկման
Գլուխ հինգերորդ։ Համաշխարհային պատերազմ
Գլուխ վեցերորդ։ Հեղափոխություն
Գլուխ յոթերորդ։ «Անկախություններ»
Գլուխ ութերորդ։ Խորհրդայնացում
Վերջաբան


### Երկու խոսք

Այս գործի ամենագլխավոր աղբյուրը կազմում են իմ անձնական հիշողությունները։

Ես շատ ապրեցի։ Իմ ապրածների մի մասն է, որ այժմ տալիս եմ այս գրքի մեջ։ Ամենակարևոր մասը, որ իհարկե ըստ իմ հասկացողության պիտի պատմի ընթերցողիս, թե ինչպես էր, որ գրեթե կես դար առաջ Հայոց հարց ծնվեց և ինչպես էր, որ այդ հարցի հետևանքով բնաջինջ եղավ թուրքահայ ժողովուրդը և իսպառ ջնջվեց Թուրքաց Հայաստան աշխարհագրական անունը։

Ես, ուրեմն, պիտի պատմեմ մեծագույնն այն աղետներից, որոնք երբևիցե վիճակվել են հայ ժողովրդին։

Հայոց հարցը, եթե ոչ ամբողջովին, գոնե իր ամենախոշոր մասով այն սերնդի գործն էր, որին պատկանում եմ և ես։ Վերջին տարիներիս, երբ նա խորտակվում էր այնքան ահռելիորեն, ես շատ անգամ էի լսում իմ սերնդակիցներից.

— Երանի՜ նրանց, որոնք մեռան միամտության մեջ, հավատալով, թե Հայոց հարցը պիտի լուծվի հայ ժողովրդի երջանկության համար… Ինչո՞ւ ես էլ չմեռա, որ չտեսնեի այս օրը…

— Հեր օրհնված,- մտածում էի ես,- մեր կանաչ ու ալվան սարերը հո՞ սև չէին հագնի, թե դու էլ, մի թշվառ միավոր, ավելանայիր այն տասնյակ միլիոն դիակների վրա, որոնցով մարդկությունը պարարտացրեց պատերազմի Մողոքի որկորը 1914 թվականից սկսած։

Ինքս բոլորովին այդպես չէի մտածում։ Եթե մահն ինձ մոռացել է, այդ պատահականությանը ես ամենից առաջ այն եմ պարտական, որ տեսնում եմ այսօրվա օրը, երբ ամեն ինչ պարզված է վերջնականապես և անդառնալիորեն։ Իսկ այս բոլորովին անխորհուրդ մի առավելություն չէ, որ տվել է ինձ ճակատագիրը։ Ներկայումս կատարվում է և սերունդների փոփոխություն։ Մենք հեռացել ենք, մեջտեղ կանգնել են նորերը։ Այս միանգամայն բնական է և մարդկային։ Յուրաքանչյուր սերունդ իր ժամանակի տերն ու տնօրենն է. անում է այն, ինչ լավ է համարում. ստեղծագործում է այնպես, ինչպես ինքն է ըմբռնում։ Թե ինչ կասի արդեն իր դիրքերի տերը դարձած [հաջորդ] սերունդը, այդ նրա՛ գիտնալու բանն է։ Մեզ՝ հնացածներիս, մնում է մի պարտք՝ ճանաչել, հաշիվ տալ նոր սերնդին ու այդպե՛ս հեռանալ ասպարեզից։

Ահա՛, ես էլ, իբրև մի անհատ, ուզում եմ իմ պարտքը կատարել։

Կամենո՞ւմ եք դուք իմանալ մեր որպիսությունն այն ժամանակ, երբ մենք էինք տերն ու տնօրենը, երբ մենք դրություններ և հոսանքներ էինք ստեղծում և կյանքը մեր մտապատկերներին, մեր կառուցվածքներին ենթարկում։ Կամենո՞ւմ եք դուք իմանալ մեր արատներն ու առաքինությունները, մեր «Այո»-ն և «Ոչ»-ը, մեր սխալները, մեր ոճիրները։

Համեցե՛ք։

Ես կտամ ձեզ, բայց ոչ իբրև այն օրերի մարդ, որովհետև այն օրերը միայն պատրանքներ էին տալիս, միայն անորոշություններ էին ներկայացնում, այլ իբրև այսօր ապրող մարդ, որովհետև այսօր ամեն ինչ պարզ է, սոսկալի կերպով պարզ։

Այս պարզությունն ինքնըստինքյան, ինքնաբերաբար և հաղթականորեն բերել է բոլոր արժեքների վերագնահատություն, տապալել է բազմաթիվ կուռքեր, չափազանց պահանջկոտ, անխնա մի քննադատություն է նստեցրել մեր գործերի վրա, մանրացրել է մեր գործիչներին և քանդել ու տակնուվրա է արել մեր այն ժամանակվա գաղափարներն ու զգացմունքները, մեր մտածողությունն ու գեղարվեստն անգամ։

Այսօրվա այդ մեծ քննադատական կարողությունն էլ կլինի իմ միակ ղեկավարը։ Ես կտամ ձեզ ոչ թե անտարբեր ու անորոշ հիշողություններ, ո՛չ՝ դրանք այլևս ոչ մի արժեք չունեն, այլ կտամ քննական, վերլուծական հիշողություններ։

Իմ վերլուծումները խիստ են, գուցե նույնիսկ անողորմ, ես ոչ ոքի չեմ խնայել։ Այսպես է նախնառաջ այն պատճառով, որ ես ուրիշ կերպ գրել երբեք էլ չեմ իմացել, երկրորդ՝ որովհետև այսպես է պահանջում մեզ վիճակված սոսկալի դժբախտությունը, այսպես է պահանջում միլիոնավոր մորթվածների հիշատակը…

Անխնա լինենք նախնառաջ դեպի մեզ։

Խնդրում եմ ընթերցողին, որ այնպես չկարծի, իբր թե ես ինձ առանձին դիրք եմ տալիս իմ ժամանակակիցների մեջ, իբր թե՝ չսխալված, իբր թե՝ միակ խելոք և հեռուները, ապագան տեսնող։ Ո՛չ և ո՛չ։ Եթե շարժումների մեջ գործուն դեր չեմ կատարել, այդ չի նշանակում, թե ես միշտ առանձին կարծիքի և հայացքի եմ եղել։ Ամենևին։ Ընդհանրապես, մտածողության եղանակը մի է եղել ամբողջ մեր սերնդի։ Հարյուրավոր գրվածքներ ունեմ, որոնք տպված են։ Հրաժարվել նրանցից չէ կարելի։ Եվ ինչ օգուտ կլինի հրաժարվելուց։ Ավելի բարեխիղճ, ավելի ազնիվ գործ չի՞ լինի, եթե մենք բաց ու անկեղծորեն ցույց տանք մեր արածները։ Այդ արածներն անհատներինը չեն, այլ ժամանակինը, սերնդինը։

Մենք միայն հաշիվ ենք տալիս։

Ազնվությամբ կատարենք մեր հաշվետվությունը։ Մնացածը մեր գործը չէ։

Մեծ ճշմարտություններ են այսօր արձանացել պատմության հրապարակի վրա։ Նրանք դատաստան են անում։ Թող գոնե այդ դատաստանը լինի շինարար ուժն այն ահռելի իլյուզիաների մեջ, որոնց փլատակների տակ թաղված է վերջին հիսնամյակի մեր համարյա ամբողջ պատմությունը։

1924 թ., մայիս

**Ներածություն**

---

**Ա**

Ես 17 տարեկան աշակերտ էի Շուշիի քաղաքային դպրոցում, երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը (1877)։ Այս մի ահագին հիշողության դրդիչ էր, որի ուժը ես էլ զգացի ինձ վրա։ Մինչև այդ մենք ուրիշ բան էինք, հիմա պետք էր լինում ուրիշ բան դառնալ։

Ի՞նչ էինք։

Իմ ծննդավայրը՝ Շուշի քաղաքը, մեկն էր մեր չափազանց խեղճ ու խուլ գավառական անկյուններից։ Հեծնած իր բարձրաբերձ ժայռերի կատարներին, հեռու նետված կենտրոններից ու մեծ ճանապարհներից, դրսի աշխարհի հետ հաղորդակցություն պահպանելով շաբաթը երկու անգամ ստացվող փոստի միջոցով՝ նա առանձնացած, լճացած էր ինքն իր մեջ, ապրում էր իր ներքին, մանր ու ողորմուկ

շահերով։ Հայերն ու թուրքերն ապրում էին իրարից առանձնացած, իրար խորթ ու անհաղորդակից։ Խանական ժամանակների սարսափները դեռ ապրում էին հայերի մեջ։ Ընդհանուր քաղաքային հասարակական կյանք չկար և չէր կարող լինել, քանի որ հասարակություն կազմող երկու ազգությունները լցված էին իրար դեմ փոխադարձ ատելությամբ։

Մնում էր «ազգային» կյանքը։ Այս նշանակում էր եկեղեցի, որ լցնում էր հայ հասարակության ամբողջ կյանքը, մինչև, այսպես ասած, պռունկները, ներկայանում էր իբրև միակ ուժը և շարժիչը, միակ առարկան, որ լցնում էր համայնքի բոլոր մտավոր և հոգեկան պահանջները։ Հիշում եմ՝ ամեն շաբաթ երեկոյան կրկնվում էր սովորական դարձած, բայց և միշտ խոշոր ու հիասքանչ նշանակություն ունեցող դեպքը՝ առաջնորդի եկեղեցի գնալը։ Բարձրահասակ, ծերունազարդ Սարգիս եպիսկոպոսի ոսկեգույն ձին հայտնի էր ամբողջ քաղաքին և ամբողջ թեմին։ Այդ ամեհի երիվարի վրայից նա ընդունում էր աջից ու ձախից խոնարհվող բաց գլուխների ողջույնները։ Նրա առջևից, նույնպես գեղեցիկ ձիու վրա, գնում էր գավազանակիր տեր-Ավշար քահանան, իսկ ետևից հետևում էր, երրորդ ոսկեգույն ձիու վրա, առաջնորդական ձիապանը՝ Իշխան անունով։ Փողոցները, որոնք այդ գնացքի ճանապարհն էին դառնում, դղրդում էին։ Բազմությունը դուրս էր թափվում նայելու, արմանալու և իր տպավորություններն այդ օրվա և հետևյալ օրերի խոսակցության նյութ դարձնելու համար։

Գլխովին եկեղեցական մի կյանք էր տիրում աղայի և արհեստավորի տանը։ Մի իսկապես տիրացու ժողովուրդ էր ամեն օր արևի տակ ելնում «աստվածապահ» Շուշի քաղաքում։ Կային այդ ժողովրդի հակադրություններ և հակաճառություններ, անգամ կուսակցություններ, բայց այդ բոլորը՝ տերտերի, ժամի, շապիկի, խաչ-խաչվառի, քարոզի, տիրացուի ձայնեղության կամ բաղաձայնության շուրջ։ Գավառական ճահճի բորբոսնած մակերևույթին կյանքի վլվլուկ, եռուզեռ, համայնական խմբումներ, հավաքական հոգեբանություն, զանգվածային պաշտամունք երևան էին հանում միմիայն եկեղեցական թափորները, տոները, ուխտագնացությունները։ Եթե այդժամ մի Ղազանչեցոց եկեղեցի, շնորհիվ այն հանգամանքի, որ նրա ծխականներից շատերը հարուստ վաճառականներ էին Մոսկվայում, դուրս էր բերում հարուստ ու մեծագին զգեստներ, խաչեր, սաղավարտներ, սկիհներ, ոսկե աղավնիներ, այս արդեն միանգամայն բավական էր, որ ամեն մեկի ազգասիրությունը բավարարված լիներ, որ ամեն մեկն ինքն իրեն զգար երջանիկ հայ-քրիստոնյա։ Երեխաներն անգամ իրենց տներում շատ հաճախ զվարճանում էին՝ տերտերների ու տիրացուների պես զգեստավորվելով, եկեղեցական հանդեսներ ձևացնելով և, մանավանդ, տերտեր-տիրացուների երգերին անճոռնիորեն նմանակելով։

Ես էլ, ինչ ասել կուզի, այդ համատարած իրականության մի հարազատ մասնիկն էի։

Եվ ահա գալիս են անսովոր դեպքեր։ Տեղական գունդը զինվորական նվագածությամբ հեռանում է քաղաքից։ Ամենքն ասում են, և իրենք՝ զինվորներն էլ գիտեն, որ պատերազմ է պատրաստվում օսմանցու դեմ։ Պատերազմ գնացողների տեղ Ռուսաստանից գալիս են պահեստի զինվորներ, որոնց մարզում են ամեն օր։ Նահանգապետից ոստիկանությունը հրաման է ստանում կամավոր զորք կամ միլիցիա կազմել տեղացիներից։ Մեր թաղեցի մի երիտասարդ արդեն գրվել է, նոր զգեստ է ստացել, ձի է գնել։ Մի խոսքով, այն պահն է, երբ, ինչպես սովորություն է ասելը, օդի մեջ վառոդի հոտ է զգացվում։

Վառոդը մեզնից շատ հեռու տեղերում պիտի պայթեր։ Բայց այսպես էլ նա բավականաչափ ուժեղ էր, որպեսզի ինձ պես դպրոցականին էլ դուրս շպրտեր հայրենի տիրացուական ճահճից։ Հետաքրքրությունը բռնում է ինձ և իմ մի քանի ընկերներին։ Մեր աղքատության ցնցոտիներից կարողանում ենք կոպեկներ գջլել և «Тифлисский вестник» լրագրի մի ամսվա բաժանորդագինը լրացնել։ Փողը հանձնում ենք փոստին և գրում խմբագրին, թե մեր քաղաքն եկան պահեստի զինվորներ, այս ցույց է տալիս, որ պատերազմ կա, ուրեմն խնդրում ենք մեզ թերթ ուղարկել։

Եվ թերթն եկավ ու սկիզբը դրեց։ Նա մեզ կապում էր սլավոնական կոմիտեների եռանդուն պրոպագանդայով ոգևորված Ռուսաստանի հետ։ Հասարակական մեծ շարժում էր կատարվում։ Մի պաշտամունք կար ամենքի համար՝ թուրքական գազանությունների զոհ դարձած Բուլղարիան։ Եվ նա դառնում էր նաև մեր՝ Շուշիի դպրոցականներիս մի խմբի պաշտամունքը։ Իսկ ռուս զինվորը, որը գնում էր իր արյունով մեր այս պաշտամունքն անարգ ստրկությունից ազատելու, դառնում էր մեզ համար մի նվիրական հասկացողություն։

Որոտացին թնդանոթները Արփաչայի և Դունայի ափերին։ Սրանց ձայնը մեզ չի հասնում, բայց մեր ականջից չի էլ դուրս գալիս։ Օր օրի սաստկանում է հետաքրքրությունը, կլանում է հազարներին, մեզ էլ նրանց հետ։ Խոսքի ու զրույցի մեջ ավելի և ավելի սակավ են ուշադրության առարկա դառնում Նարեկն ու տերտերը, և ավելի հաճախ լսվում են «էն անօրեն Բիկոնսֆիլդը», «էն օրհնած Գլադստոնը», «էն գազան սուլթանը» և այլ այսպիսի որակումներ, որոնք ցույց են տալիս, թե մենք էլ սովորում ենք դատել, գնահատել։ Պատերազմը մեզ էլ է տալիս սեփական արժանապատվության խոշոր մղումներ։ Օր օրի վրա հնչում են հայկական անուններ՝ Տեր-Ղուկասով, Լոռիս-Մելիքով, Լազարև, Շելկովնիկով։ Մերոնք առանց զորքերի առաջնորդներ են, հաղթության հերոսներ, իրական, այսօրվա մարդիկ, որոնք գալիս են փոխարինելու հին Արտաշեսներին, Տրդատներին և այլ արխիվային հռչակավորների։ Մանավանդ հպարտ ու պարծենկոտ ենք մենք՝ շուշեցիական իրավունքով։ Մեր քաղաքից է այդ մեծահռչակ Վանջին (Օհանջանը)։ Հայրս պատմում է, որ իր հետ նա աշկերտ է եղել դերձակի խանութում, իսկ այժմ նա այլևս Վանջի չէ, այլ Լազարև՝ Դաղստանի, Ալաջայի, Կարսի հերոսը։

Այս բոլորը նշանակում էր, որ եկեղեցին իր ճիրանները հետզհետե հեռացնում էր մեր կոկորդից, թույլ էր տալիս, որ մենք շնչենք համաշխարհականության մթնոլորտով։ Երեկ մենք տիրացու ժողովուրդ էինք։ Այսօր կանչվում էինք քաղաքացի լինելու, քաղաքական դաստիարակություն ստանալու։ Ես, իհարկե, չեմ ասում, թե եկեղեցին միանգամայն կորցնում էր իր նշանակությունը։ Այն էլ մեծ բան էր, որ նա միակ ու անսահմանափակ տեր չէր մնում մեր գլխին։

Այսքան խոշոր էր ռուս-թուրքական պատերազմի գործած հեղաշրջումը։ Հասարակական դաստիարակության մեջ կատարվում էր բեկում։ Եվ այնքան ուժեղ էր ժամանակի կատարած այդ փոփոխությունը, որ մենք՝ պատանի ժամանակակիցներս անգամ, տեսնում ու զգում էինք այն։

Բ

Վերջին դասարանում էի, երբ միմյանց հաջորդել սկսեցին ռուսական մեծադղորդ հաղթությունները։ Մուխթար-փաշան ջարդվեց՝ Ալաջայի վրա կորցնելով իր զորքը. վերցվեցին Կարսը, Պլևնան։ Ռուսական բանակը հասավ Ադրիանուպոլսին, և ջախջախված Թուրքիան հաշտություն խնդրեց։ Հրճվանք էր ամեն տեղ։ Ժողովրդական երգը փառաբանում էր ռուս գեներալներին, ամենատգեղ խոսքերով վատաբանում պարտված փաշաներին։ Սան Ստեֆանոյի դաշնագիրը գրեթե աննկատ մնաց։

Բայց ահա 1878թ. մայիս ամսումն ենք։ Քննությունների ժամանակ է, ընկերներիցս մեկը բաժանորդ է գրվել «Մշակին» և ինձ տալիս է կարդալու Ռաֆֆու «Ջալալեդդինը»։ Կարդում ենք ընկերներով, հափշտակվում ենք, հուզվում։ Ի՞նչ է այս։

— Իրականությու՛ն,- պատասխանում են մեզ,- այսպիսի Թուրքահայաստան կա, այսպիսի հայ ժողովուրդ կա։ Ճար գտնված է այդ անբախտ ժողովրդի համար,- ասում են մեզ,- և այդ ճարը Սան Ստեֆանոն է՝ իր 16-րդ հոդվածով, որ դառնում է ազգային փրկության, փառք ու պարծանքի մի կոթող։

Նա թողնում է հայ իրականության վրա անջնջելի, խոր ազդեցություն, նա մի ամբողջ դարագլուխ է դառնում կյանքի մեջ։ Հայոց հարցը դրված էր պաշտոնական հողի վրա։ Թուրքահայն այլևս անտեր չէ։

Այսօր 47 տարի է անցել այն օրից, երբ ստորագրվեց 16-րդ հոդվածը։ Մի մեծ արյունոտ պատմություն է մեզ բաժանում այդ օրից։ Եվ երբ այսօր հետ ենք դարձնում մեր հայացքը՝ իմանալու համար, թե իսկապես ի՞նչ էր նա՝ այդ 16-րդ հոդվածը, որ միանգամից սրբություն սրբոց էր դառնում մի ամբողջ ժողովրդի համար, մեր առջև բացվում է այսպիսի մի պատկեր։ Հայերը խնդրում են հաղթական ռուսներից, որ նրանք շնորհ անեն իրենց, կարգադրեն նաև իրենց քաղաքական ճակատագիրը, ինչպես կարգադրում են բուլղարների և այլ քրիստոնյա ազգությունների ճակատագիրը։ Ու ռուսները թեև հաղթել են թուրքերին, բայց սաստիկ ճնշված են

եվրոպական պետությունների կողմից, որոնք չեն թողնում նրանց լայնապես օգտվել իրենց հաղթության պտուղներից։

Ռուսներին հաջողվում է միայն Կարսը, Արդահանը, Բաթումը և Հին Բայազետն առնել թուրքերի ձեռքից, բայց նրանց ցանկալի է ամբողջ թուրքական Հայաստանն ունենալ իրենց ձեռքի մեջ։ Եվ այս ձգտումը նրանք փորձում են իրագործել հայերի միջոցով։ Խաղը դիվանագիտական խիստ նուրբ կերպարանք ուներ։ Նրանք պարտավորեցնում են թուրքերին «տեղական պետքերի պահանջած բարենորոգումներ մտցնել հայաբնակ նահանգներում և պաշտպանել հայերին քրդերից և չերքեզներից»։ Այս պահանջը պատճառաբանվում էր այն հանգամանքով, որ ռուսաց զորքերի հեռանալն իրենց ժամանակավորապես գրաված վայրերից՝ կարող է անկարգություններ առաջացնել նույն այդ տեղերի հայերի և քրդերի, չերքեզների միջև։ Այսպիսով ստացվում էր, որ ռուսական զորքերը գրաված պիտի պահեն Հայաստանը մինչև բարենորոգումների իրագործումը։

Այս մի իրական երաշխիք էր 16-րդ հոդվածի իրագործման համար, բայց այստեղ հայերը, հազիվհազ մի փոքր իրավունք ստացած, զոհ գնացին միջազգային իմպերիալիզմի գիշատիչ հակումներին։ Ռուսաստանին թույլ չտալու համար, որ նա գրաված պահի այն երկր[մաս]ները, որոնք պիտի վերադարձվեին Թուրքիային, առաջ եկավ Անգլիան և հենց այդ բոպեից հանդիսացավ հայ ժողովրդի ոխերիմ թշնամի։ Նա սկսեց մարտնչել 16-րդ հոդվածի այն մասի դեմ, որ վերաբերվում էր ռուսական զորքերին. այսինքն այն հանգամանքի դեմ, որ հոդվածի իրագործման երաշխավորությունն էր ներկայանում։ Այնուհետև ի՞նչ էր մնում մեջտեղ. անորոշ ու շատ բացատրություններ վերցնող խոսքեր, տեղական կարիքների պահանջած բարենորոգումներ։ Ո՞վ պիտի բացահայտեր այդ կարիքների չափն ու բնույթը, ո՞վ պիտի լիներ բարենորոգումների պահանջատերը, և ի՞նչ միջոցներով, ի՞նչ ժամանակի մեջ պիտի գործադրվեին դրանք։ Ահա՛ թե որքան խեղճ ու աննշան բան էր 16-րդ հոդվածի տվածը։

Կ.Պոլսի հայերն այդպես էլ հասկացան դրությունը։ Ուստիև ջանքեր գործ դրին, որ կարողանան օգտվել նոր հանգամանքից, որ ստեղծվում էր քաղաքական մրցությունների հետևանքով։ Անգլիան, միացած մյուս պետությունների հետ, կարողացավ հարկադրել ռուսաց ցարին, որ նա եվրոպական կոնգրեսի վերաքննությանը ենթարկի Սան Ստեֆանոյի դաշնագիրը։ Հայերն աշխատում էին, որ այս վերաքննության ժամանակ 16-րդ հոդվածը ստանա ավելի պարզորոշ և դրական բովանդակություն։ Նրանք պահանջում էին, որ Թուրքահայաստանին տրվի ինքնավարություն, որի ծրագիրն աղերսագրերով ներկայացրին մեծ պետություններին։ Բայց այս քայլը ոչինչ արդյունք չունեցավ։ Աղերսարկուներին բարեհաճ ժպիտներ ցույց տվին. իսկ երբ բացվեց Բեռլինի կոնգրեսը, հայ պատվիրակները ներս չընդունվեցին, նրանց տված թղթերը չկարդացվեցին։ Բեռլին գնացած ազգային պատվիրակներից մեկը՝ Ստեփան Փափազյանը, թողել է մի

օրագրական հիշատակարան, որ տպվեց Փարիզի «Անահիտ» ամսագրի մեջ և ցույց է տալիս, թե որքան ողորմելի կացության մեջ էր գտնվում ազգային պատվիրակությունը՝ լքված, անօգնական։ Նա գնացել էր փշրանքներ մուրալու իմպերիալիստական գայլերի խնջույքից, ուր ամեն մեկն աշխատում էր՝ որքան կարելի է շատ բան խլել Թուրքիայի մարմնից՝ իր սեփական օգտի համար։ Հայերը կարծում էին, թե հանուն մարդասիրության աղաչանք լսեցնել կտան այդ գայլերին։

Այսքան խեղճ ու միամիտ էին առաջին անգամ քաղաքականության ասպարեզում գործել սկսած հայերը։ Նրանք գուցե և շատ բան գիտեին, բայց երբեք չկարողացան իմանալ ամենագլխավորը. այն, որ եվրոպական դիվանագիտությունը մարդասերների հրամանի տակ չի գտնվում, այլ բորսայի, կապիտալի, բանկերի հրամանի տակ։ Օրինակը բացարձակ և պարզ էր։ Բեռլինի կոնգրեսը, հեռացնելով իրենից մի ամբողջ տառապող ժողովրդի կյանքի և մահվան խնդիրը, իր սրտին մոտ էր առնում Թուրքիայի առաջարկությունը (որ նույնիսկ չէր բխում Սան Ստեֆանոյի դաշնագրից) և կարգադրում էր պարտքերի հատուցման գործը՝ Կ.Պոլսում մի հատուկ միջազգային ֆինանսական հիմնարկություն հաստատելով։ Իսկ հայ պատվիրակներին, ինչպես վկայում է Փափազյանը, մնում էր լոկ մի ելք՝ աղաչել Աստծուն, որ Սոլսբերիի, Գորչակովի և սրանց նման մարդկանց ներշնչի՝ ընդունել պատվիրակության թղթերի մեջ գրածը։

Այդպիսի հրաշք, իհարկե, չկատարվեց։

Անգլիան Բեռլին էր եկել Ռուսաստանին ջախջախելու համար և միանգամայն հասավ իր նպատակին։ Նա գաղտնի դաշնագիր էր կապել Թուրքիայի հետ և հափշտակեց նրանից Կիպրոս կղզին՝ փոխարենը խոստանալով բարենորոգումներ մտցնել ասիական Թուրքիայի բոլոր նահանգներում, անխտիր ամբողջ ազգաբնակչության համար։ Խոստում, որ պարզ խաբեբայություն էր՝ հայկական բարենորոգումները ռուսական հովանավորությունից խլելու համար։ Ռուսաստանի հետ այս կետում հաշտվելու միայն մի պայման էր առաջադրվում. այն, որ ռուսաց կառավարությունը Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածից հանի ռուսական զորքերի մասին եղած խոսքերը։ Ռուսներն անձնատուր եղան այս պահանջի մեջ էլ։ Այնուհետև նրանց համար այլևս ոչինչ հետաքրքրություն չէր ներկայացնում Հայոց հարցը, քանի որ այլևս անկարելի էր այն դարձնել Թուրքահայաստանը զինվորական գրավման մեջ պահելու միջոց։

Երբ կոնգրեսի պարապմունքների մեջ հերթը հասավ այդ օրվանից արդեն չարաբախտ 16-րդ հոդվածին, նրա ամբողջ վիճակը հանձնվեց անգլիական լիազորներին, [իսկ] ռուս պատվիրակները բավականացան մի երկու խոսքով. և Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը անգլիական խմբագրությամբ դարձավ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդված։ Սրա մեջ, իհարկե, ռուսական գրավման հնարավորություն բերող նշանախեց անգամ չմնաց։ Անփոփոխ էին թողնում «տեղական պետքերի»

պահանջած ռեֆորմները, ինչպես նաև Թուրքիայի պարտավորությունը՝ պաշտպանելու հայերին քրդերից և չերքեզներից. այսինքն՝ նախկին անորոշությունը, ռեալ բովանդակություն չներկայացնող ֆրազները, ոչինչ իրական։ Ավելացվում էր այն, որ թուրք կառավարությունը պարտավոր է իր մշակած ռեֆորմների մասին պարբերաբար հաղորդել եվրոպական մեծ պետություններին, որոնք պիտի հսկեին դրանց գործադրման վրա։

Հայ պատվիրակությունը, կուշտ աղոթելուց հետո, 16-րդ հոդվածի այս կարկատանն էր իր հետ տանում Բեռլինից Կ.Պոլիս։

Գ

Սկզբում Կ.Պոլսի հայությունը զգաստ և խելահաս վերաբերմունք ցույց տվեց Բեռլինի դաշնագրի վերաբերմամբ։ Նա հիասթափված էր, զգում էր, որ Եվրոպան իսկապես ոչինչ չի տվել հայերին, բացի մի քանի անբովանդակ ֆրազներից։ Բայց այդ զգաստությունը չափազանց կարճատև եղավ։ Լրջմիտ հեռատեսության դեմ բարձրացավ անվերապահ լավատեսությունը։ Քաղաքական ծանր հարցը՝ մի ամբողջ ժողովրդի լինել-չլինելու հարցը, ստանում էր արկածախնդրական, ռոմանտիկ գունավորումներ։ Ներսես պատրիարքը և նրա կողմնակիցները բացատրում էին հասարակությանը, թե նա հուսահատվելու ոչ մի պատճառ չունի, թե հայ ժողովրդի դատը պաշտպանված է և լավ է պաշտպանված։

Այս փաստաբանության ամենացայտուն օրինակը տալիս է «Թէ ինչ շահեցանք Պէրլինի դաշնագրէն» բրոշյուրը, որ նույն այդ միջոցին Կ.Պոլսում հրատարակեց Բեռլին գնացած պատվիրակության քարտուղար Մինաս Չերազը։ Ես հիշում եմ, թե որպիսի մանկական ոգևորությամբ էինք մենք կարդում այդ փոքրիկ տետրակն այն օրերին, երբ Հայոց հարցը դեռ խանձարուրի մեջ էր, երբ այդ գրությունն օրվա ամենախոշոր նորությունն էր։ Չերազն այդտեղ ամենափառավոր կերպով ապացուցում էր, որ մինչև Բեռլինի կոնգրեսը Հայոց հարցը գոյություն ուներ միայն երկու պետությունների՝ Ռուսաստանի և Թուրքիայի մեջ, իսկ Բեռլինի կոնգրեսում այն դարձավ եվրոպական միջազգային հարց, և հայերին պաշտպանողն այսուհետև մի հատ Ռուսաստանը չպիտի լինի, այլ ամբողջ հավաքական Եվրոպան։ Այս պատկերացումը թևավոր էր, գնաց նվաճելու բոլոր մտքերը, բազմելու ամեն մեկի բերանում։ Ուռճանում էր ազգային գոռոզությունը, հայ ժողովուրդը բարձրացնում էր իր գլուխը՝ ինչպես վայել էր ամբողջ Եվրոպայի խնամակալության և քնքուշ հոգսերի առարկա դարձած մի ժողովրդի։

Այսօր Մինաս Չերազի բրոշյուրը մի հուշարձան է քաղաքական անգրագիտության, համբակային միամտության և անուղղելի ռոմանտիզմի։ Իսկությունը, որ այն ժամանակ էլ չէր կարող անհայտ մնալ պայծառ ու հեռատես մտքերին, պիտի, ընդհակառակը, մեծ դժբախտություն համարեր, որ հայությունը

զցվում է միջազգային հարաբերությունների այն խառնարանը, որի անունն էր Արևելյան հարց։

Հայտնի էր շատերին, որ հենց այս ժամանակ էլ՝ ռուս-թուրքական պատերազմի հետ միասին, եվրոպական քաղաքականության մեջ վերջանում էր մի շրջան, որի հետ շատ խառն էր ռոմանտիզմը։ Գլադստոնն Անգլիայում և Գորչակովը Ռուսաստանում այդ տիպի դիվանագետների վերջին ներկայացուցիչներն էին։ Նոր սերունդն արդեն միմիայն իրական շահերն էր ճանաչում իբրև տեր և հրամանատար ազգերի փոխադարձ հարաբերությունների մեջ. բարոյական սկզբունքներ, արդարություն գոյություն չունեին նրա համար։ Եվրոպական կապիտալիզմն արդեն մտնում էր իր զարգացման այն շրջանի մեջ, որ կոչվում է իմպերիալիզմ։

Թուրքիան առաջվանից անհամեմատ ավելի մեծ չափերով էր դառնում այդ կապիտալիզմի հարստահարչական շահատակությունների ասպարեզ։ Մրցակցությունը կատաղի կերպարանք էր ստանում՝ կատարելապես անհնարին դարձնելով, որ մեծ կոչված պետությունների մեջ համաձայնություն կազմվի Թուրքիային վերաբերող որևէ հարցի մեջ միաբան գործելու համար։ Այս մրցությունների մեջ հայ ժողովուրդն իր դառը տանջանքներով դառնում էր առուծախի առարկա։ Եթե մեկը հայերի պաշտպան էր հանդիսանում սուլթանին վախեցնելու և նրանից շահավետ ձեռնարկություններ կորզելու համար, ապա մյուսը գնում էր սուլթանին պաշտպանելու՝ ընդդեմ այդ հայասեր դիմակավորված ախոյանի՝ իր այդ պաշտպանությունը հնչուն դրամի վերածելու համար։ Սկսած Սան Ստեֆանոյի դաշնագրի գոյության առաջին իսկ օրից՝ թուրքահայ ճորտ գյուղացիության հեծեծանքները, արյունն ու արտասուքներն առած Հայոց հարցը կանոնավոր չափով ու կշռով, հաշվապահության բոլոր կանոններով ծախվում էր եվրոպական արտաքին գործերի փառազարդ առանձնասենյակների լռիկ անկյուններում հանդարտ ու վճռականապես, ինչպես վայել էր սառնասիրտ վաճառականին։

Այս պարզ էր ամենքի համար։ Այս պարզ չէր միայն և միայն վաճառվողների համար։ Ստոր «սովդաքյարական» հաշիվներով ապրող Եվրոպան հայի համար դառնում էր մի ամբողջ մոլի պաշտամունք, մի աստվածություն, որին պետք էր հավատալ անպայման կուրությամբ, դառնում էր մի ֆետիշ, որ միայն կարող էր փրկել, ազատել, պահպանել։ Այսպես մնաց Եվրոպան ուղիղ քառասուն և հինգ տարի շարունակ և անընդհատ, մինչև որ հայի մեջ այլևս ո՛չ արյուն մնաց և ո՛չ արտասուք, որոնց կարելի լիներ ծախու հանել։ Սա մի զարհուրելի, մղձավանջային երևույթ է՝ այս համահայկական միջնադարյան կուրությունը, այս մոլեգնոտ եվրոպապաշտությունը։ Եվ այս համարվում էր (Բեռլինի կոնգրեսի օրերից) մի մեծ երջանկություն, մի նոր բախտ հայության համար։

Երբ Բեռլինում աղոթողի անճարությանը մատնված հայ պատվիրակները վերադարձան Կ.Պոլիս, սկսեցին իրենց անհաջողությունը բացատրել նրանով, որ հայերն արյուն չէին թափել, չէին ապստամբել, որ ներկայացել էին միջազգային ատյանին լոկ իբրև խնդրարկուներ, իբրև թուղթ մատուցանողներ, մինչդեռ աշխարհի կարգ է՝ ազգերն իրենց ազատությունը գնում են իրենց արյունով: Այս միտքն էլ թևավոր էր և սկսեց տարածվել արագությամբ, ժողովրդականանալ: Մանավանդ ռուսահայերն էին ուժգնությամբ փարում այս գաղափարին: Եվ ահա՛, գտնվա՛ծ էր Հայոց հարցի լուծման միջոցը՝ Եվրոպա և ապստամբություն: Միայն և միայն: Մի դեղատոմս, որ ամենայն փութաջանությամբ գործադրվեց, մինչև որ Հայաստանում այլևս հայ չմնաց:

Շատ հետաքրքրական է իմանալ, թե իրենք՝ հայերն ինչ տեսակ էին հասկանում իրենց պարգևված «տեղական պետքերին համապատասխանող ռեֆորմներ» դարձվածքի իմաստը: Եթե Աբդուլ-Համիդ սուլթանը մի մարդախոշոշ գազան չլիներ, այլ կիրառեր շինարար և խաղաղարար մի սկզբունք, և եթե նա կարողանար իր վարչական մեքենան այնքան բարեկարգել ասիական նահանգներում, որ հայերը հանգիստ ու ապահով ապրելու շատ հնարավորություններ ստանային, արդյո՞ք այսքանով սպառված կլինեին «տեղական պետքերը»: Ո՛չ: Հայ ազգային գործիչների ցանկությունը տեղական համեստ պետքերից ավելի հեռուն էր գնում:

Ահա նույն Մինաս Չերազը 1879թ. հրատարակած իր «Հայաստան և Իտալիա» բրոշյուրի մեջ պատմում է, որ Հռոմում ինքը, իբրև հայ պատվիրակության քարտուղար, գնաց իտալական արտաքին գործերի մինիստր կոմս Կորտիին ներկայանալու, բայց ստիպված եղավ երկար սպասել նախասենյակում: Այս սպասողական ձանձրույթը հենց այդտեղ՝ նախասենյակում, երիտասարդ և նորաթուխ հայ դիվանագետը փարատում է նրանով, թե մի օր էլ իտալական դեսպանը Հայաստանի արտաքին գործերի մինիստրի նախասենյակում այսքան երկար կնստի՝ սպասելով, թե երբ ինքը ներս կընդունվի: Այս պարզապես ցույց է տալիս, թե հայերը սկզբից ևեթ՝ Սան Ստեֆանոյի օրերից, կարծում էին, թե իրենք այնքան շատ բան էին ստացել, որ կարող էին անկախ Հայաստան ստեղծել:

Հարցն իհարկե գաղափարը չէ, որ չի կարող մերժվել որևէ ճկուն և կեղեքվող ժողովրդի: Հանցանք չէր, եթե հայն անկախություն երազեր այնպիսի մի ժամանակ, երբ նրա աչքի առջև կազմվում էր մի բուլղարական կիսանկախ իշխանություն, և մի շարք կիսանկախ պետություններ (Ռումինիա, Սերբիա) կատարյալ անկախություն էին ստանում: Ամբողջ հարցն այն է, որ հայերը չէին կշռադատում իրենց ձեռքին եղած միջոցները, իրենց ժողովրդի կացությունը Հայաստանի խորքերում և իրենց ստացած խոստումների իսկական արժեքը: Եվ ստեղծվում էր ողբերգական հակասություն. հայերի համար «տեղական պետքերը» առնվազն վարչական ինքնավարությունն էր, որի հետևում, անշուշտ, կանգնած էր անկախությունը, մինչդեռ թուրքերի համար այդ

«պետքերն» ամենաշատը պիտի նշանակեին վարչական-ոստիկանական վերակազմություններ, որոնց անհրաժեշտությունը նրանք ընդունում էին, բայց ասում էին, թե փող չունեն այդպիսի ռեֆորմներ իրագործելու համար։

Դ

Պատերազմից հետո կյանքը Շուշի քաղաքում միանգամայն կերպարանափոխվում էր։ Մի արտասովոր կենդանություն և աշխուժություն էր մտնում։ Որքան էլ որ հեռու էր պատերազմական դաշտը, բայց քիչ չէր այն շուշեցիների թիվը, որոնք դրամ էին աշխատել՝ այս կամ այն կերպ մասնակից լինելով պատերազմի հետ կապված առևտրին։ Բայց միայն այդ չէր շուշեցու բարօրությունն ավելացնողը։ Կար ավելի ուժեղ ու հորդառատ աղբյուր՝ արդյունագործական Բաքուն, որ օր օրի վրա հռչակվում էր իր նավթային հարստություններով և շարունակ իրեն էր քաշում գավառներն ու առանձնապես Շուշիին։ Արդեն անուն էին հանել շատ շուշեցի դրամատերեր, և այս հանգամանքն ավելի էր սաստկացնում հոսանքն այդ քաղաքից դեպի Ապշերոնի նավթահորերը։ Միայն քաղաքը չէր այդպես հեղաշրջված. գյուղը բռնել էր իր քայքայման ճամփան և մարդկային հորձանքներ էր ուղարկում Բաքու։ Այդ զանգվածների մեծագույն մասն, իհարկե, սև աշխատանքի մեջ էր խրվում, դառնում բանվորություն։ Բայց քիչ չէին և այնպիսի անհատները, որոնք «մարդ էին դառնում», այսինքն՝ հարստություն էին ձեռք բերում, մանր խանութպաններից բարձրանում էին մինչև արդյունաբերող-կապիտալիստ «ապերների» պատվավոր դիրքը։

Այս արդյունաբերական շարժումները շարժում էին և Շուշիի ճահիճը։ Շռայլությունը, մեծամեծ կոչունքները, անընդհատ բացօթյա քեֆերը վկայում էին, որ այս քաղաքում կուտակումներ են գոյանում։ Երգն ու նվագածությունն ամեն կողմ էր. Շուշին ասիական երաժշտության ամենանշանավոր կենտրոնն էր դառնում։ Եվ այս հռչակը ստեղծողներն էին թե՛ հայերը և թե՛ թուրքերը, որոնց սերտ գործակցության մեջ միացնում էր արվեստը։

Ես չեմ կարող ասել, թե այսքանով էլ սպառվում էր իմ հայրենի քաղաքի վերակենդանությունը։ Հզոր թափով առաջ սլացող արդյունաբերությունը կատարելագործված հաղորդակցություն էր բերում, և երկաթուղին Թիֆլիսից դեպի Բաքու էր ձգվում։ Կուլտուրական զարթնումի, հասարակական բարձրացած տրամադրության մթնոլորտ էր ծավալվում Ռուսաստանում և Կովկասում։ Եվ ահա, մեր գավառական խուլ անկյունն էլ նույն այդ խոշոր շարժման մեջ էր մտցվում։ Գործունյա, առաջավոր երիտասարդություն էր խմբվել Շուշիում՝ գլխավորապես թեմական դպրոցի շուրջը։ Նոր ժամանակ էր սկսվել։ Ամենից առաջ այդ ժամանակը խոսում էր տեղական մի հատիկ տպարանի միջոցով։ Շուշիում առաջ էլ կար տպարան, բայց հրատարակվում էին Սաղմոս, ժամգրքեր, Ավետարան։ Իսկ ա՞յժմ։ [Այժմ] տպվում էին [Ջոն] Դրեպերի թարգմանությունը, Ալֆոնս Դոդեի, [Հենրիկ] Սենկևիչի հայրենասիրական վեպիկները։

Ինձ այդ տպարանում սրբագրողի պաշտոն տրվեց, և ես այդտեղ է, որ շփվեցի գործող երիտասարդության հետ։ Եվ մի օր իմ առջև է դրվում մի խոշոր հատորի սրբագրություն։ Դա Ռաֆֆու «Խենթն» է, որ նոր է տպվել «Մշակի» մեջ և այժմ արտատպվում է առանձին գրքով։ Շատերն էին կարդացել «Մշակի» մեջ, չէինք կարդացել միայն շարող գրաշարը և ես՝ սրբագրողս։ Բայց շատ շատերը կան, որոնք մեր երկուսիս ետևից պիտի կարդան։ Զմայլված էինք. ո՛չ, ավելի ճիշտն ասեմ, կախարդված էինք երկուսս էլ։ Քանի-քանի անգամ կարդացի, վեց թե յոթն անգամ, և դարձյալ չէի կշտանում։ Գիրքը դուրս թողնվեց տպարանից և հալվեց, սպառվեց մի քանի շաբաթվա ընթացքում։ Սա մի անսովոր հայերեն գիրք էր։ Երբեք և ոչ մի հայերեն գիրք այդպիսի համատարած չափերով, այդքան խոր կերպով դյութիչ ազդեցություն չէր գործել հայ մտքի վրա։ Ծնվում էր նոր շարժիչը՝ հայդուկային գրականությունը։

Այս դեռ վեպն էր։ Իսկ Գամառ-Քաթիպան իր երգերո՞վ։ Շուշի եկավ Պետրոս Ադամյանը։ Ես բախտ եմ ունեցել տեսնելու նրա «Համլետը»։ Բայց կարող եմ վկայել, որ Համլետ-Ադամյանն այնպիսի տպավորություն չթողեց հանդիսականների վրա Համբարձում-աղայի թատրոնական դահլիճում, ինչպիսին թողեց մյուս օրը կլուբի դահլիճում, երբ դուրս եկավ երկար, սև սերթուկ հագած Ադամյանը և արտասանեց Գամառ-Քաթիպայի մի քանի ոտանավորները։ Մինչ այժմ էլ թվում է, թե պահել եմ ականջներիս մեջ մեծ արվեստագետի շեշտերն ու հնչյունները.

Տու՛ր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուլները, արձակեմ,
Եվ այդ թուլիկ աջիդ մեջը մի պողպատե սուր դնեմ,
Ստրուկ գնա՛ արյան դաշտը, վերադարձի՛ր ազատված…

Կամ թե՝

Հազիվ լըրացավ քսան և մեկ տարիս,
Աղվամազ բըսավ երես ու ծնոտիս…
Տվե՛ք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետինեն հանեմ,
Սուր ակռաներովս երկաթ կը ծամեմ,
Մեջըս այդքան ուժ, ասեք՝ ի՞նչ անեմ…

Հայկական սնապարծությունը կամ, ինչպես ասում են երևանցիք, լոպպազությունը, լեռնացել էր Մասիսի չափ։ Գրիգոր Արծրունին՝ հայ լիբերալիզմի փայլուն ներկայացուցիչը, ազգային շովինիզմը հասցրել էր կոչման աստիճանին։ Նա առաջարկում էր, որ հայերը կուլտուրապես ձուլեն իրենց հետ [տարածաշրջանի] մյուս բոլոր ազգություններին, մանավանդ թուրքերին և քրդերին։ Բոլոր ոչ հայ ազգություններին խորհուրդ էր տալիս դեն ձգել իրենց մայրենի լեզուն և ընդգրկել հայերենը, ինչպես ավելի բարձր կուլտուրական հատկություններ ունեցող մի լեզու. թուրքերին խորհուրդ էր տալիս թողնել արաբական անհարմար այբուբենը և

գործածել հայերեն տառերը։ Թուրք լրագրերն աղմուկ էին բարձրացնում այս տեսակ հայտարարությունների դեմ՝ ասելով, թե հայերը բուլղարներից էլ վտանգավոր թշնամիներ են, որովհետև բուլղարները զենքով էին ապստամբում թուրքերի դեմ, իսկ հայերն առանց զենքի են գործում՝ աշխատելով զրկել թուրքերին ու քրդերին իրենց կրոնից ու լեզվից և այդպես կուլ տալ նրանց։

Հայդուկային գրականության հետ դեպի իրենց էին քաշում և այն դեպքերը, որոնք տեղի էին ունենում Թուրքահայաստանում։ 1880-ի ամռանը Վասպուրականում ընդհարում պատահեց հայ գյուղացիների և քրդերի միջև։ Հայերը քաջաբար դիմադրեցին քրդական հարձակմանը և կռվի մեջ 70 հոգի սպանեցին քրդերից։ Այս դեպքն անչափ ուռճացվեց «Մշակի» էջերում և ստացավ մի մեծ ապստամբական շարժման կերպարանք։ Հայերը որպես թե կռվում էին նեստորական ասորիների հետ միացած։ Իգդիրից ստացված մի հեռագիր հայտնում էր, թե ապստամբներն արդեն տիրացել են Վանի բերդին։ Մինչդեռ իրականության մեջ ոչ միայն այդպիսի բան չկար, այլ, ընդհակառակը, սկսվել էր չափազանց վտանգավոր մի քրդական շարժում, որ միացրել էր առանձին, նույնիսկ իրար թշնամի ցեղերին՝ միացյալ ուժերով ընդհանուր արշավանքներ վարելու համար։ Շարժումը դեռ բացորոշ հակահայկական կերպարանք չուներ, բայց թուրքաց կառավարությունն ամեն կերպ աշխատում էր, որ շարժումն ստանա այդտեսակ ուղղություն։

Այս շարժումների և մեծամեծ խմորումների միջոցին էր՝ 1880-ի ապրիլին, որ Անգլիայում պառլամենտական ընտրությունների ժամանակ հաղթություն տարավ ազատամիտների կուսակցությունը, և Գլադստոնը կառավարության գլուխ անցավ։ Այս մի խոշոր հաղթանակ էր համարվում և հայերի համար։ Պահպանողական կուսակցությունը գործել էր իբրև հայերի ոխերիմ թշնամի՝ սկսած Սան Ստեֆանոյից, և հասցրել էր իր այդ վարմունքն այն աստիճանին, որ իր պաշտոնական հարաբերությունների մեջ ջնջել էր անգամ «Հայաստան» անունը և փոխարինել «Քուրդիստան» անունով՝ ահագին հուզմունք և անբավականություն պատճառելով Կ.Պոլսի հայությանը։ Այժմ չկար այդ թուրքամոլ կուսակցությունը, այժմ Գլադստոնն էր՝ այդ «մարդասեր մեծ ծերունին», Անգլիայի ղեկավարը, և նրա գործողություններն առաջ ու առաջ Հայոց հարցի լուծմանն են նվիրվելու։

Եվ իրավ, ամռանը Գլադստոնը համաձայնություն է կայացնում մյուս մեծ պետությունների հետ, և Կ.Պոլսի վեց դեսպանները, ցույց տալով այն սկզբունքները, որոնց վրա հիմնված պիտի լինի այդ բարենորոգումը, հավաքական մի հուշագրով պահանջում են թուրքաց կառավարությունից անհապաղ իրագործել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը։ Թուրքաց կառավարությունն իր սովորական եղանակով պատասխանեց այդ պահանջին՝ ձգձգումների եղանակով։ Տեղի ունեցան դիվանագիտական գրագրություններ, և ի վերջո սուլթանի կառավարությունը մերժեց մեծ պետությունների հավաքական պահանջը՝ իր համար հիմք բռնելով այն հանգամանքը, որ հայերն ասիական Թուրքիայի ոչ մի կողմում ազգաբնակչության

մեծամասնություն չեն կազմում։ Այսքանով էլ վերջացավ Գլադստոնի միջամտությունը։ Եվ երևան եկավ դառն իրողությունը. այն, որ Անգլիան բարյացակամ, գրեթե հայասեր կուսակցության կառավարության ժամանակ էլ մնում էր նույն գիշատիչ, խորամանկ Ալբիոնը։

«Մեծ մարդասերն» իր այս կիսատ գործով ավելի մեծ վնաս էր հասցնում հայերին, քան նույնիսկ պահպանողական մինիստրությունն իր բացարձակ թուրքամոլությամբ, որովհետև Գլադստոնի քայլը թուրքերին սաստիկ գրգռում էր հայերի դեմ, իսկ վերջիններիս մեջ չափազանցրած ակնկալություններ արծարծում եվրոպական միջամտության նկատմամբ՝ այսպիսով ավելացնելով կռվելու և պահանջելու համառ վճռականությունը։ Այս պատճառաբանությունը, որով ամրապնդել էր թուրք կառավարությունն իր մերժողական պատասխանը, այն է՝ հայ ժողովրդի փոքրամասնություն կազմելը, դառնում էր այն մշտական և անխախտ կռվանը, որի վրա հենվելով՝ թուրքերը պիտի ազատություն սպասեին Հայոց հարցի պատճառած ցավից։ Պակասեցնել հայերի թիվը ոչ միայն թղթի վրա, այլև իրականության մեջ. սա դառնում էր մի քաղաքական սիստեմ, որ թուրք կառավարությունը ծրագրում էր իրագործել քրդերի ձեռքով։

Թուրքիան երկու ձեռքով բռնեց 1880-ին ծայր տված քրդական շարժումից։ Կ.Պոլսի թուրք մամուլը հրճվանքի մեջ էր. Եվրոպային սպառնում էր քրդական շարժումով։ Եվ բոլորովին հարկավոր չհամարելով որևէ գաղտնապահություն՝ բացարձակ կերպով հայտարարում էր, թե Թուրքիան 61-րդ հոդվածը կոչնչացնի քրդերի նիզակներով, թե հայերը պիտի լռեն, իրենց համար առանձին պահանջներ չպիտի անեն, ապա թե ոչ՝ նրանց դեմ կկանգնեցվի ամբողջ միացած քրդությունը։ Հայերն, իհարկե, կարդում էին թուրք կառավարության ներշնչումներով շաղախված այս ահավոր սպառնալիքները… Ոչ միայն կարդում էին, այլև հայ լրագրերը վիճում էին թուրք լրագրերի հետ։ Գոյություն ստացավ մի երկարատև և կրքոտ բանավեճ, որ այսօր էլ վկայում է, թե որքան միամիտ ու անպատրաստ էին հայերն այս վերին աստիճանի լուրջ կենսական հարցի մեջ։ Հայ-թուրքական հարաբերությունների մեջ առաջնակարգ և վճռական դեր էր հատկացվում քրդերին։ Թուրք պաշտոնյաներն անդադար պրոպագանդա էին մղում նրանց մեջ՝ գրգռելով նրանց կատաղի ատելությունը հայերի դեմ։ Հայկական հարցը բացատրվում էր նրանց այն մտքով, թե հայերն ուզում են իրենց համար թագավորություն ստեղծել ու ստրկացնել քրդերին, թե այս վտանգից ազատվելու մի ճանապարհ միայն ունեն քրդերը՝ կոտորել հայերին։

Այս հանգամանքը թաքուն չէր մնում հայ ղեկավարող մտավորականությունից։ Տեսնում էին քրդության լեռնացող վտանգը՝ իբրև գործիք թուրք կառավարության ձեռքին, բայց ի՞նչ էին անում։ Երբեմն լսվում էին նրանց միջից ձայներ, թե հայերը կռպիտ, զինական կռիվ չպիտի մղեն քրդերի դեմ, այլ պիտի նրանց վրա ներգործեն կուլտուրական միջոցներով, պիտի դաստիարակեն նրանց, ուսում տարածեն նրանց մեջ։ Սա, իհարկե, ուժեղ և էական միջոցն էր քրդերին չեզոքացնելու համար։ Բայց

ցավն այն էր, որ հայ ազգայնականները հայ-քրդական բարեկամությունն այն մտքով չէին հասկանում, թե երկու դարավոր դրացի ազգերը համահավասար անդամներ պիտի լինեն այդ մերձեցման մեջ, թե պիտի հարգվեն ազգային առանձնահատուկ արժեքները։

Ո՛չ, քրդերին ուզում էին ենթարկել հայկական կուլտուրային՝ նրանց այս միջոցով ապազգայնացնելու, հայերի հետ ձուլելու համար։ Այս խոսքերը խոսք էլ մնացին։ Ոչինչ գործ չկազմակերպվեց։ Քրդությունը թուրք կառավարությանն էր պատկանում։ Իսկ հայերն այս ահեղ օյինի դեմ հանում էին միևնույն խղճուկ միջոցները՝ դիմում Եվրոպային և հայդուկային կռիվ։ 1880-ին Վանի առաջնորդ Խրիմյան Մկրտիչ արքեպիսկոպոսն անգլիական հյուպատոսին ուղարկած իր նամակի մեջ ասում էր, թե այժմ այլևս ոչ մի կասկած չկա, որ Հայկական հարցի հետ բարձրանում է քրդական հարցը, որ կառավարության խրախուսանքներով ձուլվում է մի քրդական ընդհանուր շարժում՝ ընդդեմ հայերի։

Այս թուղթը՝ հուսահատական մի ճիչ, արժանանում էր միայն անգլիական «Կապույտ գրքի» մեջ տպվելու պատվին։ Մի հանգամանք, որն իհարկե չէր ազատում գավառական թշվառ և անզեն հայությանը մինչև ատամները զինված քրդության դեմ հանդիման կանգնած լինելու դժբախտությունից։

Հայ ղեկավարող մտավորականությունն, այսպիսով, չէր կարող արդարանալ անգիտությամբ։ Ամեն ինչ կատարվել էր օրը ցերեկով, բացահայտորեն, նրա աչքերի առջև։ Թուրք մամուլի սպառնալիքները հայտնվում էին իբրև կառավարական հաղթանակող ծրագիր։ Ոչինչ խրատ չէր վերցվում այս խոշոր հանգամանքից, որ ապագա էր ցույց տալիս, զգաստություն էր հրահանգում։

Ու բացվում էր մի այսպիսի հանդիսարան։ Քուրդիստանի և Հայաստանի լեռներից առաջ էին քաշվում, շարժման մեջ էին դրվում Քսենոփոնի ժամանակներից իրենց քաջությամբ, կռվարարությամբ ու գիշատիչ հակումներով քաջածանոթ կիսավայրենի ցեղեր՝ ոգևորված թալանելու և կոտորելու կատարյալ ազատությամբ։ Իսկ նրանց դեմ հանդիման հյուսիսից ու արևելքից գնում էին հատուկտոր մարդիկ, մեծագույն մասամբ պատանիներ՝ հաճախ ոչ միայն առանց զենքի, այլև առանց մի կտոր հացի իրենց մախաղում։

Ովքեր էին դրանք։ «Խենթը» կարդացողներ, ամեն օր հանդիսավորապես «Ձեռքերս կապած, ոտքերս շղթա, Եվրոպան կասե՝ հե՞ր չելաք ոտքի» արտասանողները և երգողները։ Վեպը և ոտանավորը խենթացնում էին մարդկանց, սար ու ձոր գցում։ Ամենից առաջ «Խենթը» շարող գրաշարն էր, որ ինձ խոստովանաբար ասաց, թե գնում է, և ուրիշ գնացողներ էլ կան։ Եվ իրավ, նա գնաց։ Ձմեռվա մի շատ ցուրտ գիշեր, ժամը 2-ին ես տուն էի գնում մի կոչունքից։ Շուկայի հրապարակում մեծ խարույկ էր վառված և նրա առջև իմ լավ ծանոթ գիշերապահն էր նստած՝ ձեռքին մի գիրք։ Մոտենում եմ, բարևում, նա հազիվ է կարողանում կտրվել

գրքից և ինձ ասում է՝ ցույց տալով «Խենթը». «Ա՜յ գրիք… Երեք ժամ է՝ կարդում եմ, և այնքան հափշտակված եմ, որ չեմ կարողանում վեր կենալ, իմ շրջայցը կատարել, ո՜վ գիտե, գուցե արդեն գողերը կոտրատել են խանութների դռները»։ Վեր կացավ, քայլեց ինձ հետ։ Նա ուզում էր Վարդան դառնալ՝ Ռաֆֆու հերոսը։ Եվ մի քանի օր անց գիշերապահի չաղ խարույկի առջևից անհայտացել էր մեր Արությունը։ Նա էլ գնաց։

Այս, եթե կուզեք, կարելի էր անվանել շարժում։ Բայց այն կազմակերպված չէր, չուներ ղեկավարներ։ Տանողները միայն գրքերն էին, Ռաֆֆին, Գամառ-Քաթիպան, մասամբ և Գրիգոր Արծրունին։ Ամբողջովին մի գրքային հեղափոխություն։ Հարցնեիր գնացողին, նա ո՛չ ճանապարհ գիտեր, ո՛չ ուղղություն։ Նրա ուղեղի մեջ միայն մի դրություն էր տեղավորվում. կա սահմանված մի բան՝ հասնել այդ բանին, անցնել նրա մյուս կողմը։ Հետո՞։ Այս հետոն արդեն շատ էր մութ։ Շատերը, ո՞վ գիտե, գուցե այն հավատին էին, թե գնում են «Խենթի» ծերունի Խաչոյի մոտ ձվածեղ ու գոմեշի մածուն ուտելու, մինչև որ կգա «արյունածարավ, գոված Եվրոպը» և Վարդանի երազը կդառնա օրվա փաստ։

Սո՜ւրբ որգևորություն՝ ասում էին այն ժամանակները։ Սուրբ երեխայությու՛ն՝ պիտի ասեն հետագա ժամանակները։

Ես իմ փորձով վկայում եմ, որ այդ իսկապես երեխաների ոգևորություն էր։ Ես և ինձ պես հարյուրավորները՝ հասակով էլ երեխաներ էինք։ Բայց ի՞նչ կասեք նրանց մասին, որոնց մեղք կլիներ երեխա անվանել, որոնք մազով-միրուքով մարդիկ էին և մեզանից երկու, գուցե և երեք անգամ ավելի էին մեր մոլորակի հետ պտույտներ արել արեգակի շուրջը։ Երեխայությունը հասակի խնդիր չէ. լինում են սպիտակահեր երեխաներ։ Երեխայության դրությունը միայն անհատներին չէ հատուկ։ Լինում է և հավաքական, զանգվածային երեխայություն։ Այս դրության մեջ հայ ժողովուրդը խարխափեց ամբողջ քառասուն և հինգ տարի՝ չկարողանալով ճանաչել աշխարհի չարն ու բարին։

1880-ական թվականների գլադստոնյան փորձը պետք է լավ խրատած լիներ հայկական երեխայությանը՝ պարզ ցույց տալով նրան, որ Անգլիան Անգլիա է, և ոչ մի նշանակություն չունի, թե ով է այսօր նրա առաջին մարդը. Գլադստոն, Սոլսբերի, Բիկոնսֆիլդ, որոնք անուններ են՝ փոփոխական, հեղհեղուկ, անկայուն։ Անփոփոխն անգլիական արշինն է, և նրան ծառա ու սպասավոր են ամենքը, անգամ «մարդասերները». մեծ լինեն նրանք, թե փոքր, միևնույն է։ Գլադստոնը 1880-ին բոլորովին հայ ազգի գեղեցիկ աչքերի պատճառով չէր Հայկական հարցը դիվանագիտական գրագրության առարկա դարձնում։ Անգլիական իմպերիալիզմն այդ միջոցին պատրաստվում էր հափշտակել Եգիպտոսը և սուլթանին վախեցնելու, նրա բերանը կապելու համար էր շահագործում դժբախտ 61-րդ հոդվածը, ինչպես նաև մի քանի այլ հարցեր, որոնք վեճի տակ էին Բեռլինի կոնգրեսից ի վեր։ Հազիվ մի քայլ արած՝ Գլադստոնը ետ քաշվեց, լքեց իր ձեռնարկումը՝ ասելով, թե մյուս

պետությունները համաձայն չեն հարկադրական միջոցներ ձեռք առնել Թուրքիայի դեմ, իսկ Անգլիան միայնակ չի կարող ոչինչ անել։ Սրանով «մեծ մարդասերը» իմաստության դասեր էր տալիս սուլթան Համիդին՝ հավատացնելով սրան, որ Հայկական հարցի շրջանում եվրոպական համաձայնություն չի կարող գոյանալ, և որ նա կարող է իրեն ազատ զգալ։

Բայց ճի՞շտ էր արդյոք, թե Անգլիան միայնակ գործել չէր կարող։ Ճիշտ չէ՛ր։ Անգլիան առանց մի րոպե տատանվելու՝ միայնակ գործողություններ կարող էր կատարել, եթե միայն այդպես պահանջեին անգլիական կապիտալիստների շահերը։ Եվ իրավ, Հայոց հարցի մեջ հապճեպ փախուստի մատնված Գլադստոնը քիչ անց անգլիական նավատորմը կանգնեցրեց Ալեքսանդրիայի առաջ և «մարդասիրաբար» ռմբակոծեց այդ մեծ ու հռչակավոր նավահանգիստը, հափշտակեց Եգիպտոսը։

Պարզ է և հստակ։ Հայկական հարցի մեջ Գլադստոնի վարմունքը բացարձակ թշնամական և աղետաբեր էր հայ ժողովրդի [համար]։ Հայ-թուրքական հարաբերությունները անհաշտ-թշնամական են դառնում հենց 1880-ի դեսպանական հավաքական հուշագրից հետո։ Այդ ժամանակ է, որ որոշվում է թուրքահայության վիճակը՝ բնաջնջում։ Բազմահռչակ անգլիական պետական գործիչը բնավ էլ չէր մտածում այս մասին, երբ փախուստի էր դիմում թուրք դիվանագետների առջև։ Իսկ հայե՞րը։ Հասկացա՞ն նրանք անգլիական «հայասիրության» իսկական արժեքը։ Հասկացա՞ն, թե ինչ է Գլադստոնը։

Չհասկացան։ Գլադստոնը նրանց համար մնաց դարձյալ «մեծ մարդ», «հայասեր»։ Ահա նա կհեռանա մինիստրական պաշտոնից, կդառնա մասնավոր մարդ և պառլամենտի նիստերում ու միտինգների մեջ քար ու երկաթ կաղա Թուրքիայի գլխին, անեծք կկարդա, հայ ժողովրդի պաշտպանությունը կպահանջի անպատասխանատու ճառերի մեջ. և այսքանը բավական կլինի հայ երեխայությանը համոզելու համար, թե հենց այս ճառերով էլ Հայկական հարցը լուծված կլինի։ Բայց ոչինչ և ոչ մի բան չէր լուծվում։ Լոնդոնը Լոնդոն էր մնում՝ համաշխարհային գիշատիչ բանկ, իսկ Մուշի դաշտը լլկանքների, լացի և աղետի դասական հայրենիք։

1880-ի հուշագրերից հետո հայկական հարցը եվրոպական դիվանա

գիտության կողմից մատնվեց կատարյալ մոռացության։ Ի՞նչ անեին հայ գործիչները, որ լավ լիներ։ Նրանք զբաղվեցին մի հոգսով, այն է՝ աշխատեցին չլռեցնել Հայկական հարցը, աշխատեցին հիշեցնել «արյունաճարավ, գոված Եվրոպին», թե հայեր կան, Հայոց հարց կա։ Դիվանագիտական ճանապարհի վրա պարտված հայերը աշխատեցին հետզհետե ամրանալ հայդուկային հեղափոխության ճանապարհի վրա։

Այս հեղափոխությունն առաջին անգամ կազմակերպված շարժման շավիղը մտավ 1881 թվականի երկրորդ կեսից, երբ Էրզրումի մեջ գոյություն ստացավ «Պաշտպան Հայրենյաց» անունով գաղտնի ընկերությունը։ Այստեղ մենք

ռուսահայերին միացած ենք տեսնում թուրքահայերի հետ։ Էրզրումում զինանոց շինվեց, տարածվեցին անդամագրման տոմսակներ։ Ռուսահայերից Էրզրում գնաց, գաղտնի ընկերության հետ սերտ հարաբերություններ սկսեց այժմ գործերից քաշված ծերունազարդ բժշկապետ Բագրատ Նավասարդյանը։

Ե

Եթե կար մի նպաստավոր հանգամանք, որ հովանավորում էր Հայոց հարցի առաջին խանձարուրային 3-4 տարիները, այդ այն համեմատական ազատությունն էր, որ գոյություն ուներ ոչ միայն Ռուսաստանում, այլև Թուրքիայում։ Հայոց մամուլը Կ.Պոլսում և Զմյուռնիայում ազատ քննում էր հայ ժողովրդի անտանելի դրությունն ասիական գավառներում և պաշտպանում էր 61-րդ հոդվածը։ Իսկ Ռուսաստանի մասին ավելորդ է խոսքն անգամ։ Այստեղի հայության համար թուրքահայերի հարցը դարձել էր սեփական հարց, ամենաբարձր, նվիրական մտածմունքը, որ հետ էր մղել բոլոր մյուս հարցերը և լայն ժողովրդականություն էր ստացել բոլոր խավերի մեջ։ 1879-1880թթ. սով էր Թուրքահայաստանում։ Առաջին անգամ էր, որ այս առիթով հայ ժողովրդի մեջ երևան եկավ հասարակական ինքնօգնության լայն կազմակերպում։ Կ.Պոլսում կազմված «Սովելոց հանձնաժողովը» դրված էր եվրոպական դեսպանների հովանավորության տակ։ Ռուսաստանի բոլոր հայաբնակ անկյուններում ժողովարարություն կատարվեց, և առաջին անգամ հանդես եկավ նոր ժամանակների մեծ ուժը՝ խոշոր գումարներ՝ կազմված ժողովրդական կոպեկներից։ Սովալլուկ թուրքահայն առաջին անգամն էր իր բազմադարյան կյանքի մեջ օգնություն ստանում դրսի աշխարհից։ Սա ցույց էր տալիս, որ նա իր դատով դարձել էր համազգային գգվանքի առարկա։

Հայկական հարցի հարուցած անօրինակ հասարակական շարժումների հայտարար նշաններն էին չորս տարվա խոշոր կուլտուրական նվաճումները՝ դպրոցական վերակազմություն, թատրոն, ուռճացած գրականություն, մամուլ, հրատարակչական և բարեսիրական հիմնարկություններ։

Եվ հանկարծ այս ամբողջ կենդանությունը կանգ էր առնում, խամրում էր։ 1881-ից հետո սաստկացած ռուսական խավար ռեակցիան եղբայրացավ Թուրքիայում գլուխ բարձրացրած սուլթանական ռեակցիայի հետ։ Եվ այս եղբայրացման առաջին զոհերից մեկը դարձավ հայությունը։ Հալածանքներ, արգելքներ Թուրքիայում, նույնը՝ և Ռուսաստանում։ Հայոց հարցին հավասարապես թշնամի են թե՛ Աբդուլ-Համիդ Բ-ն և թե՛ Ալեքսանդր Գ-ն։ Հայոց պատմությունն արգելված առարկա հայտարարվեց Ռուսաստանում, իսկ Թուրքիայում ոչ միայն դա արգելվեց, այլև նույնիսկ «Հայաստան» անունը։ Հեղափոխական տրամադրությունը մտավ ընդհատակ կամ տեղափոխվեց արտասահման։ Բայց մի անգամ ընդգրկած գործողության եղանակը չլքվեց։ Ռաֆֆին կարողացավ լույս հանել իր երկհատոր «Կայծերը», որ նա անվանեց վեպ-ծրագիր։ Ծրագիր էր այդ վեպն այն կողմից, որ պատկերում էր մի խումբ երիտասարդների, որոնք Պարսկաստանի Սալմաստ գավառից անցնում են Վանի և

Մուշի կողմերը ինչ-որ խորհրդավոր առաքելությամբ, որի ինչ լինելը կարելի էր մակաբերել հեշտությամբ։ Պայմաններն այլևս այնպես չէին, որ կարելի լիներ ամենայն շիտակությամբ ծավալել հայդուկային կռվի նկարագրությունը։

Եզոպոսյան լեզուն ավելի ակնարկներով էր կռահել տալիս, թե ովքեր են այդ Ասլանները, Կարոները, Սագոները և այլն։ Դրանք, բացատրում էր հեղինակը, այսօրվա մարդիկ չեն, այսօր դեռ չկան, գոյություն չունեն, բայց վաղը, մյուս օրը կլինեն, դուրս կգան գործելու։ Պետք է խոստովանել, որ Ռաֆֆու տաղանդի ամենախոշոր հատկությունն այն էր, որ նա ըմբռնում էր օրվա տրամադրությունները, դրանք վերարտադրում գեղարվեստական պատկերների մեջ, որոնց միջոցով դնում էր հասարակական մտքի առաջ ոչ միայն տիպեր, այլև ամբողջ ծրագրեր։ Այսպիսով Ռաֆֆին ոչ միայն տաղանդավոր վիպագրող էր, սնված գլխավորապես Էժեն Սյուի և նրա նման ուրիշ բուլվարային ռոմանտիկներից, որոնք ավելի հեքիաթ էին տալիս, քան թե կյանք, այլև հանդիսանում էր ռազմագետ-հրամանատար, որ ծրագրում էր մի ամբողջ ժողովրդական պատերազմ. մի պատերազմ, որ տասնյակ տարիների ընթացքում պիտի մղեր փոքրիկ, թույլ, ստրկության մեջ դարերով ընդարմացած հայ ժողովուրդը օսմանյան ահեղ բռնակալության դեմ։

Այս ռազմավարության համար նրա վիպած միջոցները, տակտիկան անխախտ մնացին, և ոչ ոք՝ թե՛ անհատներ և թե՛ ամբողջ բազմամարդ կազմակերպություններ, չկարողացան, ընդունակություն չունեցան մի նշանակալի փոփոխություն, մի արմատական նոր շեշտ մտցնել ռաֆֆիական ռազմավարական հատակագծի մեջ։ Հազիվ թե կարելի լինի հավատալ, թե Ռաֆֆին ճիշտ որ այդքան անսխալական համարեր իրեն։ Իր կենդանության ժամանակ նա տեսավ միայն Էրզրումի «Պաշտպան Հայրենյաց» թույլ ու խեղճ կազմակերպությունը, որ նախքան կկարողանար մի որևէ հեղափոխական գործ սկսել, ընկավ թուրք կառավարության ձեռքը և ոչնչացավ դատաստանական պատիժների միջոցով։

«Կայծերից» հետո Ռաֆֆին ծրագիր-վեպեր չտվեց։ Միակ թույլատրված միջավայրը, ուր նա կարող էր ծավալել իր ազգասիրական երևակայությունները, մնում էր պատմությունը։ Եվ նա իր «Սամվել» մեծ վեպի վրա էր աշխատում, երբ մեռավ 1888-ին։ Սակայն նա ամուր հիմք էր դրել, հիմնել էր դպրոց։ Եվ 80-ական թվականների հայդուկային գրականությունը միայն կերպարանափոխվում էր գրաքննական խարազանների ազդեցության տակ՝ չկորցնելով իր ներքին բովանդակությունը։ Նա տեղափոխվեց Թիֆլիսից Պետերբուրգ, ուր գրաքննական պայմանները մի քիչ ավելի նպաստավոր էին։ Պետերբուրգի հայ ուսանողական կազմակերպությունն էր, որ էժանագին փոքրիկ ժողովրդական բրոշյուրների մի երկար շարքի հրատարակություն սկսեց։ Այդ հրատարակություններն իրենց թեթևությամբ և դյուրագնությամբ (2, 3, 5 կոպեկ) թափանցում էին հայ ժողովրդի խորքերը մեծ քանակությամբ։ Նրանք գրեթե բացառապես թարգմանական էին, և նրանց մեծագույն մասը վերաբերում էր բուլղարների հայդուկային

հեղափոխությանը։ Ո՞վ չի հիշում այդ բրոշյուրները։ Ամեն մեկի շապիկը ներկայացնում էր հայ ընտանիք, ուր գիրք էր կարդացվում, և ընտանիքի հայրը աչքի էր ընկնում իր ահագին մոթալ փափախով։ Իսկ վերնագրե՞րը՝ «Սարկավագ», «Ստեփան Կարաջա», «Ուրիշի գերեզմանի վրա առանց արտասուքի են լաց լինում» և այլն։ Բոլոր այս պատմվածքները վերցված էին Իվանովի «Борцы и мученики за свободу Болгарии» աշխատությունից, և նրանց մեջ հայ ընթերցողը գտնում էր մանրամասնություններ բուլղարական հեղափոխական կազմակերպությունների, կոմիտեների, հայդուկային չեթեների, թուրքական հալածանքների ու խստությունների մասին։ Հրատարակվեցին [Տոմաշ] Եժի «Ուսկոկներ» և «Լուսաբացին» երկու խոշոր վեպերը՝ դարձյալ բալկանյան հեղափոխական կյանքից։ Տրվում էին և ուրիշ ազգերի ազատագրական կռիվներից վերցրած պատկերներ։ Նպատակը պարզ էր։

Պետերբուրգի ուսանողական կազմակերպության անդամներից երկուսը շուշեցի էին՝ Եփրեմ Տեր-Հակոբյան և Հմայակ Նազարյան։ Ամառային արձակուրդներին, երբ նրանք գալիս էին Շուշի, ես շատ հաճախ խոսակցություն էի ունենում նրանց հետ այս հրատարակումների մասին, և նրանք ինձ բացատրում էին իրենց և իրենց ընկերների հայեցակետը։ «Պետք է,- ասում էին,- հեղափոխականացնել ժողովրդական մասսաները պատմական նմանությունների, անալոգիաների միջոցով։ Ամենացայտուն խրատական անալոգիաներ տալիս է մեզ բուլղարական հեղափոխությունը, որ թե՛ շատ մոտիկ է մեզ ժամանակով և թե՛ հարուստ է թուրքահայերի կյանքը հիշեցնող պատկերներով։ Մենք,- շարունակում էին երկու երիտասարդները,- թեև ինքներս ոչինչ չենք ասում, քարոզչություն չենք անում, բայց մեր տված գրականությամբ այն դաստիարակությունն ենք տարածում, որ թուրքահայերի ազատությունը կարող է այն կերպով լինել, ինչ կերպով եղել է բուլղարների ազատությունը»։

Այս ճիշտ էր։ Բայց այս դաստիարակության մեջ չափազանց շատ էր սպանիչ միակողմանիությունը։ Հարցն այն բանի մասին չէր, որ թուրքահայերը տանջվում են բուլղարների նման, նույնիսկ նրանցից էլ մեծ չափերով։ Հարցն այն էլ չէր, որ արյունարբու բռնակալության ճիրաններում ծվատվող մի աշխատավոր ժողովուրդ, որի 95 տոկոսը կազմում էր հողագործ գյուղացիությունը, պիտի աշխատի իրեն ազատելու համար։ Այս բաների վերաբերմամբ ի՞նչ վեճ կարող էր լինել։ Հարցը՝ զարհուրելի, սասանեցուցիչ հարցն այն էր, որ բուլղարների և հայերի ճակատագրի մեջ կար ահագին տարբերություն էլ։ Բուլղարներին ազատողն այն փոքրիկ հայդուկային խմբերը չէին, որոնք թեև կռվում էին զարմանալի, անօրինակ հերոսությամբ, բայց միշտ էլ, վերջիվերջո, օսմանյան կանոնավոր բանակի ծանրության տակ պիտի ճմլվեին։ Բուլղարներին ազատողն այն համասլավոնական ուժեղ բռնկումն էր, որ հրդեհեց Ռուսաստանը և ցարական բանակները Թուրքիա նետեց։

Բուլղարական հայդուկները միայն պատրվակներ էին, որոնց ստեղծողն ու կազմ և պատրաստ պահողը Կ.Պոլսի ռուսաց հզոր և եռանդուն դեսպանն էր՝ գեներալ Իգնատևը։ Ռուսաստանի սլավոնական կոմիտեներն էին, որ դրամ, զենք ու զգեստ էին հայթայթում բուլղար չեթեներին։ Երկրի աշխարհագրական դիրքն էլ չափազանց բարերար էր։ Հայդուկային շարժումները տեղի էին ունենում գլխավորապես Բալկանյան լեռներում։ Հենց որ չեթեները նեղ տեղ էին ընկնում թուրք զորքերի գործողությունների հետևանքով, նրանք փախչում էին մինչև Դանուբ գետը և ապահով ապաստան, օգնություն էին գտնում նրա մյուս ափին։ Հայ պահպանողականները, հակառակելով հեղափոխական շարժման կողմնակիցներին, ասում էին, թե թուրքերը կջարդեն հայերին, բայց դրանով միայն հեգնական ժպիտ էին պատճառում հեղափոխականներին։ Չէ՞ որ սրանք [հեղափոխականները] շատ լավ գիտեին, որ 1876թ. բուլղարական կոտորածներն ընդհանուր վրդովմունք առաջացրին Եվրոպայում, առաջ քաշեցին Գլադստոնին, որի ճառերը Բուլղարիայի ազատության հիմքը դրին։

Այս այսպես ասվում էր։ Բայց իրականությունն այն էր, որ Գլադստոնի ճառերն ու գրությունները միայն համակրական զգացմունքներ զարթնեցրին, որոնք սակայն ուժ չկազմեցին։ Այնպես որ, թուրքական գազանությունների պաշտպան Բիկոնսֆիլդի մինիստրությունը ոչ միայն չընկավ, այլ զգալով իր ուժը՝ շարունակեց մաքառել Ռուսաստանի դեմ՝ Թուրքիան պաշտպանելու համար, իսկ երբ ռուս-թուրքական պատերազմի հետևանքով ստեղծվեցին պայմաններ, որոնք սպառնում էին Լոնդոն-Սիթիի գրպաններին, Գլադստոնը բոլորովին լքվեց ու մենակ մնաց, իսկ այն հասարակությունը, որ մի ժամանակ ծափերով էր ծածկում Գլադստոնի անեծքները թուրքերի հասցեին, այժմ գնաց Բիկոնսֆիլդին պաշտպանելու, որպեսզի պաշտպանված լինի անգլիական բանկերի պարտապան Թուրքիան։

Բուլղարիան ազատողը Գլադստոնը չէր, այլ այն ծանր ու արյունահեղ պատերազմը, որ Ռուսաստանից միջոցներ և հարյուրհազարավոր մարդիկ խլեց։

Ահա ինչեր էին ծածուկ մնում հայ ընթերցողից՝ պատմական անալոգիաները դաստիարակչական ուժից չզրկելու համար։

Գոնե հաշվի առնեին այն հարաբերությունները, որոնք ստեղծվել էին ազատարար Ռուսաստանի և նրա ազատած Բուլղարիայի միջև։ Մեկը չէր գտնվում, որ լայն, բազմակողմանի լուսաբանություններով խախտեր հայ իրականության մեջ հաստատվող հիվանդոտ ու մահացնող միակողմանիությունը։ Ալեքսանդր Գ-ի կառավարությունը կատաղի թշնամի էր առհասարակ որևէ ազգի ազատագրական շարժման, բայց մասնավորապես թշնամի էր հայկական շարժման և Հայոց հարցի լուծման, որովհետև չէր ուզում մի նոր «ապերախտ» Բուլղարիա ստեղծել Ռուսաստանի ասիական սահմանի վրա։ Իսկ մեզ ասում էին՝ Հայկական հարցը շատ նման է բուլղարական հարցին և նրա նման էլ պիտի լուծում ստանա։ Ու Բաֆֆու

գծագրած հայդուկային աշխարհավարությունը գնալով խորացնում էր իր արմատները հայկական ըմբռնողության մեջ՝ այդպիսով չինական պատերի մեջ դնելով մշակվող գիտակցությունը։

Փաստերը ոչ միայն չէինք ուսումնասիրում առարկայի ստեղծած ամբողջ լրջությամբ, այլ աշխատում էինք ազատել մեր օձիքը դրանց ձեռքից՝ փախչելով դրանցից։ Կատաղի թշնամությամբ լցված ցարական Ռուսաստանն այն անհեթեթ վիշապն էր, որ ծառացել էր մեր դեմ։ Իսկ մենք վճռում էինք Հայոց հարցը լուծել տալ ոչ միայն առանց դրան [հաշվի առնելու], այլև հակառակ դրան։ Սա մի աներևակայելի անմտություն էր։ Բայց մեր քաղաքական մանկությունը մակաբերում էր, թե դա միանգամայն հնարավոր է։ Բավական էր [համարվում] միայն տեղափոխել Հայկական հարցի պրոպագանդան Եվրոպա։ Եվ ծրագրում էին հիմնել այնտեղ մի մեծ քաղաքական թերթ ու նրա խմբագրությունը հանձնել Գրիգոր Արծրունուն։

Ծրագիրը ծրագիր էլ մնաց։ Պետք է ասեմ, որ 1880-ական թվականների քաղաքական շարժման գլխավոր ղեկավար, բնականաբար, առանց ընտրության և կազմակերպության, համարվում էր Գրիգոր Արծրունին։ Երիտասարդ և առաջադեմ սերունդը նրան էր ընդունում իր հեղինակավոր առաջնորդ և պարագլուխ. նա էր, որ առաջին անգամ հրապարակ էր բերել թուրքահայոց հարցը, պահանջել էր, որ նա լուծվի ապստամբության ճանապարհով։ Բայց Արծրունին լոկ հրապարակախոս էր, գրչի մարդ։ Քաղաքական գործչի ջիղ նրան չէր տրված, և նա [ինքն] իրեն անընդունակ էր համարում մանավանդ գաղտնի հեղափոխական գործունեության համար։ Ալեքսանդր Գ-ի կառավարության հակահայկական արշավի նախընթաց նշաններից մեկն այն էր, որ խուզարկություն կատարվեց «Մշակի» խմբագրատանը։ Այս մասին Արծրունին ինձ, իբրև իր աշխատակցի, հայտնեց Թիֆլիսից Շուշի ճանապարհորդած մի ուսանողի միջոցով, բերանացի, որպեսզի ես իմանամ հայտնի զգուշություններով վարվել իրեն ուղարկած նամակների և հոդվածների մեջ։ Վերջը նա հայտնեց, որ անլեգալ գործունեություն ստանձնել նա չի կարող և կարծում է, որ մնալով ցենզուրայի ենթարկված մամուլի ներկայացուցիչ, կարող է ավելի մեծ օգուտ տալ հայ ժողովրդին, քան հեղափոխական անլեգալ գործունեությամբ։ Եվ նա այդպես էլ արավ։ Հետզհետե կտրեց իր առնչությունը հայդուկային հեղափոխության հետ։

## Զ

Նա ետ էր մնում, և ուրիշներն էին դուրս գալիս ստեղծված տրամադրությունն իրենց ձեռքն առնելու և ղեկավարելու համար։ Այդպիսիներից մեկն էր արևմտահայ մանկավարժ ու գրող Մկրտիչ Փորթուգալյանը, որ «Մշակին» աշխատակցում էր Վանից։ Այստեղ Փորթուգալյանը եռուն կազմակերպչական գործունեություն ունեցավ և, հալածանքի ենթարկվելով թուրք կառավարության կողմից, անցավ Եվրոպա, ուր 1885թ. երկրորդ կեսից սկսեց հրատարակել «Արմենիա» անունով փոքրածավալ թերթը, շաբաթական երկու անգամ։ Փորթուգալյանն ինձ էլ դիմեց, որ աշխատակցեմ, և իմ անունն էլ տպում էր թերթի մեջ՝ իբրև Շուշիի գործակալ։ Այս անվանումը ինձ

պատճառեց մի անախորժություն, որ բնորոշ է հայ հայդուկային հեղափոխության պատմության համար։

Մի օր ինձ ներկայացան երկու մարդ և մեծ գաղտնապահությամբ հաղորդեցին, թե եկել են Մկրտիչ Փորթուգալյանի մոտից, Հայաստանի ազատության համար են գործում՝ Խրիմյան Հայրիկի ղեկավարությամբ։ Ցույց տվին և Խրիմյանի մի ինքնագիր կոնդակը, որով հանձնարարվում էր ամեն կերպ աջակցել այդ երկու պարոններին։ Եվ ահա իմ այցելուները բավական աներես կերպով, ձեռքներին բռնած «Արմենիայի» այն համարները, որոնց մեջ տպված էր իմ՝ իբրև գործակալի, անունն ու ազգանունը, պահանջեցին հանուն ազգային գործի փող հավաքել իրենց համար, որպեսզի կարողանան Պարսկաստանի վրայով տանել Վան, հասցնել Խրիմյանին։ Առաջին անգամն էր, որ ես մտցվում էի «ազգային հանգանակության» գործի մեջ։ Խոստացա «մի բան անել», ինչպես սովորական է ասել այդպիսի դեպքերում, բայց հաջողություն չունեցա։ Միայն իմ մոտիկ ընկերներից մի երկուսին կարողացա համոզել, որ մի քանի ռուբլի տան։ Իսկ երկու անծանոթները գրեթե ամեն օր գալիս էին ինձ մոտ իմանալու հավաքված գումարի չափը և դժգոհություն էին հայտնում ինձ, որ լավ չեմ աշխատում «ազգային գործի» համար։

Ձանձրացած այդ կոպիտ մարդկանց հանդիմանություններից՝ ես վճռեցի ինձանից տալ պակասը։ «Ազգային գործիչները» հետզհետե պակասեցրին իրենց պահանջած գումարը, բայց և այնպես պակասն այնքան մեծ էր իմ միջոցների դիմաց, որ ես մնացի կատարելապես անկարող դրության մեջ։ Ես հեռագրական պաշտոնյա էի և ստանում էի ռոճիկ ամսական 20 ռուբլի 54 կոպեկ, իսկ շլինքիս ընկած էր հորս որբերին ապրեցնելու լուծը։ Ի՞նչ անեմ։ Ճարահատյալ սկսեցի սակարկություն անել Հայաստանի անունով ինձ վրա բեռնացածների հետ։ Համաձայնվեցինք վերջապես 20 ռուբլու վրա, և ես, ինչպես ասվում է, իմ մսից կտրելով՝ տվի ինձ համար բոլորովին անհնարին մի գումար՝ 10 ռուբլի, և օձիքս ազատեցի։ Նրանք հավատացրին ինձ, թե մյուս օրը ճանապարհվում են Թավրիզ։ Բայց ի՞նչ ճանապարհ, ի՞նչ Թավրիզ։ Մյուս օրվանից նրանք տեղափոխվեցին մի գինետուն, որ իմ ճանապարհի վրա էր գտնվում, և սկսեցին կամաց-կամաց անուշ անել իմ ազգասիրական տուրքը։ Իմ անցնելուս նրանք ինձ էին նայում, և նրանց երեսի վրա չէր շարժվում և ոչ մի մկան, կարծես բոլորովին անծանոթ էին ինձ։

Հասկացա, որ զոհ եմ դարձել խաչագողության։ Այնքան զզված էի, որ ավելորդ համարեցի որևէ մեկին պատմել իմ խաբվելը։ Միայն հաստատ խոսք տվի ինձ՝ երբեք հանգանակություն չձեռնարկել, մանավանդ որ խնդրանքով համոզելու էլ ընդունակություն չունեի։ Մի քանի շաբաթից հետո խաչագողերից մեկն անհայտացավ, իսկ մյուսը մնաց ապրելու Շուշիում։ Ինձ համար հարց էր դառնում՝ ի՞նչ անեմ, որ «Արմենիայի» մեջ տպվող իմ հասցեն նոր խաբեբաներ չբերի իմ տուն։ Բայց այստեղ ինձ օգնեց ցարական գրաքննությունը։ Շատ չքաշեց՝ «Արմենիայի»

մուտքը Ռուսաստան արգելվեց։ Գործակալների ցանկը, բնականաբար, վերացավ, և այնուհետև թերթը ստացվում էր փակ ծրարների մեջ, նամակի ձևով։

Ի՞նչ էր արել Փորթուգալյանը, որ այդպիսի պատժի էր ենթարկվում։

Ռուսաստանի դեմ՝ ոչինչ։ Նա միայն պաշտպանում էր Հայոց հարցը, և լոկ այս պատճառով նա նույնչափ անհանդուրժելի էր ռուս ցենզորին, որքան անհանդուրժելի եղել էր թուրք ցենզորին։ Փորթուգալյանը չափավոր ազատական էր, նացիոնալիստ։ Իր թերթի պահպանության համար նա հիմնեց Հայոց հայրենասիրական միությունը, որ նպատակ էր ընտրել Հայաստանի ազատությանը ծառայելը։ Ազատությունն իրագործելու համար կիրառելի էին ընդունվում բոլոր միջոցները՝ ե՛ւ խաղաղ քարոզչություն, ե՛ւ դիմումներ, ե՛ւ դիվանագիտական ճանապարհ, ե՛ւ զինված ապստամբություն։ Այս մի կազմակերպված շարժում էր, որ ուներ իր սեփական ծրագիրը, որով տարբերվում էր Էրզրումի «Պաշտպան Հայրենյաց» հեղափոխական ընկերությունից և հայտնի դարձավ ավելի «Արմենական կուսակցություն» անվանումով։

Իր ծրագրային դավանանքները Հայոց հայրենասիրական միությունը ամփոփել է «Վարդապետարան Հայաստանի Ազատության» անունով մի փոքրիկ տետրակի մեջ, ուր շատ լավ ցոլանում է այն ժամանակվա գործիչների ամբողջ քաղաքական միամտությունը՝ հենված զանազան տարրերի վրա՝ թե՛ ազգայնամոլ տիրացուության, թե՛ անգրագետ հետադիմության և թե՛ առաջադեմ ըմբռնումների։ Ես ինձ թույլ կտամ մի քանի նմուշներով ծանոթացնել իմ ընթերցողներին այդ քաղաքական փաստաթղթի հետ։

Հարց - Ո՞վ պիտի ազատե Հայաստանը օտարներու ձեռքեն։

Պատասխան - Ինքը՝ հայ ազգը, պիտի ազատե Հայաստանը օտարներու ձեռքեն։

Հ. - Ի՞նչ հնարներով։

Պ. - Հնարները զանազան են, նայելով հանգամանքին՝ երբեմն սեփական զենքով, երբեմն փողով և երբեմն օտարի օգնությամբ։

Հ. - Ո՞վ է իսկական հայը։

Պ. - Իսկական հայը նա է, որ անկեղծ կըղձա և կնպաստե Հայաստանի անկախության. մնացյալները ոչ միայն անպիտուն հայեր, այլև անպիտան հայեր են։

Հ. - Առանց վտանգի ի՞նչ ազգասիրական գործեր կարող է կատարել ամեն մի հայ մարդ։

Պ. - Յուր անձը վտանգի չենթարկելով՝ ամեն մի հայ մարդ կարող է և պարտավոր է այս գործերը կատարել.

1) Հայերեն լեզուն պահպանել իր ընտանիքի մեջ և իր ազգակիցների հետ խոսակցության մեջ։

2) Հայ ոգով դաստիարակել զավակացը։

3) Սովորեցնել նոցա զենքի գործածությունը։

4) Չամուսնանալ օտարի հետ։

5) Կարելի եղածին չափ աշխատել Հայաստանի մեջ ունենալու մեծ կամ փոքր հողային կալվածք։

6) Հայոց հայրենասիրական միության որևէ մի օգնություն հասցնել ուղղակի կամ անուղղակի, ինչ միջոցով որ այդ հարմար կլինի իր գտնված դրության մեջ։

Հ. - Որո՞նք են հայկական առաքինությունները։

Պ. - 1) Ամենագլխավոր հայկական առաքինությունն է իր ստացվածքն ու արյունը նվիրել Հայաստանի ազատության սուրբ գործին։

2) Իր բոլոր ուժը թափել՝ հորդորելով իր ծանոթ հայերին, որ երթան դեպի Հայաստան։

3) Համոզել և օգնել հայերին՝ իրենց սեփական անշարժ կալվածքը և հողը ունենալու Հայաստանի մեջ։

4) Օգնել այն հայերին, որոնք հայ ազգի օգտի համար կաշխատեն Հայաստանի մեջ։

Հ. - Առավոտ ու գիշեր ի՞նչ աղոթք պիտի անե հայը։

Պ. - Հայը քնեն զարթնելիս կամ քուն մտնելիս՝ միայն այս աղոթքը պիտի կարդա՝ «Ով բարեգութ Աստված, օգնիր ինձ Հայաստանը ազատելու»։ Դրանից ավելի ոչ մի աղոթք հարկավոր չէ հային։

Հ. - Հայ պատանիների համալսարան մտնելը կնպաստե՞ հայկական նպատակներին։

Պ. - Այժմ հայ պատանիների համալսարան մտնելը, վերաբերմամբ հայոց նպատակներին, այն նշանակությունն ունի, ինչ նշանակություն որ կունենար ավազակի հենց վրադ հարձակված ոոպեին կամենայիր սուրի և զենքի գործարաններ

շինելու։ Այս մասին հայերը առ սակավ հարյուր տարի ուշացել են։ Մյուս կողմե՝ 40-50-ամյա փորձը ցույց տվավ, որ համալսարանների տված արդյունքը հայ պատանիներին դոքա էին՝ 1. Դյուրին միջոց՝ ապահով ապրուստ ճարելու և ասպարեզ շինելու և 2. անզգալի կերպով սառչելու իր ազգեն և հոգով օտարանալու նորա շահերեն։ Իսկ եթե կան մի քանի իսկապես արժանավոր հայ համալսարանականներ, պետք է կարծել, որ նոքա առանց համալսարան մտնելու ևս ազգի պիտանի անդամները կլինեին, ինչպես որ կան ազգի մեջ շատ նշանավոր մարդիկ, որոնք երբեք համալսարան եղած չեն։ Պետք է նկատի ունենալ և այն հանգամանքը, որ այժմյան համալսարանները և նույնիսկ գիտությունը դարձել են բռնակալների ձեռքումն ազգեր ստրկացնելու հզոր գործիք։

Հ. - Ո՞րն է հայերի նշանաբանը։

Պ. - Հայերի նշանաբանը այս երեք բառն է՝ ազատություն կամ մահ։

Հ. - Հայաստանը կարժե՞ այդքան մեծամեծ զոհերի։

Պ. - Այո՛, Հայաստանը կարժե ամենամեծ զոհերի, վասնզի նրա մեջ կեցողի կյանքի տևողությունը միջին թվով 75 տարի է։ Հայաստանի հողը մշակողին տալիս է մեկ ցանած սերմնահատիկի փոխարեն 45-50 սերմնահատ։ Հայաստանի մեջ վազած աղբյուրների կեսը հանքային բժշկարար ջրեր ունեն։ Հայաստանի դիրքը միջնաշխարհային է, այսինքն՝ Ասիայի և Եվրոպայի սահմանագլուխներումն։ Հայաստանի ժողովուրդը, եթե չլինի ազգերի մեջ ամենահզորը, գեթ նա կլինի ամենահարուստը և ամենաբախտավորը։ Հայաստանը հարուստ է ե՛ւ կենդանիներով, ե՛ւ բույսերով, ե՛ւ հանքերով։

Հ. - Ո՞վ պիտի բարձրացնե ազատության դրոշակը և սուրը։

Պ. - Դրոշակը պիտի բարձրացնե հայ վարդապետը. իսկ սուրը՝ բոլոր հայ պատանեկությունը, երիտասարդությունը և տղամարդիկ, 16 տարեկանից բռնած մինչև 45 տարեկանը։

Հ. - Ի՞նչ է նշանակում հաղթել և ի՞նչ՝ հաղթվել։

Պ. - Հաղթել նշանակում է թշնամիի առջև անվախ գնալ և մեռնելուց չսարսափել. հաղթվել նշանակում է պատերազմի դաշտումը սրտի մեջ երկյուղ տածել։ Անվախը (քաջը) վախկոտին միշտ կհաղթե։

Հ. - Ո՞ւր կերթան հոգիները այն մարդկանց, որոնք կմեռնին ճակատի մեջ։

Պ. - Ավետարանի խոսքերի հիմանց վրա՝ ճակատի (ազգային պատերազմի) մեջ մեռնողի հոգին, ի շարս սրբոց, անշուշտ կերթա Երկնից Արքայություն, վասնզի այդպիսին կյանքեն զրկվել է ի սեր և ի պաշտպանություն իր նեղյալ

մերձավորներին. նրա անունը կլինի նահատակ, և նրա հիշատակը Ս. եկեղեցին կտոնե մինչև աշխարհի կատարածը։

Հ. - Հրացանի ամե՞ն գնդակը դիպչում է, և ամե՞ն խոցվածը մեռնում է։

Պ. - Վիճակագրական ամենաճիշտ հաշիվներեն երևում է, որ հրացանի տասը հասած գնդակեն մինն է դիպչում մարդուս, և 38 խոցվածներեն մինն է միայն մեռնում։

Հ. - Պատերազմի դաշտում խոցված հոգևարը չի՞ տանջվում։

Պ. - Ամենափորձված բժիշկները հաստատում են, որ կակուղ անկողնի մեջ մեռնելը հազարապատիկ ավելի դժվար է, քան թե պատերազմի դաշտում. իսկ զենքի պատճառած մահը ամենաթեթևն է մահերի մեջ։

Հ. - Հնար կա՞ պատերազմի դաշտում մահից ազատվելու։

Պ. - Այո՛, կա և մի հատիկ հնարն է այս։ Եթե չես ուզում, որ թշնամին քեզ սպանե, դու ինքդ շտապե նրան սպանելու։ Ուր վտանգը շատ մեծ է և անխուսափելի, համարձակ վազե նրա առաջն և վստահ եղիր, որ վտանգը ինքը կփախչի քեզանից։ Այս փորձած երևույթ է։ Թշնամիի առջև փախչելը երկու վատ հետևանք ունի. մեկ որ՝ փախչողը անպատճառ կսպանվի, և երկրորդ՝ նա ակներև կորստի կմատնի իր հավատարիմ զինակից ընկերներին։

Հ. - Հայերը ե՞րբ ոտքի բարձրանան։

Պ. - Երբ որ մեծամեծ ազգերի մեջ սկսվի կենաց և մահվան պատերազմը։

Այս մանրամասնություններից միանգամայն պարզվում է արմենական ուղղության ազատագրական գաղափարախոսությունը։ Նրա հիմքն ու կենտրոնը ազգայնամոլությունն էր իր բոլոր հետադիմական զարդ ու պաճուճանքներով։ Բայց և այնպես, նա հայդուկային չէր, ազատարար կռիվը մշտական չէր հայտարարում, այլ ամենքի համար քաղցր ու հաճելի եղանակով պարտք էր դնում ամենքի վրա, որ երբ պատերազմ կբացվի մեծ պետությունների մեջ, ամենքը լավ զինված, մարզված ոտքի ելնեն և ազատեն Հայաստանը։ Թե ինչպես էր լռիկ-մնջիկ ամբողջ հայ ժողովուրդը փոխարկվում մի ռազմական բանակի. այս չգիտեին և իրենք՝ Մարսելի հայրենասեր սպարապետները։ Նրանք միայն ամեն ջանք թափում էին, որ չվախեցնեն հայ երևակայական բանակը։ Ուստի խոստանում են նրան ե՛ւ երկնքի արքայություն՝ սրբերի հետ, համարյա թե Մուհամեդի դրախտ, ե՛ւ մեկին 45-50 բերող հունձ Հայաստանի արտերում, ե՛ւ մեղր ու կարագ բխեցնող աղբյուրներ։ Ամենաբնորոշն այն է, որ միությունը հավատացնում էր, թե պատերազմի դաշտում ամենքը չեն մեռնում, իսկ մեռնողներն էլ հազարապատիկ պակաս տանջանքներ են զգում, քան իրենց տանը, փափուկ անկողինների մեջ մեռնողները։ Մի կատարյալ բուրժուական դրախտ [էր] այս ազատագրությունը… Տեսնում ես մի հեղհեղուկ, թշվառ մտայնություն, որ

դժվարությունների անսովոր միջավայրում է զարգացել և կաշառքներ տալով է մարդ ուղարկում պատերազմի դաշտ։

Եվ այս գաղափարախոսությունը գալիս հարմարվում էր այն ազգագրական խմբերին, որոնք տնտեսական և մշակութային հետամնացության մեջ էին ապրում։ Արմենականությունն արմատ բռնում էր գրեթե միմիայն Թուրքահայաստանում և առավելապես Վանում, ուր Փորթուգալյանը ժողովրդականություն էր ստացել իբրև ազգասեր գործիչ։ Կ.Պոլսում էլ կազմակերպվում էին շրջանակներ, ուր ղեկավարող դերը դարձյալ վանեցիներն էին կատարում և ուր արմենականությունը հաստատ հող էր գրավում։

Հաջողության մի շատ խոշոր պատճառն էլ այն էր, որ գավառական հայության դրությունը գնալով ավելի ու ավելի վատթարանում էր, իսկ հրապարակում չկար մի այլ կազմակերպություն, որին դիմեին անբավական տարրերը։

Է

1884թ. հոկտեմբերին վախճանվեց Ներսես պատրիարք Վարժապետյանը։ Ամենուրեք մեծ տրտմություն պատճառեց այդ մահը հայ հասարակության լայն խավերին։ Ներսեսը մի շատ վեհ, համարյա հայրական հասկացություն էր այդ ժամանակ։ Սան Ստեֆանոյի, Բեռլինի կոնգրեսի ժամանակներից էր նա վաստակել այդ բարձր համարումը։ Նա Հայոց հարցի հայրն էր, և նրա եռանդից ու շնորհից էին ամենքն սպասում այդ հարցի լուծումը։ Չորս տարի շարունակ (1878-1882) նա շատ ուժեղ և հեղինակավոր դիրք էր բռնել Կ.Պոլսի դիվանագիտական շրջաններում և, հենված այդ դերի վրա, հանդես էր եկել իբրև հայ ժողովրդի պահանջկոտ ներկայացուցիչը, որ սուլթանի կառավարությանը նայում էր իբրև պատասխանատու կողմի։ Այցելում էր եվրոպական դեսպաններին, այցելություններ էր ընդունում նրանցից և ցույց էր տալիս դիվանագիտական այնպիսի բարձր «առաքինություններ», ինչպես են՝ հանգամանքներին արագորեն հարմարվելը, գրպանում միանգամից մի քանի պատրաստ լեզուներ ման ածելը և այլն։ Եվ հանկարծ այդպիսի խոշոր (հայ իրականության տեսակետից) քաղաքագետը մեռավ՝ չտեսնելով իր ստեղծած գործի իրականացումը։ Վիշտը մեծ էր՝ համազոր ազգային սգի։ Թիֆլիսի «Արձագանք» շաբաթաթերթը, արհամարհելով ցենզուրական պահանջը, սև շրջանակի մեջ դրեց Ներսեսի մահվանը նվիրված հոդվածը և իբրև պատիժ՝ դադարեցվեց ութ ամսով։

Բայց ողբերը չէին կարող ծածկել այն ճշմարտությունը, որ Ներսեսը մեռնում էր ժամանակին։ Նա այլևս անելիք չուներ, և մահն էր, որ կարծել էր տալիս, թե դեռ շատ անելիք ուներ։ Նույն՝ 1884-ի գարնանը Էջմիածնում կաթողիկոսական ընտրություն էր։ Շատ համառ պայքարից հետո հաղթություն տարավ «Մշակ»-ական ուղղությունը՝ առաջին թեկնածու ընտրել տալով Ներսես Վարժապետյանին։ Կարծում էին, որ եթե նա թողնի Բոսֆորի ափերը և կաթողիկոսի աստիճանով մտնի Էջմիածնի վանք, դրանով այնքան ուժ և նշանակություն կստանա, որ ավելի մեծ հաջողությամբ կտանի

Հայոց հարցի պաշտպանությունը։ Բացի դրանից, Հայոց հարց ստեղծվում էր նաև Ռուսաստանում՝ Ալեքսանդր Գ-ի կառավարության հալածանքների պատճառով։ Եվ ահա ռուսահայերն էլ սպասում էին, թե Ներսեսը կգա և իրենց կազատի սանձակոտոր ցարիզմի ձեռքից։ Այսքա՛ն ակնկալություններ մի հատիկ մարդուց, այն էլ՝ մի հիվանդ մարդուց։

Բայց Ներսեսը գիտեր, որ այլևս զուր է իրենից կամ առհասարակ որևէ մի անհատից հրաշքներ սպասելը։ 1880-ի գլադստոնյան փորձը պարզ ցույց էր տալիս, թե եվրոպական դիվանագիտությունից չպետք է փրկություն սպասել, ուստիև իր պատրիարքության վերջին երկու տարիներում փոխել էր իր ուղղությունը։ Նրա մահից տարիներ անցած՝ տպվեց նրա քաղաքական կտակը, որի մեջ նա պատվիրում էր իր հաջորդներին, որ հայերը հաշտվեն թուրքերի հետ և համաձայնության մեջ ապրեն պետության հետ՝ հույս չդնելով օտար պետությունների վրա։ Հայ ազգասիրությունը, մանավանդ այն, որ պաշտամունք էր դարձրել 16 և 61 հոդվածները, կեղծ հայտարարեց այդ կտակը։ Սակայն այդպիսի մի թղթի կարիք էլ չկա հասկանալու համար, թե ինչ էր Ներսեսի քաղաքականությունը 1883 և 1884 թվականներին։

Խրատված եվրոպական դիվանագիտության սուտ ու խաբեբա վարվեցողությունից՝ նա ընդառաջ գնաց Աբդուլ-Համիդի ցանկությանը, հետ վերցրեց իր հրաժարականը և սկսեց բացարձակ քարոզել, թե հայերն ուրիշ անելիք չունեն, բայց միայն հաշտ ապրել Օսմանյան կայսրության հետ։ Եվ այս փոփոխությունը չհամարվեց դավաճանություն, այլ միայն քաղաքագիտական քայլ։ Դավաճանություն չհամարվեց և այն, որ Ներսեսն ընդունեց սուլթանի ընծայած գեղեցիկ ապարանքն Օրթաքիո արվարձանում։ Նկատենք, որ հակահայկական հալածանքները Թուրքիայում չէին դադարում, որ սուլթանն սկսել էր նույնիսկ պատրիարքական առանձնաշնորհումները կրճատել։ Ներսեսը տեսնում էր այդ բոլորը և բավականանում էր գրավոր բողոքներ ներկայացնելով։ Ուրիշ ճար նա չէր գտնում, բացի միայն թուրք կառավարության հետ համաձայնության գալուց։ Իսկ եթե դրսում կարծում էին, թե պակասում է մի հատ կաթողիկոսական աթոռ, որպեսզի Ներսեսը նախկին ուժեղն ու հեղինակավորը դառնա, դեռ է՛լ ավելի, այդ միայն վկայում էր, թե որ աստիճանի է հասել հանրային անճարությունը, և եվրոպական միջամտության ցնորքով ապրող գաղափարախոսությունն ինչ սնանկության է դատապարտվել։ Հայոց հարցը խրվել էր դիվանագիտական մի փակուղու մեջ, և նրան այնտեղից դուրս բերելը չափազանց արդեն դժվարացել էր։

Ներսեսի հաջորդները՝ Վեհապետյան և Աշըգյան, անկարող լինելով ցույց տալ այնպիսի մարտական գործունեություն, որպիսին զարգացրել էր հանգուցյալը, հետևեցին նրա վերջին տարիների, այն է՝ հաշտ քաղաքականությանը։ Բայց այս այլևս չթույլատրվեց նրանց։ Սուլթանական մութ ռեակցիան ճնշում էր ամենքին, բայց ավելի շատ՝ հայերին։ Գավառներում կառավարությունը սանձից արձակել էր

քրդերին, իսկ հայերին դրել էր օրենքից դուրս, անտանելի դրության մեջ։ Ամեն կողմից օգնություն կանչող աղաղակներ էին լսվում։ Իսկ այդ դրությամբ վրդովվող տարրերն անճարությունից, իհարկե, մեղավոր էին համարում Վեհապետյանին, հետո և Աշըգյանին, գտնում էին, որ նրանք չափազանց թուրքամոլ են և համակերպվող ու դրանով դավաճանում են ազգային դատին։ Իսկ թե ինչ կարող էին անել այդ «դավաճանները» և չարեցին, այս չէին ասում։

Եվ դժգոհ տարրերի ուշադրությունը մի ծայրահեղ անճարությունից անցնում էր մյուսին՝ արմենական խղճուկ կազմակերպության, որ այսպես թե այնպես մարտական նշանաբաններ ուներ և խոստանում էր ազատություն բերել Հայաստանին։ Բայց Եվրոպայում ապրող հայության մեջ գրեթե միաժամանակ առաջ եկավ մի տարբեր ուղղություն։ Մի խումբ հայեր Լոնդոնում կազմակերպեցին Անգլո-հայկական մի ընկերություն, որի վարչության մեջ, բացի հայերից, մտան և անգլիացի քաղաքական գործիչներ։ Այսպես, քարտուղարն էր սըր Էդուարդ Գրեյը՝ արտաքին գործերի բազմահամբավ մինիստրը 1914-ի համաշխարհային պատերազմի ժամանակ… Անգլո-հայկական ընկերությունը հիմնեց իր հատուկ թերթը՝ «Հայաստան» անունով, որ հրատարակվում էր հայերեն և ֆրանսերեն լեզուներով։ Նա նպատակ էր դրել հասնել Հայոց հարցի լուծման՝ բացառապես դիվանագիտական ճանապարհով, և այս միտքը հաջողեցնելու համար կազմակերպում էր Եվրոպայի զանազան երկրներում հայասիրական պրոպագանդա՝ գործի հրավիրելով քաղաքական, գրական, գիտական ասպարեզներում անուն հանած անձանց։

Գլխավորապես այս կազմակերպության շնորհիվ էր, որ Հայաստանի դրությունը արձագանք էր տալիս մի քանի պառլամենտների, առավելապես անգլիականի մեջ։ Արտասանվում էին ճառեր, որոնք ամենայն մանրամասնություններով տպվում էին «Հայաստանի» մեջ։ Այդտեղ էլ առանձին ուշադրությամբ և մեծարանքներով տեղ էին գտնում հայտնի գործիչների համակրական նամակները, և այսպիսով ստեղծվում էր մի տեսակ հասարակաց կարծիք։ Ամենափոքր ցույցն անգամ համարվում էր շատ կարևոր նշանակություն ունեցող երևույթ։ Եվ «փրկիչը»՝ Եվրոպան, նորից ու նորից արձանանում էր հայ հարստահարված իրականության մեջ իբրև առատագութ, անշահասեր մի բարերար, որ պիտի գնա մի օր և, քրիստոնեական սիրուց դրդված, բռնի ու բարձրացնի արտասուքի և արյան ծովի մեջ խեղդվող հային։

Քաղաքական ռոմանտիզմն ավելի արբեցնող ու էլի խաբուսիկ էր դառնում։ Եվ այս դրությունը հրահրում էին Հայաստանից եկող սարսափելի լուրերը։ 1880-ական թվականների երկրորդ կեսին իր չարագործություններով հռչակ ստացավ քուրդ ավազակ ցեղապետ Մուսա-բեյը։ Նրա զոհերը բացառապես հայ գյուղացիներն էին։ Եվրոպական մամուլը լույս հանեց քստմնելի եղելություններ։ Անգլիական պառլամենտում մի քանի անգամ հարցապնդումներ եղան Մուսա-բեյի առիթով, դիվանագիտական ընդարձակ գրագրություններ սկսվեցին, Կ.Պոլսի դեսպաններն

ուշադրություն դարձրին։ Հետևանքն այն եղավ, որ Մուսա-բեյին դատի ենթարկեցին, և, որպեսզի հայ գյուղացիներն ազատ վկայություններ տան, դատը կայացավ Կ.Պոլսում, դեսպանատներից հատուկ նշանակված պաշտոնյաների ներկայությամբ։ Այդ մի դատաստանական խեղկատակություն էր։ Դատից առաջ սուլթան Աբդուլ-Համիդը, անգլիական դեսպանի հետ ունեցած խոսակցության մեջ ասաց, թե Մուսա-բեյն անմեղ է։ Այս արդեն նշանակում էր, թե դատարանին հրամայված է արդարացնել Մուշի դաշտի ժանտախտը դարձած քուրդ բեյին։ Եվ իրավ, Մուսա-բեյի դեմ հարուցված էին քրեական ամբաստանություններ։ Դատարանը մերժեց քննության առնել դրանցից յոթ հատը. մնացին երեքը։ Կառավարության դատախազը փոխեց իր դերը և դարձավ ոճրագործի պաշտպանը։ Եվ զարմացած աշխարհի առջև համիդյան արդարադատությունը միանգամայն անմեղ հռչակեց մարդասպանին, սրտեր կրակողին, կույսեր բռնաբարողին։

Մուսա-բեյի ամբողջ դատավարությունը տպվեց անգլիական «Կապույտ գրքի» մեջ։ Եվրոպայի ընդհանուր կարծիքն էր, թե այդ դատը միանգամայն ապացուցեց, որ հայերն այլևս ոչինչ սպասելիք չեն կարող ունենալ թուրք կառավարությունից, որ նրանք օրենքից դուրս են դրված և այլն։ Սուլթան Համիդը չկարողացավ անտես առնել Եվրոպայի վրա Մուսա-բեյի դատի թողած տպավորությունը և դատաստանով արդարացրած չարագործին աքսորեց Հիջազ։ Առանց այդ էլ նա գրգռված էր հայերի դեմ՝ Եվրոպայում մղած պրոպագանդայի համար։ Այժմ նա ավելի ևս գրգռվում էր՝ ստիպված լինելով զիջում անել այդ պրոպագանդային։ Նույն այս պրոպագանդան առատ նյութ էր քաղում և այն հավաքական բողոքից, որ հայ հոգևորականությունը գրավոր կերպով ներկայացրեց թուրք կառավարությանը՝ իր և ժողովրդի դեմ հարուցած հալածանքների առիթով։

Աբդուլ-Համիդը, մի կասկածամիտ և դաժան բռնակալ, բայց միևնույն ժամանակ չափազանց վախկոտ, փակել էր իր անձը Ելդրզ-Քոշկ պալատում, իր ձեռքն էր առել պետության բոլոր գործերը, ղեկավարում էր անձնապես մենակ ինքը՝ հաստատելով մի ռեժիմ, որ հավասարապես ընդունելի չէր ամենքի համար, որովհետև այդ մի կառավարություն էր լրտեսների, բանտերի և սարսափի այլ բոլոր տեսակների միջոցով։ Ամեն կերպ աշխատում էր, որ տեղի չունենան եվրոպական պետությունների միջամտություններ, և տեսնելով, որ հայերն են իրենց 61-րդ հոդվածով շարունակական միջամտություններ աղերսողները, անհնարին կատաղությամբ էր լցվում նրանց դեմ։ Լոնդոնի, Փարիզի, Մարսելի հրատարակությունները բազմապատկում էին այդ կատաղությունը, և նա դառնում էր հայերի վերաբերմամբ առանձնապես անխնա, մոլեգնոտ։ 1889 թվին, մինչ Անգլո-հայկական ընկերությունը կարծում էր, թե մեծ հայանպաստ գործ է կատարում իր «Հայաստանով», Աբդուլ-Համիդը կանչեց Աշըգյան պատրիարքին և, իր առաջին քարտուղարի միջոցով խոսակցություն սկսելով նրա հետ, զայրացած պահանջեց, որ նա՝ իբրև հայ ժողովրդի գլուխ, վերջ դնի այդ հրատարակություններին։ Ավելացրեց և այն, թե հայերին ինքը երբեք չպիտի տա նրանց երազած ինքնուրույնությունը. և ոչ

միայն ինքը, այլև պիտի նզովք դնի իր հաջորդ սուլթանների վրա, որ նրանք էլ չտան ինքնուրույնություն, կռվեն նրա դեմ, մինչև որ աշխարհիս վրա չի մնա և ոչ մի իսլամ։

Զարհուրած պատրիարքը շտապեց այս կատաղի սպառնալիքը հաղորդել Ամենայն հայոց կաթողիկոս Մակարին և աղաչել, որ նա մտածի թուրքահայ ժողովրդին փրկելու մասին՝ դիմելով ռուսաց կայսրին և աղաչելով, որ նա իր պաշտպանության տակ առնի նրան։ Մակարը, սակայն, ոչինչ չարավ։ Ալեքսանդր Գ-ն չպիտի լիներ այն մարդը, որ գնար ուրիշ երկրի հայերին պաշտպանելու, երբ իր երկրի հայերին ճնշում էր ամեն կողմով։ Մակարը պաշարված էր մի շարք պահանջներով, որոնք ուղղված էին հայոց լեզվի, հայ դաստիարակության դեմ։ Համիդյան Թուրքիան բարեկամական պետություն էր ցարի համար, որ անխնայորեն հալածում էր նրա դեմ դավեր նյութող հեղափոխականներին։ Ի՞նչ հրաշք պիտի հարկադրեր նրան խլել իր բարեկամ սուլթանից նրա հայ ժողովրդին։

Եվ այսպիսով կատարելապես անճար ու անօգնական կացության մեջ էր ընկել հայ ժողովուրդը։ Ճռճռան ճառեր արտասանող «հայասերները» չգիտեին, թե ինչ տագնապ էին պատրաստում իրենց իբր թե պաշտպանած ժողովրդի համար։ Աբդուլ-Համիդը պարզ ու բացարձակ կերպով բաց էր անում իր հղացած հայաջնջումը։ Նա պատրաստվում էր իսլամության գլուխն անցած՝ պատերազմ անել հայերի դեմ։

Եվ ոչ ոք չեղավ, որ ուշադրություն դարձնի այս ահռելի ազդարարության վրա։ Այն արհամարհեց Եվրոպային ֆետիշ դարձրած մեր տղայական ռոմանտիզմը, մինչև որ համիդյան ծրագիրը ի կատար ածվեց ամբողջությամբ։

## Գլուխ առաջին։ 1888 – 1896 թվականներ

### Ա

Առաջին տասնամյակը, որ անցել էր Սան Ստեֆանոյի, Բեռլինի հոդվածներից հետո, խմորումների, կազմակերպչական փորձերի ժամանակամիջոցն էր։ 1888-ին վերջնականապես ձևակերպվում է Հայոց հարցի կերպարանքը։ Այդ ձևակերպումն է, ինչպես սկզբի տարիների որոնումներն էին արդեն գծագրել, հայդուկային կռիվ և Եվրոպայի պաշտամունք։ Երկու թշնամի կողմեր են՝ հայերը և թուրքերը։ Երկու կողմերն իրար երեսի բղավում են՝ «Կռի՞վ»։ Եվ կռիվն սկսվում է՝ անհավասար ու տանջալից։ Հայը նետվում է այդ կռվի մեջ ամենայն թեթևամտությամբ՝ նույնիսկ չմտածելով միջոցների մասին։ Այդ տրամադրությունն է, որ այնքան լավ արտահայտվել է մի ժամանակ շատ տարածված և շատ ոգևորիչ մի երգի մեջ։

Հերի՛ք, ելնենք ցույց տանք, թե մենք հարազատ
Հին քաջերի արյունիցն ենք և ազատ,
Թեև չունենք ո՛չ սուր, ո՛չ թուր, ո՛չ նիզակ,
Մեր բահերն էլ կանեն նրանց շանսատակ…

Ճիշտ որ, բահերով կռիվ էր այդ հայդուկային կռիվը։ Կռիվ մաուզերի դեմ։ Այն վերջնականորեն կազմակերպողը, կանոնադրողը և որոշ գաղափարախոսության մեջ ամփոփողը մի խումբ էր Եվրոպայի հայ ուսանողությունից՝ հավաքված Ժնևում, ուր դեռ 1887-ին հիմք էր դրվել մի հեղափոխական թերթի, որի անունը փոխ էր առնված ռուս հռչակավոր էմիգրանտ Ալեքսանդր Հերցենի «ԽՏսՏՍՏս»-ից և հայերեն թարգմանության մեջ դարձել էր «Հնչակ»։ Թերթը կանոնավորվեց 1888-ին, և նրա անունով սկսեց կոչվել Հայոց հարցին նվիրված առաջին կանոնավոր հեղափոխական կուսակցությունը։

Մինչև այդ ժամանակները՝ փակ ծրարների մեջ փոստը մեզ բերում էր Մարսելի «Արմենիան» և Լոնդոնի «Հայաստանը», որոնք այնպես, սովորական երևույթ էին դարձել, և միայն ցարական ապուշ ցենզուրան կարող էր «հիմքեր սասանեցնող» համարել արտասահմանյան այդ հրատարակությունները։ Այնուհետև մեծ գաղտնապահությամբ, բայց ավելի ուշ մեզ էր հասցվում այս նոր թերթը՝ «Հնչակը»՝ ամենածայրահեղ կարմիրը բոլոր հայ թերթերի մեջ, որի բովանդակությունը շատ անգամ սարսափ էր պատճառում մեզ՝ միամիտ, նահապետական գավառացիներիս։ Կարդում էինք շտապ, ահուդողով և շտապում էինք ձեռքերիցս հանել՝ կա՛մ պատռելով, ոչնչացնելով, կա՛մ թե ուրիշ ցանկացողների տալով։ Շուշին էլ ցարական տեսակետից հասունացած վայրերի բարձր պատվին էր արդեն հասել. այնպես որ այնտեղ հաստատուն բնակություն էին դրել երկու ահագին, թիկնեղ ժանդարմներ՝ երկու դատարկապորտ ցարական պահնորդ շներ, որոնք ամբողջ օրն անգործ քայլում էին փողոցներում կամ կանգնում էին գինետների մոտ ու այդպես հսկում, որ «կարգը» չխախտվի։ Գործ ունենո՞ւմ էին նրանք, թե՞ ոչ, ես չգիտեմ։ Բայց որ նրանց ներկայությունը մեր անխռով, տիրապահ քաղաքում կատարում էր պատշաճավոր ներգործություն, մանավանդ մեզ՝ երիտասարդ «ազգասերներիս» էր լավ հայտնի։ Քաշվում էինք շատ բանի մեջ, մտներումս պահում էինք, որ այս քաղաքում երկու զույգ ժանդարմական աչքեր կան։

Մի անգամ էլ գաղտնորեն, փսփսուքով լուր տարածվեց, թե Գանձակից եկել է դրանց ռոտմիստրը, և այդ ժամանակ արդեն կատարյալ ահաբեկումն էր մեզ բռնում։ Քանի-քանի անգամ նստել ենք ամեն մեկս առանձին մեր տներում, և ինքներս մեր ձեռքով ոչնչացրել մեր խղճուկ, նույնիսկ ամենաանվնաս ձեռագիր աշխատությունները, մեր հավաքած արտասահմանյան լրագրերը։ Մի ժամանակ արգելված էր նույնիսկ Կ.Պոլսի «Արևելք» լրագիրը, և ես մի քանի անգամ վառել եմ նրա կապոցները՝ սպասվող խուզարկությունների մեջ «մաքուր» դուրս գալու համար։ Խե՜ղճ մեր երիտասարդական թռիչքներ ու հուզումներ. քանի՜ անգամ էիք դուք քննադատում մեզ, որ թղթի վրա գրում ենք ձեզ, որպեսզի մի ակնթարթում, կապույտ համազգեստի ահից, ոչնչանաք բոցերի մեջ, մեր՝ ձեզ ծնողներիս ձեռքով…

«Հնչակը» չափազանց վտանգավոր էր ոչ միայն այն պատճառով, որ հեղափոխական էր, այլ որովհետև նաև սոցիալիստական էր։ Եթե «Արմենիա»,

«Հայաստան» կարդալով՝ մենք Թուրքիայի թշնամիներն էինք դառնում, մի բան, որ մեծ մեղք էր, «Հնչակ» կարդալիս՝ արդեն միայն այդ մեղքի տերը չէինք դառնում, այլև ավելացնում էինք դրա վրա աններելին, ամենածանրն ու ամենադաժանը՝ դառնում էինք ռուսաց ցարի անձնական, անհանդուրժելի թշնամին։ Սոցիալի՛ստ… Այս մի սարսափելի խոսք էր նույնիսկ հասարակ, անգամ անգրագետ մարդու հասկացողության մեջ։ Դրանից վախենում էին՝ ինչպես ժանտախտից։ Եվ ոչ միայն դրանից, այլև ամեն բանից, որ դրա նմանությունն էր հնչեցնում։ Չեմ կարող մոռանալ հետևյալ դեպքը։ Ես Շուշիի թեմական դպրոցի հոգաբարձու էի։ Մի օր հոգաբարձուական ժողովի մեջ կարդացվեց Գևորգ Ղարաջյանի նամակը, որով նա իր ծառայությունն էր առաջարկում իբրև ուսուցիչ։ Նամակի մեջ հիշված էր և Ղարաջյանի ուսումնական ցենզը՝ licencie des sciens sociales. Կարապետ եպիսկոպոսը՝ հոգաբարձության նախագահը, բացականչեց. «Սոցիա՛լ… Մերժել, որդի՛ք»։

Նրան բացատրում են՝ թե իրեն սարսափեցնող բառերը պարզապես նշանակում են, թե Ղարաջյանը սովորել է հասարակական գիտություններ։ Զուր աշխատանք։ Եպիսկոպոսը հայտարարեց, թե ինչ որ էլ նշանակեն այդ խոսքերը, այնուամենայնիվ, «սոցիալ» բառը չի կարելի թույլ տալ, դպրոցը կվնասվի դրանից։ Երկար ժամանակ նա համոզում էր՝ բերելով առարկություններ և դատողություններ։ Հոգաբարձությունը Ղարաջյանին ընդունեց ուսուցիչ, բայց «սոցիալ»-ից անչափ վախեցած եպիսկոպոսն էլ իրենն արավ, թշնամություն սկսեց ուսուցչական խմբի դեմ՝ գլխավոր պատճառներից մեկն էլ այդ «սոցիալը» դարձնելով։

Ասված է, որ արգելված պտուղը քաղցր է լինում։ Ամիսը թե երկու ամիսը մի անգամ երևացող «Հնչակը» մի խոշոր գրական երևույթ էր մեր հետամնաց իրականության մեջ։ Այն առաջին օրգանն էր, որ իր համար կռվան էր ընտրել նորագույն քաղաքատնտեսական վարդապետությունը՝ մարքսիզմը, գիտական սոցիալիզմը։ Այս մասին պարզ ու մեկին Հնչակյան կուսակցությունը խոսում էր իր ծրագրի մեջ։ Այդ ծրագրի առաջին իսկ հոդվածն ասում էր.

«Մարդկության ահագին մեծամասնությունը կազմող աշխատավոր, արդյունաբերող դասակարգի կատարյալ ազատումն (emancipation) ամեն շահագործությունից ու սեփականազուրկ ստրկական դրությունից, որոնց նա ենթակա է կապիտալիստ, սեփականատեր ու իշխող փոքրաթիվ դասակարգի կողմից, կլինի միմիայն այն ժամանակ, երբ արդյունաբերողները կլինեն տեր արդյունաբերության բոլոր ուժերի ու միջոցների, որպիսիք են հողը, գործարանը, հանքերը, հաղորդակցության ու նյութական հարաբերության ամեն միջոցները և այլն»։

Եվ ապա՝ «Ազատումն արդյունաբերող դասակարգի՝ նշանակում է ազատումն ամեն մարդու, երկու սեռին էլ պատկանող, նշանակում է հասարակական-տնտեսական կատարյալ ազատություն ամբողջ մարդկության։

Ներկա քաղաքակիրթ մարդկության հասարակական, կապիտալական կոչված, կազմակերպության պայմաններն իրենց զարգացման ընթացքում իրենց արգանդից, իրենց ձևերի միջից բնական կերպով ծնունդ են տվել ու առաջացրել սեփականատիրության մի նոր ձևի ամեն մտավոր ու նյութական տարրեր։ Այդ նոր ձևն է՝ արդյունաբերության բոլոր միջոցների ու արդյունքի սեփականության հավաքական (collectif)՝ համայնական ձևը, որով նրանք կլինեն ընդհանուր սեփականություն արդյունաբերող հասարակության։

Իր այդ պատմական պարտքն ու գործն ի կատար ածելու համար ամեն քաղաքակիրթ երկրներում արդյունաբերող դասակարգը պետք է կազմակերպվի իբրև քաղաքական ինքնաճանաչ ու ինքնուրույն կուսակցություն և, իր տրամադրության տակ գտնված ամեն հասարակական ու քաղաքական միջոցները գործ դնելով և բոլոր երկրներից իրար հետ միանալով, ձգտի կատարել կոմունիստական, սոցիալական հեղափոխությունը։ Այդ հեղափոխությամբ արդյունաբերող դասակարգն իր ձեռը կգցե քաղաքական ղեկը՝ խլելով այն ներկայումս իշխող դասակարգից, վերջ կդնե տարբեր դասակարգերի գոյության ու նրանց մեջ եղած դասակարգային կռվին և կհաստատե սոցիալիստական հասարակական կազմակերպություն։

Այդ հասարակական կազմակերպությունն իրական կարողություն կտա, ուղղակի ժողովրդային օրենսդրության ձևի տակ, ամբողջ հասարակությանը և յուրաքանչյուր անհատին միջամտելու, քննելու ու վճռելու բոլոր հասարակական գործերն ու դրանց կարգադրությունները. այդ կազմակերպությունը լիառատ ու անբռնաբարելի կերպով կնպաստե յուրաքանչյուր անհատի և ամբողջ հասարակությանը, բոլոր՝ անհատական, տնտեսական ու հասարակական ուժերի՝ ընդունակությունների ու կարողությունների լիակոչ մասի ու կատարյալ զարգացման և ներդաշնակ ու որոշ կերպով կկանոնավորե հասարակական ու տնտեսական բոլոր հարաբերությունները։

Դա՛ է արդյունաբերող դասակարգի պատմական ձգտումն ու նպատակը կապիտալական արդյունաբերության տիրապետություն ունեցող ամեն երկրում. դա՛ է այդ երկրների նաև սոցիալիստ-ռամկավարականների ձգտումների նպատակակետը»։

Կարդալով այս տողերը, կարելի է կարծել, թե հայ սոցիալիստ-ռամկավար (սոցիալ-դեմոկրատ) հնչակյանները գալիս էին նոր սկզբունք հայտարարելու հասարակական հարցի լուծման համար։ Այս արդեն արմենականների ողորմելի տիրացուական-ազգամոլական աշխարհայացքը չէր, որ չէր կարող բազմություններ ոգևորել ու կապել իրար հետ. այս համամարդկային այն վարդապետությունն էր, որ

գալիս էր դառնալու բոլոր ճնշվածների, բոլոր հարստահարվածների կրոնը։ Եվ ուրեմն, հայ աշխատավոր ժողովրդի, հայ գյուղացիության ազատագրումը հայ առաջին սոցիալ-դեմոկրատները պիտի տանեին այն ճանապարհով, որ գծել էր գիտական սոցիալիզմը, այսինքն՝ դասակարգային ուղղությամբ, միջազգայնության (ինտերնացիոնալիզմի) նշանի տակ, որ միացնում է բոլոր ազգերի հարստահարված զանգվածներին՝ միասին մղելու ազատարար պայքարը բռնակալների և շահագործողների դեմ։

Չափազանց հետաքրքրական տեսարան պիտի բաց անեին հնչակյաններն իրենց այդ գործառնությամբ։ Նրանք պիտի կազմակերպեին կեղեքվող դասակարգերը, պիտի հեղափոխականացնեին նրանց՝ իրենց տնտեսական շահերի գիտակցությամբ և ամբողջացնեին Ասիայի բազմատանջ հողի վրա շահագործվող աշխատանքի միջազգային համերաշխությունը, որ պիտի իրար մոտեցներ հայ ու քուրդ գյուղացիներին և սովորեցներ նրանց ոչ թե իրար ծառայել, այլ միացած՝ կռվել թուրք կալվածատիրոջ և հայ վաշխառուի դեմ։ Սա կլիներ մի շատ խոշոր, համաշխարհային նշանակություն ունեցող առաքելություն, հարյուրապատիկ դժվարին, քան հայդուկային գործունեությունը, բայց հազարապատիկ ավելի բարերար ու մեծագործ։

Կարո՞ղ էր Հնչակյան կուսակցությունն իր ուսերի վրա բարձել մի այսչափ մեծ պարտականություն՝ թեկուզ այն շատ դանդաղորեն, փոքրիկ մասնիկներով կատարելու պայմանով։ Իր ծրագրի երկրորդ հոդվածով ասում էր՝ ո՛չ, չի կարող։ Այս հոդվածը հանդիսավորապես հայտարարում էր, թե սոցիալիստական գործունեությունը, կոմունիստական հեղափոխությունը նրա համար հեռավոր նպատակներ են։ Իսկ մերձավոր նպատակը, որին նա ձեռնարկում էր իսկույն, ազգայնական շարժումն էր, հայդուկային հեղափոխությունը։ Հայտնի է, որ Կարլ Մարքսն ատելով ատում էր այդ տեսակ գործառնությունը՝ դավադրական, տեռորիստական իր ամբողջ բովանդակությամբ։ Բայց հայ իրականության մեջ հայտարարվում էր, որ ինտերնացիոնալիզմը և ազգայնամոլությունը իրար չեն խանգարում։ Ահա ինչպես էր պատճառաբանվում այդ օրինականացող կարելիությունը։

«Հայ ժողովուրդը,- ասում էր երկրորդ հոդվածը,- ներկայումս գտնվում է միապետական-քաղաքական կարգերի տակ, որոնց կառավարական, հարկային ու ֆինանսական սիստեմներն ավերիչ են նրա համար. նա գտնվում է նաև այնպիսի տնտեսական մի շրջանում, երբ մի կողմից սկսել են ծագել արդյունաբերության կապիտալական կարգեր և մյուս կողմից՝ շարունակ ընկնում ու քայքայվում են տնտեսական նահապետական կերպերը։ Այդ բոլոր պայմանների շնորհիվ է, որ հայ սոցիալիստ-ռամկավարականի համար սոցիալիստական հասարակական կազմակերպության իրագործումը հայության մեջ՝ հայտնվում է հեռավոր նպատակ, և նրա գործունեության ու ձգտումների առաջ ներկայանում է մեկ ուրիշ անմիջական

պահանջ, իբրև մոտակա նպատակ։ Ահա հենց այդ մոտակա նպատակն է, որ գործնականապես դրված է հայ սոցիալիստ-ռամկավարականի, հայ հեղափոխականի առջև, Հնչակյան կուսակցության առջև։

Այդ մոտակա նպատակը կայանում է հետևյալում։ Հեղափոխել ու ոչնչացնել միապետական կարգերը, փրկել հայ ժողովրդին իր ընդհանուր ստրկական դրությունից, տալ նրան քաղաքական կարելիություն՝ միջամտելու քաղաքական գործերում, վերացնել այն խոչընդոտները, որոնք արգելք են լինում նրա տնտեսական զարգացման, առհասարակ նրա կուլտուրական առաջադիմության, ստեղծել քաղաքական պայմաններ, որոնք աշխատավոր դասակարգին միջոց տան ազատ կերպով արտահայտելու իր ձգտումներն ու պահանջները՝ ավելի ու ավելի բարելավելու աշխատանքի ծանր պայմանները, դասակարգային գիտակցություն ձեռք բերելու ու կազմակերպվելու իբրև ինքնուրույն քաղաքական մարմին և դյուրացնելու նրա այն բոլոր հասարակական ջանքերը, որոնք պետք է, ամեն տրամադրելի հասարակական պայմանների միջոցով, նպաստեն նրա առաջխաղացությանը դեպի հեռավոր նպատակը»։

Վերածելով այս բոլորը սովորական, հասկանալի լեզվի, դուրս է գալիս, որ հնչակյան մարքսիստները ծրագրում էին Հայաստանը կռվով ազատել սուլթաններից ու ցարերից, դարձնել այն բուրժուական հանրապետություն, ապա մի մեծ և գուցե ավելի ահավոր պատերազմով ազատել բուրժուազիայի ձեռքից և նետել կոմունիստական հեղափոխության գիրկը։ Անհեթեթությունը չափազանց ակներև է։

«Այդ բոլոր նկատումների հիման վրա,- շարունակում էր ծրագիրը,- Հնչակյան կուսակցության մոտակա նպատակն է՝ կռիվ մղել միապետական կարգերը տապալելու համար և նրանց փոխարինելու հանրային ռամկավարական սահմանադրական կարգերով»։

Այդ կարգերը մեջ բերելուց հետո, ծրագիրը բաց էր անում իր երրորդ հոդվածը։

«Նկատելով, որ հայության ամենաստվար մեծամասնությունը կազմում են թուրքահայերը, և նրանց բնակավայրը մեր հայրենի հողի ամենամեծ տարածությունն է,

Նկատելով, որ հայության այդ մեծամասնության Դատը Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածի զորությամբ, որպես և այլ միջազգային պայմանագրերի զորությամբ, արդեն մտած է միջազգային իրավունքի դրական շրջանը և ճանաչված եվրոպական մեծ պետությունների կողմից,

Նկատելով մյուս կողմից, որ թուրք տերության միապետական կարգերը քաղաքական, հասարակական ու տնտեսական անտանելի ճնշման են ենթարկում հայ ժողովրդին,

Նկատելով, որ ամեն տեսակետից այդ դրությունն անպայման կերպով անհնարին է դարձնում հայ ժողովրդի հասարակական-տնտեսական ու քաղաքական որևէ առաջադիմություն, որպես նաև մշտական սպառնալիք ու զենք է նրա մարդկային գոյության դեմ,

Նկատելով նաև թուրք կայսրության քաղաքական, տնտեսական, ֆինանսական ու նյութական ամենաանկարգ, անցյալ ու սնանկացած դրությունը և դրա ու ներքին խռովությունների ու ցնցումների պատճառով այլ հավաստի ու անխուսափելի դարձած թուրք պետության կործանումը, որին մյուս կողմից էլ նպաստում են եվրոպական տերությունների հաճախ հարվածները, ինչպես նաև եվրոպական Թուրքիայում և այդ կայսրության այլ մասերի սիստեմաբար պատառ-պատառ լինելն, ընկնելով ուրիշների ձեռքը,

Այդ բոլոր նկատումների հիման վրա պատմական առաջնակարգ անհրաժեշտություն է՝

1. Որ հայ հեղափոխական գործունեությունն այսօր բացառապես նվիրվի թուրքահայ ժողովրդի դատի պաշտպանության ու լուծման՝ համաձայն մոտակա նպատակի,

2. Որ, ուրեմն, հեղափոխական գործունեության ասպարեզն է Թուրքաց Հայաստանը,

3. Որ հայ ժողովրդի ու Հայաստանի ճակատագիրը միանգամից և ընդմիշտ պետք է զատվի թուրքական կայսրության ճակատագրից, ըստ որում, պատմական պահանջ ու անհրաժեշտություն է ներկայանում հայ ազգային անկախությունը, որն էլ այդպիսով կազմում է մոտակա նպատակի մի հիմնական մասն ու առաջին պայմանը»։

Այսպես ուրեմն, մինչ Հայոց հարցը թե՛ հայ ժողովրդի ստվար մեծամասնության և թե՛ մանավանդ Եվրոպայի պետական անձանց ըմբռնողությամբ լոկ ռեֆորմների, լոկ կյանքի, ստացվածքի և պատվի ապահովության հարց էր՝ իրագործելի տեղային համեստ ինքնավարության միջոցով, նորակազմ սոցիալիստական կուսակցությունն առաջին պահանջ էր դարձնում Հայաստանի անկախությունը, մի հանգամանք, որ իհարկե կատաղեցնում էր սուլթան Համիդին՝ նրա ձեռքը միջոց տալով արդարանալու Եվրոպայի առաջ, թե հայերը Բեռլինի Դաշնագրի 61-րդ հոդվածը չեն ուզում, այլ ավելին։

Իսկ այդ անկախությունն իրագործելու համար հնչակյաններն ընտրում էին այս միջոցները.

«Մոտակա նպատակին հասնելու միակ միջոցն է հեղափոխությունը, այսինքն՝ պետք է բռնի կերպով կերպարանափոխել, հեղաշրջել ներկա հասարակական կազմակերպությունը Թուրքաց Հայաստանում՝ կռիվ մղելով թուրք տերության դեմ՝ ժողովրդական ընդհանուր ապստամբության միջոցով։

Այդ գործունեության միջոցներն են՝

1. Պրոպագանդա և ագիտացիա մամուլի, գրքերի ու խոսքի միջոցով ազգի մեջ, ամեն շրջաններում և՝ գլխավորապես ու առաջնապես ժողովրդային աշխատավոր դասերի մեջ՝ տարածելով հնչակյան հեղափոխական գաղափարները և կազմակերպելով նրանց մեջ հեղափոխական կազմակերպություններ ու ապստամբական գնդեր։

2. Տեռորական գործողություն իբրև պատիժ թուրք բռնավորներին, որպես և լրտեսներին, մատնիչներին, դավաճաններին։ Տեռորը պետք է լինի հեղափոխական կազմակերպության ինքնապաշտպանության միջոց և հասարակությունը բռնավորների ու վատերի գործերից պաշտպանելու համար մի զենք։

3. Ասպատակային գնդերի կազմություն՝ իբրև մշտական պատրաստի մարտական ուժ կառավարական զորքերի կամ այլ վայրենի ցեղերի հարձակումներին դիմադրելու, ժողովրդին պաշտպանելու համար։ Ընդհանուր ապստամբության միջոցին այդ գնդերը կարող են կատարել առաջավոր գնդերի դեր։

4. Կազմակերպությունն ընդհանուր կուսակցության՝ պետք է բաղկացած լինի բազմաթիվ կազմակերպված խմբերից, որոնք ամենքը սերտ կերպով կապված են միմյանց հետ, իբրև մեկ և ամբողջ մարմին, մի կանոնավոր ամբողջություն, մեկ և ընդհանուր համատիպ ուղղությամբ ու տակտով գործող՝ ենթարկված ընդհանուր կազմակերպությունը ղեկավարող մի կենտրոնական մարմնի։

5. Ապստամբական զորագնդերի կազմակերպություն։

6. Ընդհանուր ապստամբության ժամանակը։ Որևէ պատերազմ, մղված այս կամ այն տերության կողմից Թուրքիայի դեմ, պետք է համարել հարմար բոպե մոտակա նպատակի իրագործման համար»։

Ի վերջո, կուսակցությունն այսպես էր որոշում իր վերաբերմունքը դեպի ուրիշ ազգերը.

«Վաստակել հայ ժողովրդին վիճակակից Հայաստանի այլ բնակիչների, որպիսիք են ասորիները, քրդերը, համակրությունը դեպի հեղափոխական գործը և նրանց աջակցությունն այդ գործում, որը միաժամանակ հայտնվում է նաև նրանց, իբրև նույն բռնակալության տակ ճնշված ժողովրդի ազատության գործը։

Համերաշխ գործակցություն հաստատել թուրքական լծի տակ հեծող այլ քրիստոնյա ազգերի հեղափոխական մարմինների հետ, որոնց հետ ջանալ, եթե հանգամանքները ներեն, համատեղ ապստամբել ընդհանուր թշնամու՝ թուրք կառավարության դեմ։

Հնչակյան կուսակցության ամենաջերմ իղձն է ընդհանուր անկախ դաշնակցություն, նման Շվեյցարիայի դրության, բոլոր փոքրիկ ազգերի Արևելքում, երբ դրանցից մնացածներն էլ ազատված կլինեն թուրքական լծից»։

Բ

Չկարծե՛ք, ընթերցո՛ղ, թե ես ձեզ ուզում եմ տալ Հնչակյան կուսակցության պատմությունը, ուստիև բերեցի այսքան ծրագրային մանրամասնություններ։ Ո՛չ, այդպիսի դիտավորություն ես չունեմ։ Ծրագրային մանրամասնությունները չափազանց կարևոր են իբրև առատ նյութեր թուրքահայկական հեղափոխությունը բոլոր կողմերից ուրվագծելու համար։ Ժամանակագրական կարգով Հնչակյան կուսակցությունն է ձեռք բերել ավագությունն այն շարժման մեջ, որ անընդմեջ տևեց 32 տարի՝ 1888-ից մինչև 1920-ի վերջերը։ Իսկ ծրագրային մանրամասնությունների մեջ Հնչակյան կուսակցությունը հավաքել է այն ամենը, ինչ հայ միտքը կարողացել է կերտել թուրքաց սուլթանների ճանկերից Հայաստանի ազատությունը գջլելու համար։ Կարող ենք վստահ լինել, որ այստեղ ասված է ամեն ինչ, և ուրիշ կազմակերպությունները միայն կրկնել են հնչակյան ծրագիրն ուրիշ բառերով, ուրիշ կառուցումների վրայով։

Եթե տարրալուծենք այն պայքարը, որ կանոնադրված և պատճառաբանված է այս ծրագրային շատախոսությունների մեջ, տակը կմնա իսկական կորիզը, այն, որ հեղափոխական մանկության օրերի երգն այնքան ակեղծորեն անվանել է կռիվ բահերով. իսկ մենք կավելացնենք՝ մաուզերի և մանլիխերի դեմ։ Ահագին բանակներ շարժելու կարողություն ունեցող Թուրքիային հայությունը պատերազմ էր հայտարարում հայդուկների փոքրիկ խմբերով։ Ճիշտ է, մի ժամանակ հայդուկները մեծ-մեծ գործեր են տեսել Հունաստանում, Սերբիայում, Բուլղարիայում, բայց այն ժամանակներն ուրիշ էին, գնացել-անցել էին անդառնալի կերպով։ Եվ ասե՞լ, որ հայդուկային պատերազմները երբեք իրենք իրենց միջոցներով՝ լոկ հայդուկային բազուկներով, ազատություն չէին ստեղծել որևէ ազգի համար։ Հայդուկները կռվել են քաջաբար, տասնյակ տարիներով, պաշտելի հերոսներ դարձել իրենց ժողովուրդների համար, բայց միշտ ազատողը եղել են ռուսական պատերազմները։ Մենք պատրաստում էինք հայդուկային խմբեր, բայց ո՞վ պիտի գար իր հաղթական պատերազմով մեր հայդուկային կռիվը Հայաստանի ազատություն դարձնելու։ Չգիտեինք։ Սկսում էինք արյունահեղությունը, առանց նրա գինն իմանալու, առանց շրջահայացության, առանց կշռադատելու։

Կռիվ բահերով։ Այս թշվառ պատերազմի վրա ոչինչ չէր ավելացնում տեռորը, ահաբեկումը, որ վախեցնելու միջոց է, բայց պատերազմ չէ, երբ փոքրաթիվ անհատների կողմից գործադրվում է պետական խոշոր կազմավորումների դեմ։ Մնում էր ընդհանուր ժողովրդական ապստամբությունը։ Բայց այս էլ մի անբովանդակ ֆրազ էր դառնում թուրքահայկական իրականության տեսակետից։ Մի ժողովուրդ ապստամբեցնելու համար նրան պետք էր դեռ լավ զինել, իսկ այդպիսի ահագին, վիթխարի մի գործ հայերի մեջ իր աղքատիկ գանձարկղով երբեք չէր կարող գլուխ բերել մի հեղափոխական կուսակցություն։

Ի՞նչ էր մնում, ուրեմն։ Զտենք ծրագիրն ավելորդություններից։ Ամենամեծ ավելորդությունը սոցիալիզմի անունից խոսելն էր։ Հնչակյան կուսակցության մկրտարանը, եթե ունեցել է կնքահայրություն, ապա նրա ներկայացուցիչը Մարքսը չի եղել, այլ ռուսաց նարոդնիկությունը, հանձին Բակունինի, Տկաչյովի և ուրիշների։ Իբրև ռուսահայեր՝ կրթված ռուսական դպրոցներում, «Հնչակի» հիմնադիրները Ժնևում գտնվում էին ռուս էմիգրանտների այն թևի ազդեցության տակ, որի հեղափոխական աշխարհայացքի դեմ պայքարում էր Պլեխանովը։ «Հնչակը» իր ուսուցիչ անվանում էր Ռաֆֆուն։ Եվ այս ճիշտ էր շատ մեծ չափերով։ Ռաֆֆու «Կայծերի» մեջ էր կուսակցությունը գտնում իր հայդուկային ռազմագիտությունը։ «Կայծերի» հերոսների անունները դառնում էին հնչակյան հեղափոխական գործիչների կեղծանուններ։ Եվ երբ սա այսպես է, նշանակում է, թե Մարքսը չէր կարող լինել հնչակության ուսուցիչը։ Նա հանդես էր գալիս ծրագրի մեջ Ռաֆֆուն զարդարելու համար։ Եվ այս զարդարանքից հնչակյանները երբեք չհրաժարվեցին, մինչև վերջ իրենց անվանում էին սոցիալ-դեմոկրատ։

Նորակազմ կուսակցությունը, գործելով Ժնևից, ավելի աչքի ընկնող հաջողություն գտնում էր թուրքահայերի մեջ, մասնավորապես Կ.Պոլսում։ Այստեղ նրան հոգում էին արմենականները, պայմանով, որ գործունեության մեջ խոսք անգամ չլինի սոցիալիզմի մասին։ Ժնևի կենտրոնը համաձայնություն տվեց, որից հետո սկսվեց մի շատ ուժեղ գործունեություն։ Տրապիզոնում հաստատվեց կենտրոնական կոմիտե, որ հարաբերություններ սկսեց երկրի ներսերի և մասնավորապես մերձավորագույն տեղի՝ Էրզրումի հետ։ Առհասարակ հնչակյանությունը գործողությունների վայր էր ընտրում Փոքր Ասիայի կողմերը։ Արևմտյան Հայաստանում երևան էր եկել մի տեղական ինքնաբույս կազմակերպություն՝ «Գաղտնի ընկերություն» անունով, որի գլխավոր ղեկավարներն էին մշեցի Հակոբ սարկավագը և ալաշկերտցի Հարություն-աղան։ Առաջինը, որ հայտնի էր ավելի «Սարկավագ» անունով, ուներ իր փոքրիկ հայդուկային խումբը, որ արդեն անուն էր ստեղծել քրդերի հետ իր ունեցած ընդհարումներով։

Այս սարկավագի խմբին միանալու համար էր, որ 1889թ. մայիսին Պարսկաստանի Սալմաստ գավառից դեպի Վան ուղևորվեցին ժամանակի ռոմանտիկ տրամադրությամբ լցված երեք երիտասարդներ, որոնցից երկուսը վանեցի էին՝

[Հովհաննես] Ագրիպասյան [(արմենակյան)] և Գուլաքսզյան, իսկ երրորդը՝ թիֆլիսեցի՝ Վարդան Գոլոշյան։ Մանավանդ վերջինը տարված էր բաֆֆիական գաղափարներով և միամիտ անձնազոհության մի սրտառուչ պատկեր էր ներկայացնում։ Երեքն էլ զինված էին, տանում էին իրենց հետ իրենց ստացած նամակները, նույնիսկ ճանապարհին օրագրական հիշատակարան էին գրում՝ նրա մեջ պատմելով իրենց հայրենասիրական զգացմունքները և թե ինչի համար են գնում։ Չուհ-Գյադուկ մեծ լեռնանցքի մի կիրճում երեք միամիտները հանդիպում են մի խումբ թուրք զապթիաների, կռվի են բռնվում նրանց հետ։ Գուլաքսզյանը փախչում ազատվում է, իսկ մյուս երկուսը սպանվում են։ Առաջին զոհերն էին սրանք, հայդուկային երեխայական մտայնության առաջին զոհերը։

Այս լուրը տարածվեց ամեն տեղ՝ հիացմունք և խանդավառություն պատճառելով հայ շրջաններին։ Նահատակներ… Այսպես են մեծարվում երկու ընկածները։ Զրույցների մեջ էին մտնում սրանք, ավելի ևս իդեալացրած, փայլուն կերպարանքով։ Այդ զրույցները մեզ մոտ՝ Շուշի էլ հասան. պատմվում էին հավաքույթների մեջ, հավաքական մտայնություն էին ստեղծում։

Իսկ Վանի Խալիլ-փաշան այս փոքրիկ, անհավասար կռվից ստեղծեց իրեն փառավորող մի ամբողջ պատերազմական գործ։ Երեքի արշավանքը մեծ դեպք հայտարարվեց։ Սպանվածների վրա գտնված թղթերը թարգմանվեցին և տպագրվեցին Կ.Պոլսի լրագրերում։ Դեպքի մասին խոսեցին ոչ միայն եվրոպական լրագրերը, այլև Կ.Պոլսի դեսպանները։ Փոքրիկ դրաման իր բոլոր մանրամասնություններով մտավ անգլիական պառլամենտական «Կապույտ գրքի» մեջ։ Աբդուլ-Համիդը փաստ ունեցավ ձեռքին, թե սկսվել է հայերի ապստամբությունը Թուրքիայի դեմ։ Խալիլ-փաշան ավելի ևս սաստկացրեց իր ճնշումները Վանի հայերի վրա, ստիպեց նրանց ստորագրել այնպիսի ուղերձներ, որոնց մեջ նրանք իրենց անսահման հլու հպատակությունն էին հայտնում սուլթանին, ասում, որ միանգամայն գոհ են, ոչ մի բարենորոգման կարիք չեն զգում և խնդրում էին, որ կառավարությունն անխնա պատժի հայ խռովարարներին, որոնք արտասահմանից գալիս են վրդովելու սուլթանի խաղաղ հպատակների կյանքը։

Չուհ-Գյադուկի զույգ սպանությունները կազմում էին, եթե կարելի է ասել, նախատոնակ՝ ավելի խոշոր, ավելի խոր ցնցող դեպքերի, որոնք հաջորդաբար, կարճ ընդհատումներով ծայր էին տալիս 1890 թվականին. մի տարի, որ վճռական նշանակություն էր ստանում հայ ժողովրդի ճակատագրի համար։

Դեպքերից առաջինը տեղի ունենացավ Էրզրում քաղաքում, այդ տարվա հունիսի 8-ին և ներկայացնում էր հնչակյանների կազմակերպած դիմադրությունը թուրք կառավարությանը։ Ոստիկանությունը զորքերով շրջապատեց հայոց եկեղեցիներից մեկը, որպեսզի խուզարկություն կատարի նրա մեջ՝ պատրվակ բռնելով այն, թե ինքը տեղեկություն ունի, որ եկեղեցու մեջ զենքերի պահեստ կա։

Բազմությունը, որ հավաքվել էր եկեղեցու շուրջը, լսում է, որ խուզարկություն կատարող պաշտոնյաներն անարգանքով են վերաբերվել եկեղեցու սրբություններին։ Բայց և այնպես, խուզարկությունն անարգել կատարվում է, և կասկածելի ոչինչ չի գտնվում։ Հետևյալ օրը հայերը փակում են իրենց խանութները և ժողովվում եկեղեցու բակում՝ իրենց առաջնորդից բացատրություն պահանջելու և եղած անարգանքների դեմ բողոք հայտնելու համար։ Պարզ նկատելի էր, որ ցույց էր կատարվում կառավարության դեմ։

Վալին պահանջում է բացել խանութները, բայց հայտնվում են մի խումբ մարդիկ, որոնք արգելում են բաց անել։ Այդ ժամանակ վալին զորք է ուղարկում ամբոխի դեմ։ Հրամանատարն սկսում է համոզել, որ հավաքվածները հեռանան։ Երբ այս անլսելի է մնում, զորքերը հրացան են պարպում օդի մեջ։ Այս էլ չի օգնում։ Հայերի կողմից ռևոլվերի պայթյուններ են լսվում։ Այդ ժամանակ հրամանատար սպան զինվորներին հրամայում է դուրս քշել ամբոխը եկեղեցու գավթից։ Զինվորները հարձակվում են հայերի վրա, բայց հայերն էլ զինվորների վրա են գնում։ Երկու կողմերը խառնվում են իրար։ Հայերի կողմից ընկնում են սվիններով սպանվածներ և վիրավորվածներ։ Սարսափով բռնված ամբոխը դուրս է գալիս գավթից և փախչում դեպի տները։ Արյունահեղությունը մեծանում է այս վայրկյանից։ Փողոցները լցվում են վաղօրոք պատրաստած և զինած թուրք խուժանով, որ հարձակվում է փախչող հայերի վրա։ Ընդհանուր առմամբ այդ օրը հայերի կրած կորուստը լինում է մոտ 20 սպանված և 200-300 վիրավոր։

Աբդուլ-Համիդը հայկական կոտորածների սկիզբն էր դնում։ Թուրք կառավարությունը պետություններին ուղարկած ծանուցագրի մեջ ամբողջ մեղքը գցում էր հայերի վրա, այնպես, որ դուրս էր գալիս՝ թե հայերն իրենք են իրենց կոտորել։

Իսկ հայերի համար հունիսի 8-ի կոտորածը դառնում էր մի չտեսնված մեծ գործ։ Ահա հայերն էլ ապստամբեցին, ահա նրանց արյունն էլ թափվեց։ Հիմա որ Եվրոպան կմիջամտի, կազատի հայերին թուրքերի ձեռքից։ Երգ հյուսվեց՝ խրոխտ, ինքնավստահ, անչափորեն լցված ինքնասիրության զգացմունքից ժայթքած, որ շատ պարզորեն պատկերում է Էրզրումի արյունահեղության բերած ակնկալությունները.

Ձայն մը հնչեց Էրզրումի հայոց լեռներեն,
Թունդ-թունդ ելան հայոց սրտեր զենքի շաչյունեն։
Հայ գյուղացին դարուց ի վեր սուր, զենք չտեսած՝
Դաշտը թողուց, սուր, հրացան բահի տեղն առավ։

Քնքուշ կյանքը ծանր է թվում հայ օրիորդին,
Զենքը ձեռքին հորդորում է հայոց քաջերին։
Հայ տիկինը ստիպում է ամուսնուն գնալ՝
Պատերազմի դաշտի վերա վերք տալ՝ ստանալ։

Հայ ծերուկը ցուպը ձեռին լալով տենչում է՝
Հայրենիքի ազատություն տեսնել ու մեռնել։
Անմիություն՝ տունը քանդող հայոց խեղճ ազգին
Հրաժարեցավ, տեղի տվավ միության ձայնին։

Լսեց թուրքը ու սառեցավ արյունը վատին,
Չէր երազել հային տեսնել նա այդ վիճակին։
Եվրոպային լուրը հասավ շարժման հայ գեղջկին,
Ուրախական ողջույն տվավ հայրենասերին։

Ցնծա, մայր մեր, ո՜վ Հայաստան, որդիքդ միացան,
Ութ դարերու սուգ ու թախիծ քեզնից վերացան…

Այս սրտապնդիչ գեղգեղանքների մեջ ամեն դիրք կարող էր ճիշտ լինել, բացի միայն մեկից՝ Եվրոպայից։ Էրզրումի կոտորածը միայն «ի տեղեկություն» առնվեց Եվրոպայի դիվանագիտության կողմից։ Այդ պատճառով Հնչակյան կուսակցությունը մի ցույց էլ Կ.Պոլսում կազմակերպեց՝ բողոքելու համար այդ անտարբերության դեմ։ Այդ ցույցը տեղի ունեցավ Էրզրումի դեպքից երեք շաբաթ հետո՝ հուլիսի 15-ին, Կ.Պոլսում, որ հռչակված է Գում-Գափուի ցույց անունով։ Հետաքրքրական են այն նկատառումները, որոնք հարկադրեցին հնչակյաններին թուրքական մայրաքաղաքն ընտրել իբրև ցույցի վայր։ Այդ նկատառումներից կարելի է եզրակացնել, թե ինչ աստիճանի էր հասնում հեղափոխական կուսակցության քաղաքական հասունությունը։ Ցույցի գլխավոր հերոս Ճանկյուլյանն ասում է, թե պատճառները հետևյալներն էին.

«1. Հայաստանի մեջ պատահած կոտորած մը եթե Պոլսո մեջ հրապարակային բողոքի և զայրույթի տեղի չտա, հայաստանցիները կվհատին՝ տեսնելով, որ իրենց վրա մտածող չկա, և բոլորովին անհույս ու անօգնական թողնված են իրենց բարբարոս հարստահարիչներուն ձեռքը։ Այս աննպաստ գաղափարին հուզումը հեղափոխական նորածագ ոգուն ձուլման դեմ մեծ արգելք մը պիտի հանդիսանար. ցույցը հարմար կդիտվեր Պոլսո մեջ, քանի որ հայերու մտավոր, բարոյական և ազգային գլխավոր կենտրոն մը կնշվեր։

2. Հայաստանի մեջ կատարված կոտորած մը կրնար Եվրոպայի աչքեն վրիպել կամ տարբեր գույնով ներկայացվել անոր, կամ դարձյալ եվրոպական շահերուն հետ այնչափ մեծ առնչություն չունենալով՝ անտարբերությամբ դիտվել Եվրոպայի մեջ։ Եվրոպական դեսպաններուն աչքին առջև առաջ եկած ուժգին բողոք մը ավելի կնպաստեր Եվրոպայի ուշադրությունը հրավիրելու երկրին կացության վրա. միջազգային շահերու հանդեպ Կ.Պոլսո բացառիկ կարևորությունը անծանոթ չէր ոչ ոքի։

3. Եթե հայկական հուզումը սահմանափակված մնար միմիայն Հայաստանի մեջ, գլխավորաբար Ռուսիո ուշադրության առարկա պիտի ըլլար՝ ավելի մոտեն շոշափելով անոր շահերը իբրև սահմանակից պետության, և կրնար անոր պատրվակ մը ընծայել օրին մեկը հանկարծ գրավելու Հայաստանը, մինչդեռ շարժումը, տարածվելով Հայաստանեն դուրս՝ Թուրքիո մյուս կողմերը և մասնավորապես մայրաքաղաքին մեջ, մյուս մեծ պետություններուն ալ ուշադրությունը կդարձվեր հայկական խնդրին վրա, մասնավորապես Անգլիո, զոր, կնկատեինք, էր դատին ավելի համակիր, քան Ռուսիան։ Հայկական խնդիրը պետությանց միջև խնդիր մը դարձնելն ավելի նպաստավոր կերևար մեր ազգային շահերուն։

4. Մեր ազգային ցրված վիճակը և մայր երկրին մեջ բազմաթիվ օտար ցեղերու խառն բնակությունը կրնային անհաջողության մատնել միայն մայր երկրին մեջ կատարվելիք հայկական շարժում մը։ Հայության այս բացառիկ վիճակն ալ կպահանջեր, որ հայկական շարժումը Հայաստանի սահմաններեն դուրս կատարվեր. այդ պարագային Պոլիսը կարելի չէր անտես ընել, ուր 200 հազարե ավելի հայեր կբնակին՝ պանդուխտներով միասին։

5. Չարիքին աղբյուրը Պոլիս ըլլալով՝ հայտնի կնշմարվեր, թե բնաջնջման ծրագիրն էր, որ կգործադրվեր. նպատակահարմար կգտնեինք, որ առաջին բողոքն ալ պետք է ըլլար Կ.Պոլսո մեջ, նույն ինքն Պալատին քթին տակ…

6. Հինգ-վեց դարերե ի վեր գերության մեջ հեծող և մասամբ ստրկացած ժողովուրդի մը մեջ երբ հանգամանքներու բերմամբ ոգևորություն և հեղափոխական տրամադրություն կծագի, հեղափոխականները պարտական են օգտվել այդ հանգամանքեն և ոգևորությունեն՝ հեղափոխության ոգին ավելի հաստատ, ավելի գիտակցական ու գործնական դարձնելու և ընդհանրացնելու ժողովրդին խավերու մեջ. և հեղափոխական գաղափարը ծավալելու ու արծարծելու ամենեն արդյունավոր ու ազդեցիկ միջոցը հեղափոխական գործունեությունն է։

7. Երբ թուրք կառավարությունը և թուրք ժողովուրդը տեսնեին մի անգամ հայերուն մեջ տիրող համերաշխությունը և համոզվեին, թե Հայաստանի մեջ իրենց կողմե տրված հարվածն անպատճառ կրնա ունենալ իր հակահարվածը ուրիշ տեղ մը, և մանավանդ այդ ուրիշ տեղն ըլլար Կ.Պոլիս՝ միջազգային շահերու այդ խիտ կենտրոնը, կենթադրվեր՝ ավելի զգուշավոր քաղաքականության մը կհետևին և չեն համարձակվիր նոր կոտորածներ կազմակերպել երկրին մեջ»։

Այս մանրամասն պատճառաբանությունները մեր առաջ են հանում մի կուսակցություն, որ իր ձեռքն էր առել մի ամբողջ ժողովրդի ճակատագիրը, նրա ֆիզիկական գոյության հարցը, բայց իր այդ ահագին դերին վերաբերվում էր թեթևամտությամբ և տհաստությամբ։ Թուրքահայ ժողովուրդն այնպիսի դրության մեջ էր, որ ամեն մի խնամք և հոգածություն նրա մասին պիտի լիներ՝ պաշտպանել նրա գոյությունը։ Հնչակյանները շատ լավ գիտեին, որ սուլթան Համիդը բնաջնջման

քաղաքականություն է գործադրում հայերի վերաբերմամբ, բայց և այնպես, չէին ուզում, որ Ռուսաստանը գրավեր Թուրքահայաստանը, այսինքն՝ փրկեր թուրքահայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը։ Ի՜նչ տարբերություն Եվրոպայում ուսում առած այս «մարքսիստ» երիտասարդների և հին պահպանողական «դավաճան» համարվող կղերական Աշըգյան պատրիարքի մեջ, որ գրում էր Մակար կաթողիկոսին, թե ոչ մի պետություն չի կարող փրկել թուրքահայերին, բացի Ռուսաստանից, և աղաչում էր նրան՝ դիմել Ալեքսանդր Գ կայսրին և հայցել նրա հովանավորությունը։

Հնչակյանները հավատում էին, թե Անգլիան Ռուսաստանից ավելի համակիր է Հայոց դատին։ Սա նշանակում էր չիմանալ երեկվա պատմությունը, մոռանալ այն թշնամությունը, որ Անգլիան հանել է Հայոց հարցի դեմ՝ հենց առաջին իսկ օրերից։ Իմպերիալիստական մի գիշատիչ պետության առավելություն տալ մի ուրիշի նկատմամբ, այս մի ողորմելի մանկամտություն էր։ Կարծում էին, թե Թուրքիայի ամենահեշտ խոցելի տեղը Կ.Պոլիսն էր, ուր կենտրոնացած էին եվրոպական չափազանց խոշոր շահերը։ Մտածում էին, թե Եվրոպան այնքան վտանգված կտեսներ իր շահերը Կ.Պոլսի մեջ կատարված հայկական ցույցերից, որ կհարկադրեր սուլթանին բավարարել հայերին։ Չէին կարողանում մտածել, որ, ընդհակառակը, հենց Կ.Պոլսում վտանգված եվրոպական շահերը պիտի հարկադրեին պետություններին՝ ուժեղացնել սուլթանին, որպեսզի նա ճնշի հայկական շարժումը և այդպիսով պաշտպանի եվրոպական շահերը։ Տղայական միամտության ծայրահեղ աստիճանն էր՝ կարծել, թե Եվրոպան թույլ կտա, որ Կ.Պոլսում ուրիշ մի որևէ հեղինակություն բարձրանա, բացի սուլթանականից։ Չէին կարողանում հասկանալ հայ հեղափոխականները, որ եթե Եվրոպան միանգամից ցույցին ապստամբության իրավունք տար, այլևս վերջ ու սահման չէր լինի մի բուռ մարդկանց պահանջներին, և սուլթանական իշխանությունը, որի վրա եվրոպական կապիտալը հիմնում էր իր բարեբախտությունը, իրապես կդառնար գերի ցանկացած հեղափոխական կազմակերպության ձեռքի։

Բայց ամենից ծանր, մղձավանջային հանգամանք դուք տեսնում եք այն բանի մեջ, որ հնչակյանները գիտեն, թե իրենց շարժումներով պիտի կոտորածներ առաջացնեն ասիական Թուրքիայի հայ ազգաբնակչության մեջ, սակայն այս կոտորածներն են, որ պիտի առաջ բերեն եվրոպական միջամտություն և Հայոց հարցի բարեհաջող լուծում։ Թշվա՜ռ ժողովուրդ, որի արյունը ոչինչ արժեք չուներ նույնիսկ իր միջից դուրս եկած գործիչների համար, որոնք միայն աշխատում էին, որ այդ կոտորածներն անծանոթ չմնային Եվրոպային կամ սխալ մեկնաբանություններով չլուսաբանվեին։ Աշխատում էին, որ կոտորածները տեղի ունենային Եվրոպային մոտիկ տեղեր, նրա դեսպանների քթի տակ։ Դրվում էր թուրքահայ ժողովրդի մահվան դատավճիռը։ Համիդը վճռեց կոտորածներով պատասխանել հեղափոխականներին, իսկ հեղափոխականները չեն սարսափում, չեն փախչում այդ կոտորածներից, այլ վճռել են նրանցով դրդել, հարկադրել Եվրոպային, որ նա գործի։

Եվ այսպիսով դանակը դրվում էր հայ ժողովրդի կոկորդին։

Այս մեղքերը, տղայական անհեթեթությունները միայն հնչակյաններին չէին հատուկ։ Նրանք դարձան ամբողջ հայ հեղափոխության տխուր սեփականություն։ Կարելի էր միայն այն հավանականության վրա հույս դնել, որ ժամանակի ընթացքում հայ կազմակերպությունները կզգաստանան, կբուժվեն ռոմանտիզմից, կսկսեն բազմաթիվ փորձերով խրատված մտքի լրջությամբ ըմբռնել քաղաքական դասավորումների, ուժերի փոխհարաբերությունների ռեալ պահանջները և դրանց համեմատ էլ գործողության այս կամ այն եղանակի փոփոխումներ կտանեն։ Բայց, ի դժբախտություն հայ ժողովրդի, այդ հույսերը չարդարացան։ Ինչպիսի սկզբնական մեղքերի մեջ ծնվեցին այդ կազմակերպությունները, նույնպիսի մեղքերով էլ գնացին մինչև իրենց կատարյալ կործանումը։

1890թ. ամռանը մեծ խոսք ու զրույց տարածվեց Կ.Պոլսում տեղի ունեցած արյունալի դեպքի մասին, որի նմանը սուլթանների մայրաքաղաքը դեռ չէր տեսել։ Լրագրերը տեղեկություններ էին բերում, հետաքրքրությունն աճում էր հետզհետե։ Ինչ ասել կուզի՝ որ հուլիսի 15-ի ցույցը պատճառում էր ավելի ևս մեծ հրճվանք, քան Էրզրումի կոտորածը. Հայոց դատը շատ մեծ հաջողության էր հասնում։ Կասկած չէր մնում, որ այս անգամ Եվրոպան այլևս լուռ չէր մնա։ Հե՞շտ էր ասելը։ Դեռ երեկ ստրկության մեջ անասնացած հայությունը Թուրքիայում այսօր այնքան էր առաջ գնացել ազատասիրության ճանապարհին, որ տակնուվրա էր անում ամբողջ Կ.Պոլիսը մահմեդական շատ խոշոր տոնի՝ Գուրբան-բայրամի օրը, այն միջոցին, երբ օսմանյան ամբողջ բարձր պաշտոնեությունը, հավաքված Ելդըզի պալատում, համբուրում էր Աբդուլ-Համիդի քղանցքը։ Դեռ երբեք՝ Կ.Պոլիսը նվաճելու օրից չէր տեսնված այսքան հանդուգն մի արարք քրիստոնյա որևէ ժողովրդի կողմից։

Այս ճիշտ է՝ գործողությունը հերոսական էր։ Բայց պատվելով հանդերձ հերոսական անձնուրացությունն ամեն մի ազատագրական հեղափոխական շարժման մեջ՝ նայենք այն արդյունքներին, որոնք անհատական հերոսություններից ստացվում են մի ժողովրդի, մի մեծ դատի համար։

Գում-Գափուի ցույցն այս էր գծագրում. Հնչակյան կուսակցության կողմից խմբագրվել էր մի պահանջագիր, որի մեջ պահանջվում էր վերացնել հայ ժողովրդի վրա ծանրացած կացության դժոխային պայմանները։ Հնչակյան գլխավոր գործիչներից երկուսը, իրենց հետ վերցնելով հնչակյան զինված հայդուկներ, հուլիսի 15-ի առավոտյան, կիրակի, պիտի գնային Գում-Գափուի պատրիարքարանի Մայր եկեղեցին, և այդտեղ մեկը ժամերգության միջոցին պիտի բարձրանար սեղանին և կարդար հնչակյան պահանջագիրը, իսկ մյուսը, բռնելով այդտեղ գտնվող Աշըգյան պատրիարքին, պիտի հարկադրեր նրան գնալ իր հետ Ելդըզի պալատը, ուր այդ պահանջագիրը պիտի հանձնվեր սուլթան Աբդուլ-Համիդին։ Երկու գլխավորներն էին՝ Հարություն Ճանկյուլյան՝ վանեցի խանութպան Կ.Պոլսում, և Համբարձում

Պոյաճյան՝ ուսանող, որ կրում էր Մուրադ կեղծանունը։ Եկեղեցու մեջ գլխավոր կարգադրողի դերն իր ձեռքն էր առել Ճանկյուլյանը, իսկ Մուրադը նրա օգնականի պես մի բան էր։

Ճանկյուլյանը երկար մանրամասնություններով պատմել է այդ օրվա իր «հերոսությունները», և մենք այդ մանրամասնությունների մեջ տեսնում ենք, թե որքան շատ երեխայական գծեր կային այդ ցույցի մեջ։ Ճանկյուլյանը ցատկում է սեղանին, սկսում կարդալ «պահանջագիրը»։ Քահանաներից մեկը, աննկատելիորեն մոտենալով նրան հետևից, հանկարծ խլում է թուղթը նրա ձեռքից և փախչում սեղանի հետևը։ Ճանկյուլյանը ռևոլվերը բռնած վազում է նրա հետևից, բայց խաչկալի դուռը փակված էր, և նա իջնում է ցած՝ տեսնելու, թե ինչ եղավ Աշըգյանը, որ փախել էր եկեղեցուց։ Ողորմելի պատրիարքին նա գտնում է պարտեզի ճաղերի մոտ կծկված։ Տեսնելով ատրճանակը հաղթական հնչակյանի ձեռքին՝ թշվառականը սկսում է աղաչել, որ իրեն չսպանի։ Իսկ հեղափոխականը բռնում է նրա մորուքից, վեր է կացնում ու հրամայում, որ իր հետ գնա սուլթանական պալատ։ Աշըգյանը հրաժարվում է այդ բանից, աղաչանքներ է անում, ուշաթափվում ընկնում է։ Ճանկյուլյանն անողոք է։

Բռնության գործողությունները փոխադրվում են պատրիարքարանի շինության մեջ, ուր Աշըգյանը փակվում է մի սենյակի մեջ։ Ճանկյուլյանը պաշարման է ենթարկում այդ սենյակը՝ կանգնեցնելով նրա դռների մոտ ռևոլվերներով զինված հնչակյան զինվորներ. ինքն էլ շարունակ բանակցություններ է վարում պաշարված կղերականի հետ, սպառնում՝ նրա վրա իր ռևոլվերը քաշելով, թե կսպանի նրան, եթե չգնա իր հետ։ Աշըգյանը, պաշտպանվելով իր աղաչանքներով, հաճախակի նվաղումներով, համառորեն մերժում է այդ պահանջը. թե՛ պատրիարքին և թե՛ նրա կողմնակիցներին վախեցնելու, մանավանդ և մի հայի վրեժը հանելու համար, Ճանկյուլյանը տալիս փշրում է պատրիարքարանի դահլիճում կախված օսմանյան թուրղուն (պետական զինանշանը) և Աբդուլ-Համիդի պատկերը։ Պատրիարքին երկար այսպես տանջելուց հետո հնչակյան շեֆը դիմում է վերջին միջոցին։ Նորից մտնում է Աշըգյանի մոտ՝ տանելով իր հետ մի քանի հնչակյան զինվորներ։ Ներս մտնելուն պես այս վերջիններն ուղղում են ռևոլվերները պատրիարքի վրա, իսկ Ճանկյուլյանն ասում է, որ մի նշանով ռևոլվերները կարձակվեն, եթե նա իսկույն չգնա իր հետ։ Եվ թշվառ հոգևորականը չի կարողանում այլևս տանել իրեն ցնցող սարսափները, վեր է կենում և անձնատուր լինում։

Մի անզեն և վախից դողացող մարդուն նվաճելը մեծ հաղթություն են համարում հեղափոխականները։ Կիսաանզգա պատրիարքին դուրս են բերում փողոց։ Կիտվել է մեծ բազմություն։ Կանչում են. «Կեցցե՛ Հնչակյան կուսակցությունը», «Կեցցե՛ Հայաստան», «Կեցցե՛ ազատությունը»։ Պատրիարքին նստեցնում են կառքի մեջ, ինքը՝ Ճանկյուլյանն էլ նստում է նրա դիմաց և ցույցը վերջացած է հայտարարում։ Ժողովուրդը ցրվում է, բայց հնչակյան զինվորները գնում են կառքի ետևից։ Հազիվ քիչ

առաջ անցած՝ Աշըգյանը նորից ուշաթափվում է։ Նրան մտցնում են մի հույնի դեղատուն, ուր սթափեցուցիչ դեղերով ուշքի են բերում և նորից կառք նստեցնում։ Բայց այստեղից շատ առաջ չգնացած՝ երթը հանդիպում է թուրք հետևակ և ձիավոր զորքերի, որոնց տանում էր Դերվիշ-փաշան՝ հայերի ցույցը ցրելու համար։ Տեղի է ունենում կռիվ զորքերի և հնչակյանների մեջ։ Երկու կողմից էլ ընկնում են սպանվածներ և վիրավորվածներ։ Աշըգյանը փոխադրվում է մերձակա տունը, ուր հարց ու փորձի է ենթարկվում։ Ճանկյուլյանը ձերբակալվում է։

Ա՛յս էր հուլիսի 15-ի ամբողջ ցույցը։ Ի՞նչ օգուտ բերեց նա Թուրքահայաստանում անսահման տառապող հայ գյուղացիությանը։ Իրենք՝ հնչակյանները, ահագին նշանակություն էին տվել իրենց այդ գործին։ Այդ նշանակությունը երևի խոշոր էր, բայց հեղափոխական ռոմանտիզմի կողմից։ Ճանկյուլյանի ռևոլվերը և Աշըգյանի վրա գործադրած բռնությունները ոգևորիչ էին, հեղափոխական դաստիարակություն էին մտցնում ամբոխի մեջ, բայց կար մի ահավոր իրականություն, որի առջև նսեմանում էր այդ նշանակությունը։ Հեղափոխական դաստիարակություն այնպիսի ուղղությամբ, ինչպիսին ընդգրկել էր հայ հայդուկային մտայնությունը, չպիտի ծառայեր ամբողջ հայ ժողովրդի փրկության։ Այս արդեն շատ պարզ էր հեղափոխական բռնկումների առաջին իսկ խառն թվականին՝ 1890-ին։ Փտած էր այդ ուղղությունը հիմքից։ Միտք ունենալ կարող էին այդ շարժումները միայն այն դեպքում, եթե Եվրոպան, իսկապես, իր պաշտպանության տակ առած լիներ Հայաստանը։ Բայց այդպիսի բան չկար, ու կռիվը ներկայանում էր իբրև մենամարտ հայ ժողովրդի և Աբդուլ-Համիդի միջև։ Եվ պիտի հաղթեր Աբդուլ-Համիդը՝ իբրև անհամեմատ ուժեղ կողմ։

Գում-Գափուի դեպքը սուլթանը լավ պատրվակ դարձրեց կառավարական սպիտակ տեռոր տարածելու համար հայ ժողովրդի վրա։ Հարյուրավոր մարդիկ նետվեցին բանտերի մեջ՝ մատնվելով սարսափների և լուռ մահվան։ Թուրքական դատարանները մահվան դատավճիռներ արձակեցին, 10 տարով բանտարկություն, աքսոր նշանակեցին քաղաքական հանցավորների համար։ Այս դեռ Կ.Պոլսում, ուր եվրոպացիներ կային, մեծ պետությունների դեսպաններն էին նստում, որոնց ներկայությունը որոշ չափով զսպում էր Համիդին և համիդականներին։ Իսկ գավառներում այդպիսի հանգամանք չկար, և կառավարության ահաբեկիչ կամայականություններին վերջ ու սահման չկար։ Անգլիական «Կապույտ գրքերը», սակավաթիվ եվրոպացի ճանապարհորդների նկարագրությունները լի են քստմնելի փաստերով, որոնք անհավատալի են դարձնում, թե այդպիսի պայմանների մեջ կարող է ապրել մարդկային որևէ համայնք։

Հնչակյան կուսակցությունը կառավարական տեռորին պատասխանում էր կարմիր տեռորով, որի թատերաբեմն էր հանդիսանում գլխավորապես Կ.Պոլիսը։ Սպանվում էին հայ մատնիչները, հայ լրտեսները, որոնց թվում գտնվում էին և հայ

հոգևորականներ, սպանվում էին նաև էֆենդիական դասին պատկանող այնպիսի անհատներ, որոնք նկատվում էին իբրև հայկական հեղափոխության թշնամիներ։

Գում-Գափուի ցույցի մի ծանր հետևանքն էլ այն էր, որ հայ ժողովրդի գլխին մի երկրորդ բռնակալ Աբդուլ-Համիդ էլ էր նստում։ Դա Աշըգյան պատրիարքն էր։ Ցույցի հետևանքով նա հրաժարվեց պատրիարքությունից։ Բայց Աբդուլ-Համիդը հետ դարձրեց այդ հրաժարականը, Աշըգյանին իր ձեռքն առավ և դարձրեց իր ամենահավատարիմ և կամակատար գործակալը՝ հայ հեղափոխության դեմ կռվելու համար։ Աշըգյանը տեսնում էր, որ ոչ մի ուժ չկա սուլթանի դեմ հանդիման կանգնած, ուստի կատարելապես նրան էր նվիրվում, նրա «գթության» վրա հույս դնում և ամեն ջանք գործ էր դնում իր ժողովրդին ևս պատվաստել այդ ուղղությունը, դարձնել այն ազգային քաղաքականություն, դաստիարակել հասարակությունն այն հասկացողության մեջ, թե հայ հեղափոխականները ցնորամիտ երեխաներ են, օտարների գործիք։ Բայց այդպիսի մի խոշոր հեղաշրջում հասարակության հասկացողությունների մեջ չէր կարող կատարել մի անժողովրդական կղերական՝ լոկ պատրիարքական իշխանությունն ունենալով իբրև պրոպագանդայի հիմնավորության առհավատչյա։ Նրան չէին հավատում, նրան համարում էին հայ ժողովրդի իրավունքները Թուրքիային վաճառող դավաճան։ Գուցե նրա քարոզած քաղաքականությանը փոքրիշատե հեղինակություն տար Աբդուլ-Համիդը, եթե նա լիներ մի հասկացող կառավարիչ և ոչ թե մի ճիվաղ բռնակալ։ Աշըգյանի խոսքին նա կարող էր հեղինակություն տալ իր զիջումներով։ Բայց նա զիջումներ չէր ճանաչում, և մինչ Աշըգյանն իր կոնդակների ու ճառերի մեջ մինչև երկինք էր բարձրացնում սուլթանի մարդասիրությունը, հպատակասիրությունը և նույնիսկ հայասիրությունը, Աբդուլ-Համիդը արգելեց նույնիսկ հայերի Ազգային սահմանադրությունը՝ երեսուն տարվա մի հիմնարկություն, որ տեղի թե անտեղի հայ ժողովրդի սիրո և պարծանքի առարկան էր։ Այս հարվածը սաստկապես հարվածեց Աշըգյանին։

Ահա, թե որքան դժբախտ հանգամանքներ էին ստեղծվում զավառների մեջ հեծող հայ աշխատավոր ժողովրդի համար։

Ճգնաժամն աճում էր։

**Գ**

Էրզրումի և Գում-Գափուի դեպքերը, որոնց մեջ գործող հանդիսանում էին թուրքահայերը, բայց համարյա թե միմիայն ռուսահայերի ղեկավարությամբ՝ խոշոր ազդեցություն գործեցին և՛ Կովկասի հայկական կենտրոններում, և՛ գլխավորապես, իհարկե, Թիֆլիսում, ուր հավաքված էր հայ ինտելիգենտ երիտասարդության մեծագույն մասը։ Հայդուկային ազատամարտը, ինչպես տեսանք, սկզբից ևեթ ռուսահայերի մեջ էր ժողովրդականացել իբրև թուրքահայերի համար ազատություն ձեռք բերելու ամենալավ միջոց։ Տեղի ունեցած դեպքերի թարմ տպավորության տակ

Թիֆլիսում էլ գոյություն ստացավ հայդուկային կռվի մի կազմակերպություն՝ «Երիտասարդ Հայաստան» անունով։

1890թ. ամռանը Թիֆլիսում էին գտնվում վերևում հիշատակված մշեցի Սարկավագը և ալաշկերտցի Հարություն-աղան, որոնք եկել էին ռուսահայերից զինվորներ հավաքելու իրենց խմբերի համար։ Պետերբուրգից Թիֆլիս էր եկել և երիտասարդ ուսանող Սարգիս Կուկունյանցը՝ մի ուտիացի հայ, Նուխիի գավառի Նիժ գյուղից։ Լսելով Սարկավագի և Հարություն-աղայի քարոզներն ու ծրագրերը՝ երիտասարդ Սարգիսն այնքան է ոգևորվում, որ վճռում է թողնել ուսումը և, անմիջապես խումբ կազմելով, անցնել Թուրքահայաստան։ Նորակազմ «Երիտասարդ Հայաստանը» նրան աջակցում է։ Դրամական միջոցներ հավաքում է Գրիգոր Արծրունին։ Կուկունյանցը մարզում, հագցնում ու զինում է իր հավաքած խումբը, և նույն թվի սեպտեմբերին արդեն գտնվում էր Կարսում։ Նրա հետ էր և Սարկավագը։

Սկսվում է Կուկունյանցի հռչակավոր արշավանքը՝ մի կատարյալ երեխայական ձեռնարկություն, որ միանգամայն համապատասխանում էր այն ժամանակվա երեխայական հասկացողություններին և տրամադրություններին ու հենց այդ պատճառով էլ երկար ժամանակ զարդարված էր գաղափարական ինքնազոհության լուսապսակով։

Ես կհիշեմ այդ արշավանքի մանրամասնություններն այնպես, ինչպես նրանք պատմվում էին թե՛ բերանացի և թե՛ գրավոր հիշատակարաններում։ Կուկունյանցը դեպի ռուս-թուրքական սահմանագլուխ դուրս է գալիս սեպտեմբերի վերջերին՝ բաժանելով իր խումբը երեք մասի. մեկն անձամբ Կուկունյանցն է ղեկավարում, իսկ երկու մյուսների հրամանատարներն էին Սարդար Ավետիսյանը և ղարաբաղցի Աբրահամը։ 15 հոգու հաջողվում է անցնել սահմանը, որից հետո նրանք իսկույն հարձակվում են Հախվերիս անունով գյուղի վրա և բավական վնաս հասցնում նրան։ Գյուղն այն միակ հանցանքն ուներ հայ գաղափարական մարտիկների առջև, որ ուներ թուրք ազգաբնակչություն։ Հարևան երկու թուրք գյուղերի բնակիչները գնում են հարձակվողներին ետ մղելու և կռվի են բռնվում նրանց հետ Չիչագլի կիրճում, որ սահմանագծից հեռու չէր, այնպես որ սահմանապահ ռուս կազակներն ու զինվորները գնում են կռվի վայրը և գյուղացիներից տեղեկանում, որ հարձակվողները հայ ավազակներ են։ Կուկունյանցի մարդիկ խույս են տալիս և ամրանում լեռներում։ Բայց նրանց որսալու համար Թոփրաք-Կալեից (Ալաշկերտ) ուղարկվում է կես վաշտ թուրքական զորք, և մեր հայդուկները հազիվ են կարողանում ազատվել ասկյարներից և ցրիվ գալ զանազան կողմեր։

Այսպես հեշտ չեղավ ռուս սահմանապահ զորքերից ազատվելը։ Կուկունյանցի խմբի մի մասը, մոտենալով սահմանագլխին, համբերություն չի ունենում հանգիստ շարունակելու իր ճանապարհը, և, հանդիպելով մի խումբ թուրքերի, ռուսական հողից դեռևս դուրս չեկած, հարձակվում է նրանց վրա լոկ այն պատճառով, որ նրանք

թուրքահպատակներ էին և վերադառնում էին իրենց գյուղերը։ Սպանվում են 10 թուրքեր կամ, ոմանց ասելով, քրդեր։ Երկու օրից հետո խումբը մտնում է Գյումուշ-Թափա անունով անտառը՝ Կաղզվանի մոտ, որպեսզի անցնի սահմանը։ Անտառում երեք հոգի փայտահատ թուրք է լինում. նրանցից երկուսին սպանում են կուկունյանցականները, իսկ երրորդը կարողանում է փախչել և, հասնելով Կաղզվան, իմաց տալ ռուսական իշխանությանը։ Սպաներից մեկը մի հարյուրյակ կազակներով գնում է հետապնդելու հայ «ավազակներին», որոնք խույս տալով նրա առջևից՝ թաքնվում են մոտակա գյուղի այգիներում։ Այդտեղ էլ նրանց շրջապատում են ռուսները և առաջարկում անհապաղ անձնատուր լինել։ Կուկունյանցը ոչ միայն մերժում է, այլև կրակ է բաց անում, որից վիրավորվում է մի կազակ։ Այդ ժամանակ հրամանատար սպան օգնական զորք է պահանջում և, մի ամբողջ օր պաշարման դրության մեջ պահելով Կուկունյանցին, վերջապես հարկադրում է նրան անձնատուր լինել իր հետ եղած մարդկանցով։ Ով կարողանում է ազատվել, փախչում է Պարսկաստան։

Անձնատուր եղածների հետ ռուս կառավարությունը վարվում է իբրև ավազակների։ Ամենքը կապվում ու բանտ են նետվում, թեև բոլորն ամեն կերպ հավատացնում են, թե իրենք ավազակներ չեն, Ռուսասանի դեմ ոչ մի վատ դիտավորություն չեն ունեցել, այլ միայն ուզեցել են անցնել Թուրքիա և այնտեղ տանջվող իրենց եղբայրների վրեժը հանել։ Ռուս իշխանավորներին սաստիկ գրգռում են մանավանդ խմբի զինվորների ուսերին կապած «Հ. Մ.» հայերեն տառերը, որոնք նշանակում էին «Միություն Հայաստանի»։ Հենց այդ գաղափարի հետ էլ չէր կարող հաշտվել ցարական Ռուսաստանը։ Ուստի և ամենայն խստությամբ ռուս չինովնիկներն օգտագործեցին Կուկունյանցի խմբի այն գործողությունները, որոնք կարող էին, օրենքի հիման վրա, ավազակային հարձակումների տեղ ընդունվել։ Այս միջոցով ամբողջ խումբը, Կուկունյանցի հետ միասին, Երևանի շրջանային դատարանի կողմից դատապարտվեց տաժանակիր աշխատանքների՝ Սախալին կղզում։

Ահա այս իսկ երեխայական և իր կույր նացիոնալիստական բնազդներով անհամակրելի արկածախնդրությունն էր իր գործունեության իբրև սկիզբ ընդունում «Երիտասարդ Հայաստան» կազմակերպությունը։ Բայց նա այդ անունը պինդ չգրկեց։ Հայ հեղափոխության օգուտը պահանջում էր, որ բոլոր կազմակերպությունները միանան, մի ընդհանուր մարմին դառնան։ Այս մասին Թիֆլիսում կայացան խորհրդակցություններ, և վճռվեց, որ «Երիտասարդ Հայաստանը» կոչվի «Դաշնակցություն» և միացնի իր հետ Հնչակյան, Արմենական կուսակցություններն ու այդպիսով գոյություն ստանա մի կուսակցություն՝ դաշնակցային հիմքերի վրա, այսինքն՝ յուրաքանչյուրի ներքին ինքնավարության պայմանով։ Այդ «Դաշնակցությունը» պիտի հրատարակեր իր սեփական օրգանը՝ «Դրոշակ» անունով։ Այս երկու անուններն էլ՝ «Դաշնակցություն» և «Դրոշակ», թարգմանվեցին Ժնևի հնչակյան մի ուսանողի առաջարկությամբ, ռուսաց հեղափոխական

իրականությունից։ Ժնևում այդ ժամանակ կար «Союз русских революционеров», և այդ «союз»-ը թարգմանվեց «դաշնակցություն»։ Իսկ «Դրոշակը» Ամերիկայում հրատարակվող ռուս հեղափոխական «Знамя» թերթի անունից էր վերցվում։

Բայց, ինչպես և պետք էր սպասել, հեղափոխական կազմակերպությունների միությունը չկայացավ։ Եվ այս, իհարկե, դարձյալ ի դժբախտություն հայ ժողովրդի։ Հաշվի չառնելով արմենականությունը, որ երբեք չկարողացավ ուժեղ ու ազդեցիկ կուսակցություն դառնալ հայ իրականության մեջ, մնում էին երկու գլխավոր կազմակերպություններ՝ հնչակյան և դաշնակցական, որոնք շատ շուտով իրար հանդեպ բռնեցին հակառակորդի, անհաշտ թշնամու դիրքեր։ Ամեն մեկն աշխատում էր ցույց տալ, թե ինքն է լավ գործում, հեղափոխական առատ արդյունքներ տալիս։ Ամեն մեկն աշխատում էր մյուսին գերազանցել հախուռն գործողություններով, և այս անմիտ ու տղայական մրցակցության, այս թայֆայական հակամարտության դառն պտուղները կլանողն ուրիշ ոչ ոք չէր լինում, բացի և միայն հայ ժողովրդից։ Հնչակյան կուսակցությունը մինչև 1896թ. գտնվում էր հաջողության և լայն ժողովրդականության գագաթնակետին։ Այդ միջոցին նա, արբեցած իր դիրքերից, առանձին ուշադրություն չէր դարձնում Դաշնակցության վրա և գրեթե միայն լրագրական բանակռվով էր բավականանում։ 1896-ից սկսվում է հնչակյանների անկումը։ Այդ ժամանակից էլ կռիվը երկու կազմակերպությունների միջև ընդունում է կոպիտ, նույնիսկ արյունոտ ընդհարումների ընթացք՝ ավելացնելով հայ ժողովրդի աղետների թիվը։

Եվ այսպես, 1890 թվականից սկիզբ է առնում Դաշնակցությունը։ Սկզբի երկու տարիներին նա շատ թույլ գործունեություն ուներ, համարյա միանգամայն աննկատելի էր, բավականանում էր գրեթե միայն նրանով, որ պարծենում էր իր անդրանիկ գործով՝ Կուկունյանցի դժբախտ արշավանքով։ Ես կարող եմ ասել, որ չնայած այս հանգամանքին՝ Դաշնակցությունը հենց սկզբից ռուսահայերի մեջ համեմատաբար ավելի համակրանք գտավ, քան Հնչակյան կուսակցությունը։ Այս երևույթի պատճառը կարելի է հեշտ բացատրել՝ նկատի առնելով, որ Դաշնակցության կառուցողն ու պահպանողը սկզբի տարիներին մշակական երիտասարդությունն էր, ամենաեռանդունը, եթե կարելի է ասել՝ ամենակարմիրը ամբողջ ռուսահայության մեջ։ Պետք է ասել և այն, որ Հայաստանի ազատության գաղափարը մշակականության հետ միացնում էր և շատ տարրեր պահպանողական խավերից, որոնք սովորաբար կոչվում էին նորդարականներ…

Այս հանգամանքը պարզ նկատելի էր և մեր գավառական իրականության մեջ՝ Շուշիում։ Հնչակյաններին չհաջողվեց Շուշիում տեղական կոմիտե հաստատել, թեև նրանք իրենց շարքերում ունեին շուշեցի այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք էին Բարսեղ Զաքարյանը և Շմավոն Հովհանյանը (Գաբրիել Կաֆյան)։ Իսկ դաշնակցական տեղային կոմիտե կազմվեց հենց 1891 թվականից, և նրան անդամագրվեցին թե՛ մշակական և թե՛ նորդարական երիտասարդներ, ինչպես նաև չեզոք քաղաքացիներ։ Ես էլ էի անդամ։ Եվ սակայն ի՞նչ գործունեություն էինք ցույց

տալիս. այն միայն, որ մեր ռոճիկներից ամսական որոշ տոկոս վճարումներ էինք անում և գանձած փողը մեր գանձատան խնայողական արկղի մեջ պահում։ Եվ երբ բավական փող էր հավաքվում, ուղարկում էինք Թիֆլիս, ուր արդեն, ինչպես լսում էինք, կուսակցության կենտրոնում սկսվել էին վեճեր ու հակառակություններ։

Բոլոր այն ձեռնարկումները, որոնք սկսվեցին այդ ժամանակ՝ թե՛ զուտ հեղափոխական և թե՛ կազմակերպչական հողի վրա, երեխայական բովանդակություն ունեին։ Մի այդպիսի գործ էլ Շուշիի մեր կոմիտեն կատարեց։ Մեր գանձից 60 ռուբլի ծախսեցինք և մի լավ հրացան գնեցինք դարալագյազցի Գրիգոր քահանայի համար, որ քաջի համբավ էր հանել և իր գյուղից Շուշի էր եկել մեզ հայտնելու, թե Թուրքահայաստան է գնում։ Հիշում եմ, թե որպիսի հանդիսավորությամբ էր այդ հրացանը հանձնվում տեր-Գրիգորին։ Մենք հավաքվել էինք Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչ Հակոբ Ճաղարբեգյանի մոտ ու հիացմունքով զրույց էինք անում գյուղական երիտասարդ տերտերի հետ, որ ամեն կերպ աշխատում էր մեզ հավատ ներշնչել, թե ինքը կկատարի իր խոսքը և կերթա կռվելու Հայաստանի ազատության համար։ Ճաղարբեգյանը լավ խոսել գիտեր և մի սիրուն ճառ ասաց, մենք ամենքս համբուրեցինք տերտերի ձեռքը և ճանապարհ դրինք նրան։

Գնա՞ց նա արդյոք, ես չգիտեմ։ Մոտ քառորդ դար անցնելուց հետո էր, համաշխարհային պատերազմի ժամանակ, որ ես դաշնակցական մի թերթի պատկերազարդ հավելվածի մեջ տեսա մի կամավորական խմբի նկար։ Կամավորների առաջնից գնում էր յափնջին վրան գցած, մառուզերը բռնած մի ձիավոր։ Նկարի տակ գրված էր, թե դա դարալագյազցի տեր-Գրիգորն է, 75-ամյա հասակում։ Եվ ես հիշեցի մեր տված հրացանը։ Արդյո՞ք գնաց նա այն ժամանակ։ Բայց մի՞թե հարցը գնալ-չգնալու մեջ էր։ Հարցը մեր վերաբերմունքի մեջ էր, մեր՝ արդեն մորուքավոր մի խումբ մարդկանց, որ կարծում էինք, թե մի հրացան, մի քաջ մարդ ուղարկելով Թուրքիա, մենք ուժ ենք ստեղծում, որ կարող է սասանեցնել սուլթանի գահը։ Ամաչել մեր այս անծայր միամտությունից մենք չէինք կարող, որովհետև ամենքն էին այդպես մեր իրականության մեջ, և ոչ ոք չէր ամաչում։

Մի ուրիշ գործ էլ կատարեց Շուշիի տեղական կոմիտեն, բայց այն ժամանակ ես արդեն հեռացել էի իմ ծննդավայրից։ Կոմիտեն մի ամբողջ խումբ կազմակերպեց Շուշիի դատարկապորտ երիտասարդներից, որոնք ամեն տեղ հայտնի են «լոթի» անունով։ Մինչև Թիֆլիս հասնելու համար, ուր նրանք պիտի մտնեին կենտրոնական կոմիտեի տրամադրության տակ, այդ լոթիները բավական փող ստացան իբրև ճանապարհածախս։ Բայց դուրս գալով Շուշիից՝ միայն մի քանի վերստ գնացին. մի կողմ թողնելով խճուղին՝ գնացին Խանքենդի (այժմ՝ Ստեփանակերտ) ավանը և ամբողջ մի շաբաթ քեֆ անելուց ու բոլոր փողերը մսխելուց հետո վերադարձան քաղաք։ Աբդուլ-Համիդը բախտավոր աստղի տակ էր ծնվել, թե չէ…

Մի օր էլ լուր առանք, թե Դաշնակցությունը քայքայվում է։ Թիֆլիսում հրապարակ էր եկել մի նոր հեղափոխական գործիչ՝ լեռնային ինժեներ Կոստանդին Խատիսյանը, շատ կրքոտ մի երիտասարդ, որին որոշ չափով համարձակություն էր տալիս նրա հոր գրված բարձր պաշտոնը պետական ծառայության մեջ։ Պատմում էին, որ նա իրենց տանն ազատորեն ուժանակ է պատրաստում հեղափոխական մեծամեծ ձեռնարկումների համար, որոնց ծրագրելու մեջ նա մեծ հմտություն էր ցույց տալիս։ Նա ձեռնարկել էր Դաշնակցության միջից մի ֆրակցիա հանել, որ պիտի գործեր ինքնուրույնաբար՝ իր ղեկավարությամբ և իր կազմած ծրագրով։ Մի օր Թիֆլիսում կազմված ֆրակցիայի կողմից Շուշի եկավ ուսուցիչ Մանուկ Աբեղյանը, որ հավաքեց մեզ՝ Դաշնակցության կոմիտեի անդամներիս, սկսեց բացատրել Կոստանդին Խատիսյանի ֆրակցիայի առավելությունները և համոզել, որ Շուշիի կոմիտեն դառնա այդ ֆրակցիայի բաժանմունքը։ Խատիսյանական ծրագրի մեջ վառ երևակայություններ շատ կային, բայց ես այժմ մոռացել եմ դրանք։ Հիշողությանս մեջ մնացել է միայն այն, որ այդ մտքերի և հավանականությունների մեջ մեծ տեղ էին գրավում ուժանակային ռումբերը, որոնց պատրաստության համար նա նախագծում էր մի ամբողջ գործարան հիմնել Բուլղարիայում։ Մենք չհակաճառեցինք անգամ։ Ով ուզում է թող ազատի Հայաստանը՝ մենք հոժարությամբ պատրաստ ենք մեր ամսական տուրքը նրան տալ։ Դրանից ավել գործունեություն մենք նույնիսկ չէինք իմացել և չգիտեինք։

Բայց Խատիսյանի ֆրակցիան շուտով ջուրն ընկավ, և Դաշնակցությունն էր, որ մնաց գործի գլուխ։ Այդ ժամանակ էր, որ այն իրենց ձեռքն էին առնում մի քանի կարող երիտասարդ ուժեր, որոնց մեջ արդեն անուն էին հանել մանավանդ երկուսը՝ Քրիստափոր Միքայելյանն ու Սիմոն Զավարյանը։ Մեր վճարումներն առաջվա պես գնում էին Դաշնակցության կենտրոնական կոմիտեին։ Շուտով նրա կողմից Շուշի եկավ ուսանող Տիգրան Հովհաննիսյանը։ Եկել էր մի մեծ գումար տանելու, և որոշվել էր այսպիսի մի հեքիաթ։ Կազմակերպությունը, իբրև թե, արտասահմանում գնել էր մեծ քանակությամբ զենք, որ նավով ուղարկված էր Պարսից ծոց՝ այնտեղից, Պարսկաստանի վրայով, Թուրքահայաստան փոխադրելու համար։ Ճանապարհածախսի համար հարկավոր էր մի մեծ գումար։

Այս հեքիաթն, իհարկե, ինքը՝ Տիգրան Հովհաննիսյանը չէր հնարել, որ այն ժամանակվա մշակական երիտասարդության լավագույն ներկայացուցիչներից էր համարվում։ Բայց որ նա էլ այնքան էր հավատացել այդ հեքիաթին, որ դրա շրջիկ քարոզիչն էր դարձել, հենց ա՛յն է ապացուցում, որ այն ժամանակ մեզանում անվերապահ հավատն էր թագավորում, և քննադատական վերաբերմունքը միանգամայն բացակայում էր։ Ասացե՛ք՝ ո՞ւմ կարող եք այսօր հավատացնել, թե հնարավորությունների կարգումն է մեծաքանակ զենքերի փոխադրությունը Պարսկաստանի վրայով՝ նույնիսկ գաղտնիքը չպահպանելով, արձակ կերպով։ Ինչքա՞ն ծախս կնստեն հենց միայն փոխադրող քարավանները։

Տիգրան Հովհաննիսյանն ընդունվեց շատ սիրալիր կերպով, այդպես էլ ճանապարհ դրվեց Շուշիից, բայց՝ առանց փողի։ Պատճառն այն չէր, որ ձեռնարկությունը կասկածելի էր թվում մեզ։ Փող չունեինք. եթե ունենայինք, կտայինք, ինչ խոսք։

Դ

1892թ. Կովկասի հայության կյանքում տեղի ունեցան մի քանի խոշոր դեպքեր։ Մայիսին Էջմիածնում կատարվեց կաթողիկոսական ընտրություն. բոլոր կողմերից (Թուրքիայից, Պարսկաստանից, Ռուսաստանից) եկած պատգամավորների բոլոր ձայներով ընտրվեց Մկրտիչ արք. Խրիմյանը (Հայրիկ կոչված)։ Սա մի խոշոր ցույց էր սուլթանի դեմ։ Խրիմյանը՝ Հայոց հարցի հեղինակներից մեկը և Հայաստանի ազատագրության վաղեմի երգիչն ու քարոզիչը, Գում-Գափուի ցույցի հետևանքով աքսորվել էր Երուսաղեմ։ Նրա ընտրությամբ մշակական ուղղությունն իրեն համարում էր իր վաղեմի բաղձանքին հասած, որ 1884 թվին չէր իրականացել Ներսես Վարժապետյանի հրաժարման պատճառով։ Խրիմյանին աքսորից ազատելով և կաթողիկոսական աթոռի վրա նստեցնելով՝ ստեղծվում էր, ինչպես շարունակում էին կարծել, մի շատ նպաստավոր դրություն՝ Հայոց հարցը պետությունների հերթական և անհետաձգելի խնդիր դարձնելու համար։ Ուստի կաթողիկոսական ընտրությունը հավասար չափով ուրախացնում էր և երկու հեղափոխական կուսակցություններին։ Դաշնակցականներն այդ ընտրությանը մինչևիսկ գնացել էին Էջմիածին՝ պրոպագանդայի և օտար տեղերից եկած պատգամավորների հետ տեսնվելու ու խորհրդակցելու համար։

Նույն տարին առանձնապես շեշտվեց նաև մի շարք նշանավոր գործիչների մահերով։ Մեռան Գամառ-Քաթիփան, Խորեն Նար-Պեյը, Գարեգին Սրվանձտյանցը, իսկ տարվա վերջին՝ նաև Գրիգոր Արծրունին։ Մանավանդ այս վերջին մահը չափազանց խոր տպավորություն թողեց ամբողջ հայության վրա, և դեկտեմբերի 27-ին նրա թաղումը Թիֆլիսում տեղի ունեցավ այնպիսի մի հանդիսավորությամբ, որի նմանը դեռ երբեք չէր տեսել այդ քաղաքը։

Իբրև Շուշիի բարեգործական ընկերության կողմից պատգամավոր՝ ես էլ ներկա էի այդ թաղմանը։ Դեկտեմբերի 27-ը դարձավ միաժամանակ քաղաքական մի խոշոր ցույց՝ ցարական բյուրոկրատիայի դեմ։ Սահմանված էր, որ թաղման հանդեսը Վանքի եկեղեցուց դուրս գալով՝ Բարյատինսկայա փողոցով կբարձրանա Գոլովինսկի պրոսպեկտ և Երևանյան հրապարակով կմտնի Միջին փողոցը՝ դեպի Խոջիվանք գնալու համար։ Թիֆլիսի նահանգապետ Շերվաշիձեն, սակայն, փոփոխություն էր մտցրել այդ երթուղու մեջ՝ հպատակվելով Կովկասի կառավարչապետ Շերեմետևի ցուցումներին, որ Հայկական դատի և շարժումների թշնամին էր։ Պատճառ բերելով կառավարչապետի հիվանդոտ դրությունը՝ Շերվաշիձեն անհարմար էր համարել, որ ժողովրդական կուտակումներից բաղկացած սգերթը պալատի առջևով անցնի, ուստի ճանապարհ էր նշանակել Լոռիս-

Մելիքյան փողոցը։ Երիտասարդությունը, վրդովվելով այդ կարգադրությունից, որոշեց չհնազանդվել դրան։ Այդ պատճառով, երբ եկեղեցական հանդեսը բարձրանալով Բարյատինսկայա փողոցով՝ ուզեց մտնել Լոռիս-Մելիքյան փողոցը, հետևից եկող բազմահազար ժողովուրդը նրան սաստիկ հրելով առաջ քշեց՝ ոտքի տակ տալով բազմաթիվ քաղաքապահ ոստիկանների, և դուրս գալով Գոլովինսկի պրոսպեկտ՝ այն լցրեց ծայրից ծայր և, անդիմադրելի լավայի պես առաջ շարժվելով, պալատի մոտ և Դվորցովայա փողոցում լռեցրեց հոգևորականության ձայնը՝ երգեր երգելով և «Կեցցե՛ Հայաստան» կանչելով։ Ոստիկանապետը կազակներով թռավ ցույցի տեղը, բայց ուշ էր արդեն, ժողովրդական ծովի հետ արդեն ոչինչ չէր կարելի անել։ Նրան մնաց բավարարվել հանդիսատեսի դերով։

Այս քաղաքական ցույցը շատ խոր տպավորություն թողեց մանավանդ ինձ՝ գավառից եկած երիտասարդիս վրա։ Շուտով ես ծանոթացա և այն մարդկանց հետ, ովքեր նրա գլխավոր առաջնորդներն էին հանդիսացել։

Թաղումը տևեց շատ երկար։ Ճառախոսների թիվը մեծ էր, բայց ճառերի մեջ շատ քչերն էին աչքի ընկնում իրենց ուժեղ և ինքնատիպ բովանդակությամբ։ Դրանցից մեկն էր Սիմոն Զավարյանի ճառը. համարձակ, հեղափոխական, մանավանդ՝ հակակղերական՝ ուղղված գերեզմանը շրջապատած բազմաթիվ տերտերների դեմ։

Մութ էր, երբ վերադարձանք Խոջիվանքի գերեզմանատնից։ Մի մեծ խմբով գնացինք բժիշկ Հ. Լոռիս-Մելիքյանի տուն, Վելյամինովսկայա փողոցի ծայրում, ուր պիտի հանգստանայինք ու մի-մի բաժակ թեյ խմեինք։ Բայց կար և մի ավելի հետաքրքրական «օրակարգ»։ Դա այն էր, որ մշակական երիտասարդությունը կամենում էր իր համար շեֆ ընտրել՝ վախճանված Արծրունու տեղ։ Մեզ հետ էին և Քրիստափոր Միքայելյանն ու Սիմոն Զավարյանը, որոնք արդեն շատ հայտնի էին երիտասարդության մեջ և այդ տարի էին վերադարձել վարչական աքսորից։ Նախքան թեյի նստելը՝ նրանք երկուսով ինձ տարան պատուհանի մոտ՝ դահլիճի մի անկյունը, և հետս մտերմական խոսակցություն սկսեցին։ Առաջին անգամ էի տեսնվում նրանց հետ, և հենց առաջին իսկ վայրկյանից հմայված էի նրանց անուշ վարվեցողությամբ ու մտերմական սրտաբացությամբ։ Միքայելյանը մի տիպիկ ռուս նարոդնիկ էր, իսկ Զավարյանի մասին ասում էին, թե սա նույնպես մի ամուր հեղափոխական խառնվածք է, բայց կոսմոպոլիտական լայն հայացքներով, և նոր սովորում է դառնալ հայ հայրենասեր, նույնիսկ ազգայնական։

Մեր խոսակցությունը միայն Դաշնակցության շուրջն էր պտտվում։ Երկու սրտակիցները, իրենց անփոփոխ սիրուն ժպիտներով զարդարված, ինձ պատմեցին, որ Դաշնակցությունն արդեն վերջնականորեն կազմակերպված է, որ այդ տարի իրենք ունեցել են ընդհանուր ժողով, որն ընդունել և հաստատել է կուսակցության ծրագիրը։ Ամեն խոսքից երևում էր, որ իմ առջև կանգնած երկու ընկերներն էին կազմակերպության հոգին։ Նրանք ինձ բացատրեցին, թե ինչ ուղղությամբ է այժմ

գործում Դաշնակցությունը։ Պատրաստվում էին խմբեր՝ Թուրքահայաստան ուղարկելու համար, ձեռք էին բերվում զենքեր և պայթուցիկ նյութեր։ Գլխավոր հենակետ ընտրված էր Պարսկաստանը, ուր արդեն պատրաստություններ էին տեսնվում զինանոցներ և հայդուկային կայաններ կազմակերպելու համար։ Մի խոսքով, երկուսի պատմելով՝ գործունեությունը եռում էր։ Սակայն զգացվում էր դրամական միջոցների պակասություն։ Շուշիի կոմիտեն ամենաթույլերից մեկն էր, վերջին ժամանակները համարյա բոլորովին գոյության նշաններ ցույց չէր տալիս և հարաբերություններ չէր պահպանում կենտրոնի հետ։ Այդ պատճառով Միքայելանն ու Զավարյանն ինձ խնդրեցին, որ Շուշի վերադառնալուց հետո աշխատեմ նորից կենդանացնել կոմիտեն, և տվեցին ինձ նորահաստատ ծրագիրը։ Ես խոստացա անել ինչ որ հնարավոր է, և մենք իրարից բաժանվեցինք իբրև վաղեմի բարեկամներ։

Թեյի վրա խոսք բացվեց Արծրունու հաջորդի ընտրության մասին։ Թեր և դեմ խոսակցությունները ցույց տվին, որ սա մի պարապ հարց է, և այն լուծել մի այսպիսի պատահական ժողովում անկարելի է։ Ավելի լավ համարվեց՝ թողնել, որ ինքը՝ ժամանակը լուծի, թե ով կլինի երիտասարդության հոսանքի ղեկավարը։ Եվ սա միանգամայն արդարացի էր։ Ժամանակը խոր բաժանումներ պիտի մտցներ երիտասարդության մեջ, որ այսպիսով մի առաջնորդ չպիտի ունենար, այլ մի քանի։

Եվ այսպես, Դաշնակցությունը երկու տարուց դուրս էր գալիս գրեթե կիսակենդան դրությունից, կազմակերպչական թափ էր ստանում 1892-ին։ Այնպես որ, նրա հիմնադրումը, իսկապես, այս թվականից պետք է հաշվել։ Նա արդեն ուներ իր որոշ և պարզ գաղափարախոսությունը, հայտնում էր, թե ինչ նպատակ ուներ և ինչ միջոցներով էր ուզում իրագործել այդ նպատակը։

Եվ առաջին իսկ վայրկյանից երևան էր գալիս մի շատ պարզ հանգամանք։ Այն, որ Դաշնակցությունը, հանդես գալով մեծամեծ խոսքուզրույցով, ճառերով, պատրաստություններով, իսկապես ոչինչ նոր բան չէր մտցնում այն գործի մեջ, որ իր համար նպատակ էր ընտրել, այն է՝ թուրքահայերի ազատագրության մեջ։ Սա մի անկախ ծրագիր չէր, այլ գրեթե լոկ կրկնություն հնչակյան ծրագրի։ Նույն հայդուկային կռիվը, գործողության նույն դավադրական եղանակը՝ տեռորը, նույն եվրոպապաշտության ֆետիշիզմը։ Դաշնակցությունը չէր գալիս ազատագրական շարժմանը նոր կերպարանք տալու, նոր ուղիներ չէր գծում ու հարթում, այլ պարզապես ուզում էր նստել հնչակականության տեղը և գործել նրա նման։ Այդպես էլ եղավ։ Հենց այս միանմանությունն էր, թվում է ինձ, որ այնքան կատաղի էր դարձնում մրցությունն այս երկու կազմակերպությունների միջև։ Բախվում էին ոչ թե գաղափարները, ոչ թե տակտիկական և ռազմավարական հարցերը, այլ բախվողը միշտ և գերազանցապես կաշվի հարցն էր։

Նմանությունն ավելի ևս ցայտուն, աչք ծակող դարձնելու համար՝ դաշնակցական ծրագիրն էլ մեջտեղ էր բերում մարքսիզմը՝ ազգայնականությունը և

ազգամոլությունը՝ իր կարմիր քղամիդով զարդարելու համար։ Դա ես ցույց տվի հնչակյան ծրագրի մասին խոսելիս։ Այստեղ ինձ թույլ կտամ նմուշներ բերել դաշնակցական ծրագրից, որ գրված էր թուրքահայ բարբառով։

«Այն ժամանակեն,- կարդում ենք ներածության մեջ,- երբ մարդկությունը մտեր է քաղաքականության ճամբուն մեջ, այն ժամանակեն, երբ նա սկսեր է իր պատմությունն ունենալ, ամեն տեղ և ամեն ժամանակ կտեսնենք իշխողներ և կեղեքվողներ, տանջողներ և տանջվողներ։ Տառապյալներու լացին ու կոծին, աշխատավորին ծանր տնքոցին հետ ամեն տեղե մեր ականջին կհասնին ձրիակեր իշխողներու ցնծալից աղաղակները։ Այսպես եղել է անցյալին մեջ, այսպես է այժմ, սակայն այդպես պիտի չըլլա ապագային մեջ. մենք վստահ ենք ասոր։ Շատ լավ կտեսնենք, թե ինչպես իշխող դասակարգերը միշտ կիյնան ավելի ու ավելի, թե ինչպես աշխատանքը հետզհետե ձեռք կձգե իր իրավունքները, թե ինչպես կեղեքվող տարրը հսկայական քայլերով կմոտենա իր վերջնական հաղթության։ Եվ այդ տարրը կհասնի կատարյալ հաղթության, երբ կվերանան ամեն տեսակ դասակարգեր, երբ աշխատանքի միջոցները և արդյունքը կդառնան աշխատավորին կատարյալ սեփականությունը, երբ մարդոց կառավարության կփոխարինե իրերու կառավարությունը։

Բայց ինչպե՞ս կարելի է հասնել այդ բաղձալի ապագային։

Կար ժամանակ, երբ մարդկության բոլոր ցավերը բուժելու, տիրող անհավասարությունը ջնջելու, եղբայրություն, ազատություն և հավասարություն հաստատելու համար մարդկության ռեֆորմատորներ (բարենորոգիչներ) երևան կուգային այս կամ այն վարդապետությունով, իրենց որոշ «հավատոց հանգանակներով»։ Համոզված իրենց վարդապետության արդարադատությանը, ոգևորված վեհ զգացումներով, պատրաստ կրել ամեն տեսակ զրկանքներ, զոհել կյանքն իսկ իրենց գաղափարները մարմնացնելու համար՝ այդ ռեֆորմատորները կնայեին ամբողջ մարդկության վրա այնպես, ինչպես իրենց վրա։ Անոնք հավատացած էին, թե բովանդակ մարդկային հասարակությունը կարող է ունենալ նույն զգացումները, նույն ձգտումը, նույն պատրաստակամությունը, ինչ որ իրենք ունին, թե իրենց վարդապետությունը կարող է իրականանալ հենց վաղը, պետք է միայն քարոզել, հասկացնել անոր արդարությունը և օրինակներ ցույց տալ։

Անցան դարեր, մեկ վարդապետություն հաջորդեց մյուսին, շատ ռեֆորմատորներ զոհվեցան, բայց և այնպես կտեսնենք, թե մարդկության մեկ մասը, որու համոզվիլն իսկապես անհրաժեշտ է, որովհետև անոր ձեռքը կգտնվի անարդարության բանալին, դեռևս չէ համոզվել, չուզեց համոզվել և ոչ մեկ կերպ ալ չի համոզվեր, քանի որ ատիկա իր գործին չի գար։ Համոզեցեք քաղաքակրթված լորդը, թե իրավունք չունի իռլանդացիները կեղեքելու, համոզեցեք բարձրագույն ուսում ստացած գործարանատերը, թե անարդար կերպով է, որ իր գրպանը կլեցնե

բանվորներու աշխատանքը, համոզեցեք վերջապես քյուրդը, որ ինքը ոչ մեկ բարոյական իրավունք չունի ալաշկերտցիին տունը և ընտանիքը գրավելու։

Պատմության դառն ու դաժան դասերը ակներև կերպով ցույց տվին միանգամայն, թե մարդկության տանջված մասին իր դառն վիճակը հասկանալը, համոզվիլը, մինչև իսկ զայն բարեփոխելու բաղձալը դեռևս բավական չեն հաղթանակը տանելու, թե ասկե զատ անհրաժեշտ է ձեռք բերել իրական ուժ ալ։ Բայց որովհետև իրական ուժը հանկարծակի չստեղծվեր, որովհետև անիկա արդյունք է գոյություն ունեցող պայմաններու և կփոփոխվի այդ պայմաններուն փոփոխության համեմատ, ուստի պարզ է, թե ոչ մեկ հանրային կազմակերպություն, որքան ալ իդեալական ըլլա, մեկ անգամեն անկարելի է իրականացնել, թե այդ իդեալական կազմակերպության կարելի է հասնել միմիայն գոյություն ունեցող պայմանները բարեփոխելով։

Ահա ճիշտ այս պատճառով մենք ասպարեզ չենք իջեր իբրև այս կամ այն ուտոպիական (մտացածին) վարդապետության պատկանողներ, չենք ձգտեր մտցնել մեր կյանքին մեջ այս կամ այն «դավանությունը»՝ հանդերձ իր «հանգանակներով», մեր ժողովրդին չենք նկարագրեր այժմ այս կամ այն իդեալական հանրային կազմակերպությունը իր բոլոր մանրամասնություններով։ Մեր ձգտումն է, որ ծրագիրը կենսական ըլլա, մեր աշխատությունը գլխավորապես կենտրոնացած է մեր երկրին ներկա դրության վրա. մեր նպատակն է անողոք և անաչառ քննադատության ենթարկել մեր կյանքին ներկայիս մեջ գոյություն ունեցող պայմանները, մերկացնել բոլոր այն ցավերը, որոնցմե կտանջվի մեր բազմաչարչար ժողովուրդը և, հիմնված ընկերական գիտության դրական օրենքներու վրա, պարզել այդ ցավերուն էական պատճառները և միաժամանակ կատաղի կռիվ մղել այդ ցավերը պատճառող ֆակտորներու (սատարներու) դեմ։ Հիմնված այդ դրական օրենքներուն և երկրին ներկա պայմաններուն վրա՝ կարծարծենք, կպարզենք այն դրությունը, զոր անհրաժեշտ կհամարենք, որ փոխարինե ներկային»։

Դաշնակցական գաղափարախոսները մեզ հավատացնում են, թե այս ներածությունը կարդացված և ընդունված չի եղել 1892-ի ընդհանուր ժողովում, այլ գրվել է հետո, երբ ընդհանուր ժողովն իր ընտրած հատուկ հանձնաժողովին հանձնարարել է իր ընդունած ծրագրային որոշումների վերջնական խմբագրությունը։ Խմբագրական հանձնաժողովը, գտնելով, որ լավ չէ միմիայն չոր ու ցամաք կազմակերպչական կանոններ դնել ծրագրի մեջ, որոշել է տալ և մի ընդհանուր ներածություն, որի հորինումը հանձնել է իր անդամներից մեկին՝ մարքսիստ Ստեփան Զորյանին (Ռոստոմ, «Քոթոթ» անվանված), որի մտքի արդյունքն է կազմում ներածությունը։ Մի գործ, որ վերին աստիճանի բնորոշ է նորակազմ հեղափոխական մարմնի համար։ Այստեղ չկա հնչակյան ծրագրի սկզբում դրված «մարքսիստական» հայեցակետը։ Այստեղ «մարքսիզմն» ընդունվում էր քողարկված ձևի տակ,

ակնարկների մանվածապատ և մշուշապատ դարձվածքների մեջ։ Պետք է նկատի առնել, որ հնչակյան սոցիալիզմը խրտնեցնում էր շատ շատերին։

Դաշնակցությունը զգուշանում էր բուրժուական հասարակությանը խրտնեցնելուց, քանի որ իր ամբողջ գործունեությունը հիմնում էր հենց այդ հասարակության աջակցության վրա։ Մթնեցնելու, հետք կորցնելու նպատակ ուներ, անշուշտ, և ներածության լեզուն՝ իբր թե թուրքահայոց բարբառ, որ, սակայն, թուրքահայի ձեռքով չէր գործածված, այլ ռուսահայի։ Բայց միևնույն ժամանակ, չէր կարելի մի ժողովրդական-ազատագրական շարժում ծրագրել քաղաքական հողի վրա՝ առանց հաղորդելու նրան ռամկավարական և ընկերվարական բովանդակություն։ Ուստի Դաշնակցությունն ստիպված էր կես բերանով ընդունել և սոցիալիզմը։ «Դրոշակի» մեջ նա էլ, Հնչակյան կուսակցության նման սոցիալիզմը հայտարարում էր հեռավոր նպատակ և այնուհետև երկար ժամանակ կա՛մ բոլորովին չէր խոսում, կա՛մ շատ քիչ էր խոսում այդ մասին։

Այսպես, ուրեմն մի երեսով դեպի բուրժուազիա, մյուս երեսով՝ դեպի սոցիալիզմ։ Այս երկերեսությունը մնաց կազմակերպության ամենագլխավոր հատկանիշը, և այսպես մինչև վերջը։ Դաշնակցության մեջ տեղ ուներ թե՛ նացիոնալիստ-պահպանողական թուրքահայ խմբապետը, և թե՛ սոցիալիստական վարդապետության իբր հարած երիտասարդ ուսանողը։ Ամեն մեկը հավատում էր, թե իր ասվածն է պաշտպանվում Դաշնակցության մեջ։ Ավելացնեմ, սակայն, որ Հնչակյան կուսակցության մեջ էլ դրությունն այս կողմից շատ լավ չէր։ Առհասարակ թուրքահայերը, իբրև արդյունաբերական մի շատ հետամնաց երկրի ժողովուրդ, միշտ էլ խորթ մնացին ընկերվարական շարժումներին, և թուրքահայ դատի համար մղվող պայքարը նկատում էին բացառապես իբրև ազգայնական գործ։ Առաջ ապրելու հնարավորություն գտնել և ապա միայն որոշել, թե ինչպես ապրել։ Այս բանի մեջ իրար հետ համաձայն էին երկու հեղափոխական, իրար հակամարտ կուսակցություններն էլ։

Ե

Ք. Միքայելյանին և Ս. Զավարյանին տված խոսքս չկարողացա կատարել փոքրիշատե բավարար չափերով։ Կարողացածս միայն այն էր, որ վերականգնվեց արդեն գոյություն ունեցած և գրեթե մեռած կազմակերպությունը։ Բայց այդ մի մեծ բան չէր։ Ինտելիգենցիայի մի շատ սահմանափակ շրջան՝ բաղկացած հայոց դպրոցների ուսուցիչներից, բժիշկներից և փաստաբաններից. ահա այդ կազմակերպությունն էր, որ կարողանում էր իր կամավոր ամսավճարներով շատ համեստ գումարներ գանձել։ Թուրքահայ հեղափոխական գործը լայն ժողովրդականություն չէր գտնում, որովհետև պակասում էին եռանդոտ պրոպագանդիստները։ Եվ բացի դրանից, Թիֆլիսից վերադառնալուց հետո, ես Շուշիում մնացի ընդամենը մի քանի ամիս։ 1893-ի գարնանը ես թողեցի իմ 12-ամյա

հեռագրական ծառայությունը և մտա մասնավոր պաշտոնի մեջ՝ տեղափոխվելով Բաքու։

Իմ «խոզեյիններն» էին մի քանի հարուստ շուշեցի երիտասարդներ, որոնք մինչև այդ իմ ընկերներն էին և Բաքվում ընկերովի տպարան էին բացել։ Ինձ նշանակել էին կառավարիչ, որպեսզի դրանով թե՛ ինձ հնարավորություն տային ավելի լայն չափերով գրականությամբ պարապելու և թե՛ առհասարակ Բաքուն հայ գրական մի կենտրոն դարձնեին։ Այս պետքն զգացվում էր վաղուց։ Նավթային մայրաքաղաքի մեջ հայկական կապիտալն արդեն շատ խոշոր ու ծավալուն կուտակումներ էր արել, հետևաբար այն ժամանակվա հասարակարգի օրենքների համեմատ, պետք կլիներ սպասել, թե նյութական բավականաչափ միջոցներ կլինեն մի գրական-հրատարակչական գործունեություն արդյունավորելու համար։

Գնում էի մեծ ու վառ հույսերով, բայց տեսա մի դժոխք, որը, սակայն, բարի ցանկություններով էր սալահատակած։ Ամբողջովին մի անասնական-եսամոլ կյանք, մի հսկայական կեր ու խում, որի մեջ ծիծաղ էին հարուցում բոլոր մտքերը հայ մտավորական արժեքների մասին։ Հասարակական հարցերով և մասնավորապես հայ կյանքի հարցերով կամ, ինչպես ասում էին այն ժամանակ, «ազգասիրությամբ» պարապում էին մի խումբ վարժապետներ և սակավաթիվ ինտելիգենտներ, որոնք կապիտալիստական կատաղի վլվլուկների մեջ իրենց համար մի անկյուն էին առանձնացրել, ուր արդեն մեղք էլ էր համարվում շարունակ շահից, եկամուտից, մուրհակից ու ֆոնտանից խոսելը։ Ես պարզապես գնում էի այդ անվարտիք իդեալիստների խումբը մեկով ավելացնելու։

Ամենից շատ առօրյա, ամենից շատ հուզող հոգսն այդ խմբի մեջ, իհարկե, Հայոց հարցն էր։ Դաշնակցությունը խոր արմատներ էր ձգել նավթային մթնոլորտի մեջ։ Հնչակյանություն ես համարյա բոլորովին չնկատեցի։ Մինչդեռ, եթե ճիշտ լիներ այդ կազմակերպության մարքսիստական հիմնաքարը, նա էլ, ուրեմն, պիտի աչքի ընկնող դիրք և նշանակություն ստացած լիներ ապշերոնյան արդյունագործական աշխարհում, ուր հայ բանվորությունն արդեն հազարներով էր հաշվվում։ Պետք է ասեմ, որ զուտ բանվորական կուսակցություն այն ժամանակ գոյություն չուներ Ռուսաստանի և ոչ մի կողմում։ Բաքվի բանվորության մեջ պրոլետարական դասակարգային գիտակցություն դեռ չկար, ուստի նրա խորքերի մեջ հեշտությամբ էին թափանցում ազգայնական գաղափարները։ Գործողը, հեղինակություն ստացողը Դաշնակցությունն էր։ Մի քանի անգամ հրավիրվեցի տեղական կոմիտեի նիստերին և տեսա, որ այդ հիմնարկությունն էլ լոկ դրամական հանգամանք ուներ, նույնպես իր ամսավճարները հասցնում էր Թիֆլիսի կենտրոնին, որ և այսպիսով մնում էր Թուրքահայաստանում տեղի ունեցող հայդուկային շարժումների միակ իրական կարգադրիչը։

Կոմիտեի անդամներից մեկը՝ Ներսես Դավթյանը, Բալախանի և այլ բանվորական վայրերի ներկայացուցիչն էր, որ զեկուցում էր տալիս բանվորական կազմակերպությունների մասին և կապում նրանց կոմիտեի հետ։ Այս կազմակերպությունները, որքան հիշում եմ, ոչ շատ բազմաթիվ էին և ոչ էլ շատ խոշոր զանգվածներ էին պարունակում իրենց մեջ։ Սա երևում էր հենց այն զումարներից, որ Դավթյանն ամեն ամիս մտցնում էր կոմիտեի դրամարկղը՝ իբրև բանվորական վճարներ։ Այդ տուրքն, այո՛, մեծ չէր։ Հայդուկային հեղափոխության գաղափարն ամենից ավելի լավ նավթահանքերի և նավթային գործարանների բանվորության մեջ էր պատվաստվում. և այստեղից՝ այս խավերից դուրս եկան շատ ու շատ այնպիսի աշխատավորներ, որոնք իրենց արյունով ողողեցին Թուրքահայաստանի լեռներն ու դաշտերը՝ թե՛ իբրև անվանի, թե՛ միանգամայն անհայտ մնացած հերոսներ։

Բայց չի կարելի ասել, թե Բաքվի կոմիտեն, բացի ամսավճար հավաքելուց, ոչինչ չէր անում։ Ես մի երկու անգամ ներկա եմ եղել այնպիսի նիստերի, ուր անկախ գործունեության ծրագրեր էլ էին առաջարկվում։ Այդպիսին էին, օրինակ, ինժեներ Կոստանդին Խատիսյանի զեկուցումները։ Նրան տրված էր խոսելու գեղեցիկ ընդունակություն։ Եվ նա պերճորեն ապացուցում էր, թե կռիվը Թուրքահայաստանի համար կարելի է դարձնել հաղթական և վճռական միայն այն դեպքում, երբ կիրագործվի իր ծրագիրը, որ էր՝ Սալմաստում մի ամբողջ լաբորատորիա ստեղծելը՝ զենքեր և պայթուցիկ նյութեր պատրաստելու համար։ Իբրև մասնագետ, նա կարդում էր ամբողջ տեխնիկական նախագծեր, նախահաշիվներ և այլն, ջերմորեն ապացուցում էր, թե իր առաջարկներն ուտոպիա, ցնորքներ չեն, այլ կարող են հեշտությամբ գլուխ գալ, եթե մի 25-30 հազար ռուբլի դրամագլուխ գտնվի։

Եթե գտնվի… Բայց որտեղի՞ց գտնվեր։ Բաքուն, մի անսպառ ոսկեհանք էր Մանթաշյանների, Ղուկասյանների և նրանց նման շատերի համար, բայց մի անպտուղ ու անջրդի անապատ էր այն գործի համար, որ առաջ էր տարվում Բալախանի, Սև Քաղաքի հալումաշ բանվորների գրոշներով։ Խատիսյանի այս ձեռնարկությունն էլ գլուխ չեկավ։ Եվ նա ինքն էլ շուտով դարձավ գործարանատեր, խրվեց շահագործման և հարստացման հոգսերի մեջ ու բոլորովին մոռացավ Սալմաստն էլ, Խոյն էլ, Վանն էլ…

1892-1893թթ. հայդուկային-դավադրական հեղափոխության առաքյալները գործում էին Թուրքիայի ասիական նահանգների գրեթե բոլոր հայաբնակ վայրերում՝ սկսած Կիլիկիայից մինչև Ուրմիա լիճը։ Այս ամբողջ տարածությունը մի լռիկ համաձայնությամբ բաժանվել էր այսպես՝ Հնչակյան կուսակցությունն իր կարգադրության տակ էր առել ամբողջ արևմտյան մասը, Փոքր Ասիայի կողմերը, իսկ արևելյան մասերում գործում էին թե՛ դաշնակցական և թե՛ տեղային անկախ հայդուկային խմբերը, որոնք մանր կռիվներ էին անում գլխավորապես քրդերի դեմ։ Թե՛ բովանդակությամբ և թե՛ ընդարձակությամբ հնչակյանների գործունեությունն էր հարուստը։ 1893-ին հնչակյանները, կարծեք թե, գտել էին գործողությունների ավելի

ուղիղ ճանապարհ։ Նրանք փորձում էին մտցնել հայկական շարժումն ընդհանուր օսմանյան պետականության հունի մեջ՝ ազատագրական գաղափարը պատվաստելով նաև մահմեդական կեղեքվող տարրերին։ Սակայն այս խելացի փորձը տարվում էր վերին աստիճանի անշնորհք կերպով։

Փոխանակ մահմեդական դժգոհ տարրերին իրենց մոտեցնելու, նրանց սերտ գործակցության և համահավասար իրավունքներով կազմակերպչական ու ղեկավար դեր ստանձնելու հրավերներ կարդալու՝ հնչակյանները խաբեբայական միջոցներ էին կիրառում։ Այն է՝ կազմում և տարածում էին կեղծ կոչեր՝ իբրև թե գրված մահմեդականների ձեռքով. սրանք ժողովրդին հրավիրում էին հնչակյանների հետ կռիվ հայտարարելու սուլթանական բռնակալությանը։ Կեղծիքը չխաբեց ոչ ոքի և միայն թուրքաց կառավարությանն առիթ տվեց բազմաթիվ ձերբակալություններ կատարելու հնչակյանների մեջ և ստեղծելու մի խոշոր դատաստանական գործ, որ հայտնի է Անկյուրայի կամ Գաղատիայի դատավարություն անունով, որ ավարտվեց մահվան դատավճիռներով և աքսորներով։

Միաժամանակ սուլթան Աբդուլ-Համիդը ձեռք էր առնում և ավելի արմատական միջոցներ հետզհետե աճող հեղափոխական հուզումների դեմ։ 1892թ. նրա հրամանով կազմակերպվում էին քրդական գնդեր՝ ռուսաց կազակ[ական] զորքի օրինակով։ Անկանոն հեծելազորային այդ գնդերը սուլթանի անունով ստանում էին Համիդիե անունը։ Կառավարությունը նրանց զենք էր տալիս, թեթև կերպով զինվորական մարզումների էր ենթարկում և, ամեն մի գունդ թողնելով իր տեղում, պարտավորեցնում էր զորաժողով լինել կառավարության առաջին պահանջով։ Որքան և այս ձեռնարկությունը քողարկվում էր պատերազմական ընդհանուր նկատառումներով, ոչ մեկի համար գաղտնիք չէր, թե Համիդիե գնդերի կազմակերպման ամենագլխավոր, եթե ոչ միակ, շարժառիթը նրանց միջոցով հայերին զսպելն էր։ Այսպիսով, ուրեմն, ստեղծվում էր մի նոր սոսկալի վտանգ հայ ժողովրդի համար։ Սա զգում էին ամենից առաջ իրենք՝ հայերը, և նրանցից շատերն այս երկյուղից դրդված՝ թողնում էին իրենց հայրենի երկիրը և գաղթում օտար երկրներ։ Այս պարզ զգում էին և Թուրքահայաստանում գտնվող եվրոպական հյուպատոսները։

Էրզրումի անգլիական հյուպատոսը քրդական գնդերի պատճառած ընդհանուր երկյուղի թարգմանն էր հանդիսանում իր կառավարության առաջ, որ, սակայն, բավականանում էր Կ.Պոլսի իր դեսպանին մի թուղթ ուղարկելով, որով և սպառվում էր ամբողջ հարցը, իսկ անպաշտպան և անզեն հայ գյուղացին դրվում էր կատարելագործված զենքերով զինված, պաշտոնապես ապահով և անպատասխանատու դիրքի մեջ դրված քրդի լիակատար տրամադրության տակ։

Այս ահեղ հանգամանքը հայ հեղափոխական կյանքի կողմից արժանավոր գնահատության չարժանացավ։ Կարծեք, քրդերի կազմակերպումը կարևոր նշանակություն ունեցող երևույթ չէր և այն կարելի էր արհամարհել։ Այդպես էլ

արեցին։ Արհամարհեցին։ Աբդուլ-Համիդն ուներ իր ձեռքում հայերի համատարած ջարդերի համար պատրաստված մի շատ լավ միջոց։ Սակայն նա իսկույն ջարդի հրաման չարեց։ Սպասեց, որ հայերն իրենք առիթ տան։

Եվ երկար չսպասեց։ Նույն 1892-ի աշնանը Անգլիայում տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ։ Հաղթությունը տարավ ազատական կուսակցությունը, և կառավարության գլուխ անցավ Գլադստոնը, որ պառլամենտում հերոսական պայքար սկսեց Իռլանդիային ինքնավարություն տալու համար։ Այդ ազատական պայքարը պիտի թևավորեր և հայ հեղափոխականներին՝ ավելի ևս բորբոքելով նրանց եվրոպապաշտությունը։ Բայց Գլադստոնը ծերության պատճառով չկարողացավ մինչև վերջ տանել իր պայքարը և 1893-ի սկզբներին հրաժարական տվեց՝ իր տեղը տալով ազատամիտ կուսակցության մյուս լիդերին՝ լորդ Ռոզբերիին, որ շարունակեց կռիվն անգլիական պահպանողականների և կալվածատեր լորդերի դեմ։ Գլադստոնի հիվանդանալն, ուրեմն, ոչինչ չէր փոփոխում Անգլիայի ազատասեր տրամադրության մեջ. Հայոց հարցը պետք էր նորից կենդանացնել և լուծելու համար հանձնել անգլիական ազատամիտ կառավարությանը։

Հնչակյան կուսակցությունն այս նպատակով մի ապստամբություն պատրաստեց Սասունի լեռներում, ուր ամիսներ ի վեր այդ ուղղությամբ աշխատանքներ էր տանում Համբարձում Պոյաճյանը (Մուրադ)։ Արդեն 1893-ի ամռանը հաճախացան ընդհարումները հայերի և քրդերի միջև։ Իսկ 1894-ի ամռանը հայերը, մերժելով կառավարությանը հարկեր տալ, բացարձակ ապստամբություն հարուցեցին։ Աբդուլ-Համիդի կարգադրությամբ այստեղ շտապեց Չորրորդ բանակը՝ Զեքի-փաշայի հրամանատարությամբ։ Սուլթանական հրաման է՝ ոչինչ և ոչ ոքի չխնայել։ Եվ Սասունի լեռներում սարսափները կուտակվեցին սարսափների վրա։ 27 հայ գյուղեր կործանված են. ազգաբնակչությունը, որի թիվը ոմանք հասցնում են մինչև 10 հազարի, սրի է քաշված։ Լեռնային ժողովուրդն իր այս խիզախ գործը լցրեց իր հերոսություններով և անձնազոհության սքանչելի օրինակներով։ Եվրոպայի համար, այսպիսով հարուստ նյութ էր պատրաստված միջամտելու և գործելու համար։

Սասունի կոտորածի մանրամասնությունները բավական ուշ հասան քաղաքակիրթ կոչված աշխարհին։ Բայց պետք է խոստովանել, որ կոտորածի թողած տպավորությունը շատ ուժեղ էր։ Բուրժուական մամուլը ծայրեծայր լիքն էր տեղեկություններով, հոդվածներով։ Միտինգներ կազմել սկսեցին, զառամյալ Գլադստոնը հրապարակ իջավ՝ նորից և նորից Թուրքիային հարվածելու, անիծելու համար։ Անգլիան գլուխ էր կանգնում մի շարժման, որ, թվում էր, համաեվրոպական բնույթ պիտի ստանար։ Իսկ հայ ժողովրդի ղեկավար շրջանների վրա (ես այս էլ պարտավոր եմ վկայել) Սասունի արյունոտ սպանդանոցը միայն տխուր ազդեցություն չէ, որ ունեցավ։ Տխրության հետ նկատելի էր և մի տեսակ զսպված գոհունակություն։ Ամեն մեկը, կարծեք, կրկնում էր Գամառ-Քաթիպայի թունոտ

խոսքերը՝ «Փառք Աստծո, հայի արյուն ալ ոթեցավ»։ Այս անգամ արդեն թուրքահայ ժողովրդական դժբախտությունը չափազանց մեծ է, որպեսզի կարելի լինի նրան մոռանալ և արհամարհել։

Սասունի ապստամբությունը դառնում էր ազգային պանծալի գործ, որ նախանձ էր պատճառում Դաշնակցությանը։ Ես լսել եմ իմ ականջներով, որ դաշնակցականներն իրենց կուսակցությանն էին վերագրում Սասունի ապստամբությունը և նույնիսկ հավատացնում էին, թե Սասունի գլխավոր հերոս Մուրադը հնչակյան չէ, այլ դաշնակցական է։ Այս վեճը նույնիսկ մամուլի մեջ էլ մտավ։ Դաշնակցականները չէին ուզում զրկվել Հայոց հարցի լուծման պատվից։ Նրանց նախաձեռնությամբ 1895-ի ձմռանը Թիֆլիսի հայ հասարակության կողմից մի քանի ներկայացուցիչ ուղարկվեց Էջմիածին՝ խնդրելու համար Խրիմյան կաթողիկոսին, որ նա գնա Պետերբուրգ, ներկայանա Նիկոլայ ցարին և խնդրի նրան՝ միջամտել Հայոց հարցի մեջ։ Մի այդպիսի պատվիրակություն էլ Բաքվից պիտի գնար, և մի ժողովում էլ ես պատվիրակ ընտրվեցի, բայց հրաժարվեցի այդպիսի մի պաշտոն ստանձնելուց։

Բոլոր հանգամանքներն այնպես էին ցույց տալիս, թե հայկական եվրոպապաշտությունն ամենևին սխալված չի եղել։ Փրկարար միջամտությունը, վերջապես, իրագործված էր երևում Սասունի խեղճ ժողովրդի տված 10 հազար զոհերի գնով։ Ռոզբերիի մինիստրությանը հաջողվել էր համաձայնություն կայացնել Ռուսաստանի և նրա նոր դաշնակից Ֆրանսիայի հետ։ Այս երեք պետությունների հյուպատոսները հավաքվեցին Մուշ քաղաքում՝ Սասունի կոտորածի հանգամանքները քննելու համար։ Ակնառու էր այն հանգամանքը, որ եռյակ նիզակակցության պետությունները՝ Գերմանիա, Ավստրիա և Իտալիա, չէին մասնակցում այս միջամտությանը։ Արևելքի գործերին լավածանոթ քաղաքագետների համար այս մի անսխալ նշան էր, թե Գերմանիան իր դաշնակիցներով պատրաստվում էր օգտվել այն անախորժ տպավորությունից, որ պիտի գործեր սուլթանի վրա երեք պետությունների միջամտությունը։ Գերմանական իմպերիալիզմի համար միանգամայն հասունացել էր ասիական Թուրքիայի նման մի արդյունավետ ու արգասաբեր երկիրը գաղութացնելու ծրագիրը։

Բաղդադի երկաթուղին արդեն այն մեծ շարժիչն էր, որ հավաքում և սպառազինում էր գերման ֆինանսական կապիտալը։ Այն Աբդուլ-Համիդի հետ բարեկամություն էր պահանջում, և Վիլհելմը ստրուկի հնազանդությամբ կատարում էր ամենակատաղի այդ տիրոջ հրամանները։ Եվ պարզ էր, որ իր թիկունքում ունենալով աշխարհի ամենախոշոր միլիտարիստական պետությանը՝ սուլթանը բոլորովին առիթ չէր ունենա առանձին երկյուղ զգալու Անգլիայի և նրա հետ համաձայնության եկած Ռուսաստանի ու Ֆրանսիայի առաջ։ Սա նշանակում էր, թե այս եռապետյան համաձայնությունը խախուտ է, արհեստական և առաջին հարմար րոպեին պիտի պայթի։

Քաղաքական ետնաբեմում թաքնված այս իրողությունը նկատելի չէր հանդիսատեսներին, ուստի թվում էր, թե երեք պետությունների միջամտությունը շատ ամուր է և կլինի միանգամայն արգասավոր։ Եվ այս լավատեսությունը շատ հեղինակավոր էր դառնում հանգամանքների բերումով։ Սասունի հյուպատոսական հանձնաժողովը, չնայած թուրք կառավարության գործադրած բոլոր ջանք ու հնարքներին, ապացուցեց այդ կառավարության մեղավորությունը, կատարված մեծամեծ խժդժությունները։ Երեք կառավարությունները Կ.Պոլսի իրենց դեսպաններին հրամանագրում էին՝ միասին մշակել ռեֆորմների ծրագիր և առաջարկել սուլթանին, որ հաստատի այն և գործադրի հայաբնակ վեց նահանգներում։ Դեսպանների մշակած ծրագիրը թուրքաց կառավարությանը հանձնվեց 1895-ի մայիսին, և այս պատճառով այն ստացավ Մայիսյան ռեֆորմներ անունը։ Այդ թուղթն անհուն հրճվանքի առարկա դարձավ հայ ազգասիրության համար։ Վերջապե՜ս։ Վախճան էին ստանում թուրքահայ աշխատավոր ժողովրդի դարավոր տառապանքները։ Մարդիկ իրար շնորհավորում էին, իրար հետ համբուրվում։

Մայիսյան ռեֆորմները բավական համեստ վարչական մի ինքնավարություն էին ներկայացնում, որի բոլոր հոդվածները վերցված էին Թուրքիայում գոյություն ունեցող օրենքներից, այնպես որ, հայերի համար իսկապես որևէ նոր, աննախընթաց դրություն, նոր իրավական կարգ չէր ստեղծվում։ Հեռու լինելով անջատական հնարավորություններ ստեղծելու կարելիությունից, դրանք իսկապես կարող էին վերանորոգման և վերածնության կոչել ոչ միայն հայերին, այլև նրանց հետ ապրող քրդերին և թուրքերին, որովհետև այս ազգային փոքրամասնությունների իրավունքները լիովին ընդունված էին, այնպես որ կիսավայրենի քուրդը պիտի նստեր հայի հետ գավառական և նահանգական ժողովներում ու պիտի վճիռ տար կրթական և կուլտուրական բարձր շահերին նվիրված հիմնարկությունների մասին։

Բայց և այնպես, թուրք կառավարությունը, հավատարիմ մնալով իր վաղեմի սովորությանը, գործադրում էր ձգձգումների քաղաքականությունը, մինչև որ թուլանար ու եղծվեր պետությունների համաձայնությունը։ Նրա այս ակնկալությունը հետզհետե սկսում էր իրականանալ։ Ռուսաստանը, արտաքին գործերի մինիստր Լոբանով-Ռոստովսկու ղեկավարությամբ, նահանջի ճանապարհներ էր որոնում։ Խրիմյան կաթողիկոսին, որ ճանապարհվել էր Պետերբուրգ, հարկադրեցին երկար սպասել Նոր Նախիջևանում, մինչև որ ցարը բարեհաճեց ընդունել նրան։ Այսպես էր արվում, որպեսզի թուրքաց սուլթանը համոզվի, թե այդ ճանապարհորդությունը քաղաքական նշանակություն չունի և կապված չէ հայերի կոտորածի հետ։ Ցարական բյուրոկրատներին, բացի դրանից, վրդովեցնում էր այն ագիտացիան, որ թուրքահայերի օգտին Անգլիայում մղում էր Ռուսաստանի հայությունը։ Թիֆլիսի հայերը ուղերձներ և ընծաներ էին ուղարկում Գլադստոնին, մինչդեռ ոչ մի դիմում չէին անում ռուս կառավարությանը։

Սասունից Թիֆլիս բերվեց Անուշ անունով մի կին, որն ուղարկվեց Լոնդոն և, ի ցույց հանվելու համար, նստեցվեց Գլադստոնի կողքին՝ իբրև կենդանի պատկեր՝ իր լուռ ու մունջ վկայությամբ հաստատելու մեծ ծերունու ասածները։ Խրիմյան կաթողիկոսը ձեռնունայն վերադաձավ Պետերբուրգից, իսկ Լոբանով-Ռոստովսկին, որ դիվանագետի մի քանի կեղծ ժպիտներ էր նվիրել նրան, իր քաղաքականության նշանաբանը դարձրեց՝ «Հայաստանն առանց հայերի»։ Մարդակեր ցարիզմին Հայաստանի հողը հարկավոր էր, շատ հարկավոր էր, բայց հայ ժողովուրդը բոլորովին հարկավոր չէր։ Այսպես էր մի բռնակալի կամ նրա ստրուկ պնակալեզի քմահաճույքը, որից ամբողջ ժողովուրդներ էին ոչնչանում, անհետ կորչում։

Ազատական (լիբերալ) Անգլիան էր հայերի անկեղծ բարեկամը համարվում։ Բայց այս բնագավառում էլ երևան էին գալիս նշաններ, որոնք ցույց էին տալիս, թե, անշուշտ, ցնորամիտներ են նրանք, ովքեր կարծում են, թե քաղաքագիտության մեջ բացի կոպիտ և եսամոլ հաշիվներից կա ուրիշ որևէ սրբություն։ Լորդ Ռոզբերին, քանի դեռ հարցը թղթե պահանջներ անելուն էր վերաբերում, համաձայն էր Գլադստոնի հետ, բայց երբ բանը եկավ հասավ այն աստիճանին, որ պետք էր հարկադրել սուլթանին, որ նա կատարի այդ թղթե պահանջները, Ռոզբերին հրաժարվեց Գլադստոնի առաջարկած ստիպողական միջոցները գործադրելուց ու մի ճառ արտասանեց պառլամենտում, որով ոչնչացրեց իր գործադրած բոլոր հայանպաստ ջանքերը։ Նա, իհարկե, նույնքան իրավացի էր իր տեսակետի մեջ (թե այլ է թուղթը և այլ է ստիպմունքը), որքան [որ] իրավացի էր Գլադստոնը 1880 թվին՝ ճիշտ նույնանման հանգամանքների մեջ։ Բայց անգլիական հայասիրությունն ուրիշ հրաշք էլ ուներ իր մեջ։ Ռոզբերիի կառավարությունը հեռացավ գործերից, նրա տեղը բռնեց Սոլսբերիի կառավարությունը։ Եվ ո՜վ սքանչելիք. Սոլսբերին, որ Կիպրոսի դաշնագիր էր հնարել Բեռլինում, Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածն էր այլանդակել, որ ջնջել էր Հայաստան անունը և այն փոխարինել Քուրդիստան անունով, այժմ հանդես էր գալիս իբրև ջերմ պաշտպան Հայոց հարցի…

Սա շատ պարզ ցույց էր տալիս, որ արտաքին հրահասուն ջերմության տակ իբրև իրական հիմք փռված էր վաճառականի որոշ հաշիվների սառցակույտը։ Թե՛ 1880-ին՝ Գլադստոնի ժամանակ, և թե՛ 15 տարի անցած՝ Ռոզբերիի ու Սոլսբերիի ժամանակ Անգլիայի ցավն ու հոգսն ասիական Թուրքիայի խորքերում տանջանքների մեջ գալարվող մի բուռ ժողովուրդը չէր, այլ միշտ միևնույն, կյանքի և մահվան նշանակություն ունեցող հարցը՝ Անգլիայի տիրապետությունը Եգիպտոսում։ Ինչպես 15 տարի առաջ, այնպես էլ այժմ, Հայոց հարցը անգլիական ազատամիտների և պահպանողականների ձեռքով շահագործվում էր իբրև միջոց սուլթանին ստիպելու, վախեցնելու և այդպիսով նրանից նոր զիջումներ ստանալու Եգիպտոսի վերաբերմամբ։ Տարբերվում էին միայն շահագործման միջոցները։ 1880թ. հայ ժողովուրդը դեռ ապրում էր, թեև տանջանքներով։ Իսկ 1894-1895-ին նա այլևս ապրող ժողովուրդ չէր, այլ մորթվող։ Եվ նրա լճացած արյունն էր, որ չափով-կշռով

կանոնավորապես վաճառվում էր Կ.Պոլսում, Պետերբուրգում, Բեռլինում, Լոնդոնում ու Փարիզում։

Իսկ հայ երազասուն հեղափոխությունն այդ միջոցին կրկնապատկում էր իր անարժեք եռանդը։ 1895-ի ամբողջ ամառն անցավ անհայտության մեջ։ Չգիտեին՝ պիտի ընդունի՞ սուլթանը Մայիսյան ռեֆորմները, թե՞ ոչ։ Գրագրությունները դեսպանների և թուրքաց կառավարության միջև դեռ չէին վերջացել։ Եվ ահա Հնչակյան կուսակցությունը կորցնում է իր համբերությունը։ Նա չափազանց անթույլատրելի գտավ սուլթանի դանդաղկոտությունը և որոշեց ստիպել նրան, որ շուտ ստորագրի ռեֆորմները։ Չէր մոռացվել անցյալի փառքը. հինգ տարի առաջ Գում-Գափուի ցույցն էր, այժմ՝ 1890-ի հուլիսյան օրերին մի ուրիշ ցույց պիտի լիներ։ Հիշում եմ տարիներ հետո տեղի ունեցած մի լրագրական վեճ՝ թուրքահայ հայտնի գրող Լևոն Բաշալյանի և հնչակյան հին հեղափոխական Ռ[ուբեն] Խանազատի մեջ այն դերի մասին, որ ռուսահայերը կատարել են վերջին տասնամյակների ընթացքում թուրքահայերի ճակատագրի մեջ։ Այդտեղից ես իմացա, որ հնչակյան այս երկրորդ պոլսական ցույցը ծրագրել էին գլխավորապես ռուսահայերը, որոնք միաժամանակ հոգ էին տարել, որ իրենք խառնված չլինեն ցույցի մեջ և չվնասվեն։ Բաշալյանն ասում էր, որ ցույցը կազմակերպելու համար Կ.Պոլիս գնաց Խանազատը։ Ամեն ինչ որոշվեց, նշանակվեց ցույցը սկսելու օրն ու ժամը։ Բայց դրա նախօրյակին, Խանազատն անհետացավ Կ.Պոլսից՝ թողնելով, որ թուրքահայերը պատասխան տան իր հղացած գործի համար։

Եվ այդ պատասխանը զարհուրելի եղավ։

Ցույցը տեղի ունեցավ 1895-ի սեպտեմբերի վերջին օրը։ Այն պիտի սկսվեր դարձյալ Գում-Գափուի պատրիարքական եկեղեցուց։ Որոշված էր, որ այն խաղաղ, անզեն լինի։ Բազմությունը պիտի եկեղեցուց գնար Բ.Դուռը և այնտեղ պիտի ուղերձ տար, որի մեջ պահանջվեր անհապաղ ընդունել և վավերացնել երեք պետությունների մշակած ռեֆորմները։ Ցույցն այս անգամ ստանալու էր «Բաբը-Ալիի ցույց» անունը։ Անգլիական պաշտոնական հաղորդագրությունների մեջ նա որակված է «Հիմար ցույց» անունով։ Պատրիարք Իզմիրլյանն, ինչպես ասված է այդ հաղորդագրությունների մեջ, հնչակյաններին երկար համոզել էր ցույց չանել, հավատացրել էր, թե ռեֆորմների գործն ապահովված է, և երեք պետությունները թույլ չեն տա, որ սուլթանի համառությունը հաղթանակի։ Պետք էր միայն սպասել մի քիչ էլ։ Սակայն հնչակյանները խիստ կերպով մերժեցին այդ զգաստացնող առաջարկությունը։ «Շատ ենք սպասել»՝ աղաղակեցին նրանք ցասկոտ հեգնությամբ։ Եվ գնացին։ Թուրք ոստիկանությունը կտրեց ցուցարարների ճանապարհը։ Եվ այն ժամանակ «անզեն» հայտարարված ցույցը դիմադրության դիմեց։ Լսվեցին ատրճանակների կրակոցներ։ Ոստիկանությունը և զորքերը կրակ բաց արին։

Բայց այս բոլորը դեռ նորություն չէր։ Նորությունն այն էր, որ այս կռիվը դարձավ ազդանշան մի վաղօրոք պատրաստված և ծրագրված ընդհանուր արյունահեղության։ Գում-Գափուի ցույցն ավանդությունների կարգն էր անցել։ Այժմ Աբդուլ-Համիդը հեղափոխականներին չէր միայն պատժում, այլ անխտիր բոլոր հայերին։ Եվ Կ.Պոլսում, դեսպանների քթի տակ տեղի ունեցավ մի կազմակերպված կոտորած։ Հայաբնակ թաղերը լցվեցին սարսափներով, և ազգաբնակչությունը խելագարված դես ու դեն փախավ։

Սա մի արյունոտ նախատոնակ էր այն քստմնելի, պատմության մեջ շնականության (ցինիզմի) կողմից իր նմանը չունեցող մի զավեշտի, որ եվրոպական մեծ պետությունների աշխատակցությամբ արյունռուշտ սուլթանիզմը գալիս էր քաղաքակիրթ կոչված մարդկության առաջ խաղալու։ Կ.Պոլսի այդ արյունոտ օրերին էր, որ Աբդուլ-Համիդը վավերացրեց Մայիսյան ռեֆորմները և դրանց իրագործումը գավառներում հանձնարարեց Շաքիր-փաշային։ Փաշան ճանապարհվեց ասիական նահանգները և ամեն տեղ մտցրեց ռեֆորմները, այսինքն՝ հայերի զանգվածային կոտորածներ սարքեց։ Կանոնավոր կազմակերպված մի ոճիր, որ սուլթանական հրամանով գնում էր զբոսնելու հայաբնակ գավառներում և նրանց բոլոր անկյուններն արյունով լցնելու։ Այսպիսով կոտորածները Կ.Պոլսից անցան Տրապիզոն, այնտեղից Էրզրում և երկրի խորքերը, մինչև իսկ Փոքր Ասիայի քաղաքներն ու գյուղերը։

Երեք դեսպանները, սուլթանից ստանալով իրենց մշակած ռեֆորմների վավերացումը, իրենց գործը վերջացած համարեցին։ Համաձայնություն այլևս չմնաց։ Ցարական կառավարությունն այլևս ավելորդ էր համարում թզենու տերևով ծածկել իր լպիրշ մերկությունը։ Մինչ այդ նա սուլթանին ծածուկ խրախուսել էր դիմադրել Անգլիայի պահանջներին Հայկական հարցի մեջ, իսկ այժմ խրախուսում էր նրան կոտորել հայերին։ Ռուս հրապարակախոսներից մեկը (Ամֆիտեատրով) այս մասին գրած ունի բացարձակորեն։ Նա գրում էր, թե ռուսաց դեսպան Նելիդովը շարունակ ասելիս է եղել Աբդուլ-Համիդին «Massacrez, Majeste, Massacrez»։ Այս բացարձակ մեղադրանքը չեն հերքել ո՛չ Նելիդովը, ո՛չ Նիկոլայի կառավարությունը։ Նույնիսկ եթե հերքեին էլ, դարձյալ կմնային բազմաթիվ փաստեր, որոնք ապացուցում են ցարի և սուլթանի գործակցությունը 1895-1896 թվերի կոտորածների մեջ, որոնց զոհ գնացին մոտ 300 հազար հայեր։

Գլադստոնն իր հրապարակային ճառերի մեջ Աբդուլ-Համիդին անվանեց մարդասպան, բայց ավելացրեց, թե նրանից պակաս չէ ռուսաց ցարը, որ իր երիտասարդության հասակն արատավորեց հայ ժողովրդի արյան գետերով։ 1895-ին, մինչ Թուրքահայաստանն արյունողող էր լինում, Կովկասի ռուսական բանտերը լցվում էին հայ մտավորականությամբ. խուզարկվում էին տները, կալանավորվում էին դաշնակցականներն էլ, հնչակյաններն էլ։ Բայց դաշնակցականներին համեմատաբար մեղմ էին վերաբերվում, որովհետև նրանք դեռ խոշոր հեղափոխական գործեր չէին կատարել և բացի դրանից՝ հնչակյանների նման

սոցիալիստներ չէին համարվում։ Խիստ պատիժների ենթարկվեցին մասնավորապես հնչակյանները։ Նրանց մեղադրում էին, թե նրանք ապստամբություն են տարածում Ռուսաստանին բարեկամ պետության մեջ։ Այսպիսով, Թիֆլիսից Ռուսաստան աքսորվեցին այնպիսի «վտանգավոր հեղափոխական սոցիալիստներ», ինչպիսիք էին Շիրվանզադեն, Ղազարոս Աղայանը, Սև Սանդրոն և ուրիշները։

Ռուսական ցարիզմի հալածանքն այդ տխուր ու արյունոտ ժամանակներում այն աստիճանի հիմարության հասավ, որ երբ հայոց կաթողիկոսը կարգադրեց եկեղեցիներում հոգեհանգիստներ կատարել Թուրքիայում խողքաղված հայերի համար և աղոթքներ կարդալ, որ երկինքը փրկե կորչող հայ ժողովրդին, կովկասյան բարձր իշխանությունը, հանձին ռուսական «քրիստոսասեր» բանակի զորավար Շերեմետևի, արգելեց դժբախտների ձեռքին մնացած այդ միակ, թշվառ ցույցերն էլ։ Բացի այդ, ավելի ևս բնորոշ փաստ։ Խրիմյան կաթողիկոսը մի ստրկական աղերսագրով դիմեց «առ սրբազան տերն» Նիկոլայ Երկրորդին և աղաչեց-պաղատեց նրան հանուն Քրիստոսի, հանուն Աստծո, ի սեր եկեղեցու և բոլոր սրբերի ու սրբազանների՝ ազատել իր դժբախտ ժողովրդի վերջին մնացորդները բնաջնջումից։

Բայց ի՞նչ ստացավ «աստծո օծյալը»։ Լոբանով-Ռոստովսկին հայոց ծերունի կղերապետին պատասխանեց, թե Թուրքիայում հայերն են, որ ապստամբում են սուլթանի դեմ և հարձակումներ գործում թուրք ժողովրդի վրա, որ և ստիպված է ինքն իրեն պաշտպանել։ Եվ ցարի անարգ ծառան խորհուրդ էր տալիս, որ կաթողիկոսն իբրև հոգևոր պետ՝ թղթեր ուղարկի Թուրքիայի հայերին, խրատի, որ նրանք խելոք կենան, հնազանդվեն թուրքական իշխանությանը։ Որպեսզի շեշտված լինի ցարա-սուլթանական սրտակցությունն այն ահռելի ոճիրների մեջ, որոնք այդ իսկ րոպեին ցնցում էին ամբողջ քաղաքակիրթ մարդկությունը, ես պիտի ասեմ, որ միաժամանակ ճիշտ միևնույն բովանդակությամբ պահանջ ստանում էր Կ.Պոլսի հայոց պատրիարքը թուրքական կառավարությունից։

Այսպիսին էր Ռուսաստանը՝ մի արյունռուշտ բռնակալություն, որ երբեք հաշիվ ու համար չի տվել իր արած գազանությունների վերաբերմամբ։ Նրա դաշնակիցն էր հանրապետական Ֆրանսիան, որ այդ ժամանակ կամավորապես ինքն իրեն լակեյ էր գրել ցարական սպասին և հոգով-մտքով տարված ցարականությունը շոյելու, իր սրտին կպցնելու, իր միլիարդներով, իր պերճանքներով հմայելու ու այդ կերպով դաշնակցությունը ամուր պահելու մտքով՝ ենթարկվում էր Լոբանով-Ռոստովսկու կամքին ու ցուցմունքներին, մանավանդ որ ինքն էլ շատ հաշիվներ ուներ Թուրքիայի մեջ և մանավանդ Եգիպտոսում, ուր նրա առջև մրցակցի դերում ժայռացած էր Անգլիան։ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Հանոտոն այնքան ջերմեռանդ թուրքասիրություն էր ցույց տալիս, որ այն սարսափելի ժամանակներում, երբ ամբողջ աշխարհը զզվանք էր արտահայտում մինչև գլուխը հայի արյան մեջ թաղված Աբդուլ-Համիդի վերաբերմամբ, նա՝ այդ լուսավորյալ ֆրանկը, այժմ ֆրանսիական ակադեմիայի անդամ, ընդունեց սուլթանի ուղարկած

շքանշանը և ֆրանսիական մամուլի մի մասից ստացավ «Հանոտո-փաշա» հեգնական հորջորջումը։

Մնում էր Անգլիան։ Նրա վրա էր ամբողջ հայությունը դրել իր հույսը։ Լորդ Սոլսբերին գործում էր եռանդով, անվերապահորեն հօգուտ հայերի և ընդդեմ սուլթան Համիդի։ Երևույթներն այնքան պարզ ու պերճախոս էին, որ առաջին նվագներում ներելի էր նույնիսկ հավատալն ու խաբվելը։ Բոլորովին զարմանալի չէ, որ հավատում էին ամենքը և ամենից շատ, իհարկե, հայ հեղափոխական կազմակերպությունները, որոնք փառավորապես ապացուցված էին համարում իրենց ծրագրային կենտրոնական միտքը՝ հայկական հալածանքների ու կոտորածների միջոցով առաջ բերել եվրոպական միջամտություն։ Թեև այդ միջամտության հետևանքով Թուրքահայաստանը սպանդանոցի էր փոխարկվել և ամայացել. բայց և այնպես, հայ հեղափոխականները պատրաստ էին դեռ ուրիշ մնացորդներ էլ զոհել եվրոպական սկսված միջամտությունը կայուն և գործուն դրության մեջ պահելու համար։

Զ

1895-ի նոյեմբերին, այն ժամանակ, երբ հայկական կոտորածները նոր էին սկսում ընդհանրանալ վեց դժբախտ վիլայեթներում, բախտն ինձ հաջողեցնում էր ազատվել Բաքվի դժոխք մթնոլորտից, որի մեջ ես ապրել էի երկու և կես տարի՝ իբրև խորթ ու օտար մի մարդ, իբրև ակամա պանդուխտ՝ երկնքի այցելության սպասող։ Ոչինչ չէի կարողանում անել այդ չար ու անհոգի երկրում, ոչինչ այնպիսի բան, որ բավարարություն տար իմ հոգեկան պահանջներին։ Գրական աշխատանքը մի կողմ էի նետել, օր ու գիշեր նվիրված էի «Արոր» տպարանին, որ դարձել էր մի խոշոր հիմնարկություն իմ «խոզեինների» համար։ Աշխատանք անելու պահանջով մտրակված՝ ես կազմում էի օրացույցներ, որոնք սկսել էին արդեն լույս տեսնել և լավ տարածում էին գտնում։

Այսպիսի դրության մեջ ինձ համար երկնքի իսկական «այցելություն» էր «Մշակ» լրագրի հրատարակիչ, պրոֆեսոր Անդրեաս Արծրունու նամակը, որն առաջարկում էր ինձ մշտական աշխատակցի, խմբագրական քարտուղարի և էքսպեդիտորի պաշտոն՝ 1000 ռուբլի տարեկան ռոճիկով։ Իմ «խոզեինները» դրանից մի քիչ ավել էին տալիս, բայց ես թողեցի ամեն ինչ, շտապեցի Թիֆլիս, ուր ոչ միայն գրական կյանքն էր խտացած, այլև, եթե կարելի է այսպես ասել, կերտվում էր հայոց ժամանակակից պատմությունը։ Ես մտա այն ժամանակվա գործող երիտասարդության շրջանները, ծանոթացա քաղաքական և հեղափոխական տրամադրություններին։

Պետք է ասեմ, որ «Մշակի» խմբագրատան մեջ ես գտա բավական զգաստ և լրջմիտ վերաբերմունք դեպի կատարվող սարսափելի դեպքերը։ Խմբագրության գլխավոր ղեկավարն էր Խաչատուր Մալումյանը, որ վերջը դարձավ դաշնակցական գլխավոր շեֆերից մեկը՝ Է. Ակնունի կեղծանվամբ. 1895-ին նա դեռ գունավորված

դաշնակցական չէր և իր համակրանքներով ավելի դեպի հնչակականությանն էր թեքված, թեև «Մշակի» խմբագրությանն ավելի մոտ էին կանգնած Դաշնակցության գլխավորները և ամենից շատ՝ Քրիստափոր Միքայելյանը, որ այն ժամանակ «Новое обозрение» թերթի սրբագրիչն էր և շատ հաճախ (գրեթե ամեն օր) գալիս էր մեզ մոտ։ Շատ անգամ էին մեր խմբագրատանը վիճաբանություններ սկսվում Թուրքահայաստանի դրության մասին։ Մալումյանը միշտ վրդովված էր, երբ հեղափոխականներից լսում էր, թե Սասունի և այլ տեղերի կոտորածները հարկավոր էին, որպեսզի Եվրոպան ճանաչի հայ ժողովրդին, տեղեկանա նրա դատին…

– Կոտորել տալ 100, 200 և ավելի հազար մարդ՝ լոկ մեր փոքրիկ ժողովուրդը ճանաչեցնել տալու համա՞ր,- բացականչում էր Մալումյանը տաքացած,- այս ի՞նչ աշխարհայեցողություն է, ասացե՛ք՝ խնդրեմ…

Միևնույն հայացքին էին և խմբագիրը՝ Ալեքսանդր Քալանթարը և մյուս գլխավոր աշխատակիցը՝ Հովհ. Տեր-Մարկոսյանը։

Այսօր մեկիկ-մեկիկ վեր հանելով այն ծանր, մղձավանջային օրերի բոլոր անցուդարձերը, ես համակվում եմ այն խոր համոզմունքով, որ երբեք Անգլիան իր բացարձակ հակահայկական արարքներով այնքան ահավոր վնասներ չի պատճառել հայ ժողովրդին, որքան պատճառել է 1895-ի իր ջերմ հայասիրությամբ։ Կատարվում էր ճիշտ այն, ինչ հանճարեղ պարզությամբ ներկայացրել է Կռիլովն իր «Կատու և խոհարար» առակի մեջ։ Աբդուլ-Համիդի հրամանով ջարդվում էին հայերը հազարներով, բյուրերով, իսկ փառահեղ լորդ Սոլսբերին Բրիտանական մեծ կղզու փառահեղ առանձնությունից ճառերով, սոսկ միմիայն ճառերով էր հանդիմանում սուլթանին, սպառնալիքներ կարդում ամենախիստ դարձվածքներով, ուղղակի ասում, թե եկել հասել է Օսմանյան կայսրության վերջը։ Այս սպառնալիքներն այնքան ցնցող էին և մահաբեր, որ Լոնդոնի թուրքական դեսպանը հանկարծամահ եղավ. ինչպես գրում էին թերթերը՝ հենց սոլսբերիական խոսքերի ազդեցությունից։ Անգլիան ոտքի էր կանգնել մի մարդու պես։

Ամենօրյա մամուլի էջերը լցվում էին հարյուրավոր հայանպաստ միտինգների մանրամասն նկարագրություններով։ Անգլիայի վարչապետը, այսպիսով, իր հակասուլթանական հոխորտանքների մեջ ամուր ու հաստատ կերպով հենվում էր երկրի՝ կազմակերպված ու միացած հասարակական կարծիքի վրա։ Իսկ Աբդուլ-Համի՞դը… «հուզվում էր և ուտում» կռիլովյան կատվի նման։ Նրա մոտ, Բոսֆորի ափերին, կային հզորներ, որոնք փսփսում էին նրա ականջին «Massacrez, Majeste, Massacrez»։ Եվ կոտորածները շարունակվում էին։ Սուլթանն այնպես վարպետորեն էր տանում իր մեծ դահճապետի դերը, որ նույնիսկ վախեցածի կերպարանք էր ընդունել և ինքնագիր նամակ ուղարկել Սոլսբերիին՝ այնտեղ գրելով, թե ինքը վճռել է իր վավերացրած ռեֆորմներն անպատճառ մտցնել ասիական նահանգներում։ Անողորմ,

արյունոտ ծաղր… Իսկ Սոլսբերին, մի խեղճացած սուլթան երևակայելով իր առջև, ավելի ևս խստացնում էր իր սպառնալիքները ճառերի, լոկ ճառերի մեջ։

Եվ հակաճառողները մեր վեճերի մեջ մեզ ասում էին.

– Չե՞ք տեսնում՝ Անգլիան չափազանց առաջ է գնացել, որպեսզի կարողանա մտածել նահանջի մասին։ Դրված է նրա պետական պատվի հարցը, Անգլիան երբեք թույլ չի տա, որ իր պատիվը ոտնահարվի, այն էլ այնպիսի մի ողորմելի հակառակորդի կողմից, որպիսին թուրքաց սուլթանն է։

Մթնոլորտն ամբողջովին այսպիսի գաղափարներով էր տոգորված։ Հայությունը (խոսքս իհարկե այն հայության մասին է, որ ապրում էր Հայաստանի արյունոտ հողերից հեռու) իրեն զգում էր համաշխարհային քաղաքականության կենտրոն, թեև օրն օրին նրան հարվածում էին մեկը մյուսից զարհուրելի տեղեկություններ, որոնք գալիս էին Թուրքահայաստանից, բայց և այդ մղձավանջային տագնապի մեջ էլ նրան օրորում էին երազները, որոնք հյուսվում էին ամեն տեսակ պատահականություններից։ Մի օր հեռագիր եկավ Օդեսայից, թե անգլիական նավատորմը ռմբակոծում է Կ.Պոլիսը։ Անկարելի է նկարագրել այդ լուրի գործած տպավորությունը։ Որքա՜ն հրճվանք, որպիսի՜ ինքնաբավականություն։ Դարերով կուտակված վիշտն էր վերանում, կրած տառապանքների, միլիոնավոր զոհերի վրեժն էր լուծվում։

Բայց երազները շուտ գունատվեցան… Սու՛տ էր Կ.Պոլսի ռմբակոծումը, սու՛տ էր և այն, թե Անգլիայի համար պետական պատվի հարց էր դարձել Հայոց հարցը։ Ի՜նչ պատիվ, ի՜նչ բան։ Սոլսբերին Աբդուլ-Համիդի կատաղությունն անհունորեն գրգռելուց հետո նահանջի ճամփան բռնեց՝ առանց դժվարություններ զգալու։ Նա առաջարկեց հավաքական ճնշում գործ դնել սուլթանի վրա, բայց Ռուսաստանը, նրան հետևելով՝ և Ֆրանսիան ընդդիմացան այդ առաջարկին։ Այն ժամանակ Սոլսբերին հայտարարեց, թե Անգլիան միայնակ ոչինչ չի կարող անել, թե բրիտանական զրահակիրները չեն կարող բարձրանալ Հայաստանի լեռները։ Նրան պատասխանեցին, թե այդ բանի կարիքը չկա, քանի որ անգլիական կառավարությունը դեռ շատ միջոցներ ունի իր ձեռքում՝ մենակ գործելու համար։ Գլադստոնն ասաց, թե բավական կլինի նույնիսկ դժգոհության, անբավականության մի ցույց, օրինակ, եթե անգլիական դեսպանը ետ կանչվի Կ.Պոլսից, դիվանագիտական հարաբերությունները խզվեն Անգլիայի և Թուրքիայի միջև։

Հայերը լքված էին ամենատմարդի եղանակով։ Լքված էին այնպիսի ժամանակ, երբ դեռ լողում էին իրենց արյան մեջ, և երբ սովն ու հիվանդություններն էին գալիս թուրքական յաթաղանի թողած պակասը լրացնելու։ Սոլսբերին շահագործել էր հայի արյան լճերը, և, այնուհետև, նրա համար գոյություն չունեին հայն ու Հայկական հարցը։ Նա ետ քաշվեց, լռեց, կարծես՝ ոչինչ չէր էլ արել. և այնուհետև ոչինչ խոսք ու մտածություն նրա խոսքերին հավատացած, նրա խոսքերին զոհված ժողովրդի մասին։

Աբդուլ-Համիդի կատարյալ կարգադրության տակ էր թողնվում նրա այդ միամիտ, հավատացող զոհը։

Եվ արդար լինելու համար հարցնենք՝ իսկ ո՞վ չէր շահագործում հայի արյունը։ Գերմանիա՞ն արդյոք։ Վիլհելմն այնքան մոտեցել էր սուլթանին, որ Գերմանիայում արդեն գրականություն էլ էր կազմում հայկական ջարդերն արդարացնելու համար։ Եվ երբ կոտորածների միջոցին Լոնդոնից Գերմանիա գնաց մի հայ բողոքական պրոֆեսոր՝ հայ բյուրավոր որբերի համար լոկ ողորմություն հավաքելու նպատակով, գերմանական ոստիկանությունը պարտավորեցրեց նրան 24 ժամվա ընթացքում հեռանալ գերմանական սահմաններից։ Նողկալի տեսարան ի ցույց հանեց և Եվրոպայի բուրժուական մամուլը Գերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում։ Իր վաճառվող, պոռնիկ հոգին նա ծախում էր թուրքական ոսկիներին և չարախոսությունների կույտեր էր բարձում Հայաստանի աշխատավոր ժողովրդի վրա։ Ես չեմ կարող լռության տալ և մի ուրիշ նողկալի պատկեր. կաթոլիկ մի քահանա, Շարմտան անունով, հանդես եկավ Փարիզում իբրև քրիստոնեական սիրո քարոզիչ և, իր «բարձր» հոգու հոգս դարձնելով կոտորածներից ազատված հայերին մի կտոր զգեստ և մի կտոր հաց տալը, հօգուտ հայերի եռանդուն կերպով հանգանակություն կատարեց։ Վերջն ի՞նչ պատահի, որ լավ լինի։ Այդ Շարմտանն իր հավաքած փողերն ուղարկեց Վան, ուր նրա գործակալները ողորմելի փշրանքներ տվեցին միայն այն մերկ ու քաղցած հայերին, որոնք համաձայնեցին կաթոլիկ դառնալ։ Սկսվել էր հոգիների մի ընդարձակ առ ու ծախ։ Նշանակված էր սակագին՝ հոգուն երկու ֆրանկ։ Եվ իրեն «հայր» կոչող Շարմտանը կոչեր էր հրատարակում Փարիզում՝ հորդորելով «բարի կաթոլիկներին», որ ամեն մեկը չմոռանա երկու ֆրանկ մտցնել՝ մի «հերձվածող» հայի հոգի գնելու և Հռոմի պապի ոտների տակ դնելու համար…

Ես «Մշակի» մեջ վարում էի մամուլի բաժինը։ Եվ քանի անգամ, բերելով այսպիսի քստմնելի փաստեր, ավելացնում էի իմ կողմից՝ «Էլի փա՛ռք թուրքին»…

1894-1896թթ. սպանդանոցը չափազանց խրատական պիտի լիներ մի ժողովրդի համար, որ զգում է իր չարն ու բարին, այսինքն՝ հասկանում է այն հանգամանքները, որոնց մեջ ինքն ապրում է, և ուժերի այն փոխհարաբերությունները, որոնց երկաթե օրենքն է տիրում իր վրա։

Սակայն խրատվեցի՞նք մենք։ Ամենևին։

Եվ ահա էլի փաստ։ Մի նոր, ավելի հանդուգն ցույց Կ.Պոլսում՝ պետությունների ուշադրությունը գրավելու համար։ Կարելի էլ չէր ասել, թե Սոլսբերիի տմարդի փախուստից տարիներ էին անցել, և մենք մոռացել էինք նրան։ Ո՛չ, այդ փախուստից ընդամենը մի քանի ամիս էր անցել, փախուստի հետևանքները դեռ մեզ շարունակում էին խեղդել իրենց սար ծանրությամբ, և մենք նոր մի փորձի

առջև էինք կանգնած։ 1896-ի օգոստոսին տեղի ունեցավ դեպքը, որը կոչվեց Բանկ-Օտոմանի դեպք։

Ուշ երեկո էր, երբ ստացվեց հեռագրական գործակալության հեռագիրն այդ դեպքի մասին։ Ես թարգմանեցի, տարա տպարան ու այնտեղ երկար մնացի, մինչև որ շարեցին, սրբագրեցին, մտցրին արդեն պատրաստ համարի մեջ։ Լուսաբացին էր, որ հազիվ ազատվեցի գործից և գնում էի տուն՝ հանգստանալու։ Հանդիպում եմ Քրիստափոր Միքայելյանին, որ նույնպես նոր էր վերջացրել «Новое обозрение»-ի սրբագրությունը։ Քայլում ենք ամայի փողոցներում, մեր խոսքն, իհարկե, օրվա խոշոր եղելությունն էր։ Ոչ այն, որ հենց այդ միջոցին Նիկոլայ ցարն իր մինիստր Լոբանով-Ռոստովսկու հետ գնացել էր Ավստրիա՝ Արևելյան հարցի վերաբերմամբ Ֆրանց-Իոսիֆ կայսրի կառավարության հետ համաձայնություն կայացնելու համար, այլ այն, որ տեղի էր ունեցել Կ.Պոլսում և որի նկարագրությունը պարունակող հեռագիրը ես զետեղել էի «Մշակի» առաջին երեսում ցիցերո տառերով։ Տպավորությունը մեզ՝ երկու առաջին ընթերցողներիս վրա խիստ է։ Մի քանի հոգի հայեր, ռումբերով զինված, մտել են օսմանյան բանկի շինության մեջ, տիրացել են միջազգային կապիտալի այդ խոշոր մթերանոցին՝ դուրս քշելով ծառայողներին ու պահապաններին։ Ի՞նչ դուրս կգա այս աննախընթաց հանդուգն գործից։

Ես դատողություններ եմ անում, իսկ Քրիստափորի միտքը սավառնում է ուրիշ կետի վրա։ Նրա հեղափոխական խառնվածքն արդեն լավ ըմբռնել է, որ գործը հոյակապ է։ Բայց այդ չէ նրան զբաղեցնողը, այլ այն հարցը, թե ո՞վ է կատարել բանկի գրավումը։ Հնչակյաննե՞րն արդյոք, թե՞ դաշնակցականները։ Կարծես սա միևնույն չէ հայ հեղափոխության տեսակետից։ Քրիստափորը կուսակցական հարցերի մեջ մի նեղսիրտ աղանդավոր էր։ Հնչակյանների մասին խոսում էր արհամարհանքով։

Հեռագիրը չէր բացատրում այս հանգամանքը։ Նա շարունակ գործ էր ածում «հեղափոխական հայեր» դարձվածքը՝ առանց, իհարկե, իմանալու, թե դրանով որքան է գրգռում դաշնակցական շեֆի անբավականությունը։ Այս անորոշությունն անփոփոխ մնաց հեռագրերի մեջ հետևյալ օրերին էլ։ Բանկի գրավման հետևանքով Կ.Պոլսում հայերի մեծ կոտորած էր սկսվել՝ երկրորդը մի տարվա մեջ, և այս երկրորդի զոհերն անհամեմատ շատ էին առաջինից, մոտ 6 հազար մարդ։ Քրիստափոր Միքայելյանն ամեն առավոտ գալիս էր ինձ մոտ՝ «Մշակի» խմբագրատուն։ Դաշնակցական կոմիտեն տեղեկություններ չուներ, և Միքայելյանը գալիս էր ինձանից իմանալու, թե չկա՞ն նամակներ «Մշակի» թղթակիցներից։ Մի քանի օր շարունակ մենք էլ առանց տեղեկությունների էինք։ «Ախպե՛ր, մեռա, դե մի բան ասա, էլի՛»,- այսպիսի խոսքերով էր ամեն անգամ Քրիստափորը դիմում ինձ՝ նստելով կողքիս, բազմոցի վրա և սեղմվելով ինձ։ Ես նայում էի նրա համակրելի, գունատ դեմքին և զարմանում ինքս իմ մեջ։ Այս զարհուրելի ժողովրդական դժբախտությունը, հազարավոր դիակներ, ո՛վ գիտե վաղը քանի՛-քանի հազարները պիտի նորից պառկեն գյուղական Հայաստանում, իսկ այս ֆիզիկապես թույլ կազմված

(նա կաղ էր), բնությամբ շատ բարի ու խաղաղ մարդը շարունակ և միալար այն բանով էր հետաքրքրվում, թե ովքեր են այդ արյունոտ, ողբերգական շարժման հեղինակները։

Մե՞նք, թե՞ նրանք։ Կարծեք՝ սպորտի հարց էր այդ և ոչ թե մի ամբողջ ժողովրդի գլխին պայթած արյունոտ փոթորկի հարց։

Եվ վերջապես, մի օր նա իմացավ ինձանից, որ Բանկ-Օտոմանի հերոսները դաշնակցականներ էին։ Տրապիզոնից մեզ ուղարկել էին այն դիմումը, որ արել էր Կ.Պոլսի դաշնակցական կոմիտեն եվրոպական դեսպաններին՝ հայտնելով նրանց, թե Բանկ-Օտոմանի գրավումն իր գործն է և նպատակ ունի հարկադրելու, որ վերջ տրվի հայ ժողովրդի տանջանքներին՝ ծրագրված ռեֆորմները իրագործելու միջոցով։ Հակառակ դեպքում կոմիտեն սպառնում էր ոչնչացնել բանկի բոլոր հարստությունները։

Կասկած ուրեմն չկար։ Քրիստափորս այլակերպվեց ուրախությունից, գրկեց ինձ, նրա գունատ դեմքի վրա կարմրություն երևաց, և հափշտակելով խմորատիպ դիմումը՝ դուրս գնաց կաղին տալով։

Իսկ տեղեկությունները գնալով առատանում էին։ «Մշակի» թղթակիցները Կ.Պոլսից ավստրիական փոստով ամեն օր մի քանի հատ մանրամասն և ընդարձակ նկարագրություններ էին ուղարկում, որոնք, սակայն, չէին տպագրվում գրաքննչական արգելքների պատճառով։ Քրիստափորը գալիս էր ամեն օր, ժամերով խորասուզվում էր այդ անտիպ նյութերի ընթերցանության մեջ։ Հիշում եմ՝ նրան ոգևորեց մանավանդ մի նամակ, որի մեջ թղթակիցն ասում էր, թե մի ֆրանսիացի հիացել էր հայկական այս հեղափոխության վրա և ասել, թե անգամ ֆրանսիացիները՝ հեղափոխական արվեստի մեջ վարպետները, այդպիսի գործ կատարած չունեն։ Իր այս ոգևորությունը դաշնակցական շեֆն արտահայտում էր բուռն կերպով։ Իմ առաջ կանգնած էր հեղափոխական ռոմանտիզմի կատարյալ մարմնացումը։

Լավ, շատ լավ։ Բանկը վերցված է, ոչ ոք այդպիսի գործ չի կատարել, ընդունենք այն իսկ, թե ոչ ոք այնուհետև էլ, «մինչև ի կատարած աշխարհի», չպիտի կարողանա այդպիսի բան կատարել։ Հետո՞։ Ի՞նչ իմաստ կա այդ արտակարգ հերոսության մեջ։

Մեզ բացատրում էին իմաստը։ Եվրոպական կապիտալիզմը, ասում էին, իրեն վտանգված տեսնելով իր տիրապետության ամենագլխավոր դիրքերից մեկում, այդ վտանգը իրենից հեռու պահելու համար, կհարկադրի սուլթանին բավարարություն տալ հայ ժողովրդի պահանջներին։ Այստեղ ահա, հեղափոխական հերոսության միջից իր տխմար գլուխն էր դուրս բերում այն ողորմելի մտայնությունը, որ առաջին անգամ ձևակերպվել էր հնչակականության մեջ Գում-Գափուի ցույցի միջոցին։ Ես արդեն խոսել եմ նրա մասին վերևում և այստեղ կուզեի միայն հիշեցնել, թե որքան տկար էր, ինքնուրույնությունից որքան զուրկ էր հայ հեղափոխական միտքը։ 1890 թվին եվրոպական կապիտալն իր հանգստության պահպանությունը հայ

հեղափոխականներին չէր հանձնել, այլ սուլթան Համիդին։ Եվ Համիդը բանկի դեպքին պատասխանեց Կ.Պոլսի ջարդով, որ այս անգամ համարյա ոչ մի ազդեցություն չարեց եվրոպական դիվանագիտության վրա։ Կոտորածի մյուս օրը, երբ Կ.Պոլսի փողոցները դեռ կարմրած էին հայի արյունից, Վիլհելմ կայսրը Աբդուլ-Համիդին ընծա ուղարկեց իր պատկերը՝ զարդարված թանկագին քարերով։

Ահա՛ ինչ էր անում եվրոպական կապիտալը։ Որքան հայ հեղափոխությունը վախեր էր պատրաստում նրա համար, այնքան ավելի պինդ էր նա Համիդին սեղմում իր սրտին։

Իսկ ի՞նչ շահեցին հայ հեղափոխականները – խաբված հերոսների փառքը միայն։ Բանկ-Օտոմանի մեջ ամրացած դաշնակցականների հետ դեսպանների անունից բանակցություններ սկսեց ռուսական դեսպանության թարգման Մակսիմովը։ Նա հավատիացրեց սրանց, թե դեսպանները խոստանում են անպատճառ ռեֆորմներն իրագործել տալ, եթե միայն իրենք համաձայնեն դուրս գալ բանկից։ Խոստացան, որ նրանց բոլորին հնարավորություն կտրվի առանց որևէ վնասի հեռանալ Կ.Պոլսից։ Հեղափոխականները համաձայնություն տվեցին, և Մակսիմովը նրանց տարավ նավ նստեցնելու, որ գնան Մարսել։ Ամերիկայի «Հայք» թերթի մեջ էլ այն ժամանակ կարդացի անգլիական լրագրերից վերցրած տեղեկություն, թե Մակսիմովը վերջին րոպեին, հրաժեշտ տալով գնացող հեղափոխականներին, ասել է նրանց. «Այժմ ինձ թույլ տվեք, պարոննե՛ր, ասելու, որ դուք էշ եք»։

Էշացնող ռուս դիվանագետը հաղթանակով վերադարձավ իր գործին, իսկ եվրոպական կապիտալի վրա ձեռք բարձրացնող միամիտներին մնում էր փքվել «Բանկի հերոս» տիտղոսով։ Հետևյալ ամառը նրանցից մեկի հետ ինձ ծանոթացրեց Քրիստափոր Միքայելյանը՝ Մուշտայիտ այգում։ Նստեցինք թեյ խմելու, և ես այնքան հերոսին չէի դիտում, որքան դաշնակցական շեֆին, որի համար հերոսը մի կատարյալ պաշտամունք էր դարձել։

Պաշտում էին։ Բայց ինչի՞ համար… Ի՞նչ էր ստացել հայ ժողովուրդը Բանկ-Օտոմանի գրավումից, եթե ոչ միմիայն վեց հազար դիակներ։ Օգուտը լիաբար ստացել էր Վիլհելմը՝ իր հավատարիմ հպատակ բանկիրների բերանը գցելով Բաղդադի երկաթուղու նման մի չաղ պատառ։

## Գլուխ երկրորդ։ Անկում և բարձրացում

### Ա

1896 թվականը, այնքան հարուստ իբրև ցնցումների ու վկայությունների ժամանակամիջոց, ծանր հարվածներ էր տալիս հայ հեղափոխականությանն առհասարակ։ Ներքին քայքայում էր սկսվում Հնչակյան կուսակցության մեջ. հիշվածների էր ենթարկվում, կորցնում իր նյութական և բարոյական ուժը, թուլանում

ներքին պայքարներից ու հակամարտություններից։ Այս դեռ, իհարկե, չէր նշանակում Հնչակյան կուսակցության կատարյալ և անհետ ոչնչացում։ Նա պահպանում էր իր գոյությունը, բայց արդեն երկրորդական նշանակություն ուներ, փոքր գործեր կարող էր կատարել։

Հրապարակում մնում էր Դաշնակցությունն իբրև մի հատիկ միաձույլ կուսակցություն, որ ներքին կազմակերպչական ճգնաժամ չէր ապրում։ Թեև այդպես, բայց Դաշնակցությունն էլ Բանկ-Օտոմանի ցույցով մտնում էր իր թուլության, անկման շրջանը։ Ահռելի արյունահեղությունները սաստիկ ռեակցիա էին առաջացրել հասարակական տրամադրության մեջ։ Ավելի ևս սաստկացած էր ռեակցիան Եվրոպայում և, մասնավորապես, Ռուսաստանում։ Այս խավար հոսանքների մեջ Աբդուլ-Համիդը դրդվում էր [դեպի] կատարյալ և անսահման կարողություն՝ խեղդելու իր պետության ամբողջ ազգաբնակչությանը, բայց մասնավորապես հայերին, որոնք զրկվում էին մարդկային ամենատարրական իրավունքներից անգամ, օրինակ՝ տեղափոխության ազատությունից։ Ճնշումներն ու կեղեքումները հասնում էին աներևակայելի աստիճանների, իսկ սեպացած ժայռերին դեմ տրված հեղափոխությունը չգիտեր էլ ինչ աներ։

Ճիշտ է, դեռ մնում էր հին արհեստը՝ ֆիդայական (հայդուկային) կռիվը, բայց դա էլ առանձին մեծ ազդեցություն չէր գործում, թեև երկիրն իր միջից հանում էր իսկապես քաջ, հռչակված ֆիդայիների (Սերոբ Աղբյուր, Գևորգ Չաուշ և ուրիշներ)։ 1897-ին Դաշնակցությունը հաջողեցրեց մի բավական աչքի ընկնող հայդուկային արշավանք. գիշերով հարձակում գործեց քրդական մի ցեղի վրա, որի գլխավորն էր Շարուֆ-բեյը, որն ապրում էր վրաններում՝ Խանասոր անվանված տեղում, թուրք-պարսկական սահմանագլխի վրա։ Այս գործը շատ ուռցրին ու չափազանցրին դաշնակցականները՝ համարելով այն իրենց մեծագույն հաղթանակը։ Այդ քուրդ ցեղը Շարուֆ-բեյի հետ հայտարարվեց բնաջնջված և, այսպիսով, նրա զոհը դարձած հայ ժողովրդի վրեժը հանված։ Սակայն այդ մի փոքրիկ հաջողություն էր միայն։ Խանասորում հանկարծակի եկած քրդերը կորուստներ ունեցան, կորցրին շատ անասուններ։ Բայց մնաց Շարուֆ-բեյը, որն անցավ Մուշի կողմերը և սկսեց այնտեղի հայերին տանջել, խորովել։

Չափից դուրս փառաբանված հաղթությունն էլ անկարող եղավ կանգնեցնել այն անընդհատ թուլացումը, որ գալիս էր սաստիկ վտանգելու Դաշնակցության գոյությունը։ Պետք էր գործունեության ավելի լայն շրջան ստեղծել և նորից կենդանացնել Հայոց հարցը։ Այս նպատակով Քրիստափոր Միքայելյանը տեղափոխվեց ժնև՝ կուսակցության ղեկավարությունն իր ձեռքն առնելու համար։ Թիֆլիսում ղեկավար մնաց Սիմոն Զավարյանը, որ երկար ժամանակ զուր ջանքեր էր անում կազմակերպության մեջ կենդանություն մտցնելու համար։ 1898թ. սկզբին Զրօրինեքի հանդեսին, Վանքի եկեղեցու բակում, Զավարյանը մոտեցավ ինձ և այսպիսի մի տարօրինակ առաջարկություն արեց։

Դաշնակցությունը գրեթե բոլորովին մոռացվել ու լքվել է ամենքից։ Ինքը որոշել է կազմակերպությունը փրկելու համար՝ նրա ղեկավարությունը հանձնել հայ բուրժուազիային։ Թող գան նրանք՝ Աբգար Հովհաննիսյանը և ուրիշները, բերեն իրենց հետ դրամական միջոցներ, մարդիկ։ Նա ինքը՝ Զավարյանը, որոշել էր դիմել Աբգար Հովհաննիսյանին, իսկ ինձ առաջարկում էր՝ արդյո՞ք չեմ կարող գնալ Թիֆլիսում այն ժամանակները շատ հայտնի բժշկապետ Գասպարյանցի մոտ, որ թեև հայտնի էր իր կոպիտ և անհրապույր բնավորությամբ, բայց ինձ անշուշտ կընդուներ, իբրև իր հայրենակցի և «Մշակ»-ականի։ Ես պիտի այս մարդուն առաջարկություն անեի, որ գար մտներ Դաշնակցության մեջ և դառնար նրա ղեկավարներից մեկը։

Ես անակնկալ առաջարկությունից մնացել էի ապշած։ Եթե հետս խոսողը Սիմոն Զավարյանը չլիներ, պիտի լսածս խոսքերը համարեի ծաղր իմ հասցեին։ Բայց Սիմոնը խոսում էր լրջությամբ, իրեն հատուկ համոզիչ շեշտով։ Պատասխանեցի, թե բժշկապետ Գասպարյանցի հետ անձնական ծանոթություն չունեմ, ունենամ էլ՝ չեմ կարող նրան առհասարակ որևէ առաջարկություն անել՝ լավ իմանալով նրա բնավորությունը, այն էլ այնպիսի մի առաջարկություն, որպիսին է մի դավադրական, հալածվող գաղտնի ընկերության գլուխ կանգնելը։ Եվ առհասարակ խորհուրդ տվի նրան՝ հանել Գասպարյանցին իր կազմած բուրժուական ցուցակից։

Պատմում եմ այս փոքրիկ դեպքը, որպեսզի ցույց տամ, թե ինչ հուսահատական դրության մեջ էր գտնվում այդ միջոցին Դաշնակցությունը։ Քիչ անցած Զավարյանը մի քանի խորհրդակցական ժողովներ գումարեց՝ ինձ էլ հրավիրելով մասնակցել այդ ժողովներին։ Ես գնում էի իմ ընկեր Վալերիան Լունկևիչի հետ՝ մերժած չլինելու համար Սիմոնի՝ մեր երիտասարդական շրջանների այդ ականավոր ներկայացուցչի խոսքը։ Շատ լավ եմ հիշում առաջին ժողովը, որ կայացավ գյուղատնտես Հարություն Փիրալյանի բնակարանում՝ Միքայելյան փողոցի վրա։ Բացի մեզանից կային և մի քանի անձնավորություններ, որոնցից հիշում եմ միայն Ավետիք Սահակյանին (դաշնակցական, հայտնի Հայր Աբրահամ անունով)։ Սիմոնը սկսեց մի երկար և մանրամասն զեկուցում Դաշնակցության կազմալուծման մասին։

Այս հանգամանքի գլխավոր պատճառը նա համարեց կազմակերպության ծրագիրը։ Գործունեության այն եղանակը, որ ընդգրկել էր այն՝ բերելով իր հետ արյունահեղություններ և խորտակում, հոգնեցրել ու խրտնեցրել է ժողովրդական խավերին, և ամենքն այժմ երես են դարձնում նրանից։ Հարկավոր է, ուրեմն, վերակազմել կուսակցությունը նոր հիմքերի վրա։ Այս նպատակով էլ ահա հրավիրված էր խորհրդակցությունը։ Ինքը՝ զեկուցողը կարծում էր, որ կազմակերպությունը պիտի ստանա ավելի խիստ ազգային գունավորում՝ դուրս ձգելով ծրագրի և գործողության եղանակների միջից ամեն բան, որ հակառակ է ազգայնության հոգուն, որ և խրտնեցնում է հայ ժողովրդի պահպանողական բուրժուական տարրերին, որոնց վրա պիտի հենվի հայ հայրենական ազատագրության գործը։ Այս բանի մեջ նա ոչինչ հետադիմական կամ

հակաժողովրդական բան չէր տեսնում։ «Եթե,- ասաց նա,- ռուս ժողովուրդն իր համար ազգային սրբություն է դարձրել Մատուշկա-Վոլգան, ինչո՞ւ պիտի հայի համար խոտելի համարվի այն, որ նա իր ազգային սրբություն դարձնում է Մասիս սարը»։

Հակաճառելով Զավարյանին՝ Ավետիք Սահակյանն առարկեց, թե Դաշնակցությունը, ընդհակառակը, բոլորովին կազմալուծված չէ, այլ «շարունակում է պահպանել իր նախկին կենսունակությունը։ Եթե Թիֆլիսում և Կովկասյան մի քանի այլ կենտրոններում նկատելի է սառնություն դեպի կուսակցությունը, դա մեծ նշանակություն չունի, քանի որ նրա հետ է բուն երկրի՝ Թուրքհայաստանի ժողովուրդը, որ իր միակ պաշտպանն է համարում կուսակցությանը և շարունակ ցանկանում է, որ մենք գործենք միևնույն ուղղությամբ, և ինքն էլ գործակցում է մեզ։ Ուրեմն ծրագիրը փոփոխելու ոչ մի հարկավորություն չկա։ Պետք է միայն աշխատել, որ կուսակցությունը համակրանք և վստահություն ներշնչի ռուսահայ ժողովրդին էլ։ Թող գան, ուրեմն, ովքեր կարող են։ Մենք խտրություն չենք դնում, մեզ համար բոլոր խավերի աշխատանքը ցանկալի է»։

Տուն վերադառնալիս ես և Լունկևիչն իրար ասում էինք, թե Զավարյանի այս ձեռնարկումից ոչինչ չի դուրս գա։ Այդպես էլ եղավ։ Եթե չեմ սխալվում, մի անգամ էլ հավաքվեցինք Փիրալյանի բնակարանում և հետո… Ամեն ինչ մնաց հին դրության մեջ։ Իսկ կուսակցության վերակենդանացումը Թիֆլիսում չէր հիմնավորվում, այլ Ժնևում։ Այնտեղ Քրիստափոր Միքայելյանը ծավալեց մի եռանդուն կազմակերպչական գործունեություն։ Սա ամենից առաջ արտահայտվեց հայդուկային գրականության մեջ։ «Դրոշակի» մեռած պաշտոնական բովանդակությունը նշանավոր չափով կենդանացավ։ Այնտեղ երևան եկան Ղարիբը (Ահարոնյան)՝ իր վեպիկներով և պոեմներով, որոնք դրվատում էին հայդուկներին և հայդուկականությունը, Է. Ակնունին (Մալումյանը), որ նույնպես տեղափոխվել էր Ժնև և ոտքով-գլխով դաշնակցական դարձել։ Վերջապես, ինքը՝ Միքայելյանն էլ ձեռքն էր առնել հրապարակախոսի ժլատ գրիչը՝ գաղափարախոսական կառուցվածքներ հիմնավորելու համար։ 1901 թվականին էր, որ նա «Դրոշակի» մեջ տպագրեց իր «Ամբոխային տրամաբանությունը» փոքրիկ աշխատությունը, որը, սակայն, ահագին դժբախտությունների աղբյուր դարձավ հայ ժողովրդի համար։

Դաշնակցականների համար «Ամբոխային տրամաբանությունը» դարձավ մի սրբազան գիրք, ինչպես Ավետարանը, Ղուրանը։ Նրա մեջ հայտնված մտքերն երկնառաք ճշմարտություններ էին բոլոր ուղղահավատ դաշնակների համար։ Ի՞նչ էին բարբառում այդ ճշմարտությունները։

Հասարակության մեջ շատացել էին այն տարրերը, որոնք համոզվում էին հետզհետե, թե հայդուկային հեղափոխությունն է հայ ժողովրդի ջարդերի պատճառը, և եթե այն շարունակվի, հայության կատարյալ և վերջնական բնաջնջումը Թուրքիայում անխուսափելի է։ Սա արդեն հակահեղափոխություն էր՝ կորուստների

և դրանց հետևանքների հետ հաշվի նստելու հոսանք։ Այդ հոսանքի բերանը փակելու համար էր Միքայելյանը գրում իր բրոշյուրը։ Նրա մեջ պատմական փաստերով, հեղինակավոր եվրոպացիների վկայություններով [նա] պաշտպանում էր այն միտքը, թե քանի որ Թուրքիան սուլթանական Թուրքիա է, այնտեղ ապրող նացիաները պիտի կոտորվեն ու տանջվեն, միևնույն է՝ ինչ դրության մեջ էլ գտնվեն նրանք՝ խաղաղ, հլու-հպատակ դրության թե ըմբոստ-հեղափոխական դրության։

Այսպիսով դաշնակցական շեֆը միանգամայն ապացուցված էր համարում, թե թուրքահայերի կոտորածները կապ չունեն թուրքահայերի հեղափոխական շարժումների հետ, և, ուրեմն, հեղափոխությունը պիտի շարունակի իր գործը՝ առանց ուշադրություն դարձնելու սուլթանի ջարդարար եռանդի վրա։ Հեղափոխության տեսականը Միքայելյանը պարզում և զարգացնում էր ռուս նարոդնիկական ընդվզողականության (բունտարության) պատիվ բերող փայլով։ Հեղափոխությունն է միակ միջոցը ջարդերի դեմ կռվելու համար։ Մինչև այժմ հայ հեղափոխությունը խղճի մտոք է կատարել իր ազատարար առաքելությունը և, եթե հաջողություն չի ունեցել, այդ նրա մեղքը չէ։ Պատճառը միշտ եղել է Եվրոպայի դավաճանությունը…

Այսօր կարդալով 20-րդ դարի հետ մեզանում երևան եկած ազատագրական ավետարանը, մենք պիտի զարմանանք ոչ այնքան հեղինակի մտքի սնանկության վրա, որքան այն բանի, որ այդ միտքը կարողանում էր հիպնոսացնել զանգվածներին, քշել նրանց դեպի անհավասար ու խելացնոր մի պատերազմի՝ մերկ թևերով կռվելու Կրուպպի թնդանոթների դեմ։ Պետք էր, ճիշտ որ, լինել տհաս մի ամբոխ, մի խուժան՝ հավատալու համար, որ եթե 1896-ի օգոստոսին դաշնակցականները ռումբերով չխուժեին էլ Բանկ-Օտոմանի ներսը, Կ.Պոլսում, այնուամենայնիվ, կմորթվեին 6000 հայեր։

[Ճիշտ է,] Քրիստափոր Միքայելյանը վերակենդանացնում էր [կուսակցության] գործունեությունը, բայց միշտ մնալով հին նարոդնիկական ավանդներին կուրորեն հպատակվող՝ ոչինչ չսովորելով կյանքից և ոչինչ չմոռանալով հին մոլորություններից։ Նա Թուրքահայաստանում պատրաստում էր նոր ապստամբություն և միջոցներ էր ձեռք առնում, որ Եվրոպան այս անգամ չդավաճանի իրեն։ Իսկ Աբդուլ-Համիդից հայ ժողովրդին ազատելու համար ծրագրվում էր կտրուկ և ուղիղ միջոց՝ սպանել նրան։

Բ

Այս ձեռնարկումների համար, սակայն, հարկավոր էին դրամական ահագին միջոցներ։ Եվ Քրիստափորը թողեց Ժնևն ու գնաց Բաքու՝ հայ արդյունագործական բուրժուազիային երկու ձեռքով կթելու համար։ Սկզբունք է՝ ով հոժար կամքով գումար չի տալիս, այդպիսինը մահվան երկյուղի տակ է դատարկում իր հաստ գրպանը։ Գործը Բաքվում հաջողեցնելու համար հարկավոր եղավ գաղափարական պայքար մղել։ Ֆիդայական հեղափոխության ճանապարհին առաջին անգամ

հակառակորդի դիրքով կանգնեց դասակարգային կռվի կուսակցությունը՝ սոցիալ-դեմոկրատիան, որ այն ժամանակ դեռ թույլ էր կազմակերպված։ Քրիստափորը Թիֆլիսից տանել տվեց Ահարոնյանին՝ վիճաբանություններ վարելու համար։ Եվ մի օր Ահարոնյանին տեսա Թիֆլիս վերադարձած՝ հաղթանակով։ Նա հաղթել էր վիճաբանությունների մեջ, երիտասարդությունը նրան օվացիաներով ճանապարհ էր դրել մինչև կայարան, և նա իր մազերի մեջ բերել էր այն կոնֆետիկները, որ շարունակ ցանելիս են եղել նրա վրա։ Քրիստափորը փողառատ գրպաններով վերադարձավ Ժնև՝ թողնելով, որ հայ հարուստներին փետրելու գործը շարունակի «Փոթորիկ» անունով տեռորիստական խումբը, որ իսկապես փոթորիկ էլ, ժանտախտ էլ դարձավ հայ բուրժուազիայի համար։ Խոշոր գումարներ էին տեղափոխվում Ժնևի դաշնակցական բյուրոն։

Միջոցների տեր դառնալով՝ Միքայելյանը նախևառաջ Փարիզում հիմնեց մի փոքրիկ կիսամսյա ֆրանսերեն թերթ՝ «Pro Armenia» անունով, որի նպատակն էր Հայոց հարցի պրոպագանդան։ Աշխատակիցների կոչումով թերթին իրենց անունները տվեցին մի քանի նշանավոր ֆրանսիացի։ Այսպես, խմբագրական կազմը հայտարարված էր հետևյալ անձերից՝ Ժորժ Կլեմանսո, Ժան Ժորես, Անատոլ Ֆրանս, Ֆրանսիս դե Պրեսանսե, Լ. դե Ռոբերտի, խմբագրապետն էր Պիեռ Քիյարը։

Այս խմբակի շուրջ, ճիշտ որ, կազմակերպվեց մի համաեվրոպական պրոպագանդա, որին մասնակցեցին և ուրիշ երկրների գրական-հասարակական գործիչներ (օրինակ՝ Գեորգ Բրանդես, Էդուարդ Բերնշտեյն և ուրիշներ)։ Կազմակերպվեցին դասախոսություններ Եվրոպայի զանազան կողմերում՝ Հայոց հարցի էությունը քարոզելու և ժողովրդականացնելու համար։ Այս նպատակով Անատոլ Ֆրանսը ճանապարհորդեց Իտալիայում։ Մի խոսքով, վերակենդանացվեց նախահեղափոխական շրջանի քաղաքական պրոպագանդան, որի կազմակերպողն էր, ինչպես տեսանք, Անգլո-հայկական ընկերությունն իր «Հայաստան» թերթով։ Պետք է, սակայն, այստեղ ևեթ ասել, որ պրոպագանդան լոկ Դաշնակցությանը չէր պարտական իր վերակենդանացմամբ։ Համիդյան խժդժություններից Եվրոպա փախած թուրքահայ գրողները նվիրվեցին նույն գործին, և նրանցից միայն մեկը՝ Արշակ Չոպանյանը, այս ուղղությամբ աշխատելով մեծ աշխույժով և հմտությամբ՝ կատարեց իսկը որ ահագին դեր։ Նրա անխոնջ ջանքերով կազմվել է գրեթե մի ամբողջ գրականություն՝ հայ պատմության, գրականության, արվեստի և մշակութային այլ հարցերի վերաբերյալ։ Թարգմանելը և ժողովրդական բանահյուսության այդ գոհարները, միջնադարյան ու աշուղական երգերը տպագրելը Չոպանյանը բավարար չի համարել ու նշանավոր գրողների և գիտնականների հանձնարարականներն է խնդրել ու զետեղել այդ հրատարակությունների մեջ՝ իբրև ներածություն, կարդացել է դասախոսություններ, դիմումներ է արել և այլն, և այլն։

Ի՞նչն էր այս ընդարձակ պրոպագանդայի նպատակը։ Հայ գործիչները՝ հեղափոխական և ոչ հեղափոխական, այն դժբախտ մոլորության մեջ էին մնում, որ

եթե քաղաքակիրթ կոչված աշխարհը (սա ասենք էլի ու էլի)՝ Եվրոպան, սառնասրտությամբ է վերաբերվում հայ ժողովրդի կրած անհուն և անօրինակ տառապանքներին, պատճառն այն է, որ նա չի ճանաչում հայ ժողովրդին, չգիտի, որ հայը մի հին կուլտուրական ժողովուրդ է, առաջադիմության ընդունակ, դարերից ի վեր եվրոպական քաղաքակրթության առաջավոր պահակ Ասիայի խորքերում: Եվ ահա ծանոթացնում էին այդ ժողովրդին, գովում նրա խաղաղ բնավորությունը, նրա ստեղծագործող, արդյունաբերող առատությունը, նկարագրում նրա թշվառությունները, նրա կրած հալածանքները, մարդասիրություն և գթություն էին հայցում նրա համար:

Այո՛, եռանդ և ընդունակություն շատ էին վատնվում: Բայց... Այդ բոլորը անճարության ջղաձգումներ էին: Հայ ժողովրդին իբր թե բոլորովին չէի՞ն ճանաչում և այն ժամանակ, երբ նա 300 հազար զոհ էր տալիս և իր տանջանքներով լցնում ամբողջ աշխարհը՝ բևեռից բևեռ. սա մի անասելի միամտություն էր: Միամտություն, մանավանդ այն մտածողության տեսակետից, որ ասում էր, թե այդ ժողովրդին պետք է փրկել այն պատճառով, որ նա կուլտուրական է, իր անցյալում Տիգրան, Նարեկացի, Շնորհալի, Տրդատ ճարտարապետ է ունեցել: Կարծեք թե մի ուրիշ ժողովուրդ, որ բոլորովին անցյալ չուներ, որ վայրենի էր, իրավունք չուներ ապրելու առանց տանջանքների, առանց կոտորածների: Կարծում էին, որ եթե Փարիզի կամ Լոնդոնի միջակ բուրժուան, մանր ռենթիեն (հասութակերը) գան գեղեցիկ խոսքեր լսելու հեռու ինչ-որ աշխարհում տանջվող բոլոր մարդկանց մասին, դրանից կփոխվի Ֆրանսիայի կամ Անգլիայի քաղաքականությունը, և վճռող խոսքը վերջիվերջո հանոտոններին և սոլսբերիներին չէր տրվի, այլ հենց այս ունկնդիր քաղաքացիներին…

Սա մի կատարյալ անգրագիտություն էր: Հայկական պրոպագանդան ապրում էր Եվրոպայի մեջ, բայց չէր հասկանում, թե ինչ էր կատարվում իր շուրջը:

Հայանպաստ պրոպագանդայի վարիչներն իրենց գլխավոր հույսը դրել էին Ֆրանսիայի վրա, և Փարիզը՝ համաշխարհային այդ բանկիրը, իբր պիտի հայանպաստ պրոպագանդայի սիրտն ու հոգին դառնար: Միայն այս հանգամանքը որքա՛ն էր խաբում մեզ: Միևնույն այն փաստը, որ Ժորժ Կլեմանսոն, Անատոլ Ֆրանսը, Ժան Ժորեսը բարեհաճել էին մեզ համակրել, որքա՛ն մանկական երազանքներ ներշնչեցին մեզ, որքան մոլորությունների անդունդներ գահավիժեցրին:

1900 թե 1901 թվականին Փարիզի հայ գաղութը լուր ստացավ, որ Կիլիկիայում պատրաստվում է հայկական մի նոր կոտորած: Այն ժամանակ [Ֆրանսիայի] արտաքին գործերի մինիստրն այլևս թուրքամոլ Հանոտո-փաշան չէր, այլ Դելկասեն էր: Մի պատվիրակություն, Արշակ Չոպանյանի գլխավորությամբ, դիմեց Դելկասեին և խնդրեց պաշտպանել հայերին: Դելկասեն սիրով ընդունեց և հայտարարեց, թե ինքը թույլ չի տա հայկական նոր ջարդեր: Եվ ֆրանսիական մի ռազմանավով գնաց դեպի

Կիլիկիայի ափերը։ Զարդ տեղի չունեցավ, և այս հանգամանքը վերագրվեց Դելկասեին և նրա ճառին։

Եվ այսքանից՝ ի՜նչ հրճվանք, ի՜նչ ակնկալություններ։ Դելկասեն դարձավ Հայոց հարցի պաշտպան։ Մի ֆրանսիացի գրեց, թե Դելկասեն միակ քաղաքագետն է Եվրոպայում, որ զուրկ չէ սրտից։ Այդ սիրտն էլ, հարկավ, կհարկադրեր նրան Հայոց հարցը դնել պետությունների առջև և լուծել տալ։ Բայց սա, իհարկե, մանկական թոթովանք էր, և ինքը՝ Դելկասեն, շուտով ապացուցեց, որ իրեն, իբրև դիվանագետի, զրպարտում են՝ ինչ-որ սիրտ դնելով իր կրծքի տակ։ Հայոց հարցի համար նա ոչ մի միջամտություն չարեց։ Բայց երբ սուլթանի կառավարությունը մերժեց վճարումներ անել Ֆրանսիայի երկու վաշխառուների, նույն Դելկասեն ֆրանսիական նավատորմն ուղարկեց թուրքական ջրերը և անվթար ստացավ վաշխառուների բոլոր պահանջները։

Սա չափազանց պարզ էր՝ երեխաներին անգամ դաս դառնալու համար։ Բայց Չոպանյանը շարունակեց հավատալ, որ «ֆրանսիական ազնիվ ազգը» պիտի ազատի հայերին։ Եվ միայն նա չէր այդպիսի հավատի տեր։ Քրիստափոր Միքայելյանի մտցրած ուղղությունն էր, որ Դաշնակցությունը շարունակ դիվանագիտական մարզանքներ կատարի՝ դիմումներ անելով մեծ պետությունների (գլխավորապես Անգլիայի և Ֆրանսիայի) կառավարություններին։ Այդ ժամանակներից էր, որ Ժնևի դաշնակցական կենտրոնը՝ «Դրոշակի» խմբագրությունը, իր պահեստների մի մշտական պատկանելիք էր դարձնում նաև մի հատ ռեդինգոտ, մի հատ էլ ցիլինդր՝ դիվանագիտական դիմումներ անող իր առաքյալներին հագցնելու համար։ Գնալ, ներկայանալ մի որևէ արտաքին գործերի մինիստրի քարտուղարի օգնականին, խոսել նրա հետ «հայոց ազգային դատի» մասին, մի քանի քաղաքավարի կեղծ խոսքեր լսել ու վերադառնալ. սա «փրկության» գործ էր համարվում երկար տարիների ընթացքում՝ մինիստրների նախասենյակներում նստելը։

Եվ իրավունք ուներ թուրքահայ տաղանդավոր երգիծաբան Երվանդ Օտյանը, երբ հայերին տալիս էր «նախասենյակի ազգ» անունը։

## Գ

Ո՛չ պրոպագանդայի գործը Եվրոպայում, ո՛չ Թուրքահայաստանում ուժեղացող հայդուկային կռիվները դեռ բավական չէին, որ Դաշնակցությունը թևակոխեր վերակենդանության շրջանի մեջ։ Հեղափոխական գործի երկու կողմերն էլ՝ հայդուկայինը և քաղաքագիտականը, վարկաբեկված էին։ Բռնի միջոցներով փող կորզելը նրանից ետ էր շպրտել բուրժուազիային։

Բայց այս ճգնաժամային դրության մեջ մի անակնկալ հանգամանք եկավ լայն ժողովրդականություն ստեղծելու նրա համար։ Այդ հանգամանքը հյուսվեց ցարական բռնակալության ապուշ վայրագություններից։

1896-ին Կովկասի վարչապետ նշանակվեց իշխան Գոլիցինը՝ մի կրքոտ մարդ, կապ-կտրածներից մեկը, բռնի ռուսացնող բյուրոկրատի մի ամենաբնորոշ տիպ։ Եկել էր փութացնելու Կովկասի ռուսացումը. այդ պատճառով նրա համար ատելի էին առհասարակ այն ազգությունները, որոնք իրենց սեփական ազգային բավականաչափ արժեքներն ունեին ռուսացմանը դիմադրելու համար, բայց մասնավորապես հայերը, որոնց վերաբերմամբ գոլիցինյան ատելությունը կատարելապես մի հիվանդագին երևույթ էր կազմում։ Իր առաջին իսկ քայլերից Գոլիցինը հայտարարեց, թե պիտի արմատախիլ անի Հայոց հարցը։ Հետո, հետզհետե, բանը հասավ այն աստիճանին, որ Գոլիցինն անհանդուրժելի էր համարում, որ հայ ժողովուրդ է ապրում աշխարհիս վրա։ Ոչնչացնե՛լ ամենքին և միայն մի հատ թողնել մարդաբանական թանգարանի համար՝ սա՛ էր ցարական կոպիտ ու ինքնահավան սատրապի իդեալը։

Գոլիցինը, ձեռք առնելով այս ուղղությունը, [իր] առաջին գործը դարձրեց Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսում հայահալած մամուլ ստեղծելը։ Մինչ այդ հայերի դեմ հալածանք մղելու պաշտոնը կատարում էր Պետերբուրգի և Մոսկվայի վաճառված հետադիմական մամուլը։ Այժմ նրա վրա ավելացավ և Թիֆլիսի պաշտոնական «Кавказ» լրագիրը, որի խմբագրությունը Գոլիցինը հանձնեց երկրորդական շնորհքի տեր, հետո և բոլորովին մոռացված բանաստեղծ Վելիչկոյին, ով մեծ եռանդով և մի ավելի լավ գործի արժանի համառությամբ սկսեց օրն օրին ծավալել մի անհաշտ, մի անխելք, կատաղի թշնամություն հայերի դեմ և առհասարակ այն ամենի դեմ, ինչ հայկական էր։ Այդ պալատական հրապարակախոսը՝ պալատական ռուբլիներին ծախված ստոր հոգին, բավական լավ պաշտպանված էր հակաճառություններից։ Մինչ նա օր օրի վրա վարժվում էր մեկը մյուսից անպատկառ, փողոցային հայհոյանքներ հերյուրելու և մի ամբողջ ժողովրդի դեմքին խփելու մեջ, մենք՝ հայ հրապարակախոսներս, ստիպված էինք եզոպոսյան դարձվածքների մեջ որոնել գոնե մի բան ասելու հնարավորություն, այն էլ գրեթե միշտ տեսնում էինք մեր այդ գրվածքներն անխնայաբար կարմիր թանաքի կեր դարձած։

Վելիչկոյի հայակերական զառանցանքներին սիրով ձայնակցում էր և վրաց «կնյազական» մամուլը։ Իլյա Ճավճավաձե, Ակակի Ծերեթելի, [Նիկոլայ] Նիկոլաձե և նրանց նման ուրիշ շատեր «Кавказ»-ի բանաստեղծ-խմբագրի համհարզներն էին։ Թուրքերից Ահմեդ-բեկ Աղաևն էր ձայնակցում, իսկ մի անգամ էլ Շուշիում դուրս եկավ Դալի-Աբբաս անունով մեկը, նախկին պոլիցիական պաշտոնյա, թղթամոլ և գինեմոլ մի տիպ, որ նույնպես աքացի տվեց հայերին։

Վելիչկոյի գործունեությունը հող էր պատրաստում։ Երբ Գոլիցինը տեսավ, որ հողը բավականաչափ պատրաստված է, կոպիտ կերպով դուրս շպրտեց «Кавказ»-ի խմբագրությունից իր վարձկան բանաստեղծ լակեյին։ Լռեց թունալից խոսքը։ Բայց դրանից ի՞նչ ուրախություն։ Գոլիցինն սկսեց պաշտոնական ճանապարհով, օրենսդրական կարգով զրկել հայերին բոլոր իրավունքներից։ Փակեց եղած

սակավաթիվ հայ լրագրերից մեկը, փակեց հայոց դպրոցները, փակեց բարեգործական և կրթական հիմնարկությունները, գրադարանները և վերջիվերջո եկավ հասավ այն բանին, որ Նիկոլայ Բ-ից հրաման բերեց Հայոց եկեղեցական կալվածքները և գումարները խլելու մասին։ 1903-ի ամռանն էր հրապարակվում այս օրենքը։

Սա արդեն չափազանցություն էր։ Հայ ժողովուրդը մինչև այդ համբերությամբ տարել էր բոլոր հարվածները։ Որքան սաստկանում էին գոլիցինյան հալածանքները, այնքան ամրանում և տարածվում էր ազգայնական զգացմունքը։ Հայոց լեզուն, գրականությունը դառնում էին ուսումնասիրության առարկա և այնպիսի շրջանակներում, որոնք մինչև այդ չէին հետաքրքրվել դրանցով։ Գաղտնի դասեր, դասախոսություններ, ընթերցանություններ՝ ահա՛ ինչ էր նկատվում ոչ միայն Թիֆլիսում և այլ քաղաքներում, այլև նույնիսկ գավառական խուլ անկյուններում։ Զուր չէր խոսք դարձել, թե «Գոլիցինը հայերին հայ դարձրեց»։

Այս ազգային հողի վրա էր, որ հեղափոխական երկու կազմակերպություններն էլ՝ հնչակյանները և դաշնակցականները, մտնում էին ժողովրդի խորքերը, այնտեղ հաստատուն հող էին նվաճում իրենց համար։ Ես այդ ժամանակներում առիթ եմ ունեցել ծանոթանալու Շիրակի հայ գյուղական կյանքի հետ և նկատել եմ շատ բնորոշ երևույթներ։ Գյուղերը բաժանված էին դաշնակցականների և հնչակյանների միջև։ Կային գյուղեր, որոնց մի մասը դաշնակցական էր, մյուսը՝ հնչակյան։ Երկու կուսակցությունների փոխադարձ ատելությունն ու թշնամությունը ծայրահեղության էր հասել։ Այդպես էին հարաբերությունները և նրանց «ծուխերը» կազմող գյուղերի ու գյուղամասերի միջև։ Կողմերն իրար հետ գնալ-գալ չունեին, իրար աղջիկ չէին տալիս։ Գյուղերում բացված էին գաղտնի դպրոցներ։ Ես իմացա, որ Կարսի շրջանում այդ գաղտնի դպրոցները նույնիսկ թեմական տեսուչ ունեն, և այդ տեսուչն էր Ն. Աղբալյանը։ Հեղափոխական կազմակերպություններն իրենց ձեռքն էին առել և ժողովրդական դատաստանը։ Պետական դատարաններին դիմող համարյա այլևս չէր մնացել։ Ամեն կուսակցություն ուներ իր զինվորությունը։ Անիի շրջակայքում՝ Արազի գյուղի մեջ, գրեթե իշխում էր դաշնակցական զինվոր Ազիզը։ Եվ ես տեսել եմ, թե ինչպես էին գյուղացիները, անգամ քրդերը, հպատակվում նրա հրամաններին։

Ահա՛ ինչ արդյունքներ էր տալիս իշխան Գոլիցինի սանձարձակ, հայահալած քաղաքականությունը։ Ժողովուրդը խորանում էր ինքն իր մեջ և իր ազգային ստացվածքների պաշտպանությունը հանձնում էր այն ուժերին, որոնք մտնում էին նրա մեջ հենց այդ ինքնապաշտպանական տրամադրությունը շահագործելու համար։

Օդն, այսպիսով, էլեկտրականացած էր, երբ հանկարծակի պայթեց ցարական ուկազը՝ եկեղեցական կալվածների մասին։ Ինքը՝ Գոլիցինն էլ զգում էր, որ դա համբերության բաժակը լցնող մի քայլ էր։ Չէ՞ որ նույնիսկ Նիկոլայ Բ-ի բոլոր մինիստրները չէին իրենց համաձայնությունը տվել, այլ միայն Պլևեն և

Պոբեդոնոսցևը։ Որ այնուամենայնիվ այդ չնչին փոքրամասնության կամքն էր օրենք դարձել, պատճառն այն էր, որ նրան միացել էր և ինքնակալ Ռոմանովը։

Առաջին իսկ տպավորության տակ ծնվում էր դիմադրելու միտքը։ Ամառվա վերջին ես գնացի Պյատիգորսկ՝ հանքային ջրերը, բայց ստիպված եղա կիսատ թողնել բուժումս և վերադառնալ Թիֆլիս, ուր ինձ ստիպողաբար կանչեցին երկու հեռագրով։ Կանչողը նոր միայն կյանքի կոչված գաղտնի կազմակերպությունն էր, որ իրեն տվել էր Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե անունը։ Այնտեղ չկար և ոչ մի դաշնակցական կամ հնչակյան։ Կազմված էր բուրժուական տարրերից, ուներ իր մեջ և մեկ հոգևորական՝ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյան։ Իր գործունեությունը նա սկսել էր մի հեղափոխական կոչով, որի ճակատին էր դրել. «Բոլոր ճնշվածներ, միացե՛ք»։ Հայ ժողովրդին հրավեր կարդալով համառ և աննկուն դիմադրություն ցույց տալ ցարական բռնակալությանը՝ կոչը վերջանում էր այսպիսի բացականչություններով՝ «Կորչի միապետությունը։ Կեցցե՛ Ռուսաստանի ազատ ազգությունների դաշնային ժողովրդային հանրապետությունը»։

Գոլիցինն էր դարբնել այս նշանաբանները։ Բյուրոկրատական ապուշությունն այսպես էր փորփրում ցարիզմի հիմքերը։

Բայց կոմիտեն մյուս կողմից էլ աշխատում էր բան հասկացնել ռուսաց կառավարությանը։ Այս նպատակով էլ նա ինձ կանչել էր Պյատիգորսկից։ Էջմիածնից բերված էր պաշտոնական գրագրություններ պարունակող գործերի մի մեծ կույտ։ Ինձ հանձնեցին կարդալ ու կազմել մի պատմական տեղեկագիր եկեղեցական կալվածների մասին, որը կաթողիկոսն իր կողմից պիտի ուղարկեր Նիկոլային՝ ցույց տալով, թե կալվածները ժողովրդական սեփականություն են՝ հաստատված մահմեդական տիրողների, շահերի և խաների հրովարտակներով։ Կարծում էին, թե դրանով կամաչեցնեին և կարգի կբերեին քրիստոնյա բռնակալին։

Զբաղված էի ինձ հանձնած արխիվի ուսումնասիրությամբ և միաժամանակ հետևում էի Ինքնապաշտպանության կոմիտեի գաղտնի, այսպես ասած, ռազմական հեղափոխական գործունեությանը։ Միջոցներ չուներ նա՝ ո՛չ ռազմական, ո՛չ դրամական։ Եվ եթե, այնուամենայնիվ, իրեն ուժեղ էր զգում, այդ էլ շնորհիվ այն ըմբոստ տրամադրության, որ բռնել էր ամբողջ հայ ժողովրդին։ Արդեն մի քանի տեղերում ցույցեր էին եղել, ընդհարումներ ժողովրդի և կառավարական զորքերի միջև։ Եվ տրամադրությունը գնալով աճում էր, բարձրանում։

Գավառներից պատվիրակներ էին գալիս Թիֆլիս՝ պահանջելու, որ զիջումներ չլինեն, որ դիմադրություն ցույց տրվի։ Իսկ մի օր «Մշակի» խմբագրատուն մտավ Ալեքսանդրապոլի կողմերից եկած մի գյուղական երիտասարդ քահանա, որ Գոլիցինին սպանելու պատրաստակամություն էր հայտնում։ Չգիտեմ ինչն էր, որ նրան արգելեց այդ բանն անելու, կարծեմ, գաղտնի կոմիտեն չէր վստահել անփորձ գեղջուկին այդպիսի մի լուրջ ձեռնարկությունը։ Հիշատակում եմ այս բանը, լոկ այն

պատճառով, որ ցույց տամ, թե որ աստիճանին էր հասել ժողովրդական ցասումը։ Սակայն շատ խիստ աչքի էր ընկնում այն հանգամանքը, որ ժողովրդական տարրերն անկազմակերպ էին՝ կանոնավոր և սիստեմատիկ կերպով դիմադրություն գործադրելու համար։

Ահա այդ ժամանակ էր, որ Դաշնակցությունը հայտարարեց, թե իր վրա է վերցնում ինքնապաշտպանության և դիմադրության գործը։ Ժամանակին արված մի քայլ էր այդ, որ միաժամանակ լուծում էր Դաշնակցության լինել-չլինելու հարցը։ Ցարական զորքերը քաղաքից քաղաք, ավանից ավան էին գնում, կոտրում էին ժողովրդական կարողությունն իրենց մեջ պահող սնդուկները, տանում նրանց մեջ եղած գումարները, իսկ ժողովուրդն իր զայրույթն ու վիշտը մոռացնել էր տալիս նրանով, որ փարում էր Դաշնակցությանը, որի ռազմական ուժերը մտնում էին գործի մեջ՝ տեռորի ենթարկելով կառավարական պաշտոնյաներին՝ սկսելով Գանձակի փոխնահանգապետից։

Ցարական ոճիրի մի երեսն էր սա՝ Հայոց հարց նաև Ռուսաստանում, [ինչպես նաև՝] ժողովրդական համակրանքով վերակենդանացած, ուժեղացած, հայ հեղափոխական իրականության տեր ու հրամայող դարձած Դաշնակցություն...

Թեև այսպիսին էր ստեղծվող նոր դրությունը, բայց հնչակյանները մի անգամ էլ էին երևան գալիս հանդուգն ձեռնարկություններով. նրանք էին, որ 1903-ի աշնանը սպանության փորձ կատարեցին կառավարչապետ Գոլիցինի վրա։ Փորձն անհաջող էր։ Ցարական սատրապը չսպանվեց, այլ վիրավորվեց գլխից։ Այնուհետև այլևս բացարձակ պատերազմական դրություն ստեղծվեց միապետական բյուրոկրատիայի և հայ ժողովրդի միջև։ Հալածանքներն ընդունեցին համածավալ կատաղի կերպարանք։ Թիֆլիսում ամբողջ թաղեր ենթարկվեցին գիշերային խուզարկությունների, հարյուրավոր մարդիկ, սոսկ կասկածով միայն, աքսոր քշվեցին Ռուսաստան։

Այդ ժամանակ ես ծանր հիվանդ էի։ Հասկանալի է, թե ինչ վախերով էր բռնված ընտանիքս իմ վիճակի վերաբերմամբ։ Այսօր էլ աչքիս առաջ է իմ խեղճ, պառավ մայրը, որ գիշերները, ստուգելով սենյակիս դռները, հանում էր պահարանից իմ գրությունները՝ վնասակարներն անվնասներից ջոկելու համար։ Ինքն անգրագետ էր, իսկ ինձ բժիշկները հրամայել էին մեջքիս վրա պառկած մնալ։ Դողդողուն ձեռքերով մայրս աչքերիս էր մոտեցնում ամեն մի կտոր թուղթ, որ որոշեմ նրա վտանգավորության չափը։ Ես ձանձրանում էի, դժգոհություն հայտնում, ասում՝ թող ինչ լինելու է լինի, իսկ նա անսպառ մայրական համբերատարությամբ խնդրում, համոզում, աղաչում էր։ Ավելի նրան հանգստացնելու համար ես մի քանի թղթեր որոշեցի հայտարարել վտանգավոր։ Մայրս տարավ դրանք, իր ձեռքերով այրեց խոհանոցում և միայն այդ ժամանակ հանգստացավ՝ ազատած համարելով իր որդուն ցարական բանտից ու աքսորից։ Խե՜ղճ իմ թղթեր, հայ գրողի կիսատ մնացած

աշխատություններ, ծրագրեր, նկատողություններ։ Ո՞ւմ կարող էին նրանք վնասել։ Բայց քանի-քանի անգամ են նրանք իմ ձեռքերով ենթարկվել անխնա ոչնչացման՝ ռուսական ժանդարմներին նյութ չտալու համար։

Հիմա, երևակայեցեք՝ քանիսները կային ինձ պես, քանի մայրեր էին անընդհատ խեղդող տագնապներ ապրում գոլիցինյան տեռորի այդ խավար գիշերներին։ Դա մի մղձավանջ էր, որ չոքել էր ամեն մի հայի կոկորդի։ Հայն այստեղ՝ քրիստոնյա Ռուսաստանում էլ օրենքից դուրս էր դրված։ Եվ այստեղ էլ, ինչպես և այնտեղ [Թուրքիայում], հայդուկային մտայնություն էր տիրում կյանքի բոլոր ներքին դիրքերին։ Հրամայողը, օրենսդրողը հայ հեղափոխականն էր, գլխավորապես, իհարկե, դաշնակցականը։ Կարո՞ղ էր ուրիշ կերպ լինել մի դրության մեջ, որ թշնամի բանակի դրությունն էր հիշեցնում։ Ռուսական չինովնիկը հալածում էր հային, և հայ ֆիդային սպանում էր նրան, ազգային վրեժ հանում։ Ֆիդայական ռումբից ու դաշույնից ազատ չէր մնում և հայ չինովնիկը, եթե նա կասկածվում էր իբրև մատնիչ։ Կյանքը դարձել էր անեծք։ Թե որքան ուժեղ էր դիկտատուրան, ցույց է տալիս հետևյալ փաստը։

Գոլիցինի վերքը մի ժամանակ վտանգավոր բարդություն առաջացրեց։ Խելառ բռնավորը տապակվում էր 40 աստիճանի հասնող տաքության մեջ։ Սպասում էին, թե նա կմեռնի… Եվ սկսեցին ստրկական ցույցեր։ Ռուսները, վրացիները, հույները, հրեաները, թուրքերը, մինչև իսկ հայ կաթոլիկները մաղթանքներ էին կատարում, ասել է՝ աղաչում էին իրենց «բարերար» աստծուն, որ նա բարիք անի աշխարհին՝ առողջություն պարգևի Գոլիցինին։ Ամեն օր զանգահարություն, աղոթք և երգ։ Եվ միայն հայ լուսավորչական բազմաթիվ զանգակատներն էին, որ պահպանում էին խորին, գերեզմանային լռություն։ Ոչ ոք չհամարձակվեց ծպուտ անգամ հանել՝ ստրուկի պարտքը կատարելու համար։ Արգելված էր։ Արգելողները հեղափոխականներն էին։ Մի շատ ազդու, շատ հանդուգն ցույց էր այդ զանգային ցուրտ լռությունը։ Այն ռուս բյուրոկրատներին բացատրում էր, թե հայերը կատարյալ պատերազմի մեջ են իրենց դեմ։

Սա իմացավ և հիվանդ պառկած Գոլիցինը։ Կատաղություն, տագնապ, միաժամանակ և անարգ վախ. ահա՛ ինչերով էր փոթորկվում նրա սատրապական մահիճը։ Եվ մի օր ամբողջ Թիֆլիսն ականատես եղավ այսպիսի մի տեսարանի. կառավարչապետի պալատը, Գոլովինսկի պրոսպեկտի կողմից, շրջապատվեց սակրավոր զորքերով, որոնք մի խոր խրամատ էին փորում։ Փորող զինվորներն այլևս չէին երևում, գետնի տակ էին մտել, այնտեղ էին զանազան անցքեր փորում։ Բանից դուրս եկավ, որ վախկոտ Գոլիցինը գիշերներն ինչ-որ ստորերկրյա ձայներ է լսելիս եղել և կարծել է, թե այդ հայ հեղափոխականներն են փոս փորում իր պալատն ականով պայթեցնելու համար, և աճապարել էր խոր խրամատներով ու ստորերկրյա անցքերով ուժեղացնել իր անձի պաշտպանությունը։ Մինչդեռ «հեղափոխականների ստորերկրյա աշխատանքը» լոկ խանգարված երևակայության հերյուրանքն էր, և այն

ձայնը, որ լսելիս է եղել գիշերները, կառավարչապետի դիվանատանը պատկանող տպարանի մեքենայի ձայնն է եղել։

Թե ինչ պետք էր սպասել այսքան բացարձակ թշնամական կերպարանք ստացած հարաբերություններից՝ դժվար չէ գուշակել։ Գնալով պիտի սաստկանար ցարական կառավարության կռիվը հայության դեմ։ Բայց այս ընթացքին խանգարեց 1904թ. սկզբին հանկարծակի պայթած ռուս-ճապոնական պատերազմը։ Գոլիցինը զբաղվեց հայրենասիրական ցույցեր կազմակերպելով։ Ոստիկանության ձեռքով կազմակերպվեցին թափորներ, երթեր. ցուցարարները՝ մեծագույն մասամբ փողոցային երեխաները, տիրացել էին տրամվային և դես ու դեն էին թռչում՝ «ուռա» կանչելով և «Боже, царя храни» երգելով։ Բայց, թե որքան անկեղծ էին այդ երգերը, երևում է նրանից, որ մանավանդ ուշ երեկոները, կենտրոններից հեռու փողոցներում «Боже, царя храни»-ն ընդհատվում էր, և նրա փոխարեն բարձրանում էր «Մեր հայրենիք» հայերեն երգը։

Շփոթված լինելով Մանջուրիայի դաշտերում մղվող դժբախտ պատերազմով, Գոլիցինը մի քիչ, այսպես ասած, կարգի եկավ, մի քիչ ինքն իրեն զսպեց, և հայության դեմ կառավարության կռիվն առժամանակ կանգ առավ։ 1904թ. ամռանը Նիկոլայ Բ-ն իր սիրած սատրապին կանչեց Պետերբուրգ՝ մշտապես իր տեսադաշտում պահելու համար։ Հայությունը, վերջապես, մի քիչ ազատ շունչ քաշեց։

Եվ այսպես ուրեմն, ռուսական արատավոր կառավարությունն իր ոճրագործ քաղաքականությամբ այն էր միայն առաջացնում, որ կովկասյան հայությանն էլ գցում էր Դաշնակցության գիրկը, համակում էր նրան ֆիդայական-հեղափոխական տրամադրությամբ և ամենասուր ազգայնական հակառակությունների որոմներն էր տնկում իրար հարևան ազգերի սրտերում։ Դաշնակցության ծրագիրը լայնանում էր. մինչ այդ նա կռվի մի ճակատ ուներ իր առջև, իսկ այժմ Ռուսաստանը դառնում էր երկրորդ ճակատ։

1903թ. վերջերից առանձին կենդանություն սկսվեց թուրքական ճակատի վրա։ Այս անգամ էլ Դաշնակցությունը (միշտ կրկնող հնչակյան ձեռնարկությունների) ապստամբեցրեց Սասունը։ Նրա խմբապետ Անդրանիկը բավական ժամանակ հաջողությամբ դիմադրեց թուրքական զորքերին։ Այդ ֆիդայական պատերազմի հետ միաժամանակ Դաշնակցությունը կազմեց մի ազգային պատվիրակություն, որ, Խրիմյան կաթողիկոսի ներկայացուցիչ հանդիսանալով, գնաց շրջելու Եվրոպայի մայրաքաղաքները և դիվանագիտության գթությունը խնդրելու։ Պատվիրակությունն Ամերիկա էլ անցավ, ամեն տեղ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի խոսքն արավ։ Գործադրված էր ամեն ինչ, որ իբրև միջոց կար հայ հեղափոխականի ձեռքին։ Բայց ոչինչ չօգնեց։ Անդրանիկը վերջիվերջո ստիպված թողեց Սասունը և հեռացավ։ Հետևանքն այն եղավ, որ դարձյալ մի 5-6 հազար հայ կոտորվեց Սասունի լեռներում և Մուշի դաշտում։ Իսկ աղերսարկու պատվիրակությունը քաղաքավարությամբ

ճամփվեց բոլոր մայրաքաղաքներից, չնայած որ «Pro Armenia»-ի և ուրիշ հայասիրական շրջանակների պրոպագանդան այդ ժամանակ ավելի ևս գործուն ու եռանդուն էր դարձել։

Քրիստափոր Միքայելյանի ամբողջ ծրագրերը, երեք-չորս տարվա անխոնջ գործունեությունը ջուրն ընկան։ Իր աչքով նա մի անգամ էլ տեսավ, թե ինչպես Եվրոպան դարձյալ դավաճանեց Հայոց հարցին, բայց, իհարկե, էլի շարունակեց հավատալ այդ իսկ Եվրոպային։ Իր աչքով նա տեսավ իր մի ուրիշ շատ խոշոր ձեռնարկման վիժումը ևս։ Ահագին գումարներ ծախսելով, մեծամեծ պատրաստություններով նա մի շատ նուրբ և վարպետ դավադրություն սարքեց, որի զոհը պիտի դառնար սուլթան Համիդը։ Այս մահափորձը տեղի ունեցավ 1904-ի գարնան սկզբին, այն ժամանակ, երբ Անդրանիկը դեռ հաղթական էր Սասունում։ Սելամլըքի արարողությանը ներկա լինելու համար Ելդզի պալատ մտավ մի եվրոպացի՝ շքեղ կառքով, որի մեջ դրված էր դժոխային մեքենա։ Մեքենան վաղաժամ պայթեց, սպանեց մի քանի զինվորի, իսկ Համիդն անվնաս մնաց։ Միքայելյանը, սակայն, չհուսահատվեց, սկսեց պատրաստել մի նոր դավադրություն, որի մեջ ինքն էլ պիտի մասնակցեր իբրև գործող տեռորիստ։ Բայց զոհ գնաց Բուլղարիայում փորձեր անելիս պայթած ռումբին։

Դաշնակցությունն իսկը որ որբանում էր՝ զրկվելով այդպիսի ուժեղ կազմակերպողից և հեղափոխական խառնվածքից։ Այնուհետև ֆիդայական պատերազմը վերածվեց նախկին մանր խմբային ընդհարումների։ Մի անգամ էլ աղերսարկու պատվիրակություն ուղարկվեց Լա Հեյ քաղաքը՝ եվրոպական դիվանագիտության դռները ծեծելու, բայց այս անգամ էլ, ինչպես միշտ, առանց որևէ հաջողության։

Հիմա ի՞նչ անել։ Թուրքահայոց հարցը մի կախարդական շրջանակի մեջ էր ընկել և պտտվում էր անվերջ ու անհույս։

Դ

Ռուս-ճապոնական պատերազմը 1904թ. ամռանը մի շարք խայտառակ պարտություններ բերեց Նիկոլայ ցարի զենքին։ Ինքնակալական Ռուսաստանը թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում անպարտելի և անհեթեթ հսկայի համբավ ուներ։ Այժմ ստացվեց, որ դա մի դատարկ հեքիաթ է եղել։ Իր ամբարտավանության մեջ ցարիզմը ծաղր ու ծանակի առարկա դարձավ ոչ միայն մեծերի և ուժեղների, այլև մանավանդ փոքրերի ու տկարների համար։

Հայ ժողովուրդը, պետք է ասել առանց վերապահումների, հրճվում էր ռուսական պարտություններից։ Սա նկատելի էր ամեն տեղ և մանավանդ Կովկասյան հանքային ջրերում, ուր ես էլ բժշկվում էի 1904 թվին։ Այս հրճվանքը նկատում էին ռուս բյուրոկրատները և հաշվի էին առնում։ Պետք էր տեսնել, թե ինչեր էին

կատարվում Պյատիգորսկի և Էսենտուկիի բուլվարներում օրը երկու անգամ, երբ դուրս էին գալիս առավոտյան և երեկոյան հեռագրերը։ Դրանք ծախող երեխաները վազում էին և բարձր բղավում նոր ստացած տեղեկությունների բովանդակությունը, որ պատմում էր ռուս զորքի պարտությունների մասին։ Վրդովված գեներալները, սպաները և չինովնիկները բարկանում էին հեռագրավաճառների վրա, երբեմն նույնիսկ խփում էին և հրամայում լռել. բայց մի քիչ հեռու լրագրավաճառների վրա թափվում էր հետաքրքրվողների մի ամբողջ բազմություն, և լրագրերի կույտերը մի ակնթարթում անցնում էին գնողներին, որոնք երկար շարքերով նստոտում էին նստարանների վրա և խորասուզվում ընթերցանության մեջ։ Բավականություն, նույնիսկ ուրախություն, ահա՛ ինչ կարելի էր կարդալ այդ ընթերցող հասարակության դեմքերին։ Օտարացի հանգամանք։ Կարծեք թե մի թշնամի երկրում էինք։

Բայց մի՞թե կարելի է ասել, թե միմիայն հայերն էին հրճվողները։ Ո՛չ, այսպիսի բան երբեք չի կարելի ասել։ Հայերը հրճվողներից մեկն էին, ուրիշ ոչինչ։ Իսկ հրճվողները բոլոր այն տարրերն էին՝ առանց լեզվի, սեռի, հասարակական դիրքի և քաղաքական դավանության խտրության, որոնք դժգոհ էին ցարիզմից, համարում էին նրան չարիք և դժբախտություն ժողովրդի բարօրության տեսակետից։

Եվ ուրախացնողը միայն ճապոնական զենքը չէր։ Ես շատ լավ եմ հիշում, թե կուրորտային հասարակությունն ինչպիսի պայծառ և զվարթ ժպիտներով ընդունեց մի ամառային սիրուն առավոտ Պլևեի սպանության լուրը։ Մի կատարյալ տոնական տրամադրության մեջ էին ինտելիգենտ շրջանները, բայց այդ տրամադրությունը տխուր արտահայտություն զգեցավ, երբ միևնույն օրը հեռագիրը գուժեց, թե վախճանվել է Անտոն Չեխովը՝ ռուսական մթնշաղի այդ մեծաքանքար երգիչը։

Պլևեն իր հետ տանում էր ռուսական միապետության վերջին հենարանը։ Ցարիզմը ջախջախվում էր։ Աշնանը եկավ Սվյատոպոլկ-Միրսկին, որ թեև ժանդարմների շեֆ էր, բայց ռեժիմի մեջ բերեց մի բարեփոխություն, որ պաշտոնականի շողոքորթներն անվանեցին «գարուն»։ Մամուլն ուրանում էր, համեմատական հովեր էին փչում, բանվորական զանգվածները սկսեցին հզոր շարժումներ։ Այդ շարժումները ծայր առան նաև կովկասյան իրականության մեջ՝ Բաքվում։ 1905-ի հունվարի 9-ի արյունոտ օրը Պետերբուրգում՝ զայրույթի և վրեժի հրային ալիքներ տարածեցին ամեն տեղ, և Կովկասի ժողովուրդներն աշխատանքի, պրոլետարական համերաշխության զգացմունքներով միացած՝ պատրաստվեցին դուրս գալ տիրողների և կեղեքիչների դեմ։ Մինչ այդ հալածական միացման նոր սկզբունքներն արդեն բացորոշ արտահայտվում էին բանվորական գործադուլների և ցույցերի մեջ։

Տեսնում էր այդ բանը ռուսական բյուրոկրատիան և շտապում բաժանումներով ջլատել, իր համար անվնաս դարձնել ուռճացող շարժումը։ Դրա համար նա վերանորոգեց իր պատերազմը հայերի դեմ, որ առժամանակ կանգնեցրել էր

ճապոնական պատերազմը։ Գոլիցինը գործի մեջ չէր, բայց ինքը՝ գործը, լավ սարքված էր։ Ցարիզմն իր զորքերը չէր ուղարկում հայերի դեմ, այլ բարձրացնում էր թուրք անգիտակից ժողովրդին, դրդում էր հարձակվել հայերի վրա, կոտորել նրանց, թալանել նրանց գույքը։ Այս դրդումը միանգամայն վկայված է շատ թուրքերի բերանով։ Հաստատված է նույնպես, որ ինքը՝ կառավարությունն էր զենք բաժանում թուրքերին։ 1905-ի փետրվարին սկսվեցին, այսպես անվանված, հայ-թուրքական ընդհարումները։ Բայց ավելի ճիշտ կլիներ անվանել հայ-թուրքական պատերազմը. մի պատերազմ, որ տարի ու կեսից ավելի տևեց և արյունով ու ավերակներով լցրեց Արևելյան Անդրկովկասի այն բոլոր տեղերը, ուր հայ ու թուրք միասին էին ապրում։ Հանկարծ, միանգամայն անսպասելիորեն առաջ եկավ ու անշարժորեն հաստատվեց այդ դրությունը։

Թուրքերը հարձակվում էին, սպանում, իսկ հայերը կա՛մ պաշտպանվում էին, կա՛մ՝ իրենք էլ հարձակվում, սպանում ու կրակում. իսկ «խեղճ» ցարական կառավարությունը հայտարարում էր իրեն միանգամայն թույլ, միանգամայն անկարող այդ անկարգությունները զսպելու, այդ փոխադարձ կատաղի թշնամությունը կանգնեցնելու համար։ Առաջին իսկ օրերից Բաքվի նահանգապետ [Միխայիլ] Նակաշիձեն այս շատ զարմանալի «ճշմարտության» մունետիկը դարձավ։ Շրջելով Բաքվի՝ պատերազմական դաշտ դարձած փողոցներում՝ նա տեսնում էր դիակներ, այրվող տներ, թալանված գույքերի կույտեր և բարեհոգ ժպիտով հայտարարում էր, թե զորք չունի, զորություն չունի, թող կռվողներն իրենք իրար հետ հաշտվեն։

Բայց մարդիկ տեսնում էին, որ ցարական կառավարությունը զորքեր ունի, այն էլ՝ բավականաչափ, միայն թե այդ զորքերին հրամայված էր անտարբեր հանդիսատեսի դիրք բռնել, ոչ մի միջամտություն չանել։ Իզուր էին դիմում, խնդրում, որ զենք գործադրվի, որ երկու կողմերից էլ հանցավորներ բռնվեն և կախաղան հանվեն։ Միշտ միևնույն պատասխանը Նակաշիձեի կողմից՝ կառավարությունը թույլ է, ոչինչ չի կարող անել։ Եվ հրացանով զինված ռուս զինվորների առջև մորթվում էին խաղաղ ու անզեն քաղաքացիները, իսկ նա միայն նայում էր։

Ռուս բյուրոկրատիայի պաշտոնական հայտարարությունների երկու մասն էլ բացարձակ սուտ էր։ Այստեղ երևում էր, որ ռուսական չինովնիկությունը սաստիկ գրգռված էր այն տեռորիստական գործողությունների դեմ, որոնք կատարվում էին հայ հեղափոխականների ձեռքով, և նրանց զոհն էին դառնում պետական պաշտոնյաները։ Սա միանգամայն հասկանալի բացատրություն էր և պարզապես նշանակում էր, թե թուրքերի միջոցով ցարական կառավարությունը պատերազմում էր հայ հեղափոխականների, ասել է՝ գլխավորապես դաշնակցականների դեմ։ Արդեն տեսանք, որ հենց ինքը՝ այդ կառավարող բյուրոկրատիան էր, որ իր ապուշ հայահալած քաղաքականությամբ բարձրացրեց Դաշնակցությանն իր անկումից, ժողովրդականություն տվեց, հետևաբար՝ ուժեղացրեց նրան։ Դաշնակցականներն

օգուտ քաղելով այդ հանգամանքից՝ սկսեցին բռնանալ ռուսահայ իրականության վրա, քանի որ այստեղ էլ, ինչպես և Թուրքիայում, սկսել էին կատարել «փրկիչների» դեր։ Ֆիդայականությունն իր շտաբներն էր հիմնել Կովկասի այլևայլ կողմերում, զինվորություն էր կազմել, զինական պահեստներ ուներ։ Լինելով մեծ մասամբ չաշխատող, բայց վայելող մի տարր՝ ֆիդայիները մեր կովկասյան խաղաղ կյանքի մեջ էլ գոռոզ տերեր դարձան, պահանջկոտ, կռվարար։ Այս փաստը շատ գրգռիչ նշանակություն ունեցավ հարևան ժողովուրդների և առավելապես թուրքերի համար։ Բաքվի փետրվարյան ջարդին նախորդեցին մի քանի այդպիսի գրգռիչ միջադեպեր, որոնց մեջ գլխավոր գործիչները դաշնակցականներն էին։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում և այն հարցը, թե ինչպես էին թուրք ղեկավարող տարրերը պատճառաբանում իրենց հանկարծակի բռնկված թշնամությունը հայերի դեմ։ Այս մասին եղան մի շարք հայտարարություններ, և հայտարարություններ այնպիսի իմաստով, որից ցարիզմը կարող էր ամենայն հաճությամբ ուռչել։ Եթե ուշադրություն դարձնեք 1903-1904թթ. դեպքերի վրա, ձեզ չի կարող չզարմացնել այն հանգամանքը, որ թուրք կալվածատիրությունը, միացած թուրք բուրժուազիայի հետ, հեռագրերով շարունակ հավատարիմ հպատակության ցույցեր էր անում Նիկոլային։ Այդ հեռագրերը հաճախանում էին մանավանդ այն ժամանակ, երբ հայերի ըմբոստացումը սաստկանում էր եկեղեցական կալվածքների գրավման առիթով։

Սա մի ամբողջ քաղաքականություն էր՝ նրբահյուս, արևելյան։ Թուրք հրամայող տարրերը շատ լավ գիտեին, որ հայերը շատ հեշտ կհասկանան այդ հպատակական ցույցերի միտքը։ Ուստի նրանց էլ քնեցնում էին ուրիշ կերպով։ Էջմիածնից խլած կալվածները Երևանում տրվում էին աճուրդով։ Հայերն, իհարկե, չգնացին աճուրդին։ Թուրքերն էլ չգնացին՝ հայտարարելով, թե չեն ուզում օգտվել հափշտակված կալվածներից։ Սա արդեն դառնում էր համերաշխության և եղբայրության մի հոյակապ ցույց։ Ռուս չինովնիկները շտապեցին առնել այդ վտանգավոր հնարավորության առաջը։ Եվ ահա, հետևյալ տարին նույն թուրքերը հարձակվեցին հայերի վրա, կոտորեցին։ Եվ երբ նրանց հարցնում էին, թե ի՞նչն է պատճառը, նրանք տալիս էին այսպիսի պատասխան. «Մենք նահապետական ժողովուրդ ենք, պահպանում ենք մեր հին ավանդույթը։ Մենք չենք կարող ապրել առանց կայսրության, իսկ մեր հարևան հայերը հեղափոխականներ են՝ նոր գաղափարներով տարված, և ուզում են ոչնչացնել կայսրությունը։ Մենք հենց այդ պատճառով ենք ոտքի ելել մեր ամենառողորմած կայսրին պաշտպանելու համար»։

Ռուսական բյուրոկրատիան ոչ միայն հավատում էր այս բանին, այլև ինքն էր արծարծում նման հասկացողություններ թե՛ թուրք և թե՛ ռուս զանգվածների մեջ։ Չէ՞ որ հենց այս տեսակ վերաբերմունքի վրա էր խարսխված ռուսական քաղաքականությունը՝ հենվել թուրք ավանդապահ և հետամնաց տարրերի վրա։ Սակայն սա մի թշվառ կարճատեսություն էր, մի կույր հավատ, մի

ինքնախաբեություն։ Ընդամենը մի 10-15 տարուց հետո, համաշխարհային պատերազմի և նրանից ծնված մեծ հեղափոխության ժամանակ էր, որ ապացուցվեց, թե հավատարիմ հպատակության ցույցերը կատակերգություններ էին եղել ցարականներին խաբելու համար։ Եվ եթե այնքան հեշտությամբ կալվածատիրական դասակարգը գործիք դարձավ ռուս բյուրոկրատիայի ձեռքին և գնաց հայերի դեմ, դա արդյունք էր այն նոր նացիոնալիստական շարժման, որ ծավալվում էր թուրք և առհասարակ մահմեդական ազգաբնակչության մեջ՝ օսմանյան գործակալների ձեռքով։ Աբդուլ-Համիդի ձեռնարկած համաիսլամական պրոպագանդան մի գործ էր, որ հաջողվում էր լավագույն կերպով և որի հուշարձանն էր Հիջազի երկաթուղին՝ կառուցված բացառապես մահմեդականների փողերով։

Այսօր այլևս գաղտնիք չէ, որ մի ամբողջ մեծ ու եռանդուն շարժում էր այդ գործը։ Պրոպագանդան մտավ ամեն երկիր, ուր մահմեդական ժողովուրդ էր ապրում։ Բոլոր այդ ժողովուրդները՝ Անդրկովկասի թուրքերը, Դաղստանի լեռնցիները, Ղրիմի և Կազանի թաթարները, Թուրքեստանի սարթերը և այլն, և այլն, դաստիարակվում էին օսմանյան գրականության վրա, որ միության ընդհանուր կապն ու շաղախն էր հանդիսանում և որ սովորեցնում էր ամենքին միանալ Թուրքիայի կանաչ դրոշի տակ։ Այս շարժման տեսակետից հայերը հանդիսանում էին ընդհանուր թշնամիներ, քանի որ հայերի ջանքն էր՝ թուլացնել, ջլատել Թուրքիան։

Եվ չի կարելի ասել, թե հայերը միանգամայն անգիտակ էին այսօրինակ վերաբերմունքին։ Դեռ 1894 թվականից, այն է՝ Սասունի ջարդից ի վեր, Բաքվում ապրող հայերը շատ լավ նկատում էին, որ թուրքերը ուշադրությամբ հետևում էին եվրոպական քաղաքականությանը Թուրքիայի վերաբերմամբ և շատ գրգռվում էին այն հայասիրական ցույցերից, որոնք տեղի էին ունենում Անգլիայում։ Թուրք հայրենասիրության աչքի ընկնող և հռչակված ներկայացուցիչ էր դառնում Բաքվի միլիոնատեր Հաջի-Զեյնալ-Աբդին Թաղիևը, որ չէր քաշվում հայերին հայտնելու թուրք շրջանների դժգոհությունը Օսմանյան կայսրության մեջ նրանց ձեռնարկած շարժումների առիթով։ Ամեն մարդ, որ դիտելու և հասկանալու ընդունակություն ուներ, կարող էր շատ հեշտությամբ ու բազմաթիվ իրական փաստերով համոզվել, որ Անդրկովկասի ադրբեջանական թուրքերի մեջ ահագին բեկումներ էին առաջ եկել։

Մի ժամանակ կար, երբ շիա և սունի թուրքերի մեջ տիրում էր փոխադարձ ֆանատիկ, արյունալի թշնամություն, որ պատճառ էր դարձել դարավոր պատերազմների Պարսկաստանի և Թուրքիայի միջև։ Այժմ այս անհաշտությունը վերացվում էր, կրոնը տեղի էր տալիս ցեղային-քաղաքական շահերին։ Թուրքական կալվածատեր և բուրժուա դասակարգերն իրենց զավակներին կրթություն էին տալիս ռուսական բարձր դպրոցներում. այսպիսով կազմակերպվում էր մի ինտելիգենցիա, որ ավելի ևս զարգացնում էր ազգայնական գաղափարախոսությունը։ Միլիոնատեր Թաղիևը բացահայտ խոստովանում էր իր հայ ծանոթների առջև, որ մահմեդական աշխարհում, մասնավորապես շիաների մեջ, ոչ մի արժեք չունի թույլ և քնած Իրանը։

Իրենց ամբողջ ապագան, իրենց բոլոր հույսերը շիաներն էլ՝ սունիների նման կապել են Թուրքիայի սուլթանական գահի հետ։ Հայոց հարցի համար աշխատողներից մեկն էր Բաքվի հարուստ նավթարդյունաբերող Առաքել Ծատուրյանը, որ Թաղիևի հին բարեկամն էր և ընկերը մի խոշոր կալվածատիրական ձեռնարկության մեջ։ Մի երկու անգամ Ծատուրյանը գնաց Լոնդոն, ճաշկերույթներ տվեց հայասեր անգլիացիներին, տպագրեց անգլերենից ռուսերենի թարգմանած մի գիրք, որ պաշտպանում էր հայերին և վարկաբեկում էր սուլթանին։ Թաղիևը շարունակ գանգատվում էր, ծաղրում էր ընկերոջը՝ ասելով, թե նա կորցրել է իր խելքը, և վերջն էլ, երբ Ծատուրյանի գործերը վատացան, Թաղիևը շատ նպաստեց նրա անկմանը, որ և տարավ նրան մինչև ինքնասպանություն։

Սրանք երևույթներ էին։ Իմ նկարագրած ժամանակներից մի քիչ առաջ էր, որ Ֆերգանայի շրջանում (Միջին Ասիա) տեղացիները ապստամբեցին և հանկարծակի հարձակվելով մի ռուսական զորաբաժնի վրա՝ ոչնչացրին այն։ Ապստամբությունն իհարկե ճնշվեց։ Ռուս կառավարությունը, ըստ իր սովորության, եկեղեցի շինեց կոտորված զորքի գերեզմանի վրա՝ դրա համար նվիրատվություններ հավաքելով, որոնց բավականին աչքի ընկնող գումարներով մասնակցել էին տեղում վաճառականություն անող հայերը։ Թաղիևը, դա համարելով մի ցույց մահմեդականության դեմ, ինքն էլ մի հակահայկական ցույց արավ՝ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Յանովսկուն նվիրելով մի խոշոր գումար՝ ի պահպանություն այն դպրոցների, որոնք խլված էին հայերից։

Հայերն արհամարհում էին թուրքական աշխարհում տեղի ունեցող շարժումները, ավելորդ էին համարում խորասուզվել երևույթների մեջ, դուրս հանել դրանց միջից պարտ ու պատշաճ եզրակացություններ և խրատներ։ Ինչպես և այն դեպքերում, երբ հարցը վերաբերվում էր թուրքահայերի օրեցօր վտանգվող կացությանը, հայերն օրորվում էին այն հանգամանքով, թե Եվրոպա կա, ոչինչ չի լինի, և շարունակում էին իրենց թեթևամիտ և ոճրագործ անտարբերությունը։ Մոտիկ ապագան պիտի ցույց տար հայերին, թե որքան թանկ նստեց նրանց այս հանցավոր անտարբերությունը։ Պատասխանատուն ամենից առաջ Դաշնակցությունն էր։ Նա էր միակ կազմակերպված քաղաքական կուսակցությունը, որ հետզհետե իր ձեռքն էր առնում ամբողջ հայ ժողովրդի ճակատագիրը, հաղորդում նրան ֆիդայական աշխարհավարության գունավորում, դրանով իսկ սաստկացնում էր հարևան ժողովուրդների կասկածամտությունն ու թշնամական տրամադրությունը դեպի հայերը։

Իր տրամադրության տակ ունենալով բավականաչափ նյութական միջոցներ՝ զինվորների և պաշտոնավարների ամբողջ խմբեր պահելու համար, Դաշնակցությունը չկարողացավ երբեք լուրջ կերպով ուսումնասիրել այն միջավայրը, ուր նրան վիճակված էր գործել։ Պատմում են, որ Քրիստափոր Միքայելյանը, պատասխանելով նրանց, ովքեր ասում էին, թե Թուրքահայաստանը մի անծանոթ

երկիր է, պետք է ուսումնասիրել այն, որպեսզի կարելի լինի գործել այնտեղ, ասում էր. «Начто мне знать, насколько высоко ростет трава в Турецкой Армении?»: Ի՞նչ հարկավոր էր ուսումնասիրություն: Գտնված էր փրկության կախարդական դեղատոմսը՝ ֆիդայական կռիվ և Եվրոպա… Այս սկզբնական մեղքի մեջ մնաց ամբողջ ժամանակ և նրա հիմնած կուսակցությունը: Եվ այս պատճառով էր, որ նրա քթի տակ սաղմնավորվեց, ծնվեց ու մեծացավ, առանց նրան երբեք սոսկ հետաքրքրություն և հոգս պատճառելու, թուրքական ազգերի միությունը, որ վերջը հայությանը շրջապատեց բոլոր կողմերից և խեղդեց…

Բաքվի մեջ թուրքերի փետրվարյան հարձակումը միանգամայն անակնկալ էր հայերի համար: Առաջին երկու օրերը միանգամայն անպաշտպան էին հայերը, և թվում էր, թե ոչ մի փրկություն չի մնում նրանց համար: Ռուսական զորքերը դեկորացիայի դեր էին կատարում փողոցներում, նահանգապետը ցավ էր հայտնում, որ ուժ չունի, իսկ դիակների թիվը շատանում էր, հրդեհված տների մեջ խորովվում էին ամբողջ ընտանիքներ: Այդ օրհասական րոպեներին էր, որ դաշնակցական քաջ խմբապետ Դումանը (առաջ մենակ ինքը, հետո՝ երկու-երեք ընկերների հետ) դուրս եկավ փողոցները, դիրքեր գրավեց անկյուններում և գնդակներ ուղարկեց դեպի թուրքերը: Կազմակերպվեց ինքնապաշտպանությունը: Թուրքերը դիմադրության հանդիպեցին, զոհեր տվեցին, նահանջի դիմեցին, և այսպիսով հաշտություն հաստատելու հող պատրաստվեց: Նորից ու նորից, և այս անգամ արյան ու կրակի միջոցով, ցուցահանվում է, թե որքան անհրաժեշտ է հայության համար Դաշնակցության նման կազմակերպությունը:

Բայց դեռ հույս կար ընդունելու, որ Բաքվի (հետո նաև Երևանի) փետրվարյան կոտորածներն առանձին դեպքեր են եղել: Համենայնդեպս, ցարական բյուրոկրատիայի ատամներից ազատվելու համար հայ ղեկավարող շրջաններն ամենայն անկեղծությամբ աշխատանք են թափում հաշտություն և բարի դրացիություն հաստատելու հայ և թուրք ժողովուրդների միջև: Հիշում եմ այն մեծ ժողովը, որ այս առիթով կայացավ Թիֆլիսում, Վանքի եկեղեցու բակում: Հավաքվել էին հազարավոր մարդիկ, եկան թուրքերն իրենց Շեյխ-ուլ-Իսլամի հետ, արտասանվեցին ճառեր: Առանձնապես մեծ հռչակ ստացան ծերունի Շեյխ-ուլ-Իսլամի ճառի մեջ արտասանված այն խոսքերը, թե երկու հարևան խաղաղ ժողովուրդների մեջ կռիվ ու արյունահեղություն զցողը շեյթանն է: Թե իսկապես ի՞նչ մտքով էր մահմեդական հոգևորականը գործածում «շեյթան» բառը, ոչ ոք չիմացավ: Բայց ամենքի տրամադրությանն ու համոզմունքին համապատասխանող մեկնաբանությունն այն էր, թե այդ շեյթանը ուրիշ ոչ ոք չէ, քան միայն ցարական կառավարությունը: Եվ այնուհետև այս փոխաբերական հասկացությունն ընդհանրացավ բոլոր կովկասյան ազգերի մեջ, և երբ ասում էին, թե մեղավորը շեյթանն է, ամենքը հասկանում էին, թե խոսքը ռուսական բյուրոկրատիայի մասին է:

Թե՛ այս խոշոր հրապարակային ցույցը և թե՛ փետրվարյան արյունահեղությանը հետևած հանգստությունը վստահություն էին ներշնչում, որ երկու հարևան ժողովուրդներն իրապես հաշտվեն իրար հետ՝ հասկանալով, որ օտար ինտրիգի զոհեր են եղել։ Այնքան մեծ էր այս հավատը հայ ինտելիգենցիայի մեջ, որ նա նույնիսկ դրամական նվերներ էր անում Բաքվի կոտորածից վնասվածների համար՝ առանց կողմերի մեջ խտրություն դնելու, այսինքն՝ թե՛ հայերի և թե՛ թուրքերի համար։

Բայց քնած չէր շեյթանը։ 1905-ի գարունը շատ անախորժ շարժումներ բերեց, որոնք ցույց էին տալիս, թե ցարական տիրապետությունը նստած է հրաբուխի վրա։ Բավական չէին բանվորական շարժումները, Վրաստանի զանազան կողմերում բռնկվեցին գյուղացիական խոշոր շարժումներ՝ ուղղված կալվածատեր դասակարգի դեմ։ Մինչ մի կողմից կառավարությունը զորքեր էր ուղարկում գյուղացիական շարժումները ճնշելու համար, մյուս կողմից վրացի ու թուրք կալվածատերերը հավաքվում էին Թիֆլիսում՝ իրար հետ միություն կազմելու համար։ Միության նպատակն էր համարվում կուլտուրական համերաշխ և եղբայրական աշխատանք երկու ժողովուրդների բարօրության համար։ Բայց ո՞վ կարող էր հավատալ, թե շահագործող դասակարգերը, որոնք աշխատավոր գյուղացի ժողովրդի դեմ ռուսական սվիններ էին ուղարկում, երբևիցե հոգս են ունեցել կամ կարող են ունենալ ժողովրդական բարօրությունը։ Պարզապես հասկանալին և իրականն այն էր, որ երկու ձրիակեր դասակարգերը միանում էին իրենց դիրքերն ամրացնելու և իրենց քաղաքական նպատակները հաստատուն հողի վրա դնելու համար։

Շեյթանին սպասում էին և ուրիշ անակնկալներ ու հիասթափություններ։ Պետերբուրգի կառավարությունը, կամենալով շահել հեղափոխականացող ժողովրդի սիրտը, հրապարակեց մի կարգադրություն, որով համայնքներին ու ազգություններին իրավունք էր տրվում առանձին ուղերձներով կառավարությանը ներկայացնել իրենց կարիքները։ Այս թույլտվությունից Կովկասում ամենից առաջ օգտվեց վրաց ազնվականությունը, որ երկու ուղերձով, ուղարկված Թիֆլիսից և Քութաիսից, Նիկոլային խնդրում էր Վրաստանին ինքնավարություն տալ։ Ցարը կարող էր բացականչել. «Եվ դո՞ւ, Բրուտո՛ս»։ Դեռ 3-4 տարի առաջ էր այս վրաց ազնվականությունը շքեղ հանդեսներով տոնել Վրաստանի բռնի միացումը Ռուսաստանին, փառաբանել հարյուր տարի առաջ տեղի ունեցած այդ դեպքը՝ իբրև մեծագույն բարիք Վրաստանի համար, և Նիկոլայը, լցված խանդաղատանքով դեպի իր հավատարիմ ազնվականությունը՝ պետական գանձարանից նրան տարեկան մոտ 80 հազար ռուբլի նպաստ էր հատկացրել։ Այժմ ինքնակալության գլխավոր հենարանը կազմող ազնվականությունը դավաճանում էր Վրաստանում՝ պահանջելով ռամկավարական կարգեր՝ անշուշտ ժամանակի նեղ հանգամանքներից՝ ապստամբած գյուղացիության մեծ ուժից և վրացիների մեջ հետզհետե աճող սոցիալ-դեմոկրատական շարժումից ստիպված։

Հայերն էլ առանձին ուղերձի մեջ ձևակերպեցին իրենց պահանջները, որոնք մշակվել էին ապրիլ ամսին, Թիֆլիսում գումարված հայկական համագումարի նիստերում։ Հայերն իրենց համար առանձին ազգային ինքնավարություն չէին պահանջում, այլ միայն արմատական, ռամկավարական մի երկար շարք ռեֆորմներ և ազատություններ՝ ընդհանուր համակովկասյան և համառուսական չափանիշով, և ավելացնում էին մի շարք ազգային պահանջներ՝ լոկ եկեղեցական ինքնավարության սահմանների մեջ։

Առանձին պահանջներ ներկայացրեց և մահմեդական ազգաբնակչությունը, որից ցարական կառավարությունը կարող էր եզրակացնել, որ անգամ այդ հետամնաց, ուխտյալ միապետական և ցարապաշտ համարվող բազմությունն էլ ունի իր դժգոհությունները, իր առանձին լեզուն, որ խոսում էր ազգայնական կրոնական շահերի անունից։

Վատ օրեր էին գալիս շեյթանի համար։ Եվ նա, բնականաբար, չէր կարող վերջացած համարել հայ-թուրքական կռիվները։ Դրանք կլանում էին եկեղեցական կալվածքների գրավումով հայերի մեջ առաջ եկած հեղափոխական տրամադրությունը և մարտական ուժերը, [իսկ] թուրք կալվածատիրությանը զբաղեցնում էին՝ վրացի դասակիցների դաշնակցությունից հեռու պահելու չափ։ Եվ այս բոլորի արդյունքում մեկուսացնում էր Վրաստանի հեղափոխական շարժումը՝ նրան առանձին ջարդելու համար։

Ե

1905թ. մայիսի սկզբին Թիֆլիս մտավ կոմս Վորոնցով-Դաշկովը՝ Կովկասի փոխարքայի պաշտոնով։ Մինչև գալը նա Պետերբուրգից իմաց էր տվել Կովկասի ազգերին, թե ինքը տեղական ազգություններին բարյացակամ վերաբերվող, նրանց կարիքներին ու պահանջներին ամենայն ուշադրությամբ ականջ դնող մի կառավարիչ կլինի։ Ուստի և խնդրում էր ամենին լինել կարգապահ և այսպիսով աջակցել իրեն, որպեսզի ինքը կարողանա ամբողջապես իրականացնել իր բոլոր դիտավորությունները՝ հօգուտ և ի վերաշինություն կովկասյան երկրների։ Հատկապես հայերին կոմսը խոստանում էր վերադարձնել նրանց եկեղեցական կալվածքները և վերստին բաց անել նրանց դպրոցները։

Սա մի ահագին նորություն էր ամբողջ Կովկասի համար։ Նոր մարդ, նոր կարգ։ Գոլիցինից հետո այսպիսի լեզու… Երևում էր, որ ճապոնական գեներալները և ամբողջ Ռուսաստանի հեղափոխականացումը խելքի էին բերում Նիկոլային, իհարկե, ժամանակավորապես՝ մինչև փոթորկի անցնելը։ Ալեկոծ Կովկասի հանդարտեցումը ցարը հանձնել էր արքունիքի արարողությունների, ծեսերի, կեղծավոր ձևերի, շողոքորթությունների ու նուրբ ինտրիգների մեջ մազեր սպիտակացրած այս կոմսին, որ անթիվ ու անհաշիվ հարստությունների տեր էր և իր ծերությունը անցկացնելու համար խաղաղ ու շքեղ անկյուն չէր ընտրում, այլ Թիֆլիսի փոխարքայական

պալատը՝ դրդված միայն հին ազնվականի փառասիրությունից։ «Կովկասը,- ասում էին ռուս բյուրոկրատները,- պետք էր նորից նվաճել»։ Եվ նվաճող խոստացավ լինել Վորոնցով-Դաշկովը, բայց ոչ թե զենքով, այլ քաղաքականությամբ։ Միամտություն կլիներ կարծելը, թե ցարի ձեռքի տակ հնարավոր էր, որ նոր փոխարքան տար այն ամենը, ինչ խոստանում էր։ Եվ կատարելու համար չէին խոստումները։ Ռուսական ամբողջ բյուրոկրատիան էր, որ այդ նեղ ժամանակներում ծախու էր հանում էժանագին լիբերալիզմը՝ իբրև խաբելու, շլացնելու պսպղուն պաճուճանք։

Նախևառաջ նա դեն քշեց գոլիցինյան քաղաքականությունը և ժպիտներ շնորհեց հայերին։ Փոխանակ այդ տնտեսապես ուժեղ ժողովրդին հալածանքներով խրտնեցնելու և հուսահատ հեղափոխականներին գետնահարկերը քշելու՝ ավելի լա՞վ չէր թեթև, հաճախ կարծեցյալ զիջումներով նվաճել նրան՝ իր ամբողջ կազմակերպված հեղափոխությամբ հանդերձ։ Եվ իրավ, նրա այս քաղաքականությունն առաջին իսկ քայլից հաջողություն գտավ։ Հայերն իրենց զգացին հովանավորված և ոչ թե առաջվա պես պետության և բախտի խորթ զավակներ։ Այս հանգամանքը գրգռեց կովկասյան մյուս ազգերի և մասնավորապես վրացիների նախանձն ու չարակամությունը։ Բայց սա ավելի ևս լավ։ Սրանով ավելի հեշտ էր իրարից բաժանած դրության մեջ պահել կովկասյան ազգերին, քան արյան ու բոցերի միջոցով կիրառվող բաժանումը։ Վորոնցով-Դաշկովը Գոլիցինից պակաս չէր ըմբռնում, թե ինչ է հարկավոր Ռոմանովներին՝ մի վատիկանյան ինքնակալություն պահպանելու համար։ Բայց իր նախորդից տարբերվում էր նրանով, որ Գոլիցինը՝ կոպիտ ու դյուրագրգիռ մի զինվոր, ամեն ինչ անում էր պարզ ու արագ՝ արջի պես կոխկրտելով, իսկ Վորոնցով-Դաշկովը գործում էր իբրև հին ու փորձված աղվես։

Հայերը մեծ ակնկալություն ունեին, թե նոր բարձր պաշտոնակալը կտրուկ միջոցներով և անհապաղ վերջ կդնի հայ-թուրքական կռիվներին։ Բայց սխալվում էին. նրանք չէին հասկանում դրությունն ու քաղաքականությունը։ Դեռ փոխարքայության սահմանները չմտած, Նոր Նախիջևանի և Ռոստովի հայերը երկաթուղու կայարանում նրան մի թուղթ ներկայացրին՝ լցված դառը գանգատներով հայ ժողովրդի իրավազուրկ և հալածական դրության մասին։ Բալաջարի կայարանում Բաքվի հայության կողմից պատվիրակությունը ներկայացավ իբրև փետրվարյան կոտորածից աղետված, դառն վշտով լցված, փողոցներից հարյուրավոր անմեղ մարդկանց դիակներ հավաքած մի համայնքի բերան։ Ամեն տեղ և ամենքին Վորոնցով-Դաշկովը հուսադրեց, թե հայ-թուրքական կռիվները չեն լինի այլևս, քանի որ այդպես է կամենում իրեն ուղարկած կայսրը։ Սակայն մնում էր, որ միայն մի քանի օր անցնի, որպեսզի ամենքի համար ակնառու լինի, թե ո՛չ կայսրն է կամենում, ո՛չ էլ նրա փոխանորդ Վորոնցով-Դաշկովը։ Հազիվ մի շաբաթ անցած վերջինիս Թիֆլիս մտնելուց՝ հայերի մեծ կոտորած տեղի ունեցավ Հին Նախիջևանում և նրա շրջակա գյուղերում։

Իսկ մի քանի օր էլ հետո՝ երկրորդ անգամ հայ-թուրքական կռիվ սկսվեց Երևանում։ Հայկական մի պատվիրակություն ներկայացավ փոխարքային և խնդրեց վերացնել այդ ժողովրդական դժբախտությունը։ Վորոնցով-Դաշկովը սիրալիր ընդունելություն ցույց տվեց պատվիրակությանը, ասաց, թե իրեն հայտնի է, որ հայերն իբրև կուլտուրական մի ժողովուրդ, նախահարձակ չեն լինում, բայց առաջարկեց ներգործել հեղափոխական կոմիտեների վրա, որ նրանք դադարեցնեն իրենց տեռորիստական գործունեությունը։ Այսպիսով, ուրեմն, նոր փոխարքան էլ հայ-թուրքական կռիվներին նայում էր իբրև հեղափոխության և, իհարկե, գլխավորապես Դաշնակցության դեմ կռվելու միջոցի։ Այս կողմից Կովկասի նոր գլխավոր վարչապետը շարունակում էր իր նախորդի՝ Գոլիցինի քաղաքականությունը։ Հայ պատվիրակները ստիպված եղան պատասխանել, թե իրենք անկարող են ներգործել կոմիտեների վրա, որոնց գոյությունը գաղտնի է և տեղն անհայտ, և որոնք, եթե ճիշտ որ խոշոր նշանակություն են ստացել հայ ժողովրդի համար, [ապա] կալվածքների գրավելուց հետո է, որ թողել են իրենց գործունեությունը Թուրքիայում և ձեռք են առել ռուսահայերի ազգային շահերի և ֆիզիկական գոյության պաշտպանությունը։

Փոխարքան իհարկե շատ լավ գիտեր, որ ներկայացուցիչների հայտարարությունն իրենց անկարողության մասին՝ բոլորովին անհիմն էր, քանի որ Դաշնակցությունը գործում էր միանգամայն բաց ու ակներև, և նրան տեսնում էին ամեն տեղ հրամայելիս և կարգադրելիս։ Իբրև պատասխան այդ ժխտողական պատասխանի, որով հայ բուրժուական ինտելիգենցիան հրաժարվեց աջակցություն ցույց տալ ցարական կառավարությանը, կոմս Վորոնցով-Դաշկովը մի քանի օրից հետո ավելի ևս սիրալիր կերպով ընդունեց թուրքական պատվիրակությանը, որը նրան գրավոր զեկուցում տվեց մահմեդական ազգաբնակչության կարիքների և պահանջների մասին, որի երկրորդ մասն ամբողջովին նվիրված էր հայ-թուրքական կռիվներին և իր մեջ պարունակում էր խիստ հարձակումներ հայերի և, մասնավորապես, հայ ինտելիգենցիայի դեմ։

Այդտեղ բոլորովին ժխտվում էր, թե մահմեդականները որևէ տեղ նախահարձակ են եղել հայերի վրա և ամենայն լրջությամբ և հաստատուն շեշտերով հայտարարվում էր, թե մահմեդականները միայն պաշտպանել են իրենց, թե ամբողջ մեղքն ընկնում է հայ կոմիտեների վրա, որոնք գործադրում են ոչ միայն կատարելագործված զենքեր, այլև պայթուցիկ ռումբեր, և շարունակ տեռորներ են կատարում։

Այստեղ թուրք բեկերն ակամա մատնում էին իրենց՝ երևան հանելով իրենց իբրև ռուսական ժանդարմերիայի գործակալներ։ Դաշնակցականները, ճիշտ է, տեռորներ կատարում էին, բայց բացառապես պետական պաշտոնյաների վրա։ Այսպես, նրանց ռումբից փողոցի մեջ ոչնչացել էր Բաքվի նահանգապետ Նակաշիձեն, որը փետրվարյան կոտորածի ժամանակ այնքա՛ն աղաղակող օրինակներով ցույց էր

տվել, թե ինքը թուրքերի կողմն է, նրանց կազմակերպողը հայերի դեմ։ Բեկերն իրենց պաշտպանության տակ առնելով ռուսական ոստիկանությանը՝ դրանով իսկ, ինչպես ասացի վերևում, փակում էին ցարական բյուրոկրատիայի աչքերը՝ Ստամբուլից իրենց ստացած համաիսլամական ներշնչումներն իրագործելու համար։ Ուրիշ կերպ անկարելի է բացատրել նրանց կատաղի թշնամությունը Դաշնակցության դեմ, որովհետև մինչև հայ-թուրքական կռիվները Դաշնակցության տեռորն ուղղված էր բացառապես ռուսական չինովնիկության դեմ և ոչ մի վնաս չէր տվել թուրքերին։

Վորոնցով-Դաշկովը, նորից կարդալով թուրքական զեկուցումը, հայտարարում է պատվիրակներին, թե ինքը միանգամայն համաձայն է բոլոր կետերի հետ, թե ռուսական իշխանությունները շատ լավ գիտեն հայ-թուրքական կռիվների բուն պատճառը, իսկ ինքը համոզված է, որ թուրքերը ոչ մի տեղ նախահարձակ չեն եղել, որ հայերի կոտորածների մասին լրագրական նկարագրությունները խիստ չափազանցված են և այլն։

Այս հայտարարությունները շատ լավ բնորոշում են Կովկասի այս նոր սատրապի աղվեսային դեմքը։ Հայերին ասում էր, թե նրանք սկսողներ չեն. թուրքերին ասում էր, թե նրանք չեն սկսողները, իսկ Նիկոլայ ցարին գրում էր, թե սկսողները տեղ-տեղ թուրքերն են եղել, տեղ-տեղ՝ հայերը։

Ըստ երևույթին, այսքանը բավական պիտի լիներ Վորոնցով-Դաշկովին լավապես ճանաչելու և նրա նենգավոր քաղաքականությունից պաշտպանվելու համար։ Բայց հայ բուրժուական իրականությունը ե՞րբ է կարողացել քաղաքական հեռատեսություն, շրջահայեցություն և նրբամտություն ցույց տալ։ Հենց այս աղետավոր օրերից էր սկսվում այն անպայման վստահությունը դեպի Վորոնցով-Դաշկովի «հայասիրությունը», որ տարիների ընթացքում ուռչելով դարձավ մի ամբողջ պաշտամունք, և այդ պաշտամունքն էլ հայ ժողովրդին անհուն աղետների խորխորատը գլորեց։

Դաշնակցության վերաբերմամբ Վորոնցով-Դաշկովի քաղաքականությունը տվեց նույն հետևանքները, ինչ արդեն տվել էր Գոլիցինի քաղաքականությունը։ Եթե ուզում էին, որ Դաշնակցությունը կորցնի իր նշանակությունը, պիտի ամեն միջոց գործ դնեին, որ վերջանային հայ-թուրքական կռիվները, և հայ աշխատավոր ժողովրդի կյանքն ապահովված լիներ։ Բայց համիդյան մտայնությունը չափազանց շատ էր հափշտակել ռուս բյուրոկրատիայի փայտե ուղեղը։ Հայ-թուրքական կռիվները չվերջացան, անցան Գանձակի և Թիֆլիսի նահանգներն էլ, և մահվան վտանգին մատնված ժողովուրդը հոժարությամբ ինքն իրեն ենթարկեց Դաշնակցության դիկտատուրային։ Ֆիդայությունը դարձավ իդեալ։ Թուրքահայ գաղթականները՝ անտուն, անտեր, հողազուրկ թափառականներ, մինչև պռունկները լցված վրեժխնդրության զգացումով՝ դաշնակցական խմբերի մեջ խոշոր թիվ էին

կազմում և այնպիսի խժդժություններ էին կատարում, ուր թուրք ժողովրդի համար սարսափ արտահայտող մի հնչյուն էր դարձել «թաղթաղան» (գաղթական) բառը։

Եվ բոլորովին չի կարելի ասել, թե Վորոնցով-Դաշկովին անհայտ էր այդ հանգամանքը։ Իմ գրադարանում պահվում է նրա առաջին «ամենահպատակ հաշիվը» Նիկոլայ Բ-ին, որի մեջ նա պատմում է, թե ինչպես հայ-թուրքական կռիվները բարձրացնում են դաշնակցականների հեղինակությունը հայ ժողովրդի մեջ, թե ինչպես նրանք կանոնավոր կերպով հարկեր են հավաքում գյուղացիներից, հարկավոր դեպքում նույնիսկ ծախում են նրանց անասունները՝ զենք գնելու և ամենքին զինելու ու զինվորագրելու համար։ Ռուսաց կառավարությանը հայտնի էր դարձել և այն հանգամանքը, որ Դաշնակցությունն այլևս չի բավարարվում հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործով, այլ կյանքի ու մահվան պայքար է հայտարարել անդրկովկասյան թրքության դեմ։ Միատարր հայ ազգաբնակչություն ունեցող շրջաններ կազմելու և ապագա ինքնավար Հայաստանի հողը պատրաստելու համար Դաշնակցությունը ձեռնարկում է բնաջինջ անելու թուրքերին այնտեղ, ուր նրանք փոքրամասնություն են կազմում։ Եվ իրավ, Լևոն Աթաբեկյանը, որ հետո միայն թողեց Դաշնակցության շարքերը և դարձավ սոցիալիստ-հեղափոխական, 1905-ին Շուշիում սկսված կռիվների գլխավոր ղեկավարներից մեկն էր հայերի կողմից, Թիֆլիսի դաշնակցական կոմիտեի նիստում պարծենում էր, թե իրենք Ղարաբաղում զբաղված են «հայաստանցիներ» ստեղծելով։ Այդ ժամանակներից էր, ուրեմն, սկիզբ առնում դաշնակցական հռչակավոր «մաքրել-սրբելը», որ իդեալ էր դառնում ոչ միայն հասարակ ֆիդայիների, այլև՝ ինտելիգենտ գաղափարախոսների համար…

Պատերազմը կատաղության ծայրին էր հասնում Ղարաբաղում և մանավանդ նրա մայրաքաղաք Շուշիում։ Այս քաղաքի ճակատագիրը շատ տարօրինակ էր։ Թեև նա առանձին մի գործոնի դեր չէր կատարում հայ հեղափոխական իրականության մեջ, բայց Գոլիցինի համար դարձել էր աչքի փուշ։ Այդ, որպես թե ամենահայ (եթե կարելի է և այսպես ասել) մի կենտրոն էր համարվում, հայ նացիոնալիզմի միջնաբերդ։ Հայտնի էր, որ Գոլիցինը ծրագրել էր քանդել Շուշիի հայկական մասը և հայերին գաղթեցնել Սիբիր՝ այնտեղ բնակեցնելու համար։ Այս վայրենությունը, սակայն, թույլ չտվեց նրան Պետերբուրգը։ Այն ժամանակ Գոլիցինն ուրիշ ուղղությամբ տարավ գործը։ Հայերին քաջապես սանձահարելու համար Գանձակի նահանգապետ նշանակեց իր նման խելացնոր մի ռուսացնողի՝ գեներալ Կիրեևին, որ մաքրեց Շուշին հայ չինովնիկներից՝ ուղարկելով նրանց ծառայելու Ռուսաստանի խորքերում։ Հայ դպրոցներ առանց այն էլ չկային, մնացել էր 50 տարիներից ի վեր գոյությունը պահպանած թեմական դպրոցը, որ նույնպես փակվեց։

Երբ սկսվեցին հայ-թուրքական կռիվները, Ղարաբաղի հայ և թուրք ազգաբնակչության ներկայացուցիչները հավաքվեցին Թիֆլիսում, իրար խոսք տվին ամեն միջոց ձեռք առնել, որպեսզի կոտորածները մուտք չգործեն Ղարաբաղ։ Երկու կողմերն էլ այն համոզմունքին էին, որ կռիվներն առանձնապես կատաղի և

առանձնապես շատ ավերիչ կլինեն Ղարաբաղում այն հանգամանքի պատճառով, որ տեղի թե՛ հայ և թե՛ թուրք ժողովուրդներն աչքի են ընկնում իրենց խիզախ և քաջ բնավորությամբ։ Սա շատ ճիշտ էր, և մենք՝ հայ պատվիրակներս, բաժանվեցինք մեր աչքի ընկնող և ազդեցիկ հայրենակից բեկերից՝ գրեթե հավատացած, որ երկու կողմերս էլ ցույց կտանք, թե «վաթան գարդաշի» (հայրենիքի եղբայրակիցներ) էինք։ Եվ իրավ, գրեթե ամբողջ ամառն անցնելու վրա էր, հայ-թուրքական կռիվները ծավալվում էին Երևանի նահանգի շատ տեղերում, ուրիշ նահանգներում ևս ստանում էին համատարած ժողովրդական դժբախտության կերպարանք, իսկ Ղարաբաղը լուռ և հանդարտ էր։

1905թ. օգոստոսի 1-ը ռուսահայ ժողովրդի համար դարձավ մի կատարյալ ազգային տոն։ Այդ օրը հրապարակվեց Նիկոլայի ուկազը, որով հայերին վերադարձվում էին երկու տարի առաջ այնպիսի խայտառակություններով խլված եկեղեցական կալվածքները։ Բացի դրանից՝ թույլատրվում էր դպրոցներ բացել ավելի լայն իրավունքներով, քան գոյություն ուներ 1884թ.-ից ի վեր։ Չնայած հայ-թուրքական արյունահեղությունների մղձավանջին, չնայած որ հայ աշխատավոր զանգվածն իր սգի մեջ էր նստած՝ իր կրած անփոխարինելի կորուստների պատճառով, շատ տեղերում աղմկալի ցույցեր էին կատարում ի պատիվ ցարի, և հրապարակավ շեշտվում էր մի նոր երևույթ՝ եղբայրացում ռուս զորքերի և հայերի միջև։ Այսպիսի հանդիսավոր ցույցեր տեղի ունեցան, օրինակ, Շուշիում։ Բայց մի երեք ժամ հազիվ անցած, կոտորածը սկսվեց և Շուշիում։ Եվ «հայաստանցիներ» ստեղծող Լևոն Աթաբեկյանը, տեսնելով, որ թուրքերը զոռ են անում և արդեն հայկական քաղաքամասն են խուժում Քոհնա հանգիստարանի կողմից, վազում է իրենց տուն և հայտարարում, թե իրեն մի ճանապարհ է մնում՝ ինքնասպանություն գործել։

Իսկույն վեր են կենում, եթե չեմ սխալվում, 1000 ռուբլի են հավաքում, տանում տալիս Շուշիի ռուս զորքերի գլխավորին, որը զինվորներ է հանում և հրացանային կրակով ետ մղում թուրքերին։ Բայց հայկական թաղի մի խոշոր մասը՝ կենտրոնականը՝ ավելի քան 400-500 տներ այրվում են։ Եվ որ զարմանալին է, այդ հրդեհումների և կողոպուտների մեծագույն մասը կատարվում էր հենց իրենց՝ հայերի քաղաքային և գյուղական տականքների ձեռքով։ Առհասարակ գաղափարական տեսակետից չէր կարելի ամբողջ Շուշին համարել դաշնակցական ծուխ։ Այդտեղ շատ կային տարրեր, որոնք հակառակ էին դաշնակցական հախուռն (քյալլագյոզ) գործողություններին, ընդդիմանում էին նրանց գրգռիչ և միամիտ վարմունքին։ Բայց ի՞նչ անես. անճարությունը և կառավարության կողմից լքվածության վիճակը ստիպում էին, որ դժգոհներն էլ հպատակվեն ֆիդայական դիկտատուրային։

Շուշիի արյունահեղությունը դեռ չվերջացած՝ նույն օգոստոս ամսին երկրորդ կոտորածը սկսվեց Բաքվի մեջ, ավելի ահավոր չափերով։ Այդ միջոցին Կիսլովոդսկում գտնվող և Թիֆլիսից հատուկ հանձնարարությամբ այնտեղ գնացած հայերից մի պավիրակություն ներկայացավ կոմս Վորոնցով-Դաշկովին և նրան մի

ջերմ շնորհակալական ուղերձ մատուցեց՝ եկեղեցական կալվածքների և դպրոցների վերադարձման առիթով։

Նիկոլայն, ուրեմն, անձնատուր էր եղել հայերին։ Դաշնակցությունն, իհարկե, ամեն տեղ խաչփողանում, ծեծում էր իր կուրծքը և ասում, թե դա բացառապես իր հաղթությունն է, թե ինքն է հարկադրել Նիկոլային՝ չոքել հայ ժողովրդի առջև։ Բայց սա, իհարկե, սովորական լոպպազություններից մեկն էր։ Նիկոլայ Բ-ին ոչ միայն հայության, այլ ամբողջ աշխարհի և մանավանդ ռուս ժողովրդի առջև չոքեցրել էր ճապոնական մարշալ Օյաման։ Եվ հետո, մեծ դեր էր կատարել այն հանգամանքը, որ Վորոնցով-Դաշկովը Գոլիցինից խելոք էր։ Խելառ հայակերը մի հիմար թեթևամտությամբ հափշտակել էր հայ ժողովրդի կալվածքներն ու դրամագլուխները՝ նույնիսկ չկարողանալով հաշվի տակ գցել, թե հափշտակված գույքն ինչ հարստություն պիտի մտցնի պետական գանձարանի մեջ։

Ռուս բյուրոկրատները ֆանտաստիկ պատկերացում ունեին հայ եկեղեցական հարստությունների մասին։ Ես ինքս կարդացել եմ «Новое Время»-ի մեջ, որ ռուս կառավարչական շրջաններում տարածված էր այն համոզումը, թե միայն անգլիական բանկի մեջ հայ հոգևորականությունն ունի 30 մլն ռուբլի՝ ոսկով։ Միայն այն ժամանակ, երբ խլվեց ժողովրդական կարողությունը, հաշվի նստեցին և տեսան, որ պետությունը ոչ միայն օգուտներ չպիտի ստանա իր հափշտակություններից, այլև իրենից մեծ գումարներ պիտի ծախսի կալվածքները և դպրոցները պահպանելու համար։ Ազատվել այդպիսի մի «բարիքից»՝ պետական մի իմաստնություն էր Կովկասի փոխարքայի համար։ Ռուսները մի հիանալի խոսք ունեն. «На тебе, Боже, что мне не гоже»։

Իսկ թե կառավարությունը երբեք իրեն պարտված չէր համարում Դաշնակցությունից, այդ ապացուցողը հենց այն է, որ նա շարունակում էր իր քաղաքականությունը հայ-թուրքական կոտորածների վերաբերմամբ։ Օգոստոսի 1-ի ուկազով կառավարությունը կարծում էր, թե իր կողմն է գրավում հայ չափավոր տարրերին, որոնք կարող էին եթե ոչ ոչնչացնել, գեթ փոքրացնել ռումբերով և տեռորներով գործ տեսնող հեղափոխական կոմիտեներին։ Բայց այդ բանը տեղի չէր ունենում այն պարզ պատճառով, որ Դաշնակցությունն ուժեղ էր զինված և իշխանություն էր կազմում։ Ֆիդայիները Զանգեզուրի և այլ գավառների գյուղացիների մեջ կատարում էին այնպիսի սանձարձակ բռնություններ, որոնք հիշեցնում էին նրանց նմանօրինակ սխրագործությունները Սալմաստում և Թուրքահայաստանում։ Եվ կառավարությունն անժամանակ էր համարում դադարեցնել կռիվը նրանց դեմ թուրքական հրոսակախմբերի միջոցով։

Կիսլովոդսկի հայ պատվիրակությունը, վերջացնելով իր շնորհակալական ցույցերը, ստիպված էր ցավով ու վշտով նորից և նորից գալ օրվա արյունոտ մղձավանջին, նկարագրել Բաքվի սարսափները, նավթարդյունաբերության

կործանումը և, ինչպես միշտ, խնդրում էր օգնել ու փրկել։ Փոխարքան փոխարենը պատասխանեց, թե ինքը Բաքվում շատ զորք ունի և հենց այժմ կհեռագրի, որ անկարգությունները ճնշվեն ամենայն խստությամբ։ Երջանիկ ու հանգստացած պատվիրակությունը հրաժեշտ տվեց փառավոր կոմսին, բայց նրա խոսքերը խոսքեր էլ մնացին։

Հայ-թուրքական ընդհարումները դեռ հարկավոր էին ռուս կառավարությանը, շատ էին հարկավոր…

Զ

Այսօր էլ իմ աչքի առջև է այն գեղաձիծաղ, [բայց] արյունով ողողված՝ հոկտեմբերի 18-ի օրը՝ երկրորդը Նիկոլայի մանիֆեստից հետո։ Թիֆլիսի փողոցները լցված էին զբոսնողներով, շատերի կրծքի վրա արդեն երևում էին կարմիր ժապավեններ։

Գոլովինսկի պրոսպեկտում, ինչպես ասվում է, ասեղ գցելու տեղ չկար։ Միտինգներ Պետական օպերայի և Արտիստիկական ընկերության առջև, մեծ համախմբումներ, խոսք ու զրույց։ Մարդիկ այլևս չեն վախենում։ Ո՞ւր մնաց ցարական Ռուսաստանը։ Ո՛չ, նա դեռ կա։ Նայի՛ր, դրագունների գումարտակներն են իրենց չաղ ու ուժեղ ձիերի վրա շրջագայում փողոցներում։ Ճիշտ է, նրանք միայն շրջում են, ոչ ոքի չեն խանգարում, ոչինչ չեն արգելում և նույնիսկ ականջի մի ծայրով են լսում միտինգներում բարձրացող շանթալից զայրույթն ու զզվանքը ցարի ու ցարիզմի դեմ, բայց, այնուամենայնիվ, դա ցարի անունը կրող և ցարական շնորհներով հղփացած գնդից մի զինվորական ուժ է։ Զարմանալի կապուտակ երկնքի տակ իրար հանդեպ են եկել երկու սկզբունքներ։ Մի կողմը ազատություն որոնող, դարերից ի վեր ազատությունը երազ դարձրած ժողովուրդ, մյուս կողմից՝ այդ երազը կոպտորեն ջախջախող, ստրկության շղթաներով նրա կոկորդն օղակավորող բռնակալական բանակ։

Թեև ազատության այդ վաղ արշալույսին կասկածի և երկմտության ամեն մի նշույլ հեռու էր վանվում մարդու սրտից ու մտքից, բայց և այնպես, դրագունների կարմիր գլխարկներն ինչ-որ չէին համապատասխանում այդ ժողովրդական տոնին, ասում էին ինչ-որ մի բան, որ համենայնդեպս, լավ բան չէր…

Խիտ առ խիտ իրար շփվող խառնվածքների մեջ հանդիպեցի իմ մանկության ընկեր Հովնան Դավթյանին, որ Դաշնակցության գլխավորներից մեկն էր և Ժնևից եկել էր Կովկաս՝ այստեղ կուսակցական աշխատանքներ կատարելու համար։

– Հիմա ի՞նչ պիտի անեք, Հովնա՛ն։

Նա շատ լավ հասկացավ ինձ։ Ուզում էի ասել, թե Հայոց հարց Ռուսաստանում այլևս չի մնում, ուրեմն և Դաշնակցությունն այստեղ այլևս անելիք չունի։ Եվ երբ այսպես է, էլ ինչո՞վ պիտի նա պարապի։

– Դեռ Թուրքահայաստանը մնում է,- պատասխանեց նա իր սովորական անուշ ժպիտով։

Նա, ուրեմն, ընդունում էր, թե Դաշնակցությունը վերջացրել է ռուսահայերի մեջ իր «ազգային» գործը։ Բայց նա սխալվում էր, իր ընկերների հետ դեռ չէր տեսնվել։ Դաշնակցությունը, ինչ խոսք, Թուրքահայաստանը չէր թողնում, բայց բոլորովին միտք չուներ թողնելու նաև Ռուսաստանը։ Եվ այստեղ, գոյության մի նոր իրավունք ստեղծելու համար նա մի գիշերվա մեջ դառնում է… սոցիալիստական կուսակցություն։ Կախարդական գավազանի մի հարվածով ամբողջ այդ բազմատարր զանգվածը՝ բուրժուական ինտելիգենցիա, մանրավաճառներ, խմբապետներ, հայդուկ-ֆիդայիներ, խուժանավարներ և այլն և այլն, միասին թափվում էին Մարքսի ավազանի մեջ։ Եվ հայ իրականությունը տեր էր դառնում մի տարօրինակ սոցիալիստական կազմակերպության, որի նմանը դուք իզուր կորոնեք սոցիալիզմի պատմության մեջ։

– Լավ,- ասացի ես Հովնանին,- կերպարանափոխվելու և երկերեսանի դառնալու ի՞նչ կարիք կա։ Մենք ունենք հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, որ իր սոցիալիզմից դուրս ոչինչ փրկություն չի տեսնում մարդկության համար։ Եթե ես ուզենամ հարել սոցիալիզմին, էլ ինչո՞ւ պիտի գամ ձեզ մոտ և ոչ թե սոցիալ-դեմոկրատների մոտ։

Հովնանը միայն այն գտավ ասելու, թե հայ սոցիալ-դեմոկրատները շատ են քիչ, շատ են խեղճ ու ժողովրդի մեջ նշանակություն չունեն։

Բայց սա պատասխան չէր։

Ինչևիցե։ Բանը կատարվել, պրծել էր։ «Կովկասյան նախագիծ» անունը կրող մի որոշումով Կովկասի մեջ գտնվող դաշնակցականները, առանց համակուսակցական ընդհանուր ժողովի հաստատման, իրենց հռչակում էին սոցիալիստ։ Ոչինչ անպատեհություն նրանք չէին էլ զգում։ Դաշնակցությունը միշտ էլ, իր ծննդյան ժամից, եղել է սոցիալիստական։ Ապացույց էին բերում առաջին ծրագրի ներածությունը, որ գրել էր «մարքսիստ» Ռոստոմը։ Եվ այսպես, հիմնավորելով իրենց «դարձը»՝ դաշնակցականները աղանդավորի նոր մոլեգնությամբ սկսեցին ծառայել նոր պաշտամունքին, որ, իհարկե, սիրով, մտքով յուրացված մի վարդապետություն չէր, այլ մի ձևականություն, որ առանց դժվարության գալիս էր կենակցելու հայդուկային աշխարհայեցության հետ։

Հոկտեմբերի 18-ին և հետևյալ օրերին կայացան բանվորական կուսակցությունների ցույցեր։ Տեսա սոցիալ-դեմոկրատների երթը Վերայի վերելքով դեպի Գոլովինսկի պրոսպեկտ։ Չեմ մոռացել հնչակյանների փոքրիկ թափորը, որի պոչում գնում էին մի վարդապետ և ալեզարդ Ղազարոս Աղայանը։ [Հոկտեմբերի] 20-ին դուրս եկան դաշնակցականները՝ ցույց տալու համար, թե ոչ մի կուսակցություն չի կարող հավասարվել իրենց՝ իբրև խոշոր կազմակերպություն։ Վաղօրոք տեղական լրագրերում հայտարարված էր, թե այդ օրը Դաշնակցությունը փողոց պիտի հանի իր զինվորներից յոթ հազար հոգի։ Ահագին պատրաստություններով երթն սկսվեց Հավլաբարից։ Յոթ հազար զինվորները պարզապես քաղաքային դռնապաններ էին և փողոցից հավաքած այլ տեսակի մարդիկ։ Երկար շարքերով, իրար գոտիներից բռնած, նրանք եկան հասան Գոլովինսկի պրոսպեկտ։ Նրանց մեջ կարգ էր պահպանում մի ձիավոր, որ կրում էր կարմիր դրոշակ, և այդ դրոշակի վրա նկարված էր Քրիստափոր Միքայելյանի պատկերը. մի հանգամանք, որ ցույց էր տալիս, թե որքան անկեղծ ու ուղղահավատ սոցիալիստներ են այդ նորադարձները։

Գոլովինսկի պրոսպեկտի վրա՝ Առաջին գիմնազիայի պատից մինչև «Փառքի տաճար» թանգարան, չորս կարգ կանգնած էին զորքեր, որոնք այսպիսով փակեցին դեպի փոխարքայական պալատ տանող ճանապարհը։ Դաշնակցական թափորը կանգ առավ այդ շարքերի առջև, բայց, իհարկե, ոչ նրանց պատվելու համար։ Դուրս եկան հռետորներ, որոնք դիմադրեցին զինվորներին՝ հրավիրելով նրանց միանալ հեղափոխությանը և տապալել ցարիզմը։ Գերեզմանային լռություն տիրեց զինվորների մեջ։ Իր խիստ ճառերով աչքի ընկավ Թադևոս Խաշմանյան անունով մեկը՝ մականվանված Դև։ Բարձրանալով մի պատշգամբ՝ նա սպառնալիքներ որոտաց ցարական Ռուսաստանի դեմ. Վորոնցով-Դաշկովին կախել, Նիկոլայ Բ-ին ոչնչացնել…

Չխնայվեցին նաև կանայք, որոնց անունները մեկիկ-մեկիկ շարվեցին քաջ դաշնակցականի դատավճռի մեջ։ Իսկ ներքևում, փողոցի մեջ, այժմյան Փոքր թատրոնի դիմաց, կանգնած էին դաշնակցական արիստոկրատական շեֆերը, որոնց վրա ծածանվում էին դաշնակցական դրոշակներ։ Դրանց մեջ հիշում եմ Հովհաննես Թումանյանին՝ մեր վաղամեռիկ բանաստեղծին։ Հիշում եմ և նրա արտասանած ճառից հետևյալ կտորը. «Էս էն դրոշակն ա, որ ծածանվում էր Սասունի գլխին»։ Գուցե հետաքրքրական լինի ավելացնել և այն, որ նույն այդ խմբի մեջ էր նաև Համբարձում Առաքելյանը։ Մինչև այդ նա գործունյա դեր էր ունեցել դաշնակցական կազմակերպության մեջ և, եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, մի կարճ ժամանակով եղել էր [ՀՅԴ] Արևելյան բյուրոյի վարիչ։ Այս ցույցից հետո էր, որ Համբարձում Առաքելյանը խզեց իր հարաբերությունները Դաշնակցության հետ և, այնուհետև, մինչև իր մահը դարձավ նրա անհաշտ և ոխերիմ թշնամին։

«Դաշնակցության ցույցը ամենից լավ հաջողված ցույցն էր»,- այսպես էինք գնահատում մենք՝ մայթերի վրա հավաքված հանդիսատեսներս։ Մարդ շատ էին

բերել իրենց հետ, արտաքուստ ուժի ներկայություն էր զգացվում։ Երբ թափորն սկսեց վերադառնալ Բարյատինսկայա փողոցով, փոխարքայի պալատի կողմից առաջ եկավ մի փոքրիկ խումբ՝ զինվորական երաժշտության ուղեկցությամբ, որ տանում էր Նիկոլայ Բ-ի պատկերը։ Ռուս պատրիոտների ցույցն էր։ Մասնակցում էին գլխավորապես զինվորական դպրոցի (Կադետսկի կորպուսի) աշակերտները։ Խումբը շրջապատված էր հեծելազորով։ Սա, ուրեմն, մի հակացույց էր դաշնակցականների դեմ։ Երկու ցույցերն էլ խաղաղ անցան, այնպես որ կարելի էր կարծել, թե նրանք ոչ մի հետք էլ չէին թողնի առօրյայում։

Բայց ոչ։ Հենց այդ օրվանից էր, որ Նիկոլայի սահմանադրությունը, դեռ չծնված, արյունով էր լվացվում նաև Կովկասում։ Եվ ամենից առաջ հայի արյունով։

Միևնույն օրը դաշնակցականները ցույց կազմակերպեցին նաև Բաքվում։ Կարմիր դրոշակներով նրանք գնացին թուրքերի թաղը. այն իսկ թուրքերի, որոնց հետ նրանք պատերազմական դրության մեջ էին ամիսներ ի վեր և որոնց այսօր կարծում էին, թե նվաճած կլինեն՝ «ազատություն» կանչելով։ Բայց ուշ էր արդեն այդպիսի հասկացողությունները միության նշանաբան դարձնելը։ Ռուսական ոստիկանությունն արդեն կարողացել էր լավ դաստիարակել թուրքական խուժանին։ Իսկույն կազմ և պատրաստ փողոց դուրս եկավ ռուս սև հարյուրակը, որի հետ խառն էին մեծ քանակությամբ կազակներ և նույնիսկ զինվորներ։ Նրանք հայրենասիրական երթ էին կազմել՝ տանելով իրենց ցարի նկարը։ Եվ որովհետև ամբողջ Ռուսաստանում ոստիկանության դեպարտամենտը կարգադրել էր այդ «բարձրագույն» և «օգոստոսափառ» նկարի համար շրջանակ դարձնել այրվող տներ ու արյունոտ դիակներ, ուստի Բաքվում էլ այդ ինքնակալական սրբազան պոգրոմը գործադրվում էր թուրքերի աշխատակցությամբ, բայց այն բացառությամբ, որ Ռուսաստանի պոգրոմների զոհերը բացառապես հրեաներն էին, իսկ Բաքվինը՝ գրեթե բացառապես հայերը։ Հինգ օր տևեց արնակեր վայրենության այդ խրախճանքը։ Դարձյալ սարսափ, դարձյալ օգնություն կանչող աղաղակներ։ Հրդեհվեցին հայերի խոշոր տները քաղաքի ամենալավ փողոցների վրա, կոտորածն աջ ու ձախ էր գնում։ Եվ դարձյալ զորքերն իրենց չեզոք էին պահում, միայն նայում էին։ Փետրվարին էլ այսպես էր։ Բայց այն ժամանակ գոլիցինյան ռեժիմն էր։ Իսկ այժմ… Վորոնցով-Դաշկովն է, չէ՞ որ ե՛ւ լիբերալ է, ե՛ւ մասնավորապես «հայասեր»…

Թիֆլիսում էլ այդ նույն մարդը արյան բաղնիք պատրաստեց իր այնքան սիրած հայերի համար։ Խաշմանյանի և նրա նման ուրիշ վայրահաչների սպառնալիքներից գրգռված՝ նա ասաց. «Տեսնենք՝ ինչպես պիտի հայերն ինձ կախեն»։ Եվ մյուս օրը նեթ նա Թիֆլիսում կազմակերպեց մի հսկայական կառավարական հակացույց։ Այդ օրը ցարի գահակալության օրն էր՝ հոկտեմբերի 21-ը։ Զորահանդես նշանակվեց, բայց ոչ սովորական չափով. ամբողջ Գոլովինսկի պրոսպեկտի երկու կողմերով՝ Դվորցովայա փողոցից մինչև Օլգինսկայա փողոցի կեսը, խիտ-խիտ կանգնած էին զորքեր։ Դուրս էին բերվել Թիֆլիսի ամբողջ կայազորը, ամբողջ հետևակազորը՝

կանոնավոր և անկանոն հեծելազորը, բոլոր թնդանոթները։ Սրանք արդեն երեկվա հավլաբարցիները չէին՝ իրար գոտիներից բռնած մի մարդկային հոտ, այլ իսկական զորքեր էին՝ իրենց զենքերով և բոլոր հանդերձանքներով։ Վորոնցով-Դաշկովը, որ սովորաբար չէր երևում այսպիսի հանդեսներին, ձի նստած՝ գնաց զորքերին ողջունելու։ Բայց սրտի մեջ ասում էր հավաքված ահագին բազմությանը, որ լավ իմանան, թե ինքը ինչի տեր է։ Եվ իսկապես, համեմատությունն ինքնըստինքյան էր առաջ գալիս. և եթե կար գոնե մի հոգի, որ հավատում էր, թե Դաշնակցությունն իսկ որ միայն Թիֆլիսում ունի 7000 զինվոր, այդ մի հատիկ անուղղելի միամիտն էլ պիտի համոզվեր, որ գտնվել է Դաշնակցությունից էլ ուժեղ մեկը, և դա կոմս Վորոնցով-Դաշկովն է։

Օրն այսպես անցավ։ Մյուս օրը, եթե չեմ սխալվում, կիրակի էր։ Նախքան «Մշակի» խմբագրատուն գնալը՝ ես անցա Գոլովինսկի պրոսպեկտով, կանգ առա Թիֆլիսի ժողովարանի (այն ժամանակ «Մանթաշյանի տուն», այժմ հրդեհված) մոտ։ Մանր խմբերով հավաքված մարդիկ՝ հայ և վրացի, խոսում էին անհանգիստ, վիճում էին գրգռված։ Տիրում էր մի անաղմուկ, բայց խիստ հուզում։ Օդն էլեկտրականացած էր, ամեն մի չնչին կայծ կարող էր ահալի պայթյուն առաջացնել։ Իմ աչքի առջև էր, որ կատարվեց հետևյալ դեպքը։ Առաջին գիմնազիայից դուրս եկան մի խումբ աշակերտներ, որոնք «Մարսելյեզ» երգելով գնում էին դեպի պալատը։ Նրանց առջևը կտրեց մի սպա՝ պահանջելով ընդհատել երգը և ետ դառնալ։ Հրամանը սաստկացնելու համար բռնեց իր սրից՝ կիսով չափ դուրս քաշելով պատյանից։ Գիմնազիստները՝ ստորին դասարանների փոքրիկներ, վախից դես ու դեն փախան։ Բայց զբոսնող հասարակությունը հարձակվեց սպայի վրա, շրջապատեց նրան երեք կողմից և այսպես քշեց-տարավ՝ սեղմելով «Փառքի տաճարի» պատերին։ Սպան տեսնելով, որ իր համար ինքնադատաստան է պատրաստվում, հուսահատությունից մի անօրինակ ճարպկություն ցույց տվեց՝ ցատկելով բարձր երկաթե վանդակապատի վրայով այն այգին, որ կոչվում է Փոքր կամ Վերին Ալեքսանդրյան այգի։ Այնուհետև նրա համար փախչելը հեշտ էր։ Իր կյանքը նա ազատեց։ Բայց խեղճ գիմնազիստներից քանի՞սն ազատվեցին կոտորածից, որ գալիս էր սկսվելու մի քանի ժամ հետո…

Է

Կեսօրին մոտ էր, երբ ես իջնում էի Քաշվեթի եկեղեցու մոտով դեպի Բազարնայա փողոց։ Ալեքսանդրյան ծառախիտ այգու ետևում՝ Կուկիայի կողմից լսվում էր զինվորական երաժշտություն, որ հաճախ ընդհատվում էր ուռաներով։ Ուշադրություն չդարձրի։ Արդեն լսել էի, որ այսօր սևհարյուրակային պատրիոտները ռուս տերտերների առաջնորդությամբ ցարասիրական երթ պիտի ունենան մինչև փոխարքայի պալատը։

Խմբագրատանը հավաքված էին բազմաթիվ մարդիկ։ Նրանց մեջ էր և պաշտոնաթող սպա Նեմիրովիչ-Դանչենկոն (Հանդ), որ նոր էր վերադարձել Մանջուրիայի դաշտերից և «Русское слово»-ի թղթակցի պաշտոնով

ճանապարհորդում էր Անդրկովկասում՝ գլխավորապես հայ-թուրքական կռիվների պատճառներն ուսումնասիրելու համար։ Նստած խոսում էինք, մեկ էլ՝ փողոցում և տան բակում ձայներ բարձրացան, որոնք տարօրինակ չթվացին մեզ։ Կարծեցինք, թե դա պարզապես երկաթե երկար շերտերի փոխադրություն է երկար սայլերով, երբ իրար վրա դարսված երկաթները ծեծվում են իրար և աղմուկ հանում։

Միայն Հանդի՝ Մանջուրիայի դաշտերում և լեռներում փորձված ականջներն էին, որ իմացան, թե բանն ինչ է։ Սաստիկ հուզված՝ նա տեղից վեր թռավ ու ասաց.

— Это - стрельба пачками...

Բոլորիս վրա ձյուն մաղվեց։ Եվ ինքնապաշտպանության կենդանական բնազդն էր, որ հարկադրեց դես ու դեն վազել՝ մի քանի նախազգուշություններ ձեռք առնելու համար։ Շտապով կողպեցինք բոլոր դռները, փողոցին նայող պատուհանների փայտե փեղկերը, շատացրինք մութ անկյունները և դարձանք մի պաշարված մարտկոց։ Բաց էր մնացել միայն մի օդանցք, որ մեզ դրսի աշխարհի հետ էր կապում։ Ի՛նչ էր կատարվում այնտեղ՝ չգիտեինք։ Մեր ինքնակամ պաշարման անկյունն էին ներս թափվում միայն «Боже царя» երաժշտության հանդիսավոր հնչյունները և անընդհատ «ուռա՛» ձայները։ Ա՛հ, անիծյալ պաշտամունք։ Էլի, ուրեմն, պիտի քաղցկեղի նման խրվի մեր կոկորդի մեջ…

Հրացանաձգությունը և նրան եղբայրացած հաղթական երգն ու նվագը դադարեցին։ Օրը ցերեկով մեծ քաղաքը գերեզմանոց է դարձել. ոչ մի տեղ չկա մեկ հատիկ բացված պատուհան։ Շշուկ անգամ չի լսվում։ Եվ հանկարծ… նոր սարսափ։ Խմբագրատան կողքին՝ «Южные номера» հյուրանոցի մուտքի մոտ, պայթեց մի ռումբ… Գլուխներս այնքան կորցրինք, որ փախանք ներքին սենյակները։ Սպասում ենք ահ ու դողով, թե ահա կգան թնդանոթները և կսկսեն ռմբակոծել պայթյունի շրջակա տները։ Բայց անցնում են րոպեներ, անցնում է և մի ամբողջ դաժան ժամ, և ոչինչ չկա։ Հետո իմացանք, որ մի մարդ ռումբը տանելիս է եղել պալատի կողմը, բայց հանկարծ վեր է գցել և ինքն էլ սպանվել տեղն ու տեղը։

Արդեն հոկտեմբերյան օրը սպառվելու վրա էր։ Քաղցը տանջում էր պաշարվածներիս։ Բարեբախտություն էր, որ մի հարևանուհի ունեինք՝ մի բարի լեհուհի, որ մեզ պատվական ձվածեղներ ուղարկեց։ Մի րոպեում կլանեցինք կերակուրը։ Հիմա էլ հոգս էր՝ թե ինչ պիտի անեինք գիշերը։ Բայց մինչև մթի ճանկն ընկնելը՝ դրսից մի բանբեր եկավ։ Դա խմբագրատան աղախինն էր, մի, ինչպես անվանում են, «զզօղլան» խոխլուշկա, որ կորել էր երկու ժամից ի վեր։ Սառնասրտորեն պատմեց, թե գալիս է վերևից՝ Գոլովինսկի պրոսպեկտից։ Զինվորներն իրեն չարգելեցին, երբ իմացան, որ ինքն էլ զինվորի կին է։

Եվ պատմություններ արավ նա, ինչպես կարող էր անել Ուկրաինայի գեղջուկ դուստրը մի «չալ» ռուսերենով՝ իր մայրենի լեզվի շեշտերով և բառերով ողողված։ Եվ

ի՜նչ էինք իմանում։ Մենք կարծում էինք, թե այնտեղ՝ դրսում կռիվ է տեղի ունեցել։ Բայց այնտեղ կռիվ չի եղել։ Այնտեղ եղել է սպանդանոց։ Երեկվա իրար գոտիներից բռնած 7000 զինվորներից չգտնվեց գոնե մի 100 հոգի, որ Գոլովինսկի պրոսպեկտի ծայրը դարձներ մի փոքրիկ, խոշորացուցային Պրեսնյա և ընկներ բարիկադների վրա։ Ո՛չ։ Այդպիսի բան չի եղել։ Եղել է միայն այն, որ Թիֆլիսի սիրտը կազմող մեծ և գեղեցիկ փողոցն ամբողջապես տրված է եղել զինվորներին։ Եվ քանի որ այն «ազատության օրերին» ցարիզմն իր նոր նշանաբանն էր հռչակել՝ «Փամփուշտներ չխնայել», ուստի զինվորները լավագույն կերպով գնդակածեծ էին արել ամբողջ տարածությունն ըստ հին ավանդի՝ «Սահման քաջաց՝ զէնն իւրեանց»։ Փողոցի երկու կողմին կանգնած հոյակապ տները մեծագույն մասամբ պատկանում էին հայերին։ Եվ ահա զինվորները հանդիպակաց տներին մեջք տված՝ գնդակների տարափ էին ուղարկում տների ներսը՝ հուսալով, որ եթե տասից-քսանից մեկն անգամ դիպչի մի «արմյաշկայի», այդ էլ բավական է վրեժ հանելու համար այն 7000 զինվորի համար, որ երեկ իրար գոտիներից բռնած քայլում էին նույն այս փողոցով։

Զոհերի թիվը մեծ էր, պաշտոնական տեղեկություններով՝ 150-ից ավելի։ Հետո մենք իմացանք, որ այդ կոտորածն սկսվել է այսպես։ Երբ պատրիոտների թափորը, բարձրանալով Բարյատինսկայա փողոցով, մտել է Գոլովինսկի պրոսպեկտ և շուռ գալիս է եղել դեպի Վորոնցով-Դաշկովի պալատը, այդ ժամանակ բազմահարվածային ատրճանակից մի պրովոկատորական պայթյուն է լսվել, որ վիրավորել է թափորին մասնակցող զինվորական վարժարանի աշակերտներից (կադետներից) մեկին։ Անկարելի եղավ ճշտել, թե որտեղից է եղել այդ կրակոցը։ Ոմանք ասում են, թե խփել են Թիֆլիսի ժողովարանից (Հայոց, կամ ավելի հասարակորեն՝ «բուրդյուչնի կլուբ»), ոմանք թե՝ գիմնազիայի պարսպի գլխից, իսկ ոմանք էլ ցույց էին տալիս Գոլովինսկի պրոսպեկտի և Բարյատինսկայա փողոցի անկյունի տունը (այժմ Բանվորական պալատի անկյունը)։ Ինչևիցե։ Կրակոցն ազդանշան էր դարձել, որ զինվորները կոտորած սկսեին։ Ամենից առաջ կազակները թափվել էին «ապստամբության օջախ»՝ Հայոց կլուբ, և ի՜նչ տեսնեն այնտեղ, որ լավ լինի։ Աչքդ բարին տեսնի։ Կանաչ սեղաններ և նրանց շուրջը հայ բուրդյուչնի բուրժուաները թուղթ են խաղում։ Մի քանիսը դես ու դեն են փախել և սպանվել կազակների ձեռքով։ Մյուսներին հավաքել են, երկկարգ շրջապատել հրացանները պատրաստ բռնած կազակներով, «առոք-փառոք, կառոք և երիվարոք» փոխադրել մոտակա զինվորական պահականոցը (հաուպտվախտ), ուր մեր բուրդյուչնիների ճարպոտ մարմինները մի լավ ծեծել և հետո բաց են թողել։ Նրանցից մի քանիսն իմ ծանոթներն էին։ Չորս-հինգ օր անցնելուց հետո էլ նրանց խեղճ ուղեղները դեռ չարաչար աշխատում էին այն հարցերի վրա, թե այն ի՞նչ էր և ինչու՞ այդպես եղավ։ Իրենց բութ դեմքերի վրա մի զարմանք ու մտահոգություն ներկայացնելով՝ նրանք հարցնում էին.

– Ա՛յ տա, էս մեզ ինչո՞ւ ծեծեցին։

– Ո՞նց թե ինչու։ Կրամոլայի բույնը գտնելու համար։

Եվ գտան։ Կազակները լավ թալանեցին բուրդյուչնի կլուբի հարուստ արդուզարդը, ապա և գրավեցին այն ու հաստատ բնակություն դրին մեջը։ Այսպես էր Հայոց կլուբը։ Իսկ նրա կողքին գտնված չինովնիկական «Կրուժոկին» մատ անգամ չդիպցրին։

Այս, եթե կամենում եք, մի զավեշտ էր՝ ցարական համ ու հոտով։ Բայց նրա կողքին… կսկծալի, արյուն-արցունքով լվացված մի դրամա՝ երեխաների կոտորածը Առաջին գիմնազիայում։ Այստեղ էլ խուժել էին կազակները և, կրամոլնիկներ տեսնելով անմեղ խաղացող երեխաների մեջ, կոտորել շատերին։ Այս գազանային վայրագությունները կատաղություն պատճառեցին ամենքին։ Բայց ինչ արժեք ուներ աննյութ կատաղությունը ոճրագործության իսկական հեղինակ Վորոնցով-Դաշկովի համար, որի մասին ասում էին, թե կանգնած էր իր պալատի պատուհանի առաջ և նայում էր սպանդանոց դարձած Գոլովինսկի պրոսպեկտին։ Իսկ սպանված գիմնազիստներից շատերը հայեր էին… Պատմում էին և առանձնապես ցավում մանավանդ երկու եղբայրների համար, երկուսն էլ սքանչելիորեն ընդունակ էին և առաջադեմ։

Ամեն ինչ վերջ ունի. մեր ակամա տնարգելությունն էլ վերջացավ։ Գերեզմանոցի մեջ կյանքը վերսկսվեց։ Խմբագրատան պատուհանի դիմաց կանգնեց մի զինվոր՝ հրացանը ձեռքին։ Պահակ էր։ Հարցնում ենք՝ կարելի՞ է գնալ։ Կարելի է՝ պատասխանում է։ Ես և Սև Սանդրոն փողոց դուրս եկանք։ Բազարի միջով գնացինք դեպի Սոլոմոնովսկայա փողոց, ուր իմ բնակարանն էր։ Նեղ, ծուռումուռ փողոցներ և կենդանության ոչ մի նշույլ։ Մեր քայլերն էին խուլ արձագանքներ տալիս և վախեցնում մեզ։

Մեր տանն ինձ նորից գտած համարեցին։ Ի՞նչ կլիներ իմ երեխաների դրությունը, եթե այդ գիշեր դրսում մնայի։ Թանձր խավար իջավ քաղաքի վրա։ Ոչ մի տեղ չպսպղաց ոչ մի ճրագ։ Ոչ մի պատուհան չբացվեց։ Ազգաբնակչությունը կուչ էր եկել մթի ծալքերի մեջ և ժամերի դանդաղ ընթացքն էր հաշվում մինչև… մինչև որ ի՞նչ լիներ…

Մենք էլ, այո՛, վայելեցինք Նիկոլայի հոկտեմբերյան մանիֆեստի ազատությունները. իզուր չէին նրան «առատաշնորհ» անվանում նրա լակեյները։ Եվ, իրավ, սա դեռ բոլորը չէր, այս միայն «սկիզբն էր երկանց»։

Վորոնցով-Դաշկովը չէր բավականացել հոկտեմբերի 22-ի «հաղթությամբ»։ Նա կարծել էր, թե իրեն կհաջողվի բռնել դաշնակցական հիդրայի հազար գլուխներից գեթ մեկը, բայց չէր կարողացել նույնիսկ պոչի ծայրից բռնել։ Եվ սա այն պարզ պատճառով, որ Դաշնակցությունը, վաղօրոք ինչ-որ հոտ առնելով, այդ օրն իրեն և իր 7000 զինվորներին փառահեղ մենության մեջ էր պարուրել՝ թույլ տալով, որ հայ ժողովուրդն ինչպես իմանում է՝ իր մեջքով պատասխան տա իրար գոտիներից բռնած 7000 զինվորի համար։ Չէ՞ որ մի քանի ամիս առաջ նահատակված Քրիստափոր

Միքայելյանը գրել և ապացուցել էր. «Միևնույն է, ձեզ առանց այդ էլ կոտորելու են, իսկ մենք չենք կարող հեղափոխություն չկատարել»։

Եվ ահա մի նոր տագնապ Թիֆլիսի հայության համար։ Հոկտեմբերի 24-ի առավոտից մի աներևակայելի հուզմունք հազարավոր մարդկանց դուրս շպրտեց փողոց։ Հուզմունքը տարածվում էր ավելի ու ավելի, և հայտնի չէր, թե ովքեր են տարածողները։

– Գալիս են,- ասում էին իրար։

– Ովքե՞ր։

– Բորչալվի թուրքերը, անթիվ, անհամար։

– Ո՞վ գիտե, ո՞վ իմացավ։

– Հրեն, մոտ են քաղաքին, շատերն են տեսել։

Եվ տագնապը մեծանում էր, կեսօրին իրարանցումն [արդեն] ալիքներ էր տալիս. կացությունը դառնում էր անհանդուրժելի։ Եվ ահա քարեքար ընկած ամբոխի մեջ լուր է տարածվում, թե առաջնորդարանում հավաքվել են մեծերը։ Խորհրդակցում էին, թե ինչ անեն ժողովրդի փրկության համար։ Ժողովուրդը հավաքվում էր առաջնորդարանի մոտ՝ սպասելով, թե ինչ պիտի անեն մեծերը։ Պատվիրակություն կազմվեց մոտ 30 հոգուց՝ եպիսկոպոսներ, վարդապետներ և ազգային ջոջեր։

Գնացին ներկայանալու Վորոնցով-Դաշկովին։ Ամբոխը շարունակում էր կուտակված մնալ առաջնորդարանի շուրջը՝ սպասելով պատվիրակության վերադարձին։

Իրիկնապահին շփոթմունքն արդեն խուճապի կերպարանք ընդունեց։ Երևանյան հրապարակի խռնումների մեջ ես հանդիպեցի Հովնան Դավթյանին։

— Այս ի՞նչ արիք,- ասացի։

Նա սաստիկ բարկացավ վրաս և հեռացավ՝ ասելով.

— Ես չեմ էլ խոսի հետդ։

Բայց էլ ի՞նչ խոսեր։ Արդեն փախչող փախչողի ետևից էր։ Մի ընդհանուր հոտային բնազդով Թիֆլիսի արևելյան մասն իր դրությունը վտանգված էր զգում և հավատացած էր, որ վտանգից անպատճառ կազատվի, եթե տեղափոխվի արևմտյան մաս։ Ով ծանոթ-ազգական ուներ այդ անվտանգ մասում, շտապում էր ժամ առաջ գնալ այնտեղ, տեղավորվել գոնե մի գիշեր, մինչև որ լույսը կբացվեր և կիմացվեր, թե ինչ է լինելու։

Եպիսկոպոսների և ջոջերի պատվիրակությունը պալատում իրեն տալիս է խորամանկության՝ իբր թե եկել է հավատարիմ հպատակական հրճվանք հայտնելու այն մեծ շնորհների համար, որոնք արված են հոկտեմբերի 17-ի մանիֆեստով։ Բայց ցարի փոխանորդը այնքան էլ միամիտ չէր, որ չհասկանար եկած «ներկայացուցիչների» իսկական փորացավը։ Պատվիրակներից մեկն ինձ պատմել է, որ փոխարքայի օգնականն այդ միջոցին կանգնած էր պատշգամբում և նայում էր, թե ինչպես էին խուճապի բռնված հայերը կառքերով փախչում դեպի Վերայի կողմը՝ տանելով իրենց հետ անկողիններ, տնային իրեր, նույնիսկ օրորոցներ։ Դուք երևակայո՞ւմ եք այնպիսի մի իշխանություն, այն էլ բարձր, ամբողջ երկրի տեր, որ նայում, զվարճանում է, թե ինչպես է իր պրովոկացիայից շշված ժողովուրդն այս ու այն կողմ խփում իրեն։

Փոխարքան, որ չափազանց լավ էր տեղյակ, թե ինչ է կատարվում իր շուրջը, խորամանկների հետ է՛լ ավելի խորամանկ լինելու դիրք է ընդունում և ուրախություն է հայտնում պատվիրակությանը տեսնելու առիթով և ավելացնում, թե հայ ժողովրդի արտահայտած հպատակական հրճվանքն ինքն անմիջապես կհաղորդի թագավորին։ Զրույց է սկսվում։ Պատվիրակներից յուրաքանչյուրը խոսում է այն, ինչ վաղօրոք հանձնարարված էր իրեն։ Մեկն ասում է, թե այս քանի օրերի դեպքերի պատճառով պատվիրակությունը չկարողացավ ավելի վաղ կատարել իր պարտականությունը, այսինքն՝ ներկայանալ կոմսին։ Մի ուրիշը պատմում է, թե հայերը միշտ ձգտել են դեպի Ռուսաստան և ռուսաց ցարերի հավատարիմ հպատակներն են եղել։ Բոլորին լսում է ցարական հին աղվեսը, բոլորի հետ էլ համաձայն է, ուրախ է, որ այդպես է և ոչ թե ուրիշ կերպ։

Միայն վերջում, իբրև թե իմիջիայլոց, Թիֆլիսի առաջնորդը խոսք է բաց անում ժողովրդի այդ օրվա հուզված դրության մասին։ Վորոնցով-Դաշկովը հանգստացնում է, թե ոչինչ չի լինի, և իր օգնականին պատվիրում է հեռախոսով հրամայել ամեն կողմ, որ զորքեր ուղարկվեն ճանապարհները բռնելու և թուրքերին ետ քշելու համար։ Իսկ պատվիրակներին խնդրում է չմոռանալ, որ այնուամենայնիվ հայ հասարակության մեջ գտնվում են տարրեր, որոնք արհեստ են դարձրել խռովությունները։ Այդ և ուրիշ ակնարկությունները վերաբերվում էին Դաշնակցությանը։

Օգնականը ներս մտնելով՝ հայտնում է, թե բոլոր կարգադրություններն արված են։ Եվ այդժամ ցարական փոխանորդը հրաժեշտ է տալիս պատվիրակությանը՝ ներշնչելով նրան այն զգացումը, թե ինքը մեծ բարերարություն արեց Թիֆլիսի հայ ժողովրդին։

Առաջնորդարանի մոտ, մթի մեջ սպասող բազմությունը սկսեց ցրվել։ Դրությունը միայն համեմատաբար լավացավ։ Ամենքը չհավատացին ցարական չինովնիկների խոստումներին, որոնք այնքան խաբեբայական էին դարձել, մանավանդ հայ-թուրքական կռիվների ընթացքում։ Ես էլ, տեսնելով կնոջս և

երեխաներիս անհանգստությունը, ուղարկեցի նրանց Վերա՝ մի ծանոթի մոտ, իսկ ինքս մնացի տանը՝ պառավ զոքանչիս մոտ։ Մեր տունը պատկանում էր մի թրքուհու։ Երեկոյան նա գնաց թուրքերի թաղը՝ խոստանալով մեզ այնտեղից հաղորդել, թե որքանով են ճիշտ տարածված լուրերը։ Այդ տեղեկությանը հարկավոր եղավ սպասել երկար, մինչև երեք ժամ։ Ես նստած էի հարևանիս մոտ, որը թուրքահայ էր՝ Տրապիզոնի կոտորածի ժամանակ իր բոլոր ունեցածն ու իր որդուն կորցրած, այն օրից ի վեր փախստական դարձած։ Երկար, վշտալի, խեղդիչ էր մեր խոսակցությունը, որ շարունակ պտտվում էր այսօրվա հուզմունքների շուրջ։ Հարևանս ու իր ընտանիքը վերապրում էին տրապիզոնյան արհավիրքները։ Եվ ես այժմ նրանց հետ էի, միատեսակ տրամադրված, միատեսակ զգացող ու մտածող։ Ես էլ նույն վիճակի մեջ էի գտնվում՝ ուխտվածի վիճակի մեջ։ Իր տխրամած պատմությունների ընթացքում հարևանս շատ փաստեր էր բերում, թե ինչպես դժբախտ ժողովուրդը շարունակ հանգստացնող, բայց իրապես զարհուրելիորեն դավաճան խոստումներ էր ստանում սուլթանական պաշտոնյաներից։

Իսկ ցարականնե՞րը։ Միևնույն ծառի պտուղները չէի՞ն։ Եկավ մեր տանտիրուհու ծառան։ Նրա բերած թղթի մեջ մեզ հաղորդվում էր, թե ոչ մի վտանգ չկա, և ոչ ոք չի էլ մտածել հարձակում գործել հայերի վրա։ Եվ սա միանգամայն ճիշտ դուրս եկավ։

Որքա՜ն հիմար, որքա՜ն զզվելի դրություն է, երբ զգում ես քեզ զոհվող մի անասուն։ Ես անիծում էի իմ մարդկությունը, անիծում էի մեր բախտը, որ մեր կյանքի կարգադրությունը դրել էր սուլթանների, ցարերի և այլ գահակալ գազանների ձեռքում։

Ը

Թիֆլիսն ազատված էր հայ-թուրքական խայտառակ արյունահեղությունից։ Բայց… միայն այս անգամ և ոչ ընդմիշտ։ Հոկտեմբերի 24-ի օրը շատ բացահայտ կերպով ցույց տվեց, թե որքան անհրաժեշտ են հայ-թուրքական կռիվները կովկասյան բյուրոկրատիային՝ հեղափոխական հրաբուխ դարձած Ռուսաստանում ռոպեի պահանջած դիրքերն ստեղծելու համար։ Հազիվ մի ամիս անցած՝ նորից հարկավոր եղավ [կովկասյան բյուրոկրատիային] այդ արյունոտ մղձավանջը օրերի իրականություն դարձնել։

Այլևս չէր կարելի պրովոկացիայով հուզել ժողովրդին, քարեքար գցել նրան։ Անհրաժեշտ էր հայերին կռվեցնել թուրքերի հետ իրապես։ Եվ դա՝ հակառակ նրանց կամքի։ Ի՞նչ նշանակություն ուներ նրանց կամքը, երբ Ռուսաստանում գործադրվում էին դեռ ոչ մի տեղ չտեսնված հսկայական, համապետական գործադուլները։ Մեկը կար արդեն՝ փոստ-հեռագրականը, պատրաստվում էր մյուսը՝ երկաթուղայինը՝ երկրորդ անգամ։ Հեղափոխական շարժման մեջ էր ամբողջ արևմտյան Վրաստանը։ Եվ ահա ամենայն պարզությամբ կարելի է ասել ամբողջ աշխարհի առաջ, [որ] օրն

օրին, անդիմադրելիորեն, կարծես տարերային ուժով, պատրաստվում էր արյունահեղություն նաև Թիֆլիսում։ Թուրքերը Թիֆլիսում հայերի համեմատությամբ աննշան փոքրամասնություն էին կազմում, և այս բանը, թվում էր, կկանգնեցներ նրանց թշնամական գործողությունների նախաձեռնությունից։ Այսպես էլ համոզված էին ամենքը, և երկու կողմերի հասկացող շրջանները ջանք էին թափում խաղաղությունը հաստատ պահելու։ Սակայն գրգռվող դեպքերը, պրովոկացիան շարունակվում էին անդադար՝ աճելով օրն օրի վրա։ Սևհարյուրակային մեթոդն այս անգամ էլ կրկնվեց ճշտությամբ. մի օր սպանված գտնվեցին երկու թուրքեր, և իսկույն, իհարկե, լուր տարածվեց, թե հայերն են երկուսի սպանողները։ Օդը հետզհետե էլեկտրականացավ։

Բռնկվեց մի հանկարծակի, անակնկալ հրդեհ։ Նոյեմբերի երկրորդ կեսին Գանձակում, նոր միայն Վորոնցով-Դաշկովի հրամանով ընդհանուր նահանգապետ նշանակված գեներալ Տակայշվիլու բարեհաճությամբ և ակնհայտ աջակցությամբ, կոտորած սկսվեց, որի ժամանակ հայերը մեծամեծ վնասներ կրեցին։

Գանձակի կոտորածը նոր ուժով բորբոքեց երկու կողմերի կրքերը։ Թիֆլիսի հասարակական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները, մամուլն ամեն ջանք թափում էին, որ հայերն ու թուրքերը հասկանան դրության լրջությունը, զսպեն իրենց թշնամական կրքերը։ Քաղաքագլուխը հայ-թուրքական խորհրդակցություն գումարեց Դումայում, ուր երկու կողմերն էլ հավատացրին իրար, թե հարձակվելու ոչ մի դիտավորություն չունեն։ Բայց այս հանդիսավոր խոստումներն արդեն վաղուց և ամեն տեղ փորձված էին իբրև եղբայրական ուխտի ողորմելի կոմեդիաներ, որոնք հենց այն էին ապացուցում, թե կոտորածներ կլինեն անպատճառ։ Ոստիկանական սևհարյուրակային ագիտացիան անհաղթահարելի մնաց և այս անգամ։ Նոյեմբերի 24-ին սկսվեց հրացանաձգությունը, ընկան առաջին զոհերը։

Ում համար ինչ էլ լիներ այս նոր ժողովրդական դժբախտությունը՝ Դաշնակցության համար դա մինչև այդ չեղած մի դիպված էր՝ ավելի ուժեղանալու, ավելի բարձր դիրք գրավելու համար։ Ահագին ոստիկանություն, տասնյակ հազարներով հաշվվող զորք ունեցող կովկասյան մայրաքաղաքի մեջ մենամարտի դաշտ էր բացվում այն հին, ծուռումուռ ու նեղլիկ փողոցներում, որոնք պարփակվում էին Շեյթան-բազարից, բաղնիսների թուրքական թաղերից՝ Խարփուխից մինչև Հավլաբար։ Թուրքերը գրավեցին իրենց դիրքերը, հայկական դիրքերի մեջ նրանց հանդիման կանգնեցին դաշնակցական զինվորները։ Մասնակցում էին և հնչակյանները, բայց նրանց թիվը շատ չէր, և դրության տերը լիովին դաշնակցականներն էին։ Դաշնակցական շտաբը ստանում էր ավելի մեծ նշանակություն, քան ընդհանուր կովկասյան բանակի շտաբը, որ գտնվում էր փոխարքայի պալատի մոտ։ Սոլոլակի հայ բուրժուազիան, զգալով իր գլխին կախված թուրքական վտանգը, լավ իմանալով, մանավանդ, որ եթե հայկական դիրքերը լքվեն,

թուրքերն ամենից առաջ իրենց հաստատությունները պիտի թալանեն, զգվում էին դաշնակցական կռվողներին՝ ամեն օր ուղարկելով նրանց մեծ առատությամբ հաց, միս, գինի, ծխախոտ և այլ նյութեր։ Դաշնակցական շտաբը հրամաններ և կարգադրություններ էր արձակում, որոնց անպայման ենթարկվում էր ամբողջ հայ ազգաբնակչությունը։ Փոխարքայական պալատը երկրորդական դիրք էր ստանում։

Առաջին անգամն էր, որ ես դժբախտություն էի ունենում գտնվելու հայ-թուրքական կռիվների դաշտում։ Զարհուրելի էր այն հոգեբանությունը, որ ստեղծվեց փոխադարձ հրացանաձգության առաջին իսկ վայրկյանից։ «Արյան ծարավից փոթորկված գազանային կրքեր»՝ սա՛ է ընդհանուր վերնագիրն այդ հոգեբանության, և նրա մեջ կարող են զետեղվել ամեն տեսակ հրեշավոր մանրամասնություններ։ Ճիշտ է, ամեն մի պատերազմական դաշտ է այդպիսին լինում, և շատ լավ է մեր ժողովուրդը նկատել, որ «կռվի մեջ չամիչ չեն բաժանում», բայց այլ է պրոֆեսիոնալ սպանողների, պատերազմի համար հատուկ խնամքով մարզվող թնդանոթային մսի գազանացումը և այլ է, երբ այդ դրության մեջ ընկնողը խաղաղ քաղաքացին է, աշխատանքի և քրտինքի մարդը։ Ի՜նչ զարհուրանքով ես իմացա, որ կռիվների հենց առաջին օրը հայերը մորթել էին 5 թե 10 խեղճ ու անմեղ պարսիկ բանվորի։ Նույն օրն էր, թե մյուս օրը ես վերադառնում էի տուն։ Մեր տան երկրորդ հարկում ապրում էր մի հույն ընտանիք, որ ոչ հույների հետ խոսում էր թուրքերեն։ Այդ ընտանիքի պառավ տատը պատշգամբում մեկի հետ թուրքերեն էր խոսում։ Երկու երիտասարդներ էին անցնում այդ միջոցին, ինչպես երևում էր՝ կռվողներից։

Նրանք զայրացած կանգ առան, վեր նայեցին։ «Այստեղ թուրքեր են ապրում»,- ասացին։ Ես զգացի, թե ինչ պիտի լիներ այնուհետև և մոտենալով, ասացի նրանց. «Այն պառավը թուրք չէ, հույն է»։ Երիտասարդները նայեցին ինձ տարակուսանքով։ Լավ է, որ ինձ ճանաչեցին։ «Դուք ասում եք, պրն Լեո, հավատում ենք Ձեզ, թեև մի քիչ դժվարությամբ։ Թող ձեր գլխին դուրբան լինի»։ Ու նրանք գնացին՝ երկար մաուզերները կողքերից կախած։ Դժվարությամբ բարձրացա սանդուղքներով։ Սիրտս խեղդում էր զարհուրանքի զգացումը։ Այս ի՜նչ օրեր են, այս ի՜նչ ժամանակներ։ Եվ մա՞րդ ենք մենք։ Եվ այդ դառնության մեջ, որով համակվել էր ողջ էությունս, փոքրիկ ճրագի պես առկայծում էր այն գիտակցումը, որ եթե ոչ մի ամբողջ ընտանիքի, գոնե մի առույգ ու հաղթանդամ պառավի կյանք եմ ազատել։

Եվ ահա այսպիսի հոգեբանության մեջ, երբ ամենքն ուզում էին սպանել և ամենքը վախենում էին սպանվելուց, միանգամայն բնական էր դառնում այն մեծ դիրքը, այն փառքը, որ ստանում էր դաշնակցական շտաբը։ Դա գործողի, վճռական ոգու փառքն էր։ Վորոնցով-Դաշկովն իր գեղեցիկ մայրաքաղաքում էլ չկարողացավ բյուրոկրատիկ գլուխկորցրածությունից ավելի մի բան ցույց տալ։ Իր ձեռքն առնել դրությունը նա չուզեց, և նրա բազմաթիվ գեներալներն ու զորքերն անգործության էին մատնված, չեզոք հանդիսատեսներ էին՝ նստած իրենց զորանոցներում։ Իսկ այնտեղ՝ դիրքերում, անընդհատ հրացանաձգություն էր, կյանքի և մահվան կռիվ։ Եվ, ուրեմն,

էլի Դաշնակցությունն էր հայ ազգի փրկիչը։ Նրան էլ, ուրեմն, ամեն փառք ու պատիվ։ 10-20 զինվոր ունեցող մի խմբապետ՝ հայի համար Վորոնցով-Դաշկովի յուրաքանչյուր գեներալից լավ էր։ Այսպես էր դրությունն արտաքուստ։ Կառավարական ծրագիրը մի անգամ ևս, փոխանակ հաջողվելու, բոլորովին հակառակ հետևանքներ էր տալիս։ Ուզում էին ոչնչացնել Դաշնակցությանը, ընդհակառակը՝ ավելի ևս բարձրացրին, ուժ ու հեղինակություն շատ ու շատ տվին նրան։

Ես գործածեցի «գլուխկորցրածություն» բառը։ Ավելացնեմ, որ այդ աղվեսային գլուխկորցրածություն էր։ Վորոնցով-Դաշկովի կառավարությունն իհարկե այն մտքով չէր հայ-թուրքական արյունահեղություն մտցրել Թիֆլիսի փողոցներում, որպեսզի իր զորքերի եռանդուն շարժումներով այն իսկույն ևեթ դադարեցներ։ Սկզբից ևեթ բանն այնպես էր դրվել, որ մարդկանց կոտորել տան, գյուղեր ու քաղաքներ այրեն ու ոչնչացնեն և այս բանից օգուտներ քաղեն։ Այսպես պիտի լիներ և Թիֆլիսում։ Հինգ-վեց օր տևեց հրացանաձգությունը, որին հետևեցին մի շարք հրդեհներ։ Եվ արյան ու կրակի այս ծովը փռվեց փոխարքայի առջև իբրև հենք, որի վրա կարելի էր շահավետ ձեռնարկումներ կառուցել։

Թիֆլիսի ընդհարումների սկզբից փոխարքան մի քայլ արեց, որ զարմացրեց ամենքին։ Նա դիմեց վրաց սոցիալ-դեմոկրատների կուսակցությանը և առաջարկեց նրան խաղաղարարի դեր հանձն առնել։ Բանվորական կուսակցությունն անտարբեր չէր մնացել դեպի ժողովրդական այն մեծ դժբախտությունը, որ ներկայացել էր հայ-թուրքական կռիվների կերպարանքով։ Թիֆլիսում բարձրացած հրացանաձգությունը զայրույթի և ահազանգի արձագանքներ էր տալիս երկաթուղու գլխավոր արհեստանոցների շչակի երկարատև սուլոցների մեջ, որոնցով բանվորները կանչվում էին վերջ դնելու նոր սկսված եղեռնին։ Կայացավ միտինգ, որ պահանջեց գործադուլ հայտարարելով դադարեցնել անմիտ արյունահեղությունը։ Կազմվեց թափոր, որ սպիտակ դրոշակներով ուղևորվեց պատերազմի դաշտ դարձած թաղերով դեպի Նավթլուղ՝ հրավիրելով կռվող կողմերին գնալ այնտեղ՝ հաշտության և եղբայրության միտինգին մասնակցելու համար։ Բանվորների հետ մեն-մենակ, ոտքով գնում էր և Թիֆլիսի նահանգապետ Ռաուշը։ Երբ միտինգը վերջանում էր, երբ բոլոր ճառախոսներն անխնա դատապարտել, անարգանքի սյունին էին գամել կառավարությանը՝ ասելով, որ նա է հանդիսանում հայ-թուրքական պատերազմի միակ պատճառը և դրդիչը, նահանգապետը ձայն խնդրեց նախագահից և առաջ դուրս գալով ասաց, թե ահա ինքը բանվորների ձեռքին է, թող այստեղ իսկ պատառ-պատառ անեն, բայց ինքը հայտարարում է, որ իր համար ամենքը՝ հայ, թուրք, վրացի և ռուս հավասար են, ամենքն էլ կատարյալ իրավատեր քաղաքացիներ։ Այս էլ հեղափոխական ժամանակի մի նոր հոյակապ տեսարան էր՝ նահանգապետը բանվորների մեջ, նրանց առջև խոնարհ գլուխ իջեցրած։

Բայց նահանգապետից ավելի փոխարքան էր խտացնում այդ նոր տեսարանի գույները։ Ստանալով վրաց սոցիալ-դեմոկրատիայի համաձայնությունը հայ-թուրքական կռվի մեջ չեզոք խաղաղարար միջնորդի դեր կատարելու մասին՝ Վորոնցով-Դաշկովը կատարեց և նրա առաջարկած պայմանը. նա պետական պահեստներից բաց թողեց նրան [սոցիալ-դեմոկրատիային] 500 բերդան հրացան։ Եվ զինված այդ զենքերով՝ բանվորները դուրս եկան փողոցները՝ կարգ և խաղաղություն պահպանելու համար։ Նրանք կրծքի վրա կրում էին իրենց պաշտոնը երևութականացնող սպիտակ գույնի ժապավեններ և գրավեցին այն բոլոր փողոցները, որոնք պատերազմական դաշտի շրջանում էին գտնվում թե՛ հայոց և թե՛ թուրքաց թաղերի կողմից։ Նրանք էին, որ թուրքերին կառքերով փոխադրում էին քաղաքի կենտրոնը և ուրիշ թաղեր, ուր նրանք գործեր ունեին։

Առաջին անգամն էր, որ բանվորական զինված և կազմակերպված ուժը հանդես էր գալիս մեր իրականության մեջ իբրև հասարակական կարգի տեր և տնօրեն։ Ես ողջունեցի այդ նոր երևույթը «Մշակի» էջերից։

Այդ ուժն այնքան մեծ չէր, որ կարողանար ճնշման միջոցներով խաղաղեցնել երկու կռվող կողմերին, հաշտության բերել նրանց։ Եվ սակայն Վորոնցով-Դաշկովը կարգադրություն էր արել, որով պաշտպանության համար զենք կրելու իրավունք տրվում էր միայն սոցիալ-դեմոկրատիային։ Այս կարգադրության բուն միտքը շատ լավ էր ըմբռնում սոցիալ-դեմոկրատիան, որը և հայտարարեց իր թերթի մեջ, թե դրանով Կովկասի փոխարքան կամենում է խաղ պատրաստել հայերին զինաթափ անելու և հիմա էլ հայ-վրացական թշնամություն ստեղծելու համար, ինչպես արդեն ստեղծել էր հայ-թուրքական թշնամություն։ Ուստի, սոցիալ-դեմոկրատիան պահանջում է ոչնչացնել այդ կարգադրությունը, հակառակ դեպքում ինքն ստիպված կլինի հրաժարվել իր ստանձնած դերից։

Խորամանկ ծրագիրը մերկացված էր և պետք էր այն թողնել։ Փոխարքային օգնության հասավ նրա զինվորական շտաբը, որ ավելի ազդու ուղղություն էր տվել իր սևհարյուրակային գործունեությանը։ Սպայակույտը, քննության առնելով իր հրամանատարի կարգադրությունները և մանավանդ այն, որ զինվել էր վրաց սոցիալ-դեմոկրատիան, գտավ, որ հասարակական կարգի պահպանությունը բանակի առաջին պարտականությունն է, մինչդեռ բանակը, բոլորովին բարձիթողի է արված այնպիսի մի ժամանակ, երբ անիշխանություն է ամեն տեղ, և օրն օրին բազմանում են վերին աստիճանի վտանգավոր հեղափոխական շարժումները։ Այսպիսով զինվորությունը կկորցներ իր նշանակությունը, կդառնար ետ քաշված, գրեթե անպետք մի ուժ։ Ուստի և ընդհանուր ժողովը պահանջեց փոխարքայից զինաթափ անել սոցիալ-դեմոկրատներին, հեռացնել ասպարեզից բոլոր գաղտնի ռազմական կազմակերպություններին և կանոնավոր կյանքի վերականգնումը հանձնել բանակին։

Եվ իր ձեռքն առնելով կարգի փրկության գործը՝ շտաբը զորաբաժիններ ուղարկեց հայ-թուրքական ընդհարումների շրջանում դիրքեր գրավելու համար, իսկ սոցիալ-դեմոկրատներից սկսեց հետզհետե խլել արքունի հրացանները։ Վերջին օրերին Բորչալուից զինված թուրքական խմբեր էին մտել Թիֆլիս՝ առանց արգելքի հանդիպելու ճանապարհները պահող զորքերի կողմից։ Կռիվն այս պատճառով սաստկացել էր։ Համազարկերը շարունակ որոտում էին դժբախտ քաղաքամասի վրա, հրդեհված տները գիշերը տարածում էին իրենց չարագուշակ լուսավառությունը։ Առանձին դիրքեր գրված զորամասերն իրենց իսկ նախաձեռնությամբ հաճախ միանում էին հայկական դիրքերին՝ գրավված մանավանդ այն առատ ուտելեղեններով, որ թափում էին դաշնակցականների դիրքերի մեջ քաղաքացի հայերը։ Լավ հյուրասիրվելով հայ զինվորների մոտ՝ կառավարական զորքերը վերջին օրերին շատ հաճախացրին իրենց կրակը թուրքերի դեմ, որոնց դրությունը կատարելապես անտանելի էր դառնում իրենց նեղ ու փոքրիկ տների մեջ։ Զոհերի թիվն էլ այնքան էր մեծանում, որ նրանք, վերջապես, ըմբոնեցին կռվող կողմ դառնալու անմտությունն այդպիսի հանգամանքների մեջ և զենքերը ցած դրին։ Թիֆլիսն ազատվեց մի մայրաքաղաքի համար ամոթալի և խայտառակ դրությունից։

Բայց մի՞թե բոլորովին անօգուտ էր անցնում Թիֆլիսի հայ-թուրքական պատերազմը ցարական բյուրոկրատիայի համար։ Ո՛չ, ինչո՞ւ պետք է անօգուտ անցներ։ Զբաղեցնելով վրաց սոցիալ-դեմոկրատներին Շեյթան-բազարում խաղաղեցնողների բավական զիզի-բիզի դերով՝ Վորոնցով-Դաշկովը պատրաստեց գեներալ Ալիխանով-Ավարսկու նվաճողական արշավանքը դեպի արևմտյան Վրաստան, որ ապստամբել և զինաթափ էր արել տեղական ռուս զորքերին՝ հաստատելով տեղական մանր հանրապետություններ։ Եվ սկսվեց, ճիշտ որ, նվաճում բարբարոսության բոլոր միջոցներով՝ ջնջելով և ոչնչացնելով ամեն ինչ, որ հանդիպում էր ճանապարհին։ Վրաստանը մենակ էր և մեկուսացված, նրան կարելի էր ջարդել բոլոր կողմերից։ Ահա՛ հայ-թուրքական կոտորածների պատրաստած մի խոշոր արդյունքը։ Վրաց ինտելիգենցիան և հատկապես սոցիալ-դեմոկրատիան նոր միայն տեսավ, թե ինչի համար էր և ինչի բերեց կովկասյան ժողովուրդների բաժանումը, որ ցարական քաղաքականության գլխավոր հիմքն էր կազմում տասնյակ տարիներից ի վեր։

Հայ-թուրքական կռիվը Թիֆլիսում, կարծեք, մի քիչ մերձեցում առաջացրեց վրաց սոցիալ-դեմոկրատների (մենշևիկների) և Դաշնակցության միջև։ Նրանք համերաշխ էին գործում կռվից հետո Թիֆլիսում դեկտեմբերյան օրերին, երբ հեղափոխությունը կանոնավոր պատերազմ էր մղում կառավարության դեմ գործադուլների և տեռորիստական գործողությունների միջոցով։ Բայց համաձայնությունը երկար չտևեց և չէր կարող տևել, որովհետև երկու կազմակերպություններն էլ իրենց էությամբ նացիոնալիստական էին։

Թ

1905-1906թթ. ձմեռն առհասարակ տանջալից էր հեղափոխական երկունքներով բռնված Ռուսաստանի համար։ Տանջալից էր կյանքը նմանապես և Թիֆլիսում։ Իսկ հայ-թուրքական կռիվների հրդեհով բռնկված գավառական վայրերի դրությունն անտանելի էր։ Ամեն տեղից գալիս էին հուսահատական ճիչեր։ Շուշին կատարյալ ճգնաժամ էր ապրում։

Ես հիվանդ էի դեկտեմբերի սկզբից, այնպես որ բոլոր հեղափոխական վայրիվերությունները միայն թույլ արձագանքներով էին գալիս հասնում անկողնիս։ Դաշնակցությունն այնքան ուժեղացել էր, այնքան հարստացել, որ այդ ձմեռ հիմք դրեց իր լեգալ մամուլին՝ հրատարակելով «Յառաջ» անունով թերթը, որ լայն հիմքերի վրա էր դրված և այդ պատճառով դրամական առատ միջոցներ էր վատնում։ «Մշակի» և նոր թերթի մեջ իսկույն սառնություն սկսվեց, որ շուտով փոխարկվեց թշնամության, թեև «Յառաջի» շուրջը խմբվածները, գրեթե առանց բացառության, «Մշակ»-ականներ էին և «Մշակի» աշխատակիցներ։ Որոշվում էին նոր դիրքեր։ Երկու թերթերը, մնալով բուրժուական մամուլի առաջավոր գծի վրա, իրար հանդեպ բռնեցին այդ գծի երկու ծայրերը. ձախը պատկանում էր դաշնակցական թերթին, աջը՝ «Մշակին», որի համար թե փառք ու պարծանք, եթե մնացել էր, այդ այն էր, որ նա ռուսահայերի մեջ ամենահին պարբերական թերթն էր։ Ամենահինը լինելը վատ չէր, վատը՝ հնանալն էր։ Իսկ որ «Մշակը» հնանում էր անողորմ կերպով, այդ բացահայտ էր դարձնում դաշնակցական թերթը, որ անկախ իր կուսակցական հանգամանքից՝ աչքի էր ընկնում ե՛ւ գրական շնորհքով, ե՛ւ ավելի արմատական գաղափարախոսությամբ, և՛, մանավանդ, պայքարի համարձակ թափով, որի պատճառով նա կառավարության կողմից փակման էր ենթարկվում և լույս էր տեսնում զանազան անունների տակ։

Հիվանդությանս անկողնի մեջ ես մի քանի բարեփոխություններ մտածեցի «Մշակը» հնար եղածին չափ կենդանացնելու համար։ Առաջարկություններս ուղարկեցի խմբագրություն, բայց այդ միջոցին իմ դեմ զզվելի ինտրիգ սարքվեց, որ ինձ ստիպեց հեռանալ այդ թերթից, որին ես տվել էի իմ բոլոր ուժերը քսան և հինգ տարվա ընթացքում։ Պետք է ասեմ, որ խմբագիր Ալեքսանդր Քալանթարը մի չափազանց անուշ մարդ էր, բայց, տարաբախտաբար, անուշ մարդիկ թույլ կամքի տեր են լինում և ենթարկվող։ Գրեթե միևնույնը կարող եմ ասել և խմբագրության մյուս անդամի՝ Հ. Տեր-Մարկոսյանի մասին։ Եվ որովհետև ես բացակա էի խմբագրությունից, ուստի, պարարտ հող ստեղծվեց, որ մի յագոյական հոգի կատարյալ հաղթանակ տանի ինձ վրա։ Իսպառ խզեցինք մեր հարաբերությունները։

Մինչ ես այսպիսի անձնական հոգսերով էի զբաղված, Թիֆլիսում տեղի ունեցավ վաղուց սպասված մի հավաքույթ։ Փոխարքա Վորոնցով-Դաշկովի կարգադրությամբ երկրի զանազան կողմերից հայ և թուրք ազգաբնակչության կողմից ընտրված ներկայացուցիչներ, թվով 60-62 հոգի, եկան Թիֆլիս, փոխարքայական պալատում նիստեր սկսեցին՝ խորհրդակցելու համար հայ-թուրքական կռիվների մասին։ Բանալով համագումարը՝ փոխարքան հայտնեց, թե ինքը շատ է աշխատել

դադարեցնել արյունահեղությունն ու ավերմունքը, բայց հաջողություն չի ունեցել, ուստի ահա կանչել է ժողովրդի ընտրյալ և գիտակ մարդկանց, որպեսզի նրանք խորհուրդ տան, թե ինչ պետք է անել: Եվ իբր թե խեղճ ու անճարակ իշխանավորը, հանձնելով համագումարի նախագահությունն իր օգնական, գեներալ Մալամային, ինքը հեռացավ: Բայց բոլոր նիստերին ներկա էր լինում նրա կինը. շրջապատված պալատական տիկիններով՝ առանձին տեղ էր գրավում մեծ դահլիճի վերնատանը: Ներկա էին լինում նաև Թիֆլիսում գտնվող բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները՝ զինվորական թե քաղաքացիական:

Համագումարը կազմված էր բացառապես երկու ազգերի տիրող տարրերից: Հայերն ուղարկել էին իրենց բուրժուա ինտելիգենցիան, թուրքերը՝ իրենց կալվածատեր ինտելիգենցիան: Աշխատավոր ժողովուրդը՝ արյունահեղ կռիվների իսկական զոհն ու մարտիրոսը, ոչ մի հատիկ ներկայացուցիչ չուներ: Դաշնակցությունը չէր մասնակցում համագումարին, որին բացասաբար էր վերաբերվում: Եվ իրավ, դա մի բարձր պաշտոնական, միաժամանակ և շատ խղճուկ կատակերգություն էր: Այս տեսնում էր ամեն մեկը, որ թեկուզ հարևանցի կերպով ծանոթանում էր համագումարի մեջ տեղի ունեցած խոսակցություններին:

Ամենից բնորոշ և նշանակալից էր թուրք պատգամավորների դիրքը: Հավաքվել էին այնպիսի մոլի պանթուրքիստներ, ինչպիսիք էին Ահմեդ-բեկ Աղաևը, Ալիմարդան-բեկ Թոփչիբաշևը, դոկտոր [Կարաբեկ] Կարաբեկովը և նրանց նման շատ ուրիշները: Համալսարաններում տարիներով նստած այդ բեկերը չքաշվեցին իրենց ներկայացնելու ամենահետադիմական դիրքերի մեջ: Նրանք եկել էին այստեղ իբրև ռուս բյուրոկրատիայի հլու ծառաներ և նրան վերցնում էին իրենց պաշտպանության տակ: «Ոչ ոք,- ասում էին նրանք,- մեղավոր չէ այդ արյունահեղությունների համար իբրև սկզբնապատճառ: Թուրքերը ոչ մի տեղ նախահարձակ չեն եղել, այլ միայն պաշտպանվել են: Միակ պատճառը Դաշնակցությունն է, և, եթե հայերն ուզում են, որ խաղաղություն և հաշտություն լինի, նրանք պիտի ոչնչացնեն Դաշնակցությունը»: Այստեղ, ահա, պանթուրքիստ բեկերը և Նիկոլայի չինովնիկները մի սրտառուչ համաձայնությամբ իրար էին միանում: Նախագահ Մալաման երկրորդում էր այդ խոսքերը՝ այո՛, անհրաժեշտ է ոչնչացնել…

Զվարճալին այն էր միայն, որ թուրք բեկերի փորացավն ուրիշ էր, այսպես ասած՝ Օսմանյան էր, իսկ ռուս բյուրոկրատիան կարծում էր, թե ինքն է միայն նրանց ցավն ու հոգսը օր ու գիշեր: Եվ ինչպե՞ս չկարծեին խեղճ կառավարիչները, երբ կալվածատեր հռետորները պաշտպանում էին գավառական ռուս չինովնիկներին, որոնք ենթարկված էին դաշնակցականների տեռորին: «Մի՞թե նրանք մարդիկ չեն»,- հարցնում էին այդ խեղճ գառնուկների պաշտպանները: Բայց միևնույն ժամանակ նրանք դառնապես գանգատվում էին, թե մահմեդականները զրկված են իրավունքներից, նրանց մտավոր պահանջների վրա ուշադրություն դարձնող չկա: Ոչ ոք, իհարկե, չէր ասի, թե դրա պատճառը հայերն էին, ամեն մեկը գիտեր, որ դա հենց

բեկական պաշտամունքի առարկա դարձած ցարական բյուրոկրատիան է, որ խտրությունների, անհավասարության, տգիտության և այլ այսպիսի անեծքների վրա է հիմնավորում իր բարօրությունը։

Բայց համալսարանական բեկերը մի վայրենի միամտությամբ հայտարարում էին, թե հենց այս պատճառով էլ թուրքերը հարձակվում էին հայերի վրա։ Աղանն իրեն հատուկ ցինիկությամբ ասում էր հայերին. «Դուք զարգացած եք, հարուստ եք, առաջադեմ, մենք ձեր անեծքն ենք՝ երկաթի պես կախված ձեր վզից. դուք պետք է մեզ էլ ձեզ հետ առաջ տանեք։ Դուք կազմակերպություն ունեք, մենք չունենք. կա՛մ մեզ էլ տվեք կազմակերպություն, կա՛մ ահա մենք կսպանենք ձեզ, կքանդենք, կիրդեհենք»։ Եվ ո՛չ նա, ո՛չ ուրիշ հռետորներ երբեք ցույց չտվեցին, թե իսկապես ինչ վնասներ է կրել թուրք ժողովուրդը հայ ժողովրդից, թե կոտորածի, փոխադարձ ինքնաջնջման մեջ իսկապես ինչ կենսական անխուսափելիություն կա։

Այսպիսի անմտություններ էին արտասանվում, որովհետև խելոք, համոզիչ բան չունեին ասելու։ Եթե չլիներ ռուս բյուրոկրատիան, չլիներ և պանթուրքական համածավալ պրոպագանդան, նայելով այդ խղճուկ ու երեխայական բացատրություններին, պետք կլիներ ասել, թե հայերն ու թուրքերը մի ամբողջ տարի է, իրար կոտորում են առանց պատճառի, սխալմամբ, մի վատ երազի տպավորության տակ, որ այդ բոլոր սարսափները պարզ թյուրիմացություններ են։

Այսպիսի բան, սակայն, աշխարհի երեսին չի կարող լինել։ Ես արդեն վերևում բացատրեցի։ Սուլթանականությունը և ցարականությունը մի հարթակի վրա էին կանգնած. կոտորածների միջոցով տկարացնել հայ ժողովրդին և այսպիսով ոչնչացնել հայերի հեղափոխությունը։ Եվ եթե մի րոպե էլ չմոռանանք, որ հայ հեղափոխությունը, լինելով հանդերձ մի ճնշված ժողովրդի արդար դատ, հիմնված էր բոլորովին սխալ և անիմաստ ըմբռնողության, իլյուզիայի վրա, այն է՝ Եվրոպան պաշտամունք՝ ֆետիշական հավատ դարձնելու վրա, այնժամ միանգամայն պարզ կդառնա, որ Կովկասի հայությունն էլ նույն այդ մեծ ստությանը, նույն այդ բազմամյա ցնորքին էր զոհ բերվում։ Ես կարող եմ վկայել, որ հայ-թուրքական կռիվների ամենակատաղի ժամանակ քչերը չէին գտնվում, որոնք ասում էին. «Թող Վեհափառը (կաթողիկոսը) դիմում անե Եվրոպային»։ Դժբախտ ժողովուրդ, դժբախտ պաշտամունք։

Թուրք պատգամավորների հայտարարություններն այն աստիճանի սպառիչ լիակատարությամբ էին պարզում ժողովրդական մեծ դժբախտության ամբողջ բովանդակությունը, որ ես ավելորդ եմ համարում հայ պատգամավորների ճառերին դիմելը։ Թուրքերն իրենց տակտիկային այնքան հավատարիմ մնացին, որ երբ հայերն առաջարկեցին վնասների հատուցման սկզբունքը դնել երկու կռվող ժողովուրդների վրա, նրանք սաստիկ ընդդիմացան այդ մտքին։ Մերժվում էր նաև սկզբնապատճառ եղող և, առհասարակ, հանցավոր մարդկանց պատժելու առաջարկը։ Բայց դրա

փոխարեն թուրքերը նորից և նորից պահանջ էին մտցնում, որ հայերը ոչնչացնեն իրենց Դաշնակցությունը։ Ի պաշտպանություն Դաշնակցության մի ճառ արտասանեց պատգամավոր Ալեքսանդր Խատիսյանը, որն այն ժամանակ այդ կուսակցության անդամ չէր, բայց երևի զգում էր, որ մի ժամանակ պիտի դառնա նրա շեֆը։ Դա, ինչպես վկայում էին լրագրերը, մի շատ ազդու և տաղանդավոր ճառ էր, որ նվաճեց ամենքին, նույնիսկ և թուրք պատգամավորներին։ Ասել էին, թե Դաշնակցությունը չարությամբ ու թշնամությամբ է լցված դեպի մյուս ազգությունները։ Խատիսյանը հերքել էր այդ մեղադրանքը՝ բերելով մի կտոր Դաշնակցության նոր ծրագրից, որի մեջ պահանջվում էր Կովկասի համար ֆեդերատիվ կազմակերպություն՝ ռուսական սահմանադրական պետության մեջ։

Սա, սակայն, չէր փոփոխում Դաշնակցության հիմնական բնավորությունը։ Թուրքերը լավ էին հասկանում, որ իրենց համար Դաշնակցության հարցը Թուրքիայի հարցն է։ Իսկ ռուս բյուրոկրատիան տեսնում էր իր առջև բացարձակ հակապետական, ցարիզմի թշնամի մի կազմակերպություն։ Ինձ մի լավատեղյակ աղբյուրից այն ժամանակ հաղորդեցին, որ Կովկասյան զինվորական շտաբի ընդհանուր ժողովին բավական մտահոգություն էր պատճառել Դաշնակցության հանրապետական դավանանքը։ Վրացական սոցիալ-դեմոկրատիան համարվում էր թույլ և նրա հետ հեշտ կարելի էր հաշիվ տեսնել։ Մինչդեռ Դաշնակցությունն ուներ ուժեղ զինվորական կազմակերպություն։ Յոթ հազար զինվորի առասպելը դեռ ապրում էր շտաբային շրջանակներում։ Եվ այդտեղ տրամադրություն էր ստեղծվում բանակցություններ սկսելու Դաշնակցության հետ՝ որոշ համաձայնության հանգելու համար։ Մի հայ սպայի հանձնարարված էր նախապես հող պատրաստել։ Շտաբը համաձայն էր ընդունել Դաշնակցության ծրագիրը, եթե նրա միջից հանվեր «հանրապետությունը»։ Ես հաստատ գիտեմ, որ այս ուղղությամբ բանակցություններ սկսվեցին, բայց չգիտեմ, թե ինչով դրանք վերջացան։

Հայ-թուրքական համագումարը վերջացավ 8-9 օր նիստեր գումարելուց և վիճելուց հետո։ Պատգամավորների համար կոչունք սարքվեց պալատում, Թիֆլիսի նահանգապետը նրանց ճաշ տվեց։ Կարծես թե ահագին գործ էր կատարել համագումարը, և հայ-թուրքական առեղծվածը լուծված էր լավագույն կերպով ու ընդմիշտ։ Մինչդեռ նա, եթե մի դրական նշանակություն ունեցել էր, դա այն էր միայն, որ բաց էր արել հասարակության առջև մի տարի տևող արյունահեղության ամբողջ մղձավանջային բովանդակությունը։ Համագումարը գործողության մի ծրագիր մշակեց և տվեց կառավարությանը։ Բայց այդ ծրագրի մեջ շատ քիչ բան կար օրվա պահանջին համապատասխանող։ Հրդեհն անմիջապես հանգցնելու, տառապող աշխատավոր զանգվածներին հանգստություն, աշխատանքի հնարավորություն ապահովելու ոչ մի իրական միջոց։ Այս մասին կարելի է պատկերացում կազմել հենց այն բանից, որ թուրք պատգամավորները ընդհանուր և ձրի ուսման պահանջն էին մտցնում, կարծես այդ գործը կապ ուներ հայ-թուրքական կռիվների հետ։

Համագումարը փակելիս կոմս Վորոնցով-Դաշկովն իր ճառի մեջ հայտարարեց, թե ինքը չստացավ համագումարից այն, ինչ պահանջել էր նրանից, այսինքն՝ պարզ ցուցումներ, թե ինչ անել: Ուստի մնում է, որ ինքը շարունակի գործել: «Թագավոր կայսրը,- ասաց նա,- կամենում է, որ դադարեցվեն հայ-թուրքական կռիվները, և դրանք կդադարեցվեն»:

Բայց սա մի նոր բարձր պաշտոնական սուտ էր: Հայ-թուրքական ընդհարումները շարունակվեցին այնուհետև վեց ամսից ավել: Իսկ ռուս բյուրոկրատիայի ձեռնարկած նոր միջոցն այն էր, որ պատժիչ արշավախումբ ուղարկվեց Ղարաբաղի Վարանդա գավառը՝ բացառապես հայերին պատժելու համար: Թե ինչու էին միայն հայերը պատիժ կրում, իսկ մյուս թշնամի կողմը բոլորովին հանգիստ էր թողնվում, սա ցարական չինովնիկների մեկ այլ գաղտնիքն էր: Ընդհարումները վերջանալուց հետո՝ անգամ դատաստանական գործեր սկսվեցին դարձյալ միայն հայերի դեմ, որոնցից շատերը Սիբիր աքսորվեցին, մինչդեռ թուրքերն ազատ մնացին պատիժներից: Գաղտնիքը շատ հեշտ է բացվում:

Պատժիչ արշավախումբը մի նոր աղետ դարձավ Վարանդայի համար: Ցարի «երիտասարդ եր» զորքերը գազանություն չթողեցին, որ չկատարեն հայ գյուղերում: Կողոպուտը, էկզեկուցիան, տուգանքները, ծեծերը, նույնիսկ պառավ կանանց բռնաբարումը սովորական բաներ էին այդ «քրիստոսասերների» համար: Այս դժբախտությունները կատարվում էին հայ-թուրքական համագումարից անմիջապես հետո: Ահա մի կտոր այն հեռագրից, որ Շուշիի կանայք ուղարկեցին Նիկոլայ Բ-ի կնոջը:

«Մի ամբողջ տարվա հայ-թուրքական կոտորածի արյունահեղ սարսափներից հետո մեզ՝ հայերիս վրա պայթեց մի նոր և ավելի ահեղ արհավիրք, որի նմանը մեր պատմությունը չի հիշում նույնիսկ մահմեդական տիրապետության ժամանակներից: Մեր գավառն է ուղարկված կազակների թռուցիկ խումբը, իբրև թե հայերին և թուրքերին խաղաղեցնելու և նրանց մեջ կարգը և հանգստությունը վերականգնելու համար: Այս զորախուբը, որի հրամանատարն է փոխգնդապետ Վիվերինը և որի գործողությունները ղեկավարում են գավառապետ Ֆրեյլիխը և հաշտարար միջնորդ Երմոլաևը, գավառի խաղաղ հայ ազգաբնակչության վրա այնպիսի սարսափելի բաներ է գործադրում, որոնց նկարագրելը մարդու երակների մեջ արյուն է սառեցնում: Զինաթափ անելու պատրվակով կազակները մտնում են անպաշտպան ազգաբնակչության տները, կողոպտում են բոլոր արժեքավոր իրերը, ոչնչացնում և անպետք դարձնում ժողովրդի վերջին ստացվածքը, թափում են հացահատիկների ամբողջ պաշարը ցեխի մեջ և հենց այստեղ էլ ոտնահարում, տրորում են:

Գյուղացիներին գանակոծում են և ենթարկում ամենասոսկալի տանջանքների, որոնց պատճառով մահվան դեպքերը հազվագյուտ չեն, և կատարում են այնպիսի շատ ուրիշ բաներ, որպիսիները չեն կատարվել նույնիսկ թշնամու երկրում: Եվ ահա

դեռևս թուրքերի ձեռքով հրդեհված գյուղերի և քաղաքների մխացող ավերակների առաջ երևում են նոր ավերակներ՝ կազակների ձեռքով կատարված, և թուրքերի ձեռքից ընկած զոհերի դեռևս թարմ գերեզմաններին կից ավելանում են նորերը՝ կազակների շնորհիվ։ Եվ այդ բոլորը կատարվում է նրանց հրամանատարների ներկայությամբ։ Բայց որ ամենասարսափելին է և, որ կարող է խորապես վրդովեցնել ամեն մի կնոջ, դա այն է, որ պղծվում է ամեն մի կնոջ համար ամենանվիրական սրբությունը՝ նրա կուսությունը։ Իրենց ամուսինների, եղբայրների և հայրերի աչքի առաջ բռնաբարվում են կանայք, քույրերը և աղջիկները, սկսած 60 տարեկան պառավներից մինչև 11 տարեկան աղջիկները։ Չեն խնայում անգամ երկունքով բռնված կանանց անկողինները»։

Այս բոլորը իսկապես սարսափելի է, բայց եզակի և անօրինակ չէր 1905-ի համառուսական իրականության մեջ, երբ արյունարբու ցարիզմը մահվան վերջին տագնապի մեջ կռվում էր հեղափոխության դեմ պատժիչ արշավանքների միջոցով. Մերձբալթյան նահանգները, Ռյազանի երկաթուղին դեռ ավելի վատ օրեր են տեսել։ Եվ Ղարաբաղի խժդժություններն այնքան զարմանալի չէին, որքան զարմանալի է այն հանգամանքը, որ Վորոնցով-Դաշկովը՝ այն մարդը, որի պաշտոնյաներն էին կատարում այդ վայրագությունները մարտիրոս հայ գեղջկուհիների վրա, համարվում էր հայասեր, հայերին հովանավորող։ Այսպես էին համոզված մանավանդ վրաց կալվածատիրական նացիոնալիստական շրջանակները, և այս մասին նրանք սուր անբավականություն էին հայտնում նույնիսկ իրենց մամուլի մեջ։

Լավ հիշում եմ, որ մի անգամ, երբ Վորոնցով-Դաշկովի հիվանդությունը սաստկացել էր, և հայերը եկեղեցական մաղթանքներ էին կատարում նրա արևշատության համար, վրացիները չարախնդությամբ ասում էին նրանց. «Հը՞, ինչ է, ձեր թագավորը մեռնո՞ւմ է, հա՞»։ Այսպես էր և մյուս ազգությունների վերաբերմունքը։ Եվ այս հողի վրա էլ էր ատելություն աճում հայերի դեմ։ «Ինչո՞ւ,- ասում էին ամենքը,- հայերն առաջինը լինեն մեր երկրում, հովանավորվածի, արտոնվածի դրություն վայելեն»։ Մինչդեռ իրողությունն ահա՝ Ղարաբաղի 60-ամյա պառավները՝ բռնաբարված կազակների ձեռքով։ Հետագայում մենք պիտի տեսնենք վորոնցովդաշկովյան այնպիսի «բարերարություններ», որոնց առաջ միանգամայն պիտի նսեմանան ու գունատվեն Վարանդայի գազանությունները։ Եվ, այնուամենայնիվ, «հայոց թագավոր» էր Վորոնցով-Դաշկովը մինչև Կովկասից հեռանալը։

Այս ի՞նչ առեղծված էր։ Այն պետք է այստեղ պարզել, որքան որ հնարավոր է։

Իշխան Գոլիցինը հայության անհաշտ թշնամին էր և իր այս գիծը տանում էր բացահայտ, ամենքի համար պարզ քաղաքականությամբ։ Կասկածի որևէ տեղիք չէր մնում, սխալվել կամ մոլորվել չէր կարելի։ Մարդը կանգնած էր բաց դեմքով, իր ամբողջ հասակով և հարվածներ էր տալիս։ Վորոնցով-Դաշկովի

քաղաքականությունն այդպես չէր, այլ վարագուրված, մշուշապատ և հետևաբար՝ դավաճանական, գաղտնի թակարդներով լցված։ Այս երկու դիրքերի համեմատությունը հարկադրում է ասել բացարձակորեն, որ Գոլիցինն իր բաց ու պարզ թշնամական քաղաքականությամբ պակաս վնասակար եղավ հայության համար, քան Վորոնցով-Դաշկովն իր «հայասիրությամբ»։ Այս հայասիրական քաղաքականությունը կերտելու և հյուսելու մեջ մեծ դեր էր կատարում կոմսուհի Վորոնցովա-Դաշկովան՝ փոխարքայի կինը։ Սա մեկն էր այն կանացի բնավորություններից, որոնք կառավարում են աննկատելի կերպով, մատների վրա ամբողջ աշխարհներ են խաղացնում։

Իր քաղաքական ժանյակը հյուսելու համար կոմսուհին հենք դարձրեց Թիֆլիսի փոխարքայական պալատում մեկ դարից ավել բույն դրած էտիկետի հիմնական հեղաշրջումը։ Մինչև նրա գալը Կովկասի կառավարչապետերին և փոխարքաներին պալատում շրջապատում էր առավելապես վրաց ազնվականությունը։ Հայ ազնվականությունը չափազանց աննշան թիվ էր կազմում, այն էլ՝ գրեթե բացառապես Թիֆլիսի նահանգին էր պատկանում, հետևապես կազմում էր նույն վրացական ազնվականության մի մասնիկը միայն, որի ներկայությունը, գրեթե, միանգամայն աննկատելի էր։ Այնպես որ, սովորական խոսք ու իրողություն էր, որ հայը մուտք չունի փոխարքայական պալատի մեջ՝ իբրև նրան ընտանի մի տարր։ Հայը խանութպան, կապալառու, վաճառական, սա հասկանալի էր, բնական. բայց որտե՞ղ էր տեսնված, որ այդպիսի զբաղմունքներից մթնոլորտ կազմվի որևէ հրամայող պալատի համար։ Նույնիսկ վարչական բարձր պաշտոններ գրավող հայերի թիվը չափազանց աննշան էր։ Այնպես որ, Գոլովինսկի պրոսպեկտի վրա բարձրացած պալատն, ընդհանրապես, մի փակված բերդ էր հայերի համար։

Կոմսուհի Վորոնցովա-Դաշկովան բաց է անում այդ բերդի դռները, և նրա կախարդական կամարների տակ երևան են գալիս նոր տեսակի «ընտրյալներ»՝ հայերը։ Իհարկե դրանք իշխաններ կամ կոմսեր չեն, այլ ավելի շուտ գյուղական քյոխվաների կամ գործակալ քահանաների որդիք, ովքեր կա՛մ հոգևորականներ են, կա՛մ մտավորական պարապմունքի տեր մարդիկ։ Մերձեցումն սկսվեց հոգևորականներից։ Եվ միջնորդն է մի սիրիացի՝ Մծբնա Հայրապետ Հակոբը, որ թեև 1500 տարի առաջ է մեռել, բայց այնքան պինդ ոսկորներ է ունեցել, որ նրանցից մի կտորն այսօր էլ գտնվում է Թիֆլիսի վանքի Մայր եկեղեցում՝ իբրև մասունք։ Կոմսուհի Վորոնցովա-Դաշկովան իրեն վաղուց գրել էր Մծբնա Հայրապետի հոգևոր դուստրը և հաճախ գնում էր ոսկորի կտորը համբուրելու վանքի եկեղեցում։ Այսպիսով ահա, Թիֆլիսի հայոց առաջնորդարանը մոտեցավ պալատին, և առաջնորդ Սաթունյան արքեպիսկոպոսը, թեկուզ ռուսերեն խոսել չգիտեր, պալատում դարձավ свой человек։

Բայց կարևոր է իմանալ նաև, որ Մծբնա Հակոբ Հայրապետի մասունքների մի բաժինն էլ Էջմիածնում էր գտնվում։ Եվ… ահա բոլորվում է հայ ժողովրդի

ճակատագիրը։ Էջմիածնի վանքն էլ դառնում է փոխարքայական պալատի մտերիմը, ինչպես մի ժամանակ՝ իշխան Վորոնցովի փոխարքայության օրոք։ Տարբերությունն այն էր, որ այն ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոսն էր (Ներսես Ե) պալատի մտերիմը, իսկ այժմ նույն դերի մեջ էր մի պարզ վարդապետ՝ Մեսրոպ Տեր-Մովսեսյանը։ Այս մարդուն ես ճանաչում եմ դեռ աշխարհական ժամանակից, երբ նա ուսանող էր, և ճանաչում եմ իբրև ազնիվ, անշահամոլ, շիտակ, մանավանդ շիտակ, ինչպես ասում են մեզ մոտ՝ «դուզյախոս» և կողքով մարդու։ Գործելու եռանդով լցված՝ նա որոնում էր գործունեության փոքրիշատե ազատ ասպարեզ և, ինչպես շատերն այն ժամանակ, բռնեց բոլորովին սխալ ճանապարհ՝ փարաջա հագավ։ Իսկ փարաջան բազմաթիվ այլ պակասությունների հետ ունի մի խոշոր, կարելի է ասել ամենակուլ վատություն՝ փառասիրություն։ Ռամկավարական սկզբունքներով տոգորված Մեսրոպը վերջիվերջո չկարողացավ դիմադրել փարաջայի այդ հատկությանը և սկսեց տոգորվել նրանով։ Ահա և մի պարզ բացատրություն, թե ինչու նա այնքան հափշտակվեց Վորոնցով-Դաշկովի պալատով և սկսեց ծառայել երկու տերերի՝ գիտության և պաշտոնավարական գործունեության, երկուսին էլ վատ ծառայելու պայմանով։

Պատահականությո՞ւն էր, կույր բա՞խտ էր, որ Մեսրոպ վարդապետն էր արժանանում կոմսուհու համակրանքին, չգիտեմ։ Գիտեմ միայն, որ նրա կարգակիցներից մի քանիսը, նույնպես շենքով-շնորհքով, գիտուն մարդիկ, շատ են աշխատել նույնպես արժանանալ, բայց չեն կարողացել։ Առհասարակ Էջմիածնում կոմսուհուն իրենց մարդն էին համարում, անվանում էին նրան тетенька։ Ես ինքս տեսել եմ իմ տանը, հայելու առաջ կապիկի կծկումներ անող և ինձանից մուրացած ռուսերեն բառերը անգիր անող մի վարդապետի, որ հագուստեղենի խանութից վարձու վերցրեց մի մեծագին մուշտակ, հագավ, գնաց պալատ՝ կոմսի կամ կոմսուհու մոտ շնորհ գտնելու ակնկալությամբ, բայց, իհարկե, ապարդյուն։

Եվ այսպես, ուրեմն, կազմվեց հայերի մեջ «պալատականների» շրջան և կազմվեց ընտրությամբ, խիստ խտրականությամբ։ Պալատականներն, իհարկե, խիստ շողոքորթված էին։ Ես նրանց շրջանում լսել եմ այսպիսի խոսքեր. «Սիրելի բարեկամ, բարև, ասացեք՝ ի՞նչ լուրեր ունիք պալատից»։ Կամ թե՝ «Ասացեք պալատում, որ ես այստեղ երկար սպասել չեմ կարող, եթե գալու են, թող շուտ գան» (հարցը վերաբերում էր Վորոնցով-Դաշկովների մի ճանապարհորդության)։ Համաձայնեք, որ այսպիսի պայմանների մեջ ընկած պարզ մարդկանց գլուխներն իրենք իրենց պտույտ կգան։ Եվ ես միշտ տեսա այդ գլուխները պտույտ գալիս։

Պալատականների շրջանը մեծ չէր, շատ փոքր էր, իսկ ամենից շատ աչքի ընկնողները երեք-չորս հոգուց ավելի չէին։ Ես արդեն տվեցի մի անուն։ Նրան կավելացնեմ Ալեքսանդր Խատիսյանի և Սամսոն Հարությունյանի անունները։ Առաջինը քաղաքային վարչության անդամ էր, հետո և քաղաքագլուխ։ Երկրորդը Բարեգործական ընկերության նախագահն էր և անուն էր վաստակել իր եռանդուն

կազմակերպչական կարողությամբ, որի շնորհիվ մի խոշոր հասարակական-մշակութային հիմնարկություն էր դարձել Բարեգործական ընկերությունը։ Վերջում նա շեղվեց գործունեության այդ շատ օգտակար եղանակից և մտավ քաղաքական գործունեության ասպարեզ, ուր և, ինչպես ասում են, կոտրեց իր ոտը։

Այս էր, ահա, այդ երևույթը՝ հինգ-վեց մարդկանց մուտքը պալատ, որ դարձնում էր Վորոնցով-Դաշկովին «հայասեր», «հայոց թագավոր»։ Բայց հայ ժողովուրդը ոչինչ հիմք չուներ օտար դիտողների մոլորության մեջ ընկնելու։ Նա շատ բարեբախտ կլիներ, եթե չունենար պալատական ֆավորիտների շրջան, որ միայն հարևանների նախանձն ու ատելությունն էր գրգռում, քնացնում էր հասարակական գիտակցությունը և, որ ամենից չարն էր, կարող էր ամեն րոպե գործիք դառնալ ցարական բյուրոկրատիայի ձեռքին։

Ժ

1906թ. ամռանն էլ ես բժշկվում էի Էսենտուկիում և տեսա, թե որպիսի արագությամբ Ստոլիպինի կառավարությունը ճնշեց այն ցույցերը, որոնք իբրև բողոքի արտահայտություններ սկսել էին կազմակերպվել առաջին Պետական դումայի արձակման առիթով։ Բայց մինչ Ռուսաստանը դեռ չվայելած՝ բարձրացող ռեակցիային զոհ էր տալիս իր անդրանիկ ներկայացուցչական հիմնարկությունը, հայերի մեջ նոր ծայր էր առնում մի ներկայացուցչական կատակերգություն, որ ամբողջովին Դաշնակցության գործն էր։

Հայտնի է, որ 1860-ականին թուրքահայերն ունեցան իրենց Սահմանադրությունը։ Երկու խոսքով եթե բնորոշելու լինենք այդ խոշոր հասարակական շարժումը, կստանանք «Սահմանադրական պատրիարքություն» հասկացողությունը։ Կ.Պոլսի հայոց պատրիարքի իշխանությունը մինչև այդ միահեծան էր, այնուհետև դարձավ սահմանափակված։ Եվ սահմանափակողը ժողովրդական ներկայացուցչությունն էր, որ իր ձեռքն էր առնում պատրիարքի բոլոր վարչական իրավունքները, իսկ նրան տալիս էր գործադիր իշխանության նախագահի դեր։ Այժմ նույնպիսի սահմանափակման ուղում էին ենթարկել կաթողիկոսական իշխանությունը և սրա համար կանչում էին հիմնադիր ժողով, որ պիտի գումարվեր Էջմիածնում, օգոստոս ամսի երկրորդ կեսին։ Խրիմյան կաթողիկոսը, որ զառամությունից արդեն գրեթե մի կենդանի դիակ էր, ստորագրել էր Սիրական Տիգրանյանի և Գալուստ Տեր-Մկրտչյանի կազմած կոնդակը, որով ընտրություններ էին նշանակվում քառանդամ սիստեմով, և ընտրության իրավունք տրվում էր նաև իգական սեռին։

Էսենտուկի էր եկել նաև Մեսրոպ վարդապետը, որին նոր էր հանձնվել ճեմարանի տեսուչի պաշտոնը։ Նա նկատի առնելով, որ ես բոլորովին թողել եմ «Մշակի» խմբագրությունը, առաջարկեց ինձ հայոց նոր պատմության և նոր գրականության պատմության դասեր ճեմարանի լսարանական բաժնում, և ես,

առանց երկար տատանվելու, հանձն առա, որովհետև ապրուստի ուրիշ ոչ մի միջոց չունեի։ Այս մի մեծ փոփոխություն էր կյանքիս մեջ, որովհետև երբեք ուսուցչություն չէի արել և չգիտեի՝ արդեն շատ խախտված առողջությունս պիտի թույլ տա՞ արդյոք դպրոցական պաշտոնյա լինել։

Շուտով լուր առա և այն մասին, որ Կարսի մոտ եղած մի գյուղից ես ընտրված եմ Էջմիածնի սահմանադիր ժողովի պատգամավոր, ուստի սովորական ժամանակից առաջ ճանապարհվեցի Ղարաքիլիսա, ուր գտնվում էր ընտանիքս։ Այստեղից ես մի ճանապարհորդություն կատարեցի դեպի Անի և հարավային Շիրակ, որ ինձանից մոտ երկու շաբաթ ժամանակ խլեց։ Այս միջոցին արդեն բացվել էր, այն էլ շատ աղմուկով, Էջմիածնի հիմնադիր ժողովը։ Պատգամավորների ճնշող մեծամասնությունը դաշնակցականներից էր բաղկացած, որ և տվել էր ժողովին բացառապես սոցիալիստական գույն և, այս ուղղությամբ վարելով իր զբաղմունքները, ընդհարվել բուրժուական-պահպանողական փոքրամասնության հետ, որ թողել էր ժողովը՝ հրաժարվելով մասնակցության ամեն մտքից։

Օգոստոսը մոտենում էր իր վերջին, երբ ես ընտանիքով գնացի Էջմիածին։ Այստեղ ես ճեմարանի ննջարանում զետեղված տեսա մի ամբողջ պառլամենտ՝ վերին աստիճանի աղքատ ու անհրապույր արդուզարդի մեջ։ Նույնիսկ հասարակ աթոռներ և նստարաններ չկային, և պատգամավորները նստում էին հին ու ճռճռան տաբուրետների վրա։ Բայց նախագահությունը համեմատաբար ավելի օրինավոր սարք ու կարգի մեջ էր։ Կարմիր մահուդով ծածկված սեղանի ետևում նստած էր նախագահ Սիմոն Զավարյանն իր երկու օգնականների ընկերակցությամբ և ղեկավարում էր վիճաբանությունները։ Ինչպես վայել է փոքրիշատե կարգին պառլամենտին, սենյակում շարված տաբուրետները բաժանված էին երկու մասի՝ ձախ և աջ։ Աջն արդեն գրեթե բոլորովին ամայացած էր, և դաշնակցական ձախը մնացել էր առանց ընդդիմադիր հոսանքի, առանց օպոզիցիայի։ Ես տեղավորվեցի աջի ամայության մեջ և, գրեթե առանց մասնակցություն ունենալու վիճաբանությունների մեջ, լուռ ուսումնասիրում էի այս դաշնակցական ձեռնարկումը, որ աղմուկ շատ էր հանել և տակավին շարունակում էր հանել։

Թուրքահայերի Սահմանադրությունը, բարենորոգելով հին միանձնյա գործավարությունը, նոր սահմանած կարգերի հիմք և կենտրոն թողել էր եկեղեցուն, որ դարձյալ իրավատեր և հրամայող հիմնարկություն էր մնում։ Այդ հիմնարկությունն ավելի ևս ուժեղացնելու համար Սահմանադրությունը թույլ էր տվել նույնիսկ կաստայական սկզբունքի կիրառում։ Հոգևորականները բացի նրանից, որ իրավունք ունեին ընդհանուր հիմունքներով մասնակցելու ընտրություններին, այսինքն՝ ընտրելու և ընտրված լինելու, կազմում էին եկեղեցական համագումար, որ ընտրում էր Կրոնական ժողով՝ Ազգային Ժողովի կողմից ընտրված Քաղաքական ժողովի հետ գործադիր իշխանություն կազմելու համար։ Ինքն Ազգային ժողովն էլ իր

գործունեության մեծագույն մասը նվիրում էր զուտ եկեղեցական հարցերի՝ կաթողիկոսների, պատրիարքների, առաջնորդների ընտրությանը։

Այսպես, ուրեմն, Կ.Պոլսի Սահմանադրությունը միանգամայն հասկանալի էր, ուներ իր կատարյալ raison d' etre-ն։ Մինչդեռ Էջմիածնում… նորաթուխ դաշնակցական սոցիալիստները մի հին վանքում, եպիսկոպոսների և վարդապետների հովանավորությամբ ու ղեկավարությամբ, ուզում էին իրականացնել սոցիալիստական դրախտ։ Ահա՛ ինչն էր ծաղրական դարձնում այդ ամբողջ ձեռնարկումը։ Սոցիալիզմն իրեն անհաշտ թշնամի էր ընդունում կրոնն ու եկեղեցականությունը, իսկ դաշնակցականներն ուզում էին այն տանել պատվաստել այդ թշնամի միջավայրում, դնել այն եկեղեցու հովանավորության տակ։ Դեռ երբեք, կարծեմ, այսքան կոպիտ կերպով աղավաղված չի եղել սոցիալիզմի էությունը, նրա սրբություն սրբոցը։ Վիճաբանությունների մեջ իրար էին բախվում (հաճախ բավական սուր կերպով) Դաշնակցության ձախ կամ երիտասարդ և աջ թևերը։ Երիտասարդների ներկայացուցիչն էր ուսանող Արտաշես Չիլինգարյանը, որ ժողովներում (բայց մանավանդ ժողովներից դուրս) մտրակում էր հոգով-մարմնով ազգային, կարելի է նույնիսկ ասել՝ ուղղափառ-լուսավորչական կուսակցությանը՝ դեպի ձախ, դեպի սոցիալիզմ։ Ինքը՝ Չիլինգարյանը, հարած էր Էսէռության և շարունակ սպառնում էր, թե կմտնի Էսէռների կուսակցության մեջ, եթե Դաշնակցությունը կարգի չգա։ «Ի՞նչ կասեն Էսէռները… Ամոթ չէ՞, որ լինելով սոցիալիստ՝ եկել մտնել եք այս վանքի փեշերի տակ»,- ասում էր նա շարունակ, և նրա խոսքը կրակոտ էր, ազդու, իսկապես հարկադրում էր, որ դաշնակցական ծանր մարմինը ժաժ գա…

Եվ ժաժ էր գալիս այդ մարմինը ոչ միայն այն ուղղությամբ, որ ցույց էր տալիս Արտաշես Չիլինգարյանը իր՝ գրեթե վախ ազդող հարցով՝ «Ի՞նչ կասեն Էսէռները»։ Բարձրանում և ահեղ կերպարանք էր առնում նաև հակառակ ուղղությունը, որ գալիս էր ցույց տալու, թե Դաշնակցությունն այլևս մի կուսակցություն չէ, այլ տարամերժ տարրերի մի արհեստական համախմբում։

Էջմիածին հասած օրը ես չկարողացա սենյակ գտնել ընտանիքիս համար, ուստի իջա հյուրանոցում, որ գտնվում էր ճեմարանի ետևում։ Այդ «հյուրանոց» հորջորջվածն իրականում մի գինետուն էր, որի ետևում, պատշգամբի վրա վարձու տրվելիք երկու թե երեք սենյակ կար։ Նույն օրը երեկոյան, երբ մենք պատրաստվում էինք քնելու, ծառան ինձ հայտնեց, թե դրսում ինձ հարցնող կա։ Դուրս եկա։ Առջևս կանգնած էին երկու անծանոթ մարդիկ, որոնք ինձ խնդրեցին անց կացնել իրենց հետ մի կես ժամ։ Նստեցինք պատշգամբում։ Անծանոթները խորոված պատվիրեցին ծառային։ Նրանցից մեկը, որ ասաց, թե ինքը ղազախեցի Շխալին է, կոպիտ ու անտաշ ձևերով մի մարդ էր, երևի բոլորովին անգրագետ։ Ես թեև չէի տեսել նրան, բայց գիտեի, որ բավական հայտնի մի հայդուկ էր, որ անուն էր հանել մանավանդ հայ-թուրքական կռիվների մեջ Ղազախում։ Նրա ընկերը խմբապետ Միհրանն էր՝ թուրքահայ, ավելի մեղմ ու կիրթ ձևերով և բավականին կարդացած։ Թուրքահայ

խմբապետների մեջ պատվավոր տեղ էր գրավում, փառաբանված էր, որովհետև զինված խումբ էր տարել Թուրքիա, բայց հենց սահմանի վրա՝ Մոսուն գյուղում կռվի էր բռնվել օսմանյան մի զորամասի հետ և քաջությամբ կռվելով՝ հետ քաշվել դեպի ռուսական սահմանը։

Շխալին ձկան լռության մատնվեց, իսկ Միհրանը բաց արավ իմ առջև մի ամբողջ ծրագիր։ Երկուսով եկել էին այստեղ՝ հիմնադիր ժողովը ցրելու և զինվորական դիկտատուրա հաստատելու համար, որ պիտի դատի ենթարկեր ժողովի բոլոր դաշնակցական անդամներին։ «Որովհետև,- ասում էր,- նրանք հանդգնել են ոտքի տակ տալ կուսակցության բուն և միակ իսկական նպատակը։ Դաշնակցությունը հիմնված է ոչ թե սոցիալիզմի համար, այլ թուրքահայերի դատը պաշտպանելու համար։ Եթե ես նրա շարքերի մեջ եմ, ապա պարզապես այն պատճառով, որ ուխտել եմ վրեժ հանել թուրքերից, որոնք սպանել են իմ քույրերին և եղբայրներին։ Այսպես է և ամեն մի ուրիշ թուրքահայ։ Մենք սոցիալիզմից ոչ մի հասկացողություն չունենք, նահապետական ժողովուրդ ենք և որոնում ենք գլուխ դնելու մի ապահով տեղ։ Մեր ի՞նչն է սոցիալիզմը, ինչո՞ւ համար պիտի կռվենք և թշնամանանք Ռուսաստանի հետ, որ մեր դատը պաշտպանողներից մեկը պիտի լինի»։

Ահա թե ուր էր հասել բանը։ Միհրանն իր ընկերոջ հետ հենց այդ օրն էր եկել Թիֆլիսից և ինձ բավական առիթներ տվեց կռահելու, որ նրան շատ բան ներշնչել էր Թիֆլիսի բուրժուազիան։ «Մշակի» խմբագրատանը նրանց երկուսին ընդունել են հաճությամբ։ Ժողով են կազմել և Թիֆլիսի հարուստները (տվեց [Ալեքսանդր] Մելիք-Ազարյանի անունը), խոստացել էին դրամական առատ նպաստ։ «Մշակի» մեջ Միհրանն արդեն տպագրել էր մի քանի հոդված։ Մի մեծ հոդված էլ շարված էր և պիտի լույս տեսներ մյուս օրը, բայց խմբագրությունն այնքան ուշադիր էր եղել դեպի իր նոր աշխատակիցը, որ նրա ձեռքն էր տվել սրբագրական փորձի թերթը։ Վերջում մի քանի խոսք էլ Շխալին ավելացրեց, և ես այդ խոսքերի մեջ պարզ տեսա կռիվը արհեստ դարձրած մի մարդու, որին սպառնում է գործազրկությունը։ Հայ-թուրքական կռիվները դեռ շարունակվում էին այն միջոցին էլ, երբ Դաշնակցությունը քափ ու քրտինք էր թափում վեղարավոր սոցիալիզմ ստեղծելու համար։ Բայց ի՞նչ կլինի, եթե այդ սոցիալիզմն իրականանա և հայդուկությունն ավելորդ դառնա։ Շխալին թույլ չի տա, որ կռվող մարդիկ մնան առանց պարապմունքի և մանավանդ առանց ռոճիկի և հասույթի։

Այսպես գլուխ էր բարձրացնում միհրանականությունը, որ գալիս էր հարվածելու Դաշնակցությանն աջից և որ ահագին գլխացավանք էր բերում նրան, մասնավորապես ներկուսակցական արյունահեղություն։ Ինչպես տեսնում եք, այդ մի բարդ երևույթ էր, որի մեջ իրար գալիս-հանդիպում էին զանազան տեսակի անձնական, կուսակցական և դասակարգային շահեր։ Թեև Միհրանն ինձ շարունակում էր հավատացնել, թե իր ծրագրած զինվորական դիկտատուրան լոկ

գաղափարական շարժառիթներ ունի, բայց ես հավատացած էի, որ այդ շարժառիթները գործի չէին փոխվի, եթե Թիֆլիսի հայ հարուստները չխոստանային քաջ խմբապետի ձեռքում համրել 20-25 հազար ռուբլի, և եթե Շխալին համոզված չլիներ, թե հենց այդ հազարներն էլ կգան դրականապես լուծելու իրեն անհանգստացնող առեղծվածը, այն է՝ թե ինչպես պետք է գոյություն պահպանել ֆիդայական արհեստի վերացումից հետո։

Զինվորական դիկտատուրան, որ սոսկ մի դաշնակցական արկածախնդրություն էր, պիտի հայտարարվեր իբր թե սեպտեմբերի 1-ին։ Ես ուզեցի իմանալ, թե արդյո՞ք Միհրանը ցանկություն չունի վաղօրոք խոսելու այստեղ հավաքված դաշնակցական շեֆերի հետ, առհասարակ ինչպե՞ս է վերաբերվում նրանց։ Վերաբերմունքը միանգամայն բացասական էր։ Կատաղություն պատճառում էին մանավադ նրանք, ովքեր առանձին մոլեգնությամբ էին խաչվում սոցիալիզմի համար (այդպիսիք էին, օրինակ, Եղիշե Թոփչյանը, Լևոն Աթաբեկյանը, Արտաշես Չիլինգարյանը)։ Ահարոնյանին երկու ընկերներն անվանեցին երկերեսանի։ Նույնիսկ Սիմոն Զավարյանը, որ համակուսակցական մի հմայք էր, հարգանքի ոչ մի ցույցի չարժանացավ։ Գտան, որ նա այսօրվա իր բռնած ուղղությամբ դավաճանում է կուսակցությանը։

Մեր խոսակցությունը բավական երկար տևեց։ Ինձ խնդրեցին մնալ մի շիշ գինի խմելու, բայց ես շնորհակալություն հայտնելով՝ գնացի սենյակս։ Մյուս օրն առավոտյան ես պատմեցի Միհրանի այցելությունն Ահարոնյանին։ Նա հեգնանքով և արհամարհանքով վերաբերվեց Միհրանի ձեռնարկությանը։ Բայց մի քանի օր անցած ամբողջ Դաշնակցական պատգամավորությունը կատարյալ հուզմունքի մեջ էր։ Միհրանն ուզեցել էր Էջմիածնի տպարանում կոչեր և հայտարարություններ տպել իր դիկտատուրայի մասին, այս իմացել էր մի դաշնակցական վարդապետ, որ և ոտքի էր հանել իր ընկերներին։

Ես գնացել էի Հովնան Դավթյանի մոտ և տեսա այնտեղ մեծ խոսք ու զրույց։ Դատում էին, թե ինչ դուրս կգա այս արկածախնդրությունից։ Շատերը հանաքներ էին անում։ Ես էլ հանաքով ասացի Եղիշե Թոփչյանին, թե Միհրանն ամենից շատ նրան է ատում իբրև սոցիալիստի և ուրեմն նա պիտի ամենից առաջ ճաշակի զինվորական դիկտատուրայի ծանրությունը։ Նա ինձ պատասխանեց լրջորեն. «Յոթը հազար կազմակերպված բանվոր և արհեստավոր ունիմ թիկունքումս, ո՞վ կարող է ինձ մատ դիպցնել»։ Էլի նույն կախարդական թիվը՝ 7 հազար, ոչ ավել և ոչ պակաս։ Բայց երևում էր, որ վախենում են ամենքը, բաց չառած և Թոփչյանին։ Հեռագրով Պյատիգորսկից Թիֆլիս կանչվեց հայտնի խմբապետ Դումանը, որ պիտի զինվորական դատարան կազմեր՝ Միհրանին դատելու համար։ Սակայն այդ մի հեշտ, նույնիսկ հնարավոր բան չէր. Միհրանի նման վերաբերվում էին և մյուս թուրքահայ խմբապետները, թեև առանց զինվորական դիկտատուրային դիմելու։

Միհրանականությունը կարող էր չափազանց ուռճանալ և մեծ աղետի վերածվել, եթե նրա հետ զգուշությամբ չվարվեին։

Սակայն Միհրանի զինվորական դիկտատուրան չիրականացավ և իրականանալ չէր էլ կարող։ Նրա տեղ իրականացավ այն, ինչին վաղուց սպասում էին։ Վորոնցով-Դաշկովն աղվեսախաղ էր տալիս։ Երբ ամեն ինչ պարզվեց ու հայտնագործվեց, իսկ ետևում հաղթականորեն ստոլիպինյան ռեակցիան էր ամրանում, Էջմիածնի գավառապետ Լեմերմանը մի թուղթ ուղարկեց վանք, որի մեջ մեկիկ-մեկիկ գրված էին մեծախոս և աղմկաշատ հիմնադիր ժողովի պատգամավորների անուններն ու ազգանունները, պահանջելով, որ նրանք ստորագրեն, թե պարտավորվում են հեռանալ Էջմիածնից 24 ժամվա ընթացքում։

Այս կարգադրությունը դաշնակցականները կատարեցին ամենայն փութաջանությամբ և նշանակված ժամանակի կեսն էլ դեռ չէր անցած, երբ վանքի պարիսպների միջից չքացավ ամեն մի եկվոր դաշնակցական պատկեր։ Շատերը գնում էին՝ չծածկելով իրենց ուրախությունը։ Նրանք անկեղծորեն խոստովանում էին, թե կառավարությունն իրենց ազատեց մի ծիծաղելի դրությունից։ Եթե փակած չլիներ ժողովը, իրենք չպիտի իմանային, թե այլևս ինչ անեն։ Եվ, իրավ, սոցիալիզմի գլխին վեղար նստեցնելու կատակերգությունը վերջանում էր կատարյալ խայտառակությամբ՝ մի անգամ էլ ցույց տալով, թե որքան ողորմելի միամիտներ էին այն հեղափոխականները, որոնք մի ամբոջ ժողովրդի փրկության մենաշնորհն էին ստանձնել։ Անընդունակություն թուրքահայկական հեղափոխության կազմակերպման մեջ։ Անընդունակություն և ռուսական հեղափոխության լայն ու հարթված (համեմատաբար դատելով) ուղիների վրա։

Էջմիածնի հիմնադիր ժողովն, այնուամենայինիվ, մի քանի որոշումներ մշակեց, որոնց դասակարգությունն այսպես է բերում կոմս Վորոնցով-Դաշկովը Նիկոլայ Բ-ին ներկայացրած իր հաշվի մեջ.

«1) Ցանկալի համարել ընդհանուր ձրի ուսուցումը՝ հատկացնելով այդ առարկային բոլոր եկեղեցական դրամագլուխները և մտցնելով սրա համար առանձին եկամտային հարկ առաջադիմության (պրոգրեսիվ) սկզբունքների վրա, պարտադիր թողնելով ռուսաց լեզվի՝ իբրև պետական լեզվի ուսուցումը և մտցնելով, ցանկացողների համար, թուրքական և վրացական լեզուների դասեր, դուրս ձգել ցած դպրոցների ծրագրից կրոնի դասավանդությունը, իսկ միջնակարգ դպրոցներում այն համարել ոչ պարտադիր։

2) Եկեղեցական վանքական կալվածքները համարել սոցիալիզացիայի ենթարկված ազգային սեփականություն՝ ապահովելով երկրագործական համայնքների համար հնարավորություն օգտվելու այն հողամասերից, որոնցից օգտվում են այժմ և որոշելով նրանց իրավունքը լրացուցիչ կերպով ստանալու հողաբաժիններ, որքան պահանջվում է։

3) Պահանջել պետական բյուջեից հայ ժողովրդի կուլտուրական կարիքների համար մի մաս, որ համապատասխանում է նրա թվին պետության մյուս ազգաբնակչության համեմատությամբ։

4) Բոլոր դպրոցական և այլ ազգային գործերի կառավարման համար կազմել ռուսահպատակ հայերի պատգամավորական ժողովի գլխավորությամբ, որի ընտրությունը կատարվում է քառանդամ ձևաբանությամբ, առանձին համայնական օրգաններ, որոնք ընտրվում են միևնույն կարգով և որոնք, լինելով անկախ տեղական գործերի մեջ, կապված են իրար հետ դաշնակցային (ֆեդերացիայի) հիմքերի վրա։

5) Եկեղեցուն և հոգևորականությանը թողնել միայն դավանական գործերը»։

Գրեցին և թողին գնացին։ Ո՞վ պիտի կատարեր այդ որոշումները, ի՞նչ միջոցով։ Այդ հոգևորականությունն էր, որ պիտի ինքն իր գլուխը կտրեր և էլի կենդանի մնար՝ նոր ֆեդերացիային կյանք տալու համար։ Այդ հոգևորականությունն էր, որ պիտի արգելված հայտարարեր կրոնի դասավանդումը։ Էջմիածինը հինգ գյուղ ուներ և մե՛ծ բան կլիներ, եթե դրանց հողերը ազգայնացված լինեին, մինչդեռ հարյուրավոր հարևան գյուղեր պիտի շարունակեին մնալ մասնավոր սեփականության հիմունքների վրա։ Հետաքրքրականն այն է, որ Էջմիածնի ճեմարանի ննջարանում քվեարկված հողային օրենքը պիտի պարտադիր դառնար նաև Պարսկաստանի, Թուրքիայի, Ավստրիայի, Անգլիայի և բոլոր այն պետությունների համար, ուր գտնվում էին հայ եկեղեցիներ և եկեղեցական կալվածքներ։ Եվ այս սոցիալիզացիան պիտի պետություններին հարկադրեր ընդունել, իհարկե, զառամյալ Խրիմյան կաթողիկոսն իր հիվանդության մահճից…

ԺԱ

Գավառապետ Լեմերմանի թղթի վրա ես գրեցի, թե ճեմարանի ուսուցիչ եմ, ուստի չպիտի հեռանամ Էջմիածնից։ Երկու շաբաթից հետո ես բոլորովին հաստատվեցի իմ նոր բնակավայրում՝ ստանալով սեփական սենյակ ճեմարանի շինության մեջ։

Անսովոր շրջան, անսովոր պարապմունք։ Մի բան եթե կար, որ մոռացնել էր տալիս ամեն անհարմարություն և անպատեհություն, այդ այն էր, որ ես բավականաչափ ազատ ժամանակ ունեի ճեմարանի և վանքի հարուստ գրադարաններից օգտվելու համար։ Իմ մեծ սենյակը մինչև պռունկները լցրի գրքերով և լրագրերով ու սկսեցի պարապել անխնա ու անդուլ։ Գոհ եմ բախտիցս, ես մնացի Էջմիածնում մոտ ութ ամիս և անթիվ ու անհամար բաներ սովորեցի իմ ուսումնասիրություններով, բայց այդ մեծ բավականությանը զոհ տվի իմ աչքերը։ Զարհուրելի դրության մեջ էին կաթողիկոսական արխիվները։ Փոշին, իսկապես ասած՝ ոչ թե փոշին, այլ աղբը, մատի հաստությամբ էր նստած հազարավոր ու տասնյակ հազարավոր թղթերի կույտերի վրա։ Կյանքի վտանգով կարելի էր մոտենալ

այդ աղբակույտերին, բայց ես կարողացա մի քանի հազար երես արտագրություններ անել իմ ձեռքով։ Բացի դրանից, իմ ստացած ռոճիկի մեծագույն մասը տալիս էի աշակերտներին և Սինոդի գրագիրներին ու հազարավոր երեսներով արտագրություններ էի անել տալիս գործերից, արևմտահայ մամուլից (մանավանդ «Մասիս» լրագրից) և այսպիսով կազմեցի իմ սեփական հարուստ արխիվը, որ վերաբերում էր մեր նոր և նորագույն պատմությանը, բայց մասնավորապես գրականությանը։ Գրեթե կուրացա, բայց այդ ժամանակից ուրիշ մարդ դարձա։ Մինչև այդ իմ գրած ու հրատարակած պատմական աշխատություններն ինձ երևում էին կիսատ ու պակասավոր, և ես զգում էի, թե որքան դժբախտ էր Թիֆլիսն իբրև հայ գրական ու պատմաքննական ուսումնասիրության միջավայր…

Բայց սա չէր նշանակում, թե ես անտես էի անում Ճեմարանը։ Ո՛չ, ես նրա հետ կապվում էի ջերմորեն, առաջին անգամ զգալով կյանքիս մեջ, թե որքան պատվավոր պաշտոն էր լինել երիտասարդ սերնդի դաստիարակիչ և ղեկավար։ Այդ երիտասարդությունը ես սիրեցի վառ սիրով և աշխատում էի նրա շահերին ծառայել իմ բոլոր ուժերով։

Հեղափոխական տարի էր, այժմ սկսվել էր մեծ տեղատվությունը։ Ստոլիպինն արդեն խեղդել էր շարժումները։ Եվ, ահա, այդ ժամանակից էլ՝ 1906թ. աշնանից, ամեն տեղ և միանգամից, կասես կախարդական գավազանի մի շարժումով, դադարեցին հայ-թուրքական կռիվները։ Դրանք այլևս հարկավոր չէին ամրացող ռեժիմին. և հազարավոր ավերակներ, հազարավոր գերեզմաններ երկնքի տակ անշարժանում էին իբրև հրեշ-հուշարձաններ նիկոլայյան ոճրագործ ու հրեշ կարգի։ Կյանքն այսպիսով նորից մտցվում էր լծի տակ։ Դպրոցն էր, որ դեռ շարունակում էր իր ընդվզումները, ապրում էր վայրիվերություններ, պահանջներ էր անում կյանքին։

Եթե կար մի դպրոց, որ ամենից շատ ուներ իրավունք պահանջատեր լինելու, այդ հենց Էջմիածնի Ճեմարանն էր։ Ես չէի տեսել այդքան դժբախտ մի հիմնարկություն։ Ենթարկված մի վանքի՝ նրա անկողոպտելի, ոչնչով չսահմանափակված սեփականությունը՝ այդ դպրոցը, որ դեռ հավակնություն ուներ «բարձր» կոչվելու, համարյա իր ամբողջ կյանքն անց էր կացրել կաթողիկոսների, եպիսկոպոսների, վարդապետների ու նրանցից ոչնչով չտարբերվող աշխարհական տեսուչների բռնակալության տակ։

Տեսուչը խնդրում է ինձ, որ ես վերցնեմ դասերը։ Գնում եմ դասարան, հարցնում եմ, թե պատմության ո՞ր տեղն են կանգ առել, աշակերտները խնդրում են՝ սկսել ֆրանսիական մեծ հեղափոխությունից և տալ նրա մանրամասն պատմությունը։ Ու ես սկսում եմ Բլոսսի գրած պատմությունից, մի քանի ամսվա ընթացքում տանում, հասցնում մինչև մեծ ուտոպիստները, մինչև 1848 թվականը և գիտական սոցիալիզմը։ Որքան հետաքրքրություն, որքան հարցասիրություն… Դասը վերջանալուց հետո դասարանի կես մասը գլխիս հավաքված, խաչաձև հարցմունքների տարափի տակ

տանում է ինձ մինչև իմ սենյակի դուռը։ Օ՜, երիտասարդություն, ոգևորության անսպառ աղբյուր։ Կեսօրից հետո ես երբեմն կարդում էի ընդհանուր ճեմարանական դասախոսություններ։ Կամենալով գոնե մասամբ դուրս բերել այդ հիմնարկությունը նրա վրա քարացած կրոնական ավանդույթներից՝ ես տալիս էի իմ ունկնդիրներին գիտելիքներ նախապատմական մարդկության մասին, բացատրում էի քաղաքակրթության դանդաղ և աստիճանական զարգացումը, կրոնների ծագումը և էությունը, մի երկու անգամ էլ հանդգնություն ունեցա խոսելու Քրիստոսի և քրիստոնեության մասին՝ ըստ [Ժոզեֆ] Ռենանի և Դավիթ Շտրաուսի։ Այս բանն ինձ, սակայն, չներվեց։

Այսքանով չէի բավարարվում։ Մանկավարժական ժողովների մեջ պահանջում էի վերացնել գիշերօթիկությունն իբրև մեծագույն չարիք, որ թունավորում էր դպրոցական կյանքը. պահանջում էի, որ աշակերտները տեղավորվեն գյուղի մեջ, ապրեն մարդկանց հետ և ոչ թե ինչպես մի մեկուսացած կաստա։ Սակայն այս պահանջները, որոնց միանում էին և ուրիշ մի քանի ընկեր-ուսուցիչներ, անկարելի եղավ ընդունել տալ այն պահպանողական մեծամասնությանը, որ տասնյակ տարիներ ապրել էր այստեղ, տեսել էր ճեմարանը ննջարանով և սեղանատնով։ Այժմ ինչպե՞ս կարող էր այդպես չլինել։ Հիմնադիրը՝ Գևորգ կաթողիկոսն այդպես էր կամեցել։ Ինչպե՞ս խախտել նրա կամքը։

Եվ ճեմարանը մնաց գիշերօթիկ, փակ հիմնարկություն։ Ահա ինչքան դժբախտ էր նա։ Բերեմ դժբախտության և մի այլ օրինակ։ Երրորդ լսարանի ուսանողները գրում էին ավարտական շարադրություններ, որոնք կոչվում էին դիսերտացիա։ Նյութն ընտրում էր լսարանական խորհուրդը, և այն միակն էր լինում ամբողջ լսարանի համար։ Այն ընտրվում էր բացառապես աստվածաբանությունից։ Օրինակ, նախանցյալ տարի նյութը եղել էր «Սարկավագությունը» թե «Քահանայությունը», լավ չեմ հիշում։ Երրորդ լսարանի աշակերտներն ինձ խնդրեցին փոփոխություն մտցնել այդ սովորության մեջ, և մենք միասին որոշեցինք, որ ընտրվեն մի քանի նյութեր աշխարհական բովանդակությամբ և յուրաքանչյուր ուսանողի թողնվի վերցնել այդ նյութերից մեկն ու մեկը՝ շարադրություն գրելու համար։ Նորամուծության նախաձեռնությունն ինձ էր պատկանում, և ինձ վրա էր մնացել նյութերի ընտրությունը։ Ավարտող լսարանցիների թիվը, որքան հիշում եմ, 12-ն էր, և ես այդքան էլ նյութեր ընտրեցի և բաժանեցի։ Բայց այսքանը դեռ բավական չէր. պետք էր նաև ղեկավարել ուսանողներին, նրանց ցույց տալ աղբյուրները։ Այն նյութերի համար, որոնք վերաբերում էին հայոց նորագույն պատմությանը և գրականությանը, Էջմիածինը կարող էր համարվել աղբյուրներով հարուստ մի վայր։ Բայց ահա ուսանողներից մեկը, Վահան Խորենի, որ այն ժամանակ դեռ դաշնակցական չէր, ցանկություն հայտնեց դիսերտացիայի նյութ վերցնել սոցիալիզմի պատմությունը, և ես սիրով հանձն առա հաջողեցնել այդ բանը։ Էջմիածինը կատարյալ ամլություն էր ներկայացնում այդպիսի մի պատմության աղբյուրների կողմից։ Ուստի ես ձմեռվա

արձակուրդներին Թիֆլիս գնալով՝ իմ գրադարանից մի կույտ գրքեր տարա և հանձնեցի Խորենիին, ղեկավարում էի նրան իմ ցուցումներով։

Այս բոլորի հետևանքով ստացվեց մի շատ գեղեցիկ գործ։ Դիսերտացիան այլևս տանջանք չէր, ուսանողներն աշխույժով և մեծ հետաքրքրությամբ էին որոնումներ անում գրադարաններում, պարապում էին և ուսումնական տարվա վերջին իմ սեղանի վրա դարսված էին 11-12 հատոր լուրջ աշխատություններ՝ որը Հայոց հարցի պատմությունն էր գրել, որը՝ հայ գաղութներինը, որն էլ՝ հայ կրթական և բարեսիրական ընկերություններինը։ Եվ դրանց մեջ բազմած էր սոցիալիզմի պատմությունը (կարծում եմ, առաջինը հայերի մեջ), անշուշտ, երախացրիվ իր թերություններով, բայց բավական մանրամասն և փաստալից։

Ահա թե ինչ նորություններ էր մտցնում հեղափոխական ժամանակն այդ ճեմարանի պես կղզիացած և ընդարմացած հիմնարկության մեջ անգամ։ Աշակերտությունը բաժանված էր քաղաքական կուսակցությունների։ Ամենից բազմամարդը դաշնակցականն էր, նրան հետևում էր հնչակյանը։ Համեմատաբար նոր էր և սակավաթիվ սոցիալ-դեմոկրատների հոսանքը, որի գլուխ կանգնած էին երկու լսարանցիներ՝ Թադևոս Ավդալբեկյան և Փիլոսյան։ Զմռանն այդ հոսանքների սուր շփումներից առաջացան աշակերտական խառնակություններ, որոնք քիչ տակնուվրայություններ չմտցրին ճեմարանական կյանքի մեջ։ Մի կերպ դուրս եկանք գարուն, սկսվեցին տարեկան քննությունները։ Իմ դրությունից ես դժգոհ չէի։ Աշակերտությունն ինձ սիրում էր, և այդ սերն արտահայտեց մի քանի ցույցերով։ Բայց այստեղ վերջ էր դրվում իմ ուսուցչական հովվերգությանը։ Ինձ մատնել էին, և Թիֆլիսից եկած կարգադրության համաձայն՝ գավառապետ Լեմերմանը պահանջեց ինձանից ստորագրություն՝ անմիջապես Էջմիածնից հեռանալու մասին։ «Մեղքս» այն էր, որ խախտել էի ճեմարանի կրոնական հաստահեղույս հիմքերը՝ մտցնելով նրա մեջ անաստվածություն։ Հազիվ կարողացա սակարկությունների միջոցով Լեմերմանից մի ամսվա ժամանակ ստանալ՝ իմ արխիվային աշխատանքները վերջացնելու համար, որից հետո թափ տվի ոտներիս փոշին և… մնաս բարով, ուսուցչություն…

Բնորոշ է, որ ճեմարանի տեսուչ Մեսրոպ վարդապետը գնաց Թիֆլիս գանգատվելու Սինոդի պրոկուրոր Ֆրենկելի մատնությունների դեմ, բայց ոչինչ չկարողացավ անել։ Եվ սակայն, որպիսի՜ շուքով և ոգևորությամբ էր Էջմիածնի վանքն ընդունել աշնանը կոմս և կոմսուհի Վորոնցով-Դաշկովներին, երբ նրանք Երևանից եկան տեսնելու հայոց Մայր Աթոռը, և կոմսուհին կարողացավ իր սրտի փափագը կատարել՝ համբուրելով Մծբնա Հակոբ Հայրապետի մասունքները։ Մեսրոպ վարդապետը մեծ հանդիսով ընդունեց իր բարեկամներին ճեմարանում, ողջույնի ճառ արտասանեց։ Ճեմարանից էր, որ կոմսուհին հեռագիր ուղարկեց Պետերբուրգ՝ Մարիա Ֆեոդորովնային և հայտնեց, թե որքան ինքը հմայված է Մասիսի ստորոտում, այս հռչակավոր հնությունների մեջ։ Երկու ամուսիններն առանձին ուշադրություն

էին ցույց տալիս Մեսրոպ վարդապետին, և այս բանն ավելի սաստկացնում էր մյուս վարդապետների նախանձը։ Բայցևայնպես, Ֆրենկելի հանդեպ փոխարքայական պալատն այնպիսի դիրք բռնեց, որ Մեսրոպ վարդապետը գեղեցիկ դաս պիտի առներ «Служба службой, дружба дружбой» բովանդակությամբ։

Թիֆլիսում հասարակական հետաքրքրությունն առաջվա պես կենտրոնացած էր Դաշնակցության շուրջ։ Միհրանականությունն արդեն ներկվել էր արյունով։ Դեռ ձմռանը սպանվել էր Շխալին և թաղվել էր մեծ հանդիսով, իբրև ցույց։ Դումանը չէր կարողացել կատարել իրեն տրված հանձնարարությունը, որի մասին խոսել եմ վերևում։ Ինձ նա ասում էր, թե անմտություն կլինի Միհրանի դեմ բռնություն գործ դնելը։ Միհրանն այժմ դեռ չունի կուսակցություն, բայց նրա պես հակասոցիալիստական մտածումներ ունեցողներ շատ կան կուսակցության մեջ։ Իսկ Միհրանը, չկարողանալով իրագործել իր ծրագրերից և ոչ մեկը. փաստորեն արդեն հեռացել էր Դաշնակցությունից և միառժամանակ կազմակերպել բուրժուազիայի պաշտպանությունը հարձակումներից և սպանություններից։ Եվ իրավ, բուրժուաների մեծ որս էր կատարվում՝ նրանցից փող կորզելու համար։ Այս միջոցով ապրուստ հայթայթելն անհրաժեշտություն էր դարձել, մանավանդ դաշնակցական զինվորների համար, որոնք անգործ էին մնացել հայ-թուրքական կռիվների դադարման հետևանքով։

Կազմվել էր ձրիակերների մի ստվար խումբ, որ հավաքված էր լինում Միջին փողոցի «Վենեցիա» անունով ճաշարանում, և այստեղ բռնության այլևայլ միջոցներ էին մշակվում՝ փաշայական անհոգության մեջ ապրելու համար։ Ինձ պատմել էին, թե այդ ճաշարանում նույնիսկ դատարան էլ կար հաստատված, որ մինչև անգամ ամուսնական վեճեր էլ էր քննում։ Չէր կարելի ասել, թե Թիֆլիսում տեղի ունեցող բոլոր բազմաթիվ ճողոպրումները, կամ ինչպես ասում էին այն ժամանակ՝ զարկումները, միայն դաշնակցական «Վենեցիայից» էին դուրս գալիս։ Տեռորիստական միջոցներով փող կորզելու համար հատուկ ընկերություններ կային կազմված և ուրիշ ազգությունների մեջ՝ Թիֆլիսում, Բաթումում, Բաքվում և այլ տեղերում։ Բայց որ «Վենեցիան» էր այդպիսի գործողությունների գլխավոր կայանը, այս անկասկած էր։ Ես ինքս տեսել եմ հայտնի խմբապետ Մուրադի մոտ մի նամակ մակեդոնական հերոս Բորիս Սարաֆովից, որ ասում էր, թե մակեդոնական կոմիտեն նեղ դրության մեջ է և խնդրում է մի «փոշտ զարկել» և զարկած փողն ուղարկել իրեն։

Այս ձրիակեր զինված ուժը ծանրանում էր հայ ժողովրդի վզին։

Այսպես էին, ընդհանուր առմամբ, այն նացիոնալիստական և հակասոցիալիստական տարրերը, որոնք խեղդում էին Դաշնակցությունն աջից։ Բայց խեղդողներ կային նաև ձախից, և՝ ոչ պակաս թափով և համառությամբ։ Այդ երիտասարդ թևն էր, որ չէր կարողանում տանել կուսակցության երկերեսանությունը և խորշում էր ֆիդայական մտայնությունից՝ պահանջելով վերակազմել

կուսակցական գործերը զուտ սոցիալիստական հիմքերի վրա։ Այսպես մտածողները անջատվեցին Դաշնակցությունից, ուստի և հոսանքն ստացավ «անջատականություն» անունը։ Եվ այսպես, կեղեքվելով մի կողմից միհրանականությունից, և մյուս կողմից՝ անջատականությունից, Դաշնակցությունը 1907-ի ամռանը Վիեննա գնաց ընդհանուր ժողովի, ուր թևերի սուր շփումները մեղմացվեցին. ով հեռանալու էր կուսակցությունից, հեռացավ, իսկ ովքեր մնացին՝ յուրացրին իրար չխանգարելու քաղաքականությունը։ Այնպես որ, «հետևողական դեմոկրատ» կամ, ուրիշ խոսքով, «սոցիալիստ» Ջամալյանը ոչ մի անհարմարություն չէր գտնում Անդրանիկի, Սեպուհի կամ մի այլ՝ սոցիալիզմի անողոք թշնամի խմբապետի հետ կենակցելիս և գործակցելիս։ Կովկասյան նախագծի վրա ձևվեց մի ծրագիր, որ խստորեն տոգորված էր սոցիալիզմով, բայց որ իսկապես անփոփոխ էր պահում հին իրականությունը։

## Գլուխ երրորդ։ Հաղթանակ Թուրքիայում

### Ա

Սուլթան Աբդուլ-Համիդի խելացնոր բռնակալությունից արտասահման վտարված թուրքական «Երիտասարդ Թուրքիա» կուսակցությունը, որ իրեն անվանում էր «Առաջադիմության և միության կուսակցություն» (Իթթիհատ վե թերաքե), առանձնապես ուժեղացրեց իր գործունեությունը մասնավորապես այն ժամանակից, երբ Փարիզ փախան նաև սուլթանի փեսա Դամադ-փաշան և նրա որդին՝ իշխան Սաբահեդդինը։ Երիտասարդ թուրքերը, ինչպես վայել է մի պետական հայրենասիրական կուսակցության, չէր ընդունում, որ Թուրքիայում գոյություն ունենան առանձին ազգային հարցեր, ինչպիսն են, օրինակ, Հայոց հարցը և այլն։ Հակառակ լինելով այդ հարցերին, որոնք միայն եվրոպական միջամտությունների դուռն էին բաց անում և թուլացնում Թուրքիան, երիտթուրքերը քարոզում էին, որ Թուրքիայի բոլոր անբավական տարրերը, բոլոր հեղափոխական կազմակերպությունները պիտի միանան Աբդուլ-Համիդի դեմ, որ բոլոր չարիքների պատճառն է, հեռացնեն նրան իշխանությունից և հաստատեն ազատ սահմանադրական ռեժիմ, որ կբարեկարգի երկիրն ընդհանուր իրավահավասարության սկզբունքի վրա, և այսպիսով կվերանա ամեն մի անհատական-ազգային դժգոհություն։

Իշխան Սաբահեդդինն այդ ընդհանուր խոսքերի վրա ավելացնում էր և այն, որ ազատագրված Թուրքիայի վարչական ռեժիմը պիտի հաստատված լինի ապակենտրոնացման սիստեմի վրա, որ տանում է դեպի տեղական ինքնավարությունների ցանցը։ Նա և նրա հայրը մի քանի անգամ փորձեր արեցին այս իմաստով միություն ստեղծելու Թուրքիայի բոլոր ընդդիմադիր հոսանքների միջև, բայց հաջողություն չունեցան։ Հավաքվեցին, խոսեցին, համձայնության չեկան և էլի հեռացան, անջատ գործողությունների ճանապարհն ընտրեցին։ Հատկապես Դաշնակցությունը սառն էր պահում իրեն այդ միության գաղափարի դիմաց, որովհետև Քրիստափոր Միքայելյանը մեծ կարծիք չուներ երիտթուրքերի վրա և չէր

կարծում, որ այդ կուսակցությունը կարող կհանդիսանա հեղափոխություն կատարելու։

Սակայն իր շեֆի մահից հետո Դաշնակցությունը, կորցնելով դավադրական և դիվանագիտական մարզանքների նախկին թափը, կամաց-կամաց սկսեց թեքվել դեպի իշխան Սաբահեդդինի առաջարկությունը։ Սա, իհարկե, մի դրական քայլ էր, և այս ուղղությամբ գործելու անհրաժեշտությունը վաղուց հրամայողաբար թելադրում էր Եվրոպայի պաշտամունքի կատարյալ սնանկությունը։

Եվ ահա, 1907թ. վերջին օրերին Փարիզի մեջ կայացավ վաղուց սպասված միությունը։ Հայ կազմակերպություններից Փարիզի ժողովին մասնակցում էին միայն Դաշնակցությունը և Մարսելի «Արմենիայի» խմբագրությունը։ Հնչակյան կուսակցությունն իրեն հեռու պահեց միությունից։ Փարիզի ժողովը կամ կոնգրեսը հրատարակեց մի հայտարարություն, որից բերում եմ մի քանի կտոր։

«Թուրքիայում գործող կուսակցությունների կոնգրեսը՝ դեկտեմբերի 27-29-ին գումարված Եվրոպայում, հայտարարում է, որ ընդունում է թուրք կայսրության բոլոր ժողովուրդների համերաշխությունը, որոնք հավասարապես տառապում են երկրի վրա ծանրացող բռնակալ ռեժիմից, որը գարշելի է դարձել ամբողջ աշխարհի աչքին ներկա վեհապետի՝ Աբդուլ-Համիդ II-ի հրեշային ոճիրներով։

Այդ երեսուն տարվա գահակալությունն աղետաբեր է եղել, ինչպես սխալմամբ կարծում են, ոչ միայն քրիստոնյա ժողովուրդների համար, որոնց հալածում և կոտորում էր սուլթանը իր սեփական շահերից դրդված, այլև հենց մահմեդականների համար, որոնք կործանվել են, ստրկացվել, բերդարգելության դատապարտվել, մորթոտվել, վերջապես, անարդար կերպով մեղադրվել քաղաքակիրթ ժողովուրդների հասարակական կարծիքի առաջ, որ նրանց պատասխանատու է կարծել այն հակամարդկային ոճիրների համար, որոնք գործվել են վեհապետի և նրան շրջապատողների կողմից։ Կայսրության բոլոր ազգությունները հաջորդաբար զոհ էին դարձել Աբդուլ-Համիդի ոճրագործ խենթության։ Նա հաջորդաբար արձակել է նրանց իրար վրա՝ ցեղերի և կրոնների միջև արհեստական ատելություններ գրգռելով ու սնուցելով. թուրքերը, հայերը, հույները, բուլղարները, վալաքները, արաբները, հրեաները, գյուրջիները, քրդերը ենթարկվել են հալածանքի, աքսորի, բերդարգելության ու կոտորածի, և հայկական ջարդերը, պսակելով անցյալ այդ բոլոր չարագործությունները, կնքել են նրանց հեղինակին, որ շարունակում է տակավին իր ոճրագործ արարքը Արաբիայում, մեծ մարդասպան և կարմիր սուլթան անուններով»։

Թվելով այնուհետև Աբդուլ-Համիդի համեմատաբար ավելի խաղաղ չարագործությունները, հայտարարությունը շարունակում էր.

«Մինչև այժմ, իրերի այս դրությունից ծագող հեղափոխական շարժումները վարվում էին առանձին-առանձին. այսօր մահմեդականների և քրիստոնյաների

համագործակցությունը շատ տեղերում ապացուցել է, որ կայսրության բոլոր ժողովուրդները, վերջապես, հոգնել են տառապելուց և ըմբռնում են, որ իրենց վեհապետը տանում է իրենց դեպի անդունդ։

Այսօր, մտածելու ընդունակ ամեն մարդ շատ պայծառ կերպով տեսնում է, որ կայսրությունը վերջնական կործանումից և քայքայումից կարելի է ազատել՝ անմիջապես փոխելով միայն կառավարությունը։ Պետք է տապալել, որքան կարելի է շուտով և բոլոր հնարավոր միջոցներով, մի ռեժիմ, որը պատճառել է այնքան աղետներ։

Ահա ինչու մենք պահանջում ենք՝

1) Աբդուլ-Համիդի գահընկեցությունը,

2) Ներկա ռեժիմի արմատական փոփոխությունը,

3) Մի ներկայացուցչական ռեժիմի հաստատումը (պառլամենտ)։

Ներկա բոլոր չարիքների գլխավոր հեղինակի անհետացումը առաջին պայմանն է ամեն բարելավման։ Նրա հետ կանհետանան նաև վարչական ու քաղաքական բռնակալ սիստեմը, ոստիկանական տեռորն ու դիվանագիտական չարամտությունը։ Այնուհետև կհիմնվի մի ներկայացուցչական ռեժիմ, որով կայսրության բոլոր ժողովուրդները, հավասար պարտականություններով և իրավունքներով կարտահայտեն իրենց կարիքներն ու կամքը, ռեժիմ, որ մի խաղաղ ներդաշնակության մեջ կապահովի բոլորի համար արդարությունն ու ազատությունը։

Ահա՛ այս կոնգրեսի միակ նպատակակետը, համաձայն մեր երկրի բոլոր ժողովուրդների կամքի, որոնք միևնույն երկրի զավակներ՝ մշակում են միևնույն հողը, տառապում են միևնույն տառապանքով և համերաշխ գործակցությամբ վճռել են նվաճել իրենց երջանկության և ազատության բաժինը։

Ձեռք ձեռքի ենք տալիս մի ընդհանուր կռվի համար՝ հարգելով յուրաքանչյուր կազմակերպության ինքնավարությունը, [ձեռք] ձեռքի ենք տալիս անկեղծորեն, եղբայրաբար և կռիվն սկսելուց առաջ՝ հանդիսավոր խոսք ենք տալիս՝ չդրժել մեր հանձնառությունները և հայտարարում ենք սուլթանին, որ վայր չենք դնի մեր զենքերը, մինչև չենք բաց անի Թուրքիայի համար մի նոր դարագլուխ։

Կոչ ենք անում բոլորին՝ աջակցելու մեզ այս դժնդակ և փառավոր ձեռնարկության մեջ, որը կպահանջի աննկուն կորով և ծանր զոհաբերություն։

Կոչ ենք անում բոլորին՝ գիտության և մտածումի մարդկանց, որոնց արգելված է ամեն անկախ ուսումնասիրություն, դաշտերի և քաղաքների աշխատավորներին՝ զրկված հողից ու հացից, ընկճված ապօրեն հարկերի տակ, տանջված և թալանված

հարկահաններից, վաճառականներին, որոնք անկարող են գործ դնել իրենց առևտուրը կատարյալ անդորրությամբ, չվճարված, քաղցած, մերկ զինվորներին, որոնց ստիպում է իրենց տերը գնալ իրենց հայրենակիցների դեմ. մեկ խոսքով՝ կայսրության բոլոր ազգություններին, որոնք ջախջախված են մի անարգ բռնակալությունից։ Թող բոլորը միանան այս նվիրական կռվին, թող ներշնչվեն մեզ հետ ազատության, բարենորոգման և հեղափոխության գաղափարներով, հիմնահատակ անելու համար ամոթի և բռնության մի ռեժիմ՝ իրենց տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցներով։

Երեսուն տարվա փորձառությունը չափազանց ցավագին կերպով ապացուցել է բոլորին խաղաղ միջոցների անբավականությունը բռնության մի հսկայական ուժի դեմ։ Իր հպատակների բոլոր խնդիրներին, բոլոր պաղատանքներին սուլթանը պատասխանել է միշտ ուժով, բանտով, աքսորներով և ջարդերով։

Կոնգրեսը միաբերան հռչակում է, ուրեմն, որ ընդդիմադիր բոլոր խմբերը պետք է այսուհետև դիմեն հեղափոխական միջոցների, որոնք տվել են քաջալերական արդյունքներ, ինչպես ցույց է տալիս հեղափոխական գործունեությունն ընդհանրապես և թուրք ու հայ խառն խմբերի վերջին գործունեությունը մասնավորապես։ Ասիական նահանգների բազմաթիվ քաղաքներում հեղափոխական միջոցները դառնում են անհրաժեշտ և արդարանալի հենց իշխանության բռնությունների պատճառով։ Ներկա ռեժիմն է, որ իր ոճիրներով մղել է մեզ հեղափոխության։

Հայտարարում ենք, ուրեմն, որ պատրաստ ենք մղելու կռիվը՝ ընդունելով և հանձնարարելով հետևյալ միջոցները.

1. Զինված դիմադրություն կառավարության գործողությունների դեմ,

2. Ոչ զինված դիմադրություն քաղաքական և տնտեսական գործադուլով. գործադուլ պաշտոնյաների, ոստիկանության և այլն,

3. Հարկերի մերժում,

4. Պրոպագանդա զորքի մեջ. զինվորները պիտի հրավիրվեն չգնալ ո՛չ ժողովրդի և ո՛չ էլ հեղափոխության դեմ,

5. Ընդհանուր ապստամբություն,

6. Գործողության ուրիշ միջոցներ՝ համաձայն պայմանների և հանգամանքների»։

Սա, ընդհանրապես, հոյակապ մի երևույթ էր, որ առաջին անգամն էր հանդես գալիս օսմանյան պատմության մեջ՝ բոլոր տառապող տարրերի ընդվզում արնախում

սուլթանիզմի դեմ։ Միանում էին մինչև այդ իրարից կրոնական և ազգային նախապաշարմունքներով անջատված, իրար թշնամի խավերը։ Սկսվում էր մի նոր դարագլուխ՝ համապետական հեղափոխական կյանքի շրջանը. մի շրջան, որ եթե երկարատև լիներ, պիտի դառնար լավագույն միջոցը ավելի ևս մոտեցնելու, իրար հետ պինդ կապելու՝ տիրող ազգությունը հպատակ ազգությունների հետ, համագործակցության գաղափարն ամենքի արյան մեջ մտցնելու և, այսպիսով, հանրության օգտի լայն հողի վրա՝ ամենքին շաղկապելու համար։ Փարիզի եռօրյա ժողովը, միասին մի թուղթ ստորագրելը դեռ բավական չէին, որ միանգամից վերանային Թուրքիայի ազգությունների միջև դարերով արմատացած փոխադարձ անվստահությունը, նախանձի և վրեժի զգացմունքները։ Սկիզբը դրված էր, մնացածը պետք էր թողնել հեղափոխական դաժան դաստիարակության, որ երկար ու համառ կռվի անհրաժեշտությամբ մոտեցներ ամենքին, իսկապես եղբայրության կապեր հաստատեր։

Սակայն, տարաբախտաբար, այսպես չեղավ։ Միացած ուժերի հեղափոխական գործունեությունը շատ կարճատև եղավ՝ ընդամենը մի քանի ամիս։ Հեղափոխությունը եկավ ուրիշ ճանապարհով։

Առաջին իսկ հայացքից դեկտեմբերի 27-29-ի հայտարարությունը ցույց էր տալիս, որ երիտթուրքերի կուսակցությունն անշարժ կանգնած էր այն տեղում, ուր 1876-ին հաստատվել էր նրա նախահայրը՝ Միդհատ-փաշան։ Ոչ մի քայլ դեպի առաջ, կարծես 30 տարվա ընթացքում կարելի չէր եղել որևէ նոր բան սովորել։ Այժմ էլ, ինչպես և 1876-ին, ամենափրկիչ միջոց համարվում էր պառլամենտարիզմը։ Կարծում էին, թե բավական է բաց անել Կ.Պոլսում պառլամենտ, հայտարարել բոլոր հպատակների հավասարությունն օրենքի առաջ, և Թուրքիան կփոխի իր կերպարանքը, կդառնա քաղաքակիրթ ու բարեկարգ երկիր։ Այսպիսով անհաշիվ չափազանցվում էր պառլամենտի նշանակությունը. մի բուրժուական հիմնարկության, որի մեջ դարձյալ տիրապետող և շահագործող դասակարգերն էին հրամայում, օրենսդրում։ Երիտթուրքերն ուզում էին պառլամենտ, ինչպես էլ նա լինի։

Բայց գլխավորը հիմնարկությունը չէ, այլ այն բովանդակությունը, որ կարող է մտցնել նրա մեջ երկիրը։ Ի՞նչ հասարակական խմբավորումներ կային, ի՞նչ կուսակցություններ էր հանել իր միջից հանրային կյանքը, որպեսզի կարելի լիներ պառլամենտից հանրաշահ գործունեություն սպասել։ Միակ խոշոր քաղաքական կազմակերպությունը երիտթուրքերի կուսակցությունն էր, որ հենց իր սկզբնավորության օրից հայտնի էր դարձել իբրև եվրոպական պառլամենտարիզմը ծածկոց դարձրած հետադեմ իսլամական միտք, որի իդեալներն են պանիսլամիզմը, խալիֆաթը, շարիաթը, համաշխարհային տիրապետությունը։ Նա ներկայացնում էր նույն տիրապետող և շահագործող դասակարգերը՝ կալվածատիրությունը և առևտրական բուրժուազիան։ Ժողովրդական, աշխատավորական հանգամանք չկար նրա մեջ։ Նայեցեք նրա հեղափոխական հայտարարությանը։ Կռվի միջոցների թվում

դուք տեսնում եք և գործադուլները։ Բայց ի՞նչ տեսակ գործադուլ։ Ոստիկանական, չինովնիկական։ Ո՛չ մի բառ անգամ այն միլիոնավոր զանգվածների մասին, որոնք հարստահարվում, կեղեքվում էին ծանր աշխատանքի մեջ։

Եվ այսպիսով դուրս էր գալիս, որ երիտթուրքերի ողջ ցանկությունն էր տապալել Աբդուլ-Համիդի բռնակալությունը՝ տիրող դասակարգերի բռնակալությամբ այն փոխարինելու համար…

Տարբերությունը, ինչպես ցույց տվեց ապագան, շատ էլ մեծ չպիտի լիներ։ Շատ խոշոր հարցերի մեջ (օրինակ, հայերի վերաբերմամբ) երիտթուրքերն իրենց հանդես հանեցին նույնիսկ իբրև Աբդուլ-Համիդի ջերմեռանդ աշակերտներ։

Բ

1908թ. մայիսին Թիֆլիսում տոնվեց իմ գրական գործունեության 25-ամյա (իսկապես՝ 30) հոբելյանը։ Իմ հիվանդությունը սաստկացել էր մինչ այն աստիճան, որ վտանգ էր սպառնում կյանքիս։ Հոբելյանական տոնակատարության միջոցով հայ հասարակությունն ինձ միջոց էր տալիս ավելի լուրջ ուշադրություն դարձնելու բժշկությանս վրա, և նույն տարվա ամռանը ես Ա. Ահարոնյանի հետ ուղևորվեցի Եվրոպա։ Առաջին մեծ քաղաքը, ուր մենք կանգ առանք, Վիեննան էր։ Այնտեղ մենք հանդիպեցինք Խաչատուր Մալումյանին, որ գալիս էր Ժնևից և գնում էր Կ.Պոլիս, ուր, ինչպես Փարիզի կոնգրեսին մասնակցած դաշնակցական, պիտի տեղային դաշնակցական կազմակերպությունը միացներ երիտթուրքերի կոմիտեի հետ՝ միասին հեղափոխական գործունեություն սկսելու համար։ Մալումյանը գնում էր մեծ զգուշություններով։ Թուրքաց մայրաքաղաքը նա պիտի մտներ իբրև եվրոպացի և տանում էր իր հետ համապատասխան թղթեր։ Դաշնակցական այս նոր ձեռնարկության վրա նա մեծ հույսեր ուներ և չէր էլ ուզում մտածել որևէ վտանգի մասին։ Բայց զգուշություններն ավելորդ էին։ Նա Կ.Պոլիս էր հասել այն ժամին, երբ արդեն պայթել էր հուլիսյան հեղափոխությունը։ Ես պառկած էի Վիեննայի հիվանդանոցներից մեկի զարմանալի մաքուր և փոքրիկ սենյակի մեջ, երբ հայ ուսանողները, այցելության գալով, բերին ինձ թուրքական հեղափոխության լուրը։

Տպավորությունն ահագին էր Ավստրիայի մայրաքաղաքում։ Ահագին էր տպավորությունը և մեր հիվանդանոցային խաղաղիկ անկյունում։ Աբդուլ-Համիդը, ճիշտ է, չէր անհետացել, բայց գտնվում էր ամբողջովին հեղափոխության ձեռքին, և նրա անիծյալ արյունոտ ռեժիմի տեղ հայտարարված էր սահմանադրություն։ Այսքանն էլ չափազանց մեծ գործ էր համարվում։ Բավական էր և այն, որ մեծ մարդասպանի բերանին սանձ էր դրվել։ Ուրախ ենք։ Թուրքահայության անհուն, առասպելական չափեր ընդունած տառապանքները վերջացան։ Հեռագրերը չեն բավարարում, ցանկություն կա մանրամասնություններ շատ իմանալու, մանավանդ հայերի կյանքից։ Ու ամեն օր հիվանդանոցից գնում եմ Մխիթարյանների վանքը Mechitharishen gasse փողոցում։ Վանական խստակյաց և զսպված միջավայրն էլ

ժպտուն կերպարանք էր ստացել։ Վարդապետները նոր ստացած թղթեր են բերում, կարդում են, մեկնություններ են տալիս ուրախ ու զվարթ՝ վստահ վաղվա համար։ Ո՜վ էր տեսել այդպիսի տրամադրություն…

Վիեննայից գնացի Վենետիկ, հատկապես Ս.Ղազար, ոսկեկազմ գրքերի հռչակավոր կղզին տեսնելու համար։ Այդտեղ է՛լ ավելի մեծ հրճվանք էր։ Մի օր վարդապետներն ինձ իրենց գոնդոլով տարան Լիտո կղզին։ Հետները վերցրել էին Կ.Պոլսից ստացված հայերեն թերթերի կապոցներ։ Նստած էինք թանձրախիտ ծառերի տակ, կարդում էինք։ Ինչե՜ր են կատարվում Կ.Պոլսում։ Հայ-թուրքական եղբայրության ի՜նչ տեսարաններ։ Կարծես թե իրականություն չէ այդ, այլ հատվածներ «Հազար և մի գիշերներից»։ Ադրիականն իր ալիքները բերում-փշրում էր մեր ոտքերի մոտ, և ես ինձ զգում էի Հայնեի դրության մեջ։ Հիշո՞ւմ եք։ Հուլիսյան հեղափոխության ժամանակ նա գտնվում էր Հյուսիսային ծովի ափին և գրեց. «Եկան լրագրերը, և ես գտա նրանց մեջ արյունոտ ճառագայթների ամբողջ խրձեր, որոնցով կարող եմ հրդեհել ամբողջ ծովը մինչև Հյուսիսային բևեռ»։ Ինձ էլ թվում էր, թե այդպիսի հատկություն ունեն և սուլթանական մայրաքաղաքից եկած լուրերը։ Որքա՜ն լավ է։ Հպարտությամբ ես զգում, որ մարդ ես։

Շուտով մի ավելի ևս հիացական տեսարան։ Փարիզում եմ։ Երիտթուրքերի գլխավորները, որոնք դեռ մնացել էին ֆրանսիական մայրաքաղաքում, վճռեցին Կ.Պոլիս ուղարկել, կարծեմ, մի տարի առաջ մեռած Դամադ-փաշայի՝ իշխան Սաբահեդդինի հոր մարմինը։ Այդ հանդեսը դարձավ հայ-թուրքական եղբայրության մի նոր ցույց։ Մի խումբ հայերս գնացինք Պեր Լաշեզի գերեզմանատուն։ Այդտեղ, Դամադ-փաշայի գերեզմանի վրա, արտասանվեցին ճառեր։ Խոսեց մի ֆրանսիացի։ Բայց նրա խոսքը թույլ էր այն հռետորական թափի առաջ, որ ցույց տվին երիտթուրքերն իրենց ճառերի մեջ։ Ես հիացած էի, ի՜նչ թրքություն է մնացել սրանց մեջ, հարցնում էի ինձ, կատարյալ եվրոպացիներ են, միայն մի քիչ արևելյան դեմքով։ Վերջացնելով հանդեսը՝ մենք, ամենքս, հայ թե թուրք, այցելեցինք Գրիգոր Օտյանի գերեզմանին։ Ճառեր խոսեցին Ահարոնյանը՝ հայերեն և Սաբահեդդինը՝ ֆրանսերեն։ Միշտ փառաբանվում էր հեղափոխությունը, միշտ բարձրագլուխ հայտարարվում էր, թե այսօրվա օսմանյան ազատությունը հաստատված է հայ զոհերի ոսկորների վրա։

Այս հանդեսն էլ վերջացավ։ Խմբով կանգնած խոսում էինք։ Ինձ ծանոթացրին մի քանի թուրքահայ գրողների և մի քանի երիտթուրքերի հետ։ Իսկ տե՜ղը… տե՜ղը… Մի փոքրիկ բարձրավանդակ էր։ Ցածից մեզ էր նայում կարմիր դրոշակներով և սքանչելի արձանագրություններով զարդարված այն պատը, որի առջև հրացանի էին բռնվել 1871-ի Փարիզի Կոմունայի 15 հազար զինվորները։ Ձեզ եմ թողնում երևակայել, թե ինչպիսին պիտի լիներ իմ տրամադրությունն այդ րոպեին։ Ես մոռացել էի իմ ծանր հիվանդությունը։ «Այլևս Հայկական հարց չկա, այլևս հայերին չեն կոտորի»,- ասում էի ինձ՝ երջանիկ և հավատացող…

Ա՛հ, յոթը տարուց հետո, նույն ժամանակները, 1915-ին, ես որքան անիծում էի ինձ, որ այդպիսի հավատ եմ ունեցել։ Չգիտեի դեռ, չգիտեի, թե այդ բուրժուական Փարիզը մի շպարված գազանանոց է…

Բայց դեռ մի կողմ թողնենք հեղափոխական մեղրալուսինը, որ բավական երկարատև էր և հիացնում էր նույնիսկ հեռվից դիտողներին, եվրոպացիներին։ Տեսնենք, թե իրականում ի՞նչ նոր դրություններ էր ստեղծում թուրքական այդ մեծ շարժումը։

Դեպքերը փութացնողը հեղափոխությունից մի քանի շաբաթ առաջ տեղի ունեցած տեսակցությունն էր Ռևելի մեջ։ Այդտեղ իրար հանդիպեցին Անգլիայի Էդվարդ Ե թագավորը և Նիկոլայ Բ-ն, որոնք իրար մեջ համաձայնություն կայացրին մակեդոնական հարցի վերաբերմամբ։ Մի տարի առաջ անգլո-ռուսական կառավարությունների մեջ համաձայնություն կայացել էր նաև Պարսկաստանի վերաբերմամբ։ Այս երկու դեպքերը ցույց էին տալիս, որ համաշխարհային քաղաքականության մեջ կատարվել է ահագին տակնուվրայություն։ Ռուսաստանը և Անգլիան՝ երկու համառ և անողոք հակառակորդներ, Արևելքի վերաբերյալ գործերի մեջ այժմ միմյանց դաշնակիցն էին դառնում։ Մրցակցությունը տեղի էր տալիս խաղաղ համաձայնության։ Այսպիսով ամենից առաջ և ամենից շատ վտանգվում էր Թուրքիան, որ մինչև այդ գոյություն էր պահպանել համարյա միմիայն այդ մրցակցության շնորհիվ։

Աբդուլ-Համիդի բարբարոս կառավարության տակ բոլորովին թուլացած Թուրքիան կարող էր հեշտությամբ բաժան-բաժան լինել օտարների ձեռքին։ Ռեվելի տեսակցությունը դարձավ մի տեսակ ահազանգ օսմանյան հայրենասիրության համար։ Երիտթուրքերի կուսակցությունը շատ ուժեղ կազմակերպված էր Սալոնիկի թուրք զինվորականների մեջ։ Այդտեղ էր գտնվում թուրքական Երրորդ զորաբանակը, և նրա սպայակույտը վաղուց արտահայտում էր իր դժգոհությունը սուլթանի քաղաքականության դեմ, որ պետությունը դարձրել էր եվրոպական շահամոլության կատարյալ գերի։ Եվ ահա նույն այդ սպաները պատրաստեցին Երրորդ զորաբանակի ապստամբությունը, որն այնքան վախեցրեց Աբդուլ-Համիդին, որ նա շտապեց վերականգնված հայտարարել 1876թ. սահմանադրությունը։

Մի վերին աստիճանի հեշտ, անարյուն հեղափոխություն։ Նա բացառապես զինվորական էր և նացիոնալիստական։ Նշանաբանն էր՝ «Թուրքիան թուրքերի համար»։ Հաղթությունը երիտթուրքերին էր պատկանում։ Միանգամից նա դարձավ կառավարող կուսակցություն և իր ձեռքն առավ պետական ամբողջ իշխանությունը։

Իսկ Դաշնակցությունը սկզբից ևեթ իրեն համարեց դրության տեր՝ երիտթուրքերի հետ համահավասար իրավունքներով։ Այս իրավունքը նա հանում էր Փարիզի համաձայնությունից, իսկ եթե հեղափոխական գործակցություն երիտթուրքերի հետ չէր եղել, դրա փոխարեն Դաշնակցությունը ցույց էր տալիս իր

անցյալը, երբ նա մենակ կռվում էր Աբդուլ-Համիդի դեմ, թեև բոլորովին մասնավոր, ոչ համապետական նպատակով։ Եվ պետք է ասել, որ երիտթուրքերն այդ միջոցին վերին աստիճանի ուշադիր էին հայ ժողովրդի վերաբերմամբ և ամեն կերպ փայփայում էին Դաշնակցությանը։ Այսպես, երբ Երուսաղեմից վերադարձավ Աբդուլ-Համիդի ձեռքով այնտեղ աքսորված Իզմիրլյան պատրիարքը, կառավարության և կուսակցության բարձր մարմիններն այնպիսի մի շքեղ ու փառավոր ընդունելություն ցույց տվին նրան, որի նմանը դեռ ոչ մի տեղ չէր տեսնված։ Մեկ այլ անգամ, երբ Դաշնակցությունը հոգեհանգիստ նշանակեց հայ հեղափոխական զոհերի հիշատակին, այդ հանդեսին ներկա գտնվեցին դարձյալ բարձրաստիճան երիտթուրքեր, որոնք իրենց ճառերի մեջ մեծարեցին ընկած հերոսներին։ Ավելի մանր, առօրյա փաստերը շատ բազմաթիվ էին։

Եվ այսպես, Դաշնակցությունը, մոտենալով երիտթուրքերին, հանդիսանալով նրանց բարեկամն ու գործակիցը, այնպիսի ազդու և կարևոր դիրք էր բռնում Թուրքիայում, որի մասին նա մտածել անգամ չէր կարող առաջներում, անգամ եթե հաջողություն գտնեին նրա հայդուկային-դիվանագիտական անհուսալի արկածները։ Նոր դրություն էր ստեղծվում Թուրքիայում։ Դաշնակցությանը մնում էր թողնել հին մոլությունները, ոտքից մինչև գլուխ վերանորոգվել և որդեգրել գործունեության նոր եղանակ։ Երիտթուրքերի ռեժիմը, ամեն տեսակ ազատություններ տալով հայերին դաստիարակության, պրոպագանդայի շրջաններում, դժկամություն էր հայտնում միայն այն դեպքում, երբ Հայոց հարցն էր հրապարակ բերվում իր հայդուկային գրականության հետ։ Հեղափոխության երրորդ օրն էր, կարծեմ, որ «Արևելք» լրագիրը սկսեց արտատպել իր թերթոնի մեջ Ռաֆֆու «Խենթը»։ Այս բանը նկատվեց, դժգոհության առարկա դարձավ թուրք թերթերի մեջ, և «Արևելքը» շտապեց դադարեցնել վեպի տպագրությունը՝ ներողություն խնդրելով, որ ազատությունից արբեցած ժամերին այսպիսի մի անպատեհություն էր գործել։ Բայց այս, իհարկե, չէր նշանակում, թե «Խենթը» և Ռաֆֆու ուրիշ վեպերը ազատ մուտք չունեին Թուրքիա։ Նշանակալից էր և մի ուրիշ փաստ։ Թե՛ թուրք մամուլի և թե՛ ղեկավարող շրջանների մեջ արծարծվում էր այն միտքը, թե պետք է ոչնչացնել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը։ Ուզում էին ասել, թե Հայոց հարց չկա, թե նա լուծում է ստանում Թուրքիայի ներքին բարեկարգությունների մեջ. բայց առավելապես անհանգստացնում էր այն, որ այդ հոդվածը կարող էր եվրոպական պետությունների միջամտության առիթ դառնալ. մի բան, որ չէր կարող տանել վերանորոգված Թուրքիան։ Սակայն այս առաջարկությունն անկատար մնաց։ Հայերը չուզեցին զրկվել իրենց արյունոտ ժառանգությունից։

Սա նշանակում էր, թե կողմերի մեջ կատարյալ անկեղծություն, այնուամենայնիվ, չկար։ Իզուր էին մատնանշում, թե թուրքական սահմանադրության վերականգնումից հետո ավելորդ է դառնում [այն], որ Դաշնակցությունը շարունակում է կրել «հեղափոխական» անունը։ Դաշնակցությունը չընդունեց այդ և ահա մի նոր առիթ, որ երիտթուրքերը ծուռ աչքով նայեն նրան։ Սառնության

պատճառ վերջիվերջո պիտի տար և այն հանգամանքը, որ Դաշնակցությունը Թուրքիայում սկսում էր սոցիալիստական գործունեություն, թեև նրա սոցիալիզմն այն էր, որ անմահացրել է Երվանդ Օտյանն իր «Առաքելություն մը ի Ծապլվար» կծու երգիծաբանության մեջ։ Երիտթուրքերի կուսակցությունը չէր կամենա, իհարկե, որ իր աջակից և բարեկամ կուսակցությունը նույնիսկ այդքանն էլ անե, այլ կկամենար, որ նա իր պես զուտ օսմանյան-նացիոնալիստական ներշնչումներով լինի տոգորված։ Դրությունն անհամության էր հասնում մանավանդ այն դեպքում, երբ դաշնակցականներին հաջողվում էր գործադուլներ կազմակերպել այս կամ այն ձեռնարկության մեջ և այսպիսով գլխացավանք պատճառել երիտթուրքերի կառավարությանը։

Եվ այսպիսով, ապագայի համար հուսատու հանգամանքներ շատ չէին երևում։ Դաշնակցությունը չէր գիտակցում, թե ինչ ահագին պատասխանատվություն է վերցրել իր վրա՝ իբրև միակ խոշոր քաղաքական կազմակերպություն, որ իր ձեռքն էր առել ամբողջ հայության ճակատագիրը։ Ստեղծագործ միտք նա առաջ չբերեց և այս անգամ, երբ նորից ու նորից հայ ժողովրդի մահվան և կյանքի առեղծվածն էր դրված։ Նա էլի շարունակեց հինը՝ հայդուկային կազմակերպությունը և Եվրոպայի՝ արդեն հարյուր անգամ արատավորված պաշտամունքը։ Դաշնակցականները (նրանցից ետ չէին մնում և հնչակյանները) զինում էին հայ ժողովրդին, շարունակ պահանջում էին, որ ամենքը զենք ունենան։ Եվ այս, իհարկե, տեսնում էին թուրքերը։ Ժնևից՝ «Դրոշակի» խմբագրությունից բեռներով Կ.Պոլիս էին ուղարկվում հայդուկային գրականություն և նկարներ։ Այս ապրանքը տարածվում էր մայրաքաղաքում և գավառներում, վերանորոգվում էր հինը, անջատ ազգային ինքնուրույնության գաղափարը ոչ թե չէր թուլանում, այլ ընդհակառակը՝ ավելի և ավելի ուռճանում էր։

Դաշնակցությունը մտել էր ամեն տեղ, տիրացել էր բոլոր ազգային, հասարակական, կրթական հաստատություններին։ Ազգային ժողովի մեջ նա էր ուղղություն տվողը։ Եվ նրա ուժը առաջվա պես հենվում էր զինվորական կազմակերպության վրա։ Հաջողություններից ամբարտավանության ծայրը հասած՝ նա երևակայում էր իրեն ռազմական մեծ կարողության տեր, պատրաստ՝ կռիվ սկսելու ամեն տեղ։ Ես հիշում եմ այն վրդովմունքը, որ պատճառեց Մալումյանը նույնիսկ Ժնևի դաշնակցական շրջաններին, երբ նա Կ.Պոլսի Ազգային ժողովի նիստում, ողջունելով նորընտիր Իզմիրլյան կաթողիկոսին, խորհուրդ էր տալիս նրան Ռուսաստան գնալուց հետո, կռվել ռուսական բռնակալության դեմ. ասում էր, թե այդ կռվի համար նրա տրամադրության տակ կլինեն Ռուսաստանում եղած դաշնակցական բոլոր ուժերը։ Ճիշտ որ, դոնքիշոտությունն ավելի հեռուն գնալու տեղ չուներ։

## Գ

Փարիզից ես գնացի Ժնև, ուր մնացի մի ամսից ավել՝ սպասելով, թե երբ դոկտոր Ռուն կվերադառնա ամառային գյուղագնացությունից և կընդունի ինձ՝

վիրահատությանս հարցը վճռելու համար։ Ապրում էի «Դրոշակի» խմբագրությունից ոչ հեռու, ամեն օր լինում էի այնտեղ, ուր հանդիպում էի իմ հին ընկերներին և ծանոթներին։ Ինձ՝ մի հիվանդ, լեզու չիմացող օտարականիս համար այդ միակ հայկական հիմնարկությունը շատ մեծ նշանակություն ունեցավ, և ես միանգամայն ընդմիշտ պիտի խոստովանեմ, որ «Դրոշակի» խմբագրատանը ես գտա ամենաջերմ բարեկամական վերաբերմունք, խնամք և հոգատարություն, մասնավորապես, Դաշնակցության հայտնի գաղափարախոս և իմ հայրենակից Միքայել Վարանդյանից։ Ես միշտ շնորհակալ եմ եղել, այսուհետև էլ կլինեմ այն բոլորի համար, ինչ վերաբերում է ինձ անձնապես։

Բայց հարցն այստեղ, իհարկե, այդ չէ։

«Դրոշակի» խմբագրությունն ինձ առանձնապես հետաքրքրում էր իբրև մի հիմնարկություն, որ այնքան խոշոր դեր էր կատարել և կատարում հայ կյանքի մեջ։ Դա մի փոքրիկ շվեյցարական տնակ էր, երկհարկանի, առանձնակի կանգնած մի պարտեզի մեջտեղը։ Ներքևի հարկում գրաշարանոցն էր, վերևի հարկում՝ խմբագրատան դահլիճը, որ ներկայացնում էր մի ամբողջ դաշնակցական թանգարան։ Պատերից կախված էին հերոս-հայդուկների պատկերները և ամենից վերևում, ամենապատվավոր տեղը՝ Քրիստափոր Միքայելյանն էր, որ արդեն կուսակցական պաշտամունք էր դարձել, և նրա հիշատակներով լեցուն էր այս ամբողջ տնակն իր պարտեզով։ Խնամքով պահվում էին և կուսակցության համար նվիրական սրբություններ դարձած զանազան զենքեր և իրեր, որոնք հայդուկային կռիվների մեջ խլված ռազմավարներ էին և երկրից բերվել էին այստեղ՝ պահպանության համար։ Բայց ամենից նշանավորն այն արխիվն էր, որ հավաքել էր խմբագրությունը, և որի մեջ պահվում էին ամեն տեսակ գրագրություններ՝ երկրից և աշխարհի բոլոր կողմերից։ Շատ ափսոսում եմ, որ հիվանդությունս թույլ չտվեց ինձ գոնե մասնակի պրպտումներ կատարել այդ շատ հարուստ նյութերի մեջ։ Այսօր ես, անշուշտ, ավելի շատ տվյալներ կունենայի իմ լուսաբանությունների համար, եթե կարողացած լինեի ծանոթություններ մշակել հայդուկային մեծ արխիվից…

Իբրև հայդուկային աշխարհավարության մի բարձր հիմնարկություն՝ «Դրոշակի» խմբագրությունն ամբողջապես իմ աչքի առջև էր։ Ես տեսա անհավասար, հուսահատական կռվի շատ դրվագները՝ ոգևորություն, հերոսություն, ապարդյունություն։ Եվ սա գալիս-հասնում էր այն դիվանագիտական «ռեդինգոտին», որ տանում էր այս փոքրիկ տնակից չափահաս և խելահաս համարված մարդկանց՝ իմպերիալիստական գայլերից ողորմություն մուրալու…

Դաշնակցության այս դեմքը միանգամայն լավ լուսավորված էր։ Հետաքրքրական էր տեսնել մյուս դեմքը՝ սոցիալիստականը։ Ես այդ էլ տեսա։

Դաշնակցությունը մտել էր Երկրորդ ինտերնացիոնալի մեջ՝ ռուսական էսէռների փեշի տակ։ Երաշխավոր-հսկողի հարկավորություն կար, և այդ դերը

կատարում էր Ժնևում ապրող հայտնի էսէռ Վ. Լունկևիչը։ Հենց որ նկատում էր, թե «տղերքը» հակասոցիալիստական շեղումներ են անում, իսկույն գնում էր «Դրոշակի» խմբագրություն և, շեմքից դեռ ներս չմտած, ասում էր երևանցու շեշտով. «Էս ի՞նչ ա»։ Բացատրություններ, մեկնություններ… Լունկևիչը ծանր շարժում էր գլուխը, իր պահանջներն էր դնում և հիշեցնում, որ էսէռական կուսակցությունն է երաշխավորը Ինտերնացիոնալի առաջ։ Եվ այսպես մտրակելով էր նա պահում Դաշնակցությանը սոցիալիզմի հարթոցի վրա։ Այնպես որ, 1908-ի ամռանը Վարանդյանը գնաց Ինտերնացիոնալի համագումարին, կարծեմ՝ Անտվերպեն, հաշիվ ներկայացրեց Դաշնակցության սոցիալիստական գործունեության մասին և վերադառնալով՝ պատմեց իր խոսակցությունները Կաուցկու, Վանդերվելդեի և ուրիշների հետ։

Բայց ինչ էլ լիներ, սոցիալիզմը չէր բռնում դաշնակցական հողի վրա, և շուտով էլի Լունկևիչն ավելի մի ծանրակշիռ առիթ էր ունենում իր «Էս ի՞նչ ա»-յով գնալ «Դրոշակի» խմբագրատուն։ Բուլղարիան օգուտ քաղելով թուրքական հեղափոխությունից՝ իրեն անկախ հռչակեց։ Մի օր Ժնևի լրագրերում տեղեկություն տպվեց, թե հարաբերություններն այս առիթով այնքան լարվել են Թուրքիայի և Բուլղարիայի միջև, որ պատերազմ է սպասվում, և Դաշնակցությունը խոստացել է թուրք կառավարությանը՝ նրա տրամադրության տակ դնել իր բոլոր զինված ուժերը։ Տեղեկության այս երկրորդ կեսը սաստիկ զայրույթ պատճառեց Ժնևի բուլղար ուսանողությանը։ Լրագրերում սաստիկ հարձակողական հոդվածներ տպվեցին հայերի և նրանց հեղափոխական կուսակցության դեմ։ Այս բավական չէր, կայացավ բողոքի միտինգ. Դաշնակցությունը դատապարտվում էր մանավանդ այն պատճառով, որ իրեն սոցիալիստական կուսակցություն է անվանում և, սակայն, պատրաստվում է կռվել մի ուրիշ ազգի ազատության դեմ։

Աղմուկը շարունակվեց՝ մինչև որ հետագա լուրերը եկան հանգստացնելու բուլղար ուսանողներին։ Ո՛չ Թուրքիան պատերազմ հայտարարեց Բուլղարիային, ո՛չ էլ Դաշնակցությունը միացրեց իր զինական ուժերը թուրքական բանակին։

Շուտով, սակայն, ես կտրվեցի աշխարհից՝ մտնելով դոկտոր Ռուի հիվանդանոցը, ուր ենթարկվեցի ծանր վիրահատության, տեսա գերեզմանս, բայց էլի կյանքին վերադարձվեցի։ Եվ առաջին շշուկներից մեկը, որով կյանքն ինձ նորից ընդունեց իր մեջ, այն էր, որ Կովկասում ռուս կառավարությունն սկսել էր ձերբակալել դաշնակցականներին։ Ինձ, ճիշտն ասած, փոքր-ինչ անբացատրելի թվաց այդ նորությունը։ Թուրքական հեղափոխությունից ամիսներ առաջ, 1907-1908-ի ձմռանը, հարաբերությունները Ռուսաստանի և Թուրքիայի մեջ այնքան էին լարվել, որ պատերազմը գրեթե անխուսափելի էր համարվում։ Թուրքական զորքերը կուտակվում էին սահմանի մյուս կողմում, ռուսներն էլ մեծամեծ պատրաստություններ էին տեսնում Ալեքսանդրապոլի և Կարսի երկաթուղիների վրա։ Այդ ժամանակ էլ հայտնի դարձավ, որ թեև ռուս կառավարությունը մի կողմից աշխատանք էր թափում Դաշնակցությանը ոչնչացնելու, բայց մյուս կողմից՝

կովկասյան բանակի շտաբն իր ռազմական ծրագրերի մեջ ունի որոշում՝ օգտվելու, պատերազմի դեպքում, դաշնակցական զինվորությունից՝ առաջապահ-հետախուզական ծառայության համար։ Շտաբն, իհարկե, միշտ գտնվում էր միայն Թիֆլիսում պահված 7 հազար զինվորների առասպելի ազդեցության տակ։

Բայց բանն այդ չէր։ Կարսից Թիֆլիս եկավ շտաբի սպաներից մեկը՝ հատկապես Դաշնակցության հետ բանակցություններ վարելու։ Ինձ շատ լավ հայտնի էր, որ այդ սպան դաշնակցական շեֆերի հետ իր ունեցած առաջին տեսակցության միջոցին ասել էր. «Պարոններ, ես զինվոր եմ, քաղաքական հարցերի հետ առնչություն չունեմ և բացարձակապես հայտնում եմ, որ ձեր մարտական ուժերի աջակցությունը մեզ անհրաժեշտ է և շատ ցանկալի։ Խոսենք, թե ինչ պայմաններով կարող եք դուք օգնել մեր զորքին»։ Սակայն շեֆերն այս անգամ գովելի խոհեմություն էին ցույց տվել՝ ասելով, թե պատերազմի դեպքում Դաշնակցությունը չեզոք դիրք կբռնի, որովհետև Թուրքիայում ունի մի անպաշտպան ժողովուրդ, որ սրի կքաշվի, և ոչ ոք չի լինի, որ բռնի թուրքի ձեռքը, ինչպես որ չի եղել մինչև այսօր։ Համաձայնություն չկայացավ։ Ինձ այն ժամանակ մի իրազեկ հայ սպա պատմում էր, թե պատերազմի դեպքում ռուսական ծրագրի առաջին կետերից մեկն է՝ առատությամբ զենք մտցնել Թուրքահայաստան, անթիվ ու անհաշիվ բաժանել հայերին և ապստամբեցնել նրանց։

Այս հանգամանքները թելադրում էին հավատալ, որ Դաշնակցությունը, ինչ էլ լինի, հայտնի դեպքերում պետքական պիտի համարվի ռուսաց կառավարության համար։ Այս տեսակետից էր ինձ փոքր-ինչ անբացատրելի երևում այն հալածանքը, որ հարուցվում էր Դաշնակցության դեմ։ Բայց, երբ դեկտեմբերին իմ ծանր հիվանդությունից ապաքինված վերադարձա Թիֆլիս, տեսա, որ դրությունն իսկապես շատ լուրջ է։ Խուզարկությունները և կալանավորությունները գնալով սաստկանում էին։ Ձերբակալվեցին Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը և ուրիշ շատերը։ Դաշնակցության արգանդից դուրս եկած միհրանականությունն այժմ սպառնում էր ամբողջապես լափել նրան։ Միհրանը բանտարկված էր և մեկիկ-մեկիկ մատնում էր իր նախկին կուսակցական ընկերներին։ Բայց չարիքի աղբյուրը միայն նա չէր։ Ստոլիպինն արդեն չափազանց հղփացած էր ռեակցիայի հաջողությամբ և վճռել էր տեռորի ենթարկել հայ ժողովրդին, ու այս բանը կատարում էր Շչեգլովիտովը՝ հիմք դնելով նմանը չտեսնված մի վիթխարի քաղաքական դատի։ Նախնական քննությունն արտակարգ լիազորություններով հանձնվեց Նովոչերկասկի քննիչ Լիժինին, որի մի հատ ակնարկով հարյուրավոր մարդիկ բանտ էին նետվում։

Խուզարկությունները շատացան մանավանդ 1909-ի գարնանը, երբ ձերբակալվեցին Ահարոնյանը և ուրիշ շատերը։ Թվում էր, թե այդ մի ընդհանուր հալածանք է հայ ինտելիգենցիայի դեմ, որովհետև դաշնակցականների հետ ձերբակալվում էին և շատ ոչ դաշնակցականներ, նույնիսկ և Դաշնակցության հակառակորդներ։ Խուճապը կատարյալ էր։ Գիշերները մարդիկ հանգիստ քուն չունեին։ Յուրաքանչյուր ձայն ու թխկոց կարծել էր տալիս, թե եկան խուզարկելու,

տանելու։ Ամեն մեկը շտապում էր իր գլխի ճարը տեսնել։ Կային և այնպիսիները, որոնք դիմում էին անում «հայոց պաշտպան» Վորոնցով-Դաշկովին, որը, սակայն, պատասխանում էր, թե այդ գործի մեջ ինքը որևէ մասնակցություն չունի։ Բայց ոչ ոք, իհարկե, չէր հավատում այս չքմեղությանը։

Եվ գիտե՞ք ինչ մեղադրանքով էին այնքան կալանավորություններ կատարվում։ Հայ-թուրքական կռիվներին մասնակցելու համար. այն կռիվներին, որոնք ամբողջովին ռուս կառավորության գործն էին և որոնց համար, սակայն, ոչ մի չինովնիկ պատիժ չէր կրում։ Թուրքերի դեմ ոչ մի հալածանք չսկսվեց, հալածում էին միայն հայերին, թե ինչու նրանք զենք են վերցրել և իրենք իրենց պաշտպանել։ Այսքան ահա անառակ էր Նիկոլայ Բ-ի կառավարությունը։ Ինչ խոսք, որ եթե կառավարությունն այդպիսին էր, պատճառն այն էր, որ հենց ինքը Նիկոլայն էլ այդպիսին էր։ Մայիսին նրան էր ներկայացել նորընտիր կաթողիկոս Իզմիրլյանն ու խնդրել բանտարկյալների ազատությունը։ «Մինչ դուք տեղ կհասնեք (Էջմիածին), ամենքն արդեն ազատված կլինեն»,- պատասխանել էր Նիկոլայը։ Բայց սա մի «ամենաողորմած» ստախոսություն էր։

Դ

Սարսափ և հուսահատություն էր Կովկասի հայության մեջ։ Իսկ սահմանից այն կողմ՝ Թուրքիայում, հանդարտություն և ազատություն էր։ Դիրքերը փոխվել էին։ Մինչ այդ Թուրքիայից հալածվածները Ռուսաստան էին փախչում, այժմ Ռուսաստանից խմբերով փախչում էին Թուրքիա և այնտեղ ապահովություն և պաշտպանություն գտնում։ Կ.Պոլիսը լցված էր զանազան տեղերից գնացած հեղափոխականներով, ուսանողներով և այլն։ Թիֆլիսից փախած մի խումբ դաշնակցական մտավորականներ հաստատվել էին Էրզրումում և եռանդով գործում էին. բավական ազդեցիկ «Յառաջ» թերթն էին հրատարակում, իրենց ձեռքն էին առել դպրոցական գործը։ Էրզրումը կուլտուրական կենտրոնի նշանակություն էր ստացել։

Բայց հանկարծ, անսպասելիորեն, այս գարնանային գեղաժպիտ օրը մթագնեց. սարսափի ձայնն է բարձրանում Կիլիկիայից։ 1909-ի գարնանը Աբդուլ-Համիդը հեղաշրջում էր կատարել Կ.Պոլսում՝ ոտքի կանգնեցնելով երիտթուրքերի թշնամի պահպանողական տարրերին, որոնց միացել էին և Կ.Պոլսում գտնված թուրքական զորքերը։ Այս լուրն առնելուն պես Սալոնիկի բանակն արշավանք սկսեց Կ.Պոլսի դեմ, եկավ-գրավեց մայրաքաղաքը, վերականգնեց սահմանադրությունը։ Աբդուլ-Համիդն այս անգամ գահընկեց եղավ և աքսոր ուղարկվեց Սալոնիկ։ Բայց մինչև այդ, քանի դեռ իր արյունոտ գահի վրա էր, այդ հրեշը կատարեց իր վերջին հրեշային ոճիրը՝ հրամանագրելով հայերի ջարդ Ադանա քաղաքում և շրջականերում. մի ջարդ, որին զոհ գնաց մոտ 30 հազար անմեղ մարդ։

Այսպիսով սաստիկ վարկաբեկվում էր Թուրքիայում հաստատված ռեժիմը։ Բանից դուրս էր գալիս, որ հեղափոխական մեղրալուսինը լոկ խոսքերից և ծեսերից

էր բաղկացած, որ պառլամենտական Թուրքիայում էլ հայ ժողովուրդն ապահով չի կարող համարվել ջարդերից։ Երիտթուրքերի կուսակցությունն ամեն ջանք գործադրում էր ցույց տալու համար, որ Ադանան ամբողջովին հին ռեժիմի ոճիրն է։ Բայց այս ջանքերը չպսակվեցին կատարյալ հաջողությամբ։ Մնացին շատ կասկածներ, որոնք ապացուցում էին, թե երիտթուրքերն էլ անմեղ չեն։ Այս ապացույցների շարքին էր պատկանում նախևառաջ այն, որ երիտթուրքերը, նորից իշխանության տիրանալով, ամեն կերպ աշխատում էին խեղդել Ադանայի գործը։ Բավարարություն չէին տալիս հայերի արդար պահանջներին և այլն։

Բայց պետք է խոստովանել, որ այս տրամադրությունը պատահական և քմածին չէր։ Կար և հետզհետե աճում էր այն սոսկալի ողբերգական դրությունը, որ հայերը չէին հասկանում իրենց դիրքը նոր, վերանորոգվող, սահմանադրական Թուրքիայում։ Նրանք ազատություն էին ստացել և կարծում էին, թե այդ անծայր և անսահման մի ազատություն է։ Երիտթուրքերին նրանք լավ ճանաչել չէին կարողանում։ Չէին տեսնում կամ չտեսնելու էին դնում, որ Սալոնիկի զորաբանակի սվինների վրա հաստատված նոր ռեժիմը ծայրահեղորեն նացիոնալիստական ռեժիմ է, և որ երիտթուրքը նույնիսկ Աբդուլ-Համիդից ավելի թշնամի է ամեն մի առանձին ազգային շարժման, որ նրա մեջ ապրողը, գործողը հին միդհատյան իդեալն է՝ բոլոր ազգությունների ձուլումը մի ընդհանուր անվան՝ օսմանացիության մեջ։

Իրական ուժը, նա, որ տիրապետում էր և հրամայում, այսպես էր։ Նա նույնիսկ լսել չէր ուզում ապակենտրոնացման մասին, որ ծրագրային սկզբունք էր իշխան Սաբահեդդինի կուսակցության համար. այնպես որ, Սաբահեդդինը ստիպված էր նորից հեռանալ Թուրքիայից։ Իսկ հայերը, ինչպես վերևում ասացի, ազատվելով թուրքական հին ռեժիմից, չուզեցին ազատվել նաև իրենց հին ռեժիմից. էլի հայդուկային պաշտամունքը հրապարակ նետեցին, զինվել սկսեցին՝ անկախ կամ գեթ ինքնավար Հայաստան՝ որքան կարելի է շուտ ստեղծելու համար։ Կիլիկիան Հնչակյան կուսակցության գործողությունների վայրն էր։ Հնչակյաններն ամենագրգռիչ դիրք էին բռնում։ Նրանք հրատարակում էին «Ինքնավար Հայաստան» անունով թերթ, դաշնակցում էին ապակենտրոնացում ընդունող թուրք կուսակցության, ասել է՝ երիտթուրքերի կատաղի թշնամիների հետ, զինում էին կիլիկիացիներին, իսկ Ադանայի պոռոտախոս առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսը իր քարոզների մեջ խրատում էր, որ ամեն մեկը զենք գնի, պատրաստվի։ Թուրքերն էլ իրենց կողմից էին զինվում։ Եվ մի օր, իհարկե, պիտի գար, երբ այդ զենքերն իրենք իրենց պիտի պայթեին։ Այդպես էլ եղավ Աբդուլ-Համիդի սկսած պետական հեղաշրջման հետևանքով և նրա հետ կապված։ Եվ երիտթուրքերը չպիտի լինեին գլուխ պատռողները, որ թուրքական հին ռեժիմը չջարդի հայկական հին ռեժիմը։ Ընդհակառակը, նրանք իրենք էլ ընդունում էին նույն այդ մեթոդը՝ նոր ռեժիմի միատարր օսմանցիության ռեժիմի հաղթանակի համար։

Այս տեսակ վերաբերմունքը դեպի Ադանայի ջարդը, այնուամենայնիվ, մազի չափ չվնասեց այն մոտիկ բարեկամական հարաբերություններին, որոնք գոյություն ունեին Դաշնակցության և երիտթուրքերի միջև։ Ամենից առաջ հիշատակելի է այն փաստը, որ Ադանայի արյունն այլևս դաշնակցականների ձեռքը չտվեց դիվանագիտական մուրացկանի ցուպը և չուղարկեց նրանց Լոնդոնի, Փարիզի կառավարիչների դռները ծեծելու։ Գարշելի եվրոպապաշտությունից Դաշնակցությունը թվում էր բուժված։ Եթե այս ընդմիշտ էլ չէր, այլ գեթ երկար ժամանակով, չէր կարելի սա չհամարել ինքնադաստիարակության գնահատելի նվաճում։ Ոչ միայն այս։ Օսմանյան պառլամենտում նստած հայ պատգամավորները, մեծագույն մասամբ դաշնակցական, գրեթե լուռ մնացին Ադանայի դեպքերի հանդեպ, չանհանգստացրին երիտթուրքերի կառավարությանը հարցապնդումներով, բողոքներով, պահանջներով։ Եվ երբ «Բյուզանդիոն» լրագրի խմբագիր [Բյուզանդ] Քեչյանն այդ առիթով գրեց, թե հայ պատգամավորները շատ լավ գիտեին, որ եթե խոսելն արծաթ է, լռելը հո ոսկի է, որ ամեն ամիս տրվում է նրանց պետական գանձարանից իբրև ռոճիկ, դաշնակցական խուժանը հարձակվեց նրա վրա և ծեծեց։

Դժվարություններ ստեղծել երիտթուրքերի կառավարության դեմ Դաշնակցությունը չէր ուզում։ Ավելի արտոնված, ավելի տիրապետող դիրք գրավելու համար՝ նա նույնիսկ պաշտոնապես, գրավոր կերպով դաշինք կնքեց երիտթուրքերի կուսակցության հետ և առ ու ծախի առարկա դարձրեց նույնիսկ Ադանայի արյունը։ Ստանալով երիտթուրքերից խոստում, թե առաջիկա պառլամենտական ընտրություններին դաշնակցականներին կտրվի 20 տեղ, այդ հայ հեղափոխական կուսակցությունը ստորագրում է դաշնակցային պայմանագրի այն հոդվածն էլ, որ ասում էր, թե Ադանայի արյունահեղությունը պիտի մոռացության տրվի… Մնում էր, որ հին ավանդական սովորությանը հետևելով՝ Կ.Պոլսի հայոց պատրիարքը բողոք բարձրացնի Ադանայի վերաբերմամբ գործադրված անարդարությունների դեմ։ Ինչպես սովորություն էր, Դուրյան պատրիարքն այդ բողոքի հետ ներկայացրեց և իր հրաժարականը։ Այն ժամանակ նրա դեմ խիստ և երկարատև արշավանք սկսեց Դաշնակցությունը՝ պահանջելով, որ նա ետ վերցնի իր հրաժարականը և, առհասարակ, չխառնվի այնպիսի գործերի մեջ, որոնք զուտ կրոնական հանգամանք չունեն։ Մի պահանջ, որ երիտթուրքերն էլ էին առաջ քաշել։

Այսպես սրտագին-մտերմական էին հարաբերությունները հայ և թուրք երկու կուսակցությունների մեջ։ Երիտասարդ թուրքերը դեռ պատճառ չունեին իրենցից խրտնեցնելու դաշնակցականներին։ 1909-ի պետական հեղաշրջումից հետո խախուտ մի կայունություն էր ստեղծվել նրանց համար։ Հարկավոր էր մրցություն հակառակորդ պահպանողական կուսակցության դեմ, և այդ մրցության մեջ դաշնակցականների աջակցությունը կարևոր էր։ Մերձակցությունը երկու դաշնակից կուսակցությունների շեֆերի մեջ ընդունում էր անձնական-մտերմական կերպարանք։ Այսպես, Մալումյան-Ակնունիի և շատ ազդեցիկ երիտթուրք Թալեաթ-բեյի

հարաբերությունները սերտ ընկերական էին։ Ապագան ցույց տվեց, թե ինչ սոսկալի կեղծիք կա այդ բարեկամության մեջ։

Եվ այսպես, Դաշնակցությունը ցույց էր տալիս, որ իր համար այժմ ամեն ինչ է կուսակցական եսամոլությունը։ Թուրքիայում այդպիսի մի արտոնված դիրք ստեղծելը նրա համար շատ կարևոր էր՝ նախևառաջ նկատի առնելով այն տագնապն ու տեռորը, որոնց ենթարկված էր կուսակցությունը Ռուսաստանում։ Հենվելով երիտթուրքերի համակրության վրա՝ Դաշնակցությունը մի ամբողջ արշավանք էր կազմակերպում ցարական բյուրոկրատիայի դեմ՝ դրանով իհարկե մեծ հաճույք պատճառելով ամբողջ օսմանցիությանը, որ շատ լավ գիտեր, թե ցարիզմն է Թուրքիայի դարավոր անհաշտ և ահարկու թշնամին։ Ահա մի թռուցիկ, որ բաց թողեց Դաշնակցությունը կովկասյան բանտարկությունների առիթով։

«Հայրենակիցնե՛ր.

Տասնյակ տարիներ շարունակ հայ հեղափոխության օրրանը հանդիսացող Կովկասն այսօր ցավագնորեն կտնքա բռնապետական բիրտ ուժի տակ։

Հայ ժողովրդի լավագույն մեկ սերունդը երկրորդ տարին է, որ կտառապի այնտեղ՝ ցարին հրեշավոր բանտերուն մեջ։ Ռուսական հեղափոխության շարժումներեն հետո ասպարեզն այժմ անզուսպ ռեակցիային է մնացել, որ շլացած իր արյունոտ հաղթանակներեն՝ կուռչի և անողոք կհարվածե և կտրորե հայ ժողովրդի լավագույն սերունդը, և ուսուցիչ թե բանաստեղծ, վաճառական թե արհեստավոր, մտավորական թե բանվոր, հեղափոխական թե խաղաղ քաղաքացի, ու բոլորը կտառապեն բանտերու մութ կամարներուն տակ։

Հայրենակիցնե՛ր, մեր ցավի ու կսկիծի օրերուն՝ մեր կողքին ապրող, մեր ցավով տանջվող հարազատներն են անոնք…

Սահմանի այս կողմը՝ Օսմանյան հողի վրա ազատություն կա այսօր, բայց սահմանի մյուս կողմը ցարիզմի խելացնոր կառավարությունն է իշխողը…

Սահմանադրության ազատությունները վայելող տաճկահայ ժողովուրդը երբեք չկրնար անտարբեր մնալ ի տես ոստիկանական այն բիրտ ճնշումներուն, որոնց ենթակա են մեր հարազատները, որ օր ու գիշեր այս խորունկ հավատով ու այս գիտակցությամբ է, ահա, որ ՀՅ Դաշնակցության արևելյան շրջանի ռայոնական ժողովը կոչ կնե թուրքահայ ժողովրդի բոլոր խավերուն անխտիր, որ անոնցմե ամեն մեկը փութա հասցնել նյութական օգնություն կովկասահայ քաղաքական բանտարկյալներուն. անոնց անխնամ մնացած ընտանիքներուն և սիրելիներուն շուտափույթ օգնություն անհրաժեշտ է…

Հայրենակիցնե՛ր, ուղղելով ձեզ ներկա կոչը՝ ՀՅԴ արևելյան շրջանի ռայժողովը միանգամայն աներկբա է, որ թուրքահայ ժողովուրդը պիտի շտապի անմիջապես պատասխանել անոր, իր ունեցածեն առատ մաս հանել իր տանջվող եղբորը….»։

Միաժամանակ դաշնակցականները, երիտթուրքերի հետ ձեռք ձեռքի տված, բողոքի և ցասման միտինգներ էին կազմում Կ.Պոլսի հայոց եկեղեցիներում, ուր որոտալից ճառեր էին արտասանում ցարական բռնակալության դեմ…

Մտերմությունն, այո՛, մեծ էր և սքանչելի։ Եվ ո՞վ կարող էր մտքով անգամ անցկացնել, թե ամենաշատը մի տարուց հետո քամին ուրիշ տեղից պիտի փչի և մեր դաշնակցականներին քշի տանի բոլորովին հակառակ ուղղությամբ…

Ե

1909-ի հալածանքներն այնքան նեղ կացություն էին ստեղծել դաշնակցականների համար, որ նրանք հնարավորություն չունեին իրենց թերթի խմբագրությունը վարելու։ Խուզարկություններն ու ձերբակալություններն անպակաս էին լինում նույնիսկ խմբագրատան մեջ. այդ պատճառով աշխատակիցները վախենում էին գնալ այնտեղ։ Ամռանը փակված թերթի փոխարեն սկսեց հրատարակվել «Հորիզոն» անունով թերթը, բայց հրատարակությունը շատ կրճատ էր։ Թերթի տնտեսական կառավարիչը, չգիտեմ, իր կատարած վատնումների՞, թե՞ մի այլ պատճառով, ինքնասպանություն գործեց։ Թերթը դադարեց, և այսպես շարունակվեց մի քանի ամիս։

Աշնան վերջերում իմ դաշնակցական ծանոթներից մի քանիսը սկսեցին երթևեկել ինձ մոտ և առաջարկեցին ինձ հանձն առնել «Հորիզոնի» խմբագրի պաշտոնը։ Ես բացեիբաց մերժեցի՝ ասելով, որ երբեք կուսակցության մարդ չեմ եղել և չեմ կարող կուսակցության թերթ խմբագրել։ Սակայն ինձ հետ բանակցողներն, ինչպես ասվում է մեզանում, ձեռք չվերցրին ինձանից։ Նրանք փոխակերպեցին հարցն այսպես. «Հորիզոնը» կուսակցական թերթ չէ, կազմում է իրենց՝ այդ երեք հոգու սեփականությունը, հրատարակվում է նրանց միջոցներով. նրանք ղեկավարվում են այն ցանկությամբ, որ հրապարակում լինի մի մաքուր և ազնիվ թերթ՝ առաջադիմական ուղղությամբ։ Ինձ տրվում է կատարյալ ազատություն։ Կարող եմ նույնիսկ Դաշնակցության դեմ գրել, քննադատել նրա գործողությունները։ Բացի իմ հիշած երեք անձնավորություններից՝ երկար ժամանակ ինձ համոզում էր նաև դաշնակցական հայտնի շեֆ Խաժակը։ Նա ինձ հավատացնում էր ամենայն անկեղծությամբ, իբրև ազնիվ մարդ, որ ձեռնարկությունը ոչինչ կուսակցական հանգամանք չունի, որ նա զուտ կուլտուրական-գրական մի գործ է։ Այսպես էլ մենք խոսեցինք և պայմանավորվեցինք բանաստեղծ Ավետիք Իսահակյանի մոտ, նրա նշանադրության գիշերը, և ես վերջապես համաձայնությունս տվեցի։ Պիտի ասեմ, որ այս բանակցությունների ժամանակ ես միշտ խորհրդակցում էի իմ երկու մտերիմների՝ Ղազարոս Աղայանի և Հովհաննես Թումանյանի հետ։ Միասին

որոշեցինք դարձնել «Հորիզոնը» հայ գրողների օրգան, մանր-մունր հրապարակախոսական առօրեություններից ավել մշակել գրականության հարցերը, բարձրացնել նրա նշանակությունը։ Միայն երկուսի համաձայնությունը ստանալուց հետո էր, թե կաշխատակցեն ինձ, ես վերջնական խոսք տվի, և դեկտեմբերի սկզբին լույս տեսավ «Հորիզոնի» համարը՝ իմ ստորագրությունը կրող մի առաջնորդողով, որի մեջ ես հայտարարում էի, թե «Հորիզոնը» ոչ մի կուսակցության չի պատկանում։ Այս միևնույնը միաժամանակ վկայում էր և Խաժակը «Тифлисский листок» լրագրում տպված իր հոդվածի մեջ։

Միայն շատ ուշ, 1917-ի հեղափոխության օրերին, դաշնակցական շեֆ Կարճիկյանը մի վիճաբանության մեջ ինձ ասաց, թե Դաշնակցությունն իր օրգանն է համարել «Հորիզոնը» նաև իմ խմբագրության օրով, երբ նա անկուսակցական էր հայտարարված և հարձակվում էր Դաշնակցության վրա։ Բանից դուրս էր գալիս, որ դաշնակցական կոմիտեն է եղել ինձ մոտ իմ հիշած երեք անձնավորություններին և Խաժակին ուղարկողը, ինձ առաջարկություններ անողը։ Ես ուրիշ բան չգտա անելու այդ հանկարծական հայտնագործման դեմ, բայց միայն դիմեցի միևնույն սեղանի շուրջը նստած երեք անձնավորություններին և ասացի. «Դուք, ուրեմն, խաբեբաներ եք եղել»։ Պատմում եմ այս իբրև Դաշնակցությանը բնորոշող մի փաստ։ Ինքս իմ խղճի և համոզմունքի առջև խաբված չեմ համարում և վկա եմ կանչում իմ բոլոր գրությունները «Հորիզոնի» մեջ։ Սկզբից ևեթ ես քննադատողի դիրք բռնեցի Դաշնակցության դեմ։ Ես էի, որ դատապարտեցի դաշնակցականների համաձայնությունը երիտթուրքերի հետ և Ադանայի աղետը ծախու հանելը լոկ կուսակցական եսամոլության շահերի համար։

Ես էի, որ բողոքեցի Բյուզանդ Քեչյանին ծեծի ենթարկելու դեմ։ Միհրանը սպանվել էր դաշնակցականի ձեռքով, երկաթուղու վագոնում։ Միհրանի եղբայրը՝ Հաբեթը, վրեժ հանելով սպանել էր Կ.Պոլսից Էրզրում վերադարձող Եղիշե Թոփչյանին։ Թուրք կառավարությունը բռնել և կախաղան էր հանել Հաբեթին։ Թոփչյանի կինը գնացել էր հանդիսավորապես ներկա լինելու այդ պժգալի տեսարանին։ Ես դատապարտեցի այդ վարմունքը։

Դաշնակցականները համբերում էին, բայց ոչ երկար։ Համբերության բաժակը լցրեց Հովհաննես Թումանյանը, որ մի ուժեղ պատասխան տպեց Կ.Պոլսի այն դաշնակցականների դեմ, որոնք, ինչպես պատմեցի վերևում, բողոքի և զայրույթի միտինգ էին կազմել երիտթուրքերի հետ միասին Ռուսաստանի դեմ՝ դաշնակցականների կալանավորումների առիթով։ Տպավորությունն ուժեղ էր մանավանդ այն պատճառով, որ ինքը՝ նշանավոր բանաստեղծն էլ մեկն էր այդ կալանավորներից. արձակվել էր գրավականով և, իբրև այդպիսին, հիշեցնում էր Կ.Պոլսի դաշնակցականներին, թե նրանք ապրում են մի «ազատ» երկրում, ուր երեկ-անցյալ օրը խողխողվեցին 30 հազար հայեր։ Թիֆլիսի կոմիտեն կատաղությունից գիշերը տպարանից փախցրեց «Հորիզոնի» կլիշեն և հրատարակեց իմ դեմ մի թռուցիկ,

որի մեջ ինձ անվանում էր դավաճան։ Ես հարկ եղած պատասխանը տվի «Հորիզոնի» մեջ՝ ասելով, թե չեմ ուզում գործ ունենալ այնպիսի մարդկանց հետ, որոնց համար մարդ սպանելը մի բաժակ ջուր խմելուց էլ հեշտ է։ Եվ վեց ամիս դրամական սոսկալի տագնապի մեջ խմբագրի պաշտոնը վարելուց հետո, ես թողեցի ամեն ինչ և հեռացա։ Աշնան վերջերին, վերադառնալով Թիֆլիս՝ տեսա, որ «Հորիզոնի» խմբագրի պաշտոնի մեջ է Հովհաննես Թումանյանը։ Երեք հոգով՝ նա, Ղազարոս Աղայանը և ես, լծվեցինք խմբագրական գործին։ Հրապարակում երևացել էր մի նոր տիպի մարդ՝ կապիտալիստ Համբարձում Մելիքյանը, որ ուզում էր գնել «Հորիզոնը»։

Դուք տեսաք Դաշնակցության «բանաստեղծությունն» իմ վերաբերմամբ. ես… դավաճան։ Հարցրե՛ք հիմա, թե ինչպես էին վերաբերվում Դաշնակցությանը նրա սիրելիներն ու հարազատները, նրա հացով մեծացողները։ Խաժակը դուրս եկավ բանտից երաշխավորությամբ, և ես հարցրի նրան, թե ինչպես անցավ քննությունը, նա պատասխանեց ամենայն հանգստությամբ. «Ոչինչ։ Ես ասացի, որ դաշնակցական չեմ և ոչ մի Դաշնակցություն չեմ ճանաչում, այլ պարզապես ձախ ուղղության պատկանող մի գրող եմ»։ Եվ այսպես էր այն ամբողջ դաշնակցական զանգվածը, որ ընկել էր Լիժինի ձեռքը։ Ոչ ոք, բացի մի երկուսից, քաջություն չունեցավ խոստովանելու, թե ինքն, այո՛, Դաշնակցությանն է պատկանում։ Եվ այս խայտառակ իրողությունը մեծ շփոթություն էր պատճառել Պետերբուրգի այն փաստաբաններին, որոնք հանձն էին առել դուրս գալ Դաշնակցության գործում իբրև պաշտպաններ։ Այնպես որ, նրանցից երկուսը եկել էին Կովկաս՝ հայ հեղափոխական անվանվածներին փոքր-ինչ խրատելու համար։

Ես շատ լավ հիշում եմ այն երեկոն Տիգրան Հովհաննիսյանի մոտ, ուր մենք՝ մի խումբ հայ ինտելիգենտներ, հրավիրված էինք լսելու այդ երկու փաստաբանների (եթե չեմ սխալվում՝ Սոկոլով և Զարուդնի) զեկուցումը։ Լսեցինք։ Նրանք ասում էին, թե դաշնակցականների գործի մեջ պաշտպանների դրությունը շատ դժվարացնում է այն հանգամանքը, որ բոլոր մեղադրվողները միաբերան ժխտում են իրենց պատկանելությունը Դաշնակցություն կուսակցությանը։ Խոսքն այնպիսիների մասին չէ, որոնց պատկանելությունը ապացուցված չէ։ Ցավն այն է, որ Դաշնակցությունից հրաժարվելով հրաժարվում են և այնպիսիները, որոնց դաշնակցական լինելու մասին պարզ և անհերքելի ապացույցներ կան գործի մեջ։ Ուստի, անհրաժեշտ էր համարվում ներգործել այդպիսիների վրա, որ նրանք թողնեն պաշտպանության այդպիսի ժխտողական ձևը, որից հետո փաստաբաններին կմնա ջանք գործ դնել նրանց պաշտպանությունը լավագույն կերպով տանելու համար։

Մեր ուշադրությունը լարման աստիճանին հասավ այն վայրկյանից, երբ երկու իրավաբանները սկսեցին զուգակշիռներ դնելու համար փաստեր բերել ռուս հեղափոխականների կյանքից։ Նրանք վարել էին շատ քաղաքական գործեր, այն էլ այնքան կարևոր և ծանր գործեր, որոնց հետ համեմատած՝ դաշնակցական գործը

շատ համեստ մի բան է։ Դատավճիռները մեծագույն մասամբ կախաղանի էին հանգում, և մեղադրվածները գնում էին իրենց կյանքը դահիճներին տալու մի ջերմեռանդ պատրաստակամությամբ, կարծես մի սրբազնագործություն էին կատարում։ Եվ այսպես ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք։ Պատմվեց մի այսպիսի դեպք. փաստաբանը խնդրում-աղաչում է մի մեղադրվող օրիորդի, որ նա միայն մի բան ասի՝ այն, որ երբ իրեն հարցնեն՝ եղե՞լ է նա այսինչ ժողովում, պատասխանի՝ ոչ, այսպիսով նա կազատվի կախաղանից։ Բայց օրիորդը չի համաձայնում. «Ինչպե՞ս կարող եմ ասել, թե չեմ եղել, երբ եղել եմ»։ Անօգուտ են խնդրանքները։ Եվ հուսահատված պաշտպանը, իբրև վերջին միջոց, խնդրում է, որ նա գոնե ասի, թե չի ուզում պատասխանել իրեն տրված հարցերին, այդ նրա իրավունքն է։ Աղջիկը միայն այդ բանին է համաձայնում։ Ամբողջ երեկոն և հետո նաև ընթրիքի վրա այդպիսի պատմություններ էին լսվում, անձնազոհության, ինքնամոռացման, կամավոր և սրբազնագործ ողջակիզման պատմություններ։ Ես հիացած, վերացած էի, ամբողջ ժամանակ աչքիս առջև էր Տուրգենևի նկարած աղջիկը, որ մտնում է հեղափոխության տաճարի մեջ, և նրա ետևից լսվում է «Սրբուհի՛» բացականչությունը։ Եվ այս ծիածանային երևույթի առջև, որքան բիրտ ու ցուրտ էր մեր իրականությունը։

Եվ սակայն, դաշնակցական ինտելիգենցիան ցույց էր տալիս, թե առանց հեղափոխության ինքն ապրել չի կարող, թե նրան հարկավոր է հեղափոխությունը, ուր և ինչպես ուզում է լինի։ Ահա Պարսկաստանի հեղափոխությունը, որ հաջորդել է թուրքականին և երիտթուրքերի կողմից ամեն կերպ աջակցություն գտել։ Պարսկաստանում մի բուռ հայություն կա, որի գոյությունը միշտ նկատվել է իբրև մի շնորհ, որ անում են նրան շահերը, կալվածատերերը և հոգևոր պետերը։ Եվ հանկարծ, այդ փոքրիկ ու խղճուկ ժողովուրդը դառնում է աշխարհ դղրդացնող մի հեղափոխական ուժ, որ ջարդում է շահի զորքերը, շահին փախցնում է։ Ինչպե՞ս է բանն այսպես դառնում։ Կովկասյան հալածանքներից փախած դաշնակցականներ, որոնցից հռչակվում է մանավանդ մեկը՝ Եփրեմ անունով, գնում են Պարսկաստան, միացնում են իրենց հետ զանազան եկվոր տարրերի և սկսում ֆիդայական պատերազմ, որ Պարսկաստանի նման խեղճ և անկազմակերպ մի երկրում, իհարկե, անհամեմատ ավելի մեծ հաջողություն պիտի գտներ, քան Թուրքիայում։

Եվ ահա, ոգևորությունն ու ինքնագովությունը դարձյալ մեծամտության ցույցեր են հանդես բերում Ժնևից մինչև Թավրիզ։ Պարսկաստան է շտապում և գլխավոր շեֆերից մեկը՝ Ռոստոմը։ Ռուսաց կառավարությունն իր շահերին հակառակ է գտնում պարսկական հողափոխությունը, զորքեր է մտցնում Թավրիզ և Սալմաստ ու ամեն տեղ իր առջև ցցված տեսնում Դաշնակցությանը՝ իբրև հակառակորդ։ Դաշնակցականների մի մասը քաշվեց Ռոստոմի հետ դեպի հարավ և անցավ Թուրքիա։ Եփրեմը («Գարիբալդի» հորջորջված դաշնակցական գաղափարախոսներից) սպանվեց, ինչպես և պետք էր սպասել, պարսիկների ձեռքով։ Եվ վերջիվերջո դուրս եկավ, որ այս պարսկական ձեռնարկումը մի

արկածախնդրություն էր՝ առանց որոշ նպատակի, հենց այնպես, հեղափոխություն կատարած լինելու համար։

Այս առիթով ես մի բանավեճ ունեցա դաշնակցական գործիչ Արշակ Ղազարյանի հետ «Հորիզոնի» մեջ։ Ես աշխատում էի ապացուցել, որ դաշնակցականներն իրենց ֆիդայական կռիվներով վտանգում են մի բուռ թշվառ ու անպաշտպան պարսկահայ ժողովրդին՝ տալով նրան՝ մահմեդական ծովի մեջ ընկած այդ մի կաթիլին վտանգավոր, քայքայիչ մի տարրի համբավ։ Նա ինձ պատասխանեց, թե պարսկահայ ժողովուրդը պիտի մասնակցի պարսկական հեղափոխությանը, որովհետև Պարսկաստանը նրա հայրենիքն է։ «Ի՞նչ օգուտ այդ ֆիդայական կռիվներից, ի՞նչ օգուտ այն պատերազմից, որ թեև հերոսական, բայց և այնպես փոքրիկ ու անկարող խմբերն օսմանյան հզոր պետությանը հայտարարել էին Թուրքիայում»,- հարցնում էի ես։ «Ազգերն անմիջական օգուտի համար չեն հեղափոխություն կատարում,- պատասխանում էր Ղազարյանը,- օգուտը հետո կգա»։ Եվ փոխադարձաբար ինձ հարցում էր անում. «Ի՞նչ օգուտ տվեց Ֆրանսիական հեղափոխությունը 1848-ին»։ Հրաշալին այս անալոգիան էր՝ Ֆրանսիա և Սալմաստի մի երկու տասնյակ հայ գյուղեր։ Դաշնակցական վերամբարձ ռոմանտիզմը ոչ մի տարբերություն չէր տեսնում դրանց մեջ…

Ես՝ մեղավորս, կարծում էի, թե այս մի անբուժելի հեղափոխական է, հաճախ առանց որևէ նպատակի, հաճախ անհեթեթ նպատակով։ Ես կարծում էի, թե բավական է, որ բուժվի շիլ գաղափարը, և մենք չէինք ունենա շիլ շարժումներ ու գործողություններ։ Ես, իհարկե, լավ չէի տեղեկացված։ Այս կողմից Հովհաննես Քաջազնունին ինձանից ավելի բախտավոր էր։ Ես նոր կարդացի նրա նշանավոր գրքույկի մեջ («Հ.Յ. Դաշնակցությունն անելիք այլևս չունի»), թե նա ինքն էլ չէր հասկանում այն ժամանակ պարսկական արկածախնդրության բուն միտքը և երբ այս մասին հարցրեց Ռոստոմից, նա ասաց ժպտալով՝ Ռուսաստանից հալածված ենք, երիտթուրքերի հետ հաշտ ենք, ապա ի՞նչ անենք…

Այս, այո՛, բացատրություն է։ Այս, ճիշտ որ՝ պատճառ է… մարդիկ չեն կարող ձեռքերը ծալած նստել։ Մարդիկ չեն կարող գործազրկություն տանել։ Ի՞նչ անենք, որ նրանց գործն էլ հեղափոխությունն է։ Եվ նրանք որոնում էին այդ գործը, ստեղծում էին այն։

Եվ շուտով շատ ու շատ գործեր գտան նրանք իրենց համար։

**Գլուխ չորրորդ։ Սկիզբն անկման**

---

**Ա**

Դաշնակցական–երիտթուրքական մտերմությունն, ինչպես ասացի, երկար չտևեց և չէր կարող տևել։ Պատճառն այն էր, որ երկու կազմակերպություններն իրենց կազմվածքով և բովանդակությամբ կատարյալ հակառակորդներ էին։ Երիտթուրք

կառավարությունը միանգամայն անընդունակ հանդիսացավ բարեփոխություններ մտցնելու պետության ներքին կյանքի մեջ։ Նա շարունակ տարված էր արտաքին քաղաքականությամբ և զգում էր, որ պառլամենտական ռեժիմը Թուրքիային այնքան ուժ ու հեղինակություն չտվեց, որ նա կարողանա այժմ, ավելի հաջող՝ քան առաջ, դիմադրել եվրոպական պետությունների ոտնձգություններին, ուստի և պարտություններ էր կրում պարտությունների ետևից։

Նա աշխատում էր ավելացնել զինվորական ուժերը ցամաքում և ծովում. այս նպատակով զինվորագրության էր ենթարկում քրիստոնյաներին, բայց հենց դրանով մեծ դժգոհություն էր պատճառում նրանց։ Անկարող լինելով տալ ազգային հարցին նպատակահարմար և բավարար լուծում՝ երիտթրքությունը մնում էր կաշկանդված այն նախապաշարմունքի մեջ, որ ստեղծվել էր նրանց նախահայրերի նեղմտությունից։ Այդ այն էր, որ հավատում էին, թե Թուրքիայի դժբախտությունը նրա մեջ ապրող տարբեր ազգություններն են, ոչ միայն այլակրոն (ուրիշ խոսքով՝ ոչ մահմեդական), այլև կրոնակից, բայց այլացեղ (օրինակ՝ քրդերը, արաբները)։ Այդ պատճառով կուսակցությունը որոշել էր ամեն ջանք գործ դնել պետությունը միատարր թուրքական դարձնելու համար։ Եվ այս ուղղությունը դարձնում էր երիտթուրքերի կուսակցությունն ավելի ևս թունդ, անհամբերող, նացիոնալիստական։

Արտաքին քաղաքականության մեջ ուժ ձեռք բերելու համար երիտթուրքերն ընկնում էին Գերմանիայի գիրկը և այդպիսով հեռանում Թուրքիայի ավանդական բարեկամը հանդիսացող Ֆրանսիայից։ Գերմանական իմպերիալիզմը, տարված համաշխարհային տիրապետության և համագերմանականության ցնորքներով, Թուրքիան ավելի լավ իրեն հպատակեցնելու համար խրախուսում էր առանց այդ էլ երիտթուրքերի վաղեմի իդեալը կազմող համաիսլամական ձգտումները. այն տարբերությամբ միայն, որ այժմ կրոնակցության հետ միաժամանակ ուժգնորեն առաջ էր քաշվում և ցեղային սկզբունքը։ Համաիսլամությունից ավելի հարգված և կարևոր նշանաբան էր դարձվում համաթրքությունը՝ բոլոր թուրք տարրերի միացումը։ Այս միացման վրա գերմանական աշխարհակալ ամբարտավանությունը կառուցում էր Կովկասի, Միջին Ասիայի, գուցե նույնիսկ և Հնդկաստանի նվաճումը։ Երազվում էր մի այնպիսի մեծ Օսմանյան կայսրություն, որի նմանը չէր եղել։

Այսպիսի ծրագրերով, համաթուրքական լայնատարած պրոպագանդայով էին զբաղված երիտթուրքերը, մինչդեռ պետության ներքին բարեկարգության մասին ոչ մի հոգս չէր տարվում։ Այսպես, նրանք ոչ միայն չկարողացան, այլև չկամեցան փոքր-ինչ կարգավորել հողային հարցը Հայաստանում։ Այս մի ցավոտ, կնճռալից հարց էր, որ 50-60 տարիներից ի վեր հայ ժողովրդի տառապանքների գլխավոր աղբյուրն էր կազմել և Հայոց հարցի հիմքը։ Հողային հարցի մեջ խառնված էին քուրդ ավատական տերերի շահերը։ Հին ռեժիմին հարկավոր էին այդ տերերն իբրև ռազմական ուժի ներկայացուցիչներ, և այդ պատճառով հայ գյուղացիության ձայնը խեղդվում էր, և

նրա հողերին բռնի տիրացած քուրդ կալվածատիրությունը խրախուսվում և փայփայվում էր ամեն կերպ։

Նոր պառլամենտական ռեժիմից սպասվում էր, որ նա այլ կերպ կվերաբերվի հարցին և աշխատավոր գյուղացիության շահերի պաշտպան կհանդիսանա։ Բայց երիտթուրքերը շտապեցին ցույց տալ, որ քուրդ կալվածատերերն իրենց համար նույնքան թանկ են, որքան և հին ռեժիմի համար։ 1911թ. ամռանը ամբողջ թուրքահայության մեջ մեծ հուզում տարածեց Մուշի Օսման-փաշան, որ Մուշի գյուղերից մեկում, դիմելով հավաքված քրդերին, ասաց, թե հայերը նեղում են նրանց, կողոպտում ու թալանում են, բայց կառավարությունը չի թողնի նրանց և երբեք թույլ չի տա, որ հայերը տիրանան նրանց հողերին։ Սա մի պրովոկացիա էր, որ կատարվում էր կառավարության ներշնչումով և վերացնում հայ-քրդական հարաբերությունների լավացման ամեն մի հույս։ Նույն ամռանը սկսեցին լուրեր տարածել, թե պատրաստվում են նոր հայկական ջարդեր Թուրքիայում։ Ջարդեր չեղան, բայց հայտնի է, որ առանց կրակի ծուխ չի լինում։ Գերմանական աղբյուրները հաղորդում էին, որ հենց այդ ժամանակ երիտթուրքերի կուսակցական ընդհանուր ժողովը որոշել էր իրագործել «Թուրքիան թուրքերի համար» սկզբունքը, այսինքն՝ Թուրքիայի ամբողջ իսլամ ազգաբնակչությանը թուրքացնել լեզվի միջոցով։ Հայերի և ուրիշ այլակրոն ցեղերի մասին խոսք անգամ չէր կարող լինել, որոնք պիտի ջարդերի միջոցով վերացվեին մեջտեղից։

Ի՞նչ էր անում այդ ժամանակ Դաշնակցությունը։ Տեղյա՞կ էր երիտթուրքերի գաղտնի ծրագրերին։ Եթե տեղյակ էլ լիներ, դրանց վերաբերվում էր կատարյալ անտարբերությամբ և անհոգությամբ։ Ընկած էր իր ծապլվարական սոցիալիզմի ետևից, գավառներում դպրոցական գործունեությամբ էր զբաղված, ինքնապաշտպանության համար զենքեր էր գնում և բաժանում, իսկ նրա ֆիդայիները պահում էին իրենց ինչպես նվաճողներ։ Գրգռումը սաստկանում էր գավառներում, հարստահարությունները և մանավանդ հողերի բռնի հափշտակումները քրդերի և կառավարական պաշտոնյաների ձեռքով շատանում էին, և առաջվա նման Կ.Պոլսի հայոց պատրիարքարանն էր, որ այս առիթով գանգատներ էր ուղարկում թուրք կառավարությանը։ Հետզհետե հիասթափություն էր մտնում հայ ազգաբնակչության մեջ։ Ռուսաց զորքերը կանգնած էին Սալմաստում, Վանին այնքան մոտ և տեղական հայ ազգաբնակչությունը, միշտ անվստահ իր ապահովության համար, անհամբեր սպասում էր, թե երբ նրանք կգան իրենց երկիրը նվաճելու։

Իսկ արտաքին գործերը գնալով ավելի ու ավելի էին խճճվում։ 1911թ. Թուրքիան պատերազմի էր բռնվեց Իտալիայի հետ Տրիպոլիի համար. մի պատերազմ, որ տևեց գրեթե մեկ տարի։ Դաշնակցությունն անփոփոխ էր պահում իր բարեկամությունը երիտթուրքերի հետ։ Բայց 1912-ի պառլամենտական ընտրությունները գալիս էին եթե ոչ իսպառ ավիրելու, գոնե սառնություն մտցնելու այդ հարաբերությունների մեջ։ Խոստացված 20 պատգամավորների փոխարեն

Դաշնակցությունն ստացավ միայն 12-ը։ Սա պարզապես նշանակում էր, թե բարեկամները խաբել են բարեկամներին։ Կուսակցական եսամոլությունը սաստկապես վիրավորված էր. թեև մալումյանները և թալեաթները դեռ շարունակում էին իրենց մտերմությունը, սակայն այլևս համերաշխ գործունեության, երկրի ընդհանուր շահերին նվիրվելու գաղափարներն արագ գունատվում էին, ցրտանում։ Երկու կողմերն էլ մոռանում էին, որ նոր Թուրքիան հավասարության և ազատության սկզբունքներ է հայտարարել, և երկուսն էլ իրար հանդեպ ուրիշ մի բան չկարողացան անել, բացի միայն հին ռեժիմը կրկնել։ Եթե երիտթուրքերը ջանում էին ընդհանուր համիդական ջարդերով ազատվել հայերից, դաշնակցականներն էլ մի նոր գործ էին սկսում՝ երիտթուրքերից Հայոց հարցը դիվանագիտական ճանապարհով լուծելու միջոցով։

Նպաստավոր հանգամանք բերում էր այն, որ 1912-ի աշնանը Թուրքիային պատերազմ հայտարարեց Բալկանյան նորակազմ միությունը (Չեռնոգորիա, Սերբիա, Բուլղարիա և Հունաստան)։ Հազիվ էր վերջացել իտալական պատերազմը, և ջարդված ու թուլացած Թուրքիան միմյանց ետևից խիստ պարտություններ էր կրում այն փոքր ազգություններից, որոնք մի ժամանակ նրա հպատակներն էին եղել։ Դաշնակիցներն իրենց հաղթական զորքերը բերել-հասցրել էին Կ.Պոլսին. և արդեն խոսվում էր այն կոնֆերանսի մասին, որ պիտի հավաքվեր հաշտության պայմաններ մշակելու համար։ Եվ հասկանալի է, որ հայ դիվանագետների, ինչպես ասում են, «ջանը քոր է ընկնում»։ Ինչպե՞ս կարելի է, որ մի տեղ կոնֆերանս հավաքվի և հայն իսկույն չկտրի նրա դուռը՝ խնդրագիրը ձեռքին բռնած։

Դաշնակցությունն առանց այդ էլ ցուցադրել էր իր երկդիմությունը։ Մինչ Կ.Պոլսի նրա օրգանը հայրենասիրական հոդվածներ էր տպում և պահանջում, որ ամենքը գնան հայրենիքը պաշտպանելու, նրա անվանի և փառավորված խմբապետ Անդրանիկն իր կամավորներով կռվում էր բուլղարական շարքերի մեջ և հաղթություններ էր տանում թուրքերի դեմ։ Այս տեսակ մի գործ էր և այն, որ նա նախաձեռնություն հանձն առավ հարուցանելու Հայոց հարցը։ Առաջին անգամ խոսք եղավ, ասում են, Կ.Պոլսի Ազգային ժողովի մեջ։ Եվ իսկույն հայ դիվանագետները գործի կպան։ Ամենից առաջ, իհարկե, Դաշնակցության արտաքին գործերի շրջիկ մինիստր դոկտոր [Հակոբ] Զավրիևը։ Այս անգամ կարծում էին, թե Հայոց դատի պաշտպան կհանդիսանա Բուլղարիայի թագավոր Ֆերդինանդը։ Նա էր հաղթողը և, բացի դրանից, նա իր մանիֆեստի մեջ ասել էր, թե Բուլղարիայի պատերազմը Թուրքիայի դեմ՝ խաչի պատերազմն է մահիկի դեմ։ Եվ հավատացել էին մեր անուղղելի միամիտները և խաչի անունով մի խնդիրք էլ նրան էին տվել։

Բ

Բայց սխալ կլինի կարծել, թե նախաձեռնությունը Բոսֆորի ափերում բուսավ։ Իսկական նախաձեռնողին, եթե ուզում ենք որոնել, գնանք Թիֆլիսի փոխարքայական պալատ, ուր «հայոց թագավոր» Վորոնցով-Դաշկովն էր նստած։ Նիկոլայի

կառավարության մեջ հասունացած էր Մերձավոր արևելքում ավելի կտրուկ քաղաքականություն վարելը՝ եվրոպական պետություններից ետ չմնալու համար։ Եթե Վիլհելմ կայսրը, իբրև բարձրագույն շահ գերմանական կապիտալիզմի համար, ընտրել էր երեք տառ, երեքն էլ՝ Բ (Բրեմեն-Բեռլին-Բաղդադ երկաթուղի), ապա Նիկոլայն էլ ուներ իր երկու Պ-ն (Պետերբուրգ-Պարսից ծոց)։ Նա արդեն գտնվում էր այդ ճանապարհի վրա և հասել էր Սալմաստ։ Բայց հին, նույնիսկ նախապատմական ժամանակներից մնացած մի ռազմագիտական այբուբեն էր՝ տիրել Հայկական բարձրավանդակին՝ Պարսից ծոցին տիրելու համար։ Հարկավոր էր հարմար դիրքեր, համակրություններ ստեղծել այդ լեռների վրա։ Եվ Նիկոլայի կառավարությունը մտածում էր ձեռք վերցնել այն ապուշ քաղաքականությունից, որին կպած էր 1890-ական թվականների հայկական ճգնաժամին։ Լոբանով-Ռոստովսկին կամենում էր Հայաստանի լեռնադաշտը, բայց նախապես մաքրված հայերից։

Չէր կարող լինել իմպերիալիստական Ռուսաստանի և ոչ մի հատ պաշտոնյա, որ Հայաստան չկամենար։ 1877-1878թթ. պատերազմը վերջանալուց հետո արդեն երեխաների համար էլ պարզ էր, որ այնուհետև Ռուսաստանի առջև մի ճանապարհ է մնում դեպի Միջերկրական ծովը՝ Հայաստան։ Բեռլինի կոնգրեսի ժամանակ կոմս Լոռիս-Մելիքովը, որ Բեռլինի վրայով անցնում էր արևմտյան Եվրոպա, տեսակցություն ունեցավ հայ պատվիրակների հետ, ասաց նրանց. «Ի՛նչ պահանջելու եք՝ պահանջեցեք Կիլիկիայում։ Այս կողմը (Հայաստանը) մեզ թողեք, այս մեր ճանապարհն է»։ Հայերն այս բանը չհասկացան և ամբողջ ժամանակ կանգնած էին ռուս կառավարության դիմադրության առաջ։ Այժմ գալիս էին այնպիսի ժամանակներ, երբ քաղաքական հանգամանքները ստիպում էին, որ ռուսաց կառավարությունն իր դիվանագիտական միջոցներից մեկը դարձներ Հայոց հարցը։

Կովկասի փոխարքային մնում էր այնպես մշակել հայերին, որ ռուսական դիվանագիտությունն իր միջամտությունը խարսխեր հայերի հատուկ դիմումների վրա։ Այստեղ էլ Վորոնցով-Դաշկովի համար հլու գործիք էր դառնում հայ պալատականների շրջանը։ Դեռ 1908-1909թթ., երբ Պետական դումայում քննվում էր Կովկասյան համբավավոր հարցապնդումը և աջակողմը կատաղորեն հարձակումներ էր գործում Վորոնցով-Դաշկովի վրա այն պատճառով, որ նա իբր թե հենվում է ոչ թե պետության հլու հավատարիմ թուրքերի, այլ անվստահելի, անջատական ձգտումներով ապրող հայերի վրա, նույնիսկ այս պալատականների նախաձեռնությամբ հայերը մի շարք հեռագրերով և ուղերձներով ցույցեր արեցին ի պատիվ Կովկասի զրպարտված փոխարքայի։ Այժմ նրանք տեղեկանալով, որ Վորոնցով-Դաշկովն արդեն հարց է հարուցել Պետերբուրգում, որ փոխվի վերաբերմունքը դեպի Հայկական հարցը, ձեռնարկեցին մի ավելի մեծ գործի՝ ստեղծեցին համբավավոր Ազգային բյուրոն։

Բյուրոյի պաշտոնական արձանագրությունների մեջ այսպես է պատմված այդ հիմնարկության ծննդաբանությունը.

«1912 թվի աշնանը՝ Բալկանյան պատերազմը սկսվելուց հետո, թուրքահայ ժողովրդի վիճակը նորից և բուռն կերպով հայ հասարակության զանազան խավերի մտահոգության առարկա դարձավ։ Մի կողմից՝ հնարավոր ջարդերի սպառնալիքը և մյուս կողմից՝ Թուրքիայի գործերը վերջնականապես կարգավորելու համար հրավիրվելիք միջազգային կոնֆերանսի վրա դրված հույսերն առիթ տվին հայ մտավորականության զգայուն մասին՝ ըստ կարելույն համախմբել իրենց ջանքերը՝ ավելի լավ կերպով օգտագործելու հարմարավոր պատմական մոմենտը, նամանավանդ որ կողմնակի կերպով հաստատապես հայտնի էր դարձել ռուս կառավարության շատ նպաստավոր տրամադրությունը դեպի թուրքահայերի դատը։ Միաժամանակ Բաքվում և Թիֆլիսում միտք ծագեց հրավիրել զանազան հայաբնակ վայրերի ներկայացուցիչներից մի համագումար՝ խորհրդակցելու համար օրվա այդ հրատապ խնդրի մասին։

Առաջին խորհրդակցական ժողովը տեղի ունեցավ Թիֆլիսում, 1912 թվի հոկտեմբերի վերջերին։ Ժողովին ներկա էին պատգամավորներ Բաքվից, Երևանից, Ախալցխայից, Նոր Նախիջևանից, Արմավիրից, Բաթումից և այլ տեղերից, իսկ Թիֆլիսից՝ զանազան կուլտուրական հիմնարկությունների ներկայացուցիչներ։ Ժողովն ունեցավ երկու նիստ և որոշվեց՝

1) հրավիրել մոտ ապագայում ավելի լայն կազմով մի նոր համագումար՝ ըստ կարելվույն բոլոր հայաբնակ կարևոր վայրերի ներկայացուցիչներից՝ ընտրելու համար մի լիազոր մարմին՝ Հայկական հարցի շուրջն աշխատելու համար և

2) դիմել Ամենայն հայոց կաթողիկոսին և խնդրել, որ նա հանուն հայության մի դիմում անի Նորին մեծություն ռուսաց կայսեր՝ օգնության հասնելու թուրքահայ ժողովրդին այս տագնապալից օրերում։ Ժողովը մշակեց այդ մտքով մի բանաձև և հատուկ պատգամավորության ձեռքով այն ներկայացրեց Վեհափառ կաթողիկոսին։

Նույն ժողովում խնդիր եղավ նաև թուրքահայերի ինքնապաշտպանության մասին, բայց մեծամասնությունը որոշեց սահմանափակվել դիվանագիտական դիմումներով։

Ընտրվեց մի ժամանակավոր բյուրո, բաղկացած 7 հոգուց՝ Ս. Հարությունյան, Ալ. Խատիսյան, Ա. Քալանթար, Հ. Առաքելյան, Ա. Պողոսյան, Հովհ. Թումանյան և Ն. Աղբալյան։ Բյուրոն պիտի զբաղվեր ընթացիկ գործերով և պատրաստություն տեսներ հրավիրելու Թիֆլիսում նոր, ավելի բազմամարդ համագումար»։

Այս պաշտոնական կոկիկ նկարագրությունը ես պետք է լուսաբանեմ իմ մի քանի հիշողություններով։ Առաջին համագումարը կայացավ Թիֆլիսի առաջնորդարանում, Կոստանդին Խատիսյանի նախագահությամբ։ Ժողովը սակավամարդ էր։ Որ դաշնակցականներ կային, այդ ցույց է տալիս հենց այն, որ հարց էր բարձրացվում թուրքահայերի ինքնապաշտպանության մասին, այսինքն՝ զենքեր

գնելու և Թուրքիա փոխադրելու մասին։ Իսկ այս, ինչպես հայտնի է, Դաշնակցության մշտական գործն է եղել տարիներից ի վեր՝ փող պահանջել զենքեր առնելու համար։ Փողեր ստանում էին, բայց թե դրանից ո՞ր մասն էր զենք դառնում և թուրքահայերի ձեռքն անցնում, այդ կորած է անհայտության խավարի մեջ։ Վիճաբանությունների ժամանակ բյուրո հիմնարկելու գաղափարը հակառակություն գտավ իմ կողմից միայն։ Ես ավելորդ էի համարում կաթողիկոսի միջոցով դիմում անելը և դրա համար մի ամբողջ բյուրո հիմնելը, որովհետև, ասում էի, Ռուսաստանն առանց մեր կանչելու էլ կերթա Թուրքահայաստան, երբ այդ հարկավոր դատի իր շահերի համար։ Եվրոպական գրականությունից վերցրած վկայություններով ես փորձեցի հասկանալի դարձնել այն հանրածանոթ իրողությունը, որ Թուրքահայաստանը ճանապարհ է Ռուսաստանի համար և վաղ թե ուշ պիտի լինի նրա ձեռքին։ Մեր դիմումը կարող է պատրվակ դառնալ այդպիսի մի գրավման, բայց կարող է և չդառնալ՝ եվրոպական պետությունների խիստ մրցակցության պատճառով։ Այդ ժամանակ ի՞նչ կլինի մեր դրությունը։

Իմ խոսքն իհարկե ոչ ոքի չհամոզեց։ Ես հիշում եմ մի հին դաշնակցականի, որ պատասխանեց ինձ հեգնորեն՝ անվանելով իմ խոսքերը «18-րդ դարու պատմություն»։ Եվ դարձյալ, ուրեմն, խնդիրը լուծվում էր հախուռն կերպով, առանց լրջորեն ծեծելու և ուսումնասիրելու։ Ինձ պատասխանեցին, թե բյուրոն ինքը մի առանձին բան չէ, նա միայն և միայն լինելու է Վեհափառ կաթողիկոսի խորհրդականը։ Սակայն ո՞վ չգիտեր, որ դա այդպես չէ, այլ բոլորովին հակառակը. կաթողիկոսը անկախորեն չպիտի գործեր և չէր էլ կարող գործել, այլ պիտի ստորագրեր այն թղթերը, որ կպատրաստեր բյուրոն։ Ահա բյուրոյի առաջին թելադրությունը, որ կատարվեց առաջին համագումարի որոշմամբ։

«Ձերդ Սրբություն,

Թիֆլիսի հայ հասարակությանը պատկանող անձանց մի խումբ, որ բաղկացած է Թիֆլիսի հայ կրթական և բարեգործական հիմնարկությունների, մամուլի և հասարակական այլևայլ խավերի ներկայացուցիչներից, քննության առնելով թուրքահայերի դրությունը, որ անտանելի է դարձել նրանց կյանքի, պատվի և գույքի վրա գործադրվող անընդհատ բռնությունների հետևանքով, և չտեսնելով թուրք կառավարության կողմից ձեռք առնված իրական միջոցներ և երաշխիքներ, որոնք ուղղված կլինեին այդ երևույթները վերացնելու գործի օգտին, և անկարող լինելով այլևս լուռ և անկարեկից լսել իրենց եղբայրների վրա կատարված այդ գազանությունների մասին՝ դիմում է Ձերդ Սրբության՝ իբրև թե՛ Ռուսաստանի և թե՛ Թուրքիայի հայ ժողովրդի, նույնպես և բոլոր հայերի հոգևոր գլխին, խոնարհաբար խնդրելով դիմում անել թագավոր կայսրին՝ միջնորդելով Թուրքիայի հայ ժողովրդի պաշտպանության մասին տանջանքներից և իրավազրկությունից։

Մենք հաստատապես հավատում ենք, որ իբրև Արևելքի քրիստոնյաների մշտական պաշտպան, նույնպես և իբրև մի մեծ պետություն, որ Բեռլինի դաշնագրով իր վրա է վերցրել Թուրքիայի հայաբնակ վիլայեթներում անհրաժեշտ ռեֆորմներ մտցնելու հոգսը, ռուսական պետությունն առանց ուշադրության չի թողնի Ձերդ Սրբության և, ի դեմս Ձեր հոտի, նրա հավատարիմ որդիների խնդիրքները և իր ուժեղ հովանավորությամբ և միջամտությամբ վերջ կդնի մեր եղբայրակիցների տանջանքներին, նորից ամբողջ աշխարհի առաջ կհայտնագործի իր բարձր պատմական առաքելությունը Մերձավոր արևելքում»։

Ճակատագրական քայլն արված էր։ Այնուհետև թուրքահայ ժողովրդի կյանքի և մահվան հարցն իր ձեռքն առած Թիֆլիսի բուրժուական ինտելիգենցիայի այդ հատվածն արագորեն առաջ տարավ իր կազմակերպման ամրացումը՝ միանալով Դաշնակցության հետ։

«Նոյմեբերի 25-ին նույն թվի,- շարունակվում է արձանագրությունը, որից մենք քաղվածքներ ենք անում,- Թիֆլիսում կայացավ երկրորդ համագումար-ժողովը, որին ներկա էին պատգամավորներ Թիֆլիսից, Բաքվից, Նոր Բայազետից, Բաթումից, Հաշտարխանից, Հին Նախիջևանից, Շուշիից, Թիֆլիսի հայ կաթոլիկ համայնքից, նաև ներկայացուցիչներ «Մշակի» և «Հորիզոնի» խմբարգրություններից։ Ժամանակավոր բյուրոյի զեկուցումից հետո քննության դրվեցին միևնույն երկու խնդիրները, այն է՝ դիվանագիտական միջնորդություն և ինքնապաշտպանություն։ Հարցերի քննությունից հետո ժողովը հրահանգներ մշակեց ընտրվելիք բյուրոյի համար. հանձնարարել նրան՝

1) Օժանդակել Նորին Վեհափառություն կաթողիկոսին իր գործունեության մեջ՝ Հայկական հարցի վերաբերմամբ,

2) Կապեր հաստատել Պոլսի, Փարիզի և ուրիշ վայրերի հայ մարմինների հետ, որոնք նպատակ ունեն աշխատելու Հայոց հարցի համար,

3) Պրոպագանդայի միջոցով նպաստավոր տրամադրություն ստեղծել ռուս հասարակության և վարիչ շրջանների մեջ դեպի Հայոց հարցը։

Գալով ինքնապաշտպանության խնդրին՝ ժողովը միաձայն ընդունեց նրա կարևորությունը և անհրաժեշտությունը, բայց պարտավորիչ որոշումներ չկայացրեց բյուրոյի համար այդ խնդրի վերաբերմամբ, միևնույն ժամանակ համագումարը հանձն առավ կարիքի դեպքում նյութական օժանդակություն հասցնել բյուրոյին։

Դիմելով ընտրություններին՝ ժողովը վերընտրեց ժամանակավոր բյուրոյի եղած կազմը, երկու նոր անդամ ևս ավելացնելով նրանց՝ բժ. Կ. Ստեփանյանին և Ա. Ջամալյանին»։

Գևորգ կաթողիկոսը, Թիֆլիսի նորակազմ բյուրոյի դիմումի վրա հիմնված, փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով մի աղերսագիր ուղարկեց Նիկոլայ կայսրին՝ խնդրելով, որ Լոնդոնի կոնֆերանսում, ուր պիտի մշակվեին Բալկանյան պատերազմին վերջ դնող հաշտության պայմանները, հերթական դարձվեր և Հայոց հարցը։ Միաժամանակ, նկատի առնելով, որ վարչապետ Կոկովցևը և արտաքին գործերի մինիստր Սազոնովը Մեսրոպ եպիսկոպոսի հետ ունեցած խոսակցության մեջ այն միտքն էին հայտնել, որ լավ կլինի, եթե հայերը Եվրոպայում էլ դիմումներ անեին մեծ պետություններին, կաթողիկոսն իր կողմից պաշտոնական պատվիրակ նշանակեց իր մեծ հարստություններով շատ հայտնի և Եվրոպայում կապեր ունեցող եգիպտահայ Պողոս-փաշա Նուբարին, որ իսկույն ուղևորվեց Եվրոպա՝ իր պաշտոնի գլուխն անցնելու համար։

Սակայն 1912թ. դեկտեմբերի 22-ին փոխարքա Վորոնցով-Դաշկովը գրում էր Գևորգ կաթողիկոսին հետևյալ պատասխանը.

«Ձերդ Սրբությունը հայ ժողովրդի անունից իմ միջոցով դիմեցիք՝ խնդրելով, որ պաշտպանություն ցույց տրվի փոքրասիական Թուրքիայում քրդերի ձեռքով հարստահարվող հայ ազգաբնակչությանը, և որպեսզի նա ընդունվի Ռուսաստանի հովանավորության տակ։ Այս միջնորդությունը ներկայացվեց ի բարեհայեցողության Նորին կայսերական մեծությանը, և թագավոր կայսրը բարեհաճություն ունեցավ վերաբերվել հայ ժողովրդի վիճակին կատարյալ բարյացակամությամբ։

Այժմ կայսերական կառավարությունն առաջարկություն է արել թուրք կառավարությանը՝ ցույց տալով նրան, որ մեր ունեցած տեղեկություններով հայերի դրությունը Փոքր Ասիայում վերջին ժամանակները վատացել է, և առաջ է բերվում արդարացի գանգատներ քրդերի կողմից եղած հարստահարությունների և անձնական ու կալվածական ապահովության բացակայության վրա. բաներ, որոնք առաջանում են վարչական անբարեկարգ դրությունից և վատ կողմից։ Դրա հետ միասին, Թուրքիային ցույց է տրված, որ նրա համար անհրաժեշտ է Թուրքահայաստանում այժմ իսկ լրջորեն զբաղվել վերանորոգումներով և լավացնել վարչության կազմը՝ մատնանշելով, որ քրիստոնյա հպատակների օրինավոր շահերի արհամարհումը եղել է մի շարք տարիների ընթացքում Թուրքիայի համար մշտական խռովության և բարդությունների աղբյուր նրա եվրոպական նահանգներում և, վերջիվերջո, բերել հասցրել է Թուրքիայի համար դժբախտ պատերազմին Բալկաններում՝ իր բոլոր հետևանքներով։

Հետևելով դարավոր ավանդույթներին և խորին զգացմունքով վերաբերվելով հայ ժողովրդի տանջանքներին՝ կայսերական կառավարությունը մտադիր է այսուհետև էլ ամենաբարյացակամ կերպով վերաբերվել Թուրքիայում կեղեքվող հայ ժողովրդի կարիքներին և ջանքեր գործադրել գոյություն ունեցող զեղծումները հեռացնելու և անհրաժեշտ բարենորոգումները գործադրելու նպատակով։

Կայսերական կառավարությունը, սակայն, հենց իրենց՝ հայերի շահերին բոլորովին անհամապատասխան է համարում, որ Թուրքիայի հայերի հարցն առաջիկայում քննվի պետությունների կոնցերտի կողմից՝ բալկանյան ճգնաժամը հարթելու համար գումարվելիք կոնֆերանսում, որովհետև կատարյալ հիմք ունի կասկածելու, թե եվրոպական պետությունները միակամ կլինեն հայերի համար կենսական հարցի լուծման մեջ: Եվ այսու՝ պետությունների մեջ այդ միակամության բացակայությունը և դրա հետևանքով տարաձայնությունների ծագումը կստեղծեն, ինչպես այս ապացուցել է տխուր պատմական փորձը, չափազանց բարեպատեհ միջավայր տեղական թուրք վարչության համար՝ խուսափողական վերաբերմունք ցույց տալու դեպի հայերի դրության բարելավման գործը:

Գրավելով Ձերդ Սրբության ուշադրությունը մանավանդ վերջին հանգամանքի վրա, ես առանձնապես կարևոր կհամարեի, որ ներկա վճռական րոպեին հայերը ցույց տային առանձին զսպվածություն ու տակտ և անժամանակ հավաքական դիմումներով չբարդացնեն կայսերական կառավարության համար թուրքահայերի վիճակի բարելավման խնդիրը:

Ես լիապես համոզված եմ, որ Ձերդ Սրբությունն իր ծերունազարդ հեղինակությամբ կկարողանաք ներգործել հայերի վրա հենց իրենց՝ հայերի օգտի համար ցանկալի ուղղությամբ»:

Ահա թե ինչ լեզու էր բանեցնում 30 տարի հայերի ամենաոխերիմ և անգութ թշնամի կայսերական կառավարությունը: Սա, իհարկե, հրաշք չէր, այլ միայն ապացույց, որ ռուսական շահերն այժմ այլ տեսակ դասավորություն են ստացել Թուրքահայաստանում: Այժմ ցարական դիվանագիտությունն ուզում էր դարձնել Հայոց հարցն իր ձեռքում մի մշտական գործիք՝ ներգործելու համար թուրք կառավարության վրա: Իր վրա վերցնելով թուրքահայերի դրության բարվոքումը՝ ռուսական կառավարությունը չէր էլ ուզում, որ դրա մեջ մասնակցություն ունենան եվրոպական մյուս պետությունները: Ինչպես միշտ, Կ.Պոլսի հայ ինտելիգենցիան չէր ուզում, որ Թուրքահայաստանը փրկված լինի մենակ Ռուսաստանի ձեռքով, որ նշանակում էր գտնվել մենակ Ռուսաստանի ճանկերում: Նա ուզում էր փրկված լինել Եվրոպայի ձեռքով, և չգիտենք՝ ի՞նչ բարիքներ էր գտնում դրա մեջ: Եթե հրամայական պահանջ դնողը թուրքահայ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցը լիներ, այն ժամանակ գուցե և վատ չհամարվեր այն հանգամանքը, որ Բաթումից միչև Վան թուրքական սահմանի վրա կանգնած ռուսական զորքերը, համենայն դեպս, այնքան վախ կներշնչեին թուրք կառավարությանը՝ այժմյան փոխված հանգամանքների մեջ, որ նա այլևս չէր կարող հեղինակել հայկական համատարած ջարդեր:

Եթե հայերն այժմ մոռանում էին այն դառնությունները, որ ռուսաց կառավարության երեսից տեսել էին դեռ երեկ-անցյալ օրը, և արդարացնում էին իրենց այդ մոռացումը նրանով, որ այժմ ռուսական և հայկական շահերի մեջ

համերաշխություն կա, նրանք պետք է այն էլ հասկանային, որ թուրքահայության պաշտպանության լավագույն եղանակը գոյություն ունեցող պայմանների մեջ հենց այն էր, որ առաջարկում էր ռուսաց կառավարությունը, այսինքն՝ առանձնակի միջամտության եղանակը։ Բայց մենք չէինք հասունացած մինչև մեր ժողովրդի կենսական պահանջները հասկանալը։ Դժբախտ Թուրքահայաստանը մեր քաղաքական ռոմանտիզմին անվերջ կերակուր տալու դերը պիտի կատարեր։ Չէինք ուզում, որ ռուսական ցարիզմը մեզ կլանի, ուզում էինք ինքնավար լինել, գուցե և՝ անկախ, և դրա համար հարկավոր էր, որ մեր հարցը լիներ միջազգային, և նրա լուծողը լիներ… Եվրոպան։ Քառասուն տարուց մոտ էր, որ ունեինք 61-րդ հոդվածը և մազի չափ չէինք խրատվել. այսօր էլ նույնն էինք, ինչ եղանք Բեռլինի դաշնագրի թարմ տպավորության տակ, թեև այժմ 61-րդ հոդվածն արդեն դեղնած, մելոտած, դիվանագիտական արխիվների մկներից անողորմ կրծոտած մի թղթի կտոր էր։

Ահա այս ժառանգական ռոմանտիկ մտայնությունն էլ լիակատար չափով երևան է գալիս և Գևորգ կաթողիկոսի, կամ ավելի ճիշտն ասած, Թիֆլիսի նրա խորհրդատուի՝ Ազգային բյուրոյի մեջ։ Լոնդոնում կոնֆերանս է լինելու Բալկանյան պատերազմի առիթով, և ինչպե՞ս հայերն այդտեղ չլինեն իրենց 61-րդ մշուշապատ հոդվածով։ Նախքան կոմս Վորոնցով-Դաշկովի վերոհիշյալ պատասխանը ստանալը՝ Էջմիածնի կաթողիկոսը Նիկոլայ կայսրի անունով մի նոր աղերսագիր է ստորագրում, որի մեջ նորից խնդրում է Լոնդոնի կոնֆերանսի սեղանի վրա դնել Հայոց հարցը, և այդ աղերսագիրը մի հատուկ պատգամավորության ձեռքով ուղարկվում է Թիֆլիս՝ փոխարքային ներկայացնելու համար։ Պատգամավորությունը երևի շատ լավ էր զգում իր առաքելության ամբողջ կարևորությունն ու պատասխանատվությունը և այդ պատճառով կազմել է մի մանրամասն արձանագրություն կոմս Վորոնցով-Դաշկովի հետ իր ունեցած բանակցությունների մասին։ Իմ պատմական արխիվի մեջ գտնվում է մի օրինակ այդ արձանագրությունից։ Եվ ես իմ ընթերցողին եմ առաջարկում այդ պատմական վավերագիրը, որի բովանդակությունը հետաքրքրական է շատ կողմերից.

«Վեհափառ կաթողիկոսի կողմից նշանակված պատգամավորության ներկայացնողը Նորին պայծառափայլության Տ. փոխարքային 1912թ. դեկտ. 26-27-ին։

Պատգամավորներ՝ Մեսրոպ եպիսկոպոս, Բագրատ վարդապետ, Ալեքսանդր Խատիսյան և Սամսոն Հարությունյան։

Դեկտեմբերի 25-ի առավոտյան Էջմիածնից հասանք Թիֆլիս (Մեսրոպ եպիսկոպոս, Բագրատ վարդապետ և Սամսոն Հարությունյան)։ Նույն օրը նամակով Մեսրոպ եպիսկոպոսը հայտնեց Տ. փոխարքային Վեհափառ կաթողիկոսի կողմից նշանակված պատգամավորության մասին՝ խնդրելով նշանակել ընդունելության ժամանակ՝ ներկայացնելու Նորին կայսերական մեծության անունով մեմորանդում։

Ըստ որոշման Տ. փոխարքայի՝ բոլորս ներկայացանք դեկտեմբերի 26-ին, երեկոյան ժամը 4-ին։ Մեսրոպ եպիսկոպոսը մի քանի խոսքերով ողջունեց Վեհափառ կաթողիկոսի կողմից՝ ներկայացնելով թագավոր կայսեր անունով մեմորանդումը։

Փոխարքան բացեց իր անունով գրած նամակը և մեմորանդումը հանձնեց Ս. Հարությունյանին՝ կարդալ բարձր։ Վերջացնելուց հետո փոխարքան ասաց. «Միջոցի մասին որոշ բան չէ ասված»։

Հայտնվեց փոխարքային, որ նպատակն ու խնդիրը տաճկահայոց պատվի, կյանքի, գույքի և ազատ քաղաքակրթվելու կատարյալ ապահովությունն է. իսկ այդ իրագործելու միջոցի մասին դիվանագետներն ավելի լավ կիմանան։ Փոխարքան այդ առթիվ հայտնեց, որ Ռուսաստանը չի կարող այժմ մտնել Տաճկաստան և տիրել, քանի որ պայմանները նպաստավոր չեն։

Փոխարքան հայտնեց, որ արդեն գրել է կաթողիկոսին պատասխան տաճկահայոց հարցի մասին. այդ պատասխանի պատճենը գտնվում է կանցելարիայում, պատվիրեց հետևյալ օրը կրկին ներկայանալ իրեն առավոտյան ժամը 10-ին՝ պատասխանը կարդալու։

Այնուհետև խոսակցությունը հետևյալ հարցերի մասին եղավ.

1. Հայերի հույսն ու սպասելիքը. բացատրվեց, որ ամենայն կողմի հայերի հույսն ու համոզմունքն այն է, թե ռուսաց կառավարությունը այս անգամ լուրջ ուշադրություն կդարձնի և կբարելավի տաճկահայոց վիճակը, որ միանգամայն անտանելի է։ Շեշտվեց անձնապես փոխարքայի, նախարարապետ Կոկովցևի և արտաքին գործոց նախարար Սազոնովի բարյացակամ տրամադրությունը, հուսադրությունն ու խորհուրդները տաճկահայ խնդրի վերաբերմամբ։

2. Տաճիկ պաշտոնյաների երկյուղը. Տաճկաստանի հայաբնակ գավառներում տաճիկ պաշտոնյաները վերջերս շարունակ երկյուղ են արտահայտում, թե միգուցե ռուսաց զորքը մտնե Տաճկաստան՝ հայերի վերաբերմամբ գործադրվող քրդական և թուրքական բռնությունների առաջն առնելու համար. այս պատճառով վալիները առայժմ նախազգուշացնում են քրդերին և թուրքերին, որպեսզի առիթ չտան և զգույշ մնան հայերին ճնշելուց։ Բնական է,այս երկյուղը ժամանակավոր կլինի և կանցնի, եթե ռուսաց կառավարությունը ձեռնպահ մնա և ոչ մի դրական քայլ չանի Տաճկաստանի մեջ պատվի, գույքի և անձի ապահովության համար։

3. Պետերբուրգ՝ նախարարապետի և արտաքին գործոց նախարարի մոտ ուղարկվելիք պատգամավորության մասին ևս խոսվեց. այս առթիվ փոխարքան ի պատասխան հայտնեց, որ պատգամավորության ուղարկելը նպատակահարմար կլինի գործի հաջողության տեսակետից։

Այս օրվա խոսակցությունը տևեց մոտ 50 րոպե։

Դեկտեմբերի 27-ի առավոտյան ժամը 10-ին ներկայացանք փոխարքային։ Կարդացվեց իր տված պատասխանը Վեհափառին. ապա հայտնեց, որ այդ նամակն ինքն է խմբագրել և, կաթողիկոսին ուղարկելուց առաջ, հեռագրով ամբողջ նամակը հայտնել է Պետերբուրգ և այնտեղի հաճությունը ստանալուց հետո միայն ուղարկել է Էջմիածին, ու ավելացրեց, որ այդ կերպ «նախարարական ցենզուրայի» ենթարկվեց։

Այդ նամակի մեջ երկու որոշ կետ կա տաճկահայոց հարցի վերաբերմամբ աննպաստ.

ա) Ի նկատի ունենալով, որ եվրոպական մեծ պետությունների մեջ տաճկահայոց հարցի լուծման առթիվ այժմյան պայմաններում համաձայնություն չի կայանալու, այդ հարցը Լոնդոնի դեսպանաժողովի խորհրդակցության նյութ չէ դառնալու, ուստի՝

բ) Կաթողիկոսը չպետք է դիմի մյուս եվրոպական պետություններին այդ խնդրով այժմ։

Նամակի ընթերցումից հետո ամենայն մանրամասնությամբ բացատրվեց փոխարքային այն ծանր տպավորությունը, որ կունենա այդ պատասխանը ամեն կողմի հայերի, հատկապես, տաճկահայերի վրա, առանձնապես այժմ, երբ հայերն առանց խտրության համոզված են, թե Ռուսաստանն անպատճառ կմիջամտի և, իր հովանավորության տակ առնելով տաճկահայերին, իրագործել կտա անհրաժեշտ ռեֆորմներն իր կոնտրոլի ներքո։ Շեշտվեց և այն, որ եթե տաճիկ կառավարությունը, մանավանդ հայաբնակ վիլայեթների տաճիկ պաշտոնյաները իմանան, թե Ռուսաստանն այժմ ձեռնպահ է մնում և չի ցանկանում միջամտել, անպայման հայերի վիճակն ավելի կվատթարանա և մինչև իսկ կարող է սոսկալի հետևանքներ տալ։

Փոխարքան մի քանի անգամ կրկնեց, որ Ռուսաստանը այժմյան րոպեն, ներկա պայմանները միայն աննպաստ է համարում գործնական քայլեր անելու համար, և այդ երբեք չի նշանակում, թե դադարում է միջամտելուց։ Ռուսական կառավարությունն իր դիպլոմատիական ազդարարությունները շարունակելու է։

Այս խոսակցություններից հետո փոխարքան սկսեց գրել՝ փոխադարձ խորհրդակցությամբ ձևակերպելով այն գլխավոր կետերը, որոնց մասին մանրամասն բացատրություններ տեղի ունեցան։

Խնդրեցինք փոխարքային, որ ռուսաց կառավարությունը իր դեսպանի և հյուպատոսների միջոցով վերահսկողություն ունենա տաճկահայոց վրա, որպեսզի դրությունն ավելի չվատթարանա։ Փոխարքան համաձայնեց և մոտավորապես հետևյալ կերպով ձևակերպեց.

«1. Կ.Պոլսի ռուսաց դեսպանին և Տաճկահայաստանի հյուպատոսներին հրահանգ տրվի, որ շարունակեն պաշտպանել տաճկաց կառավարության առաջ հայերին քրդական և թուրքական ճնշումներից»։

Բացատրվեց, որ նախարարապետ Կոկովցևի և արտաքին գործոց նախարարի խորհրդի հիման վրա և բոլոր կողմերի հայերի ցանկության համաձայն՝ կաթողիկոսը նշանակեց Պողոս-փաշա Նուբարին իր կողմից ներկայացուցիչ, եվրոպական պետությանց ներկայացուցիչների կոնֆերանսում աշխատելու Տաճկահայաստանի բարենորոգումների համար՝ ռուսական կոնտրոլի տակ։

Կաթողիկոսը դեռ հրահանգ չի տվել Նուբար-փաշային, որը տեղի պիտի ունենար ռուսաց կառավարությունից պատասխան ստանալուց հետո։ Նուբար-փաշան իր կողմից, իր անհատական հեղինակավոր դիրքի շնորհիվ կատարել է մասնավոր դիմումներ։ Իսկ պաշտոնական դիմումներ անելու համար հարկ է համարել խնդրելու հեռագրով կաթողիկոսից ռուսաց կառավարության վերաբերմունքը, որը հարցումից անկախ պիտի հեռագրվեր նրան։ Իսկ այժմ ստացած պատասխանը շատ ծանր կացություն կստեղծի։ Արդյո՞ք Նուբար-փաշան պետք է շարունակի Վեհափառի կողմից եվրոպական պետությանց մոտ աշխատելը, թե՞ դադարի իր պաշտոնից։ Վերջին դեպքը ծանր կլինի կաթողիկոսի և տաճկահայոց համար և, անշուշտ, վերին աստիճանի խրախուսիչ՝ տաճկաց կառավարության համար։ Փոխարքան համաձայնելով այս հիմնավոր առարկությանց հետ՝ ձևակերպեց մոտավորապես հետևյալ կերպով.

«2. Պողոս-փաշա Նուբարը նշանակված է կաթողիկոսի կողմից, հավանությամբ պատրիարքի և Ազգային Ժողովի, որ աշխատի եվրոպական կառավարությանց մոտ 61-րդ հոդվածի իրագործման համար հայաբնակ նահանգներում ռեֆորմներ մտցնելու վերաբերմամբ՝ ռուսաց կառավարության նախաձեռնությամբ և նրա կոնտրոլի տակ»։

Բացատրվեց, որ Կ.Պոլսում տաճկաց կառավարությունը, վախենալով օտար միջամտությունից հայկական հարցի առթիվ և ցանկանալով առաջն առնել այդպիսի միջամտության, ըստ իր նախնավանդ սովորության՝ կազմել է մասնախումբ, ներքին գործոց նախարար Ռեշիդ-բեյը կոչել է մի քանի հայերի՝ որպես թե հայաբնակ գավառների վերանորոգության մասին խորհրդակցելու։ Բացատրվեցին այդ կեղծ քայլի շարժառիթները։ Փոխարքան գրեց մոտավորապես հետևյալը.

«3. Ներքին գործոց նախարար Ռեշիդ-բեյը նշանակել է այժմ Պոլսում մի մասնախումբ, որի մեջ նախարարի նշանակումով չորս հայ ևս մասնակցում են։ Այդ մասնախումբը ոչ մի վստահություն չի վայելում հայերի կողմից։ Դրանով տաճկաց կառավարությունը կամենում է ռուսաց միջամտության առաջն առնել»։

Շեշտվեց[ին] հետևյալ կետ[եր]ը, որ և գրվեց[ին].

«4. Բոլոր հայերը, առանց կուսակցության խտրության, համաձայն են, որ Տաճկահայաստանի ռեֆորմների նախաձեռնողը լինի Ռուսաստանը՝ եվրոպական պետությանց համաձայնությամբ, և ռեֆորմների իրագործման կոնտրոլը պատկանում է Ռուսաստանին»։

«5. Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի իրագործման ու վերահսկողության հանձնելը Ռուսաստանին հաջողեցնելու համար պետք է կաթողիկոսի կողմից եվրոպական պետությանց մոտ պատգամավորություններ նշանակել, որպեսզի դիպլոմատիական շրջաններում տրամադրություն ստեղծվի հօգուտ ռուսական նախաձեռնության և կոնտրոլի»։

«6. Երբ որ հարմար մոմենտ կլինի, կաթողիկոսը բախտավոր կհամարի իրեն ներկայանալ թագավոր կայսեր՝ իր հոտի՝ տաճկահայ ժողովրդի վիճակի բարելավման համար անձամբ հայցելու»։

Քանի որ փոխարքան ցույց էր տալիս բարյացակամ տրամադրություն և մի քանի անգամ ևս հայտնեց իր անձնական կարծիքը, թե կաթողիկոսն ու հայ ժողովուրդը, ինչպես և կաթողիկոսի ներկայացուցիչ Պողոս-փաշա Նուբարը, պետք է աշխատեն հաջողացնել Ռուսաստանի նախաձեռնությամբ և կոնտրոլի տակ ռեֆորմներ մտցնել տալու Տաճկահայաստանում, պատգամավորությունը խնդրեց, որ եթե հնարավոր է՝ մի նոր լրացուցիչ նամակով հանուն Վեհափառ կաթողիկոսի՝ հայտնի փոխարքան, թե Հայկական հարցը չի փակվում, այլ ընթացքի մեջ է և կարելի է նույն ուղղությամբ աշխատանքները շարունակել։

Այս կարևոր կետի առթիվ փոխարքան հետևյալ կերպով (մոտավորապես) գրեց.

«7. Նամակի (պատասխանի) տպավորությունն այն է, որպես թե հայկական նահանգների ռեֆորմների հարցը հերթական լինելուց դադարում է։ Կաթողիկոսից այս կետի առթիվ հարցապնդում ստանալու դեպքում տալ բացատրություն, որ ոչ թե Հայկական հարցը վերացվում է, այլ ընթացքի իր ուժի մեջ է և կքննվի բալկանյան հարցերի հետ միասին»։

Փոխարքան խոստացավ վերոհիշյալ յոթ կետերի մասին փոխադարձ խորհրդակցությամբ և իր ձեռքով կազմված ձևակերպումները հեռագրով հայտնել Պետերբուրգ, խոստացավ նաև աջակցել, որ ցանկացած պատասխան ստացվի։

Այս խոսակցությունն ու խորհրդակցությունը տևեց մոտ 2 ժամ։

Վերջում պատգամավորության կողմից Մեսրոպ եպիսկոպոսը մի քանի խոսքով հայտնեց շնորհակալություն փոխարքային իր բարյացակամ վերաբերմունքի համար։

Փոխարքան պատասխանեց, որ ինքը դեպի հայերը լավ է վերաբերվում, սակայն այս դեպքում գործում է որպես ռուս պետական մարդ և անցած համարեց Լոբանովի քաղաքականությունը։ Հայտնվեց ուրախակցություն, որ այս կարևոր խնդրում ռուսական և հայկական շահերը միացած են։

Անհրաժեշտ է հիշել և այն, որ վերոնշյալ կետերի մասին եղած խմբագրությունը կարդաց փոխարքան երեք անգամ, իսկ երրորդ ընթերցանության ժամանակ իր գիտությամբ և թելադրությամբ արձանագրեց նույն կետերը Բագրատ վարդապետը՝ պատգամավորության համար»։

Գ

Դեկտեմբերի 26-27-ին, այո՛, կայանում էր մի խոշոր համաձայնություն։ Ի՞նչ էր դա նշանակում։

Պալատական շրջանը տանում էր մի հաղթություն, որ պիտի միանգամայն գոհացներ ժողովրդի մասին չմտածող կամ բոլորովին քիչ մտածող ազգասիրական ռոմանտիզմը։ Ռուսական դիվանագիտությունը կամենում էր իր և թուրքերի մասնավոր հարաբերությունների հոգս դարձնել թուրքահայ ժողովրդի ապահովությունը։ Եթե նա մտներ այդ ճանապարհի մեջ, գործեր փոքրիշատե ուշադրությամբ, հայ ժողովուրդը, եթե չստանար երազական ռեֆորմներ կամ, պարզ ասած, ինքնավարություն, գոնե փոքրիշատե մարդավայել կայունության երաշխիք կունենար։ Վերին աստիճանի բնորոշ է այն տեղեկությունը, որ տվին կաթողիկոսի պատգամավորները կոմս Վորոնցով-Դաշկովին։ Նրանք ասացին, թե ասիական Թուրքիայի վալիները, վախենալով ռուսական միջամտությունից, զսպում էին հայերին կեղեքող քրդերին և թուրքերին։

Հայ ժողովրդի համար այն էլ մեծ բախտ կլիներ, եթե այդ փրկարար վախը երկար պահպանվեր կառավարող օսմանների շրջանում՝ ռուսաց դիվանագիտության անդադար պահանջներով։ Պե՞տք է ավելացնել, որ հայերի պաշտպանության այս եղանակն ավելի քիչ աղմկավոր կլիներ, ավելի քիչ գրգռիչ, քանի որ հարց չէր դրվում Հայաստան ստեղծելու, Թուրքիայի մարմնից մի նոր չաղ կտոր խլելու մասին, այլ պահանջվում էր միայն բարեկարգել նահանգական և գավառական վարչությունները։ Հետո կլիներ այն, ինչ Վորոնցով-Դաշկովը ավելորդ էլ համարեց թաքցնել։ Նա մի քանի անգամ կրկնեց պատգամավորներին, թե Ռուսաստանն այժմյան աննպաստ պայմանների մեջ չի կարող գնալ և գրավել Թուրքահայաստանը։ Սա, իհարկե, չէր նշանակում, թե նպաստավոր պայմաններ երբեք չեն գալու։ Նվաճումը պետք է լիներ. դա միայն ժամանակի հարց էր։ Մնացածն արդեն չափազանց հեշտ կարելի էր գուշակել՝ թուրքահայոց հարց այլևս չէր լինի։

Բայց հենց այս բանն էր, որ սարսափեցնում էր թուրքահայոց դատն իրենց համար մենաշնորհ դարձրած հեղափոխական կուսակցություններին և նրանց ենթարկված բուրժուական մտայնությանը։

Ի՜նչ հարկավոր են այսպիսի մասնավոր համաձայնություններ, մանավանդ, ինչպե՞ս կարելի է թույլ տալ, որ հյուսիսային արջը միայնակ դնի իր թաթը Հայաստանի վրա։ Եվ հրապարակում շար ընկան հազար անգամ ծամծմած, արտաքուստ փայլուն, բայց ներքուստ ողորմելի և անբովանդակ կանչվռտոցները՝ «Մեր հարցը միջազգային հարց է, և այն լուծողները պիտի լինեն բոլոր պետությունները։ Տվե՛ք մեզ եվրոպական կոնֆերանս, պատգամավորություններ, պրոպագանդա, խնդրագիր և այլն, և այլն»։ Եվ նորից, այս էլ քանիերորդ անգամ՝ վեճեր, թե ով պիտի լինի ինքնավար Հայաստանի ընդհանուր նահանգապետը, ի՞նչ սահմաններ պիտի ունենա այդ Հայաստանը և այլն, և այլն։ Այս անգամ ավելացել էր մի նոր գայթակղություն՝ Պողոս-փաշա Նուբարը։ Անհատնում հարստության տեր է, մեծ պետական մարդու որդի է, կապեր ունի, ծանոթ է անգլիական, ֆրանսիական և շատ այլ մինիստրների հետ։ Ինչպե՞ս նրան անգործ թողնել այժմ, երբ Թուրքիան ջարդված է և նորից բաժան-բաժան է դառնում։

Մի խոսքով, հին կռապաշտը գտել էր ֆետիշը՝ Եվրոպան, ինչպես Սենեգալի խափշիկը գտնում է իր հին, կորցրած տոհմային ֆետիշը։

Ռուսաց դիվանագիտությունը չպիտի լիներ խաչվողը ցույց տալու համար, որ իր առաջարկած եղանակը համաշխարհային աղմուկ բարձրացնելու եղանակից նախընտրելի է։ Հայերի առաջարկած նախաձեռնությունն ու կոնտրոլը՝ նրա առջև բաց էին անում գործողության նոր հորիզոններ։ Բալկանյան պատերազմն ու սլավոնական պետություններից ջախջախվելն անհանդուրժելի չափերով մեծացրել էին Գերմանիայի և առհասարակ եռյակ նիզակակցության ազդեցությունը Թուրքիայում։ Հայկական հարցը բաց էր անում միջազգային մի մրցաշար, ուր Ռուսաստանը՝ իբրև եռյակ համաձայնության վարիչ՝ պիտի կռվի բռնվեր հակառակորդների հետ և հաղթեր նրանց հենց նույն Արևելյան հարցի մեջ։ Միակ բանը, որի մեջ զիջում չարեց Ռուսաստանը, այն էր, որ Հայոց հարցը չդրվեց Լոնդոնի կոնֆերանսում։ Նա հարուցվեց իբրև առանձին հարց՝ երկարատև դիվանագիտական բանակցությունների միջոցով, որոնց մեջ մասնակցում էին բոլոր մեծ պետությունների մայրաքաղաքներում գտնվող դեսպանները։ Բայց գլխավոր կենտրոնավայրը մնում էր Կ.Պոլիսը։

Այդտեղի ռուսական դեսպան Գիրսը ցույց էր տալիս արտակարգ եռանդոտ գործունեություն՝ միշտ կռթնած հայոց պատրիարքարանի վրա, ուր առաջնակարգ գործուն դեր կատարում էր Դաշնակցությունը։ Մեծ եռանդով գործում էր նաև Պողոս-փաշա Նուբարը։ Ամենուրեք կազմվել էին հայկական կոմիտեներ (Լոնդոն, Փարիզ, Բեռլին, Պետերբուրգ), որոնք անմիջապես կապված էին իրար հետ, իրար աջակցում

էին փոխադարձաբար։ Մեծ դիվանագիտական կենտրոն էր դարձել Էջմիածինը, ուր Գևորգ կաթողիկոսը տեղեկություններ և տեղեկագրեր էր ստանում աշխարհի բոլոր կողմերից և իսկույն դրանց պատճեններն ուղարկում էր Թիֆլիսի իր խորհրդականին և օգնականին՝ Ազգային բյուրոյին։ Կ.Պոլսի պատրիարքն էլ իր զեկուցումներն էր ուղարկում բյուրոյին, հրահանգներ խնդրում։ Նրա գրագրությունների մեջ երբեմն պատահում էին չափազանց կարևորները։ Այսպես բյուրոյի քննությանն էին ենթարկվում ռեֆորմների այն ծրագրերը, որոնք կազմվում էին հայկական շրջաններում (նախևառաջ Դաշնակցության Կ.Պոլսի մարմնի մեջ)։ Բայց ի՞նչ քննություն կարող էր լինել այդտեղ։ Այդ ժամանակ ես էլ ընտրվել էի բյուրոյի անդամ և կարող եմ վկայել, որ այդ մարմինը միանգամայն անձեռնահաս էր այդպիսի մի խոշոր դիվանագիտական առաքելություն կատարելու համար։ Ամենքն էլ, ինքնըստինքյան, բարի ցանկություններով օժտված մարդիկ էին, բայց միանգամայն բոբիկ՝ Արևելյան և Հայկական հարցերի ըմբռնողության կողմից։ Ո՛չ պատմություն գիտեին, ո՛չ ծանոթ էին անհուն գրականության գեթ մի մասին։

Գոնե կազմվեին ենթամասնախմբեր՝ հարցերը (տնտեսական, քաղաքական, վարչական, դիվանագիտական) մանրամասն քննելու և վերլուծելու համար։ Բայց այսպիսի աշխատանքների անընդունակ էին նրանք։ Ամենքը չափազանց զբաղված էին այս «ազգասիրական» գործով իմիջիայլոց՝ մի քիչ ժամանակ գողանալով իրենցից։ Ես հիշում եմ մի զեկուցում, որի հեղինակն ասում էր, թե ինքը ռեֆորմների ծրագրին ծանոթացել է Բաքու գնալիս, վագոնում…

Չէր լսվում երկրի ձայնը։ Լուռ էր մեծ նահատակը՝ իր արյուն գետերով իր դաշտերը ոռոգող աշխատավոր, խավար ու անգրագետ հայ գյուղացիությունը։ Եվ իբրև թե նրա անհուն ցավերով էին տարված բոլորը՝ թե՛ Թիֆլիսի բուրժուական ինտելիգենտը, թե՛ Ներսիսյանի լճի քարափներից ավելի բան չտեսած կաթողիկոսը, թե՛ Ավենյու դյու Տրոկադերո փարիզյան փողոցի վրա իր սեփական վիլլան ունեցող մեծափարթամ փաշան, թե՛ Պետերբուրգի նավթային կրեսոսը։ Ամենքը փրկում էին Մուշի և Վասպուրականի ջրատարին, քրդի ճորտ ռանչպարին, փրկում էին պապերի և նախնիների ավանդած միջոցներով։

Խե՜ղճ ժողովուրդ, անտեր ժողովուրդ։ Ոչ ոք չէր մտածում, թե ինչ կլինեն դիվանագիտական շքերթները։ Հայ ժողովրդի արմատական դժբախտությունն այն է եղել, որ նրա մեջ դիպլոմատ, դիվանագետ տարրը միշտ եղել է հոգևորականությունը։ Այս ինձ համար ապացուցված փաստ է հազարավոր օրինակներով՝ սկսած մեծահռչակ Ներսես Մեծից ու Սահակ Պարթևից և եկած մինչև Հովսեփ Արղությանը, Ներսես Աշտարակեցին, Մատթեոս Չուխաճյանը, Գևորգ Բրուսացին, Մկրտիչ Խրիմյանը, Ներսես Վարժապետյանը, Մատթեոս Իզմիրլյանը, Մաղաքիա Օրմանյանը և վերջացրած մեր երեկվա դիպլոմատներով՝ Գևորգ Սուրենյանցով, Մեսրոպ Տեր-Մովսեսյանով, Բագրատ Վարդազարյանով, [Հովհաննես] Արշարունի և Զավեն [Տեր-Եղիայան] պատրիարքներով, եթե կամենում եք, նաև Խորեն Մուրադբեկյանով։ Ոչ ոք

խելահասություն չունեցավ գեթ անցյալի հետ մի թեթև համեմատություն դնելու։ Ոչ ոք չասաց իրեն, թե 1895-1896-ին Անգլիան պակաս ուժեղ և հեղինակավոր չէր, քան Ռուսաստանը 1912-1913-ին, և այնուամենայնիվ նրա պաշտպանած հայերը ջարդվեցին հարյուր հազարներով։

Ոչ ոք միտը չբերեց, որ բավական չէ նույնիսկ այն, որ սուլթանը ստորագրում է հայկական դժբախտ ռեֆորմները։ Ապացույց՝ 1895-ի հոկտեմբերը, երբ Աբդուլ-Համիդը ստորագրեց մայիսյան ռեֆորմները, որպեսզի իսկույն այդ թղթի կտորը հայ կարմիր արյան լճի մեջ ընկղմի։ Ոչ ոք չուզեց իմանալ, որ Բեռլինում բանկիրները, մետաղագործական կապիտալիստներն ավելի գիշատիչ էին դարձել՝ գազանային անկշտությունից բորբոքված, իսկ նրանց ծառա Վիլհելմ Հոհենցոլեռնը՝ ավելի ևս աներես, ավելի ևս ցինիկ։ 1895-1896-ին մի պաստոր Հեյման էր, որ իր Քրիստոսի անունով հավատացնում էր, թե արժեր, որ թուրքերը կոտորեին հայերին, իսկ այժմ՝ 1913-ին, մի «հայասեր» էր (օ՜, հայասեր) Պաուլ Ռոհրբախ, որ առաջին անգամ սրիկա-հայասիրական խորհուրդ էր տալիս թուրքերին, որ հայերին Ռուսաստանի ազդեցությունից ազատելու համար պետք է նրանց հեռացնել ռուսական Հայաստանի հարևանությունից և, հանելով իրենց երկրից, բնակեցնել Բաղդադի երկաթուղու երկարությամբ՝ գետին մշակելու և գերմանական փողատերերի համար նույնպիսի ստրուկներ դառնալու համար, ինչպիսին էին նեգրերը Գերմանիայի աֆրիկյան գաղութներում։

Ահա ինչեր չիմացան մեր վեղարավոր և անվեղար դիպլոմատները։ Եվ արդյո՞ք պակասում էին փաստեր, որոնք հարկադրեին փոքր-ինչ ուղեղ շարժել։ Ինձ մոտ կա մի նամակ, որ գրված է դեկտեմբերի 26-27-ի տեսակցությունից հետո անմիջապես։ Թույլ տվեք, որ խոսի այդ թուղթն էլ գեթ իր մի քանի պերճախոս հատվածներով։

«Թիֆլիսից վերադարձա և տանս գտա երկու նամակ Պետերբուրգից և Կ.Պոլսից։

Պետերբուրգից Ղուկասյանը և Սաղաթելյանը ներկայացել են Կոկովցևին, սա ասել է. «Կայսրը հաճ է դեպի հայերը, ռուս կառավարությունը հայկական խնդիրը կպաշտպանի ոչ թե Լոնդոնի, այլ հետո կայանալիք կոնֆերանսում»։ Պետք է աշխատել Անգլիայում և Ֆրանսիայում տրամադրություն ստեղծել, մի խոսքով՝ կրկնել է մոտավորապես այն, ինչ որ ինձ էր ասել։

Սազոնովը հայտնել է, [թե] Տաճկաստանում հայեր չկան, նույնիսկ Վանում նոցա տոկոսը 16 է. ռուսները կամենում են այդտեղ ունենալ բուֆեր, և այդ նպատակի համար նոքա գերադասում են քրդերին։ Սազոնովին այդ գաղափարը ներշնչել է Միլլերը՝ Թավրիզի նախկին հայատյաց կոնսուլը, որ այժմ նշանակված է Թիֆլիսում խորհրդատու փոխարքային։

Մենք մեծ աշխատանք ունենք կատարելու, Միլլերին այլ կերպ տրամադրելու՝ համոզելով և խնդրելով։ Կաթողիկոսը եթե թույլ տա, տոներից հետո ես կգնամ Թիֆլիս և այնտեղ էլ կմնամ և կաշխատեմ։

Պոլսի նամակում պատմված է. Նուբարը յուրովի հրավիրել է Օրմանյանին, տեսակցություն է ունեցել Փարիզի տաճկաց դեսպանի հետ և խնդիր է ուղղել Քյամիլ-փաշային։ Այդ բոլորը նա անում է Նորատունկյանի թելադրությամբ և խորհրդով։ Նամակագրի ասելով՝ դրությունն այնպես է, որ նա երկուսից մեկին պիտի վաճառի՝ տերությունը կամ ազգը, և վաճառում է ազգը։ Իբրև ապացույց բերում է այս փաստը. Օրմանյանը դեռ ամբաստանված, դատի տակ է, Նորատունկյանի թելադրությամբ Քյամիլ-փաշան նրան հրավիրում է իբրև «երևելի» խորհրդակցության՝ արհամարհելով Ազգային ժողովի որոշումը։ Երկրորդ՝ չորս երևելիները նախքան ժողովի գնալը եղել են Նորատունկյանի տանը, լսել են նրա ցուցմունքները և խորհուրդները, բայց հարկ չեն համարել պատրիարքարանին մինչև անգամ տեղեկացնելու իրենց միսիայի մասին։ Նորատունկյանի ցանկությունն է, նամակագրի ասելով, տապալել ներկա վարչությունը և իր ցանկացած կազմը ստեղծել տալ, որով իր ձեռքին կունենա թե՛ ազգային վարչությունը և թե՛ Պողոս-փաշային։ Գրողն է Վահան Փափազյանը։

Պողոս-փաշա և Հ. Առաքելյան հեռագրով խնդրել են կաթողիկոսին՝ պատգամավորներ չուղարկել Ահարոնյանին և Սահակ եպիսկոպոս Այվատյանին։ Այսօր հեռագրեցինք, որ լուրն անհիմն է, որ ինքն էլ ոչ ոքի չպիտի դիմե պատգամավորության համար և պիտի հրահանգ ընդունե Էջմիածնից։

Նրան և պատրիարքարանին գրվելու է երկար նամակ.

1) Փոխարքայի և մեր տեսության թղթերի պատճենները պիտի ուղարկենք։

2) Նա դեռ պիտի մնա պատգամավոր, եթե քայլեր անելու լինի, համաձայնեցնե փոխարքայի 7 կետերի սկզբունքներին։

3) Հարցնե և մեզ տեղեկացնե Արթին Յաղուբ-փաշայի համաձայնությունը։

…Իմ կարծիքն է, որ ռուսաց կառավարչական շրջաններում երկու հոսանք կա՝ հօգուտ և ի վնաս մեզ։ Փոխարքայի տատանումները և Պետերբուրգի նամակը այդ են ապացուցանում։ Լրագրությունը, Կոկովցևը և փոխարքան առերևույթ մեր կողմն են։ Սազոնով, Միլլեր և այլք՝ հակառակ։ Ծանր է այդ կացությունը, բայց ոչ հուսահատական. լուրջ և անձնվիրաբար աշխատանքները գուցե մի օգնություն անեն։

…Վերջին լուրերն այնքան էլ հուսահատական չեն։ Նամակներ ենք ստացել պատրիարքից, Պողոս-փաշայից, Յաթուճյան եպիսկոպոսից և մասնավոր անձերից։ Ստացել ենք նաև հեռագրեր և հարկավոր կարգադրություններն արել։

…Ամսիս 2-ին պարոն Նուբարը հեռագրով խնդրեց լրացնել պատգամավորությունը բացառապես Թուրքիայի հայերից՝ Արթին Յաղուբ-փաշա, Հարություն Մաստիճյան, Մինաս Չերազ և Գևորգ եպիսկոպոս Յաթուճյան։ Ի նկատի ունենալով, որ նա այդ հեռագիրն ուղարկել էր՝ անկասկած նոր տեղեկություն ստացած լինելով և մեր կողմից շատ հարմար գտնելով նրա առաջարկած անձանց, և՝ որ նա խնդրում էր շտապեցնել պատգամավորների կարգումը, հեռագրով և ապա կոնդակներով կատարվեց նրա ցանկությունը։

…Նուբարի նամակը շատ բան պարզեց։ Նա շնորհակալություն է հայտնում կաթողիկոսին իր վրա ունեցած վստահության մասին, խոստանում է չխնայել իր աշխատանքը և անում է՝ ինչ կարող է։ Նա գրում է, որ չստանալով իր ծանոթ հեռագրի պատասխանը, դիմել է անձամբ Իզվոլսկուն, իսկ նա անմիջապես հեռագրով հարցրել է Պետերբուրգ իր տալիք պատասխանի համար։ Այդ բանը հանդիպել է բարեբախտաբար այն ժամանակ, երբ փոխարքայի հարցերն արդեն Պետերբուրգ էին հասել և մինիստրությունը գիտեր մեր տեսակետն ու հայացքը։ Առերևույթ մեր ցանկության համաձայն՝ հեռագրել են Իզվոլսկուն, թե թող պատգամավորությունը մնա և գործի նախամտածված ծրագրով։ Ուստի և Պողոս-փաշան հեռագրով խնդրեց և ստացավ պատգամավորության լրացումը։ Փաշան գրում է, որ Իզվոլսկու և Պուանկարեի խորհրդով՝ Լոնդոնի ժողովում չպիտի դնեն Հայկական հարցը, հայերն այդ ուղղությամբ չպիտի աշխատեն, այլ այդ հարցը կդնեն և կլուծեն եռապետյան համաձայնության անդամները՝ անմիջապես Լոնդոնի ժողովից հետո. հայոց պատգամավորությունը պետք է ջանք և աշխատանք գործ դնի հասարակական կարծիքը և որոշ չափով նաև երեքպետյան դաշնակցության կառավարությունների տրամադրությունը նպաստավոր կացուցանել հայերի համար։ Այդ նպատակին հասնելու համար նա անձամբ պիտի գնա Բեռլին և Վիեննա և աշխատի այդ ուղղությամբ։

…Յութուճյանը գրում է, որ Գրեյն իրեն և երկու տեղացի հայերի ընդունելություն չի նշանակել, հասկացրել է, որ Լոնդոնի ժողովում հայերին ձեռնտու չէ հարց հարուցանել, պիտի սպասել։ Պատրիարքը Կ.Պոլսից հեռագրով խնդրել էր պատգամավորություններ չուղարկել Լոնդոն, նույնը հաստատում է նամակով։ Մասնավոր նամակով ինձ գրում են, որ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ Պոլսո դեսպանատներից տեղեկացել են մոտավորապես հետևյալը. Հայոց հարցը չպիտի դնել Լոնդոնում, որովհետև մյուս պետություններն այդ հարցը առևտրի առարկա կդարձնեն (ընդգծումն իմն է - Լեո). իմանալով, որ տաճիկը չափազանց դեմ է, իրենք էլ կաշխատեն տապալել այդ հարցը՝ փոխարեն իրենց համար ստանալիք օգուտների։

…Մեզ համար ներկայումս մի բան պարզ է, որ ռուսական տեսակետը ընդունվել և պաշտպանվում է եռապետյան համաձայնության կողմից, որ նոքա ժամանակավորապես թողնում են մեր հարցը և խոստանում են առաջիկայում առաջ

մղել Թուրքիայի դեմ՝ առանց մյուս երեք տերությունների։ Այդ քայլի պատմական հիմունքն է 1895թ. ծրագիրը, որ դարձյալ այդ երեք տերություններն էին նախագծել։

…Պատրիարքի և այժմ նաև Եվրոպայի կարծիքն է՝ ամենևին չդիմել թուրք կառավարությանը, հավատ չընծայել նրա խոստումներին և որևէ բանակցությանց մեջ չմտնել նրա հետ։

…Այդ կողմից շատ հետաքրքիր են մանավանդ նամակագրի հաղորդած տեղեկությունները։ Ըստ ամենայնի, վստահելի մի անձնավորություն իր նամակի մեջ համառոտակի և փաստալի նկարագրում է հարցի զանազան ֆազերը Թուրքիայի կառավարության շրջաններում։ Երևի հիշում են Սազոնովին իմ տված պատասխանը, երբ նա ինձ ասաց Պետերբուրգում, թե հայերը այժմ կարող են հանգիստ լինել, քանի որ մեծ վեզիրը Քյամիլն է. ասացի, որ նախկին ջարդերի մեջ Քյամիլը մեծ բաժին ունի, որ դարավոր փորձից հետո չափազանց միամտություն կլիներ որևէ տաճիկ պետական մարդու հավատ ընծայել։ Նամակագիրը գալիս է մի անգամ էլ հաստատելու այդ չարաբախտ ճշմարտությունը։

…Նա գրում է, որ երբ հայոց, ապա նաև եվրոպական լրագրերը սկսեցին Հայոց հարցի մասին գրել, կառավարությունը կատաղեց, կիսապաշտոնական թերթերը սկսեցին ջարդի սպառնալիքներ կարդալ։ Պատրիարքը դիմեց կառավարությանը՝ անհետևանք, ապա միջամտեց ռուսաց դեսպանությունը. թերթերի լեզուն փոխվեց և մինիստրությունն ինքը սկսեց մտածել ռեֆորմների մասին։ Այդտեղ հանդես է գալիս Նորատունկյանը, որի խորհրդով հրավիրվում են հայ «երևելիները», որոնց հետ նախապես գաղտնի խորհրդակցում է և հարկավոր հրահանգները տալիս։ Ժողովուրդն իմանում է, հուզումը մեծանում է, մարդիկ են գնում Օրմանյանի և ընկերների մոտ՝ խնդրելով ստիպում են ազգի իրավանց դեմ չգործեն։ «Երևելիները» հրաժարվում են, Նորատունկյանը հրավիրում է վարչության անդամներից Պալաքյան վարդապետին և Ստ. Կարայանին, սոցա համոզում է բավականանալ տաճկի տվածով, չդիմել Եվրոպա։ Այդ էլ անհաջող է անցնում։ Հրապարակ են հրավիրում «Բյուզանդիոն» և մի քանի թերթեր, որոնք գրում են ռուսական միջամտության դեմ՝ ակնհայտ վիրավորական տոնով։ Աշխատանք է գործ դրվում՝ տապալելու ազգային ներկա վարչությունը և ազդելու Պողոս-փաշայի վրա։ Պոլսում գիտեն այդ բոլոր մեքենայությունները, զգույշ են և համերաշխ։ Երանի թե տևի։

…Հանելուկ է Նորատունկյանի դերը։

1913թ. 8-ն հունվարի

Մեսրոպ եպիսկոպոս

Էջմիածին»։

Հիացուցիչ տեսարան է ներկայացնում այս զուտ հայկական դիվանագիտական նամակը նախևառաջ և այն տեղի վերաբերմամբ, ուր նա գրված է։ Թերթեցեք հայոց պատմությունն ամբողջովին, և դուք կտեսնեք, որ Վաղարշապատի գլխավոր վանքը երբեք այդ դրության մեջ չի եղել։ Մի ժամանակ Երևանի խաներն ու խանզադները, բեկերն ու բեկզադները, երբ չափազանց շատ էին ձանձրանում իրենց մայրաքաղաքի մեռելությունից, վեր էին կենում մեծ խմբով գնում էին Էջմիածին, հարկադրում էին կաթողիկոսին և միաբաններին, որ նրանք հագնեն իրենց ամենահարուստ զգեստները և զանազան հանդիսավոր արարողություններ կատարեն, օրինակ՝ պատարագ, պսակ, կնունք, ձեռնադրություն, իսկ նրանք նստում էին փափուկ փռոցների վրա և թամաշա էին անում դրանց՝ իբրև թատերական ներկայացումներ։

Այսպիսի օրեր Արարատյան Մայր աթոռը շատ էր տեսել։ Բայց որ նա փոխարկվեր մի Quai d'Orsay-ի, մի Foreigne Office-ի, ուր պուանկարեները, իզվոլսկիները, գրեյները, սազոնովներն են զեկուցում բերողները և վեհափառ, սրբազան, հայր-սուրբ, գուցե և՝ տիրացու դիպլոմատներից են հրահանգվում, այդպիսի բան երբեք չէր տեսել։ Գևորգ Ե-ի մասին ասում էին, թե նա բախտավոր մարդ է գեթ այն կողմից, որ նրան հաջողվել էր դնել Հայոց հարցն ամբողջովին և հասնել բավարար լուծման։ Բախտավո՛ր։ Այսօր հայոց կաթողիկոսն, անկասկած, շատ պինդ է ըմբռնել, որ լուսնի տակ բախտ ու բախտավորություն չկա։ Մնալ առանց ժողովրդի, տեսնել մի ամայացած Թուրքահայաստան… Բա՞խտ է սա, թե հավիտենական անեծք։ Հայ հոգևորական անեծք։ Հայ հոգևորական դիպլոմատիան իր դարավոր միամտության մեջ դեռ այսքան զարհուրելիորեն չէր խորտակվել։

Ես վերևում ասացի, որ հայ ժողովրդի հնագույն դժբախտությունն այն է եղել, որ նրա դիվանագիտական գործերը գտնվելիս են եղել հոգևորականության ձեռքում։ Տեսեք Էջմիածնի գլխավոր դիվանագիտական ղեկավարին այս նամակի մեջ։ Առաջին օրինակ՝ Թավրիզի ռուսական հյուպատոսը, ոչ իհարկե առանց թվական հիմքերի, հաստատում էր, թե հայերը Թուրքիայում մեծամասնություն չեն կազմում, թե Վանում անգամ նրանց թիվը 16 տոկոսից ավել չէ։ Վիճակագրությունը կա՛մ պետք էր հերքել, կա՛մ ընդունել։ Մեսրոպ եպիսկոպոսն այնպես էր հասկանում դրությունը, որ եթե հյուպատոս Միլլերն այդպես է ասում, պատճառն այն է, որ նա «հայատյաց» է։ Եվ առաջարկում է աշխատել, որ նրա տրամադրությունը փոխվի, իսկ այդ կարելի է նրան համոզելով և խնդրելով։ Խնդրանքի վրա հոգևորական դիպլոմատիան այնքան մեծ հույսեր ուներ, որ կարծում էր, թե խնդրելով թվանշաններն անգամ կկորցնեն իրենց բովանդակությունը և միանգամայն «հայասիրական» կերպարանք կառնեն։

Երկրորդ օրինակ՝ Կ.Պոլսի պատրիարքը և Էջմիածնի դիպլոմատները հաստատ վճռած են, որ Հայոց հարցի լուծման մեջ ոչ մի մասնակցություն չունենա թուրք կառավարությունը. այսինքն՝ որ Եվրոպան հրամայի, իսկ թուրքը ձեռքը կրծքին դրած անմռունչ կատարի այդ հրամանը։ Հնարավո՞ր էր այդ։ Էլ ի՞նչ ազատ ու անկախ պետություն էր նա, որ այդպես պիտի վարվեին նրա հետ։ Թուրք

կառավարությունը եթե կատաղում էր հայերի վրա էլ, Հայոց հարցի վրա էլ, պատճառը հենց օտար միջամտությունն էր։ Ամեն մի միջամտությունից թուրքը սարսափում էր, որովհետև ամեն մի միջամտություն նշանակում էր նրանից մի չաղ կտոր պոկել։ Ճիշտ է, Թուրքիային հարկադրեցին չմասնակցել դեսպանական թարգմանների խորհրդակցության մեջ, բայց այդպիսի վիրավորանքները հե՞շտ են մոռացվում։ Ջեմալ-փաշան (սպանված Թիֆլիսում) իր հուշերի մեջ մեծ դառնությամբ է խոսում 1913 թվականի մասին, երբ Հայոց հարցն արծարծվում էր մի այնպիսի ժամանակ, երբ Թուրքիան ծանր դրության մեջ էր գտնվում՝ ստորագրած լինելով Լոնդոնի դաշնագիրը, որը խլել էր նրա գրեթե բոլոր եվրոպական հողերը։ Եվ հիշելով ռեֆորմների այն ծրագիրը, որ մշակել էր ռուսաց դեսպանությունը, նա բացականչում է. «Կարելի՞ է մի մեծ կայսրության ազգային փոքրամասնության պաշտպանության պատրվակով անամոթաբար առաջարկել մի անկախ պետության այստեսակ մի ծրագիր»….

Այս խոսքերը ցույց էին տալիս, թե երիտթուրքերը, թեև տկարացած և պարտված, դյուրագրգիռ էին իրենց պետության իրավունքներն ու պատիվը պաշտպանելու համար։

Մենք կարծում էինք, թե կարելի է մի պետության՝ ուժով, ստիպողաբար հարկադրել բարեկարգվել։ Հարց է, որ եթե ինքը՝ Կ.Պոլսի հայոց պատրիարքը, ունենար մի անկախ Հայաստան, չէ՞ր վրդովվի և չէ՞ր ասի, թե այդ ո՞ր արդարությամբ է, որ իմ երկրի մեջ կարգադրություններ եք անում՝ առանց ինձ հարցնելու։

Բայց մեր վեղարավոր դիպլոմատներն ասում էին, թե թուրքին չպետք է հավատ ընծայել։ Հավատ ընծայել դիվանագիտական գործերի մեջ ո՞ւմ կարելի է արդյոք՝ Վորոնցով-Դաշկովի՞ն, Նիկոլայի՞ն, Լլոյդ Ջորջի՞ն, թե՞ Բրիանին կամ Կլեմանսոյին, կամ նույնիսկ պոռոտախոս Վիլսոնի՞ն։ Սրանց հավատ ենք ընծայել ավելին, քան հարկավոր էր. անսահմանորեն, երեխայի սրտաբացությամբ և անկեղծությամբ։ Բայց ի՞նչ է նստել մեզ այդ հավատը։ Հաշվեցեք մեր զոհերը։ Հաշվելն անգամ անհնար է։ Ո՞վ այսօր չի ասի, թե ոչ մի Քերզոն, ոչ մի Պուանկարե լավ չէ մի Թալեաթ-փաշայից կամ Ջեմալ-փաշայից։ Եթե մենք համայնական խելք ունենայինք, այս կասեինք ոչ թե այժմ, այլ 1913-ին՝ մեծ աղետների նախօրյակին, որովհետև Հայոց հարցի պատմությունը վաղուց է այս ապացուցել մեր մեծ ջարդերի դասերով։

Մեր վեղարավոր դիպլոմատներից ծածուկ չմնաց և այն սոսկալի, հավիտյան ապրող ճշմարտությունը, թե Հայոց հարցը կարող է առևտրի առարկա դառնալ մյուս պետությունների համար։ Ոչ թե կարող էր դառնալ, այլ պիտի անպատճառ դառնար, ինչպես դարձել էր Սան-Ստեֆանոյի առաջին իսկ օրերից։ Բայց Էջմիածնի, պատրիարքարանի և այլ վանքերի անուղղելի միամիտները հավատացած էին, թե Հայոց հարցն առևտուր չեն շինի ո՛չ Ֆրանսիան, ո՛չ Անգլիան և ո՛չ Ռուսաստանը, այսպես անվանյալ, եռյակ համաձայնության պետությունները։ Ինչո՞ւ։ Որովհետև

սրանք շատ են սիրում հայերին։ Հենց միայն տեսեք, թե Ֆրանսիայում ինչ ահագին հայասիրական գրականություն է կազմվել։ Պոլ Դեշանելը՝ ֆրանսիական պատգամավորների պալատի նախագահը, ջերմ հայասեր է և ամեն մի միտինգում ճառեր է արտասանում, թե հայերը Թուրքիայում անպատճառ պիտի ազատություն ստանան։ Այո՛, այս բոլորը կա՝ ե՛ւ գիրք ու երգ, ե՛ւ նվագ ու ճառ, ե՛ւ զեղմունք ու խանդաղատանք… բայց այս բոլորը ոչինչ է։ Եվ հրամայողը կծծի, գրոշանոց շահն է։ Եվ նույն Պոլ Դեշանելի նախագահության ժամանակ Արիստիդ Բրիանի մինիստրությունը ծախեց Թուրքիայի հայությանն այնպիսի սրիկայությամբ, որպիսին կարելի է գտնել գուցե միմիայն մարդկային ամենաընկած շրջանների մեջ։

Թուրքիայում գտնվեց մի հատ պետական մարդ, որ փորձեց թուրք կառավարության հետ խոսել, համաձայնություն որոնել։ Դա Գաբրիել Նորատունկյանն էր՝ Թուրքիայի այն ժամանակվա արտաքին գործերի մինիստրը։ Նա շատ աշխատեց, որ հայերը Եվրոպային չդիմեն։ Բայց հայտնի է, թե ամբոխային դատողությունն ինչպես է վերաբերում այդպիսի մարդկանց՝ «Նորատունկյանը դավաճան է, վաճառում է ազգը»։ Բռնությամբ հեռացնում էին այդ չորս հայերին, ովքեր կառավարության կողմից հրավիրված էին բանակցությունների համար։ Եվ վեղարավոր դիպլոմատները հրճվանքի մեջ էին, որ մեկուսացրին իսկական դիվանագետին, որի կարողությունները խոստովանում էին նույնիսկ և եվրոպացի դիվանագետները։

Կատարյալ հաղթանակը մնում էր եվրոպապաշտությանը։ Ցարական կառավարության հրատարակած «Նարնջագույն գրքի» մեջ բերված են բոլոր մանրամասնությունները։ Ես այդ ռեֆորմների վերջին ծրագրի պատմությունը չեմ գրում։

1914-ի գարնանը կոմս Վորոնցով-Դաշկովը պաշտոնական նամակով շնորհավորեց Գևորգ կաթողիկոսին՝ հայտնելով, որ թուրքաց կառավարությունը հաստատել է ռեֆորմների ծրագիրը և նշանակել է այն երկու եվրոպացի վերատեսուչներին, ովքեր հայկական վիլայեթներում պետք է հսկեին օրենքների գործադրության վրա։ Գևորգ կաթողիկոսն էլ, իհարկե, ռուսներին շնորհավորեց։ Ռուսական դիվանագիտությունն իրեն համարում էր խոշոր հաղթանակ տարած։

Աչքը լույս հայ ժողովրդի… 1915-ի բնաջնջման հաստատ հիմունքներն էին դրվում։

Դ

Հայ հեղափոխական դաշնակցությունն իր խոշոր հաջողությունների հետևանքով հասել էր այն ամբարտավան մեծամտության, թե ինքը հայոց ազգն է ներկայացնում. եթե ոչ ամբողջը, գեթ նրա 99 տոկոսը։ Իր մասին այդպիսի կարծիք ունեցող կուսակցությունն իհարկե չէր կարող թույլ տալ, որ Հայոց հարցը լուծում

ստանա առանց իր եռանդուն մասնակցության։ Եվ իրավ, այդ մասնակցությունը շատ գործուն էր սկզբից ևեթ։ Ամբողջ նախաձեռնությունը պատկանում էր Դաշնակցությանը։ Նա էր, որ կազմեց բարենորոգումների ծրագիր, որ Կ.Պոլսի պատրիարքի միջոցով ներկայացրեց ռուսաց դեսպանին։ Բանակցությունները հայոց պատրիարքարանի և ռուսական դեսպանության մեջ վարվում էին գլխավորապես դաշնակցական գործիչների գծած ուղղությամբ և թելադրություններով։ Եվ վերջապես, ինքը՝ Դաշնակցությունն էլ իր անունից բանակցությունների մեջ մտավ ռուսաց դիվանագիտության հետ, այսինքն այն կառավարության, որի դեմ նա աղմկալի ցույցեր էր անում դեռ մի երկու տարի առաջ՝ միացած երիտթուրքերի հետ։ «Նարնջագույն գիրքը» հավերժացրել է այն տեսակցությունը, որ Դաշնակցության դիվանագիտական գործերի վարիչ դոկտոր Զավրիևը ունեցել էր դեսպան Գիրսի հետ։

Իսկ Կովկասում Դաշնակցությունը քաղաքականություն էր ընդգրկվում գործելու հայ բուրժուազիայի մեջքի ետևում։ Տեսանք արդեն, որ Ազգային բյուրո հիմնելու առաջին իսկ պահից Դաշնակցությունը սեղանի վրա էր դնում ինքնապաշտպանության հարցը. իր հին պահանջը, որ էր՝ փող ստանալ և զենքեր առնել և ուղարկել Թուրքահայաստան։ Այդ նպատակով տասնյակ տարիներ աշխատել էին հնչակյաններն էլ, դաշնակցականներն էլ. փող շատ էին հավաքել, բայց գործնական հետևանքը ողորմելի էր եղել։ Միևնույն երգը, որ արդեն բավականաչափ արատավորված էր, երգվում էր և այժմ։ Սակայն բյուրոն չկարողացավ գումարներ հավաքել մի բանի համար, որի հաջողության վրա հասարակությունը ոչ մի վստահություն չուներ։ Այս բանը, սակայն, չհուսահատեցրեց դաշնակցականներին, և նրանք վճռեցին զինել Թուրքահայաստանը… ռուս կառավարության հաշվին։ 1913 թվի մարտին՝ այն ժամանակ, երբ Կ.Պոլսի ռուսաց դեսպանն արդեն սկսել էր իր բանակցությունները հայկական ռեֆորմների մասին, փոխարքայի զինվորական օգնական, գեներալ Շատիլովին ներկայացավ մի պատգամավորություն՝ իբր թե Կովկասի հայերի կողմից, բայց իրոք նույն բյուրոյի շրջանից՝ Մեսրոպ եպիսկոպոս, Խատիսյան, Հարությունյան, Քալանթար և Պապաջանյան։

Պատգամավորությունը գեներալ Շատիլովի ուշադրությունը հրավիրելով այն ծանր դրության վրա, որի մեջ գտնվում էր թուրքահայ ժողովուրդը, խնդրեց, որ ռուսական պահեստներից զենքեր բաց թողնվեն այդ ժողովրդի ինքնապաշտպանության համար։ Կոմս Վորոնցով-Դաշկովն այս մասին հայտնեց արտաքին գործերի մինիստրին, որից պատասխան ստացավ, թե այդպիսի միջոցի կարիք չկա, քանի որ ռուսաց կառավարությունն արդեն բոլոր միջոցները ձեռք է առել թուրքահայերի պաշտպանության համար։ Փոխարքան հաղորդելով այս պատասխանը կաթողիկոսին՝ նկարագրեց, թե ինչ դրության մեջ է գտնվում ռեֆորմների խնդիրը և առանձնապես հանձնարարեց, որ հայերը ծայր աստիճան ինքնազսպում և հանդարտություն ցույց տան։

Կար Դաշնակցության առջև մի շատ փափուկ խնդիր։ Այդ նրա հարաբերությունն էր երիտթուրքերի կուսակցության հետ։ Երկուսի մեջ գոյություն ունեցած դաշինքը ձևականապես չէր խախտված։ Եվ ահա առաջանում է այսպիսի մի հանգամանք։ Ջեմալ-փաշան իր հուշերի մեջ պատմում է, թե երիտթուրքերը դիմեցին դաշնակցական գլխավորներին և խնդրեցին նրան՝ աջակցել իրենց կռվի մեջ, որի նպատակն էր դուրս հանել Հայաստանից ռուսական ռեֆորմների ծրագիրը։ «Այժմ, երբ վերջացել է Բալկանյան պատերազմը,- ասում էին երիտթուրքերը,- մեզ համար այլևս դժվար չէ քրդերին սանձելը և ապահովել հայերին խաղաղ գոյություն»։ Բայց դաշնակցականներն այդ բոլոր առաջարկություններին պատասխանում էին. «Որովհետև այս գործի մեջ խառնվել են մեծ պետությունները, մենք չենք կարող մասնակցություն չունենալ նրա մեջ»։ Հասկանալի է, որ այնուհետև երիտթուրքերը պիտի համոզվեին, թե դաշնակցականներն այլևս իրենց դաշնակիցները չեն։ Նախկին մտերմությունը պիտի տեղի տար ցրտության և արագ փոխվեր թշնամության։ Այստեղից էր սկսվում Դաշնակցության ուժի և դիրքի անկումը Թուրքիայում։

Թուրք կառավարությունն ուներ իր ձեռքի տակ անհերքելի փաստեր, թե Դաշնակցությունն ակամա չէր մտել Հայոց հարցի քննության և լուծման մեջ, իբր թե լոկ այն պատճառով, որ մեծ պետություններն իրենց ձեռքն են առել այդ հարցը, այլ ինքն էր գլխավոր դրդիչը հանդիսացել, որ տեղի ունենա ռուսական միջամտություն և այլն։ Ահա թե ինչ է ասում Դաշնակցության Ամերիկայի կենտրոնական կոմիտեն իր շրջաբերականի մեջ, որի ճակատին գրված էր՝ «Խիստ գաղտնի», բայց այս բանը արգելք չհանդիսացավ, որ նա ընկնի թուրք կառավարության ձեռքը։

«Ընկերնե՛ր,

Բալկանյան պատերազմի վերսկսումով՝ քաղաքական շրջանակը կրկին շփոթեցավ, ու Հայկական դատի այժմեությունը կարծես մեղմացավ։ Իրականին մեջ, սակայն, այնպես չէ, որովհետև որոշ մարդիկ, մարմիններ և մեր կուսակցությունը, մասնավորապես, քաղաքական դիմումներով կձգտեն հող պատրաստել Հայկական դատը հառաջիկային ամեն գնով դնելու համար դիվանագիտական սեղանին վրա և պահանջել անոր նպաստավոր լուծումը։ Այդ մասին բյուրոյեն եկած նամակներեն կքաղենք հետևյալ կարևոր տեղեկությունները։ Հայկական դատի մասին կարող ենք ձեզի հաղորդել երեք որոշ կետեր.

Ա. Որ մեր հարցը այս դեսպանախորհրդին չպիտի դրվի։

Բ. Երեք պետություններ՝ Ֆրանսա, Անգլիա և Ռուսիա, որոշել են մեր խնդիրը ձեռք առնել խաղաղության վերջնական հաստատումեն հետո։

Գ. Երեք պետություններն ալ տրամադիր են հայկական նահանգներուն մեջ հատուկ վարչություն հաստատելու, ուրիշ խոսքով՝ ապահովելու ռեֆորմների գործադրություն։

Թե Պուանկարե՝ Փարիզ և թե՛ Սըր Էդուարդ Գրեյ՝ Լոնդոն և թե՛ Սազոնով՝ Պետերբուրգ, ինչպես և անոնց դեսպանները Պոլիս, այդ տրամադրություններն են հայտներ՝ խորհուրդ տալով՝ այժմ փոքր-ինչ սպասողական դիրք բռնել։

Լոնդոնի մեջ Անգլո-հայկական կոմիտեն, որուն մեջ կմտնեն նախկին Բալկանյան կոմիտեի ազդեցիկ անդամներ, լսելյան բավական գործունեություն ունի։ Անոնք հիշատակագիր մը ներկայացուցին վեց մեծ պետությանց վեհապետներուն և նախարարություններուն շատ եռանդուն կերպով, հիշատակագիրը ուղարկված է նաև անոնց կողմե Մ. Նահանգներուն նախագահին՝ Տաֆտի։ Հաստատ տեղեկություններ ունենք, որ ֆրանսական, անգլիական և ռուսական դեսպաններ հրահանգ են ստացել զբաղվել մեր դատով։ Ջանքեր կթափենք, որ մյուս մեծ պետությունները, եթե ոչ կողմնակից, գոնե չհակառակին։ Այժմ ստույգ կնկատվի, որ Հայոց հարցը չպիտի դրվի այս դեսպանախորհրդին, ինչ որ պետք չէ հիասթափություն պատճառե մեր հասարակության, որովհետև վճռված է Փոքր Ասիո խնդիրը հարուցանել այն ատեն, երբ Ռումելիի խնդիրը վճռված ըլլա, ֆրանս. դեսպանատունը և կառավարությունը շատ ջերմ համակրությամբ կվերաբերին մեր դատին։ Հույս կա, որ և ան ամենակարևոր կետն է՝ Անգլիո և Ռուսաստանի մեջ մեր հարցի մասին անհամաձայնություն չի ծագիր, որ շատ վտանգավոր կրնա ըլլալ։

Պետերբուրգի մեջ, հայկական գաղութի կողմե դիմում եղած է վարչապետին և արտաքին գործոց նախարարին, որոնց վերաբերմունքը եղած է համակրական, և խոստացեր են հրահանգներ տալ Պոլսո դեսպանին և խորհուրդ են տվեր նաև, ինչ-որ տարօրինակ կթվի, պրոպագանդ ընել Անգլիո և Ֆրանսայի մեջ։ Ինչպես արդեն ձեզի գրած ենք, պատրիարքարանը գրեթե նույնությամբ որդեգրեց մեր պահանջումները։ Այժմ կսպասվի, որ ամեն մեկ կետ պատճառաբանյալ և մանրամասն ներկայացվի։ Այս աշխատանքն է, որ կզբաղեցնե մեզ այժմ, և հույս ունենք շուտով ուղարկել ավելի մանրամասն ուրվագիծը։ Պետերբուրգեն հոս եկած են երկու հայ ներկայացուցիչներ՝ ծանոթանալու պոլսահայ շրջանակներու տրամադրության և արդեն վերադարձան բավական տեղեկություններով։ Վանեն կգրեն, որ մեր խումբերու դիմադրությունները բավական ազդել են քյուրդերու վրա։ Ինքը՝ վալին, սկսել է նահանջել և կփորձե մոտենալ մեր այնտեղի մարմիններուն։ Դիվանագիտական հարցի հետ անմիջապես կուգա երկրին պաշտպանության ամենակենսական հարցը։ Երկրի դրությունը, մանավանդ մասնավոր շրջաններու մեջ, սկսած է դառնալ անտանելի հայ տարրին համար, և այս անգամ ևս քաղաքական փոթորիկը անցնելու և վերապրելու համար անհրաժեշտ է, որ մեր բովանդակ ուշադրությունը դարձնենք դեպի հոն։

Ընկերնե՛ր, նկատի ունենալով հրամայողական պահանջը, ստիպված ենք կոմիտեներին խնդրել, որ՝

Ա. Կարելիության սահմանին մեջ՝ 1913 թվի անդամական տուրքերը ջանան գանձել և փութացնել մեզ միանգամ։

Բ. Գաղութների մեջ գործող ՀՅԴ Կարմիր խաչի, դերասանական, երաժշտական և այլ խումբերուն թելադրել, որ իրենց գործունեությունն ուղղեն ի նպաստ պաշտպանության գործին։

Գ. Շարունակել պրոպագանդայի և հանգանակության ժողովները՝ հուսալով, որ հասարակության լավագույն տարրը գործի պահուն դարձյալ մեզի հետ է։

Դ. Ուժ տալ «Հայրենիքի» բացած «Ապրելու համար» հանգանակության։

Ե. Դրամ հանգանակել պաշտպանության համար՝ խնջույքներու, հարսանիքներու ատեն։ Պաշտպանության առթիվ ձեզ կհաղորդենք հետևյալ կարևոր լուրերը։ Բյուրոն (չպետք է մոռանալ, որ խոսքն այստեղ Ազգային բյուրոյին չի վերաբերվում, այլ Դաշնակցության Արևմտյան բյուրոյին – Լեո) մեզ կգրե. «Ստացանք ձեր փոխադրած վերջին գումարը և համաձայն ձեր փափագին՝ դրամական բաժնումի գործը կատարեցինք ձեր հիշատակած վայրերու մեջ»։

Եվ այսպես, Դաշնակցությունը դեռ 1913-ի սկզբին էր ռազմական դրության մեջ դնում իր ուժերը։ Եվ երիտթուրքերի կառավարությունը շատ լավ տեղեկացված էր, թե իր դեմ են ուղղված այդ պատրաստությունները։

## Գլուխ հինգերորդ։ Համաշխարհային պատերազմ

### Ա

1914թ. հունիսի սկզբին ես Երևանում վերջացրի այնտեղի թեմական դպրոցի պատմությունը և, վերադառնալով Թիֆլիս, ամբողջ աշխատությունս հանձնեցի տպարանին և ընտանիքով գնացի Դիլիջան՝ ամռանը հանգստանալու համար։ Ստիպված լինելով իմ գործի պատճառով հինգ ամիս ապրել Երևանում՝ ես համարյա բոլորովին կտրված էի դրսի աշխարհից։ Իմացա մի երկու բան միայն։ Երևան եկավ մի ռուս պրոֆեսոր և մի դասախոսություն կարդաց Հայոց հարցի մասին։ Գնացի լսելու և մեծ հուզմունքով իմացա, որ «հայասեր» Պաուլ Ռոհրբախը՝ Գերմանիայի նվաճողական իմպերիալիզմի հեղինակավոր գաղափարախոսներից մեկը, ծրագիր է առաջարկել հրապարակորեն՝ տպված բրոշյուրի միջոցով, որ թուրքահայ ժողովուրդը դուրս հանվի իր երկրից և բնակեցվի Բաղդադի երկաթուղու երկարությամբ, ուր նա կարող է շատ պետքական լինել իբրև կուլտուրական տարր։

Որքան և խաղաղ էր ժամանակը և Հայոց հարցն արդեն, լավ թե վատ, լուծված կարելի էր համարել, բայց և այնպես, չէր կարելի չվրդովվել գերմանական ուղեղից ծնված այդ տմարդի և վայրենի մտքից, որ սարսուռ էր ազդում իր հրեշավորությամբ։ Եվ այսպես էր Ռոհրբախը. նա, որ մերն էր հաշվվում։ Շատ ժամանակ չէր, գուցե մի տարի միայն առաջ, ես հանդիպել էի այդ մարդուն գնացքի վագոնում։ Ես Երևան էի գնում, իսկ նա՝ Վան, այնտեղի հայ-գերմանական որբանոցները տեսնելու համար։ Ամբողջ ճանապարհին խոսեցինք ռուսերեն, և նա ինձ այնքան բաներ հաղորդեց

թուրքահայերի և գերմանական հայասիրության մասին։ Որքան հոգատար և խնամատար էր նա երևում։ Եվ ինչպե՜ս էր, որ այդպիսի սրտի մեջ տեղ գտավ այն հին տևտոնական հրեշը։

Ջանփոլադյանի թատրոնում նստած՝ ես մի վայրկյան երևակայեցի երեխաների, կանանց և տղամարդկանց բռնի տեղահանությունը և սարսափից փակեցի աչքերս։ Պատանեկությանս հասակում ես կազմել էի Դավիթ Լիվինգստոնի կենսագրությունը և նրա մեջ կանգ էի առել այն տեսարանի վրա, թե ինչպես նեգրերին եվրոպացիները քշում են դեպի ծովափ՝ այնտեղ նրանց ծախելու և աշխարհի այլևայլ կողմերն ուղարկելու համար։ Նկարագրում էի, թե ինչպես թշվառները կոտորվում էին ճանապարհին և շուկաներում՝ ձեռքերը դնելով կրծքի վրա, և դրանով ցույց էին տալիս, թե թողած հայրենիքի կարոտն է իրենց սպանում։ Այսպես կլինեն, վերհիշում էի ես, և Հայաստանի բարձունքներից մտրակներով դեպի Սիրիայի արևակեզ դաշտերը քշվող հայ մանուկներն ու նրանց մայրերը, քույրերը, տատերը, պապերը… Ո՜վ հավիտյան նզովյալ մարդկային արնախում հնարագիտություն…

Ջանփոլադյանի թատրոնում նստած՝ ես աշխատում էի դեն քշել այդ մղձավանջը։ Ես կարո՞ղ էի երևակայել, որ ընդամենը մի տարուց հետո այդ մղձավանջը հայ կյանքի ամենահզոր փաստը կդառնա…

Մի ուրիշ տեղեկություն, որ հասավ Երևան, երևում էր շատ մանր և երկրորդական։ Բայց իմ հիշողության մեջ այն խրված է հրաշեկ երկաթի նման, այն չափազանց խոշոր ճակատագրական նշանակության պատճառով, որ նա ստացավ մի երկու ամիս հետո։ Ես խոսում եմ Ազգային բյուրոյի մասին։ Մայիսին Թիֆլիսում կայացավ համագումար։ Հայոց հարցն արդեն վերջացել էր, նույնիսկ երկու եվրոպական վերահսկիչները Կ.Պոլսից ճանապարհվում էին գավառները՝ իրենց պաշտոնը ստանձնելու համար։ Բնական կլիներ սպասել, որ Թիֆլիսի հայ դիպլոմատները վերջացած համարեին իրենց առաքելությունն ու փակեին իրենց բյուրոն։ Բայց այդպես չեղավ։ Համագումարը նոր բյուրո ընտրեց և ապա ցրվեց։ Գործը դեռ վերջացած չէր։ Ռեֆորմներն ընդունվել էին, հաստատվել։ Բայց դա բավական չէր, դեռ պետք էր դրանք գործադրել։ Բյուրոն մնում էր, որ դրանք գործադրել տա։ Բացի դրանից, նա իր վրա էր վերցրել մի նոր բան, արդեն ոչ թե քաղաքական-դիվանագիտական, այլ ֆինանսական բնույթի, այն է՝ հիմնել մի հայկական բանկ, որ, ինչպես խորհուրդ էր տվել արտաքին գործերի նախարար Սազոնովը, իր գործողությունների ասպարեզ պիտի ընտրեր գլխավորապես Փոքր Ասիան և այսպիսով պիտի կատարեր նաև քաղաքական դեր։ Այսպիսով հայ կապիտալիզմն ազատագրված Հայաստանի հետ կապում էր իր շահերը։ Առաջին անգամն էր, որ նա դուրս էր գալիս այսքան պարզորոշ ծրագրով։

Երևանը խուլ անկյուն էր, բայց նա փառք էր՝ համեմատած Դիլիջանի հետ։ Այստեղ մի անհատնում թարմություն կա միայն՝ բնությունը։ Եվ մոռանալով ամեն

ինչ, որը կատարվում է մեծ կենտրոններում, մենք՝ հովեկներս, ավելի ու ավելի խորն էինք թափանցում բնության ծոցը, սովորում էինք ապրել նրա հմայքներով։ Սա մի բնական կյանք էր, որ հարկավոր էր քաղաքացու չափազանց լարված ջղերը փոքր-ինչ կարգի բերելու համար։

Այս դրության մեջ մենք անց էինք կացրել ամառվա համարյա կեսը, երբ հանկարծ, անսպասելի կերպով, դարավոր անտառների սքանչելի լռության մեջ մի զարհուրելի թնդյունով մի աղետ պայթեց և ծանր, ամեն ինչ տափակեցնող անիվի նման իր տակը գցեց մարդկային կյանքն ու սկսեց մոլեգնոտ պտույտներ գործել նրա վրա։

Զինակո՛չ… Ահա՛ ինչ էր այդ աղետի անունը։ Արագ ու տիրական նա մտավ ամեն տեղ, նույնիսկ բնության ամենախուլ անկյունները, ամեն տեղ սուգ ու շիվան բարձրացրեց, կյանքը տակնուվրա արեց, թշվառացրեց։ Մեր Դիլիջանի ամառային փոքրիկ «հասարակական» կյանքը մի րոպեում չքացավ. իսկույն հեռացավ կազակների զինվորական նվագախումբը, կառքերը պակասեցին, ձիերը քշվեցին դեպի հավաքակայաններ, և մենք րոպե առ րոպե տեսնում էինք, թե ինչպես է աղքատությունը բարձրանում, և ամեն ինչ ընկնում է նրա մահացնող ոտքերի տակ։ «Ամեն ինչ պատերազմի հրեշին»,- այսպես էր ձայնում պատերազմի նախակարապետը՝ զորակոչը։ Եվ ամենքն ու ամեն ինչ համաձայն էին, խոնարհ ծունկ էին ինջում նրա առջև։

Եկավ և իսկականը՝ հրեշը։ Հուլիսի 20-ին (հին տոմարով) Դիլիջանի պետական հիմնարկությունների մեջ կախված էր հեռագիր՝ «Գերմանիան մեզ պատերազմ հայտարարեց. գեներալ-ադյուտանտ Սուխոմլինով»։

Ես ապրում էի մոլոկանների թաղում։ Եվ տեսնում էի, թե քանի՛-քանի սայլեր, գերանդիներ, մանգաղներ անտեր մնացին, քանի՛-քանի բակեր փակվեցին ու խցվեցին։ Ահա մի խումբ է առաջանում մեծ ճանապարհով։ Շատվոր են, միայն մեկն է տղամարդ, մնացածները կանայք են։ Ճամփու են դնում լաց ու կոծով։ Կանգ առան։ Բաժանվելու րոպեն է։ Լաց ու համբույր, համբույրներ ու լաց։ Վերջապես գնացողը ազատվում է հարազատ գրկերից և ասում է՝ «может вернусь»։ Այս խոսքերը խուլ, մելամաղձոտ, այն րոպեից մինչև այսօր ականջներիս մեջ են, և ամեն անգամ, երբ իմ մեջ հարց է գալիս, թե ի՞նչ է պատերազմը, մոլոկանի այդ խոսքն է դուրս սողում իբրև պատասխան և բացատրություն։

Պատերազմ՝ «может вернусь»։

Այսօր է, որ մենք հարյուր ու հազար գիտենք, թե ինչպես պատրաստվեց ու իրականացավ 1914-ի համաշխարհային ոճիրը՝ պատերազմը։ Այսօր է, որ մենք հազար ու մի պատճառներ գիտենք, հարյուր ղեկավարներ ու դերակատարներ, որոնք գլորեցին մարդկությունը վայրենացման անդունդը և ահռելի, մինչև այդ երբեք

չտեսնված, հունձ տվին մահին։ Այն ժամանակ մենք դեռ միամիտ էինք, արքայական ոսկեզօծ պալատներում խնամքով թաքնված էին ռճրագործները, և պատերազմն ամենքիս երևում էր իբրև մի անակնկալություն։ Անակնկալության մի խոշոր փաստ էր համարվում այն, որ փոխարքա Վորոնցով-Դաշկովն այդ միջոցին արձակուրդի մեջ էր և ապրում էր Ռուսաստանի իր կալվածքում։ Պատերազմի հայտարարությունից անմիջապես հետո, ամառվա տապին նա վերադարձավ Թիֆլիս։ Եվ իսկապես. Կովկասը թեև հեռու էր Գերմանիայից, բայց ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ Թուրքիան Գերմանիայի դաշնակիցն էր և թեև այսօր դեռ խաղաղ դրության մեջ էր, բայց ամեն րոպե կարող էր նետվել ռազմական կրակի մեջ, և այն ժամանակ Կովկասը կդառնար մի նոր ռազմաճակատ։

Ազգային բյուրոյի նախագահ Սամսոն Հարությունյանը Դիլիջանում էր ապրում։ Նրան հեռագրով կանչեցին Թիֆլիս։ Գնաց ու երկար ժամանակ չվերադարձավ։ Լուրեր էինք լսում, թե ինչ-որ բանակցություններ էին տեղի ունենում։ Վերջապես նա վերադարձավ և ինձ մեկիկ-մեկիկ պատմեց՝ ինչ կատարվել էր Թիֆլիսում։

Պատրաստվելով թուրքական պատերազմին՝ Կովկասյան ռուս բանակի շտաբն առաջին հարցերից մեկն էր դարձրել հայերի մասնակցությունն այդ պատերազմի մեջ։ Ես արդեն պատմել եմ, որ մի անգամ էլ, 1907-1908-ի ձմռանը, երբ ռուս-թուրքական պատերազմը շատ հնարավոր էր դարձել, Կովկասյան շտաբն իր սպաներից մեկի միջոցով բանակցություններ սկսեց Դաշնակցության հետ։ Միևնույն տեսակ բանակցությունների անհրաժեշտություն կար և այժմ, բայց այս անգամ բանակցություններն իր վրա էր վերցրել ինքը՝ փոխարքան։ Դաշնակցականներն արդեն մուտք ունեին փոխարքայական պալատ։ Դաշնակցության արտաքին գործերի վարիչ բժ. Զավրիևը, որ կարողանում էր ամեն տեղ լինել և ամեն բանի հասնել, հայտնվեց Թիֆլիսում և, ներկայանալով Վորոնցով-Դաշկովին, մի շարք մեծամեծ խոստումներ արավ։

Դաշնակցությունը նրա տրամադրության տակ կդնի իր ուժերը, հայ ժողովուրդը կարող է իր հաշվով կազմակերպել կամավորական խմբեր։ Համաձայնությունն արդեն կիսով չափ կայացած էր, բայց Վորոնցով-Դաշկովը կամեցավ ավելի լայն ծավալ տալ այդ բանակցություններին։ Նրա կողմից, բացի բժ. Զավրիևից, հրավիրվեց Թիֆլիսի պալատական շրջանը՝ Մեսրոպ եպիսկոպոս (որ արդեն Թիֆլիսի թեմական առաջնորդն էր), Սամսոն Հարությունյան և Ալ. Խատիսյան։ Խորհրդակցությունները տեղի էին ունենում պալատում, փոխարքայի հետ ներկա էին լինում նրա օգնականները, շտաբի գլխավորն ու այլ բարձրաստիճան զինվորական պաշտոնակալներ։ Կառավարությունն առաջարկում էր, որ Թուրքիայի հետ պատերազմ սկսվելու դեպքում չորս կամավորական խմբեր կազմվեն հայերից, յուրաքանչյուրը մոտավորապես 400 հոգուց, դաշնակցական խմբապետների հրամանատարությամբ։

Այդ խմբերի անմիջական գործը պիտի լինի հետախուզողների, առաջնորդների, հարկավոր դեպքերում նաև առաջապահ պահակների դերը։ Կովկասյան իշխանությունը թույլ կտա բոլոր փախստական դաշնակցականներին վերադառնալ Կովկաս, աքսորից կվերադարձնի մի քանի խմբապետների և խոստանում էր առհասարակ ընդհանուր ներում շնորհել Դաշնակցության գործով բոլոր դատվածներին և դատի ենթարկվածներին։ Եվ քանի որ հայերը դժգոհում էին Թուրքահայաստանի համար մշակված և թուրք կառավարության կողմից նոր վավերացված ռեֆորմների նկատմամբ՝ ռուսաց կառավարությունը հանձնառու է լինում բոլորովին նոր կերպարանք տալ Հայոց հարցին՝ առաջարկելով, որ հայերի կողմից նոր ձևակերպված պահանջներ ներկայացվեն իրեն։

Բանակցություն վարողներն անմիջապես մշակում են մի նոր առաջարկություն. Սամսոն Հարությունյանը վերցնում է այդ թուղթը և ճանապարհվում Էջմիածին, ուր Գևորգ կաթողիկոսը շնորհում է իր ստորագրությունը։ Եվ ահա Հայոց հարցի համար մի նոր կերպարանավորում։ Պատմության համար այստեղ մի քանի հատված եմ դնում այդ դիմումից.

«Ներկայումս սկսված մեծ պատերազմը կրկին ենթարկում է թուրքահայերի վիճակը նորանոր փորձությունների։ Այժմ, երբ յուրաքանչյուր ռուս քաղաքացու մտքերը անհանգստությամբ հետևում են դեպքերին, որոնք պահանջում են պետությունից ուժերի ու կամքի մեծ լարում, ես երջանիկ եմ հավաստիացնելու Ձերդ պայծառափայլությանը, որ հայ ժողովուրդը, մոռանալով սեփական վերքերից առաջ եկած ցավի զգացմունքը, իր բոլոր մտքերը կենտրոնացրել է մեծ հայրենիքի վրա, որի փառքի համար նա ոգևորությամբ արձագանք տվեց իր թագավորի կոչին՝ կատարել իր սուրբ պարտականությունը Նորին կայսերական մեծության և հայրենիքի առաջ…

Ես երջանիկ եմ հայտարարելու Ձեզ, մեծարելի կոմս, նաև այն, որ սահմանից այն կողմը բնակվող հայ ժողովուրդը նույնպես անխախտ հավատարիմ մնաց իր անձնվիրության մեջ մեծ ռուսաց պետությանը…

Բայց, իբրև հովիվ իմ ժողովրդի, ես չեմ կարող առանց համոզմունքի չհայտնել Ձեզ, որ հայ ժողովուրդը Թուրքիայում ստիպված կլինի ապրել շատ ծանր օրեր, եթե միայն Ռուսաստանի ուշադրությունը դեպի հայկական խնդիրը, թեկուզ ժամանակավորապես, թուլանա…

Ես կարծում եմ, որ կայսերական կառավարությունն այլևս կասկածի նշույլ անգամ չի կարող ունենալ, որ իր բոլոր փորձերը բարեկամությամբ ազդելու Թուրքիայի վրա՝ դրական հետևանքների չեն բերում…

Բ. Դուռը, Գերմանիայից գաղտնորեն խրախուսված, կարողացավ ոչնչացնել հունվարի 26-ի համաձայնությունը, և այդ պատճառով ընդունված ռեֆորմների ծրագիրը ոչ ոքի բավականացնել չի կարող։ Ի նկատի առնելով բազմաթիվ

տեղեկությունները, որ ես ստանում եմ Կ.Պոլսի պատրիարքարանից և Ազգային Ժողովից, ես գալիս եմ այն տխուր եզրակացության, որ անկարելի է հավատալ Թուրքիայում ներկայումս, այնտեղ տիրող կարգերի տակ, հնարավոր լինի իրագործել որևէ ռեֆորմ՝ հայերի դրությունը բարելավելու համար, եթե միայն նրանց գործադրությունը ապահովված չլինի առանձին և հաստատուն երաշխիքներով…

Քանի դեռ Թուրքահայաստանը Թուրքիայի սահմաններում է, ամբողջ հայ ժողովրդի համար այդ ծանր հարցի վերջնական լուծման համար, իմ և ամբողջ հայ ժողովրդի կարծիքով, պետք է անել հետևյալը.

1. Կազմել հայկական 6 վիլայեթներից Անատոլիայում մի անբաժան նահանգ։

2. Այդ նահանգի կառավարիչ նշանակել բարձր տիտղոսով մի անձ Ռուսաստանի ընտրությամբ, անկախ Բ. Դռնից, քրիստոնյա դավանությամբ։

3. Մտցնել այդ նահանգում ներքին լայն ինքնավարություն՝ ընտրողական հիմունքներով և հավասար ներկայացուցչությամբ՝ քրիստոնյաների և մահմեդականների։

4. Որպեսզի հայ ազգաբնակչությունը հավատա նոր կազմակերպությանը և իրավակարգի կենսունակությանն ու հաստատությանը՝ ամբողջ ռեֆորմի գործադրության վերահսկողությունը հանձնել բացառապես միայն Ռուսաստանին։

Վարչական վերոհիշյալ եղանակի կիրառումը հնարավոր է միայն ներկա պատերազմի վերջանալուց հետո։ Մինչդեռ Թուրքիայում հայտարարված զորահավաքի առիթով նկատվում են հուզիչ նշաններ, որոնց շնորհիվ հայ ազգաբնակչությունը վախենում է նորանոր դժբախտություններից։ Ուստի, ցանկալի է, որ կայսերական կառավարությունը այժմ ևեթ խիստ պահանջ դնի թուրք կառավարությանը։

Ա. Անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել հայերի կյանքի և գույքի պաշտպանության համար։

Բ. Որքան կարելի է շուտով ընդհանուր վերատեսուչներին իրենց պաշտոնատեղիներն ուղարկել՝ տալով նրանց հնարավորություն, առայժմ մտցնել 1914թ. հունվարի 26-ի համաձայնությամբ ընդունված ռեֆորմը։

Ամենախոնարհաբար խնդրում եմ Ձերդ պայծառափայլությանը, առ ոտս առկանելով նորին կայսերական մեծության, մեր սիրեցյալ կայսեր, իմ և Ռուսաստանի ամբողջ հոտի հավատարիմ հպատակության զգացմունքները, միջնորդել ամենաողորմած կայսեր առաջ թուրքահայերի հովանավորության ու պաշտպանության մասին և նրանց վիճակի հիմնովին կարգավորման վերաբերյալ հույսերի իրագործման մասին»։

Այս թուղթը Էջմիածնից Թիֆլիս բերվելուց հետո կարդացվում է փոխարքայի պալատի խորհրդակցական ժողովում։ «Բոլոր կետերն ընդունելի են»,- հայտարարում է Վորոնցով-Դաշկովը և այդ հայտարարության, ինչպես նաև հայերի նոր դիմումին առանձին մի նշանակություն տալու համար՝ կարգադրում է կաթողիկոսի թուղթն ուղարկել Պետերբուրգ ոչ թե սովորական կարգով, այսինքն փոստով, այլ արտակարգ սուրհանդակի ձեռքով։

Հարցը վճռվում էր վերջնականապես, թեև պետք էր դեռ սպասել Պետերբուրգի կառավարության պատասխանին։ Վճռվում էր չափազանց մեծ հապճեպով, տենդային արագությամբ, առանց շուրջը նայելու, առանց կշռադատելու դրությունն ու հնարավորությունները։ Ասպարեզը հանձնվում էր Դաշնակցությանը, և հայ բուրժուազիան իրեն ամբողջապես դնում էր նրա տրամադրության տակ։ Ազգային բյուրոն դառնում էր Դաշնակցական շտաբի համար մի վարագույր, որի ետևում նստած՝ նա կարող էր ահագին գումարներ պահանջել իր ռազմատենչ հախուռն կրքերը ծավալելու համար։

Սկսվում էր կամավորական շարժումը։ Հայ ժողովուրդը ռուսական բանակի մեջ ուներ հարյուր հազարից ավելի զինվոր։ Այս բավական չէր։ Կազմվում էր առանձին և հատուկ հայկական կամավոր զինվորություն։ Եվ այս նշանակում էր, թե հայ ժողովուրդն առանձին իր կողմից էր պատերազմ հայտարարում Թուրքիային։ Այսպես էր քառորդդարյա հայդուկային դաստիարակությունը՝ միշտ հանդուգն, խիզախ, բայց և միշտ անիմաստ և երազական։ Սկզբում՝ Վարդան Գոլոշյանի ժամանակ, նա հատուկենտ անհատների էր բռնում տանում դեպի գաղափարական արկածներ, այժմ նա արդեն ամբոխային մի մտայնություն էր, որ փայլուն կերպով պահպանում և զարգացնում էր Դաշնակցությունը։ Եթե 1914-ի ամառը չլիներ ՀՅ Դաշնակցությունը, կամ նրա նման մի այլ ֆիդայական հիմնարկություն, կարո՞ղ էր առաջանալ հայկական առանձին կամավորական շարժում։ Երբե՛ք։ Էջմիածնի վարդապետները կամ փոխարքայական պալատի հետ բանակցություններ վարող ինտելիգենտները չէին, որ խումբ կազմելու ու վարելու ընդունակությունը և մանավանդ հոժարությունն ունենային։ Դրա համար կազմ ու պատրաստ կար Դաշնակցությունը՝ մի դեմքով համամարդկային-սոցիալիստական, մյուս դեմքով՝ դաժան-ազգայնական հախուռն ռազմատենչություն։ Երևանի ո՞ր փողոցովն անցնեիր և չլսեիր մեծ թե փոքրի բերանից՝

Անդրանիկը քաջ, յուր ընկերներով,
Կուզե պատերազմ, կսպասե գարնան…

Պատերազմ է ուզում, ահա՛ և պատերազմ… Ինչպե՞ս չգնալ, դաշնակցական մաուզերներն իրենք իրենց պայթում են։

Ճիշտ այսպես։ Պատերազմի հայտարարումից մի քանի օր առաջ դաշնակցականների ընդհանուր ժողովն էր Էրզրումում։ Երիտթուրքերի

կուսակցության կողմից հատուկ ներկայացուցիչ է գալիս և առաջարկում Դաշնակցությանը՝ սկսվող պատերազմի ժամանակ միանալ թուրք-գերմանական դաշնությանը, Կովկասի հայության մեջ ապստամբություն հարուցել ռուսների դեմ: Փոխարենը խոստացվում էր հայկական ինքնավարություն՝ ռուսական Հայաստանի սահմաններում: Սա գերմանական ծրագիր էր, որի նպատակն էր Անդրկովկասյան բոլոր ազգությունների՝ վրացիների, հայերի և թուրքերի ընդհանուր ապստամբության միջոցով վտարել ռուսներին Կովկասյան գլխավոր շղթայի հյուսիսային կողմը, այնպես որ՝ այդ շղթան դառնար սահմանը Թուրքիայի և Ռուսաստանի միջև, իսկ երեք ապստամբած ազգությունները կկազմեին ինքնավար նահանգներ Թուրքիայի հովանավորության տակ: Վրացիների հետ բանակցությունները համարյա միաժամանակ էին սկսել, և նրանց մեջ գտնվեցին տարրեր, որոնք զույգ ձեռքով բռնեցին այդ առաջարկությունը և նույնիսկ դաշնադրություն կնքեցին Թուրքիայի հետ, որ հրատարակվեց ռուսական ցարիզմի անկումից հետո:

Էրզրումի կուսակցական ընդհանուր ժողովը երիտթուրքերի առաջարկության առիթով կայացրեց մի վճիռ, որ միակ կարելին էր սալի և կռանի մեջ տրորվող մի փոքր ազգության համար: Նա չընդունեց երիտթուրքերի առաջարկությունը՝ հայտարարելով, որ Դաշնակցությունը ծագող պատերազմի մեջ իրեն չեզոք կպահի: Բայց բարձր մարմնի այս որոշումը մնաց մեռած տառ թղթի վրա: Հարց վճռողներ հանդիսացան Կ.Պոլսի կոմիտեն և Կովկասի Արևելյան բյուրոն: Դաշնակցությունը չեզոք չմնաց, այլ միացավ ռուսներին և տվեց նրանց այն, ինչ մերժել էր թուրքերին՝ պատերազմ մղելու համար կամավորական խմբեր և ապստամբություն Թուրքահայաստանում:

Ես փաստեր շատ ունեմ պնդելու համար, որ այդ ոճրագործ որոշումը կայացել էր ոչ միայն առանց բուն երկրի գիտության, այլև հակառակ նրա ցանկության: Իր տեղում ես կպատմեմ այդ փաստերը, այստեղ միայն այն ասեմ, որ ժողովուրդը Կ.Պոլսի և Թիֆլիսի պոռոտախոսներից շատ լավ էր հասկանում իր դրությունը և միայն մի բան էր ցանկանում, որ իրեն թույլ տրվի անցկացնել պատերազմական փոթորիկը, ինչպես ինքը կարող էր: Այսպես չեղավ, դժբախտաբար: Այդ ժողովրուրդը՝ անմեղ և անլեզու մի ամբոխ, «փրկիչներ» չափազանց շատ ուներ, և դրա հետևանքով նրա համար փրկություն չէր մնում այլևս:

Հենց որ Գերմանիան և Ավստրիան մի կողմից, Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան՝ մյուս կողմից մտան պատերազմի մեջ, Թուրքիան, իբրև առաջին երկուսի դաշնակից, հայտարարեց «սեֆերբերլիք», այսինքն՝ զորահավաք, և սպասում էր հարմար առիթի՝ նույնպես ռազմադաշտ իջնելու համար: Բոլոր տեղերում էլ զորահավաք նշանակում է պատերազմական վայրենությունների օրինականացման առաջին գործողություն: Թուրքիայում այն միշտ է սարսափելի եղել, առավելապես քրիստոնյաների համար, որովհետև պատերազմ գնացող ասկյարի համար ավելի

ալլահահաճո բան չի եղել, քան գյավուրների գլուխները թռցնելը։ Սակայն 1914-ի սեպտեմբերլիքը բոլորովին բացառիկ մի բան էր հայ ժողովրդի համար։ Նրա դեմ գրգռված էին ամենքը՝ կառավարությունը, ամբոխը։ Մի ամբողջ տարի հայկական դժբախտ ռեֆորմները ընդհանուր դժգոհության և ագիտացիայի աղբյուր էին դարձել։

Դժվար չէր այսպիսի պայմանների մեջ, ցույց տալով երկու եվրոպական վերահսկիչներին, ներշնչել խավար ամբոխին, թե հայերն են պատերազմի պատճառը և այլն։ Եվ ահա, թեև Թուրքիան դեռ պատերազմող չէ և ռուսաց դեսպանը դեռ Կ.Պոլսում է, Թուրքահայաստանի զանազան տեղերից, մանավանդ այնպիսիներից, ուր հայերը աննշան փոքրամասնություն են կազմում, բարձրանում են հուսահատական աղաղակներ։ Թուրքերը բացահայտորեն պատրաստվում են կոտորելու հայերին. այս են հաղորդում լրագրական թղթակցությունները գրեթե ամեն օր։ Ապագա գոռ փոթորկի այս վաղահաս աղմուկներն են ահա, որ ստիպում էին Թիֆլիսի դիպլոմատներին կաթողիկոսի անունից գրված աղերսագրի մեջ մտցնել մի կետ ևս, այն մասին, որ ռուսական դիվանագիտությունը Կ.Պոլսում հարկադրի թուրք կառավարությանը լուրջ միջոցներ ձեռք առնել հայերի պաշտպանության։ Իսկ եթե թուրք կառավարությունը մերժե՞ր այդպիսի մի պահանջ, ինչպես արդեն, պատերազմի պատրաստված, մերժել էր եվրոպական պետությունների դարավոր արտոնությունները, կապիտուլյացիաները։ Կարծես թե երեխաներ էին Թիֆլիսի դիպլոմատները և չէին հասկանում, որ Թուրքիայում կոտորածները միշտ կառավարական հրամաններով էին տեղի ունենում։ Եվ եթե դա այսպես է, ի՞նչ ուժ կարող էր գտնվել աշխարհի վրա, որ թշնամի նկատած լինելով հանդերձ, կարողանար արգելել թուրք կառավարությանը, որ նա կոտորածի հրաման չտա…

Եվ այսչափ ողորմելի դրության մեջ էր, որ մենք ուզում էինք պատերազմող կողմ դառնալ…

Թուրքիայի հայության վիճակը որոշված էր…

Կա, սակայն, մի խոշոր հանգամանք, որ ես կարևոր եմ համարում այստեղ հիշատակել իբրև մեկնաբանական միջոց։ Խնդրում եմ՝ չմոռանալ, որ մենք գտնվում էինք պատերազմական գործողությունների սկզբում, երբ ամեն տեղ և բոլոր երկրների մեջ փոթորկում է մի ընդհանուր հիվանդոտ հոգեբանություն, մի փսիխոզ։ Չգիտեմ ուրիշների մոտ ինչպես, մեզանում տիրում էր այն մանկական հավատը, թե պատերազմը կվերջանա շատ շուտով, մի վեց ամսվա մեջ, որ անպատճառ կջարդվի Գերմանիան՝ Թուրքիայի հզոր պաշտպանը, և այնուհետև եռյակ համաձայնության պետությունները կիրագործեն իրենց ծրագիրը, որի մեջ կենտրոնական տեղը բռնում էր փոքր ազգությունների ազատությունը։ Մենք էլ փոքր ազգություն ենք, չէ՞, և մեր ազատության համար կռվում ու ահռելի զոհեր ենք տալիս 30-40 տարուց ի վեր։ Ուրեմն, այս համաշխարհային պատերազմը մեզ համար էլ է։ Եվ եթե այսպես է, ինչպե՞ս կարող ենք մենք անտարբեր մնալ, չշարժվել…

Եվ իրավ, մեզ վրա զարհուրելի թունոտ ներգործություն էր անում այն հրեշավոր սուտ, հրեշավոր պերճաբան պրոպագանդան, որի մեջ եվրոպական իմպերիալիզմն աշխատում էր թաքցնել գայլի իր ճիրանները՝ ազգերին խաբելով ամենալկտի ճարտասանությամբ, թե այս վերջին պատերազմն է, որ սկսվում է ոչ թե բանկիրների, մետաղագործների, զինվորական և ռազմական արդյունագործության վիշապների կոկորդը լցնելու համար, այլ աշխարհի անարդարությունները ջնջելու, ճնշվածներին և տանջվածներին երջանկություն ու հանգիստ, անդորրություն բերելու համար։ Նզովյա՛լ մարդկային լեզու, ինչե՛ր նա կարող է ասել ինչ պայմանների մեջ։ Այս է այն լեզուն, որ, ինչպես ասում է ժողովուրդը, կարող է օձը դուրս քաշել իր բնից….

Խաբում էին ամբողջ երկրագունդը, բևեռից բևեռ, և պետք է որ խաբվողներ լինեին, չէ՞։ Ահա բանը հենց այս հարցի մեջ էր, այս դաժան ու անողորմ հարցի մեջ։ Գիտե՞ք ինչ տպավորություն թողեց մեզ վրա ռուսաց բարձրագույն հրամանատար Նիկոլայ Նիկոլաևիչի դիմումը լեհերին… Մուրավյով-Կախողից հետո այսպիսի՛ լեզու… Հրաշք էր։ Եվ առաջին մտածումը, որ հաջորդում էր զգացմունքին, մեզ՝ հայերիս համար այն էր, ինչ թաքցնեմ, որ մի օր այդպիսի մի կոչ էլ թուրքահայերին ուղղվի։ Աշխարհը լցված էր հավատով և խաբվում էր սոսկալիորեն։ Մե՞ղք էր, որ մենք էլ խաբվեինք. մենք, որ սկզբից ևեթ լցված ենք եղել ամբողջ տոհմով, մինչև մեր հայրերը, պապերը, ապուպապերի պապերը և նախահայրերը մի հիմար և ապուշ հավատով դեպի ամեն մի խոսք-խաբեություն, մանավանդ՝ դեպի ամեն մի թուղթ-խաբեություն։ Սա այսպես է, իհարկե։ Ռոպեն այսպես էր տանում, և ամենքը գնում էին. ոչ ոք մարգարե չէր։ Մի Վիլհելմ, իհարկե, հավատում էր, որ հենց ճիշտ այն պետք է անել, ինչ ինքն էր անում։ Թե չէ՝ գիժ հո չէ՞ր, որ իմանար, թե չպետք է անել և աներ ու այսօր, փետրահան եղած իր հոհենցոլեռնյան հիմար ուռածությունից, Հոլանդիայի գերին լիներ։

Ուրիշ այսպիսի օրինակներ որքան կամենաք։ Մեկն էլ հենց մենք։ Ո՞վ էր մեզանից այնքան պակասում հայասիրության մեջ, որ իմանար, թե թուրքահայությունը պիտի բնաջինջ դառնա, Հայաստանի անունը պիտի վերանա Վանա լճի և Եփրատ-Տիգրիսի լեռնային ավազանից, և գլուխը վերցրած չփախչեր Ազգային բյուրոյից էլ, փոխարքայական պալատից էլ, Ներսիսյան լճի դիպլոմատիական քարափից էլ…

Սա այսպես է, այո՛։ Բայց և այնպես…

Խաբվել էլ կա, խաբվել էլ։ Նայած, թե ով է խաբվողը։ Երեխա՞ն, թե խելահաս մարդը։ Մենք երեխայի պես խաբվեցինք և տվինք, ինչ որ ունեինք, մինչև որ կատարելապես մերկ ու անոթի մնացինք։ Մինչդեռ կային խելահասներ, որոնք շատ քիչ խաբվեցին, անգամ չխաբվեցին էլ։ Հրեն՝ լեհերը։ Դնենք մեզ նրանց կողքին։ Նիկոլայ Նիկոլաևիչի մեծախոս դիմումը նրանց մեջ ընդունվեց առանց հորթային

հրճվանքների, կարելի է ասել՝ սառն անտարբերությամբ։ Ո՛չ հատուկ կամավորական խմբեր կազմակերպվեցին ռուսաց բանակի հետ միասին գործելու համար, ո՛չ ապստամբություններ հարուցվեցին Գալիցիայի կամ Պոզնանի մեջ…

Իսկ մե՞նք… Մենք նույնիսկ Նիկոլայ Նիկոլաևիչի կոչն էլ չունեինք ձեռներիս, բայց այնքան խոսեցինք ու բղավեցինք, թե պետք է, որ մենք էլ կոչ ունենանք, այն էլ ոչ թե Նիկոլայ Նիկոլաևիչից, այլ հենց իրենից՝ Նիկոլայ Բ-ից, որ լրագրերի մեջ, այն էլ՝ անշուշտ դաշնակցական կամ հնչակյան մամուլի սատարությամբ, կազմվեց մի հրեշավոր սուտ՝ իբր թե Նիկոլայ Բ-ն կոչ է ուղղել հայերին և նրա մեջ ասել՝ «Հայեր, եկել է ձեր տանջանքների վերջը» և այլն, և այլն։ Այս սուտը երկու ձեռքով բռնեց թուրքական կառավարությունը և զետեղեց մեղադրական կետերի մեջ, որոնցով ամբողջ թուրքահայությունը դատապարտվում էր բնաջնջման։

Կոնսերվատիվ սենյակի ժողովուրդ չէինք, այլ կտուրի ժողովուրդ էինք, ինչ ունեինք՝ հրապարակի մեջ էր։ Նույնիսկ ինչ չունեինք էլ, դարձյալ հրապարակի մեջ էինք դնում։ Այս պատճառով էլ չափազանց հեշտ էր մեզ թակարդի մեջ գցելը, մեզ լավ ջարդելը և նույնիսկ արմատահան անելը։

Բ

Դիլիջանի բարձրությունը խոշտանգում էր իմ թույլ սիրտը, և ես շատ թուլացած, գրեթե հիվանդ՝ օգոստոսի երկրորդ կեսին շտապեցի հրաժեշտ տալ բնության այդ չքնաղ անկյունին և իջնել մեր աղմկոտ և փոշոտ Թիֆլիսը։ Ղարաքիլիսայում էր, որ երկաթուղին ինձ՝ երկու ամսից ի վեր անտառաբնակիս, ցույց տվեց պատերազմող մի երկրի դրությունը։ Թեև կովկասյան ճակատը դեռ չէր ծխում, բայց ահագին տեղափոխություններ էին կատարվում դեպի Կարս և պարսկական սահմանագլուխ։ Մասնավոր հաղորդակցությունը չափազանց դժվարացել էր և դանդաղել։ Երջանկություն էր, որ մի անկյուն գրավեցինք ամբողջովին տախտակյա մի վագոնի մեջ։ Տեղի անձկությունն ու կոշտությունը մոռացնել տվեցին կեսգիշերին Սանահին կայարանում ստացված լուրը ռուսական խոշոր հաղթությունների մասին, որոնք տեղի էին ունեցել Գալիցիայում։ Առավոտյան Թիֆլիս մտնելով՝ Կովկասի մայրաքաղաքը տեսանք տոնական զարդարանքների մեջ։ Տոնում էին Լվովի առումը։ Բայց և այնպես, դա՝ հունիսին իմ թողած Թիֆլիսը չէր։ Պակասել էր կենդանությունը, շարժում քիչ կար, ամենքը գանգատվում էին օրավուր աճող թանկության վրա։

Ճնշված իմ առողջական և տնտեսական ծանր պայմանների տակ՝ ես տրամադրություն էլ չունեի տեսնվելու, այսպես կոչված, ազգային շրջանակների հետ, բայց և այնպես իմացա, որ Ազգային բյուրոն եռուն աշխատանքի մեջ է։ Ընդամենը մի երկու ամիս առաջ լինելով իր raison d’etre-ն կորցրած մի դիվանագիտական անկելարան, ինչպես Գեորգ կաթողիկոսն էր անվանել՝ «թաժա խաբարները իմանալու տեղ», հիմա միաժամանակ վերածվել էր մի ռազմական շտաբի, որ

կամավորական շարժում էր պատրաստում՝ մի կողմից Ռուսաստանի բոլոր հայաբնակ անկյունները կրակոտ կոչեր ուղարկելով, որ փող հավաքվի զինվորներին հագցնելու և պարենավորելու համար, մյուս կողմից՝ կամավորական կազմակերպության գործնական աշխատանքները առաջ տանելով։ Լուռ, ինքնըստինքյան միանգամայն հասկանալի համաձայությամբ այս երկու գործունեությունները բաժանվում էին. հասարակության դիմելը, փող հավաքելը, հանդերձանք հայթայթելը բուրժուազիայի վրա էր ընկնում, մնացածը՝ Դաշնակցությանն էր պատկանում՝ առանց որևէ կողմնակի հսկողության և հաշվապահանջության։ Եվ զարմանալին այն էր, որ Դաշնակցությունը շարունակ երդում-հավատ էր անում, թե Ազգային բյուրոն դաշնակցական չէ, և ապացույցի համար մատը դնում էր այն վաճառականների անունների վրա, ովքեր բյուրոյի անդամ էին։ Ումի՞ց և ինչի՞ց էին թաքնվում։ Սոսկ մի հանգամանքից, որ սոցիալիստները չնայեին Նիկոլայի համար զինվորներ պատրաստող այդ «սոցիալիստների» վրա և չասեին՝ «Ամո՞թ չէ»։

Թե չէ ամեն ինչ չափազանց պարզ էր։ Արդեն եկել հավաքվել էին դաշնակցական բոլոր հռչակավորները։ Երբ ես Թիֆլիս եկա, արդեն այնտեղ էր բազմահռչակ Անդրանիկը, որ հետո մի ժողովի մեջ, զինվորի պարզամտությամբ պատմում էր, թե ինքը Վառնայի մոտ իր փոքրիկ հողամասն էր մշակում, երբ առաջարկություն ստացավ Կ.Պոլսի դաշնակցական կոմիտեից՝ անմիջապես մեկնել Կովկաս և իրեն դնել Թիֆլիսի կոմիտեի տրամադրության տակ։ Թիֆլիսում էին Քեռին և ուրիշները, շուտով եկավ և Համազասպը, որ Սիբիր էր աքսորված։ Կ.Պոլսից եկավ նաև Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն-Գարո)՝ օսմանյան պառլամենտի անդամը։ Այս մարդուն շատ լավ էինք ճանաչում Թիֆլիսում։ Մի համեստ, շատ սիրելի և անուշ բնավորության տեր էր՝ չօժտված առանձին մեծ արժանավորություններով։ Բախտը տվել էր նրան իբրև տեռորիստ հայտնի դառնալու մի հաջող դեպք. նա 1896-ին Բանկ-Օտոմանը գրաված հերոսներից էր։ Եվ ահա մոտ 20 տարի այդ փառքի օրից անցնելուց հետո՝ Արմեն-Գարոն թողնում էր պառլամենտական խաղաղ նստարանը, նորից ընդգրկելու արյան արհեստը։ Նա Թիֆլիս էր եկել կամավորական խմբերից մեկի գլուխն անցնելու համար։

Ավելի մեծ անտակտություն Դաշնակցությունն իր կյանքում չէր արել։ Ոչ մի բան այնքան չկատաղեցրեց երիտթուրքերին, որքան այն հանգամանքը, որ թուրքական պառլամենտի անդամն անցնում է Թուրքիայի դարավոր ոխերիմ թշնամու կողմը՝ Թուրքիայի դեմ կռվելու համար։ Հայերի պետական դավաճանության ապացույց է այն լուսանկարը, որ ներկայացնում է պառլամենտի այդ անդամին՝ իր զինվորների հետ։ Եվ այդ փոքրիկ մարդն իր փոքրիկ փառասիրությամբ, ով գիտե, որքան ուժ է տվել այն ձեռքին, որ ստորագրում էր թշվառ թուրքահայության բնաջնջման վճիռը։ Զարհուրելի է այս մասին մտածելն անգամ։

Ամեն ինչ վճռված, վերջացած էր։ Մնում էր միայն Պետերբուրգի կառավարության պատասխանն այն նոր առաջարկների առթիվ, որոնք արված էին կաթողիկոսի գրության մեջ։ Այս պատասխանին սպասում էին ինչպես երկնային մանանայի։ Այս պետք է լիներ մի տեսակ զինակցության պայմանագիր, մի տեսակ պարտաթուղթ, մուրհակ, որ պիտի տար ռուսաց ցարի կառավարությունը հայ ժողովրդին։ Եվ եկա՛վ այդ պատասխանը։ Փոխարքա Վորոնցով-Դաշկովը 1914թ. սեպտեմբերի 2-ին գրեց Գևորգ կաթողիկոսին.

«Իմ քաղցր պարտականությունն եմ համարում տեղեկացնել Ձեզ, որ Ձեր օգոստոսի 5-ի թիվ 1131 նամակը, որով Դուք միջնորդում էիք թուրքահայերի հովանավորության և պաշտպանության և նրանց վիճակի բարվոքման մասին, ես ներկայացրեցի նախարարների խորհրդի նախագահին։ Այժմ ստատս-սեկրետար Գորեմիկինը տեղեկացնում է ինձ, որ ռուս կառավարությունը ոչ մի դեպքում ոչ մի զիջում չի անի Հայկական հարցի հողի վրա այն մտքով, որ ռեֆորմները Թուրքիայի հայկական նահանգներում մտցվելու են ռուսաց սկզբնական ծրագրով և Ռուսաստանի բացառիկ հսկողության տակ։

Նախարարների խորհրդի նախագահի վերոբերյալ հավաստիացման շնորհիվ բոլորովին համոզված լինելով հայերին հուզող խնդիրների նպաստավոր լուծման մեջ՝ ես պարտք եմ համարում, այնուամենայնիվ, նախազգուշացնել Ձեզ, որ թե՛ մեր կողմերի և թե՛ սահմանի մյուս կողմի հայերի գործողությունները ներկա րոպեում պետք է խստիվ համաձայնեցված լինեն իմ ցուցումների հետ, որովհետև Թուրքիայի և Ռուսաստանի միջև ներկայումս տիրող լարված դրության պատճառով, ընդհանուր քաղաքական տեսակետից, ինչպես և նույնպես ընդունում են մեր դաշնակից պետությունները, շատ կարևոր է, որ Թուրքիայի դեմ պատերազմի առիթը տա ինքը՝ Թուրքիան, և ոչ թե որևէ գործողություն մեր կողմից, ուստի շատ անցանկալի կլինի, և նույնիսկ վտանգավոր, առաջ բերել որևէ ապստամբություն Թուրքիայի հայերի մեջ։

Միևնույն ժամանակ ես խոնարհաբար խնդրում եմ Ձերդ Սրբությանը, վերոհիշյալ նկատումներից դրդված, գործ դնել Ձեր բարձր հեղինակավոր ազդեցությունը Ձեր հոտի վրա այն մտքով, որպեսզի մեր հայերը սահմանի մյուս կողմի հայերի հետ պատրաստ լինեն ինչպես այժմ, Թուրքիայի անորոշ դրության միջոցին, այնպես էլ ապագայում, ի դեմս մեր պատերազմի նրա հետ, կատարել այն հանձնարարությունները, որ ես ըստ ժամանակի պահանջման կարևոր կհամարեմ և կառաջարկեմ նրանց ի կատարում»։

Սուտը, ինչպես ասում են, երկնեց և ծնեց… մի մուկ։ Նորից կարդացեք կաթողիկոսական թուղթը։ Ի՞նչ էր իբրև պատասխան ասում ռուս կառավարությունն այդ պարզորոշ առաջարկություններին. օրինակ՝ ընդունո՞ւմ էր Թուրքահայաստանի կատարյալ ավտոնոմ անջատումը սուլթանի իրավասությունից։ Ո՛չ, չէր ընդունում այդ առաջարկներից և ոչ մեկը։ Եվ ի՞նչ էր առաջարկում իր կողմից։ Ոչ մի նոր բան, այլ

միայն այն, ինչ առաջարկել էր Թուրքիային 1913-ին և կրճատվել էր Գերմանիայի և նրա դաշնակիցների միահամուռ դիմադրության շնորհիվ։ Ռուս կառավարությունն իսկապես իր համար էր շահավետ դիրք ստեղծում՝ կոնտրոլի բացառիկ իրավունք։ Եվ հայերը, այդ հաջողացնելու համար, պիտի կռվի մեջ նետվեին ամենաանմիտ, ամենահիմար կերպով։

Ես զուր չեմ դիմում խիստ խոսքերի։ Ռուսաց կառավարության խոստումն անորոշ էր, մշուշային, ինչպես էր 1878 թվականին։ Եվ միայն մենք էինք, որ դրական, խրախուսիչ բովանդակություն էինք դնում վարչապետ Գորեմիկինի մանվածապատ, գրասենյակային տողերի մեջ, ինչպես մի ժամանակ դնում էինք 61-րդ հոդվածի մեջ։ Եվ այսօր էլ մենք, մեր սեփական մեկնաբանություններով մեզ շպրտված հինգ-վեց տողերը զարդարելով, հայտարարում էինք մեզ լիովին բավարարված. ասում էինք, թե ռուս կառավարությունը գրավոր կերպով խոստացել է այն, ինչ մենք ենք ցանկացել, և ասում էինք՝ «Դե, հայ ժողովուրդ, մարդիկ բեր, փող բեր, որ մենք կամավորական խմբեր կազմենք»։ Ինձ հաստատ աղբյուրներից հայտնի են շատ փաստեր, երբ Ազգային բյուրոյի կողմից ուղարկված ինտելիգենտ գործակալները (շատերը նույնիսկ իրենց հասարակական գործունեությամբ հայտնի) փող շատ հավաքելու, կամավորական տրամադրություն ստեղծելու համար անպատկառորեն հավատացրել էին, թե Գորեմիկինն այդ թղթում հաստատ խոստացել է անգամ անկախ Հայաստան։

Բայց սա դեռ քարը գլուխը։ Վորոնցով-Դաշկովի գրության նշանակությունն առաջին մասի մեջ չէ՝ անորոշ ու խուսափուն այն մի քանի զույգ բառերի մեջ։ Պարզ է, զարհուրելի պարզ այդ նամակի երկրորդ մասը, որից երևում է, որ կառավարության դրած պայմաններից մեկը եղել է հայկական ապստամբություններ հարուցանելը Թուրքահայաստանում, և այս պայմաններն ընդունել են հայերը։ Պատմությունը զարհուրանքով կարձանագրի այս փաստը և կասի, որ սա այլևս հիմարություն չէ, անմտություն չէ, սա եղեռն է… Պատերազմի ժամանակ ապստամբեցնել մի ժողովուրդ՝ նշանակում է պարզապես բոլոր իրավունքները տալ պատերազմող երկրի կառավարությանը, որ նա հրով և սրով ոչնչացնի այդ ապստամբած ժողովրդին։ Այս պարզ է ամենքի համար, բայց պարզ չէր այդ ոճրագործ ժողովներում, որոնք տեղի էին ունենում ցարական գեներալների հետ միասին, և որոնք չէին բավարարվում կամավորական զորք տալով, այլև դնում էին ռուսահայերին էլ, թուրքահայերին էլ Վորոնցով-Դաշկովի տրամադրության տակ, որ ինչպես ուզի՝ խաղացնի, ինչպես ուզի՝ ապստամբեցնի…

Ահա՛ թե ուր էին մեզ հասցրել փրկիչները։ Մինչև սպանդանոց, մինչև ոչխարային ողջակիզման Գողգոթա։ Այլևս հեռու գնալու տեղ չէր մնում։ Ի՞նչ կարող է ունենալ մի ժողովուրդ ավելի թանկ, քան իր կյանքը։ Եվ երբ այդ մեծագույն բարիքը, այդ ամենաթանկ ստացվածքն էլ ինքնաբերաբար տրվում է ամբողջովին՝ առանց վերապահության, այլևս ո՞ւր գնալ, ի՞նչ անել…

Դիլիջանից վերադառնալուցս բավական ժամանակ անց՝ Ազգային բյուրոն բարեհաճել էր ինձ էլ, մի քանի ուրիշ մարդկանց հետ միասին, կոոպտացիայի իրավունքով իր նիստերին հրավիրելու։ Շարունակում էի հեռու մնալ, բայց բյուրոյի քարտուղար Հակոբ Քոչարյանը մի քանի անգամ եկավ ինձ մոտ և ասաց, որ իմ ներկայությունը անհրաժեշտ է դիտված, և խնդրեց չմոռանալ այն օրերը, երբ կայանում են բյուրոյի նիստերը։

Ու վերջապես գնացի։ Նիստերը տեղի էին ունենում առաջնորդարանում՝ Մեսրոպ եպիսկոպոսի առանձնասենյակում։ Թիֆլիսի հայոց առաջնորդարանը դարձել էր մի շատ կարևոր քաղաքական կենտրոն, և ինքը՝ Մեսրոպ եպիսկոպոսը, կատարում էր վերին աստիճանի խոշոր դեր։ Պալատի, զինվորական իշխանությունների, օտար պետությունների ներկայացուցիչների հետ հարաբերություններ պահպանողը, բանակցություններ վարողը նա էր՝ շարունակելով մնալ կոմս Վորոնցով-Դաշկովի և նրա ամուսնու անձնական բարեկամը։ Այդ բարձր դիրքի համեմատ էլ նա բարձ ուներ Ազգային բյուրոյի մեջ, ինչի շնորհիվ նա պատվավոր նախագահն էր, իսկ հասարակ նախագահությունը վարում էր Սամսոն Հարությունյանը։ Բավական բազմամարդ էր բյուրոյի այն նիստը, որին առաջին անգամ ներկա էի և ես։ Առաջնորդական առանձնասենյակը լեցուն էր։ Հիշում եմ այդտեղ Հովհաննես Թումանյանին, մի երեք-չորս հատ ջոջ վաճառականների՝ Մկրտիչ Քալանթարյան, Խաչատուր Ափրիկյան, Սերովբե Կյուլբենկյան, Ավետիս Պողոսյան, մի շարք դաշնակցական շեֆերի՝ Հովսեփ Արղության, Արշակ Ջամալյան, Ավետիք Սահակյան։ Բայց գլխավոր, կենտրոնական անձնավորությունը, որին ամենքը վերաբերվում էին մեծ հարգանքով, Անդրանիկն էր։

Իմ բախտից բյուրոյի այս նիստն այնքան էլ հետաքրքրական չէր։ Քննվում էր կամավորներին հագցնելու հարցը, և Անդրանիկը հեղինակավոր ցուցումներ էր տալիս, թե ինչ տեսակ ոտնամաններ, վերարկուներ, գլխարկներ և այլն են պահանջվում։ Ինձ տարօրինակ թվաց այն հանգամանքը, որ մենք այսպիսի հապճեպով պատրաստություններ ենք տեսնում, մինչդեռ Թուրքիան իրեն պահում էր հանդարտ և մինչևիսկ, նայելով լրագրական տեղեկություններին, կարող էր պատահել, որ նա պատերազմի մեջ չմտներ։ Եվ արդյո՞ք վաղաժամ չէին այս խոշոր ծախսերը։ Եվ վերջապես, հայտնի՞ էին այն պայմանները, որոնցով մենք մտնում էինք այս ծանր բեռան տակ։ Ինձ պատասխանեց Խաչատուր Ափրիկյանը.

- Է՜հ, պարոն Լեո, ի՜նչ միամիտն եք եղել… Ամեն ինչ արդեն վերջացել, պրծել է։

Ես, ճիշտ որ, միամիտ էի։ Եվ այդպիսի միամիտ էլ մնացի բյուրոյի կազմի մեջ։ Ընտրյալներից չէի։ Կառավարության մարդիկ առաջին իսկ հանդիպումներից նկատել էին, որ հայերն առհասարակ շատ բերան պատռած մարդիկ են, գաղտնապահություն չգիտեն, ուստի դրել էին իրենց պայմանները։ Ահա գաղտնապահությունը փրկելու համար բյուրոյի անդամներից կազմված էր մի առանձին գործադիր մարմին, որի մեջ

մտնում էին նախևառաջ, իհարկե, այն չորս հոգին, ովքեր սկզբից էին բանակցություններ վարում կառավարության հետ՝ Մեսրոպ եպիսկոպոս, Սամսոն Հարությունյան, Ալեքսանդր Խատիսյան և բժ. Զավրիև. դրանց վրա ավելանում էին 6-7 հոգի բյուրոյի անդամներից։ Այս գործադիր մարմինն էր, որ վարում էր, գաղտնի իհարկե, բոլոր պատասխանատու բանակցություններն ու գործերը։ Կար և մի ուրիշ, շատ գաղտնի (ինձ նման անդամների համար միայն, իհարկե) մարմին՝ զինվորականը՝ ամբողջովին բաղկացած դաշնակցականներից, որոնց երեսը մենք նույնիսկ չէինք տեսնում, ուր մնաց անուններն իմանայինք։ Եվ այսպիսով մենք կազմում էինք անգիտակ մասը, ամբոխը, եթե կարելի է այսպես ասել, և մեզ բարձրերից՝ գործադրից և զինվորականից, հաղորդվում էր միայն այն, ինչ կարելի էր համարվում։ Մեր առջև գալիս էին միայն դրամական պահանջներ, մանրմունր կազմակերպչական խնդիրներ, դիվանական գործողություններ և այլն։

Չնայած այս կաստայական կացությանը, երբեմն մեր առջև էլ պատռվում էր այն խորհրդավոր վարագույրը, որի ետևն անցնել մենք չէինք կարող։ Պատռվում էր, ճիշտ է, պատահաբար, շատ նեղ ճեղք տալով և շատ կարճ ժամանակով, բայց և այնպես մենք բավական լույս էինք առնում մի քանի բաների վրա։ Այսպես, մի երեկո Ալեքսանդր Խատիսյանը պատմեց գործադիր մարմնի անդամներից մի քանիսի խոսակցությունը գեներալ Մշլաևսկու հետ, որ փոխարքայի զինվորական օգնականն էր։ Նա պատմել էր, թե ինչ ծրագիր է ինքը կազմել Էրզրումի վրա հարձակվելու համար և իր այս պատմությունը վերջացրել էր այսպիսի մի անտեղի, հեգնական և շնական հարցով. «Ասացեք, երբ դուք ձեր հանրապետությունն ունենաք Էրզրումում, ինձ ի՞նչ պաշտոն կտաք»…

Խատիսյանը սա պատմում էր իրբրև զվարճալիք, իբրև ջոջ մարդու հանաք, բայց երևույթն ամենևին այդ հանգամանքը չուներ։ Այն սուր խայթոցներով հիշեցնում էր, թե ինչ ողբերգություն է ապրում հայ ժողովուրդը։ Մենք զոհում էինք ամեն ինչ, մեր ֆիզիկական գոյությունն անգամ՝ ինչ-որ մշուշային բառերի, ինչ-որ մութ ակնարկների ի փոխարինություն. և մեզ դարձյալ քամահրում էին՝ «լայաղ» չէին անում գեթ հասարակ քաղաքավարությամբ, առանց ծամածռությունների ընդունել մեր զոհը… Մշլաևսկին մի հատիկ չէր, ինչպես կտեսնենք։

Առայժմ ուզում եմ ձեր ուշադրությանը ներկայացնել բյուրոյի մի նիստը, որ ինձ համար անմոռանալի է։ Այդ նիստին, որ նույնպես տեղի ունեցավ առաջնորդարանում, ներկա էր Հովհաննես Քաջազնունին, դաշնակցական էմիգրանտ, որ եկել էր Վանից և բյուրոյին զեկուցելու համար իր հետ պաշտոնական հանձնարարություն էր բերել։ Վանի դաշնակցական կենտրոնական կոմիտեն էր նրա միջոցով խոսողը։ Քաջազնունին ասաց, որ թե՛ Վանի և թե՛ երկրի այլ դաշնակցական մարմինները դեմ են Կովկասում սկսված կամավորական շարժմանը, այն համարում են մի ձեռնարկում, որ չափազանց վտանգավոր է թուրքահայերի համար։ Հիմնվելով, բացի դրանից, նաև Էրզրումի ընդհանուր ժողովի որոշման վրա, Վանի կոմիտեն

պահանջում էր անմիջապես վերջ տալ այդ շարժմանը՝ թուրք կառավարության կասկածները զուր տեղից հայերի դեմ չգրգռելու համար։

Երկրի ինքնապահպանման բնազդն էր խոսում… վերջին անգամ։ Բայց մի անգամ էլ, դարձյալ վերջին անգամ, նրան բռնաբարում էր ռուսահայերի էգոիզմը։ Սկսվեցին վիճաբանություններ։ Այս մարդիկ, Կուրի ափին նստած, որտեղի՞ց էին վերցրել այն հեռավոր աշխարհի բախտը տնօրինելու իշխանությունը։ Եվ որտեղի՞ց էր, որ Շամիրամ-սուի ափին նստած մարդիկ համակվեցին այնքան անվերապահ հլու հնազանդությամբ այստեղի որոշումներին ու դատավճիռներին։

Փաստը փաստ է։ Ազգային բյուրոն չափազանց խելոք էր, չափազանց լավատեղյակ՝ Մշլանսկու նման աղբյուրներից, և գիտեր, որ կամավորական շարժումը ոչ մի վտանգ չի կարող սպառնալ թուրքահայ ժողովրդին նախևառաջ այն պատճառով, որ ռուսական բանակը արագ պիտի գրավի ամբողջ Թուրքահայաստանը։ Պայքարը մի քանի ամսվա հարց է, և այսպիսի հավանականության մեջ անթույլատրելի կլինի լոկ երկյուղի թելադրությամբ լքել մի ձեռնարկում, որի հետ կապված են այնքան խոշոր ազգային շահեր։ Դաշնակցականների կողմից վանեցիներին պատասխանեց Արշակ Ջամալյանը՝ ասելով, թե Վանի ընկերները լավ չեն հասկացել Էրզրումի ընդհանուր ժողովի որոշումը։ Ինքը մասնակցել է այդ ժողովին և լավ գիտի նրա իսկական տրամադրությունները։ Իզուր Քաջազնունին, իբրև ականատես և ականջալուր, բացատրություններ էր տալիս երկրի դրության մասին, և թե որքան անտանելի վիճակ էր ստեղծել «սեֆերբերլիքը» հատկապես հայ ժողովրդի համար։ Եվ արագ, գրեթե բոպեական էր վճիռը։ Մերժվեց պահանջը. ինքը՝ Քաջազնունին, համակերպվեց այդ վճռին և այնուհետև դարձավ բյուրոյի դաշնակցական անդամներից և աշխատակիցներից մեկը։

Վե՞րջ տալ կամավորական շարժմանը։ Իսկ ի՞նչ ասել Վորոնցով-Դաշկովին, Գորեմիկինին, ի՞նչ ասել հենց իրեն՝ Դաշնակցությանը, որ այնքան գեղեցիկ առիթ էր գտել իր կուսակցական եսամոլությունը ծավալելու համար։ Վերադարձել և վերադառնում էին այնքան փախած և աքսորված ընկերներ, տեղ էր գրավված փոխարքայական պալատի մեջ, առատ դրամական միջոցներ կային ընկերներին զանազան պաշտոններում տեղավորելու համար։ Կարելի՞ էր թողնել մի դիրք, որ ըստ ամենայնի հրամայողական էր։

Կամավորական շարժումը կանգ չառավ, նա չէր կարող կանգ առնել։ Ընդհակառակը, օր օրի վրա ընդունում էր աղմկաշատ, շռնդալից բովանդակություն։ Շուտով Թուրքիան պատերազմի մեջ ընկավ, կովկասյան ճակատի վրա հրազենները ճարճատեցին, դաշնակցական խմբապետները ուղևորվեցին ռազմաճակատ, կամավորները սկսեցին գործել՝ Թիֆլիսի փողոցներում երևացին հայրենասիրական ցույցեր. հայերն ուզում էին գերազանցել ամենքին, և մի օր Գոլովինսկի պրոսպեկտը,

Դվորցովայա փողոցը լցվեցին մարդկային լավայով։ Զինվորական երաժշտությունը դաշնակից պետությունների հիմներն էր հնչեցնում, փոխարքան ընդունում էր բոլոր ազգերի և ցեղերի հավատարիմ հպատակության արտահայտությունները։ Ամենքն իբրև թե պարտավորվում էին թափել իրենց արյան վերջին կաթիլն իրենց թագավորի համար։

Այս ցույցերը, այս խոսքերը մի օրվա համար էին։ Օրն անցավ՝ ամեն ինչ անցավ։ Այսպես չէին հայերը։ Կամավորները գալիս էին, գալիս հեռու տեղերից՝ Ամերիկայից, Եգիպտոսից, Բուլղարիայից։ Կային և ռուսահայեր՝ աղմկարար տարրեր, մանավանդ ուսանողներից։ Նրանք հայրենասիրական ցույցեր էին անում, ուր որ հարմարություն էին գտնում՝ Պետերբուրգում, Նոր Նախիջևանում, Թիֆլիսում՝ փոխարքայի պալատի առաջ, և ամբողջ տարածության վրա՝ մինչև սահմանագլուխները, թեև տեղացիներից շատերը ճանապարհին կորցնում էին իենց ամբողջ ավյունը և սուսիկ-փուսիկ սլլում էին իրենց տները։

Խոստովանում եմ՝ ես երբեք սիրտ չեմ արել գնալ տեսնել այդ հայրենասիրական ցույցերը՝ նվագածության, շողուն զենքերի, «Մեր հայրենիքի» միաբան հնչյունների խառնուրդով։ Միշտ զգում էի, որ այդ բոլոր հրճվանքը արհեստականորեն մշակված և ուռցված է. հիշում էի 1870-ի հունիսը Փարիզում, այն երկար ու անվերջ շարքերը, որոնք մոլեգնորեն քայլում էին սալահատակների վրա և կանչում՝ «Դեպի Բեռլին, դեպի Բեռլին», որպեսզի մյուս օրը լռեն, անհետանան։ Ես միայն մի հարց էի տալիս՝ ի՞նչ տպավորություն է թողնում այս բոլորը մեր հարևանների՝ վրացիների և թուրքերի վրա, որոնք պահում էին իրենց մեկուսի, զսպված, բայց, իհարկե, ոչ միանգամայն անտարբեր։ Այս հարցը հեգնանք ու արհամարհանք կարող էր ազդել ռուսական սվինների վրա նստած մեր ազգասերներին։ Բայց մի օր սվինները պիտի հեռանային Կովկասից, և այն ժամանակ հայերը պիտի իրենց տեսնեին միանգամայն մեկուսացած։

Այսպես թե այնպես, ռուս-թուրքական պատերազմի սկզբում սահմանագլուխների վրա կազմ ու պատրաստ հայ կամավորական չորս խումբ կար։ Ամենից խոշորն Անդրանիկինն էր, որ գտնվում էր Սալմաստում, ռուսական այն զորաբաժնի հետ, որ պիտի գործեր Վանի դեմ։ Այդ խումբը բաղկացած էր, ինչպես երևում է Ազգային բյուրոյի հաշիվներից, մոտավորապես 1200 հոգուց։ Այդքան զինվոր կար մյուս երեք խմբերի մեջ, այնպես որ՝ հայ կամավորների ընդհանուր թիվը 2500-ից չէր անցնում։ 1915-ին բյուրոն ավելացրեց այդ թիվը՝ իդեալ դարձնելով հրացանի տակ ունենալ գոնե 10 հազար կամավոր։ Սա հաջողվեց նրան, բայց շատ կարճ ժամանակով. այնպես որ՝ կամավորական կազմի միջին թիվը կարելի է վերցնել 6-8 հազար հոգի։

Ժամանակակից պատերազմներում, ինչպես հայտնի է, 50-100 հազար կազմ ունեցող զորաբաժիններն էլ մեծ բան չեն համարվում։ Բայց հայ կամավորական

բանակը, որ 1914-ի հոկտեմբերից մինչև 1915-ի մարտը 2500 հոգուց ավելի չէր, ազգային սնապարծության և հոխորտանքների առարկա դարձավ։ Իբրև թե ահագին բան էինք արել այդքան մարդ հավաքելով, իբրև թե ռուսական բանակը, որ Կովկասյան ճակատում հավաքել էր մոտ 800 հազար զինվոր, շատ է պարտական մեզ՝ մեր 3-5 հազարի համար, և իբրև թե Թուրքիայի համար էլ մեր այդ ուժը խոշոր վտանգ է։ Եվ ստեղծելով մեզ համար այսպիսի օդային ամրոցներ, մենք մեզ տոգորում էինք ամբարտավան մեծամտությամբ, փքուն պահանջկոտությամբ, ուզում էինք աշխարհ զարմացնել ոչ միայն մեր ունեցածով, այլև չունեցածով։ Դաշնակցական «Հորիզոնն» ամեն կիրակի օր հրատարակում էր պատկերազարդ հավելվածներ, ուր տպվում էին կամավորների խմբանկարները։ Սովորաբար դրանք ներկայացնում էին 50, 100 և ավելի մարդկանց, ոտքից մինչև գլուխ զինված, հրացանները դեպի նույն կողմն ուղղած։

Այդ խմբանկարներն իրենց տակ սկզբում կրում էին «խումբ» անունը։ Հետո այդ բավական չհամարվեց դաշնակցական հոխորտանքի համար և խմբերը վերանվանվեցին «գնդեր», ապա այս էլ քիչ եղավ և տպվում էր՝ «կամավորական առաջին բանակ», «երկրորդ բանակ» և այլն՝ ըստ կարգին։ Այս պատկերազարդ հավելվածները տարածվում էին մեծ քանակությամբ և նրանց գնողների մեջ էին և օսմանյան գործակալները, որոնք այդ վավերագրերն ուղարկում էին իրենց գլխավոր շտաբին։ Այդքանով էլ չբավականանալով՝ դաշնակցական [Մարտին] Շաթիրյանը Պետերբուրգում հրատարակեց հայ կամավորների շքեղ ալբոմ, որի մեջ մտնում էին մինչև իսկ փոքրահասակ մանուկներ՝ զինվորի զգեստ հագած և հրացանով ու դաշույնով զինված։ Այս վավերագրերն էլ ընկնում էին օսմանյան կառավարության կազմած ժողովածուի մեջ։

Ավելի վարպետորդի հանդիսացավ «Խաթաբալա» ծաղրական թերթը։ Հատավաճառով որքան կարելի է շատ 5 կոպեկներ հավաքելու համար նա տպում էր Անդրանիկի պատկերը և նրա ոտքերի տակ ընկած՝ օսմանյան դրոշակը։ Պատմում էին, որ այս նկարը ահագին հուզում էր առաջացրել արևելյան Անդրկովկասի թրքության մեջ և Գանձակում։ Երեք ռուբլի էին տալիս մի հատ ձեռք բերելու համար։ Այսպես մենք գիտեինք ուռցնել, չափազանցնել անհնարին կերպով։ Կուսակցական ինքնագովությունն ու պոռոտախոսությունը չափ ու սահման չէր ճանաչում։ Թուրքական հակահետախուզությունը ձեռք էր բերել մի հնչակյան շրջաբերական, որի մեջ ասված էր, թե հայ կամավորների թիվը հասնում է… քառասո՛ւն հազարի… Հավատալ չի կարելի, թե կարող է այսքան ստախոսություն լինել, բայց մեզ տալիս էին վավերագրի լուսանկարը…

Ես, իհարկե, չեմ քննի կամավորական խմբերի գործունեությունը պատերազմական արհեստի տեսակետից։ Այս գործունեությունը եղել է ընդհանրապես շատ գնահատելի որոշ միջավայրի և որոշ շրջանակի մեջ։ Երկու խոսք կասեմ միայն Անդրանիկի խմբի գործողությունների մասին Սալմաստ-Վան

ուղղության վրա։ Առաջին շարժումը տեղի ունեցավ 1914-ի նոյեմբերին։ Անդրանիկի խումբը մյուսների համեմատությամբ խոշոր էր, որովհետև նրան հատկացված էր գործողության լայն շրջան։ Ես լսել եմ, որ ծրագիրն այսպես է եղել. հենց որ Անդրանիկը մոտենար Վանին, այդտեղի դաշնակցական մարտիկները պիտի քաշվեին լեռները և ապստամբություն բարձրացնեին։ Այս ցույց է տալիս, որ Վանի հեղափոխական մարմիններն արդեն համակերպվել էին Թիֆլիսի բյուրոյի վճռին, որ ինչպես պատմեցի, մերժել էր նրանց առաջարկությունը՝ կամավորական շարժումը դադարեցնելու մասին, և Վանն առաջինն էր կանգնում ապստամբության ճանապարհի վրա։ Սակայն Անդրանիկը Վանին չհասավ, և կատարելով ընդհանուր հրամանատարության ցուցումը՝ ետ նահանջեց դարձյալ Պարսկաստան։

Շուտով սկսվեց ռուսական նահանջ Սալմաստից դեպի Արաքս։ Անդրանիկի այս առաջին արշավանքի ժամանակ պարզվեց, թե ինչ իրականություն կարող է հաստատել կամավորությունը Թուրքահայաստանում, հայ-քրդական փոխհարաբերությունների մեջ։ Հայ կամավորներն, իհարկե, չէին խնայում քրդական այն գյուղերը, որոնք նրանք գրավում էին։ Քրդերն էլ, որոնք նույնպես զինվորական ծառայություն էին կատարում օսմանյան բանակում, հայ գյուղերն էին կոտորում։ Այսպիսով, այս երկու ազգությունները սկսում էին իրար ջնջել։ Քրդերի գործն ավելի հաջողակ էր գնում։ Ռուս զորքի նահանջումը նրանց կատարյալ իրավունքի տակ էր դնում Հաղբակի, Բաշկալեի և Սարայի հայությանը, որն ամբողջապես սրի քաշվեց 1914-1915-ի ձմռանը։

Սա առաջին կոտորածն էր՝ նախերգանքն ավելի ահռելի, համատարած կոտորածների։ Պատերազմն առաջին իսկ քայլից ցույց էր տալիս, որ հին դրությունը ոչ միայն չի փոխվել, այլև տասնապատիկ վատացել է… Միշտ այսպես էր եղել նախկին պատերազմների ժամանակ. երբ ռուսները թողնում էին իրենց գրաված տեղերը և հեռանում, թուրքերը, կամ նրանց դրդումով քրդերը, հարձակվում էին այն տեղերի հայերի վրա, որոնք համակրություն էին ցույց տվել ռուսներին, կողոպտում ու կոտորում էին նրանց։ Բայց այդ կոտորածները մասնակի էին լինում, փոքր չափերով, և համենայնդեպս շատ շատերն էին ազատվում։ Իսկ այժմ խնայել չկար. հայկական կոտորածը, Աբդուլ-Համիդի տված դաստիարակությունից հետո, չէր կարող բավականանալ հարյուր, մինչև իսկ հազար դիակներով. ինչքան կար՝ սրի էր քաշվում, և պրծավ-գնաց…

Իսկ մենք, բնական և անխուսափելի համարելով այդ, զբաղված էինք մեր կամավորների քաջագործություններով, գովում, բարձրացնում էինք Քեռիին, Համազասպին, Դրոյին… Հերոսներ շատ ունեինք և ինչո՞ւ չդառնայինք հերոսապաշտներ…

Գ

Կամավորական շարժումը մենք սկսեցինք հախուռն, աններելի թեթևամիտ վերացականությամբ, նույնիսկ ուշադրություն չդարձնելով այն միջավայրին, որ շրջապատում էր մեզ։ Երևույթը շատ անբնական էր ցարական ռեժիմի տեսակետից էլ։ Ազգաբնակչության մի մասը ազատ ու համարձակ եռուն գործունեության մեջ էր, փող էր հավաքում, գումարումներ էր անում, զենք էր գնում, զինվորություն էր վարժեցնում և կռվի ուղարկում, մինչդեռ մյուս մասերը լուռ ու իրավազուրկ էին առաջվա նման, չունեին հնարավորություն արծարծելու և քննելու իրենց ազգային հարցերը։ Ես ուզում եմ ասել, որ կամավորական շարժումն ավելի ևս խոր խրամատներ էր փորում հայերի և մյուս կողմից՝ վրացիների և թուրքերի միջև։ Թուրք ազգաբնակչությունն, ինչպես ցույց տվեց պատերազմը, արդեն շատ լավ մշակված էր համաիսլամական և համաթուրքական պրոպագանդայի կողմից. և այս՝ բոլորովին առանց նկատելի դառնալու հայերի կողմից։ Սա մի ամբողջ շարժում էր օսմանյան զինվորական գործակալների ղեկավարությամբ, բայց քողարկված շատ վարպետորեն։

Հոյակապ կոնսպիրացիայի հովանու տակ թրքության մեջ ամրանում և կազմակերպվում էր կալվածատիրական-բուրժուական այն շաղախը, որ հետո լույս աշխարհ պիտի ընկներ «Մուսավաթ» անվան տակ։ Ինչպես ազգայնական-կրոնական մի առանձնացում՝ նա լցված էր հայ նացիոնալիստական-կղերական առանձնացման դեմ կատաղի թշնամությամբ։ Թուրքիան՝ համաիսլամական-համաթուրքական գաղափարի սիրտն ու մարմնացումը, ձգտում էր իր հետ միացնել Արևելքում՝ Ռուսաստանի տիրապետության տակ մնացած իր հարազատ ցեղերին, և սակայն հայերը սեպի պես ցցված էին այդ միության ճանապարհի վրա և ոչ միայն տեղի չէին տալիս, այլ, ընդհակառակը, աշխատում էին ավելի ևս խորացնել և լայնացնել սեպը Ռուսաստանի միջոցով, որի գործիքներն էին, և հենց այդ պատճառով էլ [դիտվում էին] արյունարբու թշնամի՝ միացող համաթրքության։ Ցարական բյուրոկրատիան պատերազմի նախընթաց երկու տարիներին էր, որ բավական տեղեկություններ ստացավ այն պրոպագանդայի մասին, որ օսմանյան գործակալները անաղմուկ մղում էին նույն այն թուրք ազգաբնակչության մեջ, որ, նրա կարծիքով, պիտի դառնար ցարիզմի հենարանը։

Սակայն իրեն հատուկ անշնորհքությամբ նա բավականացավ միայն ոստիկանական գրագրություններով, որոնք մի առանձին արդյունք չտվին և տալ էլ չէին կարող, քանի որ ոստիկանական ծառայողներից շատերը նույն բեկական դասակարգին պատկանող թուրքեր էին։ Պատերազմը սկսվելու ժամանակ դրությունն այնպես էր, որ ռուս կառավարությունը չհամարձակվեց նույնիսկ նախկին տարիների օրինակով անկանոն միլիցիա հավաքել թուրք ազգաբնակչությունից, որ այսպիսով բոլորովին ազատ մնաց պատերազմի ծանրություններից, և տնտեսապես զարգանում և ուժեղանում էր՝ պատրաստվելով հարմար ժամանակին ոտքի ելնել համաթուրքական գործի համար։

Այսպես էին թուրքերը։ Իսկ վրացինե՞րը։ Մենք արդեն գիտենք, որ դեռ 1905-ից վրացի և թուրք ազնվականության մեջ գոյություն ուներ մի տեսակ պաշտպանողական և հարձակողական դաշնակցություն՝ ուղղված հայերի դեմ։ Այդ entente cordiale-ն տարիների ընթացքում ամրապնդվել էր, և թուրք-վրացական համերաշխությունը հրապարակավ ցուցադրվում էր շատ հաճախ։ Բայց նրա մշտական սրբություն սրբոց էր այն հայակերական մամուլը, որ ռուսաց լեզվով ծաղկեցնում էին վրացի նացիոնալիստները՝ կոթնած Բաքվի թուրք բուրժուազիայի ոսկու քսակների վրա։ Մի կուլտուրական ժողովրդի կյանքի մեջ սա մի անպատիվ երևույթ էր՝ մարդկանց մի խմբակ ապրում էր տպագրական խոսքը ծառայեցնելով ազգերի թունավորման նողկալի գործին։

Իսկ ռուսական բյուրոկրատիան ամեն խնամք թափում էր, որ հայ-վրացական հարաբերությունները միշտ լարված լինեն, միշտ թշնամական։ Պատերազմի նախօրյակին իսկ, վրաց թավադների և հայ բուրժուաների մեջ մղվում էր մոլեգին գոտեմարտ Թիֆլիսի պոլիտեխնիկումի շինության առիթով։ Թավադները պահանջում էին, որ պոլիտեխնիկումը շինվի Սաբուրթալո արվարձանում, ուր նրանք հողեր ունեին, որոնց արժեքը պիտի բարձրանար պոլիտեխնիկումի այնտեղ զետեղվելու հետևանքով։ Մինչդեռ Թիֆլիսի քաղաքային վարչությունը Կովկասի առաջին բարձրագույն դպրոցի շինությանը հատկացրել էր հողաբաժին Նավթլուղում։ Քաղաքային Դումայի մեջ նստած հայ բուրժուազիան էլ, իհարկե, իր հաշիվներն ուներ։ Եթե պոլիտեխնիկումը կառուցվեր Նավթլուղում, այն ժամանակ օգտվողը կլիներ Հավլաբար թաղը՝ ամբողջովին հայաբնակ։ Ահա այս երկու տեղերի վրա էր կռիվը։ Թավադությունը Սաբուրթալոյի մեջ միայն առատ հողաբաժիններ էր խոստանում բարձրագույն դպրոցին, մինչդեռ հայ բուրժուազիան բացի հող տալուց՝ այն միակ աղբյուրն էր, որ պիտի տար նաև փող. մի բան, որ չունեին վրաց ազնվականները։

Եվ ահա երկու ժողովուրդները, մի-մի նացիոնալիստական բանակ դարձած, երկար, կրքոտ ճակատամարտ սկսեցին իրար դեմ, որ զզվելի կերպարանք ընդունեց իր այլանդակությամբ։ Պոլիտեխնիկումը շատ քիչ գործ ուներ, գրեթե ոչ մի գործ չուներ այդ նացիոնալիստական պատերազմի մեջ։ Նրա համար կատարելապես և լիովին միևնույնն էր, թե Թիֆլիսի որ կողմում կունենա իր տունը։ Այս կռվի մեջ ո՛չ սկզբունք կար, ո՛չ գաղափար. կային միայն ազգայնական հրդեհված կրքեր, որոնք խոլական վայրագությամբ պլլվում էին իրար՝ ազգային պատվի հարց դարձնելով հաղթանակը։ Եվ հաղթանակ տանողը հայերն էին։ Գեներալ Գաբաևը՝ վրացի թավադության գլխավոր հրամանատարն այդ պատերազմի մեջ, անեծք էր կարդում այն մարդու գլխին, ով Սաբուրթալոն կզրկի իր բնական իրավունքից։ Փոխարքա Վորոնցով-Դաշկովը, որ հաճությամբ թույլ էր տվել երկու ազգություններին իրար կրծոտել ու հոշոտել մի դատարկ առիթով, հայտարարում էր, թե իր վրա վերցնելով գեներալ Գաբաևի անեծքը, այնուամենայնիվ, որոշում է պոլիտեխնիկումը կառուցել Նավթլուղում, որպեսզի շինության գործն ապահովվի դրամական նվերներով։

Փողը հաղթանակեց, բայց կարելի է երևակայել, թե ինչ զգացմունք պիտի այս հարուցեր հաղթվածների մեջ։ Հայ-վրացական հարաբերությունները փչացան վերջնականապես։ Ես շատ թիֆլիսեցի հայերից եմ լսել, որ հին ժամանակներից բարեկամությամբ իրար հետ կապված հայ և վրացի ընտանիքներ խռովել են իրարից Սաբուրթալո - Նավթլուղ կռվի հետևանքով։ Երկու կողմերի լրագրությունը սարսափելի գործ կատարեց։ Դաշնակցական «Հորիզոնը» փրփուրը բերանին էր պաշտպանում հայ բուրժուական-նացիոնալիստական իդեալ դարձած Նավթլուղը։

Բացի այս մեծ գոտեմարտի թողած դառնությունից՝ հայերի կամավորական շարժումը վրացիների մեջ թշնամական վերաբերմունքի պիտի արժանանար և այն պատճառով, որ, ինչպես վերևում ասացի, վրաց հրամայող դասերը գերմանական օրիենտացիան էին ընդունել և դաշնակցել էին Թուրքիայի հետ։ Մնում էր մի տարր միայն՝ ռուս տարրը, որ, ըստ երևույթին, պիտի համակրեր կամավորական շարժմանը։ Բայց այս կողմից էլ մենք համակրանք չունեինք։ Կովկասում գործողը «Ռուս ժողովրդի միություն» անունը կրող սևհարյուրակային կազմակերպությունն էր, իսկ նրա համար հայ ժողովուրդը Դաշնակցությունն էր՝ այն հեղափոխական կազմակերպությունը, որ դեռ նոր կոտորում էր ռուս չինովնիկներին և որ ցարիզմի անհաշտ թշնամիներից մեկն էր։ Շուտով բացվեց և այն, թե ինչու հայերը կամավորներ էին տալիս ռուս բանակին։ «Այստեղ հաշիվ կա,- ասում էին,- նրանք ուզում են ավտոնոմ Հայաստան, և ռուս բանակը պիտի կռվի այդ ավտոնոմ Հայաստանի համար»։

Ես պիտի անկեղծորեն ասեմ, որ այսպիսի մի վերին աստիճանի վնասակար կարծիք կազմվում էր ի դժբախտություն թուրքահայ ժողովրդի, դարձյալ շնորհիվ կամավորական շարժման գլուխ անցած տարրերի անտակտության։ Մեր մեծամիտ պահանջկոտության արդյունք էր, որ հազիվ կամավորները ռազմադաշտ հասած՝ սկսեցինք քննել և դատել, թե ի՞նչ պայմաններով ենք մենք կռվի մեջ մտել և ի՞նչ պահանջներ ունենք անելու։ Լրագրական ընդարձակ և աղմկալից բանավեճի առարկա դարձավ Թուրքահայաստանի ապագա կազմակերպությունը։ Պահանջում էին, որ այդ կազմակերպությունն ունենա ավտոնոմ նահանգի դրություն։ Գտնվեցին և երկու հայեր, որոնք ուղղակի անկախություն էին պահանջում. Շիրվանզադեն՝ «Մշակի» մեջ և Գաբրիել Մնացականյանը՝ առանձին գրքույկով։ Վեճը արձագանք գտավ և մայրաքաղաքների ռուս մամուլի մեջ։ Միլյուկովը հայերի շահերի տեսակետից ցանկալի էր համարում կցել Թուրքահայաստանը Ռուսաստանին։ Այսպիսով երկիրը մի քանի տասնյակ տարիների ընթացքում կշենանար և կզարգանար, հայ ազգաբնակչությունը կբազմանար և ռուսահայերի հետ կկազմեր մի խոշոր ազգագրական զանգված, որ ապագա Ռուսաստանում կբռներ ավտոնոմ դիրք։

Այս առաջարկությունն էր ահա, որի մասին լսել անգամ չէին ուզում մանավանդ դաշնակցականները, և Միլյուկովի դեմ սկսվեց մի ամբողջ արշավանք։ Ես հիշում եմ «Հորիզոնի» աշխատակիցների մի ժողով Համբարձում Մելիքյանի տանը և

նրա նախագահությամբ։ Պետք է ասեմ, որ Մելիքյանը կարողացել էր բաժնետիրական ընկերության միջոցով ապահովել «Հորիզոնի» հրատարակությունը և, իբրև նախագահ բաժնետիրական ընկերության, իր ձեռքն էր առել նաև խմբագրության կազմը, որ բաղկացած էր դաշնակցականներից։ Բայց որպեսզի ցույց չտա, թե թերթը զուտ կուսակցական է, նա ուներ և դրսի ոչ դաշնակցական աշխատակիցներ։ Դրանց թվում էի և ես։ Եվ ահա այս ժողովը հրավիրված էր խորհրդակցելու համար, թե պե՞տք է արդյոք թերթի մեջ բաց անել վիճաբանություն և պրոպագանդա Թուրքահայաստանի ավտոնոմիայի մասին։ Սկսվեցին դաշնակցական ճառախոսությունները՝ իրար նման, իրար կրկնող հոխորտանքներով, փքվածությամբ լիքը։ Մենք արյուն ենք թափում, մենք կռվող կողմ ենք և բոլորովին կարիք չկա, որ թաքցնենք մեր պայմաններն ու պահանջները։ Հայ ժողովուրդը տասնյակ տարիների ընթացքում ցույց է տվել, թե որն է իր նվազագույն պահանջը։ Մեր ուզածը վարչական ավտոնոմիան չէ, այլ այն, ինչ արտահայտվում է հայերեն «ինքնուրույնություն» բառով։ Այդ նույն դրությունն է, ինչ ունեն այժմ Ռուսաստանի վերաբերմամբ Խիվան կամ Բուխարան։

Երկու հոգի էինք, որ հակառակ ուղղությամբ արտահայտվեցինք՝ Հովհաննես Թումանյանը և ես։ Ինձ «Հորիզոնի» դաշնակցական խմբագիրների կուռքը դարձած նախագահը՝ նավթարդյունաբերող Մելիքյանը, ամենքից հետո խոսք տվեց, այն էլ ակամա, որովհետև գիտեր, որ ընդդեմ պիտի խոսեմ, մինչդեռ արդեն 10-12 հոգի խոսել էին անմիջապես ավտոնոմիայի պահանջը դնելու օգտին։ Այնուամենայնիվ, ես կարողացա երկու խոսք ասել։ Ասացի, որ վեճն անժամանակ է, միայն կրքեր կարող է հարուցանել և իբրև այդպիսին վնասակար է ոչ միայն թուրքահայերի, այլև մեզ՝ Կովկասում ապրողներիս համար։ Վեճը արջի մորթին բաժանելու մասին է, մինչդեռ արջը դեռ սպանված չէ և չի էլ վիրավորված։ Ապրում ենք պատերազմական հեղհեղուկ ժամանակի մեջ, ամեն օր կարելի է անակնկալների առաջ կանգնել։ Դուք տեսնում եք, որ այդ ավտոնոմիայի հարցը շատ անախորժ է ռուս հասարակության և, որ ավելի կարևոր է, ռուս զորքի համար։ Ես հարցնում եմ ձեզ՝ ի՞նչ կարիք կա այժմ լցնել մամուլի հրապարակն այդպիսի վեճերով։ Մի՞թե, վերջիվերջո, այդ վեճերն են, որ պիտի տան ձեր ուզած ինքնավարությունը։

Ո՛չ, հարկավոր են այլ պայմաններ։ Հայ ժողովուրդն այսօր շատ կարոտ է պաշտպանության, և ինչպե՞ս այսօր հեռու քշել այն ուժերը, որոնք կարող են մեզ պաշտպանել և պիտի պաշտպանեն։ Վաղը կարող է պատերազմական դրությունն այնպես փոխվել, որ ռուսական բանակը պիտի հեռանա այս երկրից։ Ի՞նչ կլինի այն ժամանակ մեր դրությունը, եթե ստիպված լինենք մենք էլ հեռանալ՝ նկատվելով իբրև թշնամի, ոչ ցանկալի տարր. իսկ այդպիսի դրության մենք անպատճառ կհասնենք, եթե լրագրական անպտուղ վեճերով կրքեր վառելով զբաղվենք։

Վերջին խոսքը նախագահինն էր, և նա հաղթականորեն միացավ իր խմբագիրներին, որոնք ամեն օր հրճվանքով պտույտներ էին անում իր ավտոմոբիլի

մեջ բազմած։ Եվ մյուս օրը սկսվեց վեճն ու պահանջը։ Եվ ո՞վ կարող է հաշվել, թե որքան վնասներ հասցրին այդ լրագրական արշավանքներն այն խեղճ ժողովրդին, որ Թուրքահայաստանում մատնված էր իր սև ճակատագրի ամբողջ դժնդակությանը։ Մի կտոր ապահովության էր նա կարոտ, ա՛յդ էր նրա ամբողջ ցանկությունը, իսկ այստեղ նրան անվանում էին ավտոնոմիստ, ատում էին դրա համար, արհամարհում էին նրա ամենատարրական ցանկություններն անգամ։ Զորքի մեջ բացարձակ պրոպագանդա էր մղվում հայերի դեմ, և այս բանի մեջ առանձնապես աչքի էին ընկնում վրաց ազնվականության ներկայացուցիչ սպաները, սկսած բարձրաստիճաններից, հենց նույն Գաբաևից, որ ինչպես ասացի, գլխավոր հրամանատարն էր Սաբուրթալո-Նավթլուղ կռվի մեջ։

Զինվորներին ասում էին. «Ձեզ տանում են կռվելու ո՛չ թե Ռուսաստանի շահերի համար, այլ հայկական ավտոնոմիայի համար»։ Զուր չէր, որ ես վերևում, բերելով գեներալ Մշլաևսկու լպիրշ և շնական հանաքը Էրզրումի հայոց հանրապետության մասին, ասում էի, թե նա միակ օրինակը չէր, թե նա մի երևույթ էր այն վարակի, որ բռնել էր Թուրքիայում գործող ցարական բանակը։ Այդտեղ հայ կամավորական խմբերը հազիվհազ կարողանում էին դիմանալ։ Նրանց քաջագործությունների վրա ուշադրություն չէին դարձնում, մինչդեռ նրանց մեջ տեղի ունեցող մանր-մունր անկարգություններն ուռցվում էին, չափազանցվում և պատժվում խստորեն, անխնա։ Բայց պետք է այն էլ ասել, որ անվստահությունը միայն դեպի հայ կամավորները չէր, այլև դեպի այն հայ զինվորները, որոնք ծառայում էին կանոնավոր զնդերի մեջ։ Այսպես էր ցարական կարգը…

Չսխալվենք, սակայն, կարծելով, թե միայն մամուլի մեջ էր արծարծվում խիստ պահանջ Թուրքահայաստանի ավտոնոմիայի մասին։ Նույն դաշնակցական տրամադրությունը թագավորում էր և Ազգային բյուրոյի մեջ։ Փոխարքան առաջարկել էր, որ հայերը կազմեն իրենց ցանկացած բարենորոգումների ծրագիրը և Թուրքահայաստանի քարտեզը։ Այս առիթով կազմվեց մի մասնաժողով, որի անդամներից մեկն էի ես։ Սակայն մասնաժողովը չէր հավաքվում, հավաքված ժամանակն էլ չէր կարողանում որոշակի, պարզ առաջարկություններ ձևակերպել։ Խոսում էին, գործում էին Թուրքահայաստանի մասին, բայց նրան չէին ճանաչում, նրա կարիքների մասին հասկացողություն չունեին և, ուրեմն, ինչպե՞ս կարող էին մի լուրջ բան մշակել։ Գործն այդպիսով, վերջիվերջո, մնաց ինձ և Մեսրոպ եպիսկոպոսի վրա։ Ես կազմեցի մի ծրագիր այն եղանակով, ինչպես կազմում էին Կ.Պոլսի եվրոպական դեսպանները, այսինքն՝ հիմք վերցնելով Թուրքիայում գոյություն ունեցող օրենքները, արտահայտված թե՛ ընդհանուր պետական կազմակերպության և թե՛ առանձին ինքնավարությունների վերաբերյալ կանոնադրությունների մեջ։

Միասին՝ ես և Մեսրոպ եպիսկոպոսը խմբագրեցինք այդ նոր կազմական կանոնադրությունը, համաձայն այն հրահանգների, որ տվել էր Ազգային բյուրոն՝ իբրև հիմնական ցանկություններ։ Այսպիսով Թուրքահայաստանը մնում էր

Օսմանյան կայսրության մի մասը կազմող ինքնավար նահանգ, բայց մի ընդհանուր նահանգապետով, որ պիտի լիներ ռուսաց բարձր պաշտոնյաներից մեկը։ Հայաստանի մի անբաժան մաս ճանաչվում էր Կիլիկիան։ Այստեղ մեր «ազգայինճիները» լսել անգամ չէին ուզում որևէ զիջման մասին։ Միլյուկովը խորհուրդ էր տվել ձեռք վերցնել Կիլիկիայից, որովհետև այնտեղ համախմբված են համաշխարհային տնտեսական շահերը, որոնք և կհակառակվեն հայերի տիրապետությանը Միջերկրական ծովի ափին, Ալեքսանդրեթի ծոցում, և այսպիսով կսկսվի մի ոչ ցանկալի ուժեղ մրցակցություն հայերի դեմ։ Բայց դաշնակցականները սաստիկ հակառակեցին այդ առաջարկությանը հենց միայն այն պատճառով, որ այն բխում էր մի ռուսից՝ Միլյուկովից։ «Հայաստանն,- ասում էին,- չի կարող ապրել առանց ծովային ելքի»։

Այստեղ էր ահա՝ «Հայաստանը ծովից ծով»։ Կիլիկիան Հայաստանի մի մասը հայտարարելը դեռ մեծ դժվարություն չէր ներկայացնում ծրագրի մեջ։ Մենք վերցրինք՝ այդպես էլ գրեցինք։ Բայց ի՞նչ անեինք քարտեզի վրա։ Ինչպե՞ս միացնեինք Կիլիկիան Հայաստանին, երբ նա երբեք միացած չի եղել։ Զուր էի ես բացատրում անհնարինությունը, բերում էի աշխարհագրական, ազգագրական և պատմական անհաղթելի արգելքները։ Ոչինչ չուզեցին լսել։ Բոլոր առարկությունների դեմ մի պատասխան էր լսվում. «Ներկայումս չի կարող լինել և մի հայ, որ Հայաստանը երևակայի առանց Կիլիկիայի»։ «Շատ լավ, բայց ես ի՞նչ անեմ»,- հարցնում էի ես։ «Մի կերպ միացրեք»,- պատասխանում էին։ Մի կերպ… Պրծում չկար… Ինձ նմանների դրության մեջ մտնելու համար է երևի, որ Եփրատը Մելիտենեի մոտ, կարծես թողնելով իր հախուռն մղումը՝ ճամփա փորելը դեպի Միջերկրական ծով, ետ ու ետ է քաշվում՝ դեպի հարավ ուղղվելու համար։ Հայկական մեծ գետի այդ ծունկը շատ մոտ է Կիլիկիային, և ահա այդտեղից կարելի էր բաց անել այն նրբանցքը, որ կմիացներ Հայաստանը Կիլիկիայի հետ։ Լավ թե վատ, ես երկու գծով որոշեցի ենթադրվող ուղղությունը, լոկ այլևս «մի կերպ արեք»-ը չլսելու համար, խոսք տալով ինձ՝ այլևս չնայել այդտեղի վրա։

Բայց սրանով բանը չէր վերջանում։ Շովինիստական ամբարտավանությունը որքան ուռճանում և ծովանում էր կամավորական խմբերի գործողությունների հետևանքով, այնքան ավելի ու ավելի բարձրանում և բարդանում էին պահանջները։ Բյուրոն նոր՝ նոյեմբերին միայն, տեսավ, որ կամավորական մեծ աղմուկի դիմաց հայ ժողովուրդն իսկապես ոչինչ դրական երաշխավորություն չունի ռուսական կառավարության կողմից։ Ուստի, սկսեց նորից՝ նոր միայն, երբ, ինչպես ասում են՝ բանը բանից անցած էր արդեն, երաշխիքների հոգս քաշել։ Ամենալավը համարվում էր այն, որ ինքը՝ Նիկոլայ Բ-ն մի կոչ ուղղի հայերին՝ խոստանալով նրանց ամենադրական կերպով ավտոնոմիա։ Շատերը կային բյուրոյի մեջ, որոնք այդ էլ բավարար չէին համարում, այլ պահանջում էին, որ Նիկոլայն ուղղակի անկախություն խոստանա Հայաստանին։ Այս պահանջը դուրս էր գալիս դաշնակցական շրջաններից և համակրություն էր գտնում նրանց հլու հպատակ բուրժուական ինտելիգենցիայի մեջ։ Իզուր բյուրոյի ժողովների մեջ ես հակաճառում

էի այդ մտքի դեմ՝ ասելով, որ երբեք ռուսական բյուրոկրատիան թույլ չի տա, որ իր ցարը ստորագրի հայերին ուղղված մի որևէ կոչ. այն ցարը, որ նույնիսկ բազմամիլիոն լեհ ժողովրդին ուղղված կոչը չստորագրեց։ Բայց ո՞վ էր լսողը։ Եվ մի նոր փորձ կատարվեց։ Ոչ մի դժվարություն չկար։ Էջմիածնում նստած Գևորգ Հինգերորդը գրիչը թանաքի մեջ թաթախած սպասում էր, թե ով կբերի մի թուղթ, որպեսզի դնի իր ստորագրությունը դրա տակ։ Այդ հանգամանքի արդյունք է, որ տեղի ունեցավ նոյեմբերի 8-ի անտակտ և անիմաստ դիմումը Վորոնցով-Դաշկովին, և ես չեմ կարող մի քանի հատվածներ չբերել նաև այդ վավերագրերից.

«Ժողովրդական ոգևորության ալիքը աճում է,- գրում էր կաթողիկոսը,- ավելի ու ավելի տարածվելով բոլոր հայերի մեջ, որոնք Ռուսաստանի համար այս մեծ վայրկյանում կանգ չեն առնի թեկուզ ամենածանր զոհաբերությանից առաջ։

Հայոց ժողովրդի ուշադրությունը և մտածողությունը ներկայումս կենտրոնացած է թուրքահայերի վիճակի վրա։

Այն բոլորը, ինչ որ ձեռնարկված է կայսերական կառավարության կողմից եվրոպական պետությունների հետ միասին, սկսած վերջին ռուս-թուրքական պատերազմից, դրական հետևանքներ չի տվել թուրքահայերի դրության լավացման տեսակետից։

Թուրքիան, ընդունակ լինելով ենթարկվել միմիայն հարկադրանքին, չէր ցանկանում և իր կուլտուրական ուժերով անկարող է եղել ըմբռնել իրեն առաջարկած հայկական ռեֆորմների նշանակությունը։

Թուրքահայաստանի ռեֆորմների երկարամյա պատմությունը խախտել էր հայ ժողովրդի հավատը և նրան բերել է այն համոզման, որ միմիայն Ռուսաստանը կարող է ապահովել ժողովրդի ֆիզիկական և կուլտուրական զարգացումը Թուրքահայաստանում։

Ներկայումս, երբ ամբողջ Ռուսաստանի և նրա հաղթական զորքի հետ հայերը պետք է լարեն ծայրահեղ ուժեր՝ ընդհանուր թշնամիների դեմ կռվելու համար, ես գտնում եմ բոլորովին պատշաճ՝ ներկա պատմական մոմենտի նշանակության, որպեսզի մեր սիրեցյալ թագավոր կայսեր անունից հայտարարվելով մի կոչ թուրքահայերին՝ ներշնչվի հայ ժողովրդին, որ այժմ հասել է ժամը վերջնականապես և անդառնալի կերպով լուծելու Հայկական հարցը Թուքիայում, և որ հայ ժողովրդին մեծ Ռուսաստանի կողմից կտրվի ավտոնոմիա, որի շրջանը կկազմեն Թուրքահայաստանի ի մի ամփոփված 6 վիլայեթները և նրանց հետ անխզելիորեն կապված Կիլիկիան։ Դրանով կպսակվի Ռուսաստանի պատմական առաքելությունը, որ է Թուրքիայի լծի տակ դարերով տանջված քրիստոնյա ժողովուրդների ազատագրությունը»։

Այս թուղթը ներկայացնում են Վորոնցով-Դաշկովին, որ կարդալուց հետո, ինչպես լսել եմ, փոքր-ինչ հանդիմանական ձևով ասել է. «Մի՞թե բավական չէր խոստացածը»՝ անշուշտ ակնարկելով Գորեմիկինի գրությունը: Պալատականներն առաջին անգամ էին, երևի, զգում անհարմարություն իրենց հյուրընկալած հարկի տակ: Այնուամենայնիվ, կոմսը խոստանում է այդ մասին խոսել Նիկոլայ կայսրի հետ, որին մոտ օրերում սպասում էին Թիֆլիսում: Այս առիթով Թիֆլիս եկած Գևորգ կաթողիկոսը նոյեմբերի 29-ին առանձին ունկնդրություն է ստանում Նիկոլայից և իր ճառի մեջ, որ խմբագրված էր բյուրոյի թելադրությամբ, կրկնում է նույն խնդիրը, այսինքն՝ որ ցարն այժմ իսկ հայտարարի, թե թուրքահայերին կտրվի ավտոնոմիա՝ Ռուսաստանի հովանավորության տակ: Նիկոլայը պատասխանում է միայն, թե հայերի վիճակը կտնօրինվի լավագույն կերպով: Այժմ ենք մենք հասկանում այս խոսքերի իմաստը. այժմ, երբ ձեռքի տակ ունենք ֆրանսիական դեսպան Պալեոլոգի օրագիրը:

Պետերբուրգում Ֆրանսիայի ներկայացուցիչն այդտեղ, իմիջիայլոց, պատմում է և այն խոսակցությունը, որ նա ունեցավ Նիկոլայի հետ նախքան նրա ուղևորությունը Կովկաս, նոյեմբերի 8-ին: «Խոսելով ապագա հաշտության պայմանների մասին՝ Նիկոլայն ասաց և հետևյալը. «Փոքր Ասիայում ես, բնականաբար, պիտի զբաղվեմ հայերով: Անկարելի կլինի, իհարկե, թողնել նրանց թուրքական լծի տակ: Հարկավո՞ր կլինի, որ ես կցեմ Հայաստանը (Ռուսաստանին): Ես նրան կկցեմ միմիայն հայերի առանձին խնդիրքով: Եթե ոչ՝ ես նրանց համար կսարքեմ անկախ կառավարություն»»: Չմոռանանք, որ սա մի դիվանագիտական խոսակցություն էր, և ռուսաց ցարը ճարպկորեն պայմանավորում էր իր իսկական ցանկությունը՝ Հայաստանի կցումը հայ ժողովրդի համաձայնությամբ: Եթե այդպիսի համաձայնության կարիք լիներ, ոչինչ չէր արգելում, որ Նիկոլայն այդպիսի մի միտք ներշնչեր կաթողիկոսին: Հետագա դեպքերը գալիս էին ցույց տալու, որ ցարը Հայաստանի վերաբերմամբ բացի պարզ կցումից ուրիշ որևէ միտք չի ունեցել, և դիվանագիտական սին զարդարանք է եղել այն հայտարարությունը, որ նա արել էր ֆրանսիական դեսպանին հայերի համար «անկախ կառավարություն» սարքելու մասին:

Եվ այսպես՝ կցում… Էլ ինչո՞ւ հայ ժողովուրդը դրա համար քափ ու քրտինքի մեջ մտներ, կոտորվեր հարյուրհազարներով: Շարունակ այս հարցերն են սուր նիզակների նման ցցվում առջևդ, երբ նորից վերապրում ես 1914-1915 սև ու մութ տարիները:

1917 թվին թուրքաց կառավարությունը Կ.Պոլսում հրատարակեց «վավերագրերի» մի ստվար հատոր՝ ապացուցելու համար, թե հայերը ապստամբներ էին օսմանյան պետության դեմ: Այդ «վավերագրերից» մեկը խայտառակ մի ստություն է, կոպիտ մի հերյուրանք: Այդ մի մանիֆեստ է, որ իբր թե Նիկոլայ Բ-ն ուղղել է թուրքահայերին՝ հայտնելով, թե հասել է ժամը, երբ նրանք պիտի ազատվեն հին դարերի բռնակալությունից: Այդպիսի դիմում երբե՛ք գոյություն չի ունեցել, շինծու է

առաջին տառից մինչև վերջինը։ Կարո՞ղ եք երևակայել, թե որքան սարսափելի տպավորություն կլինի նա թողած Թուրքիայում, որքան նա գրգռած պիտի լինի խավար ու ֆանատիկոս ամբոխի կրքերը միլիոնավոր հայերի դեմ։ Եվ հետո՝ մտաբերենք, որ առանց կրակի ծուխ չի լինում։ Թիֆլիսը վխտում էր օսմանյան լրտեսներով, որոնք դաշնակցական «Հորիզոնի» ամեն մի համարը, ամեն մի խոսք ու զրույց տեղ էին հասցնում։ Կաթողիկոսի դիմումը, բյուրոյի գործադրած ջանքերը, որ Նիկոլայը թուղթ գրի հայերին, անշուշտ, անծանոթ չմնացին օսմանյան շտաբի ականջներին, գուցե՝ և աչքերին։ Որքան հիշում եմ, բյուրոյի դաշնակցական անդամներից մի քանիսը (օր. Ավետիք Սահակյան) կազմել ու ներկայացրել էին նաև կայսերական դիմումի բնագիրը. և ո՞վ գիտե՝ այդ բնագրից որքան բան է վերցված և մտցված թուրք կառավարության ձեռքով կեղծված «մանիֆեստի» մեջ։ Այսպես էինք մենք մեր հիմար ամբարտավանությամբ նյութ տալիս մեր ժողովրդի գլխին աղետներ թափելու համար։

Խրատվել, ետ նայել, լուրջ հաշիվներ անել չգիտեինք։ Վճռում էինք ահագին նշանակություն ունեցող հարցերը թեթևամիտ, հախուռն շտապողականությամբ, ղեկավարվելով պատահական խոսք ու զրույցով անգամ։ Շատ բնորոշ փաստ է, որ դեռ պատերազմի սկզբում, գլխավորապես շիրակցի հայերը ցույց էին տալիս, թե որքան անպիտան են նրանք իբրև ռազմական նյութ։ Կանոնավոր գնդերի մեջ ծառայող զինվոր հայերը դասալիք էին դառնում մեծ քանակությամբ և փախչում-գնում էին իրենց տները։ Գործադրել ամենքի դեմ զինվորական խիստ օրենքներն անհնարին էր դառնում, և գլխավոր հրամանատար Վորոնցով-Դաշկովը բյուրոյի օգնությանը դիմեց՝ առաջարկելով գործող բանակ ուղարկել պատվավոր մարդկանց՝ հայ զինվորներին խրախուսելու և խրատելու համար։ Հանձնարարությունը կատարվեց՝ երկու խումբ կազմելով. առաջին խմբի մեջ մտնում էին Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, բանաստեղծ Հովհաննես Թումանյանը և վիպասան Շիրվանզադեն, երկրորդի մեջ՝ Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսը և Սմբատ Խաչատրյանը։ Սրանք պետք է առանձին-առանձին գործեին ռազմաճակատի զանազան մասերում՝ զինված կաթողիկոսի կոնդակներով, բայց թողեցին այդ միտքը և միասին գնացին Իգդիր, այնտեղից դեպի Ալաշկերտի հովիտը, որ կազմում էր Կովկասյան Չորրորդ բանակի շրջանը։

Այդ բանակի հրամանատար գեներալ Օգանովսկին՝ մի լեհ հայրենասեր, իրեն ցույց տվեց հայերին համակրող և Մեսրոպ եպիսկոպոսի հետ ունեցած խոսակցության մեջ խորհուրդ տվեց ավելացնել կամավորների թիվը՝ այն 2000-ից հասցնելով 10-12 հազարի։ Հայաստանին պատերազմից հետո էլ հարկավոր է բանակ՝ ինքն իրեն պաշտպանելու համար, նուրբ ակնարկներով հասկացնելով, թե ազգային ինքնուրույնության լավագույն պահապանը կարող է լինել միմիայն ազգային զինվորական ուժը։ Մեսրոպ եպիսկոպոսը և նրա ընկերները շատ են հավանում այդ միտքը և, գալով Թիֆլիս, պատմում են բյուրոյին։ Այստեղ նստած դաշնակցականներն, ինչ խոսք, հրճվանքով ընդունեցին այդ միտքը։ Մանավանդ շատ աշխատում էր

Հովսեփ Արղությանը, որն ինձ հետ ունեցած խոսակցության մեջ անհրաժեշտ էր գտնում կամավոր բանակի խոշորացումը նաև այն պատճառով, որ պատերազմից հետո գուցե հարկավոր լինի զենքով պաշտպանվել նույնիսկ ռուսներից։

Այսպես թե այնպես, բյուրոն ընդունեց վճիռ՝ հասցնելու հայ կամավորների թիվը 10 հազարի։ Փոխարքան, իհարկե, տվել էր իր համաձայնությունը, միայն թե ասում էր, որ այդքան հրացան չկա, և առաջարկում էր, որ հայերն իրենք գտնեն հրացանները։ Դրանց տեղն էլ ցույց էր տալիս շտաբը՝ կարելի էր գնել Եվրոպայում։ Բյուրոյի կողմից հատուկ հանձնարարությամբ, այդ գնումը հաջողեցնելու համար, Մոսկվա և Պետերբուրգ ուղարկվեց Հովհաննես Քաջազնունին։ Բայց մասնավոր գնումը չհաջողվեց, և դարձյալ Կովկասի զինվորական վարչությունն էր, որ հրացաններ էր հայթայթում նոր կազմակերպվող խմբերին։ Զմռանը բյուրոյի զինվորական մարմինն զբաղված էր ավելացման գործով։

Բայց, մինչ նոր զինվորական ուժի միտքն էր սկսում ոգևորել բյուրոյի ռազմատենչ անդամներին, պատերազմական բախտը ցույց տվեց, թե գիտե և դժնդակ խաղեր խաղալ։ Հազիվ էր Նիկոլայ Բ-ն հեռացել Կովկասի սահմաններից, թուրքական բանակը հանկարծական արագ արշավանքով մտավ ռուսաց սահմանը, գրավեց Օլթին, Արդահանը և մյուս կողմից դիմեց Սարիղամիշի վրա՝ ռուսաց գործող բանակի թիկունքն անցնելու համար։ Այս արագ հաջողությունները մեծ տագնապ առաջացրին Թիֆլիսում։ Կովկասի մայրաքաղաքը գրեթե առանց պաշտպանության էր մնացել և իրեն վտանգի մեջ զգաց։ Առաջին օրվա ջղայնությունն արագորեն վերածվեց մեծ իրարանցման, հետո նաև եկավ խուճապը՝ անզուսպ և հուսահատական։ Փախչե՛լ… այս էր դառնում բոպեի հրամայողական պահանջը։ Փախչել Բաքու, Ռուսաստան։ Ինչե՛ր էին կատարվում Թիֆլիսի փողոցներում, բայց մանավանդ կայարանում. նկարագրել անկարելի է։ Երևանյան հրապարակում, քաղաքային վարչության առջև, սարսափահար ամբոխը ծփում էր ծովի պես։ Եվ ոչ ոք չկար, որ հանգստացնող խոսք ասեր ուշագնաց բազմությանը։ Ամենքը լուռ էին՝ զինվորական և քաղաքացիական վարչությունները։ Եվ ամեն բոպե մեկը մյուսին հակասող, մեկը մյուսից սարսափեցնող լուրեր էին գալիս։ Ասում էին, որ թուրքերն արդեն եկել են Մանգլիս։ Փախչողների մեծագույն մասն, իհարկե, հայերն էին։ Նրանք շատ լավ գիտեին, իհարկե, որ սուլթանի ասկյարներն իրենց չպիտի խնայեն։ Առևտրական բանկի առջև խմբված էր ահագին ամբոխ։ Ամեն մեկն աշխատում էր որքան կարելի է շուտ ստանալ բանկին պահ տված գումարը և մի ժամ առաջ տեղ գտնել լեփ-լեցուն գնացքների մեջ կամ նրանց կտուրներին։

Այստեղ էր, որ հանդիպեցինք երկուսս՝ ես և Շիրվանզադեն։ Ստանալիք մենք, իհարկե, չունեինք և բոլորովին սառնասիրտ կերպով նայում էինք, թե ինչպես մարդիկ իրար գլուխ են բարձրանում՝ բանկ մտնելու համար։ Սա այսպես էր, այո՛։ Բայց մենք ծնողական շատ խոշոր վշտով էինք համակված, երկուսս էլ ունեինք չափահաս և գեղեցիկ աղջիկներ։ Վճռեցինք, ինչպես էլ լինի, փախցնենք երկուսին, իսկ դրանից

հետո ինչ լինելու է՝ թող լինի։ Այս բանը մեզ հաջողվեց մեր փախչող ծանոթ-բարեկամների միջոցով։ Ազատվեցինք մեծ մտահոգությունից։

Խուճապի ենթարկվեց և Բաքու փախավ նաև բյուրոյի նախագահ Սամսոն Հարությունյանը։ Այս բանը մեծ աղմուկ բարձրացրեց տեղական մամուլի մեջ, մինչդեռ դեպքը իսկապես արժանի չէր այդքան աղմուկի։ Նա ծածուկ չփախավ։ Առավոտյան եկավ ինձ մոտ, ասաց, որ դրությունը վատ է։ Ամեն ինչ պատրաստված էր, որ Վորոնցով-Դաշկովն էլ վերջին ժամին փախչի։ Կոմսուհին ասել էր, թե իրենց երկյուղը այնքան օսմանցիները չեն, որքան Բորչալուի թուրքերը, որոնք պատրաստված են լավ կողոպտելու Թիֆլիսը։ Այս պալատական լուրերն ավելի ևս սաստկացրել էին Սամսոն Հարությունյանի երկյուղը, որ կարծում էր, թե թուրքերը Թիֆլիս մտնելուց հետո առաջինը հենց իրեն պիտի կախեն, մի բան, որ հեռու չէր հավանականությունից։ Ուստի, նա վճռել էր գնալ Բաքու և այնտեղ սպասել, թե ինչ կլինի հետո։ Նա ինձ էլ առաջարկեց փախչել, բայց ես հրաժարվեցի։ Ոչ թե այն պատճառով, որ հերոսական ոգի էի կրում (լա՛վ հերոս է նա, ով գրպանում միայն մի գրչահատ ունի), այլ՝ որովհետև փող չունեի։ Փախչում էին փող ունեցողները։ Եվ եթե իմ մի ծանոթը մերժած չլիներ ինձ 300 ռուբլի պարտք տալը, ես էլ փախածներից մեկը կլինեի։

Այս խուճապի ժամանակ հանգիստ ու անվրդով մնացին վրացիները, և մենք ասում էինք նրանց մասին. «Երջանիկ ժողովուրդ, օսմանցու պես արնախում թշնամի չունի»։ Հաստատապես ասում էին, թե վրաց ազնվականները պահանջել էին Վորոնցով-Դաշկովից, որ եթե թուրքերը շրջապատեն Թիֆլիսը, քաղաքը նրանց հանձնվի առանց դիմադրության, որպեսզի չվնասվի պատերազմական գործողություններից։ Այն ժամանակ անհասկանալի և տարօրինակ էր թվում այդ պահանջը, որովհետև դեռ հրապարակված չէր թուրք-վրացական դաշնագիրը։

Եվ այսպես մենք մնացինք քաղաքում, ինչպես ուխտվածներ։ Գիտեինք, թե ինչ է սպասում մեզ, խեղճ Արդանուճն ու Տանձուտը մի քանի օր առաջ էին կոտորածի ենթարկել։ Եվ մի օր հանդիպելով փողոցում Ավետիք Սահակյանին՝ ես առաջարկեցի հայերին համախմբել մի տեղ, որպեսզի ամենքս միասին լինենք և միասին տանենք կոտորածների սարսափը։ Բայց մեր մռայլ ակնկալությունները, բարեբախտաբար, չարդարացան։ Սարիղամիշի մոտ ռուսները փայլուն հաղթություն տարան։ Սկզբում այդտեղ կարգադրում էր փոխարքայի օգնական Մշլաևսկին, բայց երբ նա էլ թուրքերի հաջող առաջխաղացման առաջին տպավորության տակ վատաբար փախուստի դիմեց, նրա տեղ կանգնեց գեներալ Յուդենիչը, որ զարկեց, ոչնչացրեց թուրքաց ամբողջ բանակը և նրա մնացորդները փախցրեց դեպի Էրզրում։ Խուճապի և վհատության մատնված Թիֆլիսը դեկտեմբերյան այդ պայծառ օրը տոնական կերպարանք զգեցավ և զարդարվեց դրոշակներով։ Վտանգն անցել էր։ Փախստականները վերադարձան։ Բայց Սամսոն Հարությունյանն այլևս անկարող եղավ բյուրոյի նախագահի պաշտոնը շարունակել և հրաժարական տվեց։

Այս բանն, իհարկե, նրա օգտին ծառայեց։ Թեև հաղթողը ռուսներն էին, բայց թուրքերի առաջխաղացման հետևանքով տեղահան էին լինում Բասենի, Ալաշկերտի, մասնավորապես և Սալմաստի գավառի հայերը, ասորիները, որոնք մտնում էին ռուսական սահմանները փախստականների սոսկալի դրության մեջ՝ կորցրած իրենց ամբողջ կարողությունը, քաղցած և մերկ։ Սա առաջին անգամն էր, որ համաշխարհային պատերազմը ահագին բեռ էր բարձում Անդրկովկասի հայության վրա, որ պիտի հոգար այդ փախստական բազմության ապրուստը՝ կազմակերպելով հասարակական օգնություն՝ այլևայլ ձևերի տակ։ Ահա այս ասպարեզում Սամսոն Հարությունյանը լայն հնարավորություն էր ստանում զարգացնելու իր կազմակերպչական ընդունակությունները, որով և քավեց իր բյուրոյական մեղքերը՝ ծառայելով բնաջնջման ենթարկված մեր ժողովրդի ծով կարիքներին։

Այդ կարիքները դեռ նոր-նոր էին երևան գալիս 1914-1915-ի ձմռանը։ Դանդաղ ու անխնա, որպես ամեն շղթաներից արձակված մի պատուհաս, գարնանանում էր 1915 սև տարին։

Դ

Սամսոն Հարությունյանի հրաժարականից հետո Ազգային բյուրոն իսկապես նախագահ չունեցավ։ Մնում էին Մեսրոպ եպիսկոպոսը՝ իբրև պատվավոր նախագահ, և երկու փոխնախագահները՝ Հովսեփ Խունունցն ու Ալեքսանդր Խատիսյանը։ Այս նախագահությունն էլ վարում էր գործերը։ Ներքին ղեկավարությունը և դիվանը գտնվում էին Խունունցի ձեռքին, որ մի մաքուր և եռանդոտ հասարակական գործիչ էր, բայց խոշոր պատասխանատու դերի համար պետքական չէր։

Փետրվար ամսին Թիֆլիսում հավաքվեց նոր հայկական համագումար՝ բյուրոյին նոր լիազորություններ տալու համար։ Հավաքվել էր, եթե չեմ սխալվում, մոտ 80 պատգամավոր՝ զանազան կողմերից։ Եվ ահա մի նոր ու խոշոր գայթակղություն։ Բյուրոն օրինականացման ենթարկված չէր, նրան չէր ճանաչում կառավարությունը։ Բայց ինչպե՞ս էր թույլատրվում, որ մի անլեգալ հիմնարկություն ընդհանուր ժողովներ հրավիրի, վիճաբանությունների առարկա դառնա մամուլի մեջ, հրապարակային նիստեր կազմի առաջնորդարանում, զինվորական և քաղաքական հարցեր լուծի։ Այս բոլորը հնարավոր էր դառնում լոկ այն պատճառով, որ կոմս Վորոնցով-Դաշկովն անձնական վստահություն ուներ դեպի Մեսրոպ եպիսկոպոսը, որ և նախագահում էր ընդհանուր ժողովին։ Վրաց մամուլը մի քանի անգամ դժգոհություն հայտնեց, որ հայերին թույլ էր տրվում այդպիսի հասարակական ժողովներ, մինչդեռ վրացիները զուրկ են նման իրավունքից, բայց այդ դժգոհությունների վրա ուշադրություն դարձնող չեղավ։ Հայերն ունեն կամավորներ, իսկ վրացինե՞րը։ Հարցը կարճ էր կապվում։

Համագումարն ընդունեց և հաստատեց այն ամենն, ինչ արել էր բյուրոն մինչ այդ և ինչ անելու էր այնուհետև՝ ըստ նրա մտցրած առաջարկությունների, որոնց հեղինակը, իհարկե, մնում էր միշտ Դաշնակցությունը։ Տիրում էր ազգասիրական ոգևորությամբ բարձրացած տրամադրություն։ Այդ ժողովն, այո՛, ոչինչ չէր խնայում վաղուց տենչացած ազգային իդեալի իրականացման համար։ Բայց ժողովը միապաղաղ չէր. նա ուներ և օպոզիցիա, թեև համեստ՝ բաղկացած 2-3 հոգուց։ Դրանք Բաքվի հայ սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչներն էին։ Բաքվի հայ սոցիալ-դեմոկրատիան լրագրերում բողոքներ էր տպել բյուրոյի գործունեության դեմ՝ համարելով այն անպայման վնասակար հայ ժողովրդի համար. և այժմ էլ իր ներկայացուցիչներն էր ուղարկել համագումար՝ նույն բողոքն ու ընդդիմադրությունն ավելի ևս բարձրահնչյուն դարձնելու համար։ Իմ հիշողության մեջ մնացել է դրանցից մեկը միայն. իմ հայրենակից Նարիման Տեր-Ղազարյանը, որ իր ճառերի մեջ ասում էր, թե այդ բոլորից ոչինչ դուրս չի գա, թե թուրքահայոց հարցը պիտի լուծվի ուրիշ եղանակով և այլն։ Նրանք լավ էին ասում՝ սոցիալ-դեմոկրատները, դա մանավանդ այժմ լավ է երևում։ Բայց հայ սոցիալ-դեմոկրատները… Նրանք շատ էին ուշացել, շատ էին թույլ, և սա մի մեծ պակասություն էր հայ ժողովրդական կյանքի համար։ Մենք մեր հասարակական միտքը զարգացրել էինք չափազանց միակողմանի ուղղությամբ։ Գաղափարների զանազանակերպություններ եթե կային էլ մեր մեջ, ապա ամենքից մեծը, որ խեղդում ու տափակացնում էր մյուսներին, երեսուն տարիներից ի վեր մեր մեջ մտած դժբախտ ֆետիշիզմն էր՝ մի կողմում ֆիդայի, մյուս կողմում՝ կապիտալիստական Եվրոպա։ Նրանք գրեթե ուրիշ և ոչ մի բան չէին թույլ տալիս մեզ տեսնել մեր և համաշխարհային իրականության մեջ։ Եթե մարքսիստական գաղափարախոսությունը մեզանում գեթ կես մասով այնքան զարգացած լիներ, ինչքան էր, օրինակ, Վրաստանում, այն ժամանակ մենք, իհարկե, շատ կլինեինք բուժված մեր անառողջ ֆետիշիզմից։ Բայց ի՜նչ արած… Մեր ճակատագիրն էր այսպես. և այդ բողոքող, զգաստացնող ձայները հայկական համագումարի մեջ շատ էին թույլ, անհեղինակավոր…

Իսկ դեպքերը գահավիժորեն գնում էին կործանումից դեպի կործանում։ Հետզհետե բացվում էր, թե ինչ սոսկալի խաբեության զոհ էին դարձել հայերը՝ հավատալով ցարական կառավարությանը և իրենց վիճակը վստահելով նրան։ 1915-ի վաղ գարնանից Թուրքահայաստանում դաշնակցականները սկսում էին գործադրել Վորոնցով-Դաշկովի ծրագրի ամենադժոխային մասը՝ ապստամբությունները։ Սկիզբը դրվում էր Վանից։ Ապրիլի 14-ին Գևորգ կաթողիկոսը հեռագրում էր Վորոնցով-Դաշկովին, որ Թավրիզի առաջնորդից տեղեկություն է ստացվել, թե Թուրքիայում ապիլի 10-ից սկսվել է հայերի համատարած ջարդ։ Տաս հազար հայեր զենք են վերցրել և մեծ եռանդով կռվում են քրդերի ու թուրքերի դեմ։ Խնդրում էր, որ փոխարքան փութացնե ռուս զորքի արշավանքը դեպի Վան։ Այս հեռագիրը պարզ ցույց է տալիս, որ վաղօրոք եղել է պայմանավորում՝ ապստամբություն և արշավանք Վանի վրա։

Վանի հայությունը գրեթե մի ամիս ապստամբական կռիվներ մղեց թուրք զորքերի դեմ, և այդքան ժամանակամիջոցում ռուսական արշավանքը գնաց-հասավ Վան։ Արշավող զորաբանակի առջևից գնում էր Արարատյան կոչված կամավորական գունդը, որ զինվորական մեծ պատիվներով ճանապարհ էր դրվել խմբապետ Վարդանի գլխավոր հրամանատարությամբ։ Այդ արդեն մի խոշոր զորական կազմակերպություն էր՝ 2 հազար մարդուց բաղկացած, եթե չեմ սխալվում։ Գունդն իր կազմով և հանդերձանքով ահագին տպավորություն էր թողել հայ ազգաբնակչության վրա Երևանից մինչև սահմանագլուխ՝ ոգևորություն տարածելով նույնիսկ հասարակ գյուղական շրջաններում։ Ոգևորությունը համահայկական դարձավ մանավանդ այն ժամանակ, երբ մայիսի 6-ին ռուսաց զորքը Արարատյան գնդի ուղեկցությամբ մտավ Վան։ Այս դեպքի պատճառած հրճվանքը Թիֆլիսում արտահայտվեց մի ցույցով, որ տեղի ունեցավ Վանքի եկեղեցում։ Ռուսների ձեռքով Վանի նահանգապետ էր նշանակվել դաշնակցական խմբապետ Արամը, որ վաղուց գործում էր այնտեղ, հերոսի հռչակ էր ստացել և կոչվում էր Արամ-փաշա։ Այս հանգամանքն ավելի ևս խանդավառ ոգևորության աղբյուր դարձավ հայերի համար, իբրև առաջին օրինակ 5-6-րդ դարերից ի վեր և իբրև նմուշ, թե ապագա ինչ կազմակերպություն պիտի ստանա Թուրքահայաստանն ազատարար ցարի ձեռքից։

Սակայն, մինչ կատարվում էին այս հանդեսները՝ անարյուն հաղթական արշավանքները, ոգևորությունն ու ցնծությունները, կովկասյան բարձր հրամանատարության շրջանում խմբագրվում և օրինականացվում էր մի շատ նշանավոր պատմական վավերագիր, որը մերկացնում էր Հայոց հարցով խաղ բռնած ցարական կառավարության իսկական միտքը։ Ահա այն.

«Իսկականի վրա գրված է՝ համաձայն եմ՝

Կոմս Վորոնցով-Դաշկով

Հրամանատար

Կովկասյան բանակի

5 ապրիլի, 1915թ.

Թիվ 1482

Գործող բանակ։

Ներկայումս Կովկասյան բանակը, տեղական միջոցների սպառման և ուրիշ տեղերից բերելու դժվարության պատճառով, ձիերի կերի պակասություն է զգում։ Առանձին դժվարություն այս բանի մեջ ընկնում է այն զորքերի վրա, որոնք գտնվում են Ալաշկերտի հովտում։ Այս զորքերին ձիերի կեր հասցնելը չափազանց թանկ է նստում և պահանջում է ունենալ և պահել մեծ քանակությամբ փոխադրական

միջոցներ։ Մինչդեռ շուտով կգա ժամանակը, երբ Ալաշկերտի հովտի դաշտային մասերը և լեռների ստորոտները կծածկվեն խոտով, որը քաղելով կարելի է տեղն ու տեղը ստանալ ձիերի կերի ամենից շատ տեղ բռնող և ծանրաքաշ մասը՝ չոր խոտը։ Բոլորովին անհնար է այս նպատակով իրենց գործից կտրել զորքերին, ուստի անհրաժեշտ կհամարեի մասնավոր մարդկանցից կազմակերպել առանձին ընկերակցություններ (արտելներ), որոնց պարտավորությունը կլիներ շահագործել այն հողերը, որ թողել են քրդերն ու թուրքերը, և որոշ գնով ձիերի կեր տալ զորքերին։ Հողերը շահագործելու համար հայերն իրենց փախստականներով մտադիր են գրավել քրդերի և թուրքերի լքած հողերը։ Այս մտադրությունը ես համարում եմ անընդունելի այն պատճառով, որ հայերի զավթած հողերը պատերազմից հետո դժվար կլինի ետ վերցնել կամ թե ապացուցել, որ զավթածն իրենց չի պատկանում, որի ապացույցն է հայերի զավթումը ռուս-թուրքական պատերազմից հետո։

Չափազանց ցանկալի համարելով բնակեցնել սահմանամերձ վայրերը ռուսական տարրով՝ ես կարծում եմ, որ կարելի է մտցնել կյանքի մեջ մի ուրիշ միջոց, որ ավելի է համապատասխանում ռուսական շահերին։

Ձերդ պայծառափայլությանը հաճելի եղավ հաստատել իմ զեկուցումն այն մասին, թե անհրաժեշտ է այժմ իսկ դեպի թուրքերի զբաղեցրած սահմանները դուրս քշել Ալաշկերտի, Դիադինի և Բայազետի հովիտների այն բոլոր քրդերին, որոնք այս կամ այն կերպ մեզ դիմադրություն են ցույց տվել, իսկ ապագայում, երբ հիշյալ հովիտները կմտնեն Ռուսական կայսրության սահմանների մեջ, բնակեցնել դրանք Կուբանից և Դոնից գաղթածներով և այս միջոցով կազմել սահմանամերձ կազակություն։ Բայց բնակեցումը կարող է սկսվել միայն պատերազմի ավարտից և Ալաշկերտի ու Բայազետի հովիտները մեր հողերին կցելուց և գլխավորապես այն բանից հետո, երբ Դոնի ու Կուբանի կազակությունը կուղարկեն իրենց ներկայացուցիչներին և ստույգ տեղեկություններ կստանան վերոհիշյալ հողերի օգտավետության և հարստությունների մասին։

Ի նկատի առնելով վերոգրյալը, թվում է՝ անհրաժեշտ է այժմ իսկ կանչել Դոնից և Կուբանից բանվորական արտելներ՝ վերոհիշյալ հովիտների խոտը քաղելու և հավաքելու համար։ Այս արտելները, դեռ մինչև պատերազմի վերջը ծանոթանալով երկրին, կկատարեն գաղթողների ներկայացուցիչների դերը և կնախապատրաստեն գաղթականությանը, իսկ մեր զորքերի համար կպատրաստեն ձիերի կեր։

Եթե Ձերդ պայծառափայլությունն ընդունելի կհամարեք իմ ներկայացրած ծրագիրը, ցանկալի կլինի, որ բանվորների արտելները գային իրենց անասուններով և ձիերով, որպեսզի նրանց կերակրումը չընկներ առանց այդ էլ ոչ բազմաթիվ փոխադրական խմբերի վրա, իսկ ինքնապաշտպանության համար նրանց զենքեր բաժանվեին։

Իսկականը ստորագրել է հետևակազորի գեներալ՝ Յուդենիչ։

Զեկուցագիր Նորին պայծառափայլության Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին»։

Պարզ է, անշուշտ, թե ինչ էր կատարում «հայոց թագավորը»։ Մի կողմից նա հայ ժողովրդին նետում էր ապստամբության հրդեհի մեջ՝ խոստանալով դրա փոխարեն ազատագրել նրա հայրենիքը, իսկ մյուս կողմից՝ պատրաստում էր այդ հայրենիքը Ռուսաստանին միացնելու և կազակներով բնակեցնելու համար։ Սևհարյուրակային գեներալ Յուդենիչը կարգադրում էր փախստական հայերին հող չտալ Ալաշկերտի շրջանում, սպասում էր Դոնից և Կուբանից եկող մեծ գաղթականությանը, որ պիտի բռներ Արևելյան Եփրատի ավազանը և պիտի կոչվեր «Եփրատյան կազակություն»։ Նրանց համար ընդարձակ հողաբաժիններ պատրաստելու համար պետք էր պակասեցնել հայերի թիվն իրենց իսկ հայրենիքում։ Այստեղից մի քայլ էր մնում մինչև Լոբանով-Ռոստովսկու կտակը՝ Հայաստանն առանց հայերի։ Եվ այս բանը դժվար չէր մի Յուդենիչի համար, քանի որ նրա ծրագրերի վրա ինքը՝ «հայոց թագավորը», ինքը՝ փոխարքա և բանակի գլխավոր հրամանատար Վորոնցով-Դաշկովը գրում էր իր սեփական ձեռքով՝ «Համաձայն եմ»։ Հայերին այդպես խաբելու և ոչնչացնելու ծրագիրն, անշուշտ, Նիկոլայ Բ-ն էր բերել Թիֆլիս, հայ ժողովրդի վաղեմի և արյունարբու թշնամին, որ նոր միայն հագել էր գառան մորթի։

Իմ այս ասածները ենթադրություններ չեն։ Հենց նույն այդ ժամանակներից, երբ Յուդենիչի հռչակավոր հղացումն էր թղթի վրա արձանագրվում՝ 1915թ. ապրիլից, ռուսական բանակի վերաբերմունքն այնքան է վատանում դեպի հայ ժողովուրդը, որ հայ կամավորական շարժման պարագլուխները՝ Գևորգ կաթողիկոսը և Ազգային բյուրոյի նախագահությունն այլևս ավելորդ են համարում լռել և իրենց գանգատներն են գրավոր ուղարկում «խորապես հարգված կոմս Իլարիոն Իվանովիչին», քանի որ այս հին աղվեսը Նիկոլայի գնալուց հետո փակել էր իր դռներն իր սիրելիների առջև՝ պատրվակ բռնելով իր հիվանդությունը։ Այսպես, հունիսի 4-ին գրած իր նամակում կաթողիկոսը դառնապես գանգատվում էր գեներալ Աբացիևի վրա, որն ուղղակի հալածում էր Մանազկերտի շրջանի հայերին։ Քաղում եմ այդ նամակից հետևյալ կտորը.

«Համաձայն այն տեղեկությունների, որ ես ստացել եմ իմ տեղական ներկայացուցիչներից, Թուրքահայաստանի այս շրջանում ոչ միայն հայերին չի ցույց տրվում որևէ օգնություն կամ պաշտպանություն բռնություններից, այլև կատարյալ արհամարհանքի է մատնվում ամեն մի խնդիրք քրիստոնյա ազգաբնակչության պաշտպանության մասին, մի բան, որ առիթ է տալիս քուրդ ցեղերի գլխավորներին և չերքեզներին շարունակել անպատիժ հարստահարություններ կատարել անպաշտպան քրիստոնյաների վրա։ Մինչ հայ ազգաբնակչությանն արգելված է մտնել Մանազկերտի բերդային շրջանը, զինված մահմեդականները, չերքեզները, որոնք դեռ երեկ դավադրորեն հարձակվում էին ռուսաց զորքերի վրա, բոլորովին ազատ զբոսնում են՝ ոտքից գլուխ զինված, և անպատիժ կերպով նոր հարձակումներ

են գործում հայոց գյուղերի վրա։ Իսկ այն հայերը, որոնք զենքը ձեռքին կռվել են թշնամու դեմ, խուզարկությունների են ենթարկվում և զինաթափ են արվում, և նրանց բնական ձգտումները՝ կռվելու ընդհանուր թշնամու դեմ ռուսաց փառավոր ազատարար բանակի շարքերում իբրև կամավորներ՝ հանդիպում են բացարձակ թշնամական վերաբերմունքի, որ արտահայտվում է նրանց ազգային զգացմունքների և ինքնասիրության համար վիրավորական ձևերի մեջ։ Այս բոլորից հետո հասկանալի է այն անհանգստությունն ու երկյուղը, որոնցով բռնված է հիշյալ շրջանի հայ ազգաբնակչությունը»։

Միևնույն գանգատավոր շեշտով է լցված և այն հավաքական նամակը, որ հունիսի 4-ին Վորոնցով-Դաշկովին ուղարկեցին Մեսրոպ եպիսկոպոսը, Ալեքսանդր Խատիսյանը և Սամսոն Հարությունյանը՝ իբրև մարդիկ, որոնք, ինչպես ասում էին նրանք, դեռ մինչև Թուրքիայի հետ պատերազմ սկսվելը, Նորին պայծառափայլության բարձր վստահությամբ լիազորված են եղել կազմակերպելու հայ կամավորական խմբերը։ Պատահել էր մի այնպիսի բան, որ կարող էր զարմանալի համարվել միայն չափազանց միամիտների համար։ Վանի զորքերի հրամանատար գեներալ Նիկոլաևից ստացվել էր հեռագիր, թե հայ կամավորները կրակ են բաց անում ռուսական զորքերի դեմ, զբաղվում են կողոպուտով և թալանով։ Կովկասյան շտաբի կողմից այս հեռագիրը պաշտոնապես հաղորդվում է Խատիսյանին՝ հարակցելով, որ այս տեղեկության հետևանքով փոխարքան հրամայել է դադարեցնել հայ նոր կամավորական խմբերի կազմակերպումը։ Վանից եկած լուրը բոլորովին անհավատալի էր թվում բյուրոյին, քանի որ նույն գեներալ Նիկոլաևը, գրեթե միաժամանակ, նամակով հայտնում էր նույն Խատիսյանին իր կատարյալ գոհունակությունը հայ կամավորական խմբերի վերաբերմամբ։ Ուստի բյուրոն իր փոխանախագահ Խունունցին և անդամներից բանաստեղծ Հովհաննես Թումանյանին ուղարկեց Վան՝ քննություն կատարելու համար։ Խունունցն ու Թումանյանը Վանից բերեցին հարուստ տեղեկություններ, որոնց մեջ առաջին տեղը բռնում էր այն, որ գեներալ Նիկոլաևը հայտնել էր, թե ինքն այդպիսի բան չի գրել հայ կամավորների մասին և թե իր հեռագիրը փոփոխման է ենթարկվել հավանորեն ճանապարհին, որ նշանակում էր, թե կա՛մ 4-րդ զորաբանակի (գեն. Օգանովսկի), կա՛մ ընդհանուր հրամանատարի (գեն. Յուդենիչ) շտաբում։ Ահա, հիմնված գլխավորապես Նիկոլաևի հեռագրի կեղծման վրա, բայց զինված և ուրիշ շատ փաստերով, որ բերել էին բյուրոյի երկու պատգամավորները, երեք լիազորված անձինք (Մեսրոպ եպիսկոպոս, Խատիսյան և Հարությունյան) իրենց միաբան նամակի մեջ նկարագրեցին ստեղծված դրությունն այսպես.

«Բոլոր վերոբերյալից պետք է հետևեցնել. 1) որ գեներալ Նիկոլաևն իր մեծավորներին չի ուղարկել հայտարարություններ վերև հիշատակված փաստերի մասին, որոնք վերագրվում են հայ կամավորներին, 2) դեպք չի եղել, որ հայ կամավորները հրացան կրակեն ռուսաց զորքերի վրա, ինչպես նաև դեպքեր չեն եղել, որ կամավորները ավազակություններ կամ թալաններ կատարեն։ Եվ սակայն

այսպիսի անտեղի և անարդար մեղադրանքը նախ և առաջ ստվեր է գցում հայ կամավորական խմբերի անձնվեր գործունեության վրա. խմբերի, որոնք աչքի ընկնող քաջասրտությամբ կռվում են ռուս քաջարի բանակի առաջապահ շարքերում, երկրորդ՝ ստեղծում է ատելության, անբարյացակամության և գրգռման մթնոլորտ զորքերի մեջ՝ և այս ո՛չ միայն հայ խմբերի վերաբերմամբ, բայց նույնպես և ամբողջ հայ ժողովրդի վերաբերմամբ, երրորդ՝ հայ հասարակության մեջ այն առաջ է բերում դառնության և խորին վիրավորանքի զգացմունք ներկա պատմական րոպեին, երբ բոլոր երկրների ամբողջ հայ ժողովուրդը պատրաստակամությամբ զոհում է ամեն ինչ ռուսաց զորքերի հաջողության համար՝ տեսնելով այդ հաջողության մեջ թուրքահայերի փրկությունը թուրքական բազմադարյա լծից… Միայն հանգամանորեն քննություն կատարելու և ժամանակին համապատասխան միջոցներ ձեռք անելու ճանապարհով է, որ կարելի կլինի դադարեցնել բանակի խորքերում անհասկանալի անբարյացակամության և անառիթ թշնամության ազդեցության տակ ծագած ինչ-որ անառողջ հոսանքը, որ թեև այժմ, ճիշտ է, սահմանափակ չափերի մեջ է, բայց այնքան գործունյա է այդ զգացմունքների արտահայտման մեջ դեպի հայ կամավորների աշխատանքը, որ բավական է այս կամ այն կամավորի կողմից մի շատ փոքրիկ խանգարում դիսցիպլինայի և կարգի, որպեսզի բանակի այդ շրջաններում իսկույն ձայն բարձրացնի անարդար-բացասական և բացահայտորեն կրքոտ քննադատություն ոչ միայն մեր կամավորների հասցեին, որոնք քաջարիորեն տանում են հայրենիքի համար մարտնչողների հետ հավասար կերպով ցարական ծառայությունը, բայց և ամբողջ հայ ժողովրդի հասցեին, որին նրանք պատկանում են։ Մինչև իսկ հայ փախստականները՝ անինչացած և խորապես դժբախտ, որոնք կորցրել են այս պատերազմի մեջ իրենց ամբողջ ստացվածքը և մերձավորներին և փախչում են վայրենի քրդերի և թուրքական ասկյարների հալածանքներից, ամեն տեղ չեն գտնում այնքան բնական պաշտպանություն և հովանավորություն։

…Գործի պարզության համար մեզ թույլ ենք տալիս նշել մի քանի դեպքեր, որոնք պայծառորեն պատկերացնում են այն վերաբերմունքը, որ ունեն դեպի հայերը առանձին մասերի գլխավոր հանդիսացող մի քանի օֆիցերներ։ Այսպես՝ 1) չնայած, որ գեներալ Նիկոլաևը բազմիցս կարգադրություններ է արել, որոնցով արգելվում է որևիցե պատրվակով զենք խլել հայերից, վերջիններիս զինաթափ անելու դեպքերը նրան ստորադրված պաշտոնյաների կողմից կրկնվում են՝ առաջացնելով բարձրաձայն տրտունջ և անբավականություն հայ ազգաբնակչության մեջ, որ իր կյանքի ներկա երկյուղալից և ճգնաժամային միջոցին փրկություն որոնում է զենքի մեջ բացառապես, ինչպես ինքնապաշտպանության գործիքի մեջ։ 2) Քուրդ ավազակային հրոսակախմբերի առաջնորդներից մի քանիսը, որոնք մասնակցել են Վանի շրջանում նորերս տեղի ունեցած հայկական սարսափելի ջարդերի մեջ, այժմ գտնվում են մեր զորաբաժինների մեջ ինչպես պատվավոր ռազմագերիներ։ Այսպիսի քուրդ ավազակներից մեկը՝ Ալի-բեկը, Կարաքենդ գյուղից, հայտնի կազմակերպողը հայերի արյունոտ կոտորածի Բայազետի շրջանում, իր բոլոր մեղսակիցների հետ

գերի է ընկել մեր զորքերի ձեռքը և ապրում է ազատ՝ վայելելով իրեն շրջապատող անձանց ուշադրության բոլոր նշանները։

Պե՞տք է ավելացնել սրան, թե դեպի ոճրագործներն ունեցած այսպիսի վերաբերմունքը կարող է ծառայել իբրև խրախուսանք քրդական աշիրեթների համար՝ շարունակելու համար իրենց գործունեությունը հայերի կյանքի և գույքի դեմ։ Այդ բաշիբոզուկների դեմքերը տեսնելը առաջացնում է խոր վրդովմունք և հուզմունք տեղական հայերի մեջ, որոնք իշխանությունների այդպիսի զիջող վերաբերմունքի մեջ դեպի այդ տեսակ դեմքերը հեգնանք են տեսնում ծվատված մի ժողովրդի զգացմունքի վրա….

Իսկ սրա հետ մի շարքում ի՜նչ վիրավորական հակասություն է Բերկրի-Կալեում մոտ ժամանակներս տեղի ունեցած 3 հայերի մահապատիժը, որոնք կախվել են այն պատճառով, որ հրացանաձգություն են սկսել քրդերի հետ, որոնք իջնում էին սարերից՝ տարածության հեռավորության պատճառով չնկատելով, թե նրանց մեջ 5 թե 6 կազակներ էին գտնվում, որոնք ուղեկցում էին քրդերին Բերկրի-Կալե։ Այստեղ ակնհայտ է, տեղի ուներ միայն մի տխուր թյուրիմացնություն, և հրացանաձգությունն էլ կազակների համար չունեցավ ոչ մի հետևանք։ Բայց տեղական զորամասի հրամանատար Հոհենդորֆը (ծագումով գերմանացի) գործին ուրիշ կերպ նայեց, իրենից բարձր իշխանությանը հայտնեց այնպիսի իմաստով, որ հետո հիմնվեց զինվորական-դաշտային դատարան, որ իր հերթին ուշադրություն չդարձրեց այն բանի վրա, որ այդտեղ չէր կարող լինել և չկար մահապատժի ենթարկվածների կողմից ո՛չ չար դիտավորություն, ո՛չ, մանավանդ, դիտավորություն հրացան արձակելու ռուս զինվորների վրա, որոնց հետ կողք կողքի տված կռիվ են մղում իրենց ընդհանուր թշնամու դեմ»։

Թունավոր մթնոլորտը, կասկած չկա, ստեղծված-վերջացած էր։ Ցարական զորքերի համար հայը ավտոնոմիստ էր, և եթե նրան մորթում էին, այդ բանին կարելի էր միայն հանդիսատես լինել և ոչ միայն չվրդովվել, այլև բարեկամություն անել կոտորող քրդերի հետ։ Պատմում էին, թե ռուս սպաները հիացած էին քրդերի առատաձեռնության վրա՝ տեսնելով, թե որքան ոչխար, յուղ ու պանիր էին նրանք բերում իրենց համար։

Այսպես էր իրականությունը, որ անասելի սարսափներ էր պատրաստել հայ ժողովրդի համար։ Նրան խաբում էին, և նա խաբվում էր անվերջ։ Ինչո՞ւ զարմանալ մի Վորոնցով-Դաշկովի վրա, երբ Պետերբուրգի կենտրոնական կառավարությունն էր մեծագույն խաբեբան։ Նույն այս 1915-ի սկզբներին էր, որ ռուսաց արտաքին գործերի մինիստրությունը հրատարակեց «Նարնջագույն գրքի» մի հատորը, որի մեջ ամփոփված էին 1912-1914 թվականների բոլոր գրագրությունները Հայոց հարցի վերաբերմամբ։ Այստեղ էր ռեֆորմների ռուսական ծրագիրը։ Այստեղ էր, որ Կ.Պոլսի ռուսական դեսպանը հայտարարում էր իր պաշտոնական գրության մեջ, թե Հայոց

հարցը չի լուծվել, բայց դրվել է լուծման ճանապարհի վրա, որով անցել է Բուլղարական հարցը։ Պետական դումայի մեջ մինիստր Սազոնովը մատուցում էր «Նարնջագույն գիրքը», լսում էին և այլ ճառեր, կայանում էր որոշում։

Եվ այս բոլորն այն ժամանակ, երբ գեներալ Յուդենիչը կցում էր Ռուսաստանին Ալաշկերտի, Դիադինի և Բայազետի հովիտները, բնակեցնում էր այնտեղ Դոնի և Կուբանի կազակներին և զրկում էր փախստական հայերին այդտեղ հող ստանալու իրավունքից։

Ե

Եվ այսպես, 1915-ի գարնանը և ամռանը թուրքահայերի գլխին խտացած էր երկու դժոխային վտանգ. երկուսն էլ հղացում ռուս ցարական կառավարության՝ ապստամբություն և ռուսական բանակի անտարբեր, նույնիսկ թշնամական-յուդենիչական վերաբերմունք։ Երկուսն էլ արյան փոթորիկներ դարձան թուրքահայ ժողովրդին արմատախիլ անելու, բնովին ջնջելու համար։

Թուրք կառավարությունը պատրաստ էր սկսել, բայց նրան հարկավոր էին առիթներ, պատրվակներ։ Եվ այդ առիթները տալիս էին հայերը, ինչպես տվել էին միշտ։ Զուր չէր, որ նրանց մեջ գոյություն ուներ երկու հեղափոխական կուսակցություն՝ իրար հակառակորդ, իրար դեմ կատաղի թշնամությամբ լցված, բայց գործողությունների եղանակով, աշխարհայացքներով իրար հետ եղբայրացած, իրար խիստ հարազատ։ Եվ ահա դրանք էին դաշնակցականներն ու հնչակյանները, որ ամենայն եռանդով ներկայացնում էին Թուրքահայաստանը ապստամբած դրության մեջ։ Բյուրոյի ժողովներում միայն ես էի, որ ասում էի, թե եթե թուրքահայերն իսկապես ապստամբած են, այն ժամանակ թուրք կառավարությունը, ինչպես և յուրաքանչյուր կառավարություն աշխարհի վրա, իրավունք է ստանում զսպելու այդ ապստամբությունն իր իմացած միջոցներով։ Եվ որովհետև թուրք կառավարության իմացած միջոցը միայն կոտորածն էր, ուստի, պահանջվում էր ցույց տալ, թե որքա՞ն ճիշտ են լրագրերի մեջ մի-մի անգամ սպրդացող լուրերը հայերի ապստամբության մասին։ Բայց ինձ դաշնակցական անդամները պատասխանում էին, թե լրագրերը ստում են (ստում էր, ուրեմն, և նրանց սեփական «Հորիզոնը»), թե ապստամբություն չկա, այլ կա միայն կոտորած։ Ինչո՞ւ էին ծածկում իրողությունը, երևի լավ էին զգում, թե ինչ սարսափելի գործի են ձեռնարկել Վորոնցով-Դաշկովի չարաղետ ներշնչումներով։ Թուրք կառավարության հրատարակած վավերագրերն են, որ ցույց են տալիս, որ այդ կառավարությունն ի վիճակի էր իր ձեռքում ունեցած հայկական աղբյուրներով միանգամայն ապացուցած լինել հայերի ընդհանուր ապստամբությունը։ Այդ աղբյուրները արտասահմանում հրատարակվող հեղափոխական թերթերն էին, որոնք աշխատում էին իրար գերազանցել հաղորդած լուրերի առատությամբ։ Արդեն ասել եմ՝ կոնսպիրացիայի ժողովուրդ չենք, կտրի ժողովուրդ ենք, հրապարակ ենք բերում ինչ ունենք, նույնիսկ այն, ինչ չունենք։ Միայն

«Հայաստան» թերթը (եթե չեմ սխալվում, հրատարակվում էր Սոֆիայի մեջ) որքա՜ն տեղեկություններ է տվել թուրքաց շտաբի խուզարկու բաժնին։ Ահա նմուշներ.

«Մոկսի մեջ ապստամբությունը մեկ ու կես ամիսե ավելի տևեց։ Մուշի մեջ ապստամբությունը, Ռուբենի ղեկավարությամբ, պայթեցավ նոր ուժով։ Ապստամբները ելնելով քաղաքեն, ուր Էրզրումեն 8 հազար ասկյար ղրկված էր, անտառապատ լեռներու մեջ մասնակի կռիվ կմղեն»։

«Սասունի մեջ հայ խումբերը քաշված են լեռները և ցույց կուտան կորովի դրմադրություն։ Մուշի և շրջակայից հայերը ընդհարվեր են քուրդերու հետ։ Վանին մեջ կշարունակվին հայերու ընդհարումները զորքերու հետ։ Նույնը և վիլայեթին և մանավանդ Շատախին մեջ, ուր հայ խումբերը կշարունակին կռվել զորքերու և քուրդերու հետ։ Ապստամբությունեն մտահոգ թուրքերը և զորքերը կքալեն Մուշին վրա»։

«Խաչատուր Բոնապարտյան, որ ութ ամիսներ Էրզրումի թուրք բանակին մեջ ծառայած էր իբր բժիշկ, իր ընկերներու հետ ապրիլի կեսերին ձիով փախած է թուրք բանակեն և, Ծանծաղ գետն անցնելով, անձանատուր եղած է ռուսներուն։ Էրզրումի օսմանյան բանակին հայ զինվորներն ու զինվորական սպաները իրենց զենքով կանցնեին ռուսական ճակատը, զենքերնին կդարձնեին թուրք բանակի դեմ»…

Բայց մենք ունենք և ավելի դրական ու մանրամասն հավաստիացում հայկական ապստամբության մասին։ 1915-ի ամառվա սարսափելի անցքերի տպավորության տակ Ազգային բյուրոյի դաշնակցական անդամներից մեկը մի մանրամասն և փաստալից զեկուցում կազմեց՝ ցույց տալու համար, թե ի՛նչ էին հայերը Ռուսաստանի համար այս պատերազմի ընթացքում և թե փոխարենն ի՛նչ ստացան ռուսներից։ Դառնությամբ լցված դաշնակը շատ կծու ճշմարտություններ էր ասում, միանգամայն ուշացած, իհարկե։ Ես կբերեմ մի հատված այդ ռուսերեն գրությունից, բայց նախապես կխնդրեմ ընթերցողին չմոռանալ, որ յուրաքանչյուր դաշնակցական համարում էր Դաշնակցությունը հայ ժողովրդի ամբողջությունը, և այդ պատճառով՝ ինչ որ անում էր Դաշնակցությունը, համարվում էր հայ ժողովրդի արած։ Այսպես պետք է նկատել և զուտ դաշնակցական ձեռնարկությունը՝ 1915-ի խելագար ապստամբությունները… Ահա ինչ էր ասում այդ ընդարձակ զեկուցումը.

«Եվ իրենց անձնվիրությունը Ռուսաստանին հայերը ցուցահանել են ոչ թե բառերով կազմված զեղումների, ոչ թե ճառերի և դեկլարացիաների մեջ, այլ վճռական և չափազանց պատասխանատու գործողությունների մեջ։ Ռուսաստանում նրանք կազմակերպեցին իրենց պետական կամավորական զորախմբերը, Թուրքիայում բարձրացրին ապստամբության դրոշակը։

Այս երկու գործողություններով նրանք որոշեցին իրենց դրությունը, իրենց վերաբերմունքը դեպի կռվող կողմերը։

Նրանք կանգնեցին մի ճանապարհի վրա, որով այժմ պիտի գնան մինչև վերջը, ուր որ էլ տանի նրանց այդ վերջը։ Նրանց համար այլևս վերադարձ չկա, եթե նույնիսկ նրանք կամենային էլ ետ դառնալ։ Սրա մեջ է նրանց հավատարմության մեծագույն երաշխիքը։ Իրենց ամբողջ ապագան նրանք կապել են անքակտելիորեն ռուսաց զենքի հաջողության հետ. Ռուսաստանի պարտությունը կբերեր իր ետևից նրանց անխուսափելի կործանումը, որովհետև հաղթված կամ ոչ վերջնականապես ջարդված Թուրքիայից նրանք չեն կարող սպասել իրենց համար խնայում։ Թուրքիան բավականաչափ հիմքեր ունի անխնա լինելու. կամավորական խմբերի կազմակերպումը, բոլորովին անկախ նրանց թվից ու պատերազմի մեջ ունեցած դերից, մի բացարձակ մարտահրավեր է, որ հայերը շպրտեցին Թուրքիայի դեմքին, և նա այս չի մոռանա, չի ների նրանց այս մարտահրավերը, մանավանդ որ կամավորները երեք քառորդ մասով բաղկացած են հենց իր հպատակներից։

Իրենց մոտ՝ տանը, հայերը կատարել են ամենածանր հանցանքներից այն կրիտիկական րոպեին, երբ խաղաթղթի վրա է դրված Թուրքիայի գոյությունն անգամ, նրանք դավաճանեցին պետությանը, զենքը ձեռքին ապստամբեցին նրա դեմ և բացահայտ կերպով անձնատուր եղան թշնամուն։ Այսպիսի գործողությունները չեն ներվում, և նրանց հետևանքները ահա տեսնում ենք։ Թուրքիայում հայերն այս րոպեին էլ դրված են օրենքից դուրս։ Նրանց կոտորում են հազարներով կամ քշում են հեռավոր անապատները սովից մեռնելու. նրանց գույքերը հափշտակում են կամ ոչնչացնում, տները քանդում են և այրում։ Կասկածների ոչ մի տեղ չի մնում, որ Հայաստանը հայերից մաքրելու արյունոտ խնդիրը մի անգամ էլ դրված է հերթի։ Սրա մեջ մեզ համար ոչ մի անսպասելի բան չկա։ Մենք գիտեինք՝ ինչ բանի էինք գնում, ինչ սարսափելի փորձության ենք ենթարկում մեզ։ Բայց մենք գնում էինք, որովհետև հասկանում էինք, թե միմիայն մեծ զոհերի միջոցով կարող ենք լուծել մեր ազգային խնդիրը Թուրքիայում։ Մի տարի սրանից առաջ, թուրքահայերը կարող էին ազատորեն ընտրություն անել Ռուսաստանի և Թուրքիայի վերաբերմամբ. Թուրքիայի, որ փորձում էր գայթակղեցնել նրանց ամենագրավիչ հեռանկարներով։ Հայերն իհարկե գիտեին, թե ինչ գին ունեին այդ խոստումները։ Բայց նրանք շատ լավ գիտեին և այն, որ մի պարզ օրինապահությամբ կարող էին փրկել իրենց կյանքը և գույքը ժողովուրդների առաջիկա վիթխարի ընդհարման միջոցին։ Եվ, այնուամենայնիվ, վտանգելով ամեն ինչ, վճռականապես երես դարձրին Թուրքիայից։ Նրանք հավատում էին անկեղծորեն և խորապես Ռուսաստանի պատմական առաքելությանը Մերձավոր արևելքում, հավատում էին, թե իրենց անձնվիրությունը գնահատված կլինի, որ իրենց արյունով ողողված հայկական հողը կվերածնվի նոր կյանքի համար։ Կարելի է, որ սրա մեջ արտահայտվում էր նրանց քաղաքական կարճատեսությունը, ռոմանտիկական ոգևորությունը, պատմական կոնյուկտուրայի (դասավորումների) անհասկանալը, բայց ընտրությունը կատարված է, և վերադարձ չկա։ Այսուհետև հայերին այլևս անկարելի է ապրել ո՛չ Թուրքիայում, ո՛չ էլ Թուրքիայի հետ. նրանց մնում է կա՛մ բաժանվել և կա՛մ ոչնչանալ»։

Եվ նրանք ոչնչացան։ Որովհետև հավատացել էին։ Հավատացել էին անվերապահորեն, երեխայի պես, ինչպես միշտ տասնյակ տարիների ընթացքում։ Անտանտը, քանի կարելի էր և պետք էր խաբել հայերին, համարում էր նրանց իր դաշնակիցը։ Այսպես էին անվանում նրանց անգլիական, ֆրանսիական և ռուսական լրագրերը։ Այս բանին, դժբախտաբար, հավատացին հայերը։ Բայց ի՜նչ անամոթ խաբեբայություն… Պատերազմի ընթացքում նրանք իրար հետևից, հերթով ծախեցին իրենց այդ «դաշնակցին»։ Առաջին հերթում Նիկոլայի Ռուսաստանն էր։

Իմ գործը չէ այստեղ թեկուզ ամենահամառոտ կերպով ներկայացնել թուրքերի ձեռքով 1915-ին կատարված հայկական ջարդերն ու բռնի տեղահանությունները, որոնց զոհերի թիվը եվրոպական աղբյուրները հասցնում են, միջին թվով, մի միլիոնի։ Այս տեսակ մի ոճիր դեռ չէր կատարվել մարդ կոչված գազանի ձեռքով։ Միանգամից, մի քանի ամսվա ընթացքում, անհետացավ մի ամբողջ ժողովուրդ, որ տասնյակ դարերով ապրում էր իր հողի վրա։ Արյունով գրված հատորների մեջ կարող է ամփոփվել այս ոճիրը։ Շատ հատորներ գրվել են եվրոպացի «հայասերների» ձեռքով, շատերն էլ պիտի գրվեն։ Թողնենք այս։ Նորից գանք այս մեծ դժբախտության աղբյուրին՝ ցարիզմի կողմից ներշնչված ապստամբությանը։

Հավատա՞նք արդյոք դաշնակցական զեկուցման այն բոլոր հավաստիացումներին, որոնք բերված են վերևում։ Պետք է հավատալ, բայց այն պայմանով, որ այդ բոլորը համարվի զուտ դաշնակցական գաղափարախոսություն, առանց այն փոխադրելու հայ ժողովրդի վրա։ Ամեն մի ժողովուրդ ունի ապրելու ուժեղ և առողջ բնազդ. ֆիդայական արկածախնդրությունը ժողովրդական բնազդ չէ։ Մասսան, հոծ բազմությունը կշռել, չափել գիտե։ Եթե մի Վան ապստամբում էր՝ հույսը դրած իր հայերի մեծ թվի վրա և մանավանդ այն բանի վրա, որ ռուսաց բանակը մոտ է և գալու է իրեն օգնության, ինչի՞ վրա կարող էին հույս դնել մի Ուրֆա, մի Շապին-Գարահիսար, երբ այդ տեղերում հայությունը չնչին փոքրամասնություն էր կազմում թուրքաց ազգաբնակչության մեջ։ Ամեն առողջ դատողություն ասում է, թե այդ տեղերում ապստամբություն չպիտի լիներ։ Բայց եթե եղավ, պատճառը որոնեցեք ոչ թե խեղճ ու կրակ աշխատավոր ժողովրդի, այլ այդ տեղերում բույն դրած հեղափոխական կազմակերպությունների մեջ։ 1915-ին ֆիդայական մտայնության գերագույն տիրապետություն էր։

Դիմենք այժմ ռուսական ծրագրի երկրորդ կողմին՝ ռուսական բանակին։ Ո՞վ կարող էր հնար եղածին չափ ազատել հայերին թուրքական կոտորածներից։ Ոչ ոք, բացի ռուսական զորքերից։ Բայց մենք տեսանք, որ նա լոկ հանդիսատեսի դեր էր ստանձնել և կոտորածներ կատարող քուրդ բեյերը ռուս հրամանատարների պատվավոր հյուրերն էին։ Այսպիսի բան չէր կարող լինել փոքրիշատե քաղաքակրթված մի երկրի զորքի մեջ, եթե այդտեղ վաղօրոք կատարված չլիներ պատշաճավոր ագիտացիա հայերի դեմ։ Չմոռանանք, որ այդ զորքի հրամանատարը

Յուդենիչն էր, իսկ Յուդենիչի ամբողջ էությունը պարզված է նրա թղթի մեջ, որ ես բերեցի վերևում։

Ես նոր բերեցի նաև դաշնակցական զեկուցման այն կտորը, որի մեջ բացատրված է, թե ինչեր տվին հայերը ռուսներին։ Այժմ տեսնենք՝ ինչպես է ներկայացնում նույն վավերագիրն այն վերաբերմունքը, որ այդ բոլորի փոխարեն տեսնում էին հայերը ռուս զորքի կողմից։ Հուլիսի կեսին ռուսական զորքերը հաղթականորեն առաջ էին տանում իրենց արշավանքը դեպի Բիթլիս և Մուշ։ Թուրք զորքերը, նահանջելով ռուսաց բանակի առաջ, իրենց ամբողջ կատաղությունը թոթափում էին հայ ազգաբնակչության վրա։ Սկսվեց Մուշի և նրա դաշտի հայերի սոսկալի կոտորածը. 90 հայ գյուղեր՝ 100 հազար ազգաբնակչությամբ ոչնչացվեցին։ Ռուսական զորքերն այդ ժամանակ հասել էին Նեմրութ սարին և նրանց մնում էր երկու ասպարեզ անցնել, Մուշ հասնելու համար։ Այսպիսով նրանք փրկած կլինեին մի քանի տասնյակ հազար հայերի կյանք։ Բայց այդ առաջ շարժումը չարին, և Մուշի հռչակավոր դաշտը, այն, որ իր կատարած խոշոր կուլտուրական դերով դեռ հին ժամանակներին ստացել էր «Հայոց տուն» անունը, բոլորովին մաքրվեց հայերից։

Բայց այս անտարբերությունը դեռ կարելի էր բացատրել զանազան ռազմական նկատառումներով։ Գրեթե միաժամանակ սկսվեց մի անհասկանալի խուճապային նահանջ Վանից և Մանազկերտից մինչև ռուսական սահմանները։ Այդ շարժումն այդպես էլ մնաց առեղծվածային. ոչ ոք չէր տեսնում իրական, ճշմարիտ ու լուրջ հիմքեր, և այդ պատճառով ամենքի համար այդ շարժումը շատ կասկածելի էր, ինչ-որ հետին մտքով կատարված։ Նահանջը հանկարծական էր. Վանում այն հայտարարվեց հուլիսի 16-ին, ընդամենը մի քանի ժամ ժամանակ էր մնում, որ ժողովուրդն իր գլխի ճարը տեսներ։ Եվ այն իր անակնկալության, իր շտապողականության պատճառով դարձավ կործանում հայ ժողովրդի այն մասի համար, որ ռուսների գրաված տեղերում ազատ էր մնացել կոտորածներից։ Ամեն մի թշվառական, որ շարժվելու ընդունակություն ուներ, ոտքի կանգնեց և սկսեց փախչել նահանջող զորքի հետևից, մերկ ու բոբիկ, քաղցած ու սարսափով լցված։ Ոչ մի ուշադրություն զորահրամանատարների կողմից դեպի այդ ուժասպառ բազմությունը, որ գնում էր իր տանջանքի ճանապարհը՝ աջ ու ձախ դիակներ փռելով։ Նրան օգնող չկար, նրան նույնիսկ չէին թողնում զորքից առաջ ընկնել… Եվ ակամա հիշողության մեջ զարթնում էր մի ռուս ավելի փոքրաթիվ բանակ 1877թ. ամռանն Ալաշկերտի հովտում, որ նահանջում էր գրեթե երեք կողմից արդեն շրջապատված թշնամիներով, բայց տանում էր իր հետ հինգ հազար տուն հայ փախստականներ և նրա ծերունի հրամանատարները՝ Տեր-Ղուկասովը, չէր շարժվում տեղից, մինչև որ առաջ չէր ուղարկում փախստականի վերջին սայլը։ Այժմ Յուդենիչի դարն էր։ Եվ փախստական ժողովրդից միայն մոտ 100 հազար հոգի մտավ Իգդիր։ Այստեղ՝ Արարատյան երկրում տիֆը, թանչը, սովը և հարյուրավոր այլ թշնամիներ սկսեցին հնձել փախստական շարքերը։ Մեռնում էր թուրքահայ ժողովուրդը։

Երկու շաբաթ հազիվ անցած այդ նահանջից՝ ռուսական զորքերը նորից սկսեցին առաջ շարժվել դեպի Վան և Մանազկերտ՝ համարյա ոչ մի դիմադրության չհանդիպելով։ Էլ ինչի՞ համար էր այս հետ ու առաջ քայլելը։ Նահանջի ժամանակ լուրեր էին տարածել, թե թուրքական թարմ դիվիզիաներ են գալիս դեպի Վանա լճի հյուսիսային ափը՝ ռուսական բանակի նահանջի ճանապարհը կտրելու համար։ Բայց այդ առասպելական դիվիզիաները չերևացին և ոչ մի տեղ։ Եվ համատարած կարծիք էր ստեղծվում հայերի մեջ, թե այս ամբողջ նահանջը դիտավորյալ էր, առանց ստիպողական պատճառի, հայերին այդ օրը գցելու համար։

«Մեր իմացականության մեջ,- ասում էր հիշատակած զեկուցումը,- չի տեղավորվում այդքան վայրենի մի միտք։ Բայց նրա տեղ մեզանում ավելի և ավելի ամուր բնավորվում է մի ուրիշ միտք. այն, որ մեր մասին չեն մտածում բոլորովին, որ մեր վիճակը բանի տեղ չեն դնում, որ պաղարյունությունն ու անտարբերությունը մեզ զոհ են բերում ամեն տեսակ՝ իրական թե կարծեցյալ, մեծ թե փոքր ռազմագիտական նկատառման, որ Ռուսաստանի համար մենք դատարկ տեղ ենք։

Հասել է ժամանակը, երբ մենք պիտի խոսենք բարձր և բաց։ Մեր շուրջը կազմում և խտանում է կասկածի և հուզմունքի մթնոլորտը։ Մենք այլևս չենք կարող մնալ մթության մեջ, ապրել ենթադրություններով և կռահումներով, անցնել հույսերից երկյուղների և էլի ետ ու ետ։ Մեզ հարկավոր է ունենալ ճշմարտություն։ Մենք՝ մասսաների ղեկավարներս, որ ժողովուրդը ոտքի կանգնեցնելու, նրան կազմակերպելու և որոշ ուղղությամբ տանելու նախաձեռնությունն ենք վերցրել, մենք այս րոպեին կանգնած ենք ահեղ հարցի առջև՝ ճի՞շտ ենք մենք վարվել, չե՞նք կատարել արդյոք մի մեծ ոճիր՝ գրավելով մեզ իր վստահությունը տված ժողովուրդը դեպի մի ճանապարհ, որով գուցե հարկավոր չէր գնալ»։

Այս հարցերի պատասխանը շատ պարզ էր և այն րոպեին, երբ նրանք գրվում էին։ Ուշ էր արդեն խելքի գալը։ Մեծ ոճիրը կատարված էր։ Թուրքահայությունը չկար այլևս, չկար նաև Հայոց հարց։ Ռուսներն այժմ էլ քրդերին էին առաջ քաշում*։

---

- Այս գլուխները կրճատումներով տպագրվել են

«ՆՈՐ ԷՋ» թերթում

**Զ**

Երբեք չպիտի մոռանամ այն մղձավանջային, տոթակեզ ամառը։ Հայությունը խեղդվում էր արյան ծովի մեջ և միայն մի հատ հիմնարկություն ուներ, որին կարող էր դիմել՝ Ազգային բյուրոն՝ Թիֆլիսի Լերմոնտովյան փողոցում, անճար մի թշվառական։ Առաջին անգամ Կ.Պոլսից էր, որ այնտեղ ինչ-որ հրաշքով ազատ մնացած դաշնակցականները Սոֆիայի վրայով հեռագրական լուրեր ուղարկեցին

թուրքահայերի ընդհանուր կոտորածների և տեղահանությունների մասին։ Ի՞նչ անել։ Սարսափելին այն վայրկյանն էր, երբ ծնվում էր այս հարցը։ Նոր էր զգացվում, թե ի՛նչ խելացնորություն էր, ի՛նչ հանդուգն և զզվելի արկածախնդրություն այսպիսի մի կենտրոն հիմնելը՝ առանց մտածելու այն ահավոր պատասխանատվության մասին, որ մի օր պիտի կանգներ նրա առջև։

Ի՞նչ անել… Հին մի ճանապարհ կար՝ անհույս, բայց հեշտ՝ դեպի Էջմիածին։ Բյուրոն վերցրեց և Սոֆիայի ու այլ տեղերի հեռագրերն ուղարկեց Ամենայն հայոց կաթողիկոսին՝ ավելացնելով իր կողմից ճար ու հնար կանչող ճիչեր. ու իր անելիքը «լմնցած» համարելով՝ շարունակեց իր նիստերը՝ իր մանր-մունր հոգսերը կարգավորելու համար։ Չէ՞ որ դեռ մնում էին կամավորական խմբերը, խմբապետները, դաշնակցական զինվորական շտաբը, որոնք գործում էին և նրանց համար փող էր հարկավոր։

Կաթողիկոսը հեռագրեր ուղարկեց Անտանտի կառավարություններին, չեզոք պետություններին (օր. Իտալիային, որ այն ժամանակ դեռ պատերազմի մեջ չէր մտել)։ Նա էլ այս կերպ «լմնցրեց» իր անելիքը։ Պակաս միամիտ չէր բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որ իբրև հայ գրողների ընկերության նախագահ՝ երկարապատում հեռագրեր ուղարկեց Եվրոպայի և Ամերիկայի բոլոր ակադեմիաներին, համալսարաններին, գրական և գիտական հաստատություններին՝ խնդրելով նրանց ազդու բողոքը և միջամտությունը, որպեսզի դադարեցվի հայ ժողովրդի բնաջնջումը։ Ոչինչ, սակայն, չօգնեց, և երիտթուրքերի կառավարությունը, հենված վիլհելմյան Գերմանիայի վրա, անարգել տարավ իր արյունոտ գործը մինչև վախճան։ Հայերին մնում էր միայն մի մխիթարություն՝ թղթի մի կտոր։

Անտանտի երեք կառավարությունները (Ռուսաստան, Անգլիա և Ֆրանսիա) մի հավաքական հայտագիր հրապարակեցին, թե պատերազմից հետո թուրք կառավարության անդամները անձնապես պատասխանատու կլինեն հայկական կոտորածների համար։ Այն ժամանակվա ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը Արիստիդ Բրիանն էր։ Այս Արիստիդ Բրիանը, երբեմնի սոցիալիստ, բայց հետո իր հոգին բուրժուազիային ծախած, նամակ գրեց Գևորգ կաթողիկոսին և, կրկնելով միևնույնը, այսինքն թե՝ կոտորածների հեղինակ կառավարությունը պատժված կլինի, ավելացրեց և հավաստիացում, թե հայերն, այնուամենայնիվ, կստանան իրենց ըղձացած ազատությունը։ Նկատեցե՛ք այս անունը՝ Արիստիդ Բրիան։ Շատ չի քաշի, և մենք նրան կտեսնենք մեծաշուք սրիկայի կերպարանքի մեջ, առաջինը՝ իբրև հայ ժողովրդի վերջին մնացորդները վաճառող և աշխարհի երեսին ցաք ու ցրիվ անող։

Որքան ամառը սաստկանում էր, այնքան Ազգային բյուրոն դատարկվում էր։ Աղա-անդամները շտապեցին իրենց պարարտության համար հովասուն վայրեր վարձել ու հեռանալ քաղաքից։ Մի ժամանակ կար, որ բյուրոյի մեջ մնացել էինք երեք

հոգի. և Հովսեփ Խունունցն աննկուն և ճշտապահ զինվոր էր պահակատեղում, որ բացում էր «նիստերը», զեկուցումներ անում։ Իսկ այդ միջոցին Վանի և Մանազկերտի նահանջներին զոհված ժողովուրդն էր ծով սարսափներով լցնում Հայաստանի սիրտը։ Թիֆլիսը հեռու էր այդտեղից, բայց մենք այնուամենայնիվ զգում էինք մեծ դիակի վերջին շունչը, և հսկայական մահը մեզ էլ առնում էր իր ցուրտ գրկի մեջ։ Մեռնող մի ժողովուրդ՝ տարածված Արարատյան բոցակեզ հողերի ամբողջ տարածության վրա, իսկ այստեղ 3-4 հոգի հավաքվում է լռիկ ու մռայլ սենյակում, բազմաթիվ դատարկ աթոռների մեջ զեկուցումներ լսում։ Անե՞ծք չէր այս…. Ցերեկները փողոցներում և շուկաներում ինտելիգենտ կանայք տնից տուն, խանութից խանութ էին վազում, հաց էին հավաքում, որ ուղարկեն մեռնող այն բազմությանը։ Օրական Էջմիածնում, Երևանում 700-1000 հոգի էր մեռնում։ Հովհաննես Թումանյանն այդ դժոխքի մեջ էր, գործում էր, բարեբախտաբար չէր գժվում։ Իսկ իր Կիսլովոդսկներում, Կոջորներում, Աբասթումաններում հանգստացող հայ բուրժուազիան սովորականի պես էր՝ խուլ, անզգա, և եթե բաց էլ էր անում իր քսակը, այն էլ՝ հարյուր ու մի երդում-հավատներով, թե չունի, չկա…

Մռայլ, մենավոր, մոռացված էր Օսմանյան կայսրության դեմ պատերազմող բյուրոյի սենյակը։ Երեկո է։ Պատի ճակատին կպցրած էլեկտրական լամպը դժգույն լուսավորություն է տարածում, և սենյակը կիսով չափ ընկղմված է կիսաստվերների մեջ։ Շոգ է, թիֆլիսյան շոգ, բայց մեր մարմիններով սարսուռ է վազվզում դես ու դեն։ Մեր, այսինքն, երեքիս մարմիններով։ Մեր առջև նստած է մի օտարական, որ եկել է Սասունից, ասել է թե՝ կտրել-անցել է սարսափների դժոխք երկիրը՝ շտապելով օր առաջ հասնել, զեկուցում բերել բյուրոյին։ Եվ զեկուցում է խեղդված գերեզմանային ձայնով, իբրև սառը, քարացած կենդանի վկա։ Պատմում է նա Մուշի դաշտի կոտորածի մանրամասնությունները։ Պատկերներ են նկարվում։ Գերմարդկային են այդ սոսկումները։ Եթե մարդկային լինեին, մարդու ջղերը կտանեին դրանք։ Բայց չեն տանում, հետևապես, մարդկային բնությունը վրդովվում է դրանց դեմ, չի ընդունում, որ դրանք կարող են մարդկային հնարավորությունների մեջ լինել։ Ահա մութն իջնում է Մեղրագետի ձորի վրա։ Քարերի տակ, ամբողջ օրը ջրի մեջ մինչև կոկորդը թաղված մարդիկ ահագին զգուշություններով, աշխատելով շշուկ ու շրշյուն չհանել, դուրս են սողում։ Ստամոքսն է պահանջում, և նրանք գնում են առ եղերյաց ամայացած գյուղերը՝ շան նման մի կտոր ուտելիք գտնելու և ապրելու… Ահ, այդ կերպ ապրելու համար…

Պատմողն ինքն էլ սասունցի է, վարժապետ և դաշնակցական։ Անվերջ է նրա խոսքը, միշտ արյուն, միշտ թշվառություն, միշտ արտասուք։ Եվ նրա խուլ ձայնը երբեմն հառաչանքի թնդյուն է հանում դատարկ սենյակում։ Կորել է 100 հազար հոգուց բաղկացած մի ամբողջ ժողովուրդ։ Եվ արժա՞ն չէր միթե, որ այդ անհայտացման աղեկտուր պատմությունը լսեին երեքից ավելի մարդիկ։ Բայց ո՜ւր են։ Ո՞ր զով բարձունքների, վայելքի ո՞ր խոր գոգերից հանեինք, բերեինք նրանց, նստեցնեինք իրենց աթոռների վրա, որպեսզի այդ դատարկ աթոռները չլինեին

սասունցի վարժապետին շրջապատողները։ Հանկարծ նա ընդհատում է իր սև ու մութ պատմությունը։ Հայտարարություն ունի անելու։

- Մենք այնտեղ շատ դժգոհ ենք այստեղի մեր ընկերներից։ Սկզբից մենք դեմ էինք կամավորական շարժմանը և պահանջում էինք, որ այդպիսի շաժում չլինի, և մեզ՝ թուրքահայերիս, հանգիստ թողնեն…

Բայց խե՜ղճ մարդ… Այդ լալահառաչ գանգատն էլ միայն բյուրոյի պատերը լսեցին։ Եվ ոչ ոք չկար այն «ընկերներից», որ լսեր և արդարացներ իր ոճրապարտ գլուխը…

Ի՜նչ թշվառություն էր այս։ Կորչել այսքա՜ն հեշտ, խաղի նման, ոչ մարդկորեն…

Վանի նահանջի սարսափների թարմ ազդեցության տակ Ազգային բյուրոն ուժեղացած կազմով նիստ հրավիրեց։ Եկան մոտիկ ամառանոցներից, եկան ներկայացուցիչներ Բաքվից և այլ տեղերից։ Նիստը կայացավ առաջնորդարանում։ Մեսրոպ եպիսկոպոսը այլայլված, զզզզված դուրս եկավ ժողովին նախագահելու։ Առաջին խոսքերը, որ դուրս եկան նրա բերանից, այս էին. «Երեխաներ էինք, մեզ խաբեցին»… Այս հակիրճ ձևակերպումով իր կատարյալ պարտությունն էր խոստովանում հայ անպետք հոգևորական դիվանագիտությունը, սկսած Ներսես Մեծից և Սահակ Պարթևից։

Սրանով ամեն ինչ ասված էր։ Բայց ինչի՞ցն էր, որ ես բավական չհամարեցի այդ խոստովանությունը և պատասխանեցի. «Բայց որքա՜ն լավ կլիներ, եթե ամեն մեկս մեր մասնավոր գործերի մեջ լինեինք խաբվածներ և ոչ թե ամբողջ ժողովրդին վերաբերող գործերի մեջ»։ Այս հողի վրա ընդհարում տեղի ունեցավ մեր միջև, և ես հեռացա ժողովից։ Հետո, երբ անցան օրեր, ես կշռադատեցի եղածը և գտա, որ իմ մեջ խոսել են չափազանց գրգռված ջղերս, այն տրամադրությունը, որ ինձ հարկադրում էր օպոզիցիայի դիրք բռնել բյուրոյի մեջ։ Մեր գլխին եկած դժբախտությունը չափազանց ծանր էր և շշմեցուցիչ, որպեսզի կարելի լիներ հավասարակշռություն պահպանել և չհիշել բոլոր անթույլատրելի սխալները։ Թե չէ՝ ես բոլորովին չէի ուզում հետին թվով խելոքացածի հովեր ցույց տալ։ Մանավանդ որ, դրանից ի՞նչ օգուտ և դրանով ի՞նչ կարելի էր ջնջել եղածից…

Ի՞նչ պիտի որոշեր բյուրոյի թեկուզ հինգ անգամ ուժեղացված կազմը։ Որոշվեց դիմել, նորից դիմել, նորից այդ կոմսին՝ մեզ խաբողին, որ ամառվա վերջն անց էր կացնում Բորժոմի պալատում։ Այս անգամ նրա ունկնդրության միջոցին այլևս խոսք չկար Հայոց հարցի մասին։ Օրվա մեծ պահանջը թուրքահայ փախստականներին պատսպարելն ու պահպանելն էր. մի պահանջ, որ մասնավոր բարեգործությամբ լցուցանել չէր կարելի և որ պետական խոշոր օժանդակություններով կարող էր վերացվել։ Կոմս Վորոնցով-Դաշկովն այստեղ իսկը որ ոգևորության հասավ։ Նրա միջնորդությամբ պետական գանձարանը մի քանի տասնյակ միլիոնների հատկացում

արավ հոգուտ հայ փախստականների։ Այս, իհարկե, մի մեծ բան չէր, նկատի առնելով այն անհուն զոհերը, որ տվել էին թուրքահայերը ռուսների խաբեբայության ներշնչումներով։ Միջոցների առատությունը հնարավորություն տվեց մի շարք հիմնարկություններ ստեղծել փախստականների խնամատարության համար և այդպիսով հազարավոր թշվառների ազատել մահվան ճիրաններից։ Այդ հիմնարկությունների մեջ առանձնապես մեծացավ և լայնատարած գործունեություն ծավալեց կենտրոնական խնամատար կոմիտեն՝ Սամսոն Հարությունյանի գլխավորությամբ։

Բնության մեջ հանդիպում են սքանչելի զուգադիպություններ, որոնք մարդկության համար ստանում են մի ինչ-որ վերին անճառելի արդարադատության նշանակություն։ Մինչ ցարական բանակը Թուրքահայաստանում մեծարում էր հայերին կոտորող քրդերին և անտարբերությամբ էր նայում հայ ժողովրդի անասելի տանջանքներին, նույն այդ 1915-ի ամռանը նույն ցարականությունը խոշոր պարտություններ կրեց գերմանացիներից և կորցրեց ամբողջ Լեհաստանը և նրանից հյուսիս գտնվող երկրները։ Պարտված երկրում բարձրացավ անբավականություն, և Նիկոլայ Բ-ն իր գլխին կախված տեսավ հեղափոխությունը։ Ուստի վերջին հուսահատական քայլն արեց. իր ձեռքն առավ բոլոր զորքերի բարձրագույն հրամանատարությունը, իսկ Նիկոլայ Նիկոլաևիչին, հանելով այդ պաշտոնից, ուղարկեց Կովկաս, փոխարքայի պաշտոնով։ Կոմս Վորոնցով-Դաշկովը գնաց մեռնելու իր անթիվ կալվածքներից մեկում։

Նոր թագավորություն էր, նոր կարգեր։ Թիֆլիսի պալատի դռները նորից ամուր փակվեցին հայ ֆավորիտների առջև։ Սկսվեց նորից բացարձակ, աղվեսայնությունից հնար եղածին չափ մաքրված քաղաքականություն։ Այդ Գոլիցինի կատաղի հայատյացությունը չէր, բայց հայասիրություն էլ չէր… Կամավորական խմբերի գոյությունն ավելորդ նկատվեց, և նրանց լիկվիդացիայի հարցը դրվեց հենց սկզբից։ Բյուրոն մնաց այդ լիկվիդացիան հետզհետե իրագործելու համար։ Հայոց հարց չէր մնում Նիկոլայ Նիկոլաևիչի համար։ Այնպես որ, երբ 1916-ի սկզբին ռուսները վերցրին Էրզրումը, առաջին կարգադրությունը, որ եղավ այդ առիթով, այն էր, որ հայերն իրավունք չունեն Էրզրում մտնելու։ Միաժամանակ եռանդուն գործունեություն սկսվեց Թուրքահայաստանը ռուսներով գաղութավորելու համար։

Մեզ արդեն հայտնի է գեներալ Յուդենիչի ծրագիրը։ Դրա հետ միասին քննվում էր և կազակների փոխարեն ռուսական ներքին նահանգներից հանված ազգաբնակչությամբ գաղութավորելու ծրագիրը։ Մինչ այս, մինչ այն՝ նոր փոխարքան հրամայեց հայտնել այն փախստականներին, որոնք վերադարձել էին Ալաշկերտի, Դիադինի և Բայազետի հովիտները և մշակում էին հողերը, թե նրանք կարող են այժմ միայն վարձով վերցնել այդ հողերը, իսկ ռուսական իշխանության հաստատումից հետո պիտի դուրս քշվեն այդ տեղերից։ Յուդենիչը կարգադրեց, որ հիշյալ երեք հովիտներում հողերը տրվեն բացառապես ռուսներին և կազակներին։ Ավելացնենք,

որ Հայաստանը ռուսներով բնակեցնելու ծրագրեր իրագործողները միայն հիշատակված երեք հովիտներով չէին բավարարվում, այլև վերցնում էին իր բերրիությամբ հռչակված Մուշի դաշտը։

Վերջապես, ի լրումն ամենայնի, 1916-ի գարնանը, Անտանտի պետությունների միջև մի նոր համաձայնություն կայացավ Թուրքիան բաժան-բաժան անելու մասին։ Այդ համաձայնությամբ Ռուսաստանը ստանում էր ամբողջ Թուրքահայաստանը, իսկ Ֆրանսիան՝ Կիլիկիան։ Կատարվում էր այն, ինչ նախատեսված էր վաղուց, ինչ պետք է լիներ անխուսափելիորեն, ոչ թե քմահաճույքով, ոչ թե որևէ մեկին օգնելու, բարերարություն անելու համար, այլ ուժերի իրական փոխհարաբերությունների երկաթյա օրենքով։ Միակ տարրը, որ ընդունակություն չունեցավ հասկանալ այս օրենքը, այս կոպիտ, ամենակալ անխուսափելիությունը՝ հայերն էին։ Էլ ինչի՞ համար էին նրանք պատերազմի և ապստամբության մեջ խոթվում։ Էլ ինչի՞ համար կոտորվեց հայ ժողովուրդը։

Դժբախտ ժողովուրդ, որի առաջնորդները կույր էին, որ մի հիմար պաշտամունք էին դարձրել փորը, կուրծքն ու մեջքը փամփուշտների շարաններով ծածկած և մաուզերը բռնած կռվողներին, որոնց թիվը հատերով էր, տասնյակներով կամ շատ-շատ՝ հարյուրներով։ Հայ դոնքիշոտները կարծում էին այդ ուժով աշխարհ նվաճել, բայց նվաճեցին միայն դժբախտություն և վերջնական կործանում։ Թուրքերը հայերին կոտորում էին՝ նրանցից ազատվելու համար։ Բանից դուրս էր գալիս, որ եվրոպացիներին էլ շատ հարկավոր էր հայերի կոտորածը, այլապես ինչպե՞ս կարող էր ցարական Ռուսաստանը գաղութավորել հայկական նահանգները, իսկ հանրապետական Ֆրանսիան՝ Կիլիկիան։ Բայց նույն այդ Եվրոպան էր, չէ՞, մեր ամենամոլի, եռանդուն, ուշաթափության հասնող պաշտամունքը…

Թշվառ, թշվառ ժողովուրդ…

Է

Բանը սակայն դեռ չէր վերջացել։

Ռուսաստանը խաբեց։ Այժմ սկսում էր խաբել Ֆրանսիան։ Իսկ Ֆրանսիայի ձեռքով խաբվելն անհունորեն հեշտ էր. ինչպես ասում են՝ մի բաժակ ջուր խմելուց էլ հեշտ։ Ֆրանսիան համարվում էր հայության ամենամոտիկ բարեկամը, նրա սրտակիցը։ Համբավն այսպես էր, դժբախտաբար, թեև 1895-1896 սոսկալի թվականներին անվանի Գաբրիել Հանոտո-փաշան, այժմ անդամ ֆրանսիական ակադեմիայի, ցույց էր տվել, որ Ֆրանսիան ոչ մի դիտավորություն չունի ուրիշ կերպ լինելու, քան՝ ինչ պահանջում են իր բանկիրների և ռենտիեների շահերը։ Ու թեև նույն Հանոտո-փաշան հլու և ստրկամիտ գործակիցն էր Լոբանով-Ռոստովսկու, բայց և այնպես, շատ շուտ մոռացվեց այս տգեղ հանգամանքը, թեև նա ամենահարազատ, անպաճույճ իրականությունն էր ցոլացնում իր մեջ։ Եթե, ասում էին, այդպիսին է

կառավարող Ֆրանսիան, ապա մյուս Ֆրանսիան՝ մտքի, ստեղծագործության, գիտությունների Ֆրանսիան, այդպիսին չէ. նա հայերի հետ է, սիրում է հայերին, պաշտպանում է նրանց։ Խոր հավատ կար, որ այս մի Ֆրանսիան՝ հայասերը, չափազանց հեղինակավոր է, չափազանց ուժեղ, մյուս Ֆրանսիայի՝ դիվանագետների Ֆրանսիայի վրա ազդելու և ի նպաստ հայերի գործել տալու համար։

Այս հավատը շատ մեծ էր, դժբախտաբար։

Արտաքին փաստերը մի այսպիսի հավատ պահպանելու համար շատ էին, դժբախտաբար։

Թողնենք հին ժամանակները, վերցնենք հենց 1915 զարհուրելի թվականը։ Հայ ժողովրդի կրած անասելի, աննկարագրելի տանջանքները, կոտորածները, տեղահանություններն ամենից շատ աղմուկ բարձրացրին Ֆրանսիայում, ապա նաև Անգլիայում։ Թողնենք ամենօրյա մամուլը։ Անգլիայի հայասերները հրատարակեցին մի խոշոր հատոր «Կապույտ գրքի», որ ծայրեծայր լիքն էր խժդժությունների, արյունահեղությունների, սարսափների նկարագրություններով։ Ֆրանսիայի հայասերներն իսկույն թարգմանեցին այդ խոշոր հատորը։ Եվ քանի՜ ուրիշ հատորներ։ Ես, թեև կտրված հաղորդակցություններից, թեև միշտ կարոտ և անապահով, կարողացել եմ այդ հրատարակություններից այնքան հավաքել, որ այսօր ունեմ մի փոքրիկ գրադարան 1915-ի կոտորածներին նվիրված։

Այստեղ են մտնում և Մանդելշտամը, ե՛ւ Ռընե Պինոնը, ե՛ւ դոկտոր Լեփսիուսը, ե՛ւ Դյումբերգը, ե՛ւ Շտյուրմերը, ե՛ւ Մորգենթաուն, ե՛ւ Հանրի Բարբյուսը, ե՛ւ ուրիշ շատ շատերը։ Ահա գիտնական դը Մորգանը գրում է հայոց ազգի պատմությունը, իսկ մի ուրիշ մեծանուն գիտնական՝ Գյուստավ Շլյումբերժեն, առաջաբան է գրում այդ պատմության համար։ Մի հատոր գրում է հայագետ Ֆրեդերիկ Մակլերը։ Եվ ուրիշ քանիսնե՞ր։ Որքա՜ն հուզիչ-սիրուն է ֆրանսիական ակադեմիայի անդամ Ժան Էկյուրի քերթվածը. «Tout un peuple martyr – l’Armenie glorieuse, l’Armenie immortelle» («Մի ամբողջ ժողովուրդ մարտիրոս – Հայաստան փառավոր, Հայաստան անմահ»), որի մեջ ֆրանսիական նուրբ ոտանավորը հավաքել է այնքան շատ գույներ, վիշտ, անձնազոհություն՝ մարտիրոսական տոկունություն և նրբություն արտահայտելու համար։

Եվ մի՛ կարծեք, թե ցույցը միայն գրքերով ու բրոշյուրներով էր կատարվում։ Ցույցերը հասարակական կերպարանք էլ էին ընդունում. և այս՝ ոչ միայն Փարիզում, այլև Լոնդոնում, Ամերիկայում։ Հայ ժողովուրդը մեծարվում էր ամենալայն չափերով։ Թվում էր, թե վերադարձել են կրոնական դարերը, և նահատակ ժողովուրդը դարձել է քաղաքակիրթ շատ ազգերի պաշտամունք։ Այսպես թվում էր, դժբախտաբար։

Այս րոպեին էլ, երբ գրում եմ այս տողերը, ձեռքիս տակ է մի ֆրանսերեն հրատարակություն, որի մեջ մանրամասն նկարագրված է այն հանդեսը, որ ի պատիվ

Հայաստանի տեղի ունեցավ 1916թ. ապրիլի 9-ին, Փարիզի Սորբոնի մեծ դահլիճում։ Իմ ընթերցողներից ես շատ կխնդրեի թույլ տալ ինձ՝ մի քանի մանրամասնություններ բերել այդ նկարագրությունից։

Հանդեսը կազմակերպել էր ֆրանսիացի կանանցից բաղկացած մի հատուկ կոմիտե, որի մեջ մտել էին բուրժուական Փարիզի աչքի ընկնող ներկայացուցիչների կանայք։ 3000-ից ավելի «ընտիր» կոչված հասարակություն էր հավաքվել։ Ներկա էին քաղաքական գործիչներ, մտավորականության, գրականության, արվեստների ականավոր մշակները։ Հանրապետության նախագահ Պուանկարեն իր ներկայացուցիչն էր ուղարկել։ Ներկայացուցիչներ ունեին և համաձայնության պետությունների դեսպանները, ինչպես նաև մանր, չեզոք պետությունների դեսպանները։ Կարելի է ասել, թե պաշտոնական Փարիզը ներկայացված էր այս հայկական հանդեսում մեծագույն մասով։ Նախագահում էր Պոլ Դեշանելը՝ ֆրանսիական պատգամավորների պալատի նախագահը։ Ճառախոսների մեջ էր լուսավորության մինիստր Պենլևեն։ Հանդեսը բացվում է նախագահ Պոլ Դեշանելի ճառով։

Արդեն պաշտոնական Ֆրանսիայի այս կարկառուն և չափազանց կարևոր դեմքն առաջներում էլ շատ անգամ ճառեր էր արտասանել Հայոց հարցի մասին. այս անգամ էլ մեծարանքներ մատուցեց հայկական աննախընթաց մարտիրոսությանը, հանդիմանության և մեղադրանքի խոսքեր շպրտեց Գերմանիայի հասցեին՝ նրան համարելով հայկական ջարդերի առաջին պատճառներից մեկը։ Բայց ահա Ֆրանսիան գալիս է հաղթելու և բոլոր ճնշված ազգերին ազատություն տալու։ Ամենուրեք գերի ազգությունները սպասում են դաշնակիցների (Անտանտի) հաղթանակից իրենց փրկությունը՝ հայերը, սիրիացիները և լիբանանցիները, սերբերը և հարավսլավները, չեխերը, Տրանսիլվանիայի ռումինացիները, Տրիենտի և Տրիեստի իտալացիները, լեհերը, բելգիացիները, էլզաս-լոտարինգիացիները։ Իր ճառը Պոլ Դեշանելը վերջացնում է այսպիսի մի դիմումով Հայաստանին. «Արշալույսի բոցերը լուսավորում էին Հայաստանը, երբ մենք դեռ գիշերվա մեջ էինք. այսօր Ֆրանսիայի ճառագայթն է, որ գնում է նրա տխրությունը ջերմացնելու։ Մեր հին Սորբոնից՝ սուրբ սարից՝ գրականության և գիտությունների ակրոպոլիսից, ուսկից ֆրանսիական միտքը հինգ դարից ի վեր աշխարհի մեջ լույս է թափում, Ֆրանսիան, մի ախոյան, որ վառել է իր բոլոր որդիներին, սիրո մի աղաղակով է պատասխանում քո հեծեծանքներին, ո՛վ փառավոր Հայաստան, դու, որ մինչև իսկ գերության ստվերի մեջ պահպանում էիր գրականության, արվեստի, խղճի ազատության գաղտնիքը»։

Հանդեսի գրական-երաժշտական մասը բաղկացած էր բացառապես հայ բանաստեղծության, երգի կտորներից, որոնք բազմաթիվ էին և որոնց արտասանողներն ու երգողներն էին Փարիզի օպերայի և այլ թատրոնների երգիչներն ու երգչուհիները, դերասաններն ու դերասանուհիները։ Ահա հնչում է հայկական հիմնը, և այդ ամբողջ մեծ և պսպղուն հավաքույթը մի մարդու պես ոտքի է ելնում։

Ամբիոնի վրա է Անատոլ Ֆրանսը՝ Ֆրանսիայի գրական փառքն ու պարծանքը։ Իր ճառը նա վերջացնում է այսպիսի խոսքերով.

«Հայաստանը փչում է իր հոգին։ Բայց նա կվերածնվի։

Այն քիչ արյունը, որ մնում է նրան, մի ազնիվ արյուն է, որից դուրս կգա մի հերոսական ապագա։ Մի ազգ, որ չի ուզում մեռնել, չի՛ մեռնի։ Մեր բանակների հաղթությունից հետո, բանակներ, որոնց առաջնորդում են արդարությունը և ազատությունը, դաշնակիցները մեծ պարտականություններ կունենան կատարելու։ Եվ այդ պարտականություններից ամենասուրբը կլինի մարտիրոս ազգերին կյանք վերադարձնելը՝ Բելգիային, Սերբիային։ Այն ժամանակ նրանք կապահովեն Հայաստանի հանգստությունը և անկախությունը։ Խոնարհվելով նրա վրա՝ նրանք կասեն. «Քույրս, վե՛ր կաց, մի՛ տանջվիր։ Դու այսօրվանից ազատ ես ապրելու՝ քո հանճարի և քո հավատի համաձայն»»։

Չհավատայի՞նք։ Բայց ինչպե՞ս չհավատայինք։ Այն ժամանակ էլ ինչի՞ն կարելի էր հավատալ։ Եվ հավատացինք մենք։ Ամբողջ սրտով ու հոգով հավատացինք, մեր բոլոր հրճվանքով ու հիացքով։ Եվ սակայն չպիտի՛ հավատայինք, ապագան այդ ցույց տվեց։ Ապագան ցույց տվեց, որ այս բոլորի մեջ չկար և մի նշանախեց ճշմարտություն, անկեղծություն։ Հայ արյան գետերը, մինչև աստղերը բարձրացած հայ տառապանքի հեծեծանքները շահագործվում էին՝ Գերմանիայի դեմ կռվելու համար։ Քանի դեռ կանգուն էր ուժեղ և հաղթական Գերմանիան, հայկական սարսափները նրա հակառակորդներին հարկավոր էին՝ նրան վարկաբեկելու, նրան բարոյապես ստորացնելու, նրան բարբարոսության կողմնակից և հովանավոր ցույց տալու, իսկ իրենց՝ նահատակ ազգերի պաշտպան և ազատարար հայտարարելու համար։ Բայց հենց որ Գերմանիան ջարդվեց և այլևս ոչ ոքի երկյուղ ներշնչել չէր կարող, իսկույն մոռացվեցին հայն էլ, իր տառապանքն ու արյունն էլ։ Բայց այս դեռ փառք կլիներ։ Ո՛չ մի երկիր, ո՛չ մի ազգություն երբեք հայությանն այնքան կատաղի, այնքան արյունարբու և ստո՛ր, մինչև զզվելիություն ստոր թշնամի չեղավ, ինչպես Ֆրանսիան։ Այս հաստատեց և պատմության մեջ հրաշեկ տառերով խարանեց ապագան, երբ Անատոլ Ֆրանսների և հարյուր ու մի հռչակված «հայասերների» Ֆրանսիան անասելի ստորություն ունեցավ ծախել հայ ժողովրդի վերջին ողորմելի պատառիկները իր կապիտալիստական բորենիներին հարկավոր մի քանի կոնցեսիաներով…

Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, նույն 1916-ին էլի տեղի ունեցան համակրանքի ցույցեր հայերի վերաբերմամբ։ Եվ ֆրանսիական կառավարությունը շտապում էր հնչուն արժեքի վերածել այն հռետորական զեղումները, որոնք լսվել էին Փարիզի մեջ՝ ի պատիվ հայերի։ Զրի համակրանք չկա։ լսեցի՞ր, հիացա՞ր, շնորհ արա՛ վճարել։ 1916թ. դեկտեմբերի 14-ի նամակով Պողոս Նուբարը, որ շարունակում էր

համարվել «ազգային պատվիրակության գլուխ», հետևյալն էր գրում Պետական դումայի անդամ Պապաջանյանին.

«Շտապում եմ հայտնել Ձեզ, որ ֆրանսիական կառավարությունը, ի նկատի առնելով մոտ կամ հեռավոր ապագայում հնարավոր գործողությունը ասիական Թուրքիայում, որոշել է «Արևելյան լեգեոն» անվան տակ կազմակերպել հայ և սիրիացի կամավորների մի գունդ։

Մենք, բնականաբար առանց տատանվելու, պատասխանեցինք մեզ ուղղված կոչին և որոշեցինք տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով խրախուսել Եգիպտոսի, դաշնակից երկրների և Ամերիկայի մեր հայրենակիցներին, որ նրանք որքան կարելի է մեծ թվով զինվորագրվեն նոր լեգեոնի մեջ, իհարկե, առանց մոռացության տալու զգուշությունից բխող բոլոր միջոցները և բոլոր նախազգուշությունները, որ գոյություն ունեցող պայմանները թելադրում են մեզ։ Հիրավի, մենք չպետք է մոռանանք, որ Թուրքիայի ամբողջ հայ ազգաբնակչությունը, իբրև իսկական պատանդ, դեռևս գտնվում է թուրքերի ձեռքին, և որ նա միշտ ենթակա է ամենակատաղի վրիժառության նրանց կողմից։ Ֆրանսիական կառավարությունը, ինչպես և մենք, հավասարապես գիտակցում է վտանգը, որին ենթակա է այս դժբախտ ազգաբնակչությունը, գիտակցում է և անհրաժեշտությունը, որ հայերը գործեն ամենամեծ զգուշությամբ՝ առանց ակներև կերպով մասնակցելու մեր զինվորագրություններին։

Նմանապես նպատակահարմար կլինի, եթե Եգիպտոսի, Ֆրանսիայի և Ամերիկայի հայ գաղութները, որոնց աջակցությունը խիստ անհրաժեշտ է զինվորագրությունը խրախուսելու համար, մնան մի կողմ և սահմանափակեն իրենց դերը՝ ծառայելու պատրաստակամություն հայտնածներին խրախուսելով և ուղարկելով ֆրանսիական զինվորական իշխանության մոտ, որը և կկատարի զինվորագրության գործը։ Այստեղ իմ կողմից ավելորդ կլինի մի առ մի թվել թե՛ տեղումս և թե՛ Եգիպտոսում ու Ամերիկայում կատարվելիք զինվորագրության վերաբերմամբ ֆրանսիական կառավարության հետ մշակվելիք նախազգուշությունների մանրամասնությունները։

Մյուս կողմից՝ տեղեկանալով, որ կովկասյան արշավանքներին մասնակցած Թուրքիայի կամավորական գնդերը նորերս լուծված են, մենք ֆրանսիական կառավարության հետ քննության ենք առել այն թուրքական հպատակներին օգտագործելու հնարավորությունը, որոնք այսօր ազատ են կացուցված, նպատակ ունենալով նրանց բերել տալ Ֆրանսիա՝ զինվորագրելու Արևելյան լեգեոնի մեջ։ Մենք կոչ ենք արել Կովկասի մեր բարեկամներին, որ նրանք բարեհաճեն մեզ ցույց տալ իրենց աջակցությունը և համաձայնեն Ֆրանսիա ժամանելու համար բոլոր դյուրությունները տալու նրանց, ովքեր տրամադիր են ծառայության մեջ մտնելու։ Բնականաբար, այս կարող է տեղի ունենալ միայն կայսերական կառավարության

հովանավորությամբ և, ես չեմ կասկածում, որ Դուք կստանաք այդ հավանությունը, ստեղծելով Արևելյան լեգեոն՝ դաշնակիցների ընդհանուր շահերի համար։

Կարիք չկա Ձեզ ասելու, որ այս բոլորը խիստ գաղտնի է և որ անհրաժեշտ է խուսափել ամեն մի շաղակրատությունից մամուլի մեջ։ Հուսով եմ, ուրեմն, որ Դուք և Թիֆլիսի բյուրոն միջոցներ ձեռք կառնեք, որպեսզի այս զինվորագրության մասին ոչ մի ակնարկ չլինի ռուսահայ թերթերում։ Այդ մենք արել ենք Եգիպտոսում, որի հայ մամուլի վրա մենք կարող ենք վստահ լինել այդ առիթով մանավանդ այժմ, երբ մեր բոլոր կուսակցությունների միջև տիրում է կատարյալ համերաշխություն։ Բացի այդ, ես ստացել եմ կառավարությունից համաձայնություն, որ գրաքննությունը թույլ չտա ոչինչ զետեղելու կամավորների մասին ոչ միայն հայկական, այլև մյուս լեզուներով հրատարակվող թերթերում։ Մենք հապճեպ պատվիրակներ ենք ուղարկում Ամերիկա, որպեսզի նույն նշանաբանը տրվի հայկական մամուլին։

Որ մենք՝ հայերս, շահագրգռված ենք ամենամեծ պատրաստակամությամբ պատասխանելու մեզ արած կոչին, այդ դուրս է կասկածից, որովհետև վերջնական հաղթանակի պահին, որի վրա մենք միշտ հույս ենք դնում, դաշնակից պետություններից է կախված լինելու Հայաստանի ճակատագիրը։ Ինչ վերաբերում է ինձ, ես այդ կոչին պատասխանում եմ մեծ հոժարակամությամբ, որովհետև ես հանրապետության կառավարությունից ստացել եմ պաշտոնական հավաստումներ, թե հաղթանակից հետո մեր ազգային ձգտումները կստանան լիակատար բավարարություն։

Ասիական Թուրքիայի նկատմամբ դաշնակիցների միջև կա մի համաձայնություն,- դուք անշուշտ գիտեք այդ մասին,- որը կարգավորում է դաշնակից պետություններից յուրաքանչյուրին բաժին ընկնող հողամասերի խնդիրը։ Թեև մեզ հայտնի չեն այս համաձայնության բոլոր պայմանները, բայց մենք գիտենք, որ վեց վիլայեթները և Կիլիկիան չեն կազմելու մի ամբողջական հողամաս, և որ նրանց մի մասը տրվելու է Ռուսաստանին, իսկ մյուսը, որ սահմանափակվելու է Կիլիկիայով, տրվելու է Ֆրանսիային։ Հետևապես միայն այս մասի նկատմամբ են ինձ տրված հավաստիացումները, որոնց մասին ես քիչ առաջ խոսեցի, և մենք կարող ենք հուսալ, որ Ֆրանսիայի հովանավորության տակ տրված տեղական լայն ինքնավարության շնորհումով այնտեղ կիրագործվեն մեր բաղձանքները։ Որոշված է, որ Ֆրանսիան, մնալով հավատարիմ ազատության սկզբունքներին և մեծահոգի ավանդույթներին, ճնշված հայերին ազատելուց հետո հնարավորություն կտա նրանց վերականգնելու իրենց ազգային դեմքը և գրավելու այն դիրքը, որ պատկանում է նրանց քաղաքակիրթ աշխարհում՝ շնորհիվ իրենց անցյալի և ունակությունների։

Ես համոզված եմ, որ այս գոտեպնդիչ հեռանկարը կխրախուսի Ձեզ, ինչպես և մեր կովկասցի բոլոր հայրենակիցներին, և դուք ձեր սրտին մոտ կընդունեք մեզ աջակցելու գործը, որպեսզի Ֆրանսիային տրվեն որքան կարելի է մեծ թվով

մարտիկներ այն ձեռնարկության համար, որ նա սկսել է հանուն մեր հայրենիքի ազատության։

Այնուամենայնիվ, հարկավոր կլինի հանձնարարել այս խնդրով զբաղվող մերայիններին, որ նրանք հոգ տանեն նախազգուշացնելու զինվորագրության ներկայացողներին, թե ֆրանսիական կառավարությունն առաջարկում է բոլոր զինվորագրվածներին, իբրև առաջին պայման, առանց բացառության, պարտավորվել ենթարկվելու ֆրանսիական բանակի կարգապահությանը և սկզբում ծառայելու իբրև սոսկ զինվորներ»։

Այստեղ այլևս ճառեր, ճարտասանական բացականչություններ, բանաստեղծություններ չէին։ Այստեղ արդեն պաշտոնական բանակցություններ էին, ինչպես 1914-ի ամռանը Թիֆլիսում, կառավարական հավաստիացումներ։ Բայց արժե՞քը։

1917-ի սկզբներին Պողոս Նուբարի այդ նամակը Ազգային բյուրոյի քննության էր բերված մի բազմամարդ ժողովում։ Եվ ես գոհությամբ հիշում եմ, որ նա գրեթե միաձայն մերժվեց։ Ապուշներից ապուշը կլինեինք մենք, եթե մի անգամ սոսկալի կերպով խաբվելուց հետո նորից հավատայինք այդպիսի խոստումների։

Բայց Պողոս Նուբարը հաջողեցրեց Արևմուտքում մի նոր կամավորական շարժում Արևելյան լեգեոնի համար։ Արդեն շատ հայ կամավորներ կային ֆրանսիական բանակում։ Բայց Արևելյան լեգեոնին վիճակվում էր շատ աչքի ընկնող դեր Պաղեստինի ճակատում, գեներալ Ալեմբիի հրամանատարության տակ։ Նա կռվում էր քաջարի կերպով, և նրա դերը խոշոր էր մանավանդ այն ճակատամարտերի մեջ, ուր թուրքական բանակը վերջնական պարտության մատնվեց։

Այնուամենայնիվ, ֆրանսիական կառավարությունը խաբեց Պողոս Նուբարին ավելի խայտառակ կերպով, քան մեզ խաբել էր Նիկոլայ Բ-ի կառավարությունը…

## Գլուխ վեցերորդ։ Հեղափոխություն

### Ա

[1917թ.] Փետրվարյան հեղափոխությունը մի լավ հարցաքննություն էր Ռուսաստանի ժողովուրդների համար, թե ով ինչ բագաժով պիտի դուրս գա հեղափոխական ասպարեզի մեջ դեր կատարելու համար։ Դա ընդունակությունների, պատրաստվածության հարցաքննություն էր։ Կովկասյան ազգերի մեջ ամենից լավ պատրաստված հանդիսացան վրացիները։ Նրանք ունեին մի ուժեղ և միատարր կազմակերպություն՝ մենշևիկ սոցիալ-դեմոկրատիան, որ կարևոր դեր էր խաղում Ռուսաստանի մենշևիզմի մեջ. այն մենշևիզմի, որ, ինչպես հայտնի է, շատ ուժեղ գործունյա էր ռուսական մեծ հեղափոխության առաջին՝ բուրժուական շրջանում։

Վրաց սոցիալ-դեմոկրատիան առաջացրել էր մի շարք կարող և ընդունակ գործիչներ։ Այդպիսիք էին, օրինակ, Չխեիձեն՝ բուրժուական հեղափոխության հրամանատարը Ռուսաստանում, և Ծերեթելին, որին անվանում էին ռուսաց հեղափոխության գեղեցկություն։ Սրանք գործում էին Պետերբուրգում, բայց բուն Վրաստանում էլ պակաս չէր նշանավոր դեմքերի թիվը՝ Նոյ Ժորդանիա, Գեգեչկորի, Ռամիշվիլի, Չխենկելի և ուրիշներ։

Վրացիներից անհամեմատ հետամնաց էին հայերը։ Ճիշտ է, հայերի մեջ հասարակական բաժանումներ և խմբավորումները վաղուց էին սկսվել՝ կար հայ սոցիալ-դեմոկրատիա, կային հայ սոցիալիստ-հեղափոխականներ, բայց այդ բաժանումները զարգացման սաղմնային վիճակի մեջ էին և չէին կարող անկախ ու գործուն դեր կատարել։ Գլխավոր զանգվածը կազմում էր Դաշնակցությունը, որի արևելքն ու արևմուտքը հայտնի չէին և նրա շեֆերին։ Հիշում եմ «Հորիզոն» լրագրի մի խմբագրական ժողով՝ դարձյալ Համբարձում Մելիքյանի նախագահությամբ։ Ինձ, իբրև դրսի աշխատակցի, հրավիրել էին կարծիք հայտնելու թերթի ուղղության մասին։ Երբ հերթն ինձ հասավ, ես ասացի, թե դժվարանում եմ մի որոշ կարծիք հայտնել, որովհետև մի հաստատուն բացորոշ ուղղություն չեմ տեսնում։ Թերթն առանց ուղղության է. այսօր մի հոդված սաստիկ առաջադեմ բովանդակությամբ, վաղը մեկ ուրիշը՝ հետադեմ բովանդակությամբ։ Ի մեծ զարմանս ինձ՝ թերթի խմբագիր Արշակ Ջամալյանը հաստատեց իմ ասածը, բայց արդարացավ՝ ասելով, թե դաշնակցական աշխարհայացքը պարզ, որոշ, կետ առ կետ օրենսդրված չէ, ինչպես, օրինակ, մարքսիզմը, որին հետևողի համար ամեն ինչ պարզ դասավորված է համաչափ և ներդաշնակ սիստեմի մեջ։ Մինչդեռ, քանի դաշնակցական թերթ կա, այնքան էլ ուղղություն կա։ Եվ այս ճիշտ էր։ Դեռ նոր էր Ամերիկայի «Հայրենիք» դաշնակցական թերթը սկանդալ պատճառել՝ առաջարկելով, որ Խրիմյան Հայրիկը դասվի սրբերի մեջ…

«Հորիզոնը» պակաս սկանդալներ չէր տալիս։ 1916-ի ամռանը նա, «Մշակի» հետ միացած, ինձ խաչն էր հանում այն պատճառով, որ Երևանի Թեմական դպրոցի պատմությունը գրելիս ես պատռել եմ կաթողիկոսի մի խղճուկ կոնդակը, որով հաստատվել էին դպրոցի հոգաբարձուները։ Իսկ 1917-ի փետրվարին մի ուրիշ մեծ դարդ էր պատել «Հորիզոնին»։ Վարդանանց տոնի օրը մի քանի տասնյակ հայ վաճառականներ փակել էին իրենց խանութները, իսկ ոստիկանապետ Զասիպկինը հրամայել էր բաց անել։ Եվ ճռճռում էին «Հորիզոնի» առաջնորդողները ազգային վշտից, հոնգուր-հոնգուր լաց էին լինում ազգային տոնի խափանման համար։ Ո՞ւր պիտի գնար «սոցիալիստ» կուսակցության լեյբ-օրգանը… Բարեբախտաբար, մի քանի օրից հետո պայթեց փետրվարյան հեղափոխությունը և, «Հորիզոնն» ամեն ինչ մոռանալով, տպեց խոշոր տառերով՝ «Կեցցե՛ ինտերնացիոնալը»…

Նա սկսեց զտվել, մաքրվել, սոցիալիստական ձյունափայլություն զգենալ։ Եվ առաջին բանն այն եղավ, որ նա խլվեց բաժնետիրական ընկերության ձեռքից և

դարձավ զտարյուն և անխառն դաշնակցական։ Մենք՝ ոչ դաշնակցականներս, պիտի հրաժեշտ տայինք 2 կոպեկ տողավարձին և այլևս չճանաչեինք «Հորիզոնի» դռները։ Համեցեք, խնդրում ենք, շնորհ արեք… Դուրս ենք գնում։ Բայց մնում է նավթարդյունաբերող և «առաջին գիլդի կուպեց» Համբարձում Մելիքյանը։ Նա հինգ հազար ռուբլի է մտցրել Դաշնակցական գանձարկղը և դարձել է ոչ թե շարքային անդամ, այլ՝ շեֆ։ Երկու տարուց հետո նրան տարան Երևան և դարձրին դաշնակցական պետության ֆինանսների մինիստրի օգնական։

Հեղափոխություն է փողոցում, դուրս են գալիս հասարակական կազմակերպությունները, դիրք են բռնում, իշխանություն են ձեռք առնում։ Սկզբի օրերին, կարծեք թե, հայերն են գերակշռող դիրք ձեռք բերում Թիֆլիսի մեջ։ Բայց վրաց մենշևիկներն արագ խախտում են այդ դրությունը և, իրենց ձեռքը գցելով բոլոր կարևոր, հրամայող դիրքերը, հաստատում են իրենց հեգեմոնիան կովկասյան բոլոր ազգությունների մեջ։ Այս միայն առաջնորդների ընդունակության հաղթանակ չէ, այլև այն ուժի ներգործության, որ ներկայացնում է մենշևիզմը ամբողջ Ռուսաստանի կենտրոնական կառավարության մեջ։ Թիֆլիսի վրացի մենշևիկները մեծ աջակցություն ստանում էին Պետերբուրգից։ Հեղափոխության առաջին իսկ օրերին Թիֆլիսից հապճեպով փախավ սևհարյուրակային Նիկոլայ Նիկոլաևիչը՝ տանելով իր հետ «փոխարքա», «կայսերական բարձրություն» և սրանց նման այլ հորջորջումները։

Պետական դումայի ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասի համար կազմակերպեց առանձին «Անդրկովկասյան կոմիտե» անունով մի մարմին, որի մեջ մտան մի ռուս, մի հայ, մի թուրք և երկու վրացի ներկայացուցիչներ։ Այսպիսով ուրեմն, վրացիությունը բոլոր մյուս ազգություններից գերադաս էր դառնում և ուժեղանում էր մանավանդ այն պատճառով, որ ղեկավարող կուսակցությունը (մենշևիկները) հասկանում էր մեկուսացման ամբողջ վնասը. ուստի, չամաչելով իր սոցիալիստական կերպարանքից, համաձայնության, կարելի է ասել՝ դաշնության մեջ մտավ թուրք կալվածատեր և բուրժուա դասակարգերի հետ, որոնք արդեն մի ուժեղ կազմակերպություն էին ստեղծել «Մուսավաթ» անունով։

Այսպիսով մեկուսացված մնում էր հայ ժողովուրդը։ Պատերազմի և կամավորական շարժման սկզբից ստեղծված դրության շարունակությունն էր այս, որ սերտորեն կապված էր Դաշնակցության գոյության հետ։ Այժմ, երբ սկսվել էր նոր կյանք, հայ հասարակությունը չկարողացավ հանել իր միջից մի ուրիշ հոսանք, որ ձեռնարկեր այդ նոր կյանքի խնդիրները լուծելու՝ նոր սկսվող պայմանների և պետական իրականության շրջանակի մեջ։ Հայ ժողովուրդը մնաց իր հին մտայնությամբ. Դաշնակցությունն էր ղեկավարողը, ուղղություն տվողը. իսկ սա նշանակում էր, թե խառնված պիտի լինեն իրար հետ ֆիդայականությունն ու սոցիալիզմը։ Ո՛չ մի բարեկարգում, ո՛չ մի վերանորոգում։ Ամեն ինչ մնաց հինը։ Մենք ունեինք լավ խմբապետներ, բայց չունեինք քաղաքական առաջնորդներ։ Եվ այդ խմբապետները մարդիկ էին, որոնց համար մեծագույն պատվանունը սուլթանական

«փաշա» անունն էր. դրա՛նք պիտի լինեին նաև քաղաքական առաջնորդներն ու պաշտպանեին հայ ժողովրդի շահերն այնպիսի միջավայրում, ուր խոսքը մաուզերին կամ մոսենուն չէր պատկանում, այլ քաղաքականապես կրթված, հասարակագիտական լուրջ պատրաստությամբ ամուր և ուժեղ մտքին։ Այսպես էր մեր աղքատությունը։ Եվ մենք, բնականաբար, պիտի տեղի տայինք ընդունակ վրացի առաջնորդներին, որոնց ետևից կազմակերպված բազմություններ էին գնում։

Նոր միայն զգացվում էր, թե որքան մեր կյանքը տասնյակ տարիների ընթացքում խեղաթյուրել և անդամալուծել է հայդուկային աշխարհավարությունը։ Մեր լավագույն երիտասարդությունը թուրքական բանտերի և կախաղանների կերակուր էր դառնում, և մեր միտքը գնալով գոսանում էր, շաբլոնական միանմանության էր ստրկանում՝ գրեթե ոչինչ տեղ չթողնելով ինքնուրույն աշխատանքի, պրպտումների, որոնումների համար։ Սասունի, Վասպուրականի լեռները հայ ֆիդայիների դիրք դառնալով՝ կուլտուրական աշխատանոցներ, մտքի մարզարաններ չէին դառնում իհարկե, այլ ավելի նեղացնում էին մտավոր հորիզոնը՝ ամեն շահ և մտածմունք կենտրոնացնելով հրացանի բլթակի վրա։ Եվ ահա, երբ եկան նոր օրեր՝ նոր և մեծ պահանջներով լեցուն, դարձյալ նույն լեռներից իջած, բլթակի շահերով ապրող մարդիկ եկան մեզ առաջնորդելու նոր պայմանների մեջ։ Հասկանալի է, որ մե՛նք պիտի թույլ լինեինք, պիտի պարտվեինք, և ոչ մեկ ուրիշը։

Դաշնակցական ինտելիգենցիա կար, բայց տափակությունից ու միջակությունից վեր չգնաց նա։ Ճիշտ է, հեղափոխության առաջին իսկ օրերից այդ ինտելիգենցիան ձեռք էր բերում Ալեքսանդր Խատիսյանին, որ մի ուժ էր նույնիսկ կովկասյան չափանիշով։ Բայց այդ ի՞նչ ուժ էր։ Խոսելու գեղեցիկ ընդունակություն ուներ, գործելու եռանդով լցված էր, բայց՝ անսկզբունք, պատեհական, կարիերիստ. ահա՛ ինչն էր, որ սնամեջ էր դարձնում այդ ընդունակությունը։ Բուրժուազիայի սիրասուն զավակ, նրանից երես առած, նրանով առաջացած մինչև Թիֆլիսի քաղաքագլխի բազկաթոռը՝ նա հանկարծ դուրս եկավ իր այդ ծնող մոր դեմ, կռիվ հայտարարեց նրա դեմ՝ մտնելով Դաշնակցության շարքերը։ Այսպես են մի գիշերվա մեջ սոցիալիստ դառնում, երբ հարկավոր է։

Կարիերիզմի բնազդը չէր դավաճանել Խատիսյանին։ Նրան ընդունեցին Դաշնակցության մեջ գրկաբաց, թույլ էլ չտվեցին, որ նա գոնե մի քառասնօրյա մաքրարան անցնի՝ իր անցյալ մեղքերից փոքրիշատե սրբվելու համար։ Իր նորադարձության վաղորդայնից նա արդեն առաջնակարգ գլուխ էր և պատասխանատու վարիչ։ Եվ, սակայն, այդ նորադարձությունից մի թե երկու շաբաթ առաջ էր, որ մի ժողովում, ուր թեկնածուներ էին որոշում մի պաշտոնի համար, Խաչիկ Կարճիկյանը ամենակտրուկ կերպով հրաժարվեց Դաշնակցության կողմից որևէ ոչ դաշնակցականի թեկնածությունն ընդունելուց և, իր այդ դիրքն ակնհայտնի կերպով ցուցադրելու համար, դարձավ դեպի ինձ և ասաց. «Մեր մի հատ

դաշնակցական մշակը շատ և շատ բարձր է ձեր Խատիսյանից»։ Այժմ Խատիսյանը նրանցն էր… Եվ որպիսի՜ երջանկություն…

Ես, սակայն, պարտավոր եմ ասել, որ ամենքը չէին այդքան անտարբեր իրենց նոր ընկերակցի վերաբերմամբ. Դաշնակցության ձախ կամ երիտասարդ թևը շատ էր աշխատում զտել կուսակցության շարքերը։ Հատուկ անբավականություն կար Խատիսյանի դեմ, և նրա անունը հանել տվին Սահմանադիր ժողովի պատգամավորների թեկնածուների շարքից։ Բայց այս դիմադրությունը շատ կարճ տևեց, և նորաթուխ դաշնակցականն այնքան կարևոր դիրքեր գրավեց, որ իրենից շատ հեռու թողեց հին, ինչպես ասում են՝ «մազով-միրուքով» դաշնակցականներին։ Սա, իհարկե, հրաշքով չէր կատարվում, այլ իրերի բնական բերմունքով՝ մարդ չկար կարևոր, պատասխանատու պաշտոնների համար, և ահա կախվում էին այդ մարդու փեշերից, որին չգիտեմ ով, շատ սրամիտ կերպով անվանել էր «պալատական սոցիալիստ»։

Հավասար չափով անպտուղ էր ձախ դաշնակցականների պայքարը «կոպիտ ուժի ներկայացուցիչների», այն է՝ խմբապետների և ֆիդայիների դեմ, որոնք նստում էին դաշնակցական ժողովներում՝ հիմա էլ սոցիալիստական հարցեր լուծելու համար։ Ավելացրեք այս ներքին շփումների և սուր անհամաձայնությունների վրա նաև մի նոր սուր անբավականություն արևմտահայերի և արևելահայերի միջև, և դուք պատկերացում կկազմեք, թե ինչ խառնաշփոթություն էր ներկայացնում հայկական կյանքը հեղափոխության առաջին ամիսներին։ Արևմտահայ (թուրքահայ) մտավորականությունը, որ Կ.Պոլսից կամ ուրիշ տեղերից եկել-հավաքվել էր Թիֆլիսում, հուսահատված և հոգնած այն տարտամ ու անստույգ վիճակից, որին ենթարկված էր ինքը, սկսել էր սուր անբավականություն հրապարակ բերել ռուսահայերի դեմ։ Նա նոր էր խելոքացել և նոր էր իմանում, որ ռուսահայերն իրենց խնամակալությունը թուրքահայերի վրա դարձրել են թուրքահայերի կոտորածների աղբյուր, իսկ իրենք՝ մնացել անվնաս։ Դոկտոր Բոնապարտյանը ժողովների մեջ կանչում էր. «Մենք ձեր կոտորածն էլ պիտի տեսնենք»։ Եվ տեսան քիչ հետո։ Մի միջոց կար, երբ հայության երկու հատվածների փոխադարձ հարաբերություններն այնքան սրացել էին, որ հանաք սիրողներն ասում էին, թե սկսվելու է արևմտահայերի և արևելահայերի կոտորած, ինչպես մի ժամանակ կար հայ-թուրքական կոտորած։

Այս բոլորը ցույց էր տալիս, որ հայ ժողովրդի աշխատավորական մասը լավ չէր կազմակերպված։ Բանվորական զանգվածների մի փոքր մասը գնաց Դաշնակցության ետևից, մնացած մասը սոցիալ-դեմոկրատիայի հետ էր։ Եվ ահա, հիմնվելով ուժերի այս տեսակ տրոհման վրա՝ վրաց սոցիալ-դեմոկրատիան քաղաքային ընտրությունների ժամանակ առաջին խոշոր հաղթանակը տարավ Դաշնակցության դեմ։ Թիֆլիսի հայ ազգաբնակչությունը թեև խոշոր քանակություն էր կազմում, բայց անկազմակերպ վիճակի մեջ գտնվելով՝ ձայների մեծամասնությունը շահեց վրաց սոցիալ-դեմոկրատիան, իսկ Դաշնակցությունը քաղաքային դումայի մեջ բռնեց

երկրորդական տեղ։ Քաղաքագլուխ ընտրվեց վրացի. բոլոր խոշոր, պատասխանատու պաշտոնները նույնպես վրացիների ձեռքն անցան, և այսպիսով լուծում ստացավ տասնյակ տարիներից ի վեր վրաց ազնվականության և հայ բուրժուազիայի մեջ բորբոքված կռիվը Թիֆլիսի քաղաքային ինքնավարությանը տիրանալու համար։ Այս առաջին հաղթանակից հետո Դաշնակցությանը վիճակվում էր իր դիրքերը մեկը մյուսի ետևից վրաց սոցիալ-դեմոկրատիային զիջելը։ Հայության մեջ գոյություն ունեցող միակ խոշոր և ուժեղ կազմակերպությունը անկարող էր հանդիսանում մի այլ դրություն ստեղծելու հայ ժողովրդի համար, բացի մեկուսացումից, և այս հանգամանքը բխում էր նրա ամբողջ էությունից, ամբողջ անցյալից, ամբողջ բովանդակությունից։

Այս կողմից ավելի լավ դրության մեջ էր թուրք ժողովուրդը։ Թեև թուրքերը նոր էին միայն մտնում քաղաքական կազմակերպման շրջանը, և թեև նրա մեջ գոյացած «Մուսավաթ» կազմակերպությունը ավատական-կրոնական բովանդակություն ուներ և ներկայացնում էր ազգայնամոլ հետադիմություն՝ երիտթուրքերի ճաշակով և տիպով, բայց և այնպես՝ նա միացած էր վրաց մենշևիկների հետ, գնում էր նրա ետևից և որոշ դեպքերում փոխադարձաբար քաշում էր նրան իր ետևից, մանավանդ այնտեղ, ուր հարցը վերաբերում էր հայերին։ Թե՛ այս հանգամանքը և թե՛ այն, որ «Մուսավաթն» իր մեջքի ետևում զգում էր Թուրքիայի ուժը, թուրք ժողովրդի ներկայացուցիչ կազմակերպությանը տալիս էր այնքան ամուր և ուժեղ դիրք, որ Դաշնակցությունը ստիպված էր նրա առջև նահանջողի, զիջողի դիրք բռնել։ Բանն այսքանով չէր սպառվում։ Կատարելով իր գաղտնի դաստիարակչի և ոգևորողի հրահանգները՝ թուրք կալվածատիրությունը պատրաստվում էր ավելի գործուն դերի։

Կերենսկու ապիկար կառավարությունն ինչպես ամեն տեղ, այնպես էլ Կովկասում սաստկացրել էր անիշխանությունը։ Օգտվելով այս հանգամանքից՝ թուրք ազգաբնակչությունը տենդային շտապով զինվում էր։ Այս այնքան խոշոր մի երևույթ էր դարձել անդրկովկասյան իշխանության մեջ, որ նրա վրա ուշադրություն դարձրեց նույնիսկ Կովկասյան բանակի զինվորական պատգամավորների խորհուրդը։ Հայ ժողովուրդը զգում էր, թե ում դեմ են ուղղված այդ բացահայտ պատերազմական պատրաստությունները, և շարունակ մատնացույց էր անում, թե ինչ վտանգ է պատրաստվում։ Բայց ի՞նչ կարելի էր անել։ Անդրկովկասյան կոմիսարիատի հայ անդամ Պապաջանյանը չափազանց խեղճ էր թուրք անդամի հանդեպ, որ շրջապատել էր իրեն թուրք անհաշտ նացիոնալիստներով և, որովհետև իր ձեռքում էր պահում նաև փոստն ու հեռագիրը, ուստի, ամեն դյուրություններ էր հայթայթում զենքեր փոխադրելու համար։

Դեռ այն ժամանակ, 1917-ի ամռանը և աշնանը կարելի էր կանխատեսել, թե ի՛նչ նացիոնալիստական դժոխքի պիտի վերածվի Անդրկովկասը, երբ նրա՝ իրար դեմ անխնայորեն մաքառող ազգությունները ազատություն ստանան գործելու՝ ինչպես ուզում են…

Բ

Բայց մենք մոռացանք մեր չարաշուք բյուրոն։ Ի՞նչ եղավ նա։ Հեղափոխությունը բերում էր նրան բնական մահ, թեև Թուրքահայաստանը շարունակում էր գրավված մնալ ռուսական զորքերով։ Կամավորական խմբերի տեղ այժմ կազմված էին ազգային գնդեր՝ մշտական բանակի մեջ ծառայող զինվորներից։ Այսպիսով հայերն ու վրացիներն ունեին իրենց զորքերը, որոնք գտնվում էին զորաճակատի զանազան մասերում։ Բայց այս կազմակերպությունն այլևս ոչ մի կախում չուներ Ազգային բյուրոյից։ Առաջվա դիրքի և նշանակության հետքերն անգամ չէին մնացել նրա վրա։ Ամենից առաջ, հենց որ կոմս Վորոնցով-Դաշկովը հեռացավ Կովկասից, Գևորգ կաթողիկոսը, ինչ-որ անձնական վրեժ հանելու համար, Մեսրոպ եպիսկոպոսին հեռացրեց Թիֆլիսի առաջնորդությունից և պատվավոր աքսոր ուղարկեց Աստրախան։ Նրա տեղ առաջնորդ եկավ Մխիթար եպիսկոպոսը, մի անապատական, որ մարդու երես չէր ուզում տեսնել, ուր մնաց՝ դեռ դիվանագիտությամբ էլ պարապել։ Եվ խլացավ ու անմարդացավ երեկվա խոշոր քաղաքական կենտրոնը, Եղիշեի ասածի պես՝ «սարդի ոստայնք ձգեցան ի սենյակ առաջնորդաց»… Բյուրոն վերածվեց մի տեղեկատու գրասենյակի, որ այլևս պատերազմ մղող մի հիմնարկություն չէր, այլ ներկայացնում էր մի ժողովուրդ, որ շատ մեծ բան է համարում իր անթիվ ու անհամար որբերին խնամելը։

Այս դրության մեջ բյուրոն հղացավ իրենից ավելի մի խոշոր և հեղինակավոր մարմին ստեղծելու միտքը։ Եվ հրավիրեց, այսպես անվանված, համազգային կոնֆերանս, որ կայացավ Թիֆլիսում, 1917-ի աշնանը։ Այժմյան Ռուսթավելու թատրոնի մեծ դահլիճում համախմբվեցին 150-ից ավելի ներկայացուցիչներ, որոնցից մոտ 90-ը Դաշնակցությանն էին պատկանում։ Կային և ուրիշ կազմակերպություններ՝ սոցիալ-դեմոկրատներ, սոցիալիստ-հեղափոխականներ, Հայ ժողովրդական կուսակցության [անդամներ]։ Աջ կողմի ծայրի աթոռները գրավեց անկուսակցականների խիստ փոքրաթիվ խմբակը, որի մեջ էի և ես։ Առաջին օրերին տեղի ունեցան խիստ վիճաբանություններ։ Դաշնակցականները, իբրև ուղղափառ սոցիալիստներ, հարձակվեցին բուրժուազիայի վրա, որ ներկայացված էր ի դեմս Ժողովրդական կուսակցության։ Ես հիշում եմ մի այսպիսի զվարճալի դեպք. դաշնակցական հռետորը փրփրած խոսում է՝ հարյուր ու մի մեղք շպրտելով բուրժուազիայի դեմքին։ «Դուք,- բացականչում է նա,- շահագործող գործարանատերեր…»։ Ժողովրդականների միջից Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը նույնպես բացականչում է. «Մեր մեջ գործարանատեր չկա, գործարանատերը ձեր մեջ է»։ Ամենքը նայում են ձախ թևին. այնտեղ՝ դաշնակցականների մեջ նստած է Համբարձում Մելիքյանը։ Բարձրանում է ծիծաղ։ Հռետորը ընդհատում է իր ճառը և նստում տեղը։ Եվ մյուս օրվանից Բաքվի նավթարդյունաբերողն այլևս չհամարձակվեց երևալ դահլիճի մեջ…

Բուրժուազիային լավ բզկտելուց հետո՝ կուսակցությունները կատաղորեն ընկան իրար վրա։ Հիշում եմ, թե ինչ աներևակայելի աղմուկ բարձրացրեց Սիմոնիկ

Փիրումյանը, երբ բեմ բարձրանալով՝ խիստ հարձակումներ գործեց դաշնակցականների վրա՝ անվանելով նրանց «բանդիտներ, որոնք պատերազմ էին հայտարարում Թուրքիային»։ Ամբողջ դաշնակցական թևը տեղից վեր ցատկեց և մի քանի րոպե շարունակ դահլիճի մեջ կանգնած էր սոսկալի ռռնոց, որի մեջ չէր կարելի լսել և ոչ մի հատ բառ։ Նախագահող Լևոն Աթաբեկյանը կոտրատում էր իր ձեռքերը՝ խփելով նախագահական սեղանին և կարգի հրավիրելով ժողովականներին։ Վերջապես հանգստություն տիրեց։ Բայց դաշնակցականներն էլ, իհարկե, պարտքի մեջ չմնացին։ Նրանց կողմից դուրս եկավ պատասխանելու Նիկոլ Աղբալյանը, որ հայոց պատմությունից օրինակներ բերելով, շատ պարզ ակնարկներով ցույց տվեց, թե սոցիալ-դեմոկրատները ազգային դավաճաններ են, և վերջացրեց իր խոսքը բղավելով. «Իսկ մենք կկռվենք երեք ճակատի վրա և նորից կտանք երեք հարյուր հազար զոհ»։ Սոցիալ-դեմոկրատների կողմից Ղազար Տեր-Ղազարյանը, որ նախագահության անդամներից մեկն էր, հայտարարեց, թե ինքն ու իր ընկերներն անհնարին կհամարեն մնալ այս ժողովի մեջ, եթե ետ չվերցվեն այստեղ արտասանված վիրավորական ակնարկները։ Դաշնակցության առաջնորդ Արամ-փաշան մի հայտարարություն արավ կուսակցության կողմից, և այսպիսով փակվեց այս աղմկաշատ միջադեպն էլ…

Անցողակի հիշատակեմ, որ այդ ժամանակ արդեն հասունանում էին այն անջատողական և ազգայնամոլական տրամադրությունները, որոնք Անդրկովկասը գահավիժորեն տանում էին դեպի ազգամիջյան պատերազմ և դժոխային կացություն։ Վրաց նացիոնալիստները (իսկ ովքե՞ր չէին նացիոնալիստ՝ մենշևիկնե՞րը միթե) առաջին անգամ պահանջ էին դնում, թե Թիֆլիսը բացառապես իրենցն է, և հայերն այդտեղ անելու ոչինչ չունեն։ Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատ քաղաքագլուխը հարկավոր չհամարեց անձամբ ողջունել ամբողջ հայ ժողովուրդը ներկայացնող այս համագումարը, այլ միայն հեռագիր ուղարկեց։ Իսկ վրացական թերթերը գրում էին, թե հայերի այս գումարումը վերջինը պիտի լինի Թիֆլիսում, և թող այսուհետև նրանք գտնեն իրենց հայրենիքը։ Սա մի կողմից։ Մյուս կողմից էլ՝ զարգանում էր այն միտումը, թե Կովկասն ինքը պիտի կառավարի և պաշտպանի իրեն և ոչ թե Ռուսաստանից «վայրագներ» կանչի իրեն կառավարելու համար։ Այս սկզբունքը պաշտպանում էր իր ճառի մեջ էսէռական այնպիսի աչքի ընկնող ներկայացուցիչ, ինչպիսին էր Լևոն Աթաբեկյանը։ Սա նշանակում էր, թե ռուսական հեղափոխությունն իր բուրժուական շրջանում մի և ամուր ճակատ չէր ստեղծում, այլ կտրատվում էր տեղական անջատ ու իրար թշնամի բեկորների։

Ազգային կոնֆերանսն ի վերջո տեղափոխվեց առաջնորդարանի դահլիճ և, այդտեղ ընտրելով մի լիազոր մարմին՝ Ազգային Խորհուրդ անունով, ցրվեց։ Խորհրդի անդամների մեծամասնությունը, իհարկե, դաշնակցականներից էր, բայց մյուս կուսակցություններն էլ ունեին իրենց ներկայացուցիչները՝ համեմատ իրենց ունեցած պատգամավորների թվի։ Մի հատ տեղ էլ տվեցին անկուսակցականներին. հանգուցյալ Ստեփան Մամիկոնյանը ստացավ այդ տեղը։

Այստեղ ահա, հեղափոխության մեջքի վրա հեծած՝ հասարակական դիրքի բարձրերն էր թևակոխում մի մարդ՝ Ավետիս Ահարոնյանը։ Նա ընտրվեց Ազգային Խորհրդի նախագահ։ Ազգային խորհուրդներ իրենց համար ընտրեցին նաև վրացիներն ու թուրքերը։ Դրանք իսկապես ազգային կառավարություններ էին, իրացնում էին գերագույն, վարչական գործառնություններ՝ տուրքեր նշանակել, զորաժողով հայտարարել և այլն։ Այդ ազգային կառավարություններով իրապես սկիզբ էր դրվում երկրի բաժանման երեք ազգությունների միջև, այնպես որ կենտրոնական կովկասյան կառավարությունը ստիպված էր լինում շատ անգամ այդ ազգային անջատականությունների ցանկություններին և որոշումներին հարմարվել։ Մենք շատ մոտ էինք իրար, հոգեց-հոգի մտերիմներ, ես և Ահարոնյանը, քանի որ երկուսս էլ կես-քաղցած, կես-կուշտ գրողներ էինք։ Եվ ահա Ահարոնյանի թռիչքը սոցիալական սանդուղքով դեպի վեր՝ հետզհետե անջատում գցեց մեր մեջ։ Նա՝ իշխանավոր, հրամայող, ինչպես ասում էինք՝ «հայոց թագավոր», իր տրամադրության տակ ավտոմոբիլ ունեցող, ես՝ առաջվա պես կորացած մեջքով, օրական 12 ժամ աշխատող, կտրված դրսի աշխարհից, իմ գրքերի մեջ թաղված։ Մեր ճանապարհները շեղվեցին։ Նա գնաց կառավարելու, դատելու, գործերի ամենապատասխանատուներն իր վիզն առնելու, ես մնացի իմ տեղը, իմ գրչի հետ։ Եվ մի օր մենք հանդիպեցինք իրար, բայց այլևս չէինք խոսում իրար հետ։ Այսպես քայքայիչ և անջատիչ է կարիերան։

Ես մի երկու անգամ եմ եղել Ահարոնյանի թագավորության մեջ՝ Ազգային Խորհրդում։ Այն զետեղված էր Համբարձում Մելիքյանի տան ետևի մասում, Նովոբեբուդովսկայա փողոցի վրա։ Խոստովանում եմ, մի կերպ, քաշվելով, ամաչելով էի մտնում այդ փոքրիկ, կիսախավար բնակարանը, ուր այնքան մեծ-մեծ պաշտոններ կային մեզ՝ հասարակ մահկանացուներիս համար անմատչելի և վերամբարձ։ Գործերը բաժանված էին պատշաճավոր մինիստրությունների մեջ։ Գիտեի, որ պատերազմական մինիստրը Ստեփան Մամիկոնյանն էր, ֆինանսների մինիստրը՝ Սամսոն Հարությունյանը, ինքը՝ նախագահը, վարում էր արտաքին գործերը և այլն, ըստ կարգի։ Ի՞նչ պաշտոն ուներ Նիկոլ Աղբալյանը, հաստատապես չգիտեմ, կարծեմ՝ Խորհրդի քարտուղարն էր։ Բայց այդ չէ գլխավորը։ Նա զբաղվում էր մի փոքրիկ սենյակում, իսկ այդ սենյակի պատից կախված էր մի շատ մեծ աշխարհագրական քարտեզ, որի վրա հաստ գունավոր շերտով նշանակված էին Հայաստանի սահմաններն Անդրկովկասում։

Այս սահմանագիծը նրա սեփական աշխատանքն էր։ Ամեն մեկին մոտեցնում էր քարտեզին և սկսում էր բացատրություններ տալ։ Սահմագիծը երկու հատկություն ուներ՝ բնական և ազգագրական բաժանումներ։ Ճիշտ որ, նա շատ խնամք էր թափել այդ աշխատանքի վրա։ Նա գիտեր յուրաքանչյուր լեռ, յուրաքանչյուր փոքրիկ գյուղ։ Բնական բաժանումների կողմից սահմանը միանգամայն կայուն և ապահով էր։ Բայց ազգագրական բաժանումների կողմից գիծը հաճախ խանգարում էին թուրքաբնակ գյուղերը, խմբերով թե հատ-հատ։ Բայց սա մեծ հոգս չէր Ազգային Խորհրդի

աշխարհագրագետի համար։ Այդ ազգագրական խոչընդոտները նա վերացնում էր դաշնակցական հռչակավոր «սրբել-մաքրելու» միջոցով։ Աղբալյանը աջ ձեռքի մատները կիսով չափ թիակաձև դնում էր այդ թուրքական տեղերի վրա և արագ շարժումով տանում էր հայկական սահմաններից դուրս՝ ցույց տալով, թե թուրք ազգաբնակչությունը դուրս կշպրտվի սահմանի այն կողմը և այսպիսով կվերականգնվի այս կամ այն տեղի զուտ անխառն հայկականությունը։ Զարմանալի սեր ուներ այդ շնորհալի գրողը դեպի թուրք գյուղերի սրբումն ու մաքրումը։ Եվ ես հիշում եմ մի ժողով, ուր, երբ Նիկոլ Աղբալյանը վեր կացավ և հայտարարեց, թե Անիի մոտ եղած քուրդ գյուղերը «մաքրված» են, Միքայել Պապաջանյանը խոնարհվեց դեպի ինձ և Սամսոն Հարությունյանը և ասաց. «Министр по погромным делам»։

Ուրեմն, դաշնակցական տակտիկան, գործողության եղանակը մնում էր հինը, անկախ այն հանգամանքից, որ այժմ հեղափոխություն է կատարվում ժողովրդական զանգվածների ազատագրման, հավասարության և եղբայրության սկզբունքների իրականացման։ Թուրքահայաստանի հարցը չէր այժմ, ուզում էին Հարավային Կովկասում մի Հայաստան, որ չունենար իր մեջ կամ շատ քիչ ունենար թրքություն։ Եվ որքան նոր աղետներ ծնվեցին այս ապուշ ցանկությունից հայ ժողովրդի համար…

Գ

Դեռ Կովկասյան ճակատի վրա կանգնած էր ռուսական խոշոր և հաղթական բանակը, ուստիև կարգը համեմատաբար դեռ կայուն էր։ Բայց ահա պայթեց Հոկտեմբերյան հեղափոխությունը։ Ամենից առաջ սա կուսակցական մի խոշոր պարտություն էր նաև վրաց մենշևիկների համար։ Չխեիձեն և Ծերեթելին, հազիվ ճողոպրելով, Վրաստան փախան, որ և այսպիսով դարձավ վերջնականապես պարտված կուսակցության ապաստարանը։ Զուր չէր, որ վրաց մենշևիկները հեղափոխության սկզբից իրենց ձեռքն էին առել հեգեմոնիան բոլոր կովկասյան ազգությունների վրա։ Այժմ նրանք, հիմնվելով հենց այդ հեգեմոնիայի վրա, իրենց կուսակցական շահերը փաթաթում էին Անդրկովկասի ամբողջ ազգաբնակչության շլնքին և նրան կտրում բոլշևիկյան Ռուսաստանից։ Այս տեսակ մի անարդար բան վրաց մենշևիկները չէին կարող անել, եթե միացած չլինեին «Մուսավաթի» հետ։ Այս կազմակերպությունը, իբրև երիտթուրքերի կուսակցության մի կովկասյան բաժանմունք, բոլշևիկյան Ռուսաստանի դեմ չէր միայն, այլ առհասարակ Ռուսաստանի. չէին ուզում, որ ռուսները մնան Կովկասյան լեռնաշղթայի հարավային մասում։ Ուստի մուսավաթականները միանգամայն համաձայն էին, որ Անդրկովկասը չճանաչի բոլշևիկական Ռուսաստանին։ Վրաց հասարակության և մենշևիկության մեջ էլ շատ զարգացած էր անջատողական գաղափարը, ուստի վիրա-թուրքական համաձայնությունը շատ կետերում բխում էր երկու ազգերի հասկացած շահերից։

Այլ էր հայ ժողովրդի դրությունը։ Նա շատ լավ ըմբռնում էր, որ իր համար ամենաիրականը ռուսական օրիենտացիան է, և որ առանց Ռուսաստանի ինքը չի

կարող գտնել հանգստություն իր պատմական հայրենիքում։ Հենց այդ պատճառով էլ վրացիներն ու թուրքերն ատում էին հայերին, բացարձակ մեղադրում էին, թե նրանք են եղել, որ բերել են ռուսներին Անդրկովկաս, նվաճել են տվել։ Սակայն հայ ժողովուրդը, մեկուսացած և թույլ լինելով, չէր կարող անկախ դիրք բռնել Ռուսաստանից բաժանվելու հարցի մեջ։ Եվ Դաշնակցությունը, կովկասյան ազգերի միացման գաղափարը փրկելու համար, հարում էր մենշևիկ-մուսավաթյան համաձայնությանը, թեև մեծ հարց էր, թե ինչո՞ւ հայ ժողովուրդը պիտի գերադասեր մենշևիկյան սոցիալիզմը բոլշևիկյան սոցիալիզմից։

Երեք ազգությունները իբր թե միացան։ Կարծում էին, թե միացում է նշանակում երեքով մի սենյակի մեջ նստելը։ Հարցը սենյակի մեջ չէր, այլ նրա մեջ, որ երեք ազգությունների ղեկավարող կուսակցությունները ազգայնական էին մինչև ոսկորների ծուծը և ոչինչ մոռանալ, ոչինչ իրենց զիջել չէին կարող։ Միացման ամենամեծ թշնամիները հենց նրանք էին, որոնք նստել էին իրար կողք և ասում էին, թե միացել են։ Եվ ահա նոյեմբերին հայտարարվեց Անդրկովկասի կառավարության նոր կազմակերպություն։ Այս դեռ պաշտոնական և վերջնական անջատումը չէր Ռուսաստանից։ Դրությունը ձևակերպվեց այնպես, թե նոր վարչությունը կլինի ժամանակավոր և կկրի տեղական հանգամանք, մինչև որ կհավաքվի համառուսական Սահմանադիր ժողովը։ Նոր կազմակերպվող իշխանության կենտրոնական մարմին դառնում էր Սեյմը, որ բաղկացած էր Սահմանադիր ժողովի համար Անդրկովկասից և Կովկասյան բանակից ընտրված անդամներից, որոնց թիվն ավելացվում է որոշ սկզբունքով, ըստ կուսակցական ցուցակների։ Այս կենտրոնական մարմինն էլ ընտրում է գործադիր իշխանություն, որ կվայելի ամբողջ ազգաբնակչության վստահությունը։ Սակայն այս կարգը չի պահպանվում։

Մինչև Սեյմի գումարումը, մի հասարակ հրամանով գոյություն է ստանում «Անդրկովկասյան կոմիսարիատը», որի մեջ բացարձակապես տիրապետող դերը պատկանում էր վրացիներին և գլխավորապես մենշևիկներին։ Կառավարության նախագահի, արտաքին և ներքին գործերի (ապա նաև պատերազմական) մինիստրների պաշտոնները վրացիների ձեռքում էր։ Թուրքերը ստանում էին փոստ-հեռագրական և ճանապարհների հաղորդակցության մինիստրությունները, իսկ հայերին, որոնք ներկայացած էին լոկ դաշնակցականներով, տրվում էին գոյություն չունեցող ֆինանսների և հասարակական խնամատարության մինիստրությունները։ Հայ սոցիալ-դեմոկրատիայի մեկ ներկայացուցիչ էլ պորտֆել ուներ այդ կառավարության մեջ, բայց իբրև ընդհանուր ռուսական սոցիալ-դեմոկրատիայի անդամ և ոչ թե իբրև հատկապես հայերի կողմից ընտրված։

Պաշտոնների այս դասավորումը, իհարկե, առանձին նշանակություն չէր ստանա, եթե մենք գտնվեինք մի միջավայրում, ուր իսկապես և անկեղծորեն մարդիկ հավաքված լինեին ինտերնացիոնալ գաղափարներով։ Բայց Կովկասի երկնքի տակ այդպիսի միջավայր դեռ չկար. գազանային նացիոնալիզմն էր թաքնված բոլոր

անվանումների և էտիկետների տակ։ Եվ երբ այսպես էր, փոխարկելով պաշտոնների բաժանումը սովորական պարզ լեզվի, ստացվում էր այն իրականությունը, որ իրեն հայ ազգի ամբողջությունը համարող Դաշնակցությունը կրում էր մի նոր չարաչար պարտություն՝ ստանձնելով երրորդական դեր կովկասյան նոր իրականության մեջ։ Այսպիսով հայ ժողովուրդը կորցնում էր իր ունեցած դիրքն ու նշանակությունը։

Իսկ որքա՞ն ճիշտ էր, թե Անդրկովկասը շարունակում էր մնալ Ռուսաստանի մի անբաժան մասը։ Այստեղ միայն բառերի խաղ կար և ոչ թե ճշմարտություն։ Ռուսաստան ասելով հասկացվում էր ամեն տեսակ Ռուսաստան, բայց ոչ երբեք բոլշևիկյան։ Եվ որովհետև հոկտեմբերից հետո միմիայն բոլշևիզմն էր Ռուսաստանի իրական տերը, ուստի դուրս էր գալիս, որ Անդրկովկասը 1917թ. նոյեմբերից արդեն իրապես անջատված էր Ռուսաստանից և իր գործերը կարգադրում էր ինքնագլուխ։ Առաջին քայլը, որ արվեց այս ուղղությամբ և որ ուղղակի ոճրագործություն էր հայ և վրացի ժողովուրդների, բայց մանավանդ առաջինի վերաբերմամբ, այն էր, որ Անդրկովկասյան կոմիսարիատը շտապեց մերկացնել կովկասյան ռազմաճակատը՝ հայտարարելով զորացրում և զենքի տակ պահելով միայն ազգային զորաբաժինները։ Սա նշանակում էր, որ երկրից հեռացվում էր ռուսական խոշոր և դեռ շատ ուժեղ բանակը։ Ճիշտ է, նրա մեջ արդեն սկսել էր բույն դնել քայքայումը, բայց Անդրկովկասյան կոմիսարիատը փոխարեն ամեն կերպ աշխատելու, որ այդ ուժը չքանդվի, չլքի այն երկիրը, որ դեռ նոր միայն հայտարարվել էր Ռուսաստանի անբաժան մաս, սկսեց ճամփու դնել նրան։

Ամեն ինչ չափազանց պարզվեց։ Թուրքերը սկսեցին հարձակումներ գործել ռուս գյուղերի վրա, քանդեցին, ավերեցին դրանք, կոտորեցին մարդկանց։ Ռուս գաղթական ազգաբնակչությունից շատ քիչ բան մնաց երկրում. մնացածները փախան Ռուսաստան։ Կատարվում էր, ուրեմն, «սրբում-մաքրում»։ Այդ նույն ժամանակ սկսված էր ռուսական մեծ բանակի տանջալից և արյունոտ նահանջը Արաքսի ափերից մինչև Հյուսիսային Կովկաս։ Բոլոր թուրքաբնակ վայրերում (Շարուր, Բորչալու, Թիֆլիսից մինչև Դերբենդ և էլ հեռու) զորամասերը պիտի պատերազմով ճանապարհ բաց անեին իրենց համար՝ շատ տեղերում նվաճելով յուրաքանչյուր քայլ տարածությունը։ Թուրքերն ուզում էին զինաթափ անել զինվորներին, խլել նրանց ամբողջ ռազմամթերքը։ Այս հողի վրա էր, որ տեղի ունեցավ Շամխորի մեծ աղետը, որ, ինչպես պատմել է ինձ մի շատ ազդեցիկ ինտելիգենտ թուրք, պատրաստել էին Գանձակի թուրք կալվածատերերը, և որին մասնակցեցին նույնիսկ Գանձակի գիմնազիայի թուրք աշակերտները։

Շամխորում դարանի մեջ ընկնողը մի խոշոր զորամաս էր՝ բաղկացած մոտ 3 հազար հոգուց։ Կոտորածից գրեթե ոչ ոք չազատվեց։ Թուրքական հարվածների տակ ընկան նույնիսկ ռուս սպաների կանայք և երեխաները։ Դավադրության մեջ մուսավաթ-մենշևիկյան գործակցություն էր նկատվել։ Քննություն պիտի կատարվեր։ Տալիս էին Նոյ Ռամիշվիլիի անունը։ Եվ երբ լրագրերում փորձ եղավ արդարանալու

նրանով, որ ռուսական զորքերի մաս-մաս ուղարկման կարգը տրված է եղել երեք ազգային խորհուրդների համաձայնությամբ, հայոց Ազգային Խորհուրդը պաշտոնապես հայտարարեց, թե ինքը ոչ միայն որևէ համաձայնություն չի տվել, այլև Անդրկովկասից ռուսական զորքերի հեռանալը համարում է դժբախտություն։

Շուտով սկսվեցին հայ-թուրքական ընդհարումները։ Կրկնվում էին 1905-1906 թվականների անցքերը. տեղ-տեղ հայ-թուրքական համագումարների կոմեդիան էր երևան գալիս՝ իբրև թե հաշտություն կայացնելու համար, բայց միաժամանակ այսինչ կամ այնինչ երկաթուղային կայարանում անմեղ մարդկանց իջեցնում էին գնացքներից և մորթում լոկ այն պատճառով, որ նրանք հայեր էին կամ թուրքեր։ Ռուսական զորքերի հեռանալուց հետո թուրքական ռազմաճակատի վրա՝ Երզնկա-Մուշ-Վան ուղղությամբ մնում էին հայ զորքերը։ Թուրքիայի հետ կռվողներն, այսպիսով, հայերն էին։ Անդրկովկասյան թուրքերը, միշտ ղեկավարված օսմանյան շտաբի սպաներով, խփում էին հայերին թիկունքից՝ դժվարացնելով ռազմաճակատը պաշարեղենով և ռազմամթերքով ապահովելու հնարավորությունը։ Այս կողմից կարևորություն էին ստանում մանավանդ Բորչալու և Շարուր գավառների թուրքաբնակ այն մասերը, որոնցով անցնում է երկաթուղին։

Գաղտնի կազմակերպության ձեռքով ղեկավարվող թուրքերը հարձակումներ էին գործում գնացքների վրա։ Դաշնակցականներն էլ զբաղված էին «մաքրման-սրբման» գործով։ Սուրմալուի գավառի թուրք ազգաբնակչության մի նշանավոր մասը փախցված էր իր բնակության տեղերից։ Շատ գյուղեր Երևանի և այլ գավառներում քանդված ու ավերված էին. հայ ֆիդայիները անօգուտ և անհարկավոր գազանություններ էին կատարում և այնտեղ, ուր թուրք տարրը, շատ փոքրաթիվ լինելով, չէր կարող ոչ մի վնաս հասցնել հայերին։ Վրդովեցուցիչ էր մասնավորապես Վարդանլու փոքրիկ գյուղի կոտորածը Փամբակի Մեծ Ղարաքիլիսա գյուղի մոտ։

Եվ ահա, այսպիսի փոխհարաբերությունների մեջ գտնվող ազգայնական կազմակերպություններն էին, որ Թիֆլիսի փոխարքայական պալատում նիստեր էին անում երկիրը համերաշխ միաբանությամբ կառավարելու համար։ 1918-ի հունվարին հավաքվեց Անդրկովկասյան Սեյմը։ Այնտեղ հայերի կողմից միմիայն դաշնակցականներն էին բազմած։ Ուրիշ որևէ կազմակերպություն ներկայացուցիչ չուներ։ Մինչդեռ թուրք ազգաբնակչությունը, բացի մուսավաթականներից, ուներ մի քանի այլ անուններ կրող կազմակերպություններից պատգամավորներ, օրինակ՝ սոցիալ-դեմոկրատներ, անկախ սոցիալիստներ և այլն։ Վրացական կազմակերպություններն էլ՝ սոցիալ-ֆեդերալիստ, նացիոնալ-դեմոկրատ և այլն, նույնպես ներկայացված էին Սեյմում։ Եվ Դաշնակցությունն էլ, իհարկե, իրավունք էր ստանում հռխորտալու, թե ինքը կազմում է հայ ազգի ամբողջությունը, թե իրենից դուրս հայություն չկա։ Սա մի հիվանդոտ, խեղված դրություն էր։

Դ

Այսպիսի պայմանների մեջ էր երկիրը 1918թ. սկզբին, երբ թուրքական զորքերի հրամանատարության կողմից առաջարկություն եղավ հաշտության բանակցություններ սկսել։ Դրանից առաջ, դեկտեմբերին կնքվել էր զինադադար, որի պայմաններով երկու բանակների միջև բաժանման գիծ էր որոշված և արգելված էր, որ կողմերն անցնեն այդ գիծը, մինչև զինադադարի համար որոշված ժամանակամիջոցի վերջը։ Պետք է ասել, որ թեև Կովկասյան բանակի հրամանատարությունը մնում էր իր բոլոր օժանդակիչ հիմնարկությունների հետ միասին, բայց իրապես այդ մի հրամանատարություն էր՝ առանց բանակի և հեղինակության, և ներկայացնում էր անկարողության ծայր աստիճանը։ Ահագին տարածություններ ընդգրկող ռազմաճակատը պահպանելու համար մնացել էին մի քանի զզզված և սաստիկ մաշված հայկական գնդեր, որոնցից յուրաքանչյուրը հազիվ ուներ 200-400 մարդ։ Գիտեին, իհարկե, որ այս մի շատ ողորմելի ուժ է, բայց ինչպե՞ս ձեռքից տալ ամբողջ Թուրքահայաստանը։ Եվ Ազգային Խորհուրդը որոշեց զուտ հայկական զինվորական այնպիսի կազմակերպություն ստեղծել, որ բավական լինի ոչ միայն Էրզրումը, այլև Երզնկան թուրքերին ետ չդարձնելու համար։ Եվ սկսվեց մի գործունեություն, որ սաստիկ հիշեցնում էր Կռիլովի «Գորտ և ցուլ» առակը։

Ամենից առաջ հայտարարվեց, թե ճակատի պաշտպանությունը հնարավոր է հենց այն պատռճառով, որ հակառակորդ կողմը՝ օսմանյան բանակն էլ քայքայված է։ Այս մասին ամենահանգստացուցիչ լուրեր ճակատից բերել էր Արշակ Ջամալյանը, մի մարդ, որ իր կյանքի մեջ համարյա բոլոր մասնագիտությունների վարպետ էր իրեն ցույց տվել։ Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, որ իր մի քանի աշակերտների հետ կամավոր էր գնացել. և այս բանը բավական եղավ, որ նա դառնա պատերազմական հարցերի բոլորովին լավատեղյակ մասնագետ։ Իբրև այդպիսին նա եղել էր անդամ այն մասնաժողովի, որ գնացել էր Երզնկայի ճակատը՝ զինադադարի պայմանագիրը ստորագրելու համար։ Վերադառնալով՝ նա սկսել էր «փչել» դաշնակցականին հարազատ ջերմեռանդությամբ։

«Բաժանարար գծի երկարությամբ,- ասել էր նա,- յոթ վերստ լայնություն ունեցող տարածության վրա մերոնք չեն հանդիպել թուրք ասկյարների։ Բոլորը փախել են սովից ու տկլորությունից։ Խմբապետ Սեբաստացի Մուրադն իր 400 հայդուկներով մտել է Երզնկայի խրամատների մեջ, քաջաբար պաշտպանվում է և ասել է, թե մի թիզ հող չի տա թուրքին, եթե իրեն օգնություն հասցնեն»։ Այս առիթով Ջամալյանը դասախոսություններ կարդաց, մեկը հատկապես կանանց համար, որոնք, այնուամենայնիվ, անտարբերությամբ վերաբերվեցին նրա կոչերին, թեև մի դաշնակցական տիկին հանեց իր ոսկե ժամացույցը և նվիրեց «ազգի փրկության» գործին։ Պատերազմական եկամուտներով ավելի ևս հղփացած և ճարպակալած հայ բուրժուազիան չէր, իհարկե, որ կգնար Էրզրումի պարիսպները պաշտպանելու։

Ազգային Խորհուրդն էլ ծավալեց մի կրակոտ, ռազմատենչ պրոպագանդա։ Կոչեր հրապարակվեցին, խորհրդակցություններ գումարվեցին, զորաժողով

հայտարարվեց։ Առաջ քաշվեց ժողովրդական հերոս Անդրանիկը, որին տրված էր գեներալ-մայորի աստիճան։ Նրան հանձնարարված էր կազմակերպել գեթ մի 2 հազարանոց զորաբաժին և գնալ Էրզրումը պաշտպանելու։ Անդրանիկն էլ մի պերճախոս կոչ հրապարակեց, խնդրեց, որ հայ ժողովուրդը կա՛մ իրենից ետ վերցնի իրեն տված «ժողովրդական հերոս» տիտղոսը, կա՛մ այնքան զինվոր տա, որ ինքը կարողանա կատարել ժողովրդական հերոսի իր պարտավորությունն այս ծանր հանգամանքների մեջ։ Ազդված այդ հորդորից, բայց առավելապես ուրիշներին հորդորելու համար՝ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը «Հորիզոնի» մեջ ասաց Անդրանիկին, թե նրա տրամադրության տակ է դնում իր տան երեխաներին։ Առհասարակ, լրագրության ասպարեզում գործը շատ փայլուն կերպարանքով էր ներկայանում։ Ամեն կողմից թռչում էին հեռագրեր, որոնցով բազմաթիվ ընկերակցություններ, կազմակերպություններ, խմբեր իրենց դնում էին Ազգային Խորհրդի տրամադրության տակ։ Մանավանդ շատ բան սպասելի էր թուրքահայերից, որոնք տաք-տաք ժողովներ էին անում Թիֆլիսում իրենց հայրենիքի պաշտպանության գործը լրջորեն հիմնավորելու համար։

Մինչ սա այսպես էր, թուրք հրամանատար Վեհիբ-փաշան, տեսնելով, որ իր առջև գրեթե ոչ ոք չկար կանգնած, խախտեց դեկտեմբերյան զինադադարով որոշված գիծը և, քշելով Մուրադին Երզնկայից, առաջ անցավ դեպի Էրզրում՝ կովկասյան հրամանատարությանը հայտնելով, թե այդպես պիտի առաջ գնա, մինչև որ հանդիպի ռուսական զորքերին։ Ոչինչ չկարողանալով դուրս հանել այս արշավանքի դեմ՝ Անդրկովկասյան կոմիսարիատը շտապեց օգտվել նույն Վեհիբ-փաշայի առաջարկությունից և վերջնական հաշտության բանակցություններ սկսել։ Համաձայնություն կայացավ, որ օսմանյան և անդրկովկասյան լիազորներն իրար հանդիպեն Տրապիզոն քաղաքում։ Այնքան անտեղյակ էր Անդրկովկասյան կոմիսարիատը, որ կարծել էր, թե ռուսական զորքը դեռ բոլորովին չէր թողել Տրապիզոնը, և թուրքերն էլ դեռ բոլորովին չեն տիրացել նրան. այնպես որ, կարելի էր այն հարմար տեղ համարել բանակցություններ վարելու համար։

Սեյմն ընտրեց իր անդամներից պատգամավորներ ըստ ազգությունների՝ վրացի, թուրք, հայ. մշակեց և վավերացրեց հաշտության առաջնակարգ սկզբունքները։ Դրանք իսկապես երկու կետից էին բաղկացած. առաջին՝ վերականգնում այն պետական սահմանների, որոնք գոյություն ունեին Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1914թ. պատերազմի հայտարարման րոպեին, և երկրորդ՝ պատվիրակությունը ձեռք է բերում ինքնորոշման իրավունք Արևելյան Անատոլիայի համար, մասնավորապես, ավտոնոմիա Թուրքահայաստանի համար՝ թուրքական պետականության շրջանակների մեջ։ Այս որոշումը կայացվել էր միաձայն, հետևապես պետք էր սպասել, որ ամբողջ պատվիրակությունը միահամուռ կպաշտպաներ այն։

Փետրվարի երկրորդ կեսն էր։ Մի օր ինձ մոտ եկան Հ. Քաջազնունին և Ս. Մամիկոնյանը, որոնք Ազգային Խորհրդի կողմից ինձ հայտնեցին, թե ես նշանակված եմ հայ պատվիրակների խորհրդական՝ Հայոց հարցի վերաբերյալ տեղեկություններ տալու համար, և խնդրեցին պատրաստվել՝ մի քանի օրից հետո ճանապարհվելու համար։ Ես հրաժարվեցի՝ ասելով, որ հիվանդ եմ, ծովային ճամփորդություն տանել չեմ կարող։ Բայց ոչ մի կերպ ազատվել չկարողացա։ Գնացի նախագահ Ահարոնյանին և մյուս անդամներին էլ խնդրեցի, բայց դարձյալ իզուր։ Ամենքը գտնում էին, որ իմ գնալը շատ անհրաժեշտ է. այնպես որ, եթե հիվանդությունս սաստկանա էլ, դարձյալ այդպիսի մի զոհ իմ կողմից շատ չի լինի Հայոց հարցի համար։ Հավատացած էին, թե թուրքերը պիտի նստեն, երկար ու բարակ մեզ հետ «մսլհաթ անեն» Բեռլինի 61-րդ հոդվածի մասին, և ուզում էին այնպես անել, որ մի լավատեղյակ մարդ ղեկավարի հայ պատվիրակներին այդ խոսակցության մեջ։ Այնքան բաներ պատահելուց հետո անգամ՝ մենք դեռ չէինք բուժվել մեր քաղաքական դժբախտ ռոմանտիզմից…

Ազատվելու ճար ու հնար չմնաց, որքան աշխատեցի։ Շատ դժգոհ, ուղղակի վրդովված դրության մեջ նշանակված օրը գնացի Ազգային Խորհրդի նիստին՝ հրահանգներ առնելու համար։ Բայց այդ ի՞նչ նիստ էր։ Կուսակցություններն սկսեցին իրար հետ ընդհարվել, առաջացավ շփոթ, աղմուկ, իրար վրա բղավում էին, նախագահը ստիպված եղավ նիստը փակել։ Առաջին անգամն էի տեսնում մեր այդ ազգային բարձրագույն հաստատությունը գործի նստած, և նա ինձ վրա թողնում էր անասելի ողորմելի տպավորություն։ Միակ լավ բանը, որ թվում էր՝ ազատում էր ինձ Տրապիզոն գնալու տխուր անհրաժեշտությունից, այն էր, որ նիստի վերջին լուր բերին, որ Բաթումից ստացվել է մի աղավաղված ռադիո՝ Կարախանի ստորագրությամբ, որ հայտնում էր, թե Բրեստ-Լիտովսկում ստորագրվել է հաշտության դաշնագիր Խորհրդային Ռուսաստանի և Գերմանիայի ու նրա դաշնակիցների միջև, և հաշտության պայմանագրերից մեկն էլ այն էր, որ Թուրքիան ետ է ստանում 1878 թվին իր կորցրած Բաթումի, Արդահանի և Կարսի սանջակները։

Բանակցություններն այլևս ավելորդ էին։ Վեհիբ-փաշան հեռագրով պահանջեց մաքրել Բաթումը, Արդահանը և Կարսը։ Բայց մի երկու օրից հետո դրությունը պարզվեց։ Անդրկովկասյան կոմիսարիատը ոչ միայն չէր ընդունում Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, այլև բողոքում էր նրա այն հոդվածի դեմ, որ վերաբերվում էր երեք սանջակներին, իբրև մի բռնի օտարացման դեմ, որ կատարվել է առանց կովկասյան ազգերի համաձայնության։ Ուստի և որոշվեց անմիջական բանակցությունների մեջ մտնել Թուրքիայի հետ՝ հաշտության պայմաններ մշակելու համար։ Թուրքիան համաձայն էր, բայց ոչ թե Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը վերաքննելու և փոփոխելու, այլ պարզապես բարեկամության և դրացիության պայմաններ մշակելու համար։ Այսպիսի անորոշության մեջ էր պատվիրակությունը մեկնում Թիֆլիսից Տրապիզոն, ես էլ նրա հետ։ Բանակցության երկու գլխավոր կետերը մնում էին անփոփոխ։ Նորակազմ անդրկովկասյան պետությունը շատ խամ ու խակ էր իրեն ցույց տալիս միջազգային հարաբերությունների մեջ։

Ինչևիցե։ Թիֆլիսը ես թողնում էի ծանր ու մռայլ մտածումների մեջ։ Հաց չկար, հանգստություն չկար, կարծես այդ մի խաղաղ քաղաք չէր, այլ պատերազմական դաշտ, ուր օր ու գիշեր միալար հրացանաձգություն էր տեղի ունենում, որը երբեմն ընդունում էր կատաղի կերպարանք։ Կայարանում կանգնած էր հատուկ գնացք պատվիրակության համար։ Շքեղ սալոն-վագոն և սեղանատուն՝ սա պատվիրակների համար էր, մնացածը պիտի տեղավորվեին սովորական վագոններում։ Ես տեղ գտա մի վագոնի մեջ, որի վառարանը կոտրված էր, իսկ ցուրտը զգալի էր ինձ համար։ Գնացքը դեռ մի կայարան նոր անցած՝ մեզ հացի կանչեցին։ Շատո՛նց էր, որ չէինք տեսել այսպիսի բաներ՝ սպիտակ հաց, շվեյցարական պանիր, հնդկահավ։ Փոխարքայական պալատի պաշարներից էին, բայց չկարծեք, թե ամեն օր այդպիսի բաներ էին ուտեցնում մեզ։

Սեղանատանը ծանոթացանք պատվիրակության հետ։ Նա բավական ստվարաթիվ էր, որքան հիշում եմ՝ մոտ 45-50 հոգի, հաշվելով այդ թվի մեջ ամենքին, մինչև գրագիրներն ու ծառաները։ Պատվիրակության գլուխն էր ներքին գործերի կոմիսար Չխենկելին։ Վրացիներն ամենաբազմամարդ տարրն էին պատվիրակության մեջ։ Իսկական պատվիրակները չորս հոգի էին՝ երկու սոցիալ-դեմոկրատ, մի սոցիալիստ-ֆեդերալիստ և մի նացիոնալ-դեմոկրատ։ Ամեն ֆրակցիա ուներ իր խորհրդականները, բացի դրանից՝ կային հնագետներ, պատմագետներ, որոնք բերել էին իրենց հետ մեծ քանակությամբ գրքեր՝ ապացուցելու համար, որ Բաթումից մինչև Օլթի վրացական հողեր են եղել մի ժամանակ։ Թուրք պատվիրակների թիվը հինգն էր՝ երկու մուսավաթական և երեք սոցիալիստ զանազան գունավորումների։ Նրանք էլ ունեին իրենց խորհրդականները, և նրանց մեջ էր «Մուսավաթի» հիմնադիր և հայտնի պանթուրքիստ Ռասուլզադեն։ Հայ պատվիրակները երկու հոգի էին, երկուսն էլ դաշնակցական՝ Հովհաննես Քաջազնունի և Ալեքսանդր Խատիսյան։ Նրանց խորհրդականն էր Ռուբեն-փաշան, որ, սակայն, շուտ վերադարձավ Տրապիզոնից։ Կար բացի ինձնից և մի այլ հայ խորհրդական, բայց ֆինանսական գործերով՝ Մենտոր Բունիաթյան։ Հիշատակեմ, որ մեզ հետ էր նաև կովկասյան շտաբի պետ գեներալ Լևանդովսկին, և նրա հետ՝ մի խումբ սպաներ։

Երեկոյան Չխենկելին մեզ ամենքիս ժողովեց սեղանատանը՝ գործունեության ծրագիրը մշակելու համար։ Ժողովից հետո, թեյի վրա խոսակցություն սկսվեց քաղաքական բովանդակությամբ, որ պտտվում էր Թուրքիայի շուրջը։ Մեր Խատիսյանը, հավատարիմ իր համակերպվող բնավորությանը, արդեն ավանսներ էր տալիս, թե Դաշնակցությունը պիտի փոխի իր օրիենտացիան։ Այլևս ո՛չ արևմտյան, ո՛չ էլ հյուսիսային պիտի լինի հայերի օրիենտացիան, այլ արևելյան։ Այս հայտարարությունն արժանանում էր թուրք պատվիրակների բարձրաձայն հավանություններին։ Ինձ հետաքրքրողը Խատիսյանը չէր։ Բոլոր ժողովվածների մեջ մեծ հետաքրքրություն ինձ համար ներկայացնում էին մեր թուրք ընկերակիցները։ Բացարձակ կերպով նրանք հայտարարում էին, որ Անդրկովկասի կենսական շահը

պահանջում է, որ ռուս տիրապետողներ այլևս չլինեն այնտեղ։ Բոլոր ազգերը պիտի միանան՝ կանգնեցնելու համար հյուսիսից եկող ամեն մի արշավանք։

Մեր պատվիրակությանը վիճակված էր մի ամսից ավել ապրել Տրապիզոնում։ Այդ բավական ժամանակ էր, որպեսզի ես կարողանայի ավելի մոտիկից ծանոթանալ մեր թուրք ընկերակիցների հետ, մանավանդ որ նրանք հենց սկզբից սկսեցին վերաբերվել ինձ մի առանձին համակրանքով՝ իբրև մի մարդու, որ միմիայն «քիթաբ ադամի» է (գրքի մարդ) կամ «թարիխջի» (պատմաբան)։ Մեր մերձեցմանը նպաստում էր այն հանգամանքը, որ ես բավական լավ խոսում էի թուրքերեն և բացի դրանից՝ պատվիրակներից մեկը՝ Խալիլ-բեկ Խասամեդովը, գանձակեցի էր, ուրեմն համարյա թե ինձ հայրենակից։ Եվ մենք նստում էինք ու խոսում շատ ու շատ բաների մասին։ Օրինակ, մի օր ես խնդրեցի Ռասուլզադեին, որ ինձ բացատրի պանթուրքիզմի էությունը, ձգտումները։ Եվ նա ինձ ամենայն բարեխղճությամբ մի ամբողջ դասախոսություն կարդաց, թե ինչպես է տարածվել այդ շարժումը, թե ինչ միացնող դեր է կատարել օսմանյան գրականությունը լեզվով իրարից հեռացած թուրք ցեղերի մեջ։ Իսկ շարժման քաղաքական նպատակն է՝ մի թուրքական կայսրություն՝ Զմյուռնիայից մինչև Միջին Ասիա։ Չափազանց հետաքրքրական էին իմ խոսակցությունները նաև Խալիլ-բեկ Խասամեդովի հետ։ Նա ինքն էր որոնում հարմար ժամ «Լեռ-էֆենդիի» (այսպես էին ինձ անվանում բոլոր թուրք պատվիրակները) հետ բացեիբաց, սրտանց խոսելու համար։

«Մուսավաթի» ազդեցիկ և հեղինակավոր ներկայացուցիչներից մեկն էր նա և ամենայն անկեղծությամբ պատմում էր, որ Դաշնակցության քաղաքականությունը մեզ՝ հայերիս կատարյալ կործանում պիտի բերի։ Դաշնակցականները, ասում էր նա, Երևանի շրջանում 20-25 թուրք գյուղեր են քանդել։ Եվ գիտե՞ք ինչ բան է մի հատ քանդված մուսուլմանական գյուղը։ Այն իսկույն ցավագին արձագանք է տալիս այստեղ՝ Թուրքիայում, հուզում է ժողովրդին, որ և պահանջում է իր կառավարությունից վրեժխնդրություն, իր եղբայրակիցների ազատություն։ Այսպիսով ստեղծվում է ամեն տեղ մի շատ վատ տրամադրություն հայերի նկատմամբ։ Այս շատ վտանգավոր է, թող մտածեն ձեր առաջնորդները։ «Սիզա կըրալլար, Լեռ-էֆենդի, բախ, գեյիրամ, բու բիր գյուն դըր» (ձեզ կկոտորեն, Լեռ-էֆենդի, տես, ասում եմ, այս մի օր է)։

Որքա՜ն օգուտներ մենք կլինեինք շահած, եթե փոխանակ իրար դեմ մաուզերներ մեկնելու, իրար կողքի նստեինք, խոսեինք, իրար հասկանայինք։ Երեսուն տարի մենք միայն մի լեզու գիտեինք՝ «կայծե՛նք» (Ակնունիի սիրած բառը)։ Եվ մինչ մենք կայծում էինք ու սովորում, որ կայծելուց ավել բան չէր պահանջվում, մեր թիկունքում աճել ու պտուղներ էր տվել մի ամբողջ քաղաքական շարժում՝ թուրք ցեղերի զարթնումը։ Պե՞տք է ավելացնել, որ Խասամեդովի բոլոր խոսքերը ես պատմում էի մեր դաշնակցական երկու պատվիրակներին և մանավանդ հռչակավոր

Ռուբեն-փաշային։ Եվ պե՞տք է արդյոք ավելացնեմ, որ ոչ փաշաները լռությամբ էին ինձ պատասխանում, իսկ փաշան՝ արհամարհական ժպիտով…

Ե

Հրաշալի արևոտ և հանդարտիկ մի օր էր, երբ մենք դուրս եկանք Բաթումից։ Առավոտյան մեր գնացքի առջև շար ընկավ մի վաշտ զորք։ Երիտասարդ վրացի սպաներից էր այն բաղկացած, որոնք դեն էին դրել իրենց սրերը և վերցրել էին հրացաններ՝ հասարակ զինվորների դեր կատարելու համար։ Սա ցույց էր տալիս, որ վրացական զորամասերն էլ քայքայման դրության մեջ էին։ Եվ սակայն միայն Բաթումը՝ Սև ծովի հարավային ափի այդ ահեղ բերդն ու հոյակապ նավահանգիստը, պաշտպանելու համար որքա՜ն զորքեր են հարկավոր։ Ահա նրա ահարկու մարտկոցները սարի լանջերից իրենց թնդանոթների բերանները դեպի ծովն են ուղղել, բայց թվում են կախարդված, մեռած, ամայի… Եվ այսպիսի՜ ինքնապաշտպանողական միջոցների վրա էին դրել իրենց հույսը վրաց մենշևիկները, երբ շտապում էին ամեն գնով իրագործել Ռուսաստանից անջատվելու իրենց տենչանքը։ Բաթումը մի չափազանց մեծ ամրություն էր, և այն կարող էին պաշտպանել մի մեծ պետության ուժերը։ Հարկավոր էր ոչ միայն ցամաքային, այլև ծովային պաշտպանություն, մինչդեռ նրա մեծ և առաջնակարգ նավահանգստում մի հատ պատերազմական փոքրիկ նավ կար, այն էլ պիտի մեզ տաներ Տրապիզոն։

Այդ նավը ռումինական էր և կրում էր Ռումինիայի թագավոր Կարլի անունը, որ թեև այժմ ջնջված էր, որովհետև նավը գտնվում էր բոլշևիկների ձեռքին, բայց և այնպես, նավազները շարունակում էին այն անվանել «Կարլուշկա»։ Կեսօրին մոտ մեր իրերը տեղափոխեցինք այդ «Կարլուշկայի» մեծ դահլիճը։ Մեզ հետ նույն նավը տեղափոխվեց և երիտասարդ սպաների վաշտը, որ պիտի դառնար մեր պաշտպանությունը բանակցությունների ընթացքում։ Շուտով «Կարլուշկան» հնչեցրեց իր հուշկապարիկը և սկսեց գրեթե աննկատ սահել իր փոթորիկներով այնքան հռչակված Եվքսինյան Պոնտոսի՝ մեր բախտից՝ անշարժ, հայելանման ալիքների վրայով։ Մենք ամենքս դուրս էինք թափվել տախտակամածի երեսը և վայելում էինք հազվագյուտ եղանակը։ Սքանչացած էի ես մանավանդ, որ կյանքիս մեջ առաջին անգամն էի ծովային ճանապարհորդություն կատարում։

Մեր «Կարլուշկան» բոլորովին էլ պատերազմի համար չի եղել շինված։ Այդ մի սովորական տախտակե ճանապարհորդական նավ էր. միայն ներկա պատերազմի ժամանակ նրա տախտակամածի վրա՝ առջևում և ետևում ամրացրել էին երկու մեծ թնդանոթ, անունը դրել էին «օժանդակ հածանավ» և մտցրել Սև ծովի ռուսական նավատորմի մեջ։ Նավազների մի մասը՝ փոքրաթիվը, ռումինացի էր, մեծագույն մասը՝ ռուս, ամենքն, ինչպես ասացի, բոլշևիկներ։ Հասկանալի է, թե որպիսի հետաքրքրությամբ և, ինչո՞ւ թաքցնել, երկյուղով էինք մենք նայում նրանց։ Դեռ բոլորովին նոր էր այս տարրի տիրապետությունը, դեռ Ռուսաստանում անհնարին կատաղությամբ քաղաքացիական պատերազմ էր բոլորված, և մեզ միշտ այն էին

պատմել լրագրերը, թե գազաններ են բոլշևիկները և ոչ թե մարդիկ։ Եվ ահա այդ «գազանների» մեջ էինք մենք, նրանց կատարյալ իշխանության տակ, ինչ ուզեն՝ կարող են անել մեզ հետ, հենց վերցնել և «Կարլուշկան» տանել Սևաստոպոլ ու մեզ հանձնել հեղափոխական տրիբունալին՝ իբրև հակահեղափոխականների…

Այսպիսի ակնարկներ կիսաշշուկով լսվում էին մեր մեջ։ Բայց զարմանալի բան… «Գազանները» չեն հարձակվում մեզ վրա, նավային ծառայությունը տանում են օրինակելի կարգապահությամբ, մեծ թե փոքր ճանաչում են իրենց պարտավորությունները. և ոչ միայն այդ՝ այլև հիանալի խոսքընկերներ են։ Ահա մեկը, շատ լավ զարգացած մի մարդ, երևի ծովային սպա հին ռեժիմի ժամանակ, ծովային կյանքից պատմություններ է անում, և ի՜նչ՝ երկրագնդի շուրջը մի քանի անգամ պտտված մարդ է… Մեկ Սինգապուրն է, մեկ՝ Մալայան արշիպելագը, մեկ՝ Մադերան, մեկ՝ Նյու Յորքը… Որտեղից որտեղ… Եվ պատմում է որքա՜ն լավ, ուղղակի տաղանդավոր կերպով։ Ահա մի ուրիշը՝ հասարակներից՝ խոխոլի արտասանությամբ, նստում է իմ և Խատիսյանի միջև։ Շատ երիտասարդ չէ, ծովային մի գայլ, որի կապույտ աչքերը կարող են հինգ վերստի վրա որոշել, թե այն ծուխը, որ երևում է՝ «Համիդիե» հածանավի ծուխն է և ոչ թե մի ուրիշ նավի։ Խատիսյանը խոսեցնում է նրան ուրիշ բաների մասին, և ես լսում եմ լարված ուշադրությամբ։

Նա հավատարիմ է իր զինվորական դաստիարակությանը, կռվողի ու երկիր պաշտպանողի գիտակցությունն անաղարտ է նրա մեջ։ Սիրում է նա սևծովյան նավատորմն իբրև իր սեփական ընտանիքը, պատմում է դեպքեր, թե ինչպես այդ նավատորմը քաջաբար պայքարում էր թուրք-գերմանական ծովային ուժերի դեմ, խոսում է հաշտության, Ռուսաստանի շահերի մասին։ Ուղիղ դատողություններ, ժողովրդական առողջ տրամաբանություն… Բայց հենց որ հարցը գալիս է տապալված ռեժիմին, ծովային գայլը կերպարանափոխվում է։ Այստեղ ո՜չ մի զիջում, ո՜չ մի մեղմություն… Նա տեսնում է իր առջև մարդկանց մի սարսափելի դասակարգ՝ շահագործողներին, որոնց նա ատում է անհունորեն։ Ոչի՜նչ զիջում այդ շահագործողներին։ Եվ նրա կապույտ աչքերի մեջ վառվում է մի բոց, որի մեջ, թվում է՝ մի վայրկյանում պիտի մոխրանա ամբողջ աշխարհի շահագործող մարդկությունը։ Վա՜յ ձեզ, շահագործողներ, ուր էլ լինեք դուք...

Երեկոյան հասանք Տրապիզոն, բայց ափ չիջանք ոչ միայն այդ օրը, այլև հետևյալ մի քանի օրերը։ Թուրքական պատվիրակությունը դեռ չէր եկել Կ.Պոլսից, և մենք մնացինք «Կարլուշկայի» մեջ՝ սպասելու նրան։ Ծովափը ահագին տարածության վրա ներկայացնում էր մի մեծ բանակի հապճեպ, խուճապային փախուստի հետքերը։ Հարյուրավոր, հազարավոր սայլեր, սայլակներ, բեռնակիր ավտոմոբիլներ և ուրիշ տեսակ-տեսակ իրեր թափթփված էին սոսկալի անկարգության մեջ։ Պետք է նկատել, որ Տրապիզոնը վերցվելուց հետո Նիկոլայ Բ-ի հրամանով պաշտոնապես կցված էր Ռուսաստանին, և այդ պատճառով ռուսաց պատերազմական գանձարանը, չսպասելով պատերազմի վերջին, ահագին ձեռնարկումներ էր սկսել այդ

նավահանգիստը լավացնելու, մեծացնելու, ամրացնելու, հաղորդակցության համար ճանապարհներով ճոխացնելու համար։

Երկաթուղի էր շինվում Բաթումից մինչև Տրապիզոն, և այս վերջինի ծովափում դարսված էին ռելսերի ամբողջ լեռներ։ Իսկ թե որքան պաշար, ռազմամթերք և հարյուր ու մի տեսակ հանդերձանքներ կային մթերված քաղաքի մեջ, այդ երևակայել անգամ չէր կարելի։ Երբ ռուսական բանակը, թողնելով ամեն ինչ, հեռանում է հապճեպով, քաղաքում մնում է մի վրացական գունդ, որին հանձնվում է այդ անհուն հարստությունների պաշտպանությունը։ Սակայն գունդը հայտնում է, թե գնում է Վրաստանի սահմանները պաշտպանելու և հեռանում է Տրապիզոնից։ Եվ որովհետև այդտեղ սկսում էր գլուխ բարձրացնել անիշխանությունը, ուստի մնացած ռուսները (քաղաքային վարչություն, հեղափոխական կազմակերպություններ) իրենք գնում են որոնելու թուրքական զորքեր և, գտնելով մի գունդ՝ հեռու տեղում, բերում և քաղաքը հանձնում են նրան։ Իսկ ռուսաց պատերազմական գույքի պահպանության համար մնում է գեներալ Կուլասովսկին՝ մի քանի սպաների և այլ ծառայողների հետ։ Կովկասյան գլխավոր հրամանատարությունը ուրիշ ճար չգտնելով և գոնե թղթի ձևականությունը փրկելու համար, հրամայում է նրան ամբողջ գույքն առանձին ցուցակներով հանձնել թուրք զինվորական իշխանությանը՝ իբրև ի պահ…

Մեր «Կարլուշկայի» գալը փրկություն էր ամենից առաջ հենց այդ ռուս զինվորական և քաղաքացիական պաշտոնյաների համար։ Նրանք շտապեցին գալ մեզ մոտ և անվերջ ու անսահման գանգատներ բերել։ Գեներալ Կուլասովսկին ասում էր, թե ինքը պարզապես իրեն զգում է իբրև պատվավոր գերի թուրք զինվորականների ձեռքին, որոնց կեղծ, առերես քաղաքավարական ձևերի տակ թաքնված է արհամարհանք և ատելություն։ Ինչո՞ւ զարմանալ։ Մի երկիր, որ դեռ երեկ ջախջախված էր, իր մեծ մասը կորցրած, այսօր հրաշքով, առանց մի կաթիլ արյուն թափելու՝ դարձել էր հաղթող, տիրացել էր անհաշիվ հարստությունների և իր ձեռքում ուներ երեկվա հաղթողներից մի քանիսին՝ անօգնական ու անպաշտպան դրության մեջ։ Ուրիշ ի՞նչ կերպ կարող էր վարվել նա…

Տրապիզոնում այսպես գերի մնացած ռուս զինվորներից մեկը թիֆլիսեցի էր և շատ լավ ճանաչում էր Խատիսյանին։ Նա շատ մեծ զարմանք հայտնեց, որ մի հայ, թեկուզ նույնիսկ խաղաղարար պատվիրակության անդամի դիրքով, համարձակություն ունի մտնելու Թուրքիա։ Այդ զարմանքը կատարյալ սարսափի փոխվեց, երբ նա իմացավ, որ բացի Խատիսյանից չորս ուրիշ հայեր էլ կան պատվիրակության մեջ։

- Աստված իմ,- ասում էր նա՝ ձեռքերը իրար խփելով,- բայց թուրքի մոտ հայի անուն տալ անգամ չի կարելի։ Կատաղությունն անչափ է, անսահման է հայերի դեմ… Եվ դուք պիտի նրանց հետ խոսեք իբրև հայե՞ր, հայերի մասի՞ն…

Այ քեզ բան… իսկ մեզ ուղարկել են այստեղ Հայաստանի ավտոնոմիա պահանջելու համար… Կատարյալ խեղկատակներ են եղել այս անդրկովկասյան նոր պետության դիվանագետները։

Եվ Հայոց հա՞րցն է միայն, որի մասին չի կարելի խոսել։ Իսկ որքա՜ն ստորացում ամբողջ պատվիրակության համար։ Օրեր են անցնում, թուրք պատվիրակությունը չկա ու չկա, իսկ մեր «Կարլուշկայի» մեջ արդեն սով է սկսվում։ Ո՛չ ափ ենք իջնում, ո՛չ հետ ենք գնում։ Ափ իջնողները միայն մեր թուրք ընկերակիցներն են։ Գնում են, ամբողջ օրը մնում, երեկոյան վերադառնում ուրախ ու գոհ, ինչպես Ավետյաց երկրից։ Ավետյաց երկիր Տրապիզո՜նը, այն էլ ինտելիգենտ մարդկանց համար, այդ կեղտոտ ու հոտած արևելյան քաղաքն իր սոսկալի նեղ, ծուռումուռ փողոցներով, մանր, ցածրիկ, տգեղ տներով։ Եղած մեծ ու գեղեցիկ շինություններն էլ հույներին էին պատկանում։ Ի՞նչ համեմատություն նույնիսկ Բաքվի հետ, ուր թուրքերն այնքան հոյակապ տներ ունեն։

Ասացե՛ք, ծիծաղ չէ՞ր, ծաղր չէ՞ր մեր առաքելությունը… Ամեն օր թուրքական զորամասերը երաժշտությամբ անցնում էին Տրապիզոնի միջով դեպի Բաթումի կողմը՝ այն գրավելու համար։ Էլ ի՞նչ էր մնում մեր բանակցությունների համար։ Ոչ ոք չգիտեր։ Ոչ ոք չէր հասկանում, որ ամեն բանի մեջ ուժն է վճռողը։ Իսկ անդրկովկասյան մեծախոս պետությունը չուներ ոչ մի ուժ և չէր կարող վախեցնել նույնիսկ ամենավախկոտին։ Բայցևայնպես, մենք գնում էինք, խոսելու էինք գնում. ինչ կբարեհաճեին անել թուրքերը, մենք էլ նայած դրան՝ թե որ կարողանայինք մի բան անել… Մեզ շատ խղճում էին «Կարլուշկայի» բոլշևիկ նավազները։ Շատ անգամ նրանք նավի քթի մեծ թնդանոթի կողքին կանգնած՝ հանաքով ասում էին. «Հապա թե «Կարլուշկան» մի քանի անգամ թքի քաղաքի վրա. այդպես չեն անի»։ Բայց եթե «Կարլուշկան» «թքեր»,- մենք սա հետո իմացանք,- իսկույն կրակ պիտի բաց անեին լեռան լանջերի վրա ռուսների ձեռքով դրված մեծ թնդանոթները, և այն ժամանակ մեր «Կարլուշկայից» հետք անգամ չէր մնա…

Բայց մեզ, վերջապես, խղճաց Ռաուֆ-բեյը՝ օսմանյան պատվիրակության նախագահը, որ իր հետևորդներով ժամանեց Կ.Պոլսից և իսկույն բանակցություններ սկսեց Չխենկելիի հետ. համաձայնություն կայացավ, որ մեր պատվիրակությունն անհապաղ ափ իջնի, սակայն առանց մեր զինվորական պահակի։ Իրիկնապահ էր, երբ մենք հրաժեշտ տվինք մի քանի օրվա մեր բնակությամբ արդեն մեզ հարազատ դարձած «Կարլուշկային» և մանավանդ մեր երիտասարդ և սիրելի սպա-զինվորներին ու նստեցինք մակույկների մեջ։ Երբ ափ ելանք, մեզ դիմավորեցին մի խումբ թուրք պաշտոնյաներ, և նրանցից մեկը ողջույնի մի քանի խոսք ասաց գերմաներեն լեզվով։ Նվագեց զինվորական երաժշտությունը, փողոցի զանազան կողմերում ուղղակի հողի վրա ածած նավթն այրեցին - ահա և ասիական «չրաղվան»։ Կառքերով մեզ սկսեցին ծովափից փոխադրել մեզ համար պատրաստված տունը, ուր մեզ սպասում էին թեյը,

ապա և՝ ընթրիքը, որ մանավանդ շատ ի դեպ էր՝ «Կարլուշկայի» վրա մեր քաշած սովից հետո։

Մենք իմացանք, որ ամբողջ այդ օրը Տրապիզոնի մեջ մունետիկները բարձր ձայնով ավետել են, թե սուլթանի զորքերը հետ են վերցրել Էրզրումը, և այդ առիթով ուրախություններ են կատարվել։ Հասկանալի է, թե որքան տխրություն պիտի պատճառեր այդ լուրը մեր պատվիրակությանը։ Պետք է ասեմ, որ վրացիները մեծ հույս ունեին հայ զորքերի և հայդուկային խմբերի քաջության ու դիմացկունության վրա։ Նրանցից ոմանք մեզ ասում էին, թե իրենց սպասելիքը մեր զինվորներից ավելի շատ է, քան իրենց զինվորներից։ Բայց Էրզրումի անկումն այն առաջին մեծ հարվածն էր, որ գալիս էր ցնցելու այդ հավատը. մի բան, որ հետո ավելի ևս զարգանալով՝ պիտի վերին աստիճանի խախուտ դարձներ հայ-վրացական զինակցության հնարավորությունները։

Էրզրումի անկում… Չափազանց մեծ բառեր գործածեցի ես. մինչդեռ դեպքը շատ փոքր է եղել, բայց ուռցվել է տասնապատիկ։ Էրզրումը պատերազմով չէր վերցված։ Անդրանիկը ավտոմոբիլի մեջ կանգնած՝ հանել է թուրը և ասել, որ ամենքը գնան իր ետևից, բայց ոչ ոք չի գնացել։ Սկսվել է նահանջը, և թուրքերն առանց դժվարության մտել են հռչակավոր բերդի մեջ։ Այսպես մեզ պատմեցին Կովկաս վերադառնալուց հետո։

Զ

Մեզ հատկացված էր Թեոֆիլակտիս հարուստ հույնի տունը, որ եվրոպական մի գեղեցիկ շինություն էր՝ հին հունական տան բաժանումներով։ Առաջին հարկում սեղանատունն էր և ընդարձակ «ատրիումը», երկրորդ հարկը հատկացված էր բուն պատվիրակներին, երրորդում ապրում էինք մենք՝ հասարակներս։ Հասարակ լինելը, սակայն, այս անգամ այնքան էլ մեծ մեղք չէր։ Մեր բարձրության առջև փռված էր ամբողջ Տրապիզոնը։ Ամեն րոպե մեզ էր նայում հայոց ամայացած եկեղեցու լուռ գմբեթը՝ հիշեցնելով, որ այստեղ մի ժամանակ հայ ազգաբնակչություն է եղել։ Մենք համարվում էինք Տրապիզոն քաղաքի հյուրեր, կերակրվում էինք նրա հաշվին, և մեր այս տունը բավական խնամքով էր շրջապատված։ Մուտքի մոտ միշտ կանգած էին երկու պահապան զինվորներ և պատրաստի կառքեր՝ պատվիրակների տրամադրության տակ։ Սկսվեցին կոնֆերանսի աշխատանքները. սկզբում այցելություններ և փոխայցելություններ, հետո՝ նիստերը, որոնք մեզ մոտ չէին տեղի ունենում, այլ թուրքական պատվիրակության տանը՝ Ռաուֆ-բեյի նախագահությամբ։

Իսկ արտաքին պայմանները գնալով ավելի և ավելի աննպաստ էին դառնում մեր պատվիրակության համար։ Ամենից առաջ հենց այն, որ մեր «Կարլուշկան», մնալով անփող և անպարեն, գնացել էր Բաթում իր ստանալիքը պահանջելու։ Բայց այստեղ բոլոր բոլշևիկներին ձերբակալել էին և ուղարկել Ռուսաստան, նավն էլ մտցրել էին Անդրկովկասյան «նավատորմիղի» մեջ, որ բաղկացած էր, որքան հիշում

եմ, մի քանի հատ փոքր նավերից։ Սակայն հեռացնելով ռուս նավազներին՝ Բաթումի իշխանությունները միամտություն էին ունեցել թողնելու ռումինացի նավազներին։ Եվ ահա նրանք մի քանի ժամանակից հետո սարքում են բոլոր հանգամանքներն այնպես, որ դուրս են գալիս Բաթումից և «Կարլուշկային» փախցնում տանում են Ռումինիա։

Մեզ համար հարցն իհարկե այդ դեպքերը չէին, այլ այն, որ մենք մնացինք աշխարհից կտրված, գերիներ՝ թուրքերի ձեռքին։ Այս դրությունը տևեց մոտ երկու շաբաթ, որի ընթացքում մենք մեզ զգում էինք անտանելի դրության մեջ։ Ճիշտ է, հաղորդակցություն մի կերպ պահպանվում էր մոտորանավակներով և հատուկենտ մարդիկ գնում էլ էին, գալիս էլ, բայց գլխավորն այն էր, որ մենք ռադիոհեռագիր չունեինք և չէինք կարողանում ո՛չ լուր ուղարկել, ո՛չ ստանալ։

Այս միջոցին էր, որ առավոտյան իմացանք, թե Ռասուլզադեն, որ գնացել էր Թիֆլիս, գիշերը նավակով ճանապարհ է ընկել Բաթումից և եկել Տրապիզոն։ Առավոտյան թեյին չտեսանք նրան, գալուն պես գնացել էր Վեհիբ-փաշայի մոտ, որ նոր էր եկել Տրապիզոն։ Չխենկելին մեզ հայտնեց, որ Ռասուլզադեն տեղեկություններ է բերել Բաքվում տեղի ունեցած խոշոր դեպքերի մասին և մանրամասն զեկուցում կտա մեր ընդհանուր ժողովին՝ ճաշից առաջ։ Բայց մինչև այդ էլ մենք բավական բան իմացանք այն դեպքերի մասին, որոնք կատարվել էին Բաքվում, մարտի 30-ին։ Մեծ կսկիծով իմացանք, որ սպանվել է Լևոն Աթաբեկյանը և այլ ցավալի մանրամասնություններ։ Թուրք պատվիրակները շատ տխուր էին և դառնացած։ Ռասուլզադեն թեև Բաքվում չէր եղել, բայց նրա զեկուցումը մանրամասն էր, թեև ինչպես հետո պարզվեց ամենքիս համար՝ շատ էլ միակողմանի։

Միանգամայն անտանելի էր զեկուցման ունկնդիր հայերիս դրությունը։ Մինչ ամեն օր խոսք ու զրույցը համերաշխության և եղբայրության մասին էր, դարձյալ ահա, այս արյունոտ մղձավանջը։ Մենք ամբողջ սրտով ցանկանում էինք, որ երկու դաշնակցական պատվիրակները հերքեին զեկուցողի խոսքերը, ապացուցեին, որ Դաշնակցությունն անմասն է կամ գոնե շատ քիչ մաս ունի այդ արյունոտ անցքերի մեջ։ Բայց գրեթե լուռ մնացին նրանք, եթե չհաշվենք Քաջազնունու մի քանի թույլ նկատողությունները։ Եվ ի՛նչ կարող էին ասել, երբ ոչինչ չգիտեին։ Հետո ինչ հանգամանք ուզում է թող պարզվի, ինչ գույն ուզում են թող ստանան դեպքերը։ Ի՞նչ օգուտ։ Բանն այն է, որ արդեն տրամադրությունն ստեղծվել է, որ ամենքը գիտեն, թե Բաքվում հայերը կոտորել են թուրքերին։ Ճաշի ժամանակ մուսավաթական Հաջինսկին, որ նստած էր իմ դիմաց, ասաց դառնությամբ. «Ես վեց երեխա ունեմ Բաքվում, թող ամենքն էլ կոտորված լինեն, բայց Բաքվի մեջ մի հատ հայ էլ չի մնա»։ Կարող եմ ասել, որ այստեղ՝ Տրապիզոնում էր, որ վճռվեց Բաքվի հայերի սեպտեմբերյան ահռելի կոտորածը…

«Այս ի՞նչ դժբախտություն է,- մտածում էի ես մենակ մնալով,- ի՞նչ զարհուրելի դժբախտություն է, որ հայ ժողովուրդն ունի միայն մի հատիկ ներկայացուցիչ, և այդ

այն կուսակցությունն է, որ արյան քաղաքականությունից ձեռք չի վերցնում և միևնույն ժամանակ հաշտության ու բարեկամության բանակցությունների միակ ներկայացուցիչն է: Նրան չեն հավատում, նրանից խորշում են ամենքը, բայց նա անողոք է հայ ժողովրդի միակ ներկայացուցիչը մնալու մենաշնորհի մեջ: Ի՜նչ դժբախտություն: Մի՞թե չկան հայ ժողովրդի մեջ ուրիշ տարրեր, որոնք դուրս գան, բարձրաձայն հայտարարեն, թե կա այդ ժողովրդի մեջ և ուրիշ տեսակ մտածողություն, թե արյունն ու թշնամությունը պաշտամունք չեն հայ ժողովրդի համար: Չկա՞ն այդպիսի տարրեր: Երևի չկան, որ դուրս չեն գալիս»:

Այո, այո, հուսահատական էր…

Վերջապես, «Կարլուշկայի» փոխարեն Տրապիզոնի նավահանգիստ եկավ հատկապես մեզ համար մի ուրիշ նավ, որ պատերազմական ոչ մի հանգամանք չուներ. գեղեցիկ ճանապարհորդական շոգենավ էր, որ իր «Նիկոլայ Բ» անունը դեն էր շպրտել և կոչվում էր «Վեչե»: Բայց նա հենց առաջին գիշերը բռնեց մի մեծ գերմանական ռադիո՝ լիքը հաղթական ինքնագովություններով: Գերմանացիներն առաջ էին խաղացել անգլիական ճակատի վրա ու ճեղքել այն, և ահա այս առաջին քայլի փառաբանություններն էր գերմանական ռադիոն տարածում ամբողջ աշխարհի վրա. «Անգլիական դիվիզիաները փախչում են մեր առջև, մեր նորագույն թնդանոթը 70 կիլոմետրի վրա ռմբակոծում է Փարիզը»:

Այս հաղթությունը մեծ տոնախմբության առիթ էր դարձել Կ.Պոլսում: Տրապիզոնն էլ իրենն էր անում. փողոցով անցնող թուրք զորաբաժինների երգերի մեջ բարձրաձայն շեշտվում էր «ալեման-օսմանի» եղբայրությունը: Մեր պատվիրակությունը կուչ էր եկել. զգում էր ծանրացած մթնոլորտի ճնշումը: Իսկ մեր թուրք ընկերակիցները փայլում էին ուրախությունից, շարունակ կանգ էին առնում Թուրքիայի մեծ քարտեզի առաջ: Այստեղ ամեն ինչ վերստանում էր իր նախկին դրությունը: Անգլիական մի բանակ կար Պաղեստինի կողմերում, բայց նրա վրա ուշադրություն դարձնող չկար, ոչ ոք այդ կողմից վտանգի չէր սպասում: Մնում էր Բաղդադի ճակատը: Այն էլ, ինչպես պատմում էին մեր այդ ընկերակիցները՝ թուրք զինվորականների ասածները կրկնելով, շուտով կվերացվեր, և անգլիացիները կշպրտվեին Հնդկական օվկիանոս:

Ահա այսպիսի պայմանների մեջ էին ընթանում Տրապիզոնի կոնֆերանսի աշխատանքները: Մենք՝ կովկասցիներս, անճար, թուրքերը՝ ուժեղ, հաղթական, գոռոզ: Ի՞նչ կարող էր դուրս գալ ուժերի այս տեսակ փոխհարաբերություններից, բացի ծիծաղելի և խղճուկ դրությունից: Ամենագլխավոր պահանջն էր՝ ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, հանձնել Թուրքիային Բաթումը, Արդահանն ու Կարսը՝ իրենց գավառներով: Մեր պատվիրակությունն «իմաստուն» մի հնար գտավ. չտալ ամբողջը, այլ միայն մի որոշ մասերը, մի խոսքով՝ սակարկության մեջ մտնել: Շատ լավ: Միջոցը գտնված է, բայց ի՞նչ տալ և ի՞նչ պահել: Սկսեցին երկար դատել, կշռել: Վրացիների

համար շատ պարզ էր խնդիրը՝ պետք էր տալ Կարսը և պահել Բաթումը։ Թուրքերն էլ միացան այդ առաջարկությանը։

Երկար տատանումներից հետո միևնույն միտքն ընդունեց և հայ պատվիրակներից Քաջազնունին։ Բայց ի՞նչ անել Կարսի շրջանի 100 հազար հայությանը, ինչպե՞ս պաշտպանել Երևանի նահանգը և մանավանդ նրա հաղորդակցության միակ ճանապարհը՝ երկաթուղին, որ բավական երկար տեղ քերում է Արփաչայի ափը և այսպիսով կընկներ թուրքերի ոչ թե թնդանոթային կամ հրացանային կրակի, այլ [նույնիսկ] ատրճանակների գնդակների տակ։ Այս նկատառումները, որոնց պաշտպանողը ես էի խորհրդակցական ժողովներում, բերին այն եզրակացության, որ եթե կարելի է սակարկություններ անել, պետք է ընդունվի դրա համար այն սկզբունքը, որ Թուրքիային զիջվեն միայն թուրքաբնակ երկրամասերը։ Բաթումը և Կարսը որոշվում էր չզիջել։ Այս ցուցումների հիման վրա հաստատուն սահմանագիծ որոշելը հանձնվեց երեք հոգուց բաղկացած մի հանձնաժողովի, որի մեջ մտնում էինք՝ ես, վրացի երիտասարդ պատմագետ Ինղորաված և շտաբի մի ռուս սպա, որ լավ տեղյակ էր տեղագրությանը։

Սկսեցինք աշխատել։ Բայց առաջին իսկ քայլերից դժվարություններ հարուցում էր վրացական տենդենցիան՝ որքան կարելի է շատ բան տալ Կարսի շրջանից՝ Արդահանի և Բաթումի շրջաններում զիջողություն քիչ անելու համար։ Նկատեք, որ այդ բոլոր հողերը պատկանում էին ընդհանուր Անդրկովկասին։ Բայց և այնպես, «իմ ու քո»-ի խիստ հարցեր էին բարձրանում։ Այսպե՞ս պիտի երեք ազգերն ընդհանուր ուժերով երկիր պաշտպանեին։ Ես չէի ծածկում իմ զարմանքն ու դիմադրում էի չափազանց անդեմ մանր-մունր ազգայնական սակարկություններին։ Այս մասին, իհարկե, իմաց տրվեց Չխենկելիին, որն ինձանից բացատրություն պահանջեց և ստացավ սպառիչ մանրամասնություններով։ Կազմվեց հողաբաժանության ծրագիրը և հանձնվեց թուրք պատվիրակությանը։ Այս առիթով Կ.Պոլսից հրահանգ խնդրվեց։ Մինչև գալը՝ մեր պատվիրակությունն իր ձեռքն առավ ամենաթշվառը և ամենաաղետալին բոլոր հարցերից՝ Հայոց հարցը։

Առաջ նա քննվեց մեր ընդհանուր ժողովում։ Զեկուցողն էր Խատիսյանը։ Նա տվեց հարցի համառոտ պատմությունը, մանրամասնություններ պատմեց 1915-ի կոտորածներից և հատկապես Տրապիզոնի մեջ պատահածներից։ Պետք է ասել, որ հայ պատվիրակները շատ տեղեկություններ էին ստացել այդ սարսափների մասին հույն ականատեսներից։ Եվ ահա Խատիսյանը մի առ մի պատմելով դեպքերը՝ մատով ցույց էր տալիս այն սարը, որի ետևը քշվեցին հազարավոր տղամարդիկ և կանայք և կոտորվեցին։ Ցույց էր տալիս և նավահանգստի այն տեղը, ուր տարան երեխաներով լիքը մակույկներ և ամենքին ածեցին ծովը։ Ի վերջո, զեկուցողը հայտնեց, թե հայերի ցանկությունն է ստանալ իրենց հայրենիքում մի անկյուն, ուր կարող կլինեն ապրել ինքնավար կյանքով, բայց թուրքաց կառավարության հովանու տակ։

Խատիսյանը տվեց և այդ անկյունի անունը։ Դաշնակցությունն այժմ բոլորովին համեստացել էր, նրա ուզած Հայաստանն այլևս ծովից ծով չէր, այլ պարփակվում էր Վանա լճի շուրջը։

Այն, ինչ ես տեսա այդ զեկուցումից հետո, երբեք չի անհետանա իմ հիշողությունից։ Դժբա՛խտ հայ ժողովուրդ… Ո՞ւմ առաջ էր դրված նրա կրած սարսափների դատը։ Ովքե՞ր պիտի փրկության դուռ բաց անեին նրա համար։ Մուսավաթականնե՞րը պիտի վրդովվեին, նրանք, ովքեր պատրաստ էին ամեն րոպե կրկնել միևնույնը հայերի գլխին։ Իսկ վրացի նացիոնալիստնե՞րը։ Ահա ամենից առաջ բերանը բաց է անում Գվազավան և ասում է. «Այդ բոլորը հուզիչ է, բայց մենք ի՞նչ գործ ունենք այդ բոլորի հետ։ Մեզ համար մեծ բան կլինի և Բաթումի ազատելը, եթե կարողանանք։ Իսկ եթե Հայոց հարց բարձրացնենք, տանուլ կտանք և Բաթումը»։ Ես մի բառ անգամ չկարողացա արտասանել, և եթե մի զգացմունք կար այդ րոպեին իմ մեջ, այն էր, որ ես անիծում էի իմ ծննդյան օրը, անիծում էի ինձ որպես հայի, որ նստած էր այստեղ։ Ա՛հ, որքա՛ն և որքա՛ն էր մեզ ստորացնում Դաշնակցությունը։

Այնուամենայնիվ, որոշվեց դնել Հայոց հարցը։ Այսպես էր վճռել Սեյմը։ Բայց երբ կոնֆերանսի պաշտոնական նիստի մեջ մեր պատվիրակության կողմից խոսք եղավ այդ հարցը քննելու մասին, թուրք պատվիրակները սաստիկ դժգոհություն հայտնեցին և արգելեցին այդ մասին որևէ խոսք ասել, քանի որ այդ իրենց ներքին գործն էր։ Իմանալ կարևոր է, որ թուրքերն այլևս նահապետական ձևով չէին վարում իրենց գործերը։ Մի ժամանակ նրանք լռում էին, երբ նրանց մեղադրում էին, թե այս կամ այն կոտորածն են կատարել։ Այժմ նրանք չէին լռում, իրենք էլ էին մեղադրում, իրենց զոհի դրության մեջ ցույց տալիս։ Սեբաստացի Մուրադն իր խմբով Երզնկայում մի քանի տասնյակ թուրք և քուրդ էր կոտորել և փոխարենը չարաչար տուժել էր՝ իր նահանջի ժամանակ կորցնելով այն ամբողջ ժողովուրդը, որ նրա հետ հեռացել էր Երզնկայից։ Վեհիբ-փաշան աշխարհ էր դղրդացրել Մուրադի գազանություններով՝ ամեն տեղ հեռագրեր ուղարկելով և նկարագրելով մանրամասնություններ, որոնք ինքնըստինքյան սարսափելի էին իբրև կոտորածի մանրամասնություններ։ Այսպես էր, որ թուրք ազգաբնակչությունն այնքան գրգռված էր հայերի դեմ, որ չէր ուզում անգամ լսել նրանց անունը։ Եվ կգտնվե՞ր որևիցե մեկը, թեկուզ շատ բարձրաստիճան թուրք, որ համարձակվեր այսպիսի միջավայրում խոսք անել Հայոց հարցի մասին…

Այդ թշվառ հարցը վիժեց։ Եվ եթե միլիոնավոր զոհեր տված հայ ժողովուրդը մի անգամ էլ անարգվեց, այս դարձյալ և դարձյալ Դաշնակցության մանկամիտ քաղաքականության պատճառով։

Բայց վիժողը միայն մեր հարցը չէր։ Կ.Պոլսից մեր հողային սակարկություններին պատասխան տրվեց մի վերջնագրով, որով պահանջվում էր ճանաչել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը։ Բաթումի, Արդահանի և Կարսի մասին հարց չէր կարող լինել, քանի որ այդ տեղերը զիջել է Թուրքիային Ռուսաստանը, որի մի

մասն է կազմում Կովկասն այսօր էլ։ Իսկ եթե Անդրկովկասն ուզում է առհասարակ դաշնադրական պայմանավորումների մեջ մտնել Թուրքիայի հետ, այն ժամանակ նա պիտի հայտարարի իրեն անկախ պետություն և հետո միայն բանակցություններ սկսի։ Ի՞նչ կարելի էր անել։ Մեր թուրք ընկերակիցներն անպայման պահանջում էին ընդունել թուրքական առաջարկը։ Վրացիները, սկսած Չխենկելիից, աշխատանք էին գործադրում թուրքերի հետ անջատ համաձայնություն կայացնել Բաթումը չտալու համար։

Մեր աչքի առջև նրանք ինչ-որ իրարանցման մեջ էին, մարդիկ էին ուղարկում տեսակցությունների, անկյուններում շարունակ տեղի էր ունենում փսփսոց մեր թուրք պատվիրակների համար։ Չխենկելիի աջ բազուկն այդ գործունեության մեջ հայտնի նացիոնալիստ և օտարակեր Վեշապելին էր, որ ծածկել էր թուրքական ֆես և դես ու դեն էր վազվզում։ Բանից դուրս եկավ, որ Չխենկելիի ջանքերի գլխավոր կետն այն էր, որ թուրքերը չշարունակեն իրենց արշավանքներն ու պատերազմական գործողությունները Բաթումի դեմ։ Պայմանները մեզ հայտնի չէին, բայց հետո պարզ հայտնի դարձավ, որ այդ մենշևիկի քաղաքականությունն էր՝ ձեռք բերել թուրքական բարեկամություն ի հաշիվ հայերի…

Երկարորեն քննելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի այն հոդվածը, որ վերաբերվում էր Բաթումին, Արդահանին և Կարսին, ես եկա այն եզրակացության, որ այդ հոդվածով թուրքերը անվերապահորեն տեր չէին դառնում այդ շրջաններին։ Դեռ պահանջվում էր տեղական ազգաբնակչության ընդհանուր ձայնատվությունը (ռեֆերենդում), որոշելու համար, թե ում է նա ուզում հպատակվել։ Այս դրությունն ինքնըստինքյան նախ որոշում էր, որ Թուրքիան չպիտի իսկույն մտցնի իր զորքերն այդ շրջանների մեջ, որպեսզի ապահովված լինի ընդհանուր ձայնատվության ազատությունը։ Եթե կարելի լինի այս հիմունքի վրա համաձայնություն կայացնել թուրք կառավարության հետ՝ հանել այնտեղից հայկական և վրացական զորքերը և չեզոք պահպանություն կազմել հենց իրենից՝ ազգաբնակչությունից, այն ժամանակ ընդհանուր ձայնատվությունը, կատարված ազատ պայմանների մեջ, կտա այն հետևանքները, որոնց մենք ձգտում էինք հասնել մեր հողային զիջումներով, այն է՝ թուրքաբնակ մասերը կանցնեին Թուրքիային, հայաբնակ և վրացաբնակ մասերը՝ Անդրկովկասին։ Ամենագլխավոր կետն այն է, որ Թուրքիան իր ստորագրած դաշնագրով բոլորովին իրավունք չի ստացել իր զորքերով իսկույն գրավելու Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները։

Այս իմաստով ես մի զեկուցում կարդացի մեր ընդհանուր ժողովում։ Ամենքն ինձ հակառակ խոսեցին և մանավանդ մեր թուրք ընկերակիցները, որոնք փրփուրը բերաններին ապացուցում էին, թե Թուրքիան հենց այժմ իսկ իրավունք ունի գրավել իր ստացած երկրամասերը, թե չպետք է առհասարակ անհաճո բան անել նրան, այլ խոսել հաշտ ու քաղցր լեզվով։ Այս, իհարկե, պատասխան չէր, այլ, ինչպես ասում են թուրքահայերը, «փոլիթիք»։ Էլի բանը գալիս հանգում էր այն վախճանին, որ ուժեղը

Թուրքիան է, ուրեմն և նրան են պատկանում բոլոր իրավունքները։ Բայց այս դեպքում չպետք էր էլ դաշնադրող կողմի հովեր առնել, այլ պետք էր սպասել, թե ինչ կբարեհաճի տալ մեզ այդ ուժեղ Թուրքիան։ Հիշատակում եմ այս մանրամասնություններն այն պատճառով, որ այս ժողովից հետո Չխենկելին դարձավ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ընդունման համոզված կողմնակից, թեև ոչ իմ բերած հիմնավորումներով։ Հեռագրով հաղորդելով թուրքական ուլտիմատումը Անդրկովկասյան կոմիսարիատին՝ Չխենկելին ստիպողաբար հանձնարարում էր նրան իր համոզումը, որ ընդունվի Բրեստի դաշնագիրը։

Բայց Սեյմի վրա նորից բռնացավ մենշևիկական կուսակցական հաշիվը։ Կարո՞ղ էր մի Ծերեթելի, որ ամենակարողն էր Սեյմում, գեթ մի րոպե ընդունել, որ իր կատաղի թշնամի բոլշևիկները արժանի են այնքան ուշադրության, որ նրանց ստորագրած պայմանը ստորագրեն նաև իրենք՝ մենշևիկները։ Սեյմը որոշում է մերժել Թուրքիայի ուլտիմատումը և հեռագրով հրամայում է պատվիրակությանը՝ վերառաղնալ Թիֆլիս։ Առավոտ էր, որ պատվիրակության քարտուղար Միքայել Թումանյանը եկավ մեզ հայտնելու, որ պատրաստվենք ճանապարհ ընկնելու։ Երեխաների պես թռչկոտում էինք ուրախությունից։ Մի ամսվա կոշմարը վերանում էր։ Այդ կոշմարը մեզ խեղդում էր նախևառաջ իբրև հայերի։ Վախենում էինք դուրս գալ տանից։ Հետո խեղդում էր մեզ Տրապիզոնի իրականությունը։ Մի օր ես ու Բունիաթյանը կառքով գնացինք տեսնելու Սոուք-Սու անունով ամառանոցը, որ իսկապես մի հրաշալի անկյուն է՝ սքանչելի ամառային շինություններով, որոնք հույներին էին պատկանում։ Ճանապարհին մենք տեսանք ռուսական քայքայված բանակի ցավալի մնացորդները։ Մի քանի տասնյակ թնդանոթներ և ձիերի երամակներ, որոնք վայրենացածի պես թափառում էին շրջակայքում և արածում նոր դուրս եկած կանաչների մեջ։ Ասում էին, թե մենակ այդ լքված ձիերի թիվը հասնում էր 25 հազարի…

Այս բոլոր տպավորությունները, հուշերը, ապրումները, քաղաքի հոտած փողոցներն իրենց անթիվ շներով, քաղաքակիրթ աշխարհի բացակայությունը մեզ վազեվազ տանում էին ծովափ։ Շուտո՛վ այստեղից, շուտո՛վ… Զգում էի, որ սև ու մութ օրեր են հավաքվում մեր գլխին. զգում էի, որ այս անհրապույր ասիական քաղաքը և բազմաթիվ սրա նմանները հավաքվում են մեզ վրա արշավելու։ Այս էր պատճառը, որ այդ օրը, վերջացնելով իմ օրագիրը, որ վարում էի Տրապիզոն գալու օրից, ես շատ խոշոր գրով ավելացրի բիբլիական հուզիչ բացականչությունը. «Դուստր ժողովրդեան իմոյ, քուրձ զգեցեր, մոխիր տարածեա… Զի յանկարծակի եկեսցէ թշուառութիւն ի վերայ մեր»։

Որպիսի՛ հրճվանքով բարձրացա ես «Վեչէ» շոգենավի տախտակամածը։ Տանն եմ։ Պատրաստ էի գրկել ռուս նավազներից ամեն մեկին իբրև հարազատ եղբոր։ Իսկ մեր նավապե՞տը։ Հաղթանդամ մի մարդ, արևառ դեմքով, որ պարծենում էր, թե երեսուն տարվա ընթացքում հազիվ վեց ամիս կլինի ցամաքի վրա քնած։ Ճաշեցինք

նավի շքեղ սեղանատանը, մութին շարժվեցինք։ Քնեցի, ինչպես ասում են, մորթվածի նման։ Բաթում պիտի հասնեինք գիշերով։ Բայց առավոտ է, իսկ մեր նավը դեռ գնում է։ Հարցնում ենք պատճառը։ Պատասխանում են, թե գիշերը անկարելի է եղել ռադիոյի միջոցով խոսել Բաթումի հետ, ուստի նավապետը հասկացել է, որ թուրքերն, ուրեմն, մտել են Բաթում, և մենք այժմ գնում ենք Փոթի… Սա միանգամայն ճիշտ էր։ Երբ հասանք Փոթի, ծովափը լիքն էր փախստականներով։ Բաթումը վերցվել էր գրեթե առանց կռվի։ Փոքրաթիվ վրացական զորքը դիմադրություն չէր ցույց տվել և մեծ մասամբ գերի էր ընկել։

Ռիոնի ջերմոտ ափերում արդեն շատ տաք էր։ Եվ հազարավոր փախստականներ՝ մի գիշերվա մեջ թշվառացածներ, թափթփված էին արևի տակ… Պատերազմ… Զզվելի անուն, մարդկության անեծք… Ո՞վ է եղել այն առաջինը, որ դարձել է այս ահռելի պաշտամունքի քուրմը… Ամեն ինչ կփոխվի աշխարհի երեսին. շո՞ւտ պիտի արդյոք փոխվի և այս հրեշը, այս խաղաղ ու թշվառ բազմություններն իր ատամների տակ ծվատողը։

Նորից արտակարգ գնացքով էինք գնում։ Վրաստանի օրհնյալ երկինքն է մեզ վրա՝ այն, որ երեսուն տարուց ի վեր հայրենի հարազատություն է դարձել ինձ համար։

Սամտրեդի կայարանում ենք։ Ժողովրդական մեծ հավաքումներ կան։ Դատում, խոսում են մեծ անցքի՝ Բաթումի գրավման մասին։ Այս աղետը վաղուց հասունացած էր, ամեն մեկն էր զգում դրա անխուսափելիությունը։ Մի առաջնակարգ բերդ չէր կարելի մի բուռն մարդկանցով պաշտպանել։ Բայց արի ու տես, որ վրացի գյուղացիները չիբուխին զոռ են անում և նրա ծխի հետ նորանոր հայտնություններ հանում իրենց փորից։ «Բաթումը,- ասում են,- չէր ընկնի, Չխենկելին է այն տվել թուրքերն՝ մեծ կաշառք ստանալով»։ Չիբուխի ծուխը կաշառքի չափն էլ հանեց գյուղական փորերից, կարծեմ՝ 30 թե 40 հազար մանեթ…

Մյուս օրը, վաղ առավոտյան Թիֆլիսի կայարանում էինք։ Նորությունների մի մեծ փունջ էր մեզ սպասում լրագրերի էջերից։ Սեյմը պատերազմ էր հայտարարել Թուրքիային և մի կոչով դիմել Անդրկովկասի ամբողջ ազգաբնակչությանը։ Մահմեդական ֆրակցիան հայտարարել էր, թե մուսուլման ազգաբնակչությունը, կրոնակցական կապերով կապված լինելով թուրքերի հետ, հրաժարվում է նրանց դեմ հայտարարած պատերազմին մասնակցելուց։ Ծերեթելին դիմել էր ֆրակցիային և շպրտել նրա դեմքին «դավաճաններ» անունը։

Է

Պատերազմի ամբողջ ծանրությունը մնում էր հայերի և վրացիների վրա։ Բայց ես չէի հավատում, թե նրանք կարող կլինեն միասնական լինել նույնիսկ ակնհայտնի վտանգի առաջ։ Տրապիզոնում տեսածս ուրիշ մտածողություն չէր թողնում իմ մեջ։ Ինչ կարող են լինել մարդիկ, երբ նրանց մեջ փոխադարձ և անկեղծ համակրանք չկա, երբ

նրանք իրար ատում են և իրար կործանումն են ուզում՝ նացիոնալիստական ողորմելի բարեհաջողությունների համար։ Թշնամին տուն մտած ժամանակ էլ նրանք իրար են նայում, թե ինչպես խաբեն, ինչպես մեկի դժբախտությունը մյուսն իր համար երջանկություն դարձնի։

Այդպես էլ եղավ։

Վերադարձից հետո մենք իսկույն հրավիրվեցինք Ազգային Խորհրդի նիստին և զեկուցումներ տվինք Տրապիզոնի խաղաղարար կոնֆերանսի մասին։ Պետք էր որոշել, թե ինչ պիտի լինի հայ ժողովրդի վերաբերմունքը դեպի Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը։ Դաշնակցականները անկարելի համարեցին այդ խոշոր հարցը լուծել Թիֆլիսում, իրենց շատ ընկերները գտնվում են Երևանում և Ալեքսանդրապոլում. պետք էր հարցնել նաև հայ զինվորական պետերի կարծիքը։ Ուստի Ազգային Խորհուրդն իր ամբողջ կազմով և մենք գնացինք Ալեքսանդրապոլ՝ այնտեղ խորհրդակցություններ կազմակերպելու համար։ Առաջին անգամն էր հեղափոխությունից հետո, որ ես գնում էի Հայաստան։ Ավելորդ է ասել, որ ամեն տեղ տերն ու տնօրենը Դաշնակցությունն էր։ Եվ անկարգություն, անգլխություն էր ամեն տեղ. թալան՝ առանց քաշվելու, օրը ցերեկով։ Զորաժողով էր հայտարարված, Անգլիայի ներկայացուցիչն Էնզելիում խոստացել էր հայերին անհաշիվ վարկ, միայն թե նրանք կազմակերպեին զինվորական ուժ՝ ռուս զորքերին փոխարինելու համար։

Դաշնակցականները պայման էին դրել, որ Անգլիան պաշտոնապես հայտարարի Թուրքահայաստանի անկախությունը, և այդ էլ արել էր Լլոյդ Ջորջն իր ճառի մեջ։ Պետք էր, ուրեմն, եռանդով զորք հավաքել և կազմակերպել։ Ղարաքիլիսայի կայարանում ինձ մի մեծ խումբ շրջապատեց և խնդրում էր հաղորդել, թե ինչ վերջնական համոզում եմ բերել ես Տրապիզոնից։ Ես կողքիս կանգնած հայ զինվորի հրացանի վրա դրի ձեռքս և ասացի. «Միակ փրկությունը մեզ մնում է այս»։ Այստեղ է և Հովհաննես Թումանյանը, որին Ազգային Խորհուրդն ուղարկել է Լոռու զինվորությունը հավաքելու և զինվորական վարչությանը հանձնելու համար։ Նա դառնապես գանգատվում էր, որ գործը տեր չունի, որ զինվորականները գալիս են, հավաքվում, օրերով սպասում՝ առանց բնակարանի, քաղցած, և չկա մեկը, որ ընդունի նրանց ու տեղավորի, ուստի և ճարահատյալ նորից ցրվում են։ Շունն, ինչպես ասում են, տիրոջը չէր ճանաչում։ Բայց դաշնակցական տղաները հենց այդ միջոցին աջ ու ձախ տարածում էին «սրբել-մաքրելու» գործը։ Կատարվում էին այնպիսի տգեղություններ, որ Հովհաննես Թումանյանը ստիպված էր «Հորիզոնի» մեջ բարձր ձայնով բողոքել այդ գազանությունների դեմ…

Ո՞ւր էր գնում այսպիսի քաոսային դրության մեջ տարուբերվող երկիրը։ Դեպի հաղթությո՞ւն։ Ո՛չ, երբեք։ Ալեքսանդրապոլն անկարգության ամենաբարձր աստիճանն էր ցույց տալիս։ Գնացինք այնտեղ մեծ խմբով. խորհրդակցություններ էինք կատարում, բայց ոչ ոք չհետաքրքրվեց, թե ինչ կա. ամենքն անձնատուր եղած

էին իրենց առևտրին, փախչում էին զինվորագրությունից, այնպես որ Դաշնակցությունը մի քանիսին տեռորի ենթարկեց՝ մյուսներին վախեցնելու համար։ Բայց իրենք՝ դաշնակցականները, մի՞թե առևտուր չէին անում հրացաններով, այն էլ այնպիսի պայմաններով, որոնք կատարյալ խայտառակություններ էին, մի՞թե չէին կողոպտում պետական մեծամեծ պահեստները։ Այդ ժամանակ Ալեքսանդրապոլում Լևոն Սարգսյանը հրատարակում էր անկախ սոցիալիստների օրգան «Մարդկայնությունը», որ ծայրեծայր լիքն էր մերկացումներով։ Կարդացի մի քանի համար և սարսափեցի…

Ալեքսանդրապոլի խորհրդակցական ժողովները երկու թե երեք օր տևեցին, Ահարոնյանի նախագահությամբ։ Ներկա էին հոծ քանակությամբ դաշնակցականներ, որոնք զանազան պաշտոններ էին վարում զորքի մեջ։ Այդ խորհրդակցությունների միակ արժեքավոր կողմն այն էր, որ աննախապաշարված դիտողի առջև դրին այն ողորմելի դրությունը, որի մեջ գտնվում էր հայկական բանակը։ Ռուս գեներալները, որոնք դեռ մնացել էին գլխավոր հրամանատարության մեջ, աշխատում էին այնպիսի դրության մեջ ներկայացնել գործը, որ հուսահատություն ու լքում չառաջանա։ Բայց և այնպես, պարզ էր ամեն ինչ։ Գնդերը մաշված ու հյուծված էին, ամեն մեկի մեջ հազիվ 200-300 հոգի մնացած լինեին, դրանք էլ գրեթե բոբիկ էին ու քաղցած, ամիսներ ի վեր գտնվում էին դիրքերում անփոփոխ։

Պատերազմական գործողություններն արդեն Կարսի մոտերքն էին մղվում, Սարիղամիշն արդեն թողնված էր։ Բայց և այնպես, այդ փոքրաթիվ, զզզզված բանակի մեջ դեռ մնացել էր զինվորական ոգի, իրենց քաջությամբ և դիմացկունությամբ աչքի էին ընկնում լեռնցիները, մանավանդ ղարաբաղցիները, որոնց ռազմական բարեմասնությունները վեր հանեց ժողովի առաջ գլխավոր հրամանատար գեներալ Լեբեդինսկին։ Ամենամեծ դժբախտությունն այն էր, որ կռվող հայ զինվորը բոլորովին նեցուկ չուներ ազգաբնակչության մեջ։ Մի հարգելի հայ սպա դրությունը պատկերում էր այսպես։ Մինչ թուրք ասկյարը պատերազմ էր գնում աջից ու ձախից ունենալով մի-մի զինված քուրդ կամ թուրք, հայ զինվորը՝ դաշտում կռվելիս տեսնում էր, որ իր թիկունքում գտնվող հայ գյուղացիները՝ մինչև ատամները զինված, փախչում են՝ տանելով իրենց հետ իրենց ընտանիքները, ալյուրի պարկերը։

Սա, ճիշտ որ, մի մեծ աղետ էր՝ Շիրակի ժողովրդի այս վատարի փխրունությունը, որ երկու անգամ կորստի մատնեց իր բնակված և ռազմագիտական ահագին նշանակություն ունեցող երկիրը։

Հայկական ռազմաճակատի դրությունը սաստիկ վատթարացնում էր նաև հայերի միակ իբր դաշնակից վրացի մենշևիկների և նացիոնալիստների միացած ազգամոլությունը։ Օգտվելով այն հանգամանքից, որ իշխանության գլխավոր դիրքերն իրենց ձեռքում էին, սրանք աշխատում էին Կարսից և այլ բերդերից դուրս քաշել ռազմամթերք, փամփուշտներ և այլ իրեր ու այդպիսով հարստացնել իրենց

պահեստները։ Հայաստանի ճակատի հրամանատար էին նշանակել մի ինչ-որ գեներալ Օդիշելիձեի, որ ուխտյալ հայատյացներից էր և ինչ-որ կասկածելի հարաբերություններ ուներ Վեհիբ-փաշայի հետ։ Մեզ պատմեցին, որ հայ զորքերի հրամանատար գեներալ Նազարբեկովը, որպեսզի կարողանա փրկել Կարսում գտնված փամփուշտների վերջին պաշարը, հարկադրված է եղել դուրս գալ զինվորական կարգապահության կանոններից և ուղղակի մերժել բարձր իշխանության հրամանով փամփուշտները Թիֆլիս ուղարկելը։

Ի՞նչ կարելի էր անել այս պայմանների մեջ։ Հովհաննես Քաջազնունին մի մանրամասն և հանգամանորեն կազմված զեկուցում կարդաց, որի մեջ հաստատում էր, թե պատերազմ մղել Թուրքիայի դեմ մենք չենք կարող, ուստի պիտի ընդունենք Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և հաշտություն կնքենք։ Այստեղ է ահա, որ նորից հրապարակ է իջնում դաշնակցական լոպպազությունը։ Ամեն կողմից անբավականություն, հակաճառություն՝ մենք ուժ ունենք, մենք կդիմադրենք և այլն, և այլն։ Միշա Արզումանյանը, որ չգիտեմ Կարսի նահանգապետն էր թե ինչն էր, ասաց մոտավորապես հետևյալը. «Կարսը հեռու չէ այստեղից, եկեք հենց այս գիշեր ամբողջ ժողովով գնացք նստենք ու գնանք Կարս, վաղը առավոտյան տեսնենք նրա ամրությունները, նրա զինվածության չափը։ Եթե այդ բոլորը տեսնելուց հետո դուք կասեք, թե կարելի է այդպիսի մի բերդ թշնամուն տալ առանց պատերազմի, այն ժամանակ հարցը միանգամայն լուծված կլինի»։ Այս խոսքերը վճռական նշանակություն ունեցան։ Ժողովը Կարս չգնաց. ո՞վ չգիտեր, որ այդ մի հռչակավոր և առաջնակարգ բերդ էր. վճռեցին շարունակել պատերազմը։ Բայց միաժամանակ, երբ առաջարկություն եղավ, որ Ազգային Խորհրդի անդամները գնան գյուղերը և պրոպագանդա անեն՝ ազգաբնակչությանը ոգևորելու համար, ոչ ոք չգնաց։ Մենք վերադարձանք Թիֆլիս, և իմ դերը ինձ համար միանգամայն խորթ դիվանագիտական աշխատանքի մեջ միանգամայն վերջացավ։

Բայց երկար չեղան մեր սպասելիքները։ Թուրքական արշավանքը հայկական և վրացական ճակատների վրա շարունակվում էր անարգել հաջողությամբ։ Բաթումի կողմից թուրքերը խուժել էին Գուրիա և արշավում էին Սև ծովի ափով դեպի հյուսիս։ Անդրկովկասյան Սեյմի ռազմատենչ տրամադրությունը կարծեմ մի շաբաթ էլ չտևեց։ Նա հասկացավ, որ պատերազմը թղթով ու խոսքով չեն մղում, և սկսեց արագ ու ամբողջական նահանջ։ Նորից վերսկսել հաշտության բանակցությունները – ուրիշ ճար չկա։ Եվ ահա մի մեծ հաղթանակ Չխենկելիի համար. Տրապիզոնի մի ամսվա ողորմելի գործունեությունը նրան դարձրել է թե՛ աչքի ընկնող դիվանագետ և թե՛ մանավանդ Վեհիբ-փաշայի և առհասարակ թուրքերի բարեկամ։ Ուստի նրան է հանձնվում կառավարությունը։ Գեգեչկորին հրաժարական է տալիս. կազմվում է նոր կառավարություն՝ Չխենկելիի նախագահությամբ։ Եվ նա իսկույն բանակցություններ է սկսում թուրք հրամանատարության հետ՝ Տրապիզոնի իր գործակալների միջոցով։

Վեհիբ-փաշայի հաղթական երթը կանգնեցնելու համար նա (այսպես տեսանք նրան և Տրապիզոնում) սկսեց նրան ընծաներ մատուցել հայերի հաշվին, ամենից առաջ իհարկե Կարսը (լավ որ իր կառավարության մեջ զինվորական մինիստրի պաշտոնով ուներ նույն անխուսափելի գեներալ Օդիշելիձեին)։ Ըստ սովորականի, մի քանի աննշան մինիստրական պորտֆելներ Չխենկելին տվել էր դաշնակցականներին։ Եվ ահա, մինչև նրանց կառավարության մեջ մտցնելը, մինչև նրանց գոնե մի անգամ ժողովի կանչելը, ինքն իրենից, առանց հայ ընկերակիցների գիտության, նա հրաման է արձակում Կարսը անհապաղ հանձնել թուրքերին։ Դաշնակցական նոր մինիստրները հենց որ իմանում են այդ, հրաժարական են տալիս։ Բայց մի երկու օրից հետո էլի հետ են վերցնում այդ հրաժարականները և մտնում Չխենկելիի թևերի տակ։ Իշխանությունից զրկվել չուզեցին ո՛չ մի հանգամանքում, նույնիսկ երբ հայ ժողովրդի գլխին պայթում էր մի սարսափելի աղետ…

Այդպիսի աղետ էր Կարսի և նրա շրջանի հանկարծակի հանձնումը։ Այս մասին շատ է գրվել լրագրերում, և այդ կարգադրությունը որակվել է իբրև դավաճանություն։ Ասում էին, որ եթե չլիներ Չխենկելիի այդ հրամանը, Կարսը կարող էր պաշտպանվել երկար։ Ես չեմ հավատում այդ բանին, որովհետև Կարսի պաշտպանության համար հարկավոր էին տասնյակ հազարներով զինվորներ, որ մենք չունեինք։ Բայց որ բերդը, եղած միջոցներով, կարող էր պահվել թշնամու դեմ առնվազն երկու շաբաթ, այդ մասին չէին պակասում հեղինակավոր մասնագետների վկայությունները։ Իսկ այդ ժամանակը միանգամայն բավական էր Կարսի մեջ մթերված անհուն պաշարների գեթ մի մասը դուրս տանելու, բայց մանավանդ ազգաբնակչությանն իր անելիքը հասկանալու և որոշելու միջոց տված լինելու համար։ Բայց բերդի հանձնումը կատարվեց խուճապային կարգով. Չխենկելին տենդային շտապողականության մեջ էր արևմտյան Վրաստանի վտանգված վայրերը ժամ առաջ փրկելու և Վեհիբ-փաշայի նոր համակրանքները գրավելու համար։ Կարսի շրջանի ամբողջ հայությունը հանկարծակիի եկած սկսեց փախչել՝ կորցնելով իր ունեցածը։ Ծայր տվեց ավերիչ գաղթականությունը։ Բայց այդ ի՛նչ փույթ չխենկելիներին և նրանց բարձակից դաշնակցական փոքրիկ մինիստրներին…

Կարսի գնով զինադադար կնքվեց, պատերազմական գործողությունները դադար առան, և նոր խաղարարար բանակցություններ սկսվեցին Բաթումում։ Դրա համար խաղացվեց մի նոր քաղաքական կոմեդիա՝ Սեյմը հայտարարեց Անդրկովկասը անկախ հանրապետություն։ Մուսավաթական թուրքերը, թեև չէին մասնակցել Սեյմի հայտարարած 8-10 օրվա պատերազմին, բայց փառավորապես բազմեցին կոնֆերանսի գլխին, որպեսզի տեսնեն, թե դեռ էլ ի՛նչ խաղեր պիտի խաղա հաղթական Թուրքիան իր առջև փռված թշվառ երկու երկրների գլխին։ Վրացիները կարծում էին, թե թուրքերի վերաբերմունքը դեպի իրենց, հայերի համեմատությամբ, լավ կլինի. բայց չարաչար սխալվում էին։ Հազիվհազ կործանումից ազատված Թուրքիան պատառներից ձեռք վերցնողը չէր։ Բաթումում նա հայտարարեց, թե այժմ

պայմաններն այն չեն, ինչ էին Տրապիզոնում. և խաղարարար կոնֆերանսի նախագահ Խալիլ-բեյն այնպիսի դաժան և անողոք ոճով էր պահանջներ անում, որ վրացիներին և հայերին մնում էր «լաց և կրճտումն ատամաց»։

Դեռ Կարսի կորուստը չէր մոռացվել, երբ մի օր, մայիսի կեսին, լուր տարածվեց Թիֆլիսում, թե թուրքերը ռմբակոծում են Ալեքսանդրապոլը։ Խուճապ, իրարանցում, փախուստ, կործանում։ Այդ օրվանից էր, որ սկսվում էր կովկասահայերի պագնապը։ Զարմանում էին, թե ինչպես է տեղի ունեցել այդ տակնուվրայությունն այդքան հանկարծորեն։ Ինձ Միքայել Պապաջանյանը, որ այն միջոցին Բաթումում է եղել իբրև խաղաղարար պատվիրակության անդամ, պատմեց, թե թուրք հրամանատարությունը, կամենալով իր ձեռքը գցել Ալեքսանդրապոլը (և սա՝ գերմանական շտաբի պահանջողությամբ), վերջնագիր էր ուղարկել Չխենկելիին, որ անդրկովկասյան պատվիրակության նախագահի պաշտոնով Բաթումում էր գտնվում, պահանջելով, որ չորս օրվա ընթացքում Ալեքսանդրապոլը հանձնվի թուրքերին։

Այդ վերջնագիրը փոխանակ հեռագրով հաղորդելու Թիֆլիս, ուղարկվում է թղթատարի ձեռքով և ժամանում է ուշ՝ այն միջոցին, երբ թուրքերը, ժամանակն անցած համարելով, պատերազմական գործողություններ էին սկսել Ալեքսանդրապոլի դեմ։ Եվ այսպես մենշևիկ Չխենկելին մի անգամ էլ աղետում էր հայոց կյանքը. և այս անգամ ավելի ահռելի չափերով, քան առաջին անգամ։ Ալեքսանդրապոլի պահեստներն էլ՝ այդ անհուն հարստությունները, ընկնում են թշնամու ձեռքը։ Ժողովուրդը խելակորույս փախչում է դեպի Ղարաքիլիսա, լցնում է նրա ձորն իր անասուններով, սայլերով։ Փախչում է հայկական զորքը։ Գեներալ Նազարբեկովը՝ նրանց հրամանատարը, նահանջելով դեպի Դիլիջան, հուսահատական հեռագրեր էր ուղարկում Ազգային Խորհրդին, գանգատվում էր, թե իր մոտ մնացել են միայն երեք հարյուր հոգի, և իրեն մնում է գերի ընկնել թուրքերի ձեռքը։

Ը

Թվում էր, թե ամեն ինչ կործանվում էր. թուրքերը, հենակետ դարձնելով Ալեքսանդրապոլը, ձեռնարկել էին Հայաստանի և Վրաստանի նվաճման։ Մի կողմով նրանք գնում էին Երևանի վրա, մյուս կողմից բռնել էին Թիֆլիսի ուղղությունը։ Սակայն կրիտիկական ըոպեին ժողովրդական երկու գրոհ հասկացնում էին չափ ու սահման կորցրած օսմանցիներին, թե նրանք այնքան էլ ամենակարող չեն այս փոքրիկ ազգությունների մեջ։

Մի գրոհն սկսվում է Երևանից և նրա շրջակա գյուղերից տարերային հոսանքով դեպի Սարդարապատ, ուր թուրք զորքերը ջարդվում են և ետ քշվում։ Մյուս գրոհը Դիլիջանից է սկսվում։ Ալեքսանդրապոլից նահանջած մի քանի թնդանոթաձիգ հայ սպաներ փորձում են դիմել ղազախեցի քաջարի գյուղացիներին,

որոնք տաքանալով խրախուսանքներից՝ լավայի պես դիմում են դեպի Ղարաքիլիսա, նույնիսկ առանց զենքի, ճանապարհին իրենց հետ քշելով տանելով պատահած գյուղերը։ Իսկ հրացաններ և փամփուշտներ նրանք գտնում էին Կարսի և Ալեքսանդրապոլի փախստականների սայլերում. սրանք, ինչպես ասացի վերևում, լցրել էին Փամբակի ձորը։

Սպաների ղեկավարության տակ կազմվելով ու կազմակերպվելով իբրև զորք՝ այդ բազմությունը մի ճակատամարտ է տալիս օսմանյան բանակին, որ տևում է երեք օր։ Հաղթել, տարաբախտաբար, նա չի կարողանում, բայց ցույց է տալիս հերոսական դիմադրություն (որի ապացույցն էր նրա տված զոհերի մեծ քանակությունը), այնպես որ Վեհիբ-փաշան Բաթումում, շատ գովասանքով խոսելով այդ դիմադրության մասին, ասել էր, թե հայերը կարող են ապագա բուլղարներ դառնալ։

Բայց այս հերոսամարտը չկարողացավ ո՛չ Ղարաքիլիսան ազատել կոտորածից ու թալանից, ո՛չ երկաթուղու գիծը հայերի ձեռքում պահել։ Թուրք զորամասերը հալածելով ու ոչնչացնելով հայ զորքի մնացորդներին՝ գրավեցին բոլոր կայարանները, դուրս եկան մինչև Շուլավեր։ Թիֆլիսը վտանգի մեջ էր, քաղաքագլուխը մի կոչով հրավիրեց ազգաբնակչությանը՝ զենք վերցնել քաղաքը պաշտպանելու համար։ Սակայն փորձանքն անցավ հրաշքի նմանություն ունեցող մի հանգամանքի բերմունքով։ Վրացիները Բաթումում համաձայնություն են կայացնում գերմանական լիազորի հետ և գերմանական զորքը գալիս է պաշտպանելու Վրաստանը ամենից առաջ հենց իր դաշնակից թուրքերից։ Այս կատարում էին գերմանացիները ոչ իհարկե վրացիների սիրուն աչքերի համար։ Մի գաղութացման նախադուռն էր սա. Վրաստանը կտար Գերմանիային իր մարգանեցը, անտառային հարստությունները, ինչպես նաև հենարան կդառնար Բաքվի նավթին մոտենալու և կանգնելու այս ճանապարհների վրա, որոնք տանում են դեպի Հնդկաստան…

Բայց բանն այս չէր, այլ այն, որ գերմանական զորքը միայն Վրաստանի պաշտպանությունն էր ճանաչում, իսկ նրանից դուրս՝ ոչինչ։ Կովկասահայերի համար 1918-ի ամառը նույնքան սարսափելի էր, որքան 1915-ի ամառը թուրքահայերի համար։ Դա բնաջնջման մի ամառ էր, և հայերը շատ ու շատ անգամ դիմեցին գերմանացիներին, խնդրեցին նրանց պաշտպանությունը, բայց միանգամայն իզուր։ Ինձ Ահարոնյանը մի այսպիսի պատմություն արավ։ Գերմանական գեներալն իր սպաներից մեկին ուղարկում է նրա, իբրև Ազգային Խորհրդի նախագահի, մոտ և հայտնում է, թե Բորչալուի թուրքերը շրջապատել են Աշաղա-Սերալ (Շուլավեր) երկաթուղային կայարանը և հենց որ մի գնացք է գալիս, որի մեջ հայեր են լինում, իսկույն նրանց հանում են և մորթում։ Գեներալը խնդրում է հայոց Ազգային Խորհրդից միջոցներ ձեռք առնել, որ այսպիսի բաներ այլևս չլինեն այդ կայարանում, որովհետև նրանք վատ են ազդում այնտեղ կանգնած գերմանական զինվորների վրա։

Առաջին անգամ էինք մենք տեսնում եվրոպական ամենաքաղաքակիրթ մի ազգի զենքն ու զորությունը մեզ մոտ և իմանում էինք, թե մինչև ո՛ր աստիճան նա կարող է լինել զզվելի… Մի ուրիշ օրինակ։ Բոլնիսի մի խեղճ ու կրակ հայ գյուղ չեմ հիշում, թե ի՛նչ մեծ հանցանք էր գործել մենշևիկների կառավարության դեմ։ Իսկույն թռչում է գերմանական սավառնակը, ռումբեր է նետում ու թափում գյուղի գլխին, տներ քանդում, մարդիկ սպանում։ Այս չափին էր հասնում վիլհելմյան քաղաքակրթությունը, ի՞նչ արած։ Հայը և Հայաստանը դրված էին Վիլհելմի դաշնակից սուլթանի տրամադրության տակ, իսկ Վրաստանի վրա ծածանվում էր գերմանական դրոշակն իբրև ապացույց, որ նա պաշտպանված է իր օրինական սահմանների մեջ։

Բաթումի բանակցությունների մեջ թուրքաց կառավարությունը նոր քաղաքական կազմ առաջ քաշեց Անդրկովկասի համար, այն է՝ առանձին անկախ հանրապետությունների սիստեմ։ Այս առաջարկից երկու ձեռքով կպավ Վրաստանը։ Մայիսի 26-ին մեծախոս, բայց ապիկար և անարդյուն Սեյմն ինքն իրեն լուծված հայտարարեց, և նույն օրը վրաց Ազգային Խորհուրդը հայտարարեց Վրաստանի անկախությունը։ Հայերն ակամա համակերպվեցին այս անհրաժեշտությանը. նրանք գիտեին, որ անկախությունն իրենց օգուտ չպիտի բերի։ Բայց Ծերեթելին վեհ հպարտությամբ ասում էր նրանց. «Ի՞նչ արած, դուք պարտված եք, Վրաստանը մենակ է մնացել»։

Չեմ մոռանում ես այդ մայիսի 26-ը։ Կիրակի օր էր, պայծառ ու տաք։ Հայաստանի կողմից փախածներն ահագին խմբերով անցնում էին Գոլովինսկի պրոսպեկտով դեպի Վլադիկավկազի ճանապարհը՝ Ռուսաստան գնալու համար։ Ամբոխը ոտքով էր, շատ քչերն էին կարողացել ֆուրգոններ վարձել։ Շտապում էին փախչել նախևառաջ բոլոր թուրքահայերը՝ շատ լավ իմանալով, որ եթե գան թուրքերը՝ իրենցից մեկն էլ չպիտի ազատվի մահից։ Բայց առհասարակ խուճապ էր, որ ազդում էր ամենքի վրա։ Թիֆլիսից էլ շատ ու շատ հայեր, մինչև գերմանացիների գալը, փախել էին դեպի Վլադիկավկազ՝ ծախելով իրենց վերջին ստացվածքը։ Փողոցների մայթերի վրա դարսված էին ամեն տեսակ տնային իրեր, ամանեղեն կարասիներ. այդ բոլորը ծախում էին ոչինչ գնով, որպեսզի փախչելու համար փող ձեռք բերեն։ Աշխարհն իրարով էր անցել. մի ամբողջ ժողովուրդ, անգլուխ ու անպաշտպան մնացած, անում էր՝ ինքն էլ չիմանալով ինչ։ Այդ փախուստը նկարագրել է հանգուցյալ Վրթանես Փափազյանը, որ իբրև թուրքահայ՝ ինքն էլ փախստականների մեջ էր։ Ճանապարհի սարսափներից ամենազարհուրելին ինգուշների հարձակումներն էին, որոնք միայն թալանելու նպատակ չունեին, այլև՝ կոտորելու, ոչնչացնելու։

Մայիսի 26-ին ժողով կար կոնսերվատորիայի դահլիճում, և ես այնտեղ էի գնում, երբ ընկա փախստականների մեծ հոսանքի մեջ։ Տպավորությունը զարհուրելի էր։ Պատմության հարյուրավոր մռայլ էջերից կանգնում էին առջևս այս դժբախտ

ժողովրդի քաշած այսպիսի փախուստները, իրարանցումները, բնաջնջումները։ Եվ միայն մի շերտ, հարյուրամյա մի շրջան էր երևում՝ ռուսական տիրապետության շրջանը, երբ գոնե ռուսահայերն ազատվել էին այդ հավիտենական անեծքից։

Կոնսերվատորիայի ժողովը կուսակցական ժողով չէր, հավաքվել էր մեծ բազմություն բոլոր խավերից։ Պիտի խորհրդակցեին, թե հայերն ինչ պիտի անեին Վրաստանի անկախություն հայտարարելուց հետո։ Ես խոսք խնդրեցի և կարճ նկարագրելով այն, ինչ որ այդ րոպեին կատարվում էր դրսում՝ մեծ փողոցի մեջ, ասացի, որ այդ աղետի պատճառն այն է, որ մենք մոռացել ենք մեր պատմական ճակատագիրը։ Այսօր մենք փախչում ենք Ռուսաստան։ Բայց ինչու՞, մի՞թե այստեղ Ռուսաստան չէր, ինչու՞ բաժանվեցինք, ինչու՞ ուրիշների կուսակցական հաշիվներին ենթարկվեցինք։ Փոքր ենք, տկար և հենց այդ պատճառով խաղալիք ենք դարձել թուրք փաշաների ձեռքին։ Ինչու՞ չենք հայտարարում, որ մենք մի մասն ենք կազմում այն պետության, որ կնքել է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը։ Թող այդ պետությունն էլ ինքը գործադրի իր ստորագրած պարտավորությունը, և մենք կարող ենք ապահով լինել, որ թուրքերը կվերցնեն միայն Բաթումը, Կարսը և չեն համարձակվի իրենց թաթը դնել նաև Ալեքսանդրապոլի, Երևանի, Թիֆլիսի վրա։ Մենք ինքներս թուլացրել ու փոքրացրել ենք մեզ, գցել ենք մեզ թշնամու բերանը և զարմանում ենք, որ մեզ տրորում են։ Դու՛ս եկեք, նայեցե՛ք այդ փախչող մարդկանց, դրանք մեր ժողովուրդն են, ժողովուրդ, որ ոչնչանում է անվերջ փախուստների ճանապարհներին… Մինչև ե՞րբ ոչնչանա…

Ինձ պատասխանեցին, թե բանը բանից անցել է, և հայերը մենակ ոչինչ չեն կարող անել, և նրանց մնում է հետևել մյուսների օրինակին։ Եվ այդպես էլ եղավ։ Երկու օրից հետո նոր երկու հանրապետություններ էլ հայտարարվեցին. հայոց Ազգային Խորհրդի կողմից՝ Հայաստան, թուրքերի Ազգային Խորհրդի կողմից՝ Ադրբեջան։ Հայաստանի կառավարությունը կազմվեց դաշնակցականներից՝ Քաջազնունու նախագահությամբ։ Ալեքսանդրապոլի գրավումը և նրան հետևած աղետները Դաշնակցությունն ամենայն իրավամբ իր կործանումն էր համարել և ընկել էր անհնարին խուճապի մեջ։ Արդեն վաղուց նկատված էր, որ երբ այդ կուսակցությունը մատնվում է խուճապի, նա դառնում է մի անկազմակերպ ամբոխ, գլուխը կորցրած մի հոտ։ Վերցրե՛ք 1918թ. «Հորիզոնի» մայիսյան համարների առաջնորդողները. ի՛նչ լաց, ի՛նչ կուրծք ծեծել… Կորչում ենք։ Մեռնում ենք, պատրաստ ենք ճանաչել մեր սխալը, համաձայնել թուրքերի հետ…

Միայն նոր էին արտասանվում այս խոսքերը։ Բայց ուշ էր, չափազանց ուշ։ Հանդիպելով մի օր Արտաշես Աբեղյանին՝ ես ասացի նրան. «Բարեկամ, ժամանակին մեռնելն էլ առաքինություն է։ Այդքան փոքրոգությունից, որ թափվում է «Հորիզոնի» առաջնորդողներից, ավելի լավ չէ՞ ասել, թե մենք պիտի վերջ դնենք մեր գոյության»։ Բայց հենց որ մի քիչ հանդարտվեց փոթորիկը, հենց որ հայ ժողովրդի գլուխը բարձրանալու հնար եղավ նորից, Դաշնակցությունը մոռացավ ամեն ինչ և էլի

դարձավ հոխորտալից, մեծախոս, սանձարձակ։ Այսպես էր նա. իհարկե տանը միայն։ Իսկ դրսում՝ հլու և հպատակ թուրք փաշաներին՝ նրանց կամակատար փոքրավորներ։

Բաթումում թուրքաց կառավարությունը հաճությամբ ճանաչեց երեք նորակազմ հանրապետությունները՝ իբրև անկախ պետություններ, և իսկույն կնքեց Վրաստանի և Հայաստանի հետ առանձին և անջատ դաշնագրեր, որոնցով անդամահատում էր երկուսին էլ, և երկուսն էլ չէին համարձակվում ծպուտ անգամ հանել։ Վրաստանից խլվեցին Ախալցխայի և Ախալքալաքի գավառները, և Վրաստանը պարտավորվեց ամեն հարկավոր դեպքում դնել իր երկաթուղիները թուրքաց զորահրամանատարության տրամադրության տակ՝ զորքերը այս ու այն կողմ փոխադրելու համար։ Ի՜նչ անկախություն հենց առաջին իսկ քայլից։

Բայց այս դեռ փառք էր՝ համեմատած Հայաստանի թշվառության հետ։ Հայաստանն այլանդակվում էր ամենախայտառակ ձևով, դառնում ոչ թե պետություն, այլ խաղք ու ծիծաղ, եթե չլիներ արտասուք ու հառաչանք… Նրանից խլվում էին Ալեքսանդրապոլը և ամբողջ երկաթուղին՝ մինչև Ջուղա։ Տասը հազար քառակուսի վերստ էր այդ Հայաստանը՝ մեծ մասամբ լեռ ու անապատ՝ Սևանի լճի չորս կողմը, հայ ժողովրդի ոչ թե բնակության տեղ, այլ գերեզման։ Պետական սահմանն անցնում էր Երևանի տակով. հայերի ձեռքին մնում էր միայն վեց վերստ երկարությամբ երկաթուղի։ Էնվեր-փաշան գտել էր, որ միայն այսպիսի չափ ունեցող Հայաստանը կարող է երկյուղ չներշնչել Թուրքիային։ Իսկությունն այն էր, որ Թուրքահայաստանը ոչնչացնելուց հետո երիտթուրքերը ոչնչացնում էին նաև Ռուսահայաստանը։ Այս ծաղրական հանրապետությունն էլ, իհարկե, ժամանակավոր խաղ էր։ Կ.Պոլսում թուրքերը հրատարակել էին Անդրկովկասի քարտեզը, որի վրա այլևս Հայաստան չէր մնում։

Թուրքերի ամենամեծ հոգսն էր այժմ Ադրբեջան կազմակերպելը։ Էնվերի եղբայրը՝ Նուրի-փաշան, Պարսկաստանի վրայով գնաց Գանձակ, սկսեց այնտեղ տեղական թուրքերից զորքեր կազմել և միևնույն ժամանակ ավելի մեծ ուժերով վերանորոգել կռիվը Բաքվի դեմ, որ հեղափոխական պրոլետարիատի ձեռքին էր, բայց պիտի դառնար Ադրբեջանի մայրաքաղաք։ Այնտեղ հեղափոխական դրոշակի տակ կռվող զորքի մեծագույն մասը բաղկացած էր հայ զինվորներից, որոնք դեռ տարվա սկզբին, վերադառնալով արևմտյան ճակատից, պիտի գնային իրենց տները, բայց արգելվեցին Բաքվի մեջ, որովհետև երկաթուղու գիծը տեղական թուրքերի ձեռքին էր գտնվում, որոնք չուզեցին ճանապարհ տալ հայ զինվորներին՝ վախենալով, թե նրանք կգնան և կստվարացնեն հայերի բանակը։ Բաթումի դաշնագրի մի հատուկ հոդված պարտավորեցնում էր հայոց կառավարությանը, որ նա ամեն ջանք գործ դնի այդ հայկական զորամասերը Բաքվից հանելու համար։ Սակայն դա անկարելի եղավ։ Բաքվում ընկավ խորհրդային իշխանությունը, Ստեփան Շահումյանը և իր 25 ընկերներն ընկան անգլիացիների ձեռքն ու սպանվեցին. վճռական դեր հանձն առավ

Բաքվի դաշնակցական կոմիտեն, որ բացարձակորեն պատերազմ հայտարարեց Թուրքիային։

Եվ որովհետև Դաշնակցությունը Դաշնակցություն չէր լինի, եթե չհիշեր, որ Եվրոպային պետք է պաշտել և փրկիչ դարձնել. ուստի Էնզելիի անգլիական բանակի մի մասը, դաշնակցականների հրավերով, եկավ Բաքու քաղաքը պաշտպանելու համար, որ արդեն պաշարված էր օսմանյան զորքերով։ Նույն Դաշնակցությունը կռվում էր օսմանցիների դեմ նաև երկաթուղու գծի վրա, Շամախու, Նուխու, Գյոկչայի և Արեշի գավառներում՝ հաստատելով իր թնդանոթները հայ գյուղերում, որոնք բավականաչափ դժվարացնում էին Նուրի-փաշայի բանակի առաջխաղացումը։ Նուրի-փաշան տեսնում էր իր թիկունքում նաև հայկական Ղարաբաղը, որ ձգտում էր կապվել Բաքվի հեղափոխականների հետ, ուստի և ուղղված հայերին մի կոչ հրապարակեց, որով նրանցից պահանջում էր հնազանդություն՝ հակառակ դեպքում սպառնալով Ղարաբաղի մեջ կրկնել Ադանայի կոտորածները։

Որպեսզի գեթ համառոտակի հիշատակած լինեմ բոլոր այն գլխավոր շարժումները, որոնք ծնեցրին Անդրկովկասի հայության համար 1918-ի ամառվա թշվառությունները, պիտի հիշեմ և Անդրանիկին։ Նա հեռացել էր Դաշնակցությունից, դարձել Կովկասում ապաստանած թուրքահայության պարագլխի նման մի բան, նրանցից կազմակերպել մի բանակ և աշխատում էր դաշնակցականներից անկախ ու անջատ գործել։ Ալեքսանդրապոլի նահանջի ժամանակ նա բաժանվեց հայ բանակից, անցավ Դսեղ գյուղը և Ղարաքիլիսայի ճակատամարտի միջոցին մատը մատին չխփեց գրեթե ամեն կողմից շրջապատված հայ կռվողներին օգնելու համար։ Երբ թուրքերն առաջացան երկաթուղու ուղղությամբ, Անդրանիկն իր զորքերը տարավ Դիլիջան և այստեղից բռնեց մի ուղղություն, որ պետք էր համարել արկածախնդրություն, այն է՝ դեպի Պարսկաստան, անգլիական զորքերին միանալու համար։

Սակայն Սալմաստում նա ջարդվեց թուրքերից և, նորից վերադառնալով Արաքսի ձախ ափը, կանգ առավ Նախիջևանում, ուր, կարծեմ, տեղի ունեցավ տեղական թուրքերի կոտորած։ Սակայն չկարողանալով պահվել այդ կողմում, որովհետև օսմանցիներն արշավանք սկսեցին նրա դեմ, նա գնաց Արաքսի ափով որպես թե դեպի Բաքու՝ անգլիացիներին միանալու համար, բայց շուռ եկավ և մտավ Զանգեզուր, ուր շատ լավ ընդունելություն գտավ ամեն կողմից կտրված հայ ազգաբնակչության կողմից։ Այստեղ Անդրանիկն իսկապես խոշոր գործ կատարեց՝ կազմակերպելով այդ երկիրն ինքնապաշտպանության համար, բայցև՝ գործադրելով «սրբել-մաքրելու» սիստեմը լայն չափերով։ Այս պատճառով է, որ Զանգեզուրն էլ Բաքվի նման փուշ դարձավ օսմանյան կառավարության աչքում. դարձյալ Հայաստանի կառավարությունից էր նա պահանջում ոչնչացնել Անդրանիկի զորախումբը։ Իսկ Հայաստանի կառավարությունն այստեղ էլ, ինչպես և Բաքվի գործում, խոստովանեց իր կատարյալ անկարողությունը։ Թուրքերն իհարկե

չհավատացին այդ պատճառաբանությանը, և նրանց մեջ ավելի ու ավելի հասունացավ հայերի համառ թշնամությունը Հայաստանի ջնջման միջոցով վերացնելու միտքը։

Եվ ահա 1918-ի ամռանը մենք տեսնում ենք այսպիսի պատկեր. ամեն տեղ, ուր մտնում են օսմանցիները, հայերի ու տեղական թուրքերի մեջ, դաշնակցական «մաքրել-սրբելու» հետևանքով, սաստիկ թշնամություն է տիրում։ Օսմանյան բանակում են տեղական ավերված, թալանված ու սրի քաշված գյուղերի բնակիչները, որոնք լցված են սոսկալի վրեժխնդրությամբ հայերի դեմ։ Եթե Ղարաքիլիսան երեք օրվա ընթացքում մատնվեց օսմանյան զորքի վայրագություններին, գլխավոր պատճառը փոքրիկ թուրքական Վարդանլուն էր՝ այնքան գազանորեն «մաքրված-սրբված» դաշնակցականների ձեռքով։ Բայց ավելի վատ էր դրությունը Ախալքալաքի գավառում։ Դաշնակցական «մաքրում-սրբումը» այստեղ կատարվել էր ավելի լայն չափերով, և տեղական մահմեդական ազգաբնակչությունը տեսել էր հայերի կողմից շատ ու շատ ուխտադրժություն, անգթություն, դավաճանություն հին հարևանական հարաբերություններին։ Եվ երբ օսմանցիները մտան Ախալքալաք և նրա գավառը, այժմ էլ հայ ազգաբնակչության հեծեծանքն էր, որ բարձրանում էր երկինք։ Տասնյակ հազարներով մարդիկ, փրկություն որոնելով թշնամու սրից, կրակից, առևանգումներից և բռնաբարություններից, պոկվեցին իրենց հողից ու փախան դեպի Բորժոմի կիրճը, բայց այստեղ մատնվեցին կատարյալ բնաջնջման։

Նուխու, Արեշի, Գյոկչայի և Շամախու գավառներում, երբ օսմանյան զորքը, փախցնելով դաշնակցական կռվող խմբերը, գրավեց նրանց բռնած հայ գյուղերը, սկսվեց հայ ազգաբնակչության ընդհանուր և համատարած կոտորած, բոլոր գյուղերը հողին հավասարեցվեցին, ազգաբնակչության մի մասը փախավ Բաքու, մյուսը՝ դեպի Վրաստան, բայց հենց այդ փախուստի մեջ էլ գտավ իր կորուստը։ Նախիջևանի և նրա գավառի հայերն էլ բնաջինջ եղան Անդրանիկի արշավանքի հետևանքով։ Եվ այս բոլոր արյունոտ տեսարանները լրացնում էր մի ահռելի սպանդանոց՝ Բաքուն։

Դաշնակցությունն արկածախնդրական ձեռնարկումներ շատ ունի իր պատմության մեջ, բայց այս մեկը՝ Բաքուն սեփականելը, Բաքվին տիրանալը, եզակի է շատ ուրիշների մեջ։ Բաքուն, շրջակայքը, ամբողջ նահանգը հոծ թուրքական ազգաբնակչությամբ է լեցուն, հայությունն այնտեղ [ընդամենը] մի բան, և այդ բանն իր ձեռքն է առել մեծ արդյունաբերական կենտրոնն ու պատերազմ է մղում Թուրքիայի դեմ։ Իսկ Թուրքիան, չափազանց ոգևորվելով նավթային մայրաքաղաքը գրավելու և այնտեղից նաև Դաղստանում հաստատվելու մտքով, զորքեր է կուտակում Բաքվի առաջ՝ մոռանալով ամեն զգուշություն, մանավանդ Պաղեստինի ճակատի կողմից, ուր անգլիացիները զարգացնում էին եռանդուն և վճռական գործողություններ։ Բաքվի ճակատագիրն արդեն որոշված էր։ Այդ իսկույն հասկացան Էնզելիից եկած անգլիացիները։ Նրանք եկել էին, ըստ իրենց ավանդական սովորության, ուրիշի ձեռքով փուշ քաղելու։

Կարծել էին, թե Բաքվում բավական շատ զորք կա թուրքերին ետ մղելու համար, բայց տեսել էին այդտեղ քայքայման վիճակին հասած հայ զորամասերը։ Ուստի, ավելորդ համարելով զուր տեղից վտանգի ենթարկվելը, մի օր վեր կացան և նավ նստելով էլի գնացին Էնզելի։ Ճակատի տերը մնաց դարձյալ Դաշնակցությունը։ Պաշարող օսմանցիները առաջարկեցին նրան հանձնել քաղաքն առանց կռվի, բայց նա մերժեց այդ առաջարկը՝ հրատարակելով մի մեծախոս, հպարտ և սպառնական կոչ։ Թուրքական գրոհները հետզհետե մոտենում էին քաղաքին։ Վերջին պահին դաշնակցականները և իրենց զորքերը նստեցին նավերի մեջ և փախան Էնզելի. քաղաքում մնացին գլխավորապես նրանք, որոնք, միջոց չունեին փախչելու, այսինքն՝ աղքատ ազգաբնակչությունը, մեկ էլ՝ Շամախու և Գյոկչայի գավառների փախստական գյուղացիները, որոնք ապրում էին փողոցներում, իրենց սայլերի մեջ։ Երեք օր օսմանյան զորաբաժիններին և տեղական թուրքերին («ղարափափախներին», ինչպես անվանում էին նրանց օսմանցիները) թույլ տրվեց անել Բաքվի հայերին՝ ինչ ուզում են։ Մուսավաթականները մարտի դեպքերի վրեժն էին հանում։

Տները և փողոցները լցվեցին դիակներով, ավարն ու կողոպուտն ահագին էր, որովհետև Բաքվի հայ բուրժուազիան կուտակումների սիրահար էր։ Օսմանյան ասկյարներն ու սպաները մեծ քանակությամբ ավար էին ուղարկում Թուրքիա, իրենց տները։ Գերմանական մի սպա, որ գտնվում էր Խալիլ-փաշայի շտաբում, անկարող լինելով տանել Բաքվի սարսափները, վերադարձավ Թիֆլիս և մի մտերմական շրջանում ասաց. «Ի՜նչ ամոթ և անպատվություն է ունենալ այսպիսի դաշնակից… Տևտոնյան ասպետների թոռներին հրամայված էր միայն լուռ ականատես լինել»… Բաքվի հայ ազգաբնակչության մի մասն էլ կարողացավ շոգենավերով փախչել Էնզելի, Կրասնովոդսկ և Պետրովսկ։ Բայց այս տեղերում էլ համաճարակները սկսեցին հնձել այդ փախստական շարքերը։ Ընդհանուր առմամբ Բաքվի հայությունը 1918-ի սեպտեմբերին կորցրեց մոտ 30 հազար հոգի։

Կարծում եք, թե բանը միայն մասսայական սպանությունների մե՞ջ է։ Ո՛չ։ Հայ ժողովուրդը սոսկալի դրամաներ էր ապրում օրից օր, շաբաթներով, ամիսներով։ Չկար այն ժամանակ մարդկային ամբողջ ցեղի մեջ ավելի արհամարհված, ավելի ստոր, մարդկային կերպարանքից ընկած և անասուններից էլ վատթար դրության մատնված թշվառական հատված, քան հայությունը։ Նուխու գավառի փախստական հայերը հավաքված են Ալազան գետի ձախ ափին, փրկություն են որոնում «քրիստոնյա», կուլտուրական Վրաստանում, որտեղ դեմոկրատիկ հանրապետություն է հռչակված, և նրա գլուխ կանգնած են սոցիալ-դեմոկրատները։ Բայց դժբախտներից ոչ մեկին թույլ չեն տալիս անցնել աջ ափը։ Ի՞նչ անել։ Մեռնել, ուրիշ փրկություն չկա։ Եվ մեռնում են հազարներով։ Պետք է կարդալ այնտեղից ուղարկված և լրագրերում տպված հեռագրերը և լուրերը՝ հասկանալու համար, թե ի՜նչ զարհուրելի աստիճանների կարող է հասնել քսաներորդ դարում մարդ ասած էակի

քարսրտությունը։ Բայց ինչու՞ զարմանանք Ալազանի ձախ ափի վրա։ Այնտեղ մեռնող ժողովուրդը գոնե օտարահպատակներ են։

Գնանք Բակուրիանի լեռան գլուխը։ Այստեղ Վրաստանի հպատակ հայերն են՝ Ախալքալաքի գավառից փախստականները։ Նրանք չեն կարող մնալ օսմանցիների տիրապետության տակ, ուզում են անցնել Վրաստանի մի այլ կողմը կամ էլ՝ Հյուսիսային Կովկաս։ Անկարելի է։ Մենշևիկների զորքը կանգնած է, թույլ չի տալիս իջնել սարից։ Հենց այդպես էլ, այդ լեռնային խոշոր բարձրության վրա կազմվում է թշվառության մի բանակ, մահվան մի ճամբար։ Հեռագրեր էին թափվում Թիֆլիս, մարդիկ էին գնում տեսնելու։ Մի պահ ամեն օր կոտորվում էր մինչև 600 երեխա, ապրելու համար ծնողներն իրենց աղջիներին ծախում էին պոռնկության։ Մենշևիկների վրա ոչինչ չէր ազդում։ Ձմեռը եկավ իր դաժան ցրտերով նստելու Բակուրիանիի բարձունքների վրա։ Դարձյալ ոչինչ։ Միայն երբ օսմանցիները հեռացան Ախալքալաքի գավառից, և կիսով չափ ոչնչացած, տնտեսապես կործանված փախստականները վերադարձան իրենց ավերակ տները, վրաց գեներալները շտապեցին նորից Վրաստանի իշխանության տակ առնել երկիրն էլ, ազգաբնակչությունն էլ։ Մարդկային ցեղի տարեգրությունների մեջ դժվար կարելի է գտնել մենշևիկյան այս խժդժությունների մի ուրիշ օրինակը։

Դեռ ամառ էր, դեռ արտերն էին կանգնած, բայց հայ ժողովուրդն արդեն հաց չուներ, սոված էր։ Նրա արտերը խլել էին, տունը քանդել, իրեն քշել սարերն արածելու անասունների պես։ Բաթումի դաշնագրով Թուրքիային անցած մասի հայ բնակիչները փախել էին Էջմիածին, այստեղից տեսնում էին իրենց մշակած և հասցրած արտերն ուրիշների ձեռքին և ոռնում էին քաղցից ու կատաղությունից։ Այդ միջոցին Էջմիածին էր գնում Գերմանիայի փառազարդ ներկայացուցիչը Կովկասում՝ գեներալ ֆոն Կրեյսը։ Գևորգ կաթողիկոսն այժմ, ավա՜ղ այլևս ո՛չ դիպլոմատիայի գլուխ, դառնում է գեներալին, ցույց է տալիս իրեն շրջապատած սոված ու մերկ բազմությունը, ցույց է տալիս նրա արտերը, որ հնձում էին օսմանցիները, և ինքն էլ, ասում են, լաց է լինում։ Գերմանական գեներալը նրան խորհուրդ է տալիս խնդիրք ուղարկել Վիլհելմ կայսրին։ Ուղարկում են ո՛չ միայն նրան, այլև Ավստրիայի կայսրին։ Իզուր սակայն։

Կարծում եք, թե միայն օտա՞րն էր քարսիրտ։ Սխալվում եք։ Թիֆլիսի փողոցները լցվել էին անտեր, փոքրիկ որբերով։ Նրանք մեռնում էին քաղցից, մեռնում էին այս մեծ քաղաքում, մարդկանց աչքի առաջ և փողոցներում։ Մի երեխա մեռել էր հենց շտաբի մայթի վրա։ Իմ բարեկամներից մեկն ինձ պատմել է, որ հենց այդ սև օրերին հայ բուրժուաներից մեկը ճոխ թեյասեղան էր սարքել իր հյուրերի համար, ինքն էլ նստած «պիրոժնիներ» էր ուտեցնում իր շնիկին…

1918-ի սուգ ու կսկիծ ամռանը հայերն էլ, վրացիների և ադրբջանցիների նման, պատվիրակություն էին ուղարկել Կ.Պոլիս՝ իբրև թե մի նոր կոնֆերանս կազմելու համար, որին պիտի մասնակցեին նաև Թուրքիայի դաշնակից պետությունները՝

Բուլղարիան, Ավստրիան և Գերմանիան։ Հայկական պատվիրակության գլուխն էր Ավետիս Ահարոնյանը։ Եվ ստացվում էր ցավալի ու հեգնական հակադրություն։ Այստեղ հայ ժողովուրդը փչանում էր արագորեն և գնում էր դեպի ձմեռ՝ սոված ու ավելի անողոք ջարդարար։ Իսկ այնտեղ՝ Բոսֆորի ափում, Թոքաթլիայի առաջնակարգ հյուրանոցում բնակություն էր հաստատել այդ նույն ջարդվող ու ոչնչացող ժողովրդի ներկայացուցչությունը, որ մազի չափ օգնություն չէր հասցնում, բայց դիպլոմատիա էր ներկայացնում, այսինքն՝ ընդունում և տալիս էր այցելություններ, զանազան դատարկ հայտարարություններ էր անում։ Դիվանագիտական տակտը պահանջում էր, որ Հայաստանի պատվիրակության նախագահը ներկայանա սուլթանին։ Եվ Ավետիս Ահարոնյանը ներկայացավ, հաճոյական խոսքեր ասաց սուլթանին, արժանացավ նրա համակրական ակնարկին… Դուք երևակայու՞մ եք…

Հայդուկային գաղափարախոսությամբ անուն ստեղծած Ահարոնյանը թուրք սուլթանի առջև գլուխ խոնարհեցրած։ Ահա այս հանգամանքն է, որ ես երբեք չեմ հասկացել՝ լինելով ըստ կոչման գրող։ Երբ Տրապիզոնում մեր պատվիրակությունը Խատիսյանի նախաձեռնությամբ մի օր թեյի հրավիրեց թուրք պատվիրակությանը, ես ավելի լավ համարեցի փակված մնալ իմ սենյակում՝ ասելով ինձ հարցնողներին. «Ի՞նչ գործ ունեմ ես ձեր դիվանագիտության հետ։ Ես գրականության մարդ եմ և գիտեմ, թե ի՛նչ չեմ կարող անել»։ Եվ իրավ, եթե գրականությունը մի ժողովրդի խիղճն է, ի՞նչ բան են գրողները, եթե ոչ նրա՝ այդ խղճի սպասավորներ։ Տարիների ընթացքում ֆիդայական հմայքներ արծարծել գեղարվեստական գրականության միջոցով, տարիների ընթացքում սուլթանական զուլումի ամբողջ սարսափն ու զարհուրանքը ներկայացնել մի աննախընթաց լալկանությամբ և հետո գնալ նույն այդ զուլումի աղբյուր սուլթանին երկրպագելու…

Ես այս չէի հասկանում։ Կա՛մ գրող՝ իր սեփական հոգով ու շնչով, կա՛մ անհոգի դիպլոմատ։ Ես լեռնցի եմ և այսպես կարճ կտրել եմ սիրում։ Ուստի սարսափի օրերում, սարսափներով խոշտանգված, ավելի մեծ սարսափի՝ սոված ձմեռվա առջև կանգնած, ես մի հոդված գրեցի, որի մեջ պահանջում էի ամեն ինչ թողնել, ամեն ուրիշ հոգս ու ցավ մոռանալ, ծախել մեր ազգային բոլոր սեփականությունները մի նպատակի, միմիայն մեկի՝ հայ ժողովուրդն ապրեցնելու համար։ Եվ պահանջներիս մեջ էր, ի միջի այլոց, և այն, որ Կ.Պոլսից ետ կանչվի այդքան թանկ նստող և դիվանագիտական երեխաներից բաղկացած մեր պատվիրակությունը։ Ավետիս Ահարոնյանը վերադարձավ Կ.Պոլսից, բայց այլևս ինձ հետ չէր խոսում։ Այնքան բարձր համարում ուներ նա իր նոր՝ գրականագետին սպանող, բայց արտաքին զիզի-պիզիներով հրապուրիչ արհեստի վրա։

Բայց ճիշտն ասած, այն ժամանակ ես չէի հասկանում, որ Ավետիս Ահարոնյանը միայն անձնական անխտրականություն չէր ցույց տալիս, այլև կուսակցական։ Այդ Դաշնակցությունն էր, որ իր խատիսյանների քաղաքագիտական

գլուխկոնծիներով ճանապարհ էր հարթում իր համար՝ պատեհականության, հարմարողականության ճանապարհը։

## Գլուխ յոթերորդ։ «Անկախություններ»

### Ա

Հաղթողի քմահաճույքն էր ստեղծել երեք հանրապետություններ Կովկասյան մեծ լեռնաշղթայի հարավային կողմերում։ Եվ քմահաճույքի ու խժական բռնության ամենաթշվառ վիժումն էր «անկախ» կոչված Հայաստանը… Չկար ավելի մեծ հեգնանք, ավելի անողորմ ծաղր, քան այդ «անկախ» անունը։ Անկախ չէր անդրկովկասյան հանրապետություններից և ոչ մեկը, բայց Հայաստանի «անկախությունը» ոչ մեկին նման չէր։ Մի մեռնող ժողովրդի պետություն էր այդ՝ մի ափ հողամասով, աղքատ, կործանված մի երկիր, որի ճակատագրի վրա ազդել կարող էր ամեն ինչ, նույնիսկ մի ապստամբ Բասարգեչար գյուղ կամ գյուղերի մի խումբ։ 1918-ի թշվառագույն ամառն էր, որ Քաջազնունին Թիֆլիսում կազմած իր կառավարությունը տանում էր Երևան՝ Հայաստանի մայրաքաղաք։ Թիֆլիսից ուղևորումը մի կատարյալ ստորացում և արհամարհանք էր անկախ երկրի անկախ կառավարության համար։

Մի կերպ կարողացան ազատվել Թիֆլիսի կայարանի մենշևիկ ծառայողների քմահաճույքներից, գնացին Աղստաֆա և այդտեղից ավտոմոբիլներով՝ Երևան։ Այնտեղ նրան սպասում էր ավերակ երկիրը իր կոտորվող ժողովրդով։ Ոչինչ չկար, նույնիսկ տներ՝ կառավարությունը տեղավորելու համար։ Մինչդեռ Վրաստանը և Ադրբեջանը գտնվում էին անհամեմատ բախտավոր պայմանների մեջ։ Վրաստանն ստանում էր իբրև մայրաքաղաք՝ Թիֆլիսը, որ մինչև այդ եղել էր ամբողջ Կովկասի մայրաքաղաքը և կենտրոնացրել էր իր մեջ ահագին քանակությամբ պետական և հասարակական հիմնարկություններ, պահեստներ՝ իրենց մեծամեծ շինություններով, և այլն, և այլն։

Դրանց մեծագույն մասը պետք էր համարել ընդհանուր Կովկասյան ժառանգություն, բայց վրացի մենշևիկները չտվին մյուս ժառանգորդներին և ոչ մի հատ, ինչպես ասում են, ոլորած թել։ Ավելացնենք այս բոլորի վրա և այն, որ հայ բուրժուազիան զարդարել էր Թիֆլիսը բազմաթիվ հոյակապ և մեծամեծ շինություններով։ Ադրբեջանի մայրաքաղաք Բաքուն պակաս գեղեցիկ չէր և բարեզարդ, նույնիսկ գերազանցում էր Թիֆլիսին՝ իբրև արդյունաբերական համաշխարհային կենտրոն։ Առհասարակ Ադրբեջանը տնտեսապես ամենքից ուժեղն էր, քանի որ իր ձեռքում ունի բնական հարստություններով օժտված Արևելյան Անդրկովկասը։

Փոխհարաբերություններն այդ երեք «անկախությունների» միջև չէին կարող երբեք լինել փոքրիշատե տանելի, որովհետև երեքի մեջ էլ տիրողը գազանային նացիոնալիզմն էր։ Հայ դաշնակցականներին արդեն ճանաչում ենք, վրացի

մենշևիկներին տեսանք այն վերաբերմունքով, որ նրանք ունեցան դեպի հայ մեռնող փախստական ժողովուրդը։ Իսկ «Մուսավաթը»՝ իբրև երիտթուրքերի աշակերտ, լցված էր ռազմատենչ իմպերիալիզմով ամբողջ Կովկասի վերաբերմամբ և մասնավոր կատաղի թշնամություն ուներ մանավանդ հայերի դեմ։ Դեռ հազիվհազ խանձարուրից դուրս եկած իբրև պետություն, դեռ ոչինչ շինարարական շնորհք ցույց չտված, «Մուսավաթը» հայրենասիրական երգ էր դարձնում իր զինվորների համար. «Բիր, իքի՝ Կավկազ բիզիմքի» («Մեկ, երկու՝ Կովկասը մերը»)։

Իսկ երբ սպան հարցնում էր. «Դուշմանըմըզ քի՞մ դըր» («Թշնամիներս ո՞վ է»), ամենքը պատասխանում էին. «Էրմանի» («Հայը»)։ Թշնամությունների առիթներն էլ մշտապես անպակաս էին՝ սահմանային վեճերը։ Վրաստանը դեռ Բաթումի պայմանագրից առաջ որոշել էր, թե իր հարավային սահմանը պիտի կազմի Սևանի լիճը, և սոցիալիստ Ծերեթելին, որ մի ժամանակ ռուսաց մեծ հեղափոխության գեղեցկությունն էր համարվում և այժմ դարձել էր վրացական մի ողորմելի շովինիստ, հենց այդպիսի մի առաջարկություն էր բերում հայերին, այն է՝ հանձնել վրացիներին Փամբակը, Դիլիջանը։ Հետո վրաց մենշևիկները պինդ կպան ցարական ժամանակի Թիֆլիսի նահանգին և պահանջում էին, որ այդ նահանգն իր բոլոր սահմաններով մտնի Վրաստանի մեջ, որ նշանակում էր հափշտակել նաև այնպիսի զուտ հայաբնակ շրջան, որպիսին Լոռին էր։ Միևնույն եղանակին հետևում էր և Ադրբեջանը։

Վերցնելով Գանձակի նահանգը, նա համարում էր լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը իր անկողոպտելի սեփականություն, թեև այդտեղի հայ ազգաբնակչությունը հասնում էր 200 հազարի։ Միևնուն ժամանակ մուսավաթական Ադրբեջանն իրենն էր համարում Հայաստանի մեջ գտնվող թուրքաբնակ շրջանները, ինչպես են, օրինակ, Զանգիբասարը, Վեդիբասարը, Բասարգեչարը և այլն։ Այս տեղերում ադրբեջանական դրամն ու գործակալները պահում էին մշտական ապստամբական դրություն։ Այս սահմանավեճերը միայն Հայաստանի համար գոյություն ունեին, միայն նրա կյանքն էին դժոխային դարձնում։ Թե չէ՝ հարաբերությունները Վրաստանի և Ադրբեջանի միջև վատ չէին. մենշևիկները նույնիսկ դաշինք էին կապել մուսավաթականների հետ Ռուսաստանի դեմ։ Նրանք յուրացրել էին քաղաքական հանգամանքներն օգտագործելու արհեստը, և դա նրանց հաջողվում էր շնորհիվ նպաստավոր պայմանների։ Այսպես, մենշևիկ պատերազմական մինիստր Գեորգաձեն մեծ ճաշկերույթ տվեց օսմանյան զորքերի հրամանատար Խալիլ-փաշային, որ գնում էր Բաքուն վերցնելու, և իր բաժակաճառի մեջ հաջողություն մաղթեց նրա սրին։ Այսպիսի քաղաքականությունը չէր կարող դուր չգալ Ադրբեջանին, որ Թուրքիայի ստեղծածն էր և Թուրքիայով էր ապրում։

Բաքուն վերցնելուց հետո Նուրի-փաշան օսմանյան զորքերը դարձրեց հայկական Ղարաբաղի դեմ և գրավեց Շուշին՝ ճանապարհին ռմբակոծելով և քարուքանդ անելով մի քանի գյուղ։ Հերթն այնուհետև պիտի գար Զանգեզուրին, իսկ դրանից հետո նաև, ինչպես ամենքն էին սպասում, Երևանին։ Բայց այդ միջոցին

համաշխարհային պատերազմի երկու բեմերում տեղի ունեցան խոշոր դեպքեր, որոնք և փրկեցին Երևանի դժբախտ հանրապետությունը։ Նախ Բուլղարիան ջարդվեց Սալոնիկի ճակատում, և Թուրքիան կտրվեց Գերմանիայից, ապա գեներալ Ալեմբին Պաղեստինի ճակատում վերջնականապես ջախջախեց թուրքական բանակը, և արյունարբու սուլթանիզմը զինադադար և հաշտություն խնդրեց, որի պայմաններից մեկն էր Անդրկովկասը թուրքական զորքերից մաքրելը։ Հայերը վերջապես կարող էին փոքր-ինչ ազատ շունչ քաշել։ Ալեքսանդրապոլը, երկաթուղին նորից հայերի ձեռքն անցան, թեև առանց վագոնների և շոգեշարժերի, որոնք վրացական կառավարության սեփականությունն էին դարձել։ Գերմանական զորքերը հեռացան Վրաստանից. Արևելքի տերն Անտանտն էր։ Էնզելիի անգլիական զորքը տեղափոխվեց Բաքու, և հրամանատար գեներալ Թոմսոնը իրապես դարձավ դիկտատոր Անդրկովկասի «անկախ» հանրապետությունների մեջ։ Կ.Պոլիսը գրավեցին դաշնակից զորքերը՝ մեծ հրճվանք պատճառելով հույներին և հայերին։ Անգլիական մի զորաբաժին էլ Բաթումի կողմից ներս մտավ և գրավեց Թիֆլիսը…

Մեր երկրում երևան էր եկել մի ուրիշ եվրոպական պետություն՝ ծովերի տեր և համաշխարհային վաճառական Անգլիան։ Ինչպե՞ս էր վերաբերմունքը դեպի այս նոր ուժը։ Ադրբեջանցիները, շատ հասկանալի պատճառով, ատելով ատում էին անգլիացիներին։ Այսպես էին և վրացիները. սրանք չափազանց շատ էին սիրել իրենց գերմանացիներին և մեծ ափսոսանքով էին բաժանվել նրանցից։ Նացիոնալիստական մամուլի դատողություններից պարզ երևում էր, որ անգլիացիներն ատելի էին և այն պատճառով, որ նրանք հայերի բարեկամներն էին համարվում։ Այսպես էր սկզբում…

Ճի՞շտ էր, որ անգլիացիները հայերի բարեկամներն էին։

Մեզանում հոռետեսներ քիչ գտնվեցին, որոնք ասում էին, թե այդ համաշխարհային չարչիներն ամենից առաջ մեզ կսկսեն ծախել։ Այդպիսին էր, օրինակ, հանգուցյալ Ստեփան Մամիկոնյանը, որ անգլիացիներին «չարչի» չէր անվանում, այլ «բուխգալտեր»։ Բայց այսպիսի հոռետեսներին լռեցնում էին՝ ասելով. «Չէ՞ որ Անգլիան է՝ Գլադստոնի, Ջեյմս Բրայսի և այլ հարյուրավոր հայասերների Անգլիան։ Չէ՞ որ անգլիական մամուլն այդ օրերին հայերին անվանում էր դաշնակիցներ, և այդ միևնույնը անգլիական Համայնքների պալատում կրկնել էր Ռոբերտ Սեսիլը՝ գովեստներ ձոնելով մեր ժողովրդական հերոս Անդրանիկին»։

Այսքանը, իհարկե, բավական չէր։ Հայերի մեջ խոսում էր հին հոգեբանությունը. Թուրքահայաստանը տակնուվրա անել՝ գլխավորապես Անգլիային խոսեցնելու համար, խնդիրքներ և աղերսանքներ՝ ուղղված Անգլիայի պետական մարդկանց, հայասիրական ճառեր պառլամենտում, հայասիրական հարյուրավոր միտինգներ և այլն, և այլն. մի խոսքով՝ ամբողջ մի անցյալ։ «Եվրոպական ազգերի մեջ ո՞վ է,- հարցնում էինք մենք ոչ առանց գոռոզության,- որ այնքան մանրամասնորեն ուսումնասիրած լինի մեր դրությունը, որ այնքան լավ իմանա մեր դատի

արդարությունը, ինչպես այս արել է Անգլիան։ «Կապույտ գրքի» այն երկար շարանը, որի մեջ արձագանք է գտել թուրքահայի ամեն մի հառաչանքը, Լինչի «Հայաստանը», վերջապես հենց օրվա կենդանի մարդը՝ Նոել Բեքստոնը, որ պատերազմի ժամանակ գնաց Վան, խոսեց մեզ հետ շատ ու շատ, գրեց, համոզեց»։

Եվ մենք մոռացանք հայ ժողովրդի սոսկալի դրությունը և դարձյալ ռոմանտիկ երազների անձնատուր եղանք։ Բայց ահա՝ ի՛նչ բան կար։ Անգլիական զորքերը դեռ Թիֆլիսում չէին երևացել, մի օր Հովհաննես Թումանյանի տանը թեյով մեծարում էինք Վլադիկավկազի ֆրանսիական հյուպատոս Դյուռուային, որ խիստ հայասերն էր երևում։ Նա երկարորեն մեզ պատմում էր, թե ինչպես ֆրանսիացիները հոգս ունեն հայերի համար, աշխատում են բավարարել նրանց լավագույն կերպով, թե ինչպես նույնիսկ նրանց մեծ հերոս մարշալ Ֆոշը դաշնակիցների խորհրդակցության մեջ ոտքի է կանգնել ու այնպես խոսել Հայոց հարցի մասին և ասել է, թե հարցը լուծելը մեր ամենքիս սրբազան պարտքն է։ «Բայց,- ավելացրեց ֆրանսիական դիպլոմատը,- ես պետք է նախազգուշացնեմ հայերին, որ անգլիացիները մի քիչ վատ են տրամադրված նրանց դեմ, և պետք է աշխատել հարթել այդ պակասությունը»։

Մենք բոլորս, ի՛նչ թաքցնեմ, հավատացինք այդ մարդուն. ինչպե՞ս չհավատայինք… մազով-միրքով մարդ, եվրոպացի, այն էլ՝ Ռոբեսպիեռի և Դանտոնի հայրենակից։ Ինչպե՛ս այդ հանդիսավոր-ուրախական օրերին, երբ Անտանտի բոլոր կողմնակիցները հրճվանքի մեջ էին, մենք մտքով անգամ անցկացնեինք, թե մեզ հետ մի կտոր հաց կտրողը, մի բաժակից խմողը մի վատ տեսակի ստախոս է, արհեստով՝ ստախոս-դիպլոմատ։ Ի՛նչ կարող էինք մակաբերել, թե Գերմանիային ոտքի տակ տված, հաղթության գինովության ամենաբարձր աստիճանին հասած ռոպեին անգամ, հազիվ ոտք դրած ասիական հողի վրա՝ սկսել են մրցել իրար հետ, իրենց շահերը դրստել…

Եկան անգլիացիները։ Ժպտում էին ամենքին, ամենքի թվում՝ և մեզ։ Անտանտի մեծամեծ խաբեբայությունների շրջանն էր։ Գեներալ Թոմսոնը Բաքվում հայտարարեց, թե Թուրքիայից պետք է ստացվեն այն բոլոր վնասները, որ պատճառել են սեպտեմբերյան կոտորածն ու թալանը։ Առանձին հանձնաժողով կազմվեց, որ ստուգում էր վնասների չափը և ամեն մի վնասվածին կտրոն էր տալիս, թե նա ունի ստանալու այսքան գումար։ Այդ կտրոնները նույնիսկ փոխարկելի էին բորսայում։ Թիֆլիսում կազմակերպվեց մի ավելի խոշոր հիմնարկություն՝ պատերազմի պատճառած բոլոր վնասները հայտնաբերելու և հաշվելու համար։ Թուրքահայերի համար միևնույն գործողությունը կատարում էր Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը։ Հատուցման ժամը հասած էր երևում։ Սարսափահար Թուրքիան իր վիճակն իսպառ չփչացնելու և Եվրոպայի առջև գոնե մի թեթև համարում ձեռք բերելու համար աշխատում էր իր վրայից լվանալ 1915-ի հայկական կոտորածների սև բիծը։ Նա ամեն օր և ամեն կողմ հայտարարում էր, թե կոտորածների մեջ մեղք չունի թուրք ժողովուրդը, թե այդ ոճիրը կառավարող մարդկանց վրա է ընկնում, և նրանք էլ պիտի

պատասխանատու լինեն։ Դատարան հաստատվեց, մի քանի հայտնի ջարդարարներ դատապրտվեցին մահվան։

Հայերը առանձին ուշադրության առարկա դարձան մանավանդ Կիլիկիայում։ Այդտեղ էր ֆրանսիացիների կազմակերպած Արևելյան լեգեոնը՝ բաղկացած գլխավորապես հայերից, որ շատ աչքի ընկնող բաժին էր ունեցել թուրքական բանակի ջախջախման մեջ և արժանացել էր գեներալ Ալեմբիի մեծ գովասանքներին։ Կիլիկիայից վտարված հայությունը նորից վերադարձել էր իր նախավայրերը։ Ֆրանսիական հրամանատար գեներալն ասում էր հայերին. «Այս ձեր երկիրն է, և սրա կառավարությունը ձեզ է պատկանում։ Մենք դրա համար ենք եկել այստեղ»։ Հայերի մեջ, մանավանդ Կ.Պոլսում, ընդհանուր հրճվանք էր տիրում։ 1919-ի ձմռանը անգլիական հրամանատարությունը շտապ եղանակով Փարիզ ուղարկեց Անդրկովկասի երեք հանրապետությունների պատվիրակություններ՝ հաշտության կոնֆերանսին մասնակցելու համար։ Անգլիական գլխավոր հրամանատար Միլնը, որ այդ միջոցին Թիֆլիսում էր գտնվում, ընդունելով հայկական պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին, ասաց նրան. «Գնացեք, այնտեղ դուք ստանալիք ունեք, բայց եղեք չափավոր»։ Վճռված էր, որ բոլոր հայերի [խնդիրները], մանավանդ երեք հանրապետությունների մեջ գոյություն ունեցող սահմանավեճերը պիտի վճռվեն և կարգավորվեն այնտեղ՝ Փարիզում։

Քանի որ խոսքս Անտանտի մեծ խաբեբայությունների մասին է, մի քանի խոսք ասեմ Անտանտի անդամների մեկի՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնի մասին։ Իմ նկարագրած ժամանակում չկար ամբողջ աշխարհում նրա պես ժողովրդական, հարգված մի մարդ։ Օրվա հերոսն էր իսկապես։ Հմայել էր ամենքին իբրև նոր աշխարհավարության առաքյալ, իբրև մարդկայնության, միջազգային արդարության մարգարե։ Նա էր, որ միջամտեց եվրոպական պատերազմին, Ամերիկայի անհուն տնտեսական և զինվորական միջոցներով կենդանացրեց Ֆրանսիային և Անգլիային, ոչնչացրեց Գերմանիային։ Նրա հռչակավոր «14 կետերը», որոնց մեջ բացատրված էր, թե ինչ հիմքերի վրա պիտի կառուցվի հաշտությունը, հիացրել են բոլոր թույլ և հաղթված ազգություններին։ Ահա ռոպեի այդ «մեծ» մարդն էլ մի հատուկ հայասիրություն էր ցույց տալիս։ Ամերիկան պիտի իր խնամակալության տակ առներ Հայաստանը, և հատուկ մի խոշոր պաշտոնյա՝ գեներալ Հարբորտը, գնաց Հայաստանը ծայրեծայր տեսնելու և իր կարծիքը հայտնելու համար։ Վիլսոնի առաջարկությամբ էր նույնպես, որ Հայաստանի պաշտպանության համար Փարիզի հաշտարար կոնֆերանսի կողմից Կովկաս եկավ ամերիկյան գնդապետ Հասկելը։

Ի՞նչ իսկություն էր թաքնված այս բոլոր երևույթների մեջ։ Այն, որ յուրաքանչյուրն այդ հաղթող պետություններից աշխարհեաշխարհ էր ընկել ո՛չ թե ուրիշներին լավություն անելու, այլ իր սեփական օգուտները գտնելու համար։ Անգլիան՝ այդ «բուխգալտերը», ինչպես միշտ, Կովկաս գալով առաջին իսկ քայլերից

հաշվի առավ, թե ումից ինչ կարող է վերցնել։ Հաշիվը շատ պարզ էր. Ադրբեջանը նավթ ուներ, իսկ Հայաստանը՝ միայն որբեր ու մեռնող ժողովուրդ։ Եվ, բնականաբար, Ադրբեջանը նրա համար Հայաստանից նույնիսկ շատ լավ էր։ Այս շատ նկատելի դարձավ՝ ի մեծ զարմանս «դաշնակից» հայերի։ Նույն «բուխգալտերի» համար այս նույն թշվառ Հայաստանից լավ էր նաև Վրաստանն իր մանգանով, Բաքվից Բաթում իր ճանապարհով։ Այս էլ նկատելի դարձավ հայերի համար, և պակաս զարմանք չպատճառեց նրանց։

Բ

Քաջազնունու կառավարությունը, հազիվհազ ազատվելով թուրքական կոշմարից, պիտի ըստ երևույթին իր բոլոր ուժերը կենտրոնացներ մյուս՝ ավելի ահռելի կոշմարի՝ սոված ձմեռվա դեմ կռվելու համար։ Այս նպատակով նա մի քանի քայլեր արավ, և դրանցից մեկն էր հայկական բուրժուազիայի վրա կռթնելը։ Կառավարությունը ստացավ կոալիցիոն կերպարանք. մի քանի պորտֆելներ ստացան Ժողովրդական կուսակցության անդամները։ Սակայն, սրանք էլ միանգամայն ապիկար հանդիսացան և չկարողացան ստեղծագործական փոքրիշատե նշանակալի թափ արտաբերել։ Պատճառը միայն անձնական անկարողությունը չէր։ Դաշնակցական պետությունն արդեն հինգ ամսվա գոյություն ուներ, և արդեն շատ պարզ էր, որ նա կարող էր լինել միայն վատուժ, անպտուղ, թշվառ։ Նրա կազմակերպությունն էր այդպես։ Նույնիսկ թևակոխելով «անկախության» բարձունքները՝ Դաշնակցությունը չէր կարողանում ազատագրվել իր հին մեղքից՝ ֆիդայականությունից։

Ընդհակառակը, հենց այս ֆիդայականությունն էլ նա բերում դնում էր իր կազմակերպած պետության գլուխ։ Հայաստանը, լավ թե վատ, բանակ ուներ, սպաներ և գեներալներ ուներ։ Բայց զինվորական բարձր հրամանատարությունը դաշնակցականները հանձնել էին իրենց խմբապետներին, որոնց ենթարկվում էին բանակի ողորմելի գեներալները։ Հայ-վրացական սահմանագլխում գտնվող զորքերի հրամանատարն էր խմբապետ Դրոն, որի ռազմագիտական տաղանդների հետ, դժբախտաբար, ես ծանոթություն չունեմ։ 1918-ի վերջերում շատ սուր կերպարանք ընդունեց սահմանային վեճը հայերի և վրացիների միջև Լոռիում։ Երկու կողմերն էլ մեղավոր էին. վրացիները գուցե ավելի շատ, որովհետև ռազմատենչ նացիոնալիզմը նրանց մեջ չափազանց առաջ էր գնացել շնորհիվ այն հանգամանքի, որ նրանք ամենքից շատ ունեին զենք, ռազմամթերք և պատերազմական հանդերձանքներ, որ մնացել էին ռուսներից և մասամբ էլ ձեռք բերվել հեռացած գերմանացիներից։ Սակայն վեճը շատ հեշտ կարելի էր լուծել բանակցություններով։

Դրոն այդպես չուզեց։ Պատերա՜զմ… Էլ ո՞ր օրվա համար էր ֆիդային։ Պատերազմ մի այնպիսի ժամանակ, երբ սովն էր աջ ու ձախ հնձում, մի կատարյալ ոճիր էր հանդեպ այդ մեռնող ժողովրդի։ Եվ նրան ոչ ոք չէր ուզում։ Չէր ուզում հենց ինքը՝ դաշնակցական կառավարությունը, որ արգելել էր Դրոյին անցնել սահմանը։ Մի

քանի օրվա ձգձգումներից հետո Դրոն, պատճառ բերելով, որ վրացական զորքերը վրդովեցուցիչ բռնություններ են կատարում Լոռու մի քանի հայաբնակ գյուղերում, թույլտվություն խնդրեց պատերազմական գործողություններ սկսելու։ Այդ թույլտվությունը նրան չտրվեց։ Այն ժամանակ նա հեռագրեց՝ թեև չեք թույլատրում, բայց ես անցնում եմ սահմանը։ Դաշնակցական կառավարությունն ի՞նչ կարող էր անել իր ամենակարող խմբապետին, եթե ոչ հնազանդվել նրան, իսկ Ժողովրդական կուսակցության անդամներն էլ համակերպվեցին այդ հնազանդությանը՝ իրենց ողորմելի պորտֆելները պահպանելու համար…

Եվ այսպես պայթեց հայ-վրացական պատերազմը։ Եթե երբևիցե հայ պատմագրությունը պիտի հավաքի, դասավորի և արձանագրի այն բոլոր թշվառությունները, որոնք թափվեցին կովկասահայ ժողովրդի գլխին 1918-ի ապրիլից սկսած, ուսումնասիրողը շատ պիտի ապշի՝ տեսնելով այդ սարսափների ծովի վերջում այս ոճրագործությունը՝ մի պատերազմ, անհասկանալի, ամոթաբեր ու վայրենի բոլոր տեսակետներից, բացի հախուռն և սանձակտուր ֆիդայականությունից… Անգլիական հրամանատարությունն իհարկե կարող էր հենց առաջին րոպեից կանգնել կռվողների մեջտեղը և թույլ չտալ, որ արյունահեղություն լինի։ Բայց չարավ այս, որովհետև այսպիսի մի քայլ կհակասեր անգլիական ավանդական քաղաքականությանը։ Թշնամություն հայերի և վրացիների մեջ, այդ, ընդհակառակը, լավ էր։ Աշխարհի բոլոր կողմերում անգլիական տիրապետությունը հաստատված է «Բաժանեա զի տիրեսցես» սկզբունքի վրա։ Իրար բզկտող կողմեր, և ինքը մեջտեղ՝ իբրև իրավարար և հաշտեցնող. այս դերի մեջ էր նա առաջին անգամ իրեն ցույց տալիս՝ Անդրկովկասը իր զորքերով գրավելուց հետո…

Պատերազմը կարճ տևեց։ Դրոն, ապստամբեցնելով Վրաստանի հպատակ հայությունը, առաջացավ Շուլավերից էլ դեպի հյուսիս, բայց ետ քշվեց այդ տեղից մինչև Սադախլո։ Աննկարագրելի է այն կատաղությունը, որ պոռթկաց հայերի դեմ Վրաստանում ամենուրեք։ Հիմա էլ վրացական զորքն էր, ադրբեջանականի նման, իր երգերի մեջ թշնամի հայտարարում հայերին։ Ամեն տեղից մարտական խմբեր էին գնում կռվելու այս նոր թշնամու դեմ։ Եվ այդ այն ժամանակ, երբ Երևանի փողոցներում հարյուրներով էին թափվում բծավոր տիֆից ջարդվող մարդկանց դիակները։ Խե՜ղճ ժողովուրդ, զոհ էր սեփական տան անկարգության…

Ես չգիտեմ և երբեք էլ չեմ հետաքրքրվել իմանալու, թե ինչ երևելի քաջագործություններ էին ցույց տալիս հայերը կամ վրացիները այդ տխուր պատերազմի դաշտում։ Բայց որ մենշևիկները անհնարին չափերի հասցրին իրենց ազգամոլական «քաջագործությունները» Թիֆլիսի փողոցներում անմեղ հայերի վրա գործադրված բռնություններով՝ այդ մի ամբողջ պատմություն է, վշտալի ու վայրենի, որ ցույց էր տալիս, թե ինչերի է ընդունակ կույր ազգային կատաղությունը։ Ինձ հարկ չկա զբաղվելու այդ մենշևիկյան սարսափների նկարագրությամբ. վաղամեռիկ Արշակ Զոհրաբյանն արել է այդ իր հռչակավոր բաց նամակի մեջ, որ տպվեց Թիֆլիսի բոլոր

լրագրերում և ուղղված էր Վրաստանի դեմոկրատիկ հանրապետության նախագահ մարքսիստ Նոյ Ժորդանիային։ Խե՛ղճ մարդ։ Իր համարձակ և արդար խոսքի զոհը դարձավ։ Նրան վռնդեցին Վրաստանից. նա գնաց Հայաստան և մեռավ բծավոր տիֆից։

Անգլիական հրամանատարությունը մատը մատին չխփեց մենշևիկյան սարսափները արգելելու համար՝ հարգելով Վրաստանի «անկախությունը»։

Բայց, վերջապես, դադարեցրին այս կոշմարային պատերազմը։ Դրոն գնաց հանգչելու պարտության դափնիների վրա, Թիֆլիսում հաշտության բանակցություններ սկսվեցին՝ Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների մասնակցությամբ։ Վիճելի սահմանների հարցը պարզ ու որոշ կերպով չլուծվեց։ Ստեղծվեց երկու երկրների հարաբերություններն ավելի ևս դժվարացնող, ավելի ևս բարդացնող մի դրություն։ Այդ Լոռու չեզոք գոտին էր, որ դառնում էր միջազգային շանտաժի և սպեկուլյացիայի մի օջախ՝ ծանր պայմաններ ստեղծելով տեղացի աշխատավոր ժողովրդի համար։ Հայերն առաջարկում էին վեճը լուծել ազգագրական սկզբունքով, այսինքն՝ ազգաբնակչության ընդհանուր ձայնատվությամբ, դրեցին նաև Ախալքալաքի գավառի հարցը։ Բայց դաշնակիցների ներկայացուցիչները մերժեցին այդ առաջարկը և պաշտպանեցին վրացական ծրագիրը՝ չեզոք գոտիների և խառը վարչությունների մասին։

Ինչևէ։ Եղածն էլ մեծ բան էր։ 1919-ի ձմռանը բծավոր տիֆի թագավորությունն էր, և առհասարակ շատ ծանր էր թե՛ Ռուսաստանի և թե՛ Կովկասի համար։ Բայց այն առավելապես դաժան ու անգութ էր Հայաստանում՝ հիմնավորված սովի պայմաններում։ Երևանի փողոցները զարհուրելի տեսարաններ էին ներկայացնում։ Փախստականները թափված էին բաց երկնքի տակ և ջարդվում էին անխնա։ Դռների առջև ամեն րոպե լսվում էր օրհասական ճիչը՝ «Հա՛ց»։ Մերկ ու անոթի ամբոխը հափշտակում էր սատկած ձիերի և շների դիակները։ Տիֆը, վարակի օջախներ դարձնելով փողոցները, մտնում էր և կուշտերի տներն ու հնձում էր աջ ու ձախ։ Կարծես այդ թշվառ ժողովրդի վերջն էր եկել։ Եվ իսկապես նրանից գրեթե ոչինչ չէր ազատվի, եթե այդ ահռելի ժամանակներին օգնության չհասներ Հյուսիսային Ամերիկան։ Մասնավոր բարեսիրական նախաձեռնությամբ մեծ քանակությամբ շորեր, ուտելիք և հաց հավաքելով՝ բերին Երևան և սկսեցին կերակրել սովամահ ազգաբնակչությունը։ Դաշնակցական կառավարությունը, որ ոչինչ չէր արել և չէր կարող անել ժողովրդի համար, այսպիսով փրկված էր։ Ժողովուրդը թե՛ այդ հեռավոր օգնությամբ և թե՛ իր սեփական ջանքերով սկսեց դանդաղորեն դուրս գալ մահվան գրկից, փոքր առ փոքր կազդուրվել։

Հեղափոխության սկզբից Թիֆլիսում կազմակերպվել էին մի շարք հայրենակցական միություններ, որոնցից մի քանիսին վիճակվում էր խաղալ քաղաքական դեր։ Այդպիսիներից մեկն էր Ղարաբաղի և Զանգեզուրի հայերի

հայրենակցական միությունը, որ կազմակերպվել էր 1918-ի սկզբին, և որի վարչության նախագահ ընտրվել էի ես։ Մենք աշխատում էինք կապ հաստատել այդ երկու լեռնային գավառների հետ, որոնք բոլորովին կտրված էին աշխարհից և իրենց ճակատագրին թողնված։ Շուշիի տեղային ռուս զորաբաժինը երբ զինված գնալիս է եղել Եվլախ կայարանը՝ Ռուսաստան վերադարձող ռուս զորքերին միանալու համար, թուրքերը ճանապարհին շրջապատել էին նրան և զինաթափ արել։ Այսպիսով թուրքերը զենքի կողմից գերազանցող դիրք էին բռնել հայերի վերաբերմամբ, որոնց ինքնապաշտպանական միջոցները շատ թույլ էին։ Այս դրությունը միտք էր ծնեցնում զինվորական ծառայության մեջ եղած հայերից Ղարաբաղում կազմել մի գունդ և նրան հանձնել հայկական Ղարաբաղի պաշտպանությունը։ Պետք էր միայն Թիֆլիսի պահեստներից զենք ու ռազմամթերք ուղարկել Շուշի։

Այսպիսի վճիռ արդեն կայացրած է եղել Անդրկովկասի կոմիսարիատը, բայց որովհետև Գանձակի և Եվլախի ճանապարհները կտրված էին, որոշումը մնացել էր անկատար։ Մեր հայրենակցական միությունը հանձն առավ կազմակերպել այդ գործն այնպես, որ զենքն ու պատերազմական ծանրոցները Շուշի փոխադրվեն Նոր Բայազետի գավառի վրայով, ուսկից հաղորդակցություն կա Խաչեն գավառի հետ. և այնտեղից Շուշի։ Գործը հաձնվեց զինվորականներին, բայց իրականացումն այնպես հեշտ չեղավ, ինչպես ենթադրվում էր։ Նոր Բայազետի գավառում մեր քարավանը տեղական թուրքերի հետ ընդհարում է ունենում և, չկարողանալով ուղևորվել դեպի Խաչեն, ստիպված է լինում ավելի երկար ճանապարհ բռնել՝ Դարալագյազի վրայով Զանգեզուր՝ այնտեղից էլ Շուշի գնալու համար։ Սակայն հազիվ չորս ամսվա ընթացքում քարավանը դուրս է գալիս Գորիս։ Այդտեղ էլ մնում են բոլոր զենքերն ու մթերքները և տեղական պետքերի վրա գործածվում։ Անդրանիկն այդ նյութերով է կազմակերպում Զանգեզուրի զինվորությունը։ Եվ այսպիսով ստեղծվում է անհավասար կացություն երկու լեռնային երկրների համար։ Զանգեզուրի հայությունը լավ զինվում է և ուժեղանում, իսկ Ղարաբաղի հայությունը, ընդհակառակը, մնում է շատ թույլ պաշտպանված. և այս թուլությունը հետագայում նրան շատ է վնասում։

Հազիվ վերջացնելով այդ փոխադրական խոշոր գործը, մեր հայրենակցական միությունը 1918-ի ամռանը կանգնած էր արդեն մի շատ խոշոր քաղաքական հարցի առջև, որ Ղարաբաղի և Զանգեզուրի հայության համար մահվան և կյանքի նշանակություն ունեցող հարց էր։ Այդ այն էր, թե ու՛մ պիտի պատկանեն այդ երկու գավառները։ Ադրբեջանը դրանք համարում էր, հայտնի չէ ինչու՛, իր անբաժանելի սեփականությունը։ Հայաստանը վիճում էր դրա դեմ, մինչդեռ նորակազմ պետությունների համար ամենաարդար կառուցման հիմքը պիտի լիներ ազգագրական սկզբունքը։ Մեր հայրենակցական միությունը ամեն կերպ աշխատում էր, որ հարգվի այդ սկզբունքը և որ, համենայն դեպս, երկու երկրների բախտը որոշվի ոչ թե բռնակալորեն, իշխողների իրավունքով, այլ ժողովուրդների կամքով և ցանկությամբ։

Այս պատճառով մենք պահանջեցինք Ահարոնյանի Ազգային Խորհրդից, որ նա Ղարաբաղի կամ Զանգեզուրի հարցը դրված ժամանակ խորհրդակցության հրավիրի մեր հայրենակցական միության ներկայացուցիչներին՝ իբրև իրազեկ մարդկանց։ Մեր այս պահանջը հայոց ազգի բախտի տնօրինողը դարձած Ահարոնյանը չբարեհաճեց կատարել։ Իշխանավոր էր նրա Ազգային Խորհուրդը, իսկ իշխանավորը ժողովրդի կամք չի հարցնում, այլ իր կամքն է նրան ուտեցնում։ Եվ ահա Քաջազնունին, Խատիսյանը և Պապաջանյանը, մարդիկ, որոնք ոչինչ հասկացողություն չունեին ո՛չ Ղարաբաղի, ո՛չ էլ Զանգեզուրի մասին, Բաթումի չարաղետ բանակցությունների միջոցին համաձայնություն են տալիս թուրքերին, որ Ղարաբաղը պատկանի Ադրբեջանին, իսկ Զանգեզուրը՝ Հայաստանին։ Ադրբեջանցիները չեն բավարարվել այդ առաջարկով, շարունակել են պահանջել նաև Զանգեզուրը։

Այս մի վերին աստիճանի թեթևսոլիկ վարմունք էր։ Ես հետո ճշտորեն տեղեկացա, թե ինչ նկատառումներով էին երեք իշխանավորներն այդպիսի վճիռ տվել։ Գոնե մեկի՝ Քաջազնունու, վերաբերմամբ գիտեմ, որ նա ունեցել է այսպիսի մի մտադրություն՝ լեռները տալ ադրբեջանցիներին, իսկ ժողովրդին, ինչպես առողջ և քաջ մի տարր, գաղթեցնել Հայաստանի տափարակ տեղերը, այնտեղի թույլ և ջլատված ժողովրդի հետ խառնելու և այսպիսով նրա արյունը վերակենդանացնելու համար։ Այս մասին ինձ հետ երկար խոսակցություն է ունեցել Քաջազնունու վարչապետության ժամանակ գյուղատնտես Կամսարականը, որ այն ժամանակ մի ինչ-որ խոշոր պաշտոն էր վարում հայոց կառավարության մեջ։ Ղարաբաղի հայ ժողովրդին նա նայում էր անասնաբուծական տեսակետից՝ գտնելով, որ նա շատ լավ արտադրող (производитель) կհանդիսանա Հայաստանի համար։ Ահա ինչ տեսակ պետական մարդիկ ունեինք մենք։ Քանդել մի ամբողջ երկիր, տեղահան անել մի ամբողջ ժողովուրդ՝ մի ինչ-որ հրաշքով Հայաստանի՝ ջերմախտից հյուծվող և այլասերվող ժողովրդին առողջացնելու և ուժեղացնելու համար… Չէին հասկանում այս մարդիկ միջավայրի և աշխարհագրական պայմանների նշանակությունը։

Մեր հայրենակցական միությունը նույն 1918-ի ամռանը մի հիշատակագիր ուղարկեց Կ.Պոլսի սպասվող կոնֆերանսին՝ պահանջելով, որ Ղարաբաղի հարցը լուծվի համաձայն նրա ժողովրդի ցանկության։ Սակայն թուրքական արշավանքը դեպի Բաքու՝ խլացրեց այդ հարցը։ Ես արդեն ասացի վերևում, որ Բաքվից հետո Նուրի-փաշան գրավեց Շուշին, բայց այդ տիրապետությունը Ղարաբաղում երկարատև չէր Թուրքիայի ջախջախմամբ։ Հենց որ օսմանյան զորքերը հեռացան Ղարաբաղից, տեղային կազմակերպված ինքնապաշտպանությունը վճռեց միացնել Ղարաբաղը Զանգեզուրին։ Անդրանիկը շարժում սկսեց դեպի Շուշի՝ ժողովրդական այդ ցանկությունը [կատարելով], բայց այդ ժամանակ անգլիական «բուխգալտերը» Բաքվում «Մուսավաթի» հետ արդեն սակարկություններ էր սկսել Ղարաբաղն ու Զանգեզուրը Ադրբեջանին ծախելու մասին։

Գեներալ Թոմսոնի կողմից մի քանի անգլիական սպաներ ավտոմոբիլներով գնացին արդեն Շուշի հասած Անդրանիկի մոտ և անգլիական հրամանատարության անունից առաջարկեցին նրան վերադառնալ Զանգեզուր։ Անդրանիկը, իբրև Անգլիայի վրա կույր վստահություն ունեցող, կատարեց այդ առաջարկությունը։ Այնուհետև Ղարաբաղի հայությունը սարսափով տեսավ, որ մուսավաթական զորքեր են մտցվում իր սիրտը՝ Խանքենդի (այժմ Ստեփանակերտ) ավանը։ Վճռվա՛ծ էր դժբախտ լեռնագավառի ճակատագիրը, նա պիտի զոհ գնար անգլիական չարչիության։ Եվ սկսում է հայ ժողովրդի եռանդուն պայքարն այն զզվելի բռնությունների դեմ, որոնց հեղինակներն էին Բաքվում նստած և հոգով ու մարմնով մուսավաթականներին ծախված անգլիացիները։ «Մուսավաթը» Ղարաբաղի ընդհանուր նահանգապետ նշանակեց մի քրդի՝ Սուլթանովին, որ, ի դժբախտություն հումանիտար գիտությունների, բժիշկ էր՝ համալսարանական դիպլոմով։ Հայության արյունարբու թշնամի, արնախում սուլթանիզմի ամենակույր գործակալներից մեկը, նա հայտնի էր ամենքին իբրև մի տիպ, որին չէր կարելի վստահել այդպիսի մի պաշտոն այնպիսի մի տեղում, ուր հայեր էին ապրում։

Սակայն «Մուսավաթը» գիտեր, թե ինչ է անում, իսկ անգլիական հրամանատարությունն էլ զուր չէր նրա մտերիմ, հոգեկից բարեկամը։ Ղարաբաղի հայ ժողովուրդը ծառացավ այդ բռնությունների դեմ։ Նա համագումարներ էր կազմում, իր ընտրած Ազգային Խորհրդի միջոցով եռանդուն բողոքներ էր անում՝ պահանջելով, որ Ղարաբաղի հարցը վճռվի ո՛չ թե այստեղ՝ Կովկասում, «Մուսավաթի» ուզած եղանակով, այլ ինչպես հայտարարված է՝ Փարիզում գտնվող երեք պատվիրակությունների ձեռքով։ Սուլթանովի նահանգապետությունը մերժվում էր միանգամայն և պահանջվում էր, որ անգլիական հրամանատարությունն ինքը նշանակի իր կողմից մեկին հայկական Ղարաբաղը կառավարելու համար մինչև Փարիզի կոնֆերանսի վճիռը։

Թոմսոնին հաջորդած գեներալ Շատելվորտը համառությամբ մերժում է բոլոր այդ պահանջները, Սուլթանովի գործակատարն է հանդիսանում, անձամբ գնում է Շուշի՝ համագումարին ներկա լինելու և Սուլթանովի ճանաչումը պահանջելու համար։ «Նորին բրիտանական մեծության» կառավարության համար, կարծես, այսպիսի մի դիլեմա էր ստեղծվել՝ կա՛մ մի ինչ-որ բժիշկ Սուլթանով և կա՛մ ջրհեղեղ։ Սակայն Ղարաբաղի հայությունը իմացավ պարտ ու պատշաճ կերպով գնահատել բրիտանական լակեյությունը։ Շատելվորտը մերժում ստացավ համագումարից և, քիթը տրորված վերադառնալով Բաքու, այնտեղ կանչեց Ղարաբաղի Ազգային Խորհրդի անդամներին և արգելեց նրանց վերադառնալ իրենց պաշտոնին։

Մինչ Ղարաբաղում տեղի էին ունենում այս բռնությունները, մեր հայրենակցական միությունն ամեն ջանք գործ էր դնում, որ հայոց կառավարությունն ավելի եռանդուն կերպով պաշտպանի Ղարաբաղի հայության իրավունքները։ Բայց ոչ

մի հաջողություն չէինք գտնում։ Արտաքին գործերի մինիստրն այն ժամանակ Սիրական Տիգրանյանն էր, որ որքան լավ ուսուցիչ, այնքան վատ դիվանագետ էր։

Դաշնակցական կառավարության հոգեբանությունը հասկանալու համար պետք է նկատի առնել այն հանգամանքը, որ նա այդ միջոցին տարված էր անգլիական քաղաքականության մի խարդախ խաղով։ Կտրելով Հայաստանից Ղարաբաղի և Զանգեզուրի նման հայաշատ գավառները՝ խորամանկ Ալբիոնը կցում էր Հայաստանին երկու գավառ, ուր հայությունը շատ աննշան փոքրամասնություն էր կազմում, այն է՝ Նախիջևան և Արդահան, [ինչպես նաև] մի գավառ՝ Կարսի շրջանը, որի արևելյան մասը հայաբնակ էր, իսկ արևմտյանը՝ թուրքաբնակ։ Այսպիսով օրինականացվում էր մի անիծյալ կացություն՝ ազգայնական ճնշումներ, որոնք պիտի ոտքի կանգնեցնեին հայերին թուրքերի դեմ՝ Ղարաբաղում և Զանգեզուրում, և թուրքերին հայերի դեմ՝ Նախիջևանում, Կարսի շրջանի մի մասում և Արդահանում։ Եվ իսկապես, այս ազգամիջյան թշնամությունն էր, որ Ադրբեջանի և Հայաստանի թուլացման, ապա և կործանման պատճառ դարձավ։

Բայց ո՞վ պիտի նկատեր այս վտանգը վաղօրոք՝ Ադրբեջա՞նը, որ զինված էր «Բիր, իքի՝ Կավկազ բիզիմքի» կանչողներով, թե՞ Հայաստանը, որ նույնպես հավատում էր, թե կարելի է սվինների վրա նստել Նախիջևանում, Արդահանում, Օլթիում… Ստանալով անգլիացիների ձեռքից Կարսի նման հռչակավոր բերդն իր 500 թնդանոթներով՝ կարելի՞ էր սակարկություններ անել մի ինչ-որ Ղարաբաղի համար։ Եվ չէ՞ որ այսքանով չէին սահմանափակվում հայկական ձեռքբերումները։ Հապա Թուրքահայաստա՞նը։ Հրեն, հայկական պատվիրակությունը Փարիզ հասնելով՝ ներկայացրել էր կոնֆերանսին իր հողային պահանջների աշխարհագրական գծագրությունը՝ մի քարտեզ, որի վրա մի ահագին, երբեք գոյություն չունեցած Հայաստան [էր]՝ ծովից ծով։

Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուբարը չէին բարեհաճել Փոքր Ասիայում օսմանյան պետությանը տալ այնքան հող, որքան հարկավոր է, որ մի ժողովուրդ մի կտոր շունչ քաշի։ Ինչու՞ ենք զարմանում, որ Հայաստանն առանց երկար ու բարակ մտածելու վերցնում էր անգլիացիներից մի թուրքաբնակ Նախիջևան կամ Արդահան։ Վաղը նա Փարիզի կոնֆերանսից պիտի ստանար մի երկիր՝ Սալմաստից սկսած մինչև Կիլիկիայի արևմտյան սահմանը։ Ինչի՞ վրա պիտի հենվեր դաշնակցական Հայաստանն այդ անհուն տարածության վրա, քանի՞ հայ էր մնացել նրա ձեռքի տակ 1915-ի առնվազն 800 հազար հոգի կորցնելուց հետո։ Ո՞վ էր հարցնում։ Միայն տվե՛ք, այդ բոլոր տարածությունները, այդ բոլոր վիլայեթները տվե՛ք մեզ։

Այս արդեն «Բիր, իքի՝ Կավկազ բիզիմքի» չէր, այլ ավելի մեծ հիմարական բանդագուշանք…

Իսկ Ղարաբաղի հարցը գնալով ավելի ու ավելի սուր կերպարանք էր ստանում։

Գեներալ Շատելվորտը մեկ էլ իր անպարագրելի մեծությունը խոնարհեցրեց ի սեր մուսավաթականների և գնաց այս անգամ Զանգեզուր՝ նորից անձամբ պահանջելու հայերից, որ նրանք հպատակվեն Ադրբեջանին և ներս թողնեն թուրք քոչվորներին։ Մինչև այդ, անգլիական պատվերին ականջ կախելով, գեներալ Անդրանիկը լքել էր իրեն անկեղծաբար անձնատուր եղած լեռնցի ժողովրդին և իր զորքի հետ հեռացել էր Զանգեզուրից դեպի Երևան։ Շատելվորտը Գորիսում գտավ մի ընդունելություն, որ ցույց էր տալիս, թե նույնիսկ աշխարհից կտրված այս լեռնաստանում էլ հասկացել են, թե ինչ են անգլիացիները, և արդեն զզվում են նրանցից։ Այս զգացմունքը ծնվում էր ամեն տեղ ինքնաբերաբար, իրերի ըմբռնման շատ հասարակ միջոցով։ Անգլիացիներն Անդրկովկասում [իրենց] պահում էին այնպես, ինչպես սովոր էին պահել իրենց Աֆրիկայի կամ Պոլինեզիայի գաղութներում, տեղացի վայրենի ցեղերի մեջ։

Այստեղ, մեզանում էլ նրանք ամենքը՝ գեներալ, սպա թե հասարակ զինվոր, իրենց նկատում էին իբրև բարձր էակներ, իսկ տեղացիներին նայում էին իբրև մի ստոր մարդկային ցեղի վրա։ Թիֆլիսի փողոցներում անգլիական զինվորները՝ հղփացած, քաղցրավենիքներով և մուրաբաներով կերակրվողներ, պահում էին իրենց այնպես լիրբ և ամբարտավան, որ կանայք իրենց ապահովված չէին զգում նույնիսկ Գոլովինսկի պրոսպեկտի վրա, թատրոնների առջև։ Ոչ միայն այստեղ՝ Վրաստանի մայրաքաղաքում, այլև գյուղերում անգամ նկատելի էին, թե ինչ ահագին տարբերություն կար այս հղփացածների և գերմանական զինվորների միջև, որոնք կարգապահության մեջ օրինավոր դաստիարակված մարդիկ էին։ Ահա բարձ[ր]բարև և գոռոզ անգլիացու այս արհամարհական վերաբերմունքը դեպի ամեն մի ոչ անգլիացի՝ շատ զզվելի տպավորություն էր թողնում կովկասցու վրա, որ սովոր չէր և ոչ իսկ ցարական ռեժիմի ժամանակ այսօրինակ վերաբերմունքի։ Շատելվորտը Զանգեզուրի գյուղացիներից լսեց մեղմ, բայց ամուր բացասություններ, այնպես որ՝ կորցնելով հույսը, թե մի բան կարող է այնտեղ հաջողեցնել, ձեռնունայն վերադարձավ՝ հանելով Զանգեզուրից անգլիական փոքրիկ զորամասը։

Այնուհետև նա գազանորեն իր ամբողջ մաղձը թափեց խեղճ Շուշիի վրա։ Հեռացրեց Ազգային Խորհրդի անդամներին և Սուլթանովին պատվիրեց զոռով տիրանալ իր նահանգապետությանը։ Շուշիի մեջ սկսվեց վերջին ժամանակները սովորական դարձած երևույթը՝ հրացանաձգությունը թուրք և հայ թաղերի միջև։ Հայերը շտապեցին մտնել իրենց դիրքերի մեջ պաշտպանվելու համար։ Բայց եկան անգլո-հնդիկ զորքերը, հանեցին հայերին դիրքերից և տարան նրանց քաղաքից դուրս։ Հայերն այսպիսով մնացին անպաշտպան՝ թուրքերի կամայականությանը մատնված։ Երեկոյան թուրքերի թաղից հայերի դեմ սկսվեց սոսկալի հրացանաձգություն։ Միևնույն ժամանակ բժիշկ Սուլթանովը, ինչպես վայել էր թուրք բեկին, իր քրդական գյուղերից հավաքած վայրենի ձիավորներին ուղարկեց Շուշիի հյուսիսային կողմում գտնվող ձորը, ուր այրեցին և կոտորեցին հինգ հայ գյուղեր։ Շուշիի հյուսիսակողմի ժայռերի գլխից բացվում էր սարսափելի տեսարան. հրդեհների լուսավորության մեջ

Սուլթանովի «քաջերը» մորթում էին, հոշոտում, կանանց բռնաբարում, աղջիկներ փախցնում։ Սարսափահար բազմության մեջ կային և անգլիական սպաներ, որոնք հանգիստ մտիկ էին անում այդ սարսափներին։ Եվ երբ նրանց դիմում էին հայերը, աղաչում էին օգնել իրենց, դադարեցնել դժոխքը, նրանք անմեղ գառների նման ձեռքերը դես ու դեն էին տարածում և ասում. «Ի՞նչ կարող ենք անել»։ Ո՞վ է ասում, թե անգլիացիները չեն կոտորել տվել հայ ժողովրդին։ Ո՛վ այսպիսի բան ասում է, նա սուտ է ասում…

Մի կողմից կատաղի և անընդհատ հրացանաձգությունը թուրքական թաղից, մյուս կողմից՝ Կարկաժան, Ղայբալի և այլ գյուղերի կոտորածն այն աստիճան մեծացրեց տագնապը և խուճապն անզեն ու անպաշտպան մնացած հայկական թաղում, որ կեսգիշերին հավաքվեցին մարդիկ ու գնացին Սուլթանովի ոտքը, հնազանդվեցին նրան… Մյուս օրը հնդիկ զորքերը, չորս կողմից շրջապատելով ադրբեջանական մի զորաբաժին, տարան նրան հայոց թաղի միջոցով և բնակեցրին քաղաքի վրա տիրող զորանոցում։ Ամեն ինչ վերջացած էր։ Շուշիի ընդհանուր կոտորածը նախորոշված էր և հենց այս պատճառով էլ դառնում էր անգլիական գործ։ Ճշմարտությունը չի մեռնում։ Շուշիի անգլիական զորքերի մեջ մի հատ ազնիվ և ճշմարտասեր սպա գտնվեց, որ պաշտոնական հայտարարությամբ պարզեց ամբողջ ճշմարտությունը բարձր հրամանատարության առջև։ Այդ մերկացումը տպվեց «Кавказское слово»–ի մեջ, բայց սպային իսկույն հեռացրին…

Անգլիական այս արյունոտ բռնությունը սոսկումի և զայրույթի պոռթկումներ առաջացրեց նախ Երևանում, բայց ուղղված ոչ թե բուն հեղինակների դեմ, այլ թուրքերի դեմ, որոնք լոկ գործիք էին եղել նրանց ձեռքին։ Դժգոհել Անգլիայի դեմ ո՞վ կհամարձակվեր։ Ընդհակառակը, համակրական ցույցեր եղան անգլիական ներկայացուցչի տան առաջ։ Եվ այս, ի՛նչ ասել կուզի, ապացույց էր, որ դաշնակցական Հայաստանը «անկախ» պետություն էր։

Քանի՛ տասնյակ տարիների ընթացքում հայ ժողովրդի խոնարհ, ծնկաչոք աղերսանքներն էին ուղղված Անգլիային։ Քանի՛ սերունդներ մեռել էին հավատալով, թե կգան նրանք՝ անգլիացիները, և կազատեն մեզ։ Եվ ահա, եկան նրանք, իրենց ոտքով եկան այնպիսի մի ժամանակ, երբ նրանք իրենք էին մեզ իրենց դաշնակից անվանում, երբ Սիբիրյի դաշտերը դեռ չէին ծծել նրանց հրամանատարության տակ կռված հայերի արյունը… Եկան նրանք, և մենք տեսանք նրանց, շոշափեցինք ու լցվեցինք դեպի նրանց միմիայն զզվանքի ու անեծքի զգացմունքով։ Բժիշկ Սուլթանովը, Կարկաժանի, Ղայբալիի հարյուրավոր նահատակները և պղծված կույսերը միայն զզվանք և անեծք էին դնում ղարաբաղցի հայի սրտում դեպի այդ եկվոր «բուխգալտերները»։

Ղարաբաղի կոտորածի մասին մենք հեռագիր ուղարկեցինք նաև Փարիզ, բայց ոչ թե Ահարոնյանի պատվիրակությանը, քանի որ գիտեինք նրա աշկարա

անբայրացակամությունը Ղարաբաղի հարցի վերաբերմամբ, այլ Պողոս Նուբարի պատվիրակությանը։ Բայց որովհետև այս երկու պատվիրակությունները շուն ու կատվի դրության մեջ էին գտնվում իրար հանդեպ, Ահարոնյանը, որ ուզում էր «ազգային գործերի» մենաշնորհն իր ձեռքում պահել ի փառս Դաշնակցության, գրեթե բարկանում է մեզ վրա և գրում է Հայաստանի կառավարությանը, որ մեզ արգելվի դիմումներ անել ուրիշ որևէ մեկին, բացի իրենից։ Ղարաբաղի հայն ի՛նչ ցավերով էր տանջվում, իսկ այնտեղ՝ Սենայի ափին մեր դիպլոմատ կոչվածներն ինչո՛վ էին զբաղված։ Ինձ, սակայն, ավելորդ է այստեղ պրպտել այդ հիվանդոտ ու թշվառ երևույթը՝ Ահարոնյան - Պողոսնուբարյան փառամոլական գոտեմարտը, որ զզվեցնում էր նույնիսկ եվրոպական «հայասեր» դիպլոմատներին։ Այս գործն արդեն կատարել է Խորհրդային Հայաստանի կառավարությունը՝ հրատարակելով 1922-ին Ահարոնյանի նամակները՝ Ալ. Մարտունու կարևոր առաջաբանով, որի մեջ պայծառորեն պատկերացած է Անտանտի վերաբերմունքը դեպի հայերը հենց փարիզյան բանակցությունների մեղրալուսնին։

1919-ի ամռանը մեր «դաշնակիցները» թողնում էին, ստիպված զանազան հանգամանքներից, Բաքվի նավթահորերը, որոնց այնքան կարոտ էին, թողնում էին նաև ամբողջ Անդրկովկասը։ «Գնալդ լինի, գալդ չլինի»,- այս էր միայն կարող ասել ղարաբաղցի սևազգեստ գեղջուկը հեռացողների ետևից։ Հեռանում էին նրանք այն պահին, երբ նրանց մեզ ընծայած Նախիջևանն ապստամբել էր, փախցրել դաշնակցական մի բուռ զորքերը և կոտորել հայ գյուղերի մնացորդները։ Գեներալ Շատելվորտը հուզիչ մտերմությամբ էր իր նամակի մեջ հրաժեշտ տալիս իր սիրելի մուսավաթականներին։ Եվ այդ միջոցին կրակ ու բոցերով էր գոտևորվում Հայաստանը հարավից։ Ապստամբել էր Վեդիբասարը, մտել էր խրամատների մեջ և հաղթականորեն ետ էր մղում հայոց զորքերին։ Այս դիրքային պատերազմը մի ամբողջ տարվա տևողությունը պիտի ստանար և Հայաստանի թշվառությունը դառնար։

Միևնույն ժամանակ քրդերը Մասիսի կողմից, օսմանցիների հետ միասին, հարձակվում էին Իգդիրի, Կողբի և այլ գյուղերի վրա։ Առանց կռվի գրեթե օր չէր անցնում։ Եվ Շատելվորտը Բաքվի իր թուրք բարեկամների հետ խոսելիս գովում էր նրանց քաջությունը և հաջողություն էր ցանկանում նրանց։ Ասում էին, թե անգլիացիներն իրենք են բռնկեցրել Նախիջևանի և Վեդիի ապստամբությունները, որպեսզի Պարսկաստանի առևտուրը, ճանապարհ չգտնելով դեպի հյուսիս, ուղղվի ամբողջովին դեպի հարավ։ Իսկ տագնապի մատնված դաշնակցական կառավարությունը հավար է կանչում Ահարոնյանին. և սա, մշտապես հավատարիմ իր ռոմանտիկ հոգուն, գնում էր հարյուր ու մի դուռ ծեծելու, որ… հասկանու՞մ եք… անգլիական զորքերը դեռ մնան Կովկասում հայերին պաշտպանելու համար։ «Ո՛վ սուրբ միամտություն»,- կարելի կլիներ բացականչել, եթե ճիշտ որ սրբություն լիներ այդ միամտության մեջ…

Գ

Այս տագնապների մեջ էր, որ դաշնակցական կառավարությունը տոնում էր իր «անկախության» առաջին տարեդարձը։ Այս մեծ դեպքն անմահացնելու համար մի մեծ գործողություն էր կատարվում. անկախ Հայաստանի մեջ մտցվում էր նաև Թուրքահայաստանը, և այսպիսով նա դառնում էր ո՛չ միայն անկախ, այլև միացյալ։ Թուրքահայաստան իրապես գոյություն չուներ, բայց նրան իբրև գաղափար մարմնավորելու համար վերցվում էին 12 դաշնակցական թուրքահայեր և մտցվում էին Երևանի Պառլամենտի մեջ։ Ինքնըստինքյան այս մի երեխայական խաղ էր՝ նստել Զանգվի ձորում, շրջապատված թուրքերի, քրդերի և օսմանցիների ռազմական օղակով, և երևակայել իրեն տեր Հայաստանի՝ ծովից մինչև ծով… Բայց այս խաղն առանց գործնական նպատակի չէր խաղացվում։ Նրանով արտասահմանյան ամբողջ գաղթական հայությունը գրվում էր Դաշնակցության և մասնավորապես նրա ներկայացուցիչ Ահարոնյանի ծուխ։

Ո՛չ միայն Արաքսի ավազանում, այլև «ի սփյուռս աշխարհի», ուր որ հայություն կար, տիրող պիտի դառնար մենակ Դաշնակցությունը՝ իբրև անկախ և միացյալ Հայաստանի անձնավորում։ Ահարոնյանը գտել էր, որ իր անձը բավականաչափ բարձր չէր դրված, որպեսզի հեղինակություն և պատկառանք ներշնչի ներսում էլ, դրսում էլ, ուստի պահանջեց Երևանից, որ իրեն ընտրեն Պառլամենտի նախագահ։ Այդ պահանջը կատարվեց իսկույն։ Պառլամենտը նոր էր ընտրվել և գրեթե ամբողջովին դաշնակցական էր, միայն չորս էսէռ էր հրաշքով մտել նրա մեջ։ Ժողովրդականները թեև դաշնակցականների հետ միասին ստորագրել էին անկախ և միացյալ Հայաստանի կառավարական հայտարարումը, բայց հետո փոշմանել և դուրս էին եկել կոալիցիայից՝ չմասնակցելով նաև ընտրություններին։ Մնում էր մի խոսք, մի հավատ, մի աստվածություն՝ Դաշնակցությունը։ Ամեն ինչ նրանով և նրա համար։ Այսպիսի մտայնությամբ չէր կարող լինել իսկապես ժողովրդական լայն շինարար մի կառավարություն։ Ոչինչ խնայություն՝ երբ հարցը գալիս էր ֆիդայականության, գծուծություն և արհամարհանք՝ կուլտուրական պահանջների վերաբերմամբ։

Ես կարող եմ հենց իմ անձնական օրինակով մի գաղափար տալ ընթերցողին։ Ամենքին հայտնի է, թե ինչ դրության մեջ էին գտնվում հայ գրողները նախահեղափոխական ժամանակներում։ Մուրացիկների, կիսաքաղց աշխատողների դրություն էր այդ։ Հայ գրականության պահպանումը բարեգործություն էր համարվում, և եթե հայ բուրժուազիայի մեջ գտնվում էին անհատներ, որոնք այդպիսի բարեգործությամբ էին հագուրդ տալիս իրենց փառասիրությանը, այդ համարվում էր առանձին բախտ հայ իրականության համար։ Առանց մեկենասի ոչ մի տեսակ հրատարակություն, թեկուզ և շատ էժանագին, չէր կարող գոյություն ունենալ։ Մենք՝ գրողներս, դժբախտության բուն պատճառը համարում էինք այն, որ, չունենալով պետություն, հայ իրականությունը զրկված է պետական միջոցներով իր կուլտուրական ստացվածքների՝ գրականության, արվեստների և գիտության զարգացումն ապահովելու կարողությունից։ Հրատարակչական բարեգործությունը՝

մեկենասությունը, որքան և մեծարվեր անճար աղքատության կողմից, մնում էր մի չարիք, անխուսափելի չարիք։

Բայց ահա, մենք էլ, վերջապես, ունենք պետություն, այն էլ՝ անկախ պետություն։ Հայ գրողներս առաջին իսկ քայլից համարում էինք մեզ բոլորովին նոր դրության մեջ, համարում էինք, որ մեր ստեղծագործական աշխատանքն ապահովված կլինի պետական հոգացողությամբ։ Այնուհետև, ինչպես ասում են, էլ ի՞նչ դարդ։ Մենք սպասում էինք, որ դաշնակցական կառավարությունը իր առաջին գործերից մեկը կդարձնի հայ գրականության և արվեստի պահպանությանը։ Չէ՞ որ դրանով պիտի նա ցույց տար, թե կուլտուրական մի ժողովրդի կառավարություն է։ Բայց մեր սպասելիքները զուր անցան մինչև իսկ այն ժամանակ, երբ լուսավորության մինիստր դարձավ հայ գրականության տաղանդավոր ներկայացուցիչներից մեկը՝ Նիկոլ Աղբալյանը, որ հայ գրողների ընկերության վարչության անդամ էլ էր, ուրեմն՝ և շատ լավ տեղյակ մեր՝ գրողներիս նյութական կացության։ 1919-ի աշնանն իմ դրությունն այնքան վատացել էր, որ ես վճռեցի ծախել իմ հարուստ ու ընտիր գրադարանը՝ ապրուստի միջոց գտնելու համար։

Ծայրահեղ հուսահատությունն էր ստիպում ինձ այս քայլն անել՝ առանց մտածելու, թե ինչ պիտի անեմ այնուհետև առանց իմ գրքերի, որոնք իմ կյանքի ընկերներն ու իմ միակ մխիթարությունն էին եղել 25 տարուց ի վեր։ Ծախում էի իմ հոգու կերակուրը, բայց առնող չէի գտնում։ Կովկասյան Հայոց բարեգործական ընկերության խորհուրդն էր, որ մի ժամանակ ցանկություն ունեցավ գնելու իր գրադարանի համար՝ խրախուսվելով այն հանգամանքից, որ իր պահեստում պատերազմի ժամանակից ամբարվել էին մեծ քանակությամբ ալյուրի քսակներ, որոնց մի հատն առաջ արժեր 15-20 կոպեկ, իսկ այժմ ծախվում էր 8 ռուբլով։ Փողն առատ էր ու վաշխառուական, բայց երբ հարկավոր եղավ մի հայ գրողի վերջին կարողությունն ու հույսը ձեռք բերել, գծուծությունը ծավալ առավ լայն չափերով, և ինձ սկսեցին խեղդել. իմ առաջարկած գնի կեսն էլ չէին տալիս։ Բայց ես չխեղդվեցի։ Տոկունություն ունեցա դիմադրելու իմ վաշխառու-բարեգործ գնորդների ախորժակին։

1920 թվականի սկզբին նյութական դրությունս հուսահատեցնելու չափ վատացավ։ Ձյուն-ձմռանը փոքրիկ աղջիկս դպրոց էր գնում գրեթե ոտաբոբիկ։ Ես ընդհատեցի «Հայոց պատմությունը», մի կողմ շպրտեցի պատմական աղբյուրները, որոնց ուսումնասիրությանն էի նվիրված՝ մոռացության տալով ամբողջ աշխարհը, և դուրս գնացի [աշխատանքի] մի որևէ տեղ գտնելու համար։ Բայց տեսա, որ առանց որևէ կուսակցության անդամ լինելու՝ չի կարելի, ինչպես ասում են, երթ ցույց տալ որևէ տեղ։ Այդ միջոցին Հայ ժողովրդական կուսակցությունը ձեռք էր բերել հինավուրց «Մշակ» լրագիրը։ Ես դարձա Ժողովրդական կուսակցության անդամ և դրա հետ միասին ստացա «Մշակ» լրագրի խմբագրի պաշտոնը։

Կուսակցական կյանքի բոլորովին սովոր չէի 15-20 տարիներից ի վեր։ Բայց պետք է արդար լինել. եթե ես սովոր չէի, Ժողովրդական կուսակցությունն էլ, որի մեջ մտել էի, կուսակցություն չէր, այլ պատահական, իրար հետ ոչնչով չկապված մարդկանց մի խմբակ։ Առաջին ընդհանուր ժողովը, որին ես մասնակցում էի, բաղկացած էր 40-42 հոգուց։ Եվ այս թիվը գնալով նվազեց։ Թեև բուրժուական կազմակերպություն էր, բայց աղքա՛տ էր, հոչակավոր աղքատ Ղազարոսից էլ աղքատ։ Մի կերպ, գրողներով խմբագրություն կազմակերպեցինք. «Մշակի» հին աշխատակիցներին հավաքեցինք և սկսեցինք կուսակցական հրապարակախոսություն։ Դարձյալ պիտի ներողություն խնդրեմ, որ անտեղի գործածեցի «կուսակցական» անունը։ Ժողովրդական կուսակցությունը ո՛չ դպրոց ուներ, ո՛չ անցյալ, ո՛չ կազմակերպված աշխարհայացք, ո՛չ մասսա, ո՛չ գաղափարախոսություն։

Ուներ միայն մի կանոնադրություն, որ ինտելիգենտ մարդիկ կազմել էին քաղվածորեն, ինչպես ասում են՝ շտեմարան պիտանի և անպիտան գիտելեաց։ Շատ բան, իհարկե, ռուսաց Կադետական կուսակցությունից էր փոխառնված, բայց կար ե՛ւ հողերի համայնացում, ե՛ւ 8 ժամյա բանվորական օր։ Միթամ թե՝ մե՛նք ինչո՞վ ենք պակաս սոցիալիստներից։ Առաջնորդում էին այդ կանոնադրությամբ կյանք ստացած կազմակերպությունը մի քանի ինտելիգենտ մարդիկ։ Հասարակության վրա նա կարող էր ազդել միայն հրապարակախոսության միջոցով։ Բացի «Մշակից» ուներ նաև մի թերթ Երևանում՝ «Ժողովուրդ»։ Երկուսն էլ անապահով, ուղղակի մուրացկանությամբ ապրող թերթեր։ Ուստի նրանք քիչ տարածված էին և ազդել հասարակության վրա չէին կարող։

Փետրվարի կեսերն էր, երբ սկսեցինք խմբագրական աշխատանքը. և գրեթե մեկ ամիս անց ինձ վիճակվում էր իմ հայրենի քաղաքի՝ Շուշիի հայության կոտորածի գույժը հաղորդելու դժբախտությունը։ Անգլիացիների գնալուց հետո իր ճակատագրին թողնված Ղարաբաղի դրությունը շարունակ դեպի վատն էր գնում։ Շուշին, ինչպես տեսանք, հնազանդվեց Սուլթանովին։ Նրա օրինակին հետևեց, վերջ ի վերջո, նաև գավառը։ Ժողովուրդը հոգնել էր մենակ պայքարելուց և, եթե շարունակեր իր դիմադրությունը, պիտի զենք վերցներ՝ պատերազմելու համար Սուլթանովի դեմ մի այնպիսի ժամանակ, երբ իր արտերը հասել էին և կարող էին միանգամայն փչանալ կռիվներից։

Ուստի գավառն էլ իր հնազանդությունն էր հայտնում, բայց որոշ պայմաններով, որոնք մուծվում էին մի դաշնագրի մեջ և ստորագրվում երկու կողմերից։ Այս պայմանագրությունը, սակայն, խաբեության մի միջոց էր մուսավաթականների ձեռքում, և սկսեցին խախտել հենց առաջին քայլից։ Հարաբերությունները երկու ազգերի միջև լարվում էին։ Այդ լարումը սաստկացավ մանավանդ այն ժամանակ, երբ Ադրբեջանը Ղարաբաղի վրայով մեծ արշավանք սկսեց Զանգեզուրը նվաճելու համար, բայց չարաչար պարտություն կրեց

զանգեզուրցիներից և ամոթահար հետ փախավ դարձյալ Ղարաբաղի հայության միջով։ Վրեժով լցված Սուլթանովը վճռել էր չոքեցնել իր առջև Ղարաբաղի հայությանը։

Ձմռանը մեր հայրենակցական միությունը շատ հուզիչ լուրեր էր ստանում Ղարաբաղից։ Լարվածությունը ծայրահեղ աստիճանի էր հասել, և ամեն մի չնչին պատճառից կարող էր պատերազմ ծագել։ Կրակի վրա յուղ էր ածում Խատիսյանի դաշնակցական կառավարությունը։ Խրախուսվելով զանգեզուրցիների տարած հաղթությամբ՝ Դաշնակցությունը որոշել էր խլել Ադրբեջանի ձեռքից նաև Ղարաբաղը զուտ ֆիդայական եղանակով, այսինքն՝ տեղական ապստամբության միջոցով, առանց պատերազմ հայտարարելու։ Դաշնակցական գործակալները վխտում էին Ղարաբաղում, պատրաստում էին դիրքեր, խրամատներ։ Այս բանը գիտեր Սուլթանովը և, որովհետև իր ձեռքին պատանդ ուներ Շուշիի հայությանը, ուստի նրան սարսափեցնելով, պահանջում էր, որ Ղարաբաղի հայերը կտրեն ամեն մի հարաբերություն զանգեզուրցիների հետ։ Բայց Շուշիի մեջ էլ կային դաշնակցականներ, որոնք գրգռում էին ժողովրդին հակառակ ուղղությամբ՝ հավատացնելով, թե Դրոն Գորիսում պատրաստ է և իր զորքով պիտի գա Շուշին ազատելու։

Այս չարաղետ ագիտացիայի մասին մեր հայրենակցական միության հավաքած մեծ խորհրդակցության մեջ մանրամասն զեկուցում արին Ղարաբաղի էսէռական կազմակերպության ներկայացուցիչները, որոնք հատուկ այդ նպատակով եկել էին Թիֆլիս՝ բերելով իրենց հետ և մի հիշատակագիր, որի մեջ ապացուցում էին, թե Ղարաբաղը պիտի կցվի Ադրբեջանին։ Սակայն դեպքերն իրար հաջորդում էին մեծ արագությամբ։ Խատիսյանի կառավարությունը շտապում էր, զենքեր ու ռազմամթերք էր ուղարկում Զանգեզուր և զորամասեր էր կենտրոնացնում Նոր Բայազետի գավառի և Ղարաբաղի սահմանագլխին։ Սուլթանովն էլ, իհարկե, իր պատրաստություններն էր տեսնում։ Շուշիի հայությունը զգում էր, որ իրեն պիտի կոտորեն, և ամեն կերպ աշխատում էր շահել քուրդ բժշկի սիրտը։ Բայց հենց այդ միջոցին ֆիդայականությունը դուրս էր սողում իր բնից՝ մի անգամ էլ հայ ժողովրդի գլխին երկնքի պատուհաս դառնալու իր հիմար ու զզվելի տղայամտությամբ։

Կազմվում է դաշնակցական ֆիդայիների մի խումբ, կարծեմ 100 հոգուց, և գնում է միանգամից վերցնելու Շուշին էլ, Ասկերանն էլ։ Ասկերանի վրա գնացողների գլուխը լինում է հայտնի Դալի-Ղազարը, որ այնտեղ էլ սպանվում է կռվի մեջ։ Իսկ Շուշիի դահիճ հանդիսանում է դաշնակցական սևանուն Արսեն Միքայելյանը։ Ոճրագործի հանդգնությամբ լցված այս մարդը 60 հոգով մտնում է Շուշի՝ նովրուզի (պարսկական նոր տարվա) օրը՝ մարտի 30-ին, երբ թուրքերն իրենց տոնով էին զբաղված։ Գիշերը մի ինչ-որ տան արբեցությամբ անցկացնելով՝ առավոտյան գնում են զորանոցը վերցնելու և կրակ են բաց անում նրա դեմ։ Թուրք զինվորները դուրս են վազում, կռիվ է սկսվում և մեր քաջերը կծիկս են դնում, իրենց անպետք գլուխներն

ազատում՝ թողնելով ժողովրդին մուսավաթական ասկյարների, թուրք խուժանի և նրանց առաջնորդող երկու բժիշկների՝ Սուլթանովի և Մեհմանդարովի ձեռքին։

Այդ երկու բժիշկները, տանջվող մարդկության ծառայելու ակադեմիական ուխտ արած, հրամայում են խուժանին. «Կոտորեցե՛ք, այրեցե՛ք, կողոպտեցե՛ք, ձե՛րն են հայերի կանայք ու աղջիկները»։ Եվ դժբախտ քաղաքը լցվում է սարսափներով։ Առնվազն 7 հազար անմեղ մարդ է մորթվում։ Ոչ մի հատիկ տուն չի ազատվում բոցերից։ Հայ կանանց և աղջիկների լլկումն ու տանջանքներն անցնում են ամեն չափ ու սահման։ Մոտ 5 հազար հոգի կարողանում են փախչելով ազատվել։ Մոտ 2-3 հազար հոգի գերի են մնում Սուլթանով և Մեհմանդարով բժիշկների ձեռքը։ Գանձակի կողմից ադրբեջանական մեծ արշավանք է սկսվում, որ ճանապարհին ոչնչացնում է տասնյակներով հայ գյուղեր, և գալիս վերցնում է Դալի-Ղազարի ու նրա ընկերների գրաված Ասկերանը, իսկ Շուշի մտնելով՝ նոր կոտորած է սկսում գերիների մեջ։ Այդ գերիների թվում գտնվածներից մեկը՝ մի աղջիկ, ինձ պատմում էր իրենց քաշած օրերը, տանջանքները, թե ինչպես սպանեցին իր հորը, ինչպես մորթեցին ռեալական դպրոցի մի աշակերտի, և երբ ես սարսափած հարցրի, թե վերջն ինչպե՞ս եղավ, աղջիկը պատասխանեց. «Ռուսները եկան և մեզ ազատեցին»։ Ռուսները՝ այսինքն կարմիրբանակայինները։ Անգլիացիները կոտորել տվին, ռուսները ազատեցին։ Ա՛յս էր արձանագրվում իրականության կրծքի վրա։

Իմ դժբախտ, սրտիս սիրելի ծննդավայրը խորովվեց բոցերի մեջ, բայց իր վրա քաշեց Ադրբեջանի համարյա ամբողջ բանակը՝ ստեղծելով այսպիսով մի բարեպատեհ հանգամանք, որ հեշտացնում էր անիծապարտ մուսավաթականության անկումը և Ադրբեջանի խորհրդայնացումը։ Այս մի կատարյալ ազատություն էր Բաքվի հայության համար, որ խեղդվում էր մուսավաթական ճանկերում և շատ անգամ էր լսել, թե մայիսի 1-ին ինքը պիտի սրի քաշվի։ Ես շատ լավ հիշում եմ այն անզուսպ ցնծությունը, որ արագորեն ծավալվեց Թիֆլիսի հայերի մեջ, երբ հաստատվեց, որ Կարմիր բանակը գրավել է Բաքուն, և մուսավաթական կառավարությունը գոյություն չունի այլևս։ Ծիծաղ և ուրախություն էր նստել ամեն մեկի դեմքին։ Իրար ձեռք էին սեղմում, իրար շնորհավորում էին…

Դ

Շուշիի դժբախտության օրերին ինձ դեպք էր գալիս ընտանեկան գործերով գնալ Երևան։ Առաջին անգամն էր, որ պիտի տեսնեի մեր անկախ Հայաստանը։ Նա սկսվում էր Թիֆլիսի կայարանատնից, ուր կանգնած էր հայկական գնացքը։ Նրա մեջ կար երկրորդ կարգի մի կես վագոն, ավել բաժին չէր ընկել անկախ Հայաստանին, և մենք՝ երկրորդ կարգի տոմսակներ ունեցողներս՝ մի մեծ բազմություն, խցկվեցինք այդ անձկության մեջ, որ կարծես հնարված էր տանջանքների համար։ Կուպեների մեջ իրար վրա թափված էին լեշի պես՝ այս ինքնըստինքյան, իսկ միջանցքում իրար կպած էին կանգնած, այնպես որ՝ շարժվելու ոչ մի հնարավորություն։ Ճանապարհվեցինք։ Երկու ժամի ճանապարհ հազիվ անցած՝ կանգ ենք առնում։ Վրաստանի

սահմանագլուխն է, Սադախլո։ Մաքսատուն է, պետք է նայեն։ Իսկ դրա համար գնացքը պիտի կանգնած մնա… ամբողջ երկու ժամ։

Գալիս են նայելու։ Շարժվելու տեղ չկա, խեղդվում ենք, իսկ պաշտոնյան, վերև բարձրացած, մեկիկ-մեկիկ նայում է պայուսակները, ճանապարհորդական սնդուկները։ Վերջապես, նա գտել է, հանդիսավորությամբ դուրս է հանում գրամոֆոնի մի հատ ձայնապնակ և կանչում է իրենից ավագին, ցույց է տալիս։ Սա խորախորհուրդ նայում է ապրանքին և էլի վերադարձնում։ Կոնտրաբանդա չէ, ուրեմն… Երկու ժամը հերոսաբար անց ենք կացրել, շարժվեցինք նորից. մի կայարան անցանք՝ այսպես թե այնպես։ Երկրորդ կայարանում ենք՝ Սանահին։ Այստեղ էլ չեզոք գոտի է, հետևաբար և անպատճառ մի ժամ էլ այստեղ պիտի կանգնենք։ Այս փորձանքն էլ մի կերպ տարանք։ Հետևյալ կայարանը Քոլագերանն է՝ Հայաստանի սահմանագլուխը, մաքսատուն։ Երկու ժամ էլ այստեղ… Պիտի նայեն։ Խուլ գիշեր է, հազիվ ես դժոխային անձկության մեջ հնար գտել աչքերդ փակելու, և ահա վեր է կացնում հայ չինովնիկը.

- Անցաթուղթ…

Դժգոհում ես կիսաքուն.

- Անցաթուղթ …

Դժգոհում ես կիսաքուն.

- Տո, ի՞նչ եղավ ձեզ, տնաշեն, ավազակներ հո չե՞նք, գնում ենք մեր գործին, էլ հո առաջներն այստեղով չե՞նք անցել։

Չինովնիկը նայում է սպիտակ մազերիդ, խնայում է։

- Մի դժգոհա, հայրիկ, օրենք է…

Ու գիշերային մթության մեջ, որոնելով այդ անիծած անցաթուղթը, մտածում ես ու կամաց-կամաց խելքի գալիս. «Ա՞յս է անկախությունը … Ի՞նչ պակաս պատրիոտն եմ ես։ Հրեն, «Մշակի» մեջ քանի առաջնորդողներ եմ գրել ի պաշտպանություն անկախ և միացյալ Հայաստանի… Բայց և այնպես սրտիս խորքում զգում եմ՝ սա անկախություն չէ, սա դժբախտություն է… Հենց միայն այս երկաթուղային կախվածությունը բավական է, որ մենք լինենք իրապես և ոչ կարծյոք մի ստրուկ ժողովուրդ։ Ծովափը մերը չէ, Վրաստանինն է, վագոնները մերը չեն, մերը միայն աղքատությունն է, և չենք կարող մենք մի կտոր լաթ բերել՝ մեր մերկությունը ծածկելու, մի երկու գրիվ այլուր բերել՝ մեր քաղցած երեխայի ձայնը կտրեցնելու, առանց որ՝ ծովեզրի, երկաթուղու, վագոնի տերն իր բաժինը չվերցնի ավել-ավել»…

Անգլիացիք կարծեցին, թե մեր շորագյալցի բիձաներն այնպիսի տղամարդիկ են, որ կարող են պողպատի պատի պես կանգնել բոլշևիկների առջև ու կտրել նրանց ճանապարհը դեպի Միջագետք: Այդպես էր հավատացրել Ահարոնյանի պատվիրակությունը: Ու բերին տվին 40 հազար զինվորի հագուստ, կարծեմ զենք էլ՝ մի ընծա, որ օձի փուշ դարձավ և խրվեց Հայաստանի կոկորդում: Եվ ի՞նչ: Վրացիները մինչև որ այդ քանակության համարյա կես մասը չվերցրին, ոչինչ բաց չթողին մեզ:

Ասացե՛ք, խնդրեմ, այս ի՞նչ անկախություն է:

Մենք հասել ենք Էջմիածնի կայարան: Շարված են թնդանոթներ, զինվորները երևում են խմբերով, այս ու այն կողմ:

- Այս ի՞նչ բան է:

- Այս,- պատասխանում են,- ռազմաճակատ է, այստեղ է սկսվում Զանգիբասարը:

Քիչ էլի առաջ ենք գնում: Զանգվի կամուրջն է, մի կողմին հայ զինվոր է կանգնած, մյուս կողմին մի թուրք գյուղացի՝ հրացանը ձեռքին: Մտնում ենք թշնամի երկիր՝ Զանգիբասար: Դաշտում թուրք գյուղացիներ են աշխատում, բայց հրացաններով զինված: Ուրեմն, ամեն րոպե սպասվում է հարձակում, պաշտպանության պետք կա: Ուլուխանլու կայարանը՝ առաջինը Երևանից, թշնամու հող է, և մեր գնացքը կանգնած է այնտեղ, և ամեն րոպե մեզ կարող են շրջապատել և գերի վերցնել, եթե ավելի վատ չասենք: Վերջապես շարժվում ենք, վերջապես դուրս ենք գալիս թշնամու երկրից: Եվ այս՝ բոլորովին Երևանի տակ:

Եվ իմ մեջ նորից շարժվեց ըմբոստ միտքը, որ չնայած ոչ մի բանի՝ ասում էր. «Այս անկախություն չէ, այս դժբախտություն է»:

Հայաստանի մայրաքաղաքը դեռ հին, կեղտոտ ու կիսախարխուլ Երևանն էր: Էլի առաջվա նման երեկոները մարդիկ, իրարից բաժանվելով, պարտք էին համարում իրար նախազգուշացնել, որ մայթերով չգնան, որպեսզի ոտքերը չկոտրեն, այլ փողոցի միջով գնան: Միակ նորությունը, որ ավելացել էր Երևանի վրա, այն էր, որ կլուբի թատրոնական դահլիճն այժմ դարձել էր Պառլամենտ, ուր բեմում նախագահությունն էր տեղավորվում՝ ունենալով իր աջ և ձախ կողմերն տախտակից շինված օթյակներ օտարազգի դիվանագիտական ներկայացուցիչների համար: Սակայն, այդ շինությունը բավարար չէր համարվում Պառլամենտի համար, ուստի աշխատություններ էին սկսված ռուսների ժամանակից կիսատ մնացած գիմնազիայի նոր շինության մի մասը հարմարեցնելու համար Պառլամենտի նիստերին: Դաշնակցականները շատ պարծենում էին մանավանդ նրանով, որ համալսարան էին բացել (առանց բժշկական ֆակուլտետի) Ալեքսանդրապոլում:

Վերադարձին՝ նույն երկաթուղային հեղձամղձուկ տեսարանները։ Ղարաքիլիսայից մեր վագոնը մտան մի քանի կանայք, որոնցից երկուսը նույնիսկ վիրահպատակ էին, գնում էին Ախալցխա՝ իրենց ամուսինների մոտ։ Նրանք՝ աշխատավոր դասի մարդիկ, չէին իմացել, որ առանց հատուկ անցաթղթի չի կարելի սահման անցնել, ուստի և ոչինչ թուղթ չունեին իրենց հետ։ Նախազգուշացումներին նրանք ականջ չդրին՝ ասելով, որ միշտ այդպես գնացել-եկել են։ Եկանք Սադախլո։ Վագոններից այդ մի քանի կանանց և ուրիշ մի քանի անթուղթների դուրս բերին, ամենքին հավաքեցին կայարանի ձախ կողմին բուսած ծառերի տակ։ Քանի մեր գնացքը սահմանված երկու ժամն էր անցկացնում կանգնած դրության մեջ, խեղճ միամիտները հանդարտ էին։ Բայց ահա հնչեց երկրորդ զանգը… Անհանգստություն է ընկնում արգելքի տակ դրված խմբի մեջ։ Երրորդ զանգը… Տեսարանը փոխվում է։ Թևատարած կանայք, բարձրաձայն ողբով, սլանում են դեպի գնացքը, բայց նրանց ետ են քշում հրացանակիր զինվորները։ Գնացքը շարժվում է, նայում եմ դեպի մեզ կարկառված ձեռքերը, հուսահատական սուգ ու շիվան։ Նրանք մնացին, մենք գնացինք։ Ինչպե՜ս էր, որ այդ խեղճերը չիմացան, որ իրենք անկախ պետության մարդիկ են և չմոռացան իրենց վիշտը… Այսօր էլ, երբ դեպք է լինում անցնել Սադախլո կայարանով, ես, տեսնելով նրա կողքին բսած ծառերը, հիշում եմ այդ դեպքը մեր «անկախության» օրերից...

Երկրորդ անգամ ես Երևան գնացի ճիշտ մի ամսից հետո, իբրև մեկը Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչներից, Մայիսի 28-ի տոնին (անկախության երկրորդ տարեդարձ) մասնակցելու համար։ Այս անգամ դաշնակցական Հայաստանի մեջ տեղի էին ունեցել մեծամեծ դեպքեր։ Մայիսի 1-ին Հայաստանի բոլշևիկներն այնպիսի մեծ եռանդով էին ցույցեր արել, որ դաշնակները ակամա հետ էին քաշվել, առաջնությունը նրանց տվել։ Ապա տեղի էր ունեցել բոլշևիկյան ապստամբությունը, որ մեծ դժվարությամբ էր կարողացել ճնշել դաշնակցական կառավարությունը։ Ապստամբության հետևանքով վճռվել էր Հայաստանից հեռացնել ռուս տարրը՝ զինվորական թե ոչ զինվորական, և առաջին հերթին ազգայնացնել երկաթուղին։ Այս խոշոր խնդիրն իրագործելու համար հաղորդակցության ճանապարհների մինիստր էր նշանակվել Արշակ Ջամալյանը՝ Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, ապա մասնագետ զինվորա-պատերազմական գործերի, ապա դիպլոմատ և հայ-վրացական պատերազմի հեղինակներից մեկը։

Այժմ նա դարձել էր հաղորդակցության ճանապարհների ինժեներ և իր ձեռքն էր առել երկրի զարկերակի բախտը։ Եվ միանգամից հաստատվում էին այդ դժբախտ երկաթուղու վրա [նրանք], որոնք արժանի են անմահացման մի մեծ երգիծաբանի ձեռքով։ Երկրորդ կարգի կես վագոնն իհարկե չվերացավ, մարդկային մսերի իրար վրա դարսելու հեղձուցիչ անձկությունը մնաց ու մնաց, և դեռ ավելացան այնպիսի «գեղեցկություններ», որոնք արդեն լուրջ սպառնալիքներ էին կյանքի համար։ Մայիսյան մի ամբողջ կես գիշեր մեր գնացքը մնաց Շահալիի կամրջի վրա. մի ինչ-որ պտուտակ էր փչացել շոգեմեքենայի մեջ, և մենք մնացինք կախված անդունդների

վրա՝ մինչև որ լուսացավ, ու Ղարաքիլիսայից նոր շոգեմեքենա եկավ։ Ամենքն ասում էին, թե մենք ազատվել ենք սոսկալի աղետից։ Տանջված, անքուն, ես հանեցի մատիտս ու գրեցի մի թղթի վրա. «Երանեալ է այր, որ ոչ գնաց ի ճանապարհս մինիստր Ջամալեանի և յաթոռս վագոնից նորա ոչ նստաւ»։ Կարելի էր հեշտ կռահել այս քառսի պատճառը։ Երկու երկաթուղային հայ ծառայողներ նստած էին կողքիս և գանգատվում էին.

- Ես,- ասաց մեկը,- կայարանապետի օգնական էի, հիմա հանկարծ շինել են կայարանապետ, մինչդեռ ես շատ բան չգիտեմ, իսկ փորձված և հմուտ մարդուն՝ Նիկոլանին, հեռացրին։

Այսպես էին և մյուս պատասխանատու տեխնիկական պաշտոնները։ Մի հայ ինժեներ ինձ ասում էր, թե թերուսները կամ ուղղակի անուսները այնպիսի բարձր պաշտոններ են վարում, որ մասնագետները, նույնիսկ հայերը, փախչում են Հայաստանի երկաթուղուց։ Կարգեր էին ստեղծել՝ եզակի, աննման կարգեր, որոնց վրա քիչ էր հիանալը։ Այսպես. Երևանից գնացքը դուրս չի գնում նշանակված ժամին, թեև ամեն ինչ պատրաստ է, մինչև անգամ երկրորդ զանգն էլ՝ տրված։ Ի՞նչ է պատահել։ Սպասում են իրեն՝ մինիստրին։ Անցնում է կես ժամ, վերջապես երևում է մինիստրի ավտոմոբիլը։ Բանից դուրս է գալիս, որ ինքը՝ մինիստրը չի գնում, այլ բերել է իր ազգականներին, ճանապարհ է դնում նրանց։ Եվ գնացքը, վերջապես, շարժվում է։ Կամ մի ուրիշ դեպք։ Գնացք, նրա մեջ մի ամբողջ կուպե մաուզերիստներ։ Գնացքը մոտենում է Էջմիածնի կայարանին։ Մաուզերիստները նկատում են մի գեղեցիկ կանաչ տեղ և վճռում են այնտեղ մի բան ուտել։ Տանում են իրենց հետ գինու փոքրիկ տակառը, նստում են կանաչի վրա, սկսում են ուտել-խմել, իսկ գնացքը սպասում է, մինչև որ մարդկանց գլխի տեր մաուզերիստները կբարեհաճեն բավական համարել իրենց կերած-խմածը կանաչ դաշտում և վերադառնալ վագոն։

Իմ պատմածներն անեկդոտներ չեն։ Պատմել են ինձ այնպիսի մարդիկ, որոնք անձամբ տեսել էին այդ դեպքերը։ Եվ սրանք արդեն զվարճալի պատահականություններ չէին, այլ պետական անկման բարձրաբարբաոռ փաստեր։ Իր երկրորդ տարեդարձը դաշնակցական կառավարությունը տոնեց մեծ շքեղությամբ, բայց թե՛ այդ շքեղությունը, թե՛ այն հանգամանքը, որ բոլշևիկյան ապստամբությունը ճնշված էր, չէին թաքցնում, որ քայքայումն սկսվել է և արագորեն վարակում է պետական ամբողջ կազմը։ Նույնիսկ կողմնակի չեզոք դիտողների համար էլ պարզ էր, որ մայիսյան ապստամբության մեջ խոշոր արտահայտություն էր գտել և ժողովրդի դժգոհությունը դաշնակցականների կառավարական ռեժիմի դեմ։ Պառլամենտարեզմը, որ բուրժուական աշխատավորության գերագույն իմաստուն ձևն էր համարվում, Հայաստանի մեջ այլանդակված ու աղճատված էր։ Խատիսյանը հեռացվել էր, նրա տեղ վարչապետ էր նշանակվել Համո Օհանջանյանը, մի խեղճություն, որ միայն իր դաշնակցական ստաժով էր հեղինակավոր։

Պետությունը անդադար, օր ու գիշեր թալանվում էր։ Այն թալանում էին դաշնակցական մինիստրները, թալանում էին և Բաքվից ու այլ տեղերից դժբախտ լեշի վրա հավաքված գիշատիչները՝ զանազան տեսակի սպեկուլյանտներ և սրիկաներ՝ զանազան արդյունավոր հանձնարարություններ, կոմիսիոներություններ, մենաշնորհներ ստանալով մինիստրներից։ Հայ ինտելիգենցիան բոլորովին չէր ուզում անբաժին մնալ այդ թալանի մեջ։ Ադրբեջանը խորհրդայնանալուց հետո մազութ բաց չէր թողնում Վրաստանին և Հայաստանին, և ահա այդ ժամանակից սկսվեց այդ երկու «անկախությունների» իսկական տրագեդիան։ Վրաստանը քարածուխ ուներ, բայց վատ տեսակի, երկաթուղային շոգեմեքենաները մի քանի վերստ գնալուց հետո կանգ էին առնում՝ պահանջելով ածուխի նոր պաշար։ Իսկ Հայաստանում Ջամալյանի շոգեմեքենաները տաքացվում էին փայտով, մի բան, որ ուղղակի տանջանք էր։ Ամեն րոպե մեքենան կանգ էր առնում, ուղևորները ստիպված էին լինում ցած իջնել, փայտ դարսել հնոցի մեջ 1-2 վերստ քարշ ընկնելու համար։ Կառավարությունը վճռեց նավթ գնել Ռումինիայում և այդ նպատակով այնտեղ ուղարկեց մի մասնագետի՝ նրա ձեռքը տալով մի խոշոր գումար, կարծեմ 50 կամ 100 հազար ֆրանկ։ Սակայն գնումը տեղի չունեցավ, իսկ մասնագետ ինտելիգենտը գրպանեց իրեն տված խոշոր գումարը և գնաց ապրելու Արևմտյան Եվրոպայի խոշոր կենտրոններում։

Բոլշևիկյան ապստամբությունից հետո Հայաստանում հաստատվեց պատերազմական մինիստր Ռուբեն-փաշայի դիկտատուրան, որի եղբայրը դրանից առաջ էլ Հայաստանի ներկայացուցիչն էր խոշոր ֆինանսական ձեռնարկությունների մեջ։ Կատարելապես անհավատալի պատմություններ էին անում այդ մարդու կատարած հափշտակությունների մասին։ Սենատորական քննություն նշանակվեց, որ շեֆերի և մինիստրների մեծամեծ զեղծումներն ու յուրացումներն է բաց անում։ Եվ ահա մաուզերիստները սկսեցին սպառնական նամակներ ուղարկել քննիչներին, որ նրանք չհամարձակվեն մեղադրել իրենց ընկերին…

Այսպես շարունակել չէր կարելի։ Հայաստանում գործող ոչ դաշնակցական կազմակերպությունները՝ էսէռներ, հայ սոցիալ-դեմոկրատներ, ժողովրդականներ և ռամկավարականներ, ժողովներ կազմեցին, խոսեցին Օհանջանյանի հետ, որ համաձայնեց ունկնդրել նրանց խորհուրդներին և անել, ինչ կարող է։ Այսպիսով կազմվեց միջկուսակցական խորհրդակցություն, որ մշակեց մի հանգամանալի զեկուցում՝ դնելով նրա մեջ բոլոր նկատված պակասությունները և առաջարկելով դրանք վերացնելու միջոցները։ Բայց դաշնակցականները չափազանց գոռոզ էին իրենց ուժով և դիրքով, որպեսզի դեռ շնորհ անեին ականջ կախելու ինչ-որ կողմնակի մարդկանց խորհուրդներին։ Այդ րոպեին նրանք գտնվում էին այն մոլորության մեջ, թե իրենք տեր են մի քաջամարտիկ և ընտիր բանակի, որի վրա հենվելով՝ կարող էին անհոգ մնալ իրենց տիրապետության նկատմամբ։

Եվ իրավ, դաշնակցական գոռոզամտության թարգման էր հանդիսանում վարչապետ Օհանջանյանը՝ Մայիսի 28-ի տոնական հանդեսում հայտարարելով, թե

Հայաստանին հարկավոր չէ ոչ մի պետության մանդատ, այլ հարկավոր է միայն օգնություն։ Ես հիշում եմ, որ երբ անգլիական Համայնքների պալատում Լլոյդ Ջորջը հայտնեց, թե Անգլիան պատրաստ է տալ Հայաստանին զինվորական հրահանգիչներ, Երևանի դաշնակցական պաշտոնական օրգանը հայտնեց, թե հայկական բանակը կարոտ չէ օտար հրահանգիչների, նրա գեներալներն ու սպաները նույնպես շատ հմուտ են իրենց գործին։

Եվ 1920թ. ամառը կարծես գալիս էր այդ գոռոզությունը հաստատելու։ Դաշնակցական կառավարությունը հաղթական արշավանք սկսեց Զանգիբասարի, Բեյուկ-Վեդիի դեմ, դուրս քշեց այդ կողմերի թուրք ազգաբնակչությունը Արաքսի մյուս ափը և գրեթե տիրեց Նախիջևանին։ Հրճվանք էր տիրում ամեն տեղ, և ոչ ոք չէր նկատում, թե այդ պատերազմ չէր, այլ թալան, թե զորքը ոգևորվել է թալանով և թե այս հանգամանքը պետք էր համարել պետական կարգի փտածության և անկման մի շատ խոշոր նշան։ Այդ թալանին պատրաստվում էին վաղուց և ամենից ջերմեռանդորեն՝ սպաները։ Հանրածանոթ փաստ է, որ թղթախաղի մեջ սպաները և զինվորները խաղում էին ի հաշիվ ապագա թալանի։ Հանրածանոթ են խաղացողների ձայնարկությունները. «Зангибасар отвечает!», «Беюк-Веди отвечает!»։ Եվ երբ սկսվեց արշավանքը, ամենքը գնացին թալանի։ Հարցնում են ձիավոր սպաներին. «Куда вы?», իսկ նրանք պատասխանում են. «На талан!!»։

Խմբապետ Ռուբեն-փաշան՝ պատերազմի մինիստրը, հայդուկային ռազմագիտությանն էր հետևում՝ խրախուսելով թալանային տրամադրությունը, և չէր հասկանում, թե այդպիսով սպանում է ամբողջ բանակը։ Թղթախաղն էլ, անզուսպ մի կիրք դարձած, մյուս կողմից էր ծծում պատերազմական ոգին։ Եվ ճիշտ, հաղթական Դաշնակցությունը մեծ ավար էր բերում ավերված թուրքական երկրներից։ Ով ասես որ չէր գնացել խլելու և բերելու համար։ Մինչև անգամ Էջմիածնի վարդապետներն էլ էին այնտեղ։ Երևանի շուկայում սարերի պես դարսված էին անկողիններ, պղնձե ամաններ և այլ տեսակ բարիքներ… Բայց երբ մի ամսից հետո հարկավոր եղավ այդ «հաղթական» զինվորներին հավաքել և ուղարկել դեպի Կարս, դեպի թուրքական սահմանը, սկսվեց դասալքությունը, զինվորների փախուստը։ Թալան չկար, Զանգիբասարն ու Բեյուկ-Վեդին փչացրել էին զորքը…

Բայց դեռ բանում էր Դաշնակցության բախտը։ Նույն ամառը, օգոստոսի 10-ին ստորագրվեց Սևրի դաշնագիրը։ Ահարոնյանը նստած էր Անտանտի ամենակարող ներկայացուցիչների հետ՝ դիմացն ունենալով հաղթահարված Թուրքիայի խղճուկ ներկայացուցիչներին, որոնք միմիայն աղաչել, շնորհ խնդրել կարող էին։ Հայաստանի համար գրված էր դաշնագրի մեջ, թե նա պիտի լինի անկախ պետություն և նրա արևմտյան սահմանը պիտի որոշի նախագահ Վիլսոնը։ Ահարոնյանը ստորագրեց այդ դաշնագիրը։ Ստորագրեց նաև Թուրքիան։ Ոսկե գրիչը, որով Ահարոնյանը ստորագրել էր Սևրի դաշնագիրը, գնաց երկրպագության և հիացմունքի առարկա

դառնալու Եգիպտոսում, Ամերիկայում։ Լրագրերը տպում էին այդ գրչի, նրա գծած ստորագրության և, վերջապես, ստորագրողի նկարները։

Հայությունը, թվում էր, վերջապես հասավ իր դարավոր իղձին։ Թվում էր, թե արդարանում էր Եվրոպայի պաշտամունքը, որ այնքան նվիրական և ջերմեռանդ էր եղել տասնյակ սերունդների համար։ Արհամարհված, ոչխարների պես կոտորված հայ ժողովուրդը, վերջապես, դառնում էր օսմանյան գոռոզ ցեղի համար նախանձի առարկա։ Կարդացե՛ք Կ.Պոլսի այն ժամանակվա լրագրերը։ Ազգային սուգ էր թրքության համար։ Եվ զսպելով իրենց վիշտը՝ համեստ գանգուրավորի լեզվով թուրք լրագրերը մի տեսակ շնորհ էին խնդրում բախտավոր հայերից։ Այո՛, բախտավոր էր հայը։ Բախտը բարձրացրել էր նրան այնպիսի աստիճանների վրա, ուր երբեք չէր եղել նա։ Եվ պիտի կարողանա՞ր նա պահվել այդքան բարձրում։

Ի՞նչ էր մնում Դաշնակցությանն ուզել։ Ներսում հաղթական, դրսում հաղթական։ Մնում էր փողով էլ լինել։ Եվ ահա Դաշնակցությունը հայտարարեց 25 միլիոն դոլարի փոխառություն և իր նախկին վարչապետ Խատիսյանին ուղարկեց Եվրոպայի և Եգիպտոսի հայ գաղութներում պրոպագանդա անելու։ Հաջողությունները, մանավանդ Սևրը բավական նպաստում էին այդ պրոպագանդային. և հավաքում էին խոշոր գումարներ, որոնք, սակայն, Հայաստան չէին գալիս, հայ գյուղացուն չէին բարձրացնում իր ընկած դրությունից, այլ մթերվում և լճանում էին գլխավորապես Ահարոնյանի պատվիրակության մեջ…

Ե

Եվ հանկա՜րծ… Ի՜նչ փոթորիկ էր գալիս մի երկու-երեք հարձակումով ոչնչացնելու այդ դաշնակցական բարեբախտությունը՝ ամբողջովին, սկզբից մինչև վերջ, առանց մնացորդի…

Փոքր Ասիայի Անկարա (Էնկյուրե) քաղաքում կազմակերպվում էր մի նոր Թուրքիա։ Նրա կորիզը կազմում էր Մուստաֆա Քեմալ-փաշայի դիվիզիան, որ Կովկասում էր եղել, բայց հետո Անգլիայի հետ կնքված զինադադարի հետևանքով քաշվել էր ասիական Թուրքիա։ Այստեղ նա իր վրա էր քաշում պատերազմի ելքով անբավական տարրերին և այսպիսով հետզհետե խոշորանում էր, դառնում մի շարժում։ Այդ շարժման գաղափարական առաջնորդներն իսկապես նույն երիտթուրքերն էին, բայց որովհետև երիտթուրքերը սաստիկ վարկաբեկված էին ներսում և դրսում, ուստի նրանք դեն էին դնում իրենց կուսակցական անունները և կոչվում պարզապես միլլի։

Բայց նրանց գաղափարախոսությունը մնում էր հինը՝ սաստիկ ազգայնական։ Իր համար Մուստաֆա Քեմալի շարժումը նպատակ էր դնում վերականգնել Սևրի դաշնագրով կործանված Թուրքիան։ Այս մի շատ խոշոր նպատակ էր, որ իրագործելու համար պետք էր պատերազմել նախևառաջ Անգլիայի և Ֆրանսիայի դեմ, որոնք մի

շարք անկախություններ էին կազմել իրենց հովանավորության տակ ասիական Թուրքիայում (Արաբիա, Պաղեստին, Սիրիա, Միջագետք)։ Այդքան ուժ չուներ Անկարան, ուստի կամա-ակամա ընդունում էր այդ խոշոր անդամահատությունները հարավում։ Մնում էին երկու հարևանները՝ թույլը արևելքում (Հայաստան) և ուժեղը՝ արևմուտքում (Հունաստան), որը Սևրի դաշնագրով ստացել էր Զմյուռնիան։ Քեմալական Թուրքիան ուխտում էր երբեք չհաշտվել այդ հանգամանքի հետ և կռվել մինչև Զմյուռնիան ետ ստանալը։ Իսկ հայերի հետ կռվելու երկու տեղ կար՝ Կիլիկիայում և Էրզրումում (Կարսի ուղղությամբ)։

Կիլիկիան, ինչպես գիտենք, տրված էր Ֆրանսիային, որն այդտեղ շատ քիչ զորք ուներ և Մուստաֆա Քեմալի զորքերի հետ, որոնք նույնպես բազմաթիվ չէին այս կողմում, ունենում էր մանր ընդհարումներ՝ օգտվելով և հայերի զինակցությունից։ Իսկ հայերի զինակցությունը մի կատարյալ արկածախնդրություն էր։ Հնչակյան կուսակցությունը, որին իհարկե հանգիստ չէր տալիս Դաշնակցության խոշոր հաջողությունը, ուզում էր իր համար պետություն ստեղծել Կիլիկիայում՝ գրավվելով իհարկե այն խոստումներով, որ խաբեբայական նպատակով արել էին ֆրանսիացիները Կիլիկիա մտած առաջին պահից։ Հնչակյանները Կիլիկիայում իրենց զինվորությունն էին դուրս բերել թուրքերի դեմ և կռիվներ մղեցին ֆրանսիացիների հետ կողք կողքի. թեև շարունակ տեսնում էին նրանց դավաճանությունը և խաբեբայությունը, բայց չէին խրատվում։

1920-ի ամռանը Հնչակյան կուսակցությունը հայտարարեց Կիլիկիայի հայկական մասի անկախությունը, բայց չէր կարողանում պահել իշխանությունն իր ձեռքում և ծանր պարտություններ էր կրում, որոնցից մեկն այն էր, որ թուրքերը կոտորեցին Հաճնի հայ ազգաբնակչությունը։ Այսպիսով Կիլիկիայի հայոց հարցը գրեթե վերջացած էր։ Միևնույն ժամանակ պատերազմական գործողություններ էին տեղի ունենում նաև Անկարայի զորքերի և Զմյուռնիան գրաված թուրք զորքերի դեմ։ Եվ հայերը հույների հետ ջարդվում էին այդ պատերազմական բեմի վրա։ Այսպիսով հայերը կարող էին ոչ մի տարբերություն չդնել սուլթանական Թուրքիայի և անկարայական Թուրքիայի միջև։

1920-ի աշնան սկզբին շփումներն անկարայական Թուրքիայի և դաշնակցական Հայաստանի միջև սաստկացան։ Ինչպես տեսանք, Զամալյանի երկաթուղին վառելիքի պակասության պատճառով դատապարտվել էր անգործության։ Սա մի մեծ աղետ էր և այն դարմանելու համար հարկավոր եղավ շահագործել Օլթիի քարածխի հանքերը։ Ուղարկվեցին մասնագետներ, աշխատանքների պաշտպանության համար ավելացվեց զինվորական ուժը, բայց սա համարվեց հայ-թուրքական սահմանի խանգարում և առաջ բերեց կռիվ երկու կողմերի զորքերի միջև։ Այս կռիվը թուրքերի կողմից, անշուշտ, ավելի Սևրի դաշնագրի դեմ էր, քան Օլթիի հանքերից քարածուխ տանելու դեմ։ Ուստի Մուստաֆա-փաշայի կառավարությունը միաժամանակ Օհանջանյանի կառավարությանն առաջարկեց խաղաղ բանակցություններ սկսել մի

քանի հարցերի առիթով, որոնցից մեկն էր նաև այն թուրք ժողովրդի հարցը, որ վտարված էր Հայաստանից Զանգիբասարի և մյուս տեղերի կռիվների հետևանքով։

Դրվում էր նաև Սևրի դաշնագրի հարցը, որ պիտի քննության ենթարկվեր՝ որոշ համաձայնության գալու համար։ Սակայն Օհանջանյանն այնքան բոբիկ քաղաքագետ էր և այնքան տարված դաշնակցական գոռոզությամբ, որ չուզեց նույնիսկ իմանալ, թե ի՛նչ ասելիքներ և պայմաններ ունի թշնամին, նույնիսկ ինքը չպատասխանեց Անկարային, այլ իր քարտուղարին հանձնարարեց պատասխանել, թե հարաբերությունները Թուրքիայի և Հայաստանի մեջ կորոշվեն Սևրի դաշնագրի անթերի գործադրությամբ։ Կասկած չկա, որ եթե չլիներ այս կոպիտ վարմունքը և եթե հարկավոր համարվեր իմանալ, թե ինչ է առաջարկվում հակառակորդի կողմից, գուցե և կարելի լիներ երկուստեք զիջողությամբ ստեղծել մի կայուն կացություն։ Այդ ժամանակ անկարայական կառավարությունը հաղորդում էր Լլոյդ Ջորջին, թե ինքը պատրաստ է ճանաչել Հայաստանի անկախությունը, եթե հույները հեռացվեն Զմյուռնիայից։

Եվ այսպես թեթևամտությամբ հարցը հանձնվում էր ուղղակի զենքին։ Թուրքերը մտան Կարսի շրջան, վերցրին Սարիղամիշը և Կաղզվանը։ Պատերազմը, ըստ սովորության, առաջ բերեց հայրենասիրական ցույցեր։ Այդպիսի մի ցույց տեղի ունեցավ Երևանում՝ պատերազմական մինիստրության առաջ. Ռուբեն-փաշան դուրս գալով ասաց ժողովրդին, թե եղածը մի ոչինչ բան է և մի 5-6 օրվա մեջ թշնամին կվռնդվի Հայաստանի սահմաններից դուրս։ Մի ուրիշ շատ խոշոր ցույց էլ հոկտեմբերի սկզբին տեղի ունեցավ Թիֆլիսում։ Ահագին բազմություն հավաքվեց Վանքի բակում. ճռճռան հայրենասիրական ճառերը հաջորդեցին իրար։ Ապա բազմությունը սկսեց իր երթը. նախ գնաց և կանգնեց Հայաստանի դիվանագիտական միսիայի առաջ, ճառեր ասաց, լսեց Տիգրան Բեգզադյանի խրախուսական և հուսադրական խոսքերը։ Այստեղից բազմությունը գնաց կանգնեց պալատի առաջ, համակրական ցույց արեց ի պատիվ վրաց Հիմնադիր Ժողովի և մի շատ տաք ու համակրական ճառով ողջունվեց նույն ժողովի նախագահի կողմից, որը հայտնեց, թե վրացիները հայերի կողմն են և նրանց եղբայրական օգնություն ցույց կտան։

Ես բաց եմ թողնում ցույցի մյուս մանրամասնությունները, որոնք հետաքրքրական չեն, և կանգ եմ առնում այս մենշևիկյան հայտարարության վրա։ Այն պատճառաբանվում էր այն մտքով, թե կռվել քեմալականների դեմ՝ նշանակում է կռվել բոլշևիզմի դեմ, որովհետև պարզ է, որ [այդ] երկուսը միացած են։ Եվ ահա Հայաստանից եկավ Ռուբեն-փաշան՝ առաջարկելու, որ Հայաստանն ու Վրաստանը միացնեն իրենց ուժերը թուրքերի դեմ։ «Եթե մեզ չօգնենք,- ասել էր նա,- մենք, մենակ մնալով, ստիպված կլինենք դիմել բոլշևիկներին, նրանց բերել մեզ մոտ, և այդ ժամանակ դուք կմնաք մենակ»։ Համաձայնվել էին բանակցություններ սկսելու։ Վրաստանի պատերազմական մինիստրը գնաց Երևան, բայց այդ ժամանակ, եթե չեմ սխալվում, Տրապիզոն մեկնեց մի այլ ջոջ մենշևիկ, որ ավելի ձեռնտու պայմաններ

ընդունելով Մուստաֆա Քեմալից՝ նրա հետ դաշնագիր կապեց ընդդեմ հայերի։ Դաշնակ-մենշևիկյան դրացիության մի հուզիչ փաստ չէ՞։ Բերեմ և մի ուրիշը։ Նեղը լծված դաշնակցականները հանում են իրենց զորքերը Լոռուց և երեք ամիս ժամանակով պայման են կնքում, որ վրացական զորքերը ժամանակավորապես գրավեն այդ տեղերը։ Բայց մենշևիկները գրավելուն պես միացնում են այդ բոլոր տեղերը Վրաստանին…

Հայաստանը թեև մենակ էր, բայց ուներ մոտ 40 հազար լավ հագնված ու զինված զինվորներ։ Սակայն դրանք զինվորներ չէին, այլ թալանչիներ։ Վերին աստիճանի ապիկար, նույնիսկ հանցագործ էր հանդիսանում նաև հայ հրամանատարությունը, բարձրից սկսած մինչև ցած։ Անընդունակ մարդիկ, որոնք դիմադրություն չկարողանալով ցույց տալ Քյազիմ Կարաբեքիր-փաշայի զորքերին՝ շարունակ նահանջում էին՝ լքում մտցնելով առանց այդ էլ անկայուն թալանչիության շարքերը։ Պարզ երևում էր, որ դաշնակցական պարտությունը կատարյալ պիտի լինի։ Այդ միջոցին Թիֆլիս եկան Լոնդոնից ուղարկված երկու անգլիացիներ, որոնցից մեկն Անգլո-հայկական ընկերության քարտուղարն էր, և Անգլիայի «հայասերների» անունից հայտնեցին, որ Եվրոպայի վրա ոչ մի հույս չդնենք, քանի որ նա ոչինչ չի կարող անել մեր փրկության համար, ուստի միակ փրկությունն այժմ բոլշևիկներն են, որոնց հետ և պետք է միանալ, ապա թե ոչ՝ թուրքերը կկոտորեն մեզ բոլորիս։

Ես լավ հիշում եմ այդ փոքրիկ ժողովը Հայաստանի դիվանագիտական միսիայի շինության մեջ, Միքայել Թումանյանի սենյակում, ուր առաջին անգամ լսեցինք Եվրոպայից եկած այս պատգամը։ Ներկա էին և Դաշնակցության մի քանի ջոջեր։ Դժգոհություններ Եվրոպայի դեմ շատ լսվեցին, և մեր երկու բարեկամները հայտնեցին մեզ, որ իրենք նույնիսկ փորձ չեն անի նրան արդարացնելու, ոչ նույնիսկ անգլիական կառավարության վարքագիծը դատապարտությունից ազատելու համար։ Դրված էր իրական փաստն իր ամբողջ անողորմ պարզությամբ։ Տասնյակ տարիների մեր պաշտած ֆետիշը սկսում էր մեզ սպանել։ Ոչ ոք չեղավ ժողովի մեջ, որ հակառակվեր անգլիացի «հայասերների» մտքին։ Այդ միտքը շատ պարզ էր և առանց նրանց թելադրության։ Բացի բոլշևիկական Ռուսաստանից ուրիշ ո՛չ մի փրկություն չկար։ Բայց էլ ինչու՞ էին դանդաղում, չէ՞ որ այդ իսկ րոպեին Երևանում էր գտնվում այդ իսկ Ռուսաստանի ներկայացուցիչը։ Դեռ շատ ու շատ բան կարելի էր փրկել մեր բախտը նոր Ռուսաստանին հանձնելով։ Էլ ինչի՞ էինք սպասում։ Սա հարցրեք ղեկավարող կուսակցությունից։ Նա չէր ուզում ձեռքից բաց թողնել յուղալի իշխանությունը, և հայ ժողովուրդն այդ պատճառով պիտի նորանոր արյունոտ փոթորիկների մեջ խեղդվեր։

Մամուլի մեջ (տե՛ս «Նոր աշխարհ», թիվ 1) տպվեց մի վերին աստիճանի կարևոր փաստաթուղթ՝ մի նամակ, որ գրել է դաշնակցական ջոջերից մեկը մի ուրիշ ջոջի։ Այդտեղից շատ պարզ երևում է, որ հայ-թուրքական պատերազմի ժամանակ Խորհրդային Ռուսաստանն իր լիազոր ներկայացուցիչ Լեգրանի միջոցով չափազանց

ձեռնտու, ուղղակի փրկարար առաջարկություններ էր անում դաշնակցական Հայաստանին, որը, սակայն, ոչ մի անկեղծություն և շիտակություն չէր ցույց տալիս այդ բանակցությունների մեջ և շարունակ խուսափողի և խաբողի դիրք էր բռնած։ Եվ ամենևին չկարծեք թե այս վարքագիծն ինքնաբերաբար ծնունդ էր առել դաշնակցական ուղեղի մեջ։ Ո՛չ, հազար անգամ ո՛չ։ Երևանում գտնվում էր անգլիական գեներալ Ստոքսը։ Ահա՛ ամբողջ գաղտնիքը։ Նա՛ էր խելք սովորեցնում, նա՛ էր ներշնչումներ անում։ Ամեն ինչ բացատրող այդ նամակի հետևյալ կտորն առանձնապես բնորոշ է.

«Ահա այս պայմաններն են, որոնք մենք առաջարկեցինք Լեգրանին, միանգամայն համոզված լինելով, որ նա չի համաձայնի, և մենք մի կերպ դուրս կգանք այս ծանր բանակցությունների միջից։ Երբ գեներալ Ստոքսը ծանոթացավ այս պահանջներին, շատ բավական մնաց ու ասաց. «Եթե ինձ առաջարկեին այսպիսի պայմաններ, ես 24 ժամվա ընթացքում կհեռանայի ձեր սահմաններից և կկտրեի բանակցությունները։ Լեգրանն էլ երևի այդպես կվարվի։ Այս պայմանները շատ լավ են, սա ապացուցանում է, որ դուք համաձայնություն չեք փնտրում սովետական իշխանության հետ. առաջարկեցեք այս պայմանները և վստահ եղեք, որ մենք ամեն աջակցություն ցույց կտանք ձեզ»։

Նույն Ստոքսը հավատացնում է Երևանի երեխաներին, թե Խորհրդային Ռուսաստանն ուժ չունի, թե Ադրբեջանում պատրաստված է 20 հազար մուսավաթականների ապստամբություն, թե ինքը՝ գեներալը, կհարկադրի Վրաստանին, որ նա զինակցի Հայաստանին այս պատերազմի մեջ և այլն, և այլն։ Մի անգամ էլ իմպերիալիստական հուշկապարիկ, [որ] իր պոռնկական երգերով քնեցնում է դաշնակցական տղաներին։ Իսկ ճակատագիրը դեռ շարունակում էր խղճալ հայ ժողովրդին և դեռ փրկության դուռը չէր գոցում նրա առջև։ Հակառակ Ստոքսի բոլոր ակնկալություններին՝ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանը չի կտրում բանակցությունները, չի հեռանում հայկական սահմաններից։ Նամակագիրը շարունակում է. «Այդ միջոցին Լեգրանը ստանում է մեր պայմանները։ Նրա վերաբերմունքը մեր պայմանների վերաբերմամբ մեզ համար անսպասելի բարյացակամ դուրս եկավ»։ Եվ իրավ, կարդում եք շարունակությունը և տեսնում, որ Ռուսաստանի խոստումները չափազանց կարևոր ու խոշոր էին։ Բայց հաղթող հանդիսացավ գեներալ Ստոքսը, և փրկության դուռը պինդ փակվեց։ Համեմատեցե՛ք այժմ Անգլիայից եկած «հայասիրական» խորհուրդը, Թիֆլիսի դաշնակցական ջոջերի համաձայնությունը և Երևանի տնաբույս մաքիավելիների խաղերը…

Եվ եղավ այն, ինչը լինելու էր, ինչը չէ՛ր կարող չլինել թալանների երկրում, փտախտով բռնված պետության մեջ… Նոյեմբերի սկզբին Ռուբեն-փաշայի բանակը Շիրակի դաշտի երեսին փախչող մի հոտ էր։ Կարսը թուրքերի ձեռքն անցավ համարյա առանց մի հատ հրացան արձակելու, հանկարծորեն, ամենախայտառակ կերպով, և նրա հետ միասին գերի ընկան գեներալներ, մինիստրներ, վարդապետներ,

զինվորներ՝ ամբողջ գնդերով… Այս աղետ էր, բայց և սթափում էր ինձ համար։ Ինչ էլ պարտավորված լինեի խմբագրի պաշտոնով գրել այդ մղձավանջային օրերում, ինձ համար այլևս անհերքելի իրողություն էր, որ անկախ պետություն կազմել մենք չենք կարող, որ ապրել առանց խնամակալի, առանց հովանավորի չենք կարող։ Այս խոր համոզումը տակնուվրայություններ էր մտցնում իմ աշխարհայեցողությունների մեջ, արժեքների վերագնահատումներ էր առաջացնում, ազատում էր մոլորություններից։ Այսպիսի դաստիարակիչ նշանակություն ունեցավ Կարսի անկումը և ուրիշ շատերի համար։

Իսկ Դաշնակցությա՞ն համար։ Մի խուճապ միայն, մեկն այն սովորական խուճապներից, երբ նա, իր կաշին փրկելու համար վաճառքի էր հանում իր բոլոր սրբությունները։ Կարսի անկման հետ ընկավ և Օհանջանյանի կառավարությունը։ Հանդես եկավ իբրև վարչապետ Սիմոն Վրացյանը՝ մի ուրիշ դաշնակցական տափակություն, որ գյուղատնտեսության մինիստր էր և հռչակված էր նրանով, որ կողոպտված ու թալանված Հայաստանի գրպանից չորս միլիոն էր հանել ոսկով՝ իր քենակալ ինժեներ Զավալիշինին տալու և ոռոգման ծրագրեր պատրաստել տալու համար, մինչդեռ ինժեներ Կիրակոսյանը գոռում-բղավում էր, թե ո՛չ մի ծրագիր հարկավոր չէ, բոլոր ծրագրերը պատրաստ կան և այլն։ Ի՞նչ կարող էր անել այդ խեղճությունն ստեղծված պայմանների մեջ։ Ո՛չ ոքի հայտնի չէ, թե այդ միջոցին ի՞նչ խորհուրդներ էր տալիս գեներալ Ստոքսը, բայց հայտնի է, որ թուրքերը, Կարսը վերցնելուց հետո, եռանդուն առաջխաղացությամբ իրանց ձեռքը գցեցին Ալեքսանդրապոլից մինչև Ղարաքիլիսա։

Ձյունառատ և ցուրտ ձմեռ էր, և նորից դժբախտ հայ ժողովուրդը փախստական էր դառնում, նորից ենթարկվում էր թուրքերի մասսայական ջարդերին։ Իսկ անգլիական նոր զգեստ հագած հայ զինվորները փախչում էին գլուխ կորցրած, ամեն տեղ խուճապ տարածելով։ Երեկ գոյություն ուներ գոռոզ և հոխորտացող դաշնակցական Հայաստան, այսօր նա փոշի ու մոխիր էր դարձել, և հայ ժողովուրդը դարձյալ կանգնած էր իսպառ ոչնչացման վիհի առաջ։ Խորտակման քառսը մշտական մղձավանջ դարձնելու համար՝ հաղթող Կարաբեքիր-փաշան հրամայում էր իր առջև գետնատարած ընկած դաշնակցականներին մարդ ուղարկել Ալեքսանդրապոլ՝ հաշտություն կնքելու համար։ Ու գնացին այդ մարդիկ. Ալեքսանդր Խատիսյանը՝ իբրև նախագահ, ու երկու էլ ուրիշները, որոնցից մեկը՝ ոչ դաշնակցական։ Նրանց բոլորին թուրք փաշան փակեց Ալեքսանդրապոլի միջնաբերդում և թելադրեց ամենադաժանները այն պայմաններից, որոնք կիրառված էին Անտանտի կողմից Վերսալում Գերմանիան մորթելու համար։ Այստեղ էլ գաղափարը միևնույնն էր, բայց արտահայտվում էր փոքր չափերով։ Հայաստանը նույնպես զինաթափ էր արվում, կողոպտվում, դրվում էր այնպիսի դրության մեջ, որ պիտի միշտ բաց ու անպաշտպան մնար՝ ամբողջովին ապավինած հաղթողի բարեսրտությանը։

Այս սարսափելի պայմանները տապալում էին Վրացյանի անփառունակ կառավարությունը։ Եվ վերջին րոպեին Դաշնակցությունն էլի իր պաշտած ֆիդայականության մեջ էր փրկություն որոնում։ Օրհասի րոպեին կանչվեց նորից Դրոն և նրան հանձնվեց դիկտատորական իշխանություն։ Բայց քանի՞ գրոշ արժեր այդ իշխանությունը, երբ ոչինչ չէր մնացել պարտված երկրում, որ ուժի նմանություն ունենար։ Ալեքսանդրապոլի բանակցությունների վրա անվանի ֆիդային իհարկե որևէ ազդեցություն չարավ։ Եվ դեկտեմբերի 3-ին, գիշերվա ժամը 3-ին, Ալեքսանդրապոլի միջնաբերդում ստորագրվեց հայ-թուրքական հաշտության դաշնագիրը, որ պիտի մնա Դաշնակցության հավիտենական ամոթն ու խայտառակությունը։ Իրենք՝ դաշնակցականներն այնքան խորն էին զգում իրենց այդ գործի նողկալի տգեղությունը, որ չհամարձակվեցին հրատարակել Ալեքսանդրապոլի դաշնագիրը, և միայն ես էի, որ «Մշակի» մեջ ամբողջությամբ արտատպեցի այն՝ վերցնելով Կ.Պոլսի ռամկավարական «Ժողովրդի ձայն» թերթից։

Այդ դաշնագիրը 1918-ի Բաթումի էնվերյան ծրագրից տարբերվում էր միայն նրանով, որ Ալեքսանդրապոլը և երկաթուղին թողնում էր Հայաստանին։ Սուրմալուի ամբողջ գավառը Թուրքիային էր անցնում։ Սևրի դաշնագիրը Հայաստանին վերաբերված մասերում ոչնչացված էր հայտարարվում։ Երկրի ներքին պաշտպանության համար Հայաստանին թույլատրվում էր պահել մի զորք՝ բաղկացած 1500 հոգուց, 8 թնդանոթներով և 24 գնդացիրներով։ Մնացած բոլոր զենքերն ու ռազմամթերքները հանձնվում էին Թուրքիային։

Բայց այսքանը հերիք չէր։ Կար ավելի պժգալին։ Դաշնակցությունը ծախում էր իր ամենամեծ սրբությունը՝ իր մորը։ Երրորդ հոդվածն ասում էր. «Ինչպես որ թուրք, ռուս և բոլոր աշխարհի վիճակագրություններ և հաստատյալ ընկերային կացությունը ցույց կու տան, այս առթիվ ալ կը վավերացվի, թե Օսմանյան սահմանին մեջ հայ մեծամասնություն ունեցող որևէ հողամաս չկա»։ Այս շնական (ցինիկ) հայտարարությամբ ժխտվում էր նույնիսկ այն հարցը, որ ծնող մայր էր հանդիսացել Դաշնակցության համար։ Ինքն իր մասին Դաշնակցությունն այս հոդվածով վկայում էր, որ երեսուն տարի շարունակ սուտ է ասել, խաբել է, թե կա հայ մեծամասնություն օսմանյան սահմանների մեջ։ Հազար անգամ երջանիկ կլիներ հայ ժողովուրդը, եթե այս հայտարարությունը Դաշնակցությունն աներ գեթ այն մասսայական կոտորածներից հետո, որոնց պատրաստողն ու փութացնողը հախուռն ու սպանիչ ֆիդայական մտածողությունն էր։ Այժմ ի՜նչ օգուտ։ Նա չէր վերադարձնի միլիոնավոր կորուստների և ո՛չ մի մասը և միայն փրկում էր Դաշնակցության միանգամայն անպետք կաշին…

## Գլուխ ութերորդ։ Խորհրդայնացում

Ա

Բայց կարելի՞ էր Հայաստանն ազատել այն թոկից, որ Ալեքսանդրապոլի դաշնագիրը պատրաստել էր նրա վիզը գցելու և նրան խեղդամահ անելու համար։ Այո՛, կարելի էր, բայց դրա համար հարկավոր էր չլինել ո՛չ Վրացյան և ո՛չ էլ Խատիսյան։ Ճիշտ է՝ հայ պատվիրակությունը փակված էր Ալեքսանդրապոլի միջնաբերդում, ճիշտ է՝ թուրքերի առջև բաց էր ճանապարհը մինչև Երևան։ Բայց ճի՞շտ է և այն, որ հայ ժողովուրդն այդ միջոցին անօգնական էր միանգամայն։ Ո՛չ, այս ճիշտ չէր։

Դեռ Ալեքսանդրապոլի թշվառ բանակցությունները չէին սկսել, երբ նոյեմբերի 20-ին Հայաստանի հյուսիս-արևելյան ծայրում, Երևանի ճանապարհին և Երևանից էլ ոչ հեռու, այն է՝ Դիլիջանում, հայտարարվեց Սարգիս Կասյանի նախագահությամբ՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն։ Ահա այս հանգամանքն էր, որ ցույց էր տալիս, թե Հայաստանն անօգնական չէր։ Դիլիջանի խորհրդայնացումը մտցնում էր Հայաստանի սահմանների մեջ Ռուսաստանի զինվորական ուժը։ Դարձյալ, ուրեմն, Ռուսաստանն էր, որ գալիս էր Հայաստանի դուռը ծեծելու և իր ուժեղ օգնությունն առաջարկելու։ Հասկացող գլուխ էր պետք այդ խոշոր երևույթն ըմբռնելու և օգտագործելու համար։ Հարկավոր էր անմիջապես զարգացնել և համայնացնել Դիլիջանի խորհրդայնացումը, նրա ձեռքը տալ ամբողջ պետությունը՝ թուրքական պատերազմի հետ, և թույլ տալ, որ նոր իշխանությունն ինքը վերջացնի գործերն ու հարցերը՝ ինչպես կարող է։ Այս մի արտակարգ մտավոր կարողություն չէր պահանջում Հայաստանի կրիտիկական այդ օրերին։

Ամեն ինչ մոռանում է դաշնակցականը մի կտոր իշխանություն ձեռքում պահելու համար։ Մի 8-10 օրվա թշվառ վարչապետության համար էր, որ Վրացյանը անասելի աղետ էր բերում հայ ժողովրդի գլխին։ Իր իշխանությունը փոխանակ Կասյանին հանձնելու ու այդպես անհետանալու, նա հանձնում էր Դրոյին, որպեսզի Ալեքսանդրապոլի դաշնագրի խայտառակությունը մինչև վերջին ումպը միայն և միմիայն Դաշնակցությունը վայելի։ Եթե այդքան քառակուսի էր ինտելիգենտ դաշնակցականի գլուխը, ի՞նչ պիտի լիներ ֆիդային, որի համար գերագույն իմաստությունը մաուզեր «կայծելն» էր։ Փոխանակ Ալեքսանդրապոլի պատվիրակությանը հայտնելու, թե նրա լիազորությունները վերջացած են, քանի որ պետական ռեժիմը և իշխանությունը փոխված են Հայաստանում, նա վերջին րոպեին հրաման էր տալիս ստորագրել անառակ պայմանագիրը… Այսպես է եղել հայ ժողովրդի ճակատագիրը ֆիդայականության ձեռքում։

Բայց վերջապես, ահա նա ընկավ, ջարդ ու փշուր եղավ ու այլևս չի կանգնի։ Հայ ժողովուրդն արյուն է լացում իր պաղած երկնքի տակ։ Նա լցրել է Փամբակի լեռնադաշտերը, Լոռու խորաձորերը, բարձրացել է Սևանի բքամոլ մեջքը։ Եվ ահա հյուսիսից, ձյունները պատռելով, քաղցն ու ծարավը մոռացած ռուս զինվորն է շտապում նրան՝ այդ նորից և նորից տառապանքի մատնված ժողովրդի ծվենները պատսպարելու և պաշտպանելու համար։ Որքան թույլ էր տալիս մենշևիկյան

Վրաստանի կասկածամտությունը, որքան կարելի էր անտես անել Ժողովրդական կուսակցության ինձ շրջապատող թոնթորոցները, ես ասում էի իմ խմբագրած թերթի մեջ, թե հայ ժողովրդի փրկությունը այդ է միայն, թե ուրիշ փրկություն չկա նրա համար։ Վրաց լրագրերն արդեն խոսում էին հայկական «դավաճանության» մասին, իսկ ես պատասխանում էի, թե ամեն մի ժողովրդի սրբազան իրավունքն է պահպանել իր ֆիզիկական գոյությունն այնպես, ինչպես ի՛նքն է լավ համարում, և թե ո՛չ ոքի իրավունք չի տրված պահանջել նրանից այն, ինչ ինքը ընդունելի չի համարում իր կենսական շահերի տեսակետից։

Խորհրդային կարգն առաջին իսկ քայլից բերում էր այն նոր հանգամանքը, որ հայ ժողովուրդն այլևս մեկուսացած չէր՝ անտարբերության մատնված, կեղեքվող ու գիշատվող մի ազգագրական միավոր, այլ ձեռք էր բերում և՛ համակրանք, և՛ եղբայրական վերաբերմունք ուրիշ խորհրդային հանրապետությունների կողմից։ Այս արդեն այն մուրածո համակրանքը չէր, որ մենք հարյուր հազարավոր կոտորածների գնով ստանում էինք բուրժուական Եվրոպայից, երբ մեզ համակրում էին իբրև մի դժբախտ և թշվառացած ժողովրդի։ Այս համակրանքը բոլորովին ուրիշ էր՝ համակրանք դեպի աշխատող, կենսունակ մի ժողովուրդ, իրավահավասար և իրավատեր՝ իր բախտը դարբնելու ընդհանուր գործակցությամբ և փոխադարձ աջակցությամբ։ Ի՜նչ դյութական փոխակերպություն։ Խորհրդային Հայաստանը ջերմապես և եղբայրաբար ողջունվում էր Ադրբեջանի կողմից, այն Ադրբեջանի, որ մուսավաթական ռեժիմի տակ հայության ամենաոխերիմ, արյունարբու թշնամին էր։

Բայց խորհրդային կարգերը մենք՝ Թիֆլիսում ապրողներս, դեռ չէինք տեսել։ Նրա մասին սարսափներ էին պատմում, և ոչ միայն բերանացի, կեկելական ոճով, այլ մանավանդ լրագրերի մեջ՝ ռադիոհեռագրերի և արտասահմանյան թղթակցությունների ձևով։ Այնպես էինք մենք իմանում, որ բոլշևիկները ոչ միայն ուրիշներին են կոտորում, այլև իրար։ Քանի անգամ լրագրերը մեռցրին Լենինին։ Հիշում եմ, մի օր էլ լուր եկավ Լունաչարսկու մահվան մասին, և հանգուցյալ Գեորգի Թումանովը տպեց նրա մահախոսականը «Слово»-ի մեջ։ Այսօր, սակայն, ինքը՝ Թումանովն արդեն փտել է հողի տակ, մինչդեռ Լունաչարսկին ճանապարհորդում է Կովկասում։ Սուտն ու ճիշտը տուտ-տտի էին տվել, ո՛վ էր ջոկողն ու հասկացողը։ Սարսափներ էին պատմում, ինչ թաքցնեմ, նաև Երևանից։ «Слово»-ն, որ բավականաչափ դաշնակցականություն անող մի լրագիր էր, երկու անգամ Երևանից այնքան տխուր տեղեկություններ հաղորդեց բոլշևիկների կատարած խժդժությունների մասին, որ երկու անգամն էլ կինս արտասվելով ներս մտավ, որ իմանա, թե այս ինչ բան է, և ինչ կլինի մեր երկու աղջիկների դրությունը Երևանում։ Ես հազիվ-հազ հանգստացրի նրան ասելով, որ չպետք է հավատալ «Слово»–ին։

Բայց ահա եկավ 1921թ. փետրվարը, և մի օր լսեցինք, թե, հրես, բոլշևիկները գալիս են Թիֆլիսի վրա, և նրանց մի մասն էլ լոռեցիք են։ Վա՜հ, այս ինչ բան էր։ Ես արդեն պատմել եմ, որ հայ-թուրքական պատերազմի ժամանակ նեղն ընկած

դաշնակցականները Լոռու հայկական մասը, սկսած Քոլագերան կայարանից, երեք ամիս ժամանակով տվել էին մենշևիկներին, իսկ սրանք վերցրել և միացրել էին Վրաստանին: Այս բանը որպես թե հենց հայ ժողովրդի ցանկությամբ էր կատարվել: Վրաց կառավարության անդամները շրջում էին գյուղերում, հայերից համախոսական էին ստանում Սահմանադիր Ժողովի անունով, թե իրենք ուզում են և խնդրում են լինել Վրաստանի հպատակ: Եվ երբ Խորհրդային Հայաստանի կառավարությունը մենշևիկներից պահանջեց կատարել դաշնակցականների հետ կնքած պայմանագիրը, մենշևիկները պատասխանեցին մերժումով: Հիմա Լոռին ցույց էր տալիս, թե ինքն այնքան էլ հեշտ կլլվելի կտոր չէ: Նա ապստամբել էր և դուրս վռնդել մենշևիկյան զորքերը…

Նոր հայ-վրացական պատերազմ… ի՜նչ ոռնոց մենշևիկյան և նացիոնալիստական վրաց մամուլի մեջ: «Այս անգամ մենք հայերին չենք խնայի, պետք է լուծենք և Թիֆլիսի հարցը»: Եվ նորից Թիֆլիսի հայությունը կուչ եկավ, շունչ չէր կարողանում քաշել: Գնալով-գնալով շատանում էր այն մարդկանց թիվը, որոնք կարծում էին, թե հնարավոր է հայերի կոտորածը Թիֆլիսում: Եվ ես անձամբ հավատում էի այդ հնարավորությանը, որովհետև ազգայնական կրքերի գրգռումը հասել էր անհնարին չափերի: Սոցիալիստ մենշևիկների և շովինիստ ազգամոլների մեջ այլևս ոչ մի տարբերություն չէր մնացել հայատյացության հարցում: Երկուսն էլ շտապում էին օր առաջ [հայերին] դատարկել Թիֆլիսից: Ես այժմ էլ չեմ կարողանում պահել զզվանքս, երբ հիշում եմ, թե ինչպես մի օր ընկա միլիցիական կոմիսարի մի արբած օգնականի ճանկը և որքան հայհոյվեցի ու անարգվեցի սոսկ այն պատճառով, որ հայ էի:

Ինձ նա ձերբակալեց մի ամենաանՀանՀան պատրվակով և, տանելով «ուչաստոկ», ամենքի և նույնիսկ կոմիսարի ներկայությամբ ամեն տեսակ անարգանք ու հայհոյանք թափեց վրաս՝ ասելով, որ բոլոր հայերս դուրս գանք կորչենք այս քաղաքից, ի՞նչ ենք նստել, ինչու չենք ձեռք վերցնում իրենցից: Ի վերջո նա ինձ ծաղրել սկսեց իբրև հայ գրողի: Զարհուրելի էր: Ես շատ էի լսել ու կարդացել ոստիկանական վայրենությունների մասին, բայց այս արբած վայրենությունը եզակի էր: Նա ցույց էր տալիս, որ մենշևիկների ռեժմն էլ, հիմնված համատարած կաշառակերության, վաճառվածության ու «դերժիմորդայության» վրա, փտած էր, քայքայուն: Եվ այս բոլորն ինձ բերում էր այն համոզման, որ անհնարին չէ այս տեսակ մթնոլորտի մեջ նաև հայկական կոտորածը:

Բայց մի օր այս ջարդարար տրամադրությունը փոխվեց արմատապես: Պատերազմն արդեն եկել հասել էր Թիֆլիսին, ու մի օր չէ մի օր ռադիոհեռագիր կախեցին փողոցներում, թե Երևանի մեջ հեղափոխություն է, բոլշևիկները վռնդվել են, և կազմվել է նոր, խառը կառավարություն, որի գլուխն է դարձյալ Ալեքսանդրապոլի հաշտության հերոս Սիմոն Վրացյանը: Միայն այս անունը բավարար էր, որ մենք հասկանայինք, թե այս ձեռնարկության գլխավոր դիրիժորն էլ Դաշնակցությունն էր:

Ամեն ինչ տվել էր նա հայ ժողովրդին, մնում էր չարիքների հրեշավորագույնը՝ քաղաքացիական պատերազմը, և նա կանգ չէր առնում նույնիսկ այս սարսափի առաջ: Մինչև այժմ թուրքերն էին կոտորում հայերին, այժմ հայերը պիտի իրար կոտորեին, որպեսզի Վրացյանը նորից իր ձեռքն առնի այն թշվառ իշխանությունը:

Բոլոր հասկացող հայերը ողբում էին հայ ժողովրդի այս նոր դժբախտությունը, բայց ձայն հանել չէին կարող մենշևիկյան Վրաստանում, որովհետև սա իր փրկությունը որոնում էր Վրացյանի արկածախնդրության մեջ և ուրախացած հեռագրում էր Երևան. «Խփեցե՛ք թիկունքից»: Սակայն այս ակնկալությունը միանգամայն զուր էր: Խփել որևիցե մեկին, թեկուզ հենց թիկունքից, Վրացյանը չէր կարող, նրա ամբողջ քաջագործությունն այն էր եղել, որ դավադրորեն խրել էր դանակը իր հարազատ մոր՝ հայ ժողովրդի կրծքի մեջ: Եվ տեսնելով, որ Երևանի ապստամբությունից օգուտ չկա, դառնացած Նոյ Ժորդանիան իր ամբողջ մաղձը թափեց հայ ժողովրդի վրա Հիմնադիր Ժողովում արտասանած մի ճառի մեջ, որ հավիտենական նախատինք կլինի մի սոցիալիստ պարագլխի համար: Հայհոյելով հայերին՝ Վրաստանի դեմոկրատիկ հանրապետության նախագահը, իհարկե, ոչինչ չէր փրկում: Բոլշևիկյան թնդանոթներն արդեն ծեծում էին Թիֆլիսի դռները, ու թեև Նոյ Ժորդանիան մի այլ ճառի մեջ հավատացնում էր Հիմնադիր Ժողովին, թե Թիֆլիսն անառիկ է, թե դա Վերդենն է, որի մեջ բոլշևիզմը կգտնի իր գերեզմանը, բայց այդ խոսքերի վրայով երկու օր չանցած՝ կես գիշերին, մենշևիկյան բանակը լքեց Վրաստանի մայրաքաղաքը:

Հիշում եմ այդ ձյունառատ փետրվարյան առավոտը: Տիրում էր խոր լռություն, որ չարագուշակ էր թվում շատերին: Այդ այն ժամանակամիջոցն էր, երբ քաղաքում ո՛չ մենշևիկյան ուժ կար, ո՛չ բոլշևիկյան. կարող էր գլուխ բարձրացնել անիշխանությունը, մատնել քաղաքը ավարի: Ահագին մեծամասնությունը հավատացած էր (և հավատացրել էին մենշևիկները), թե, միևնույն է, անիշխանություն եթե չլինի էլ, բոլշևիկյան զինվորները քաղաք մտնելուն պես պիտի սկսեն կոտորել ու թալանել: Տարածվել էր անասելի երկյուղ: Պատուհանիս առջև կանգնած՝ ես տեսնում էի մարդկանց շարաններ, որոնք շտապում էին ազատել իրենց ստացվածքը: Ամեն մեկը կա՛մ ձեռքում կրում էր մեծամեծ կապոցներ, կա՛մ մշակների շալակին էր դրել ամբողջ բեռներ: Ամենքը գնում էին դեպի վերև, դեպի այն աղքատ թաղը, որ տարածված է Ս.Դավիթի սարի ստորոտում: Մի բան գիտեն ամենքը՝ բոլշևիկները չեն ձեռք տալիս աղքատներին: Ուստի ունևորը շտապում էր իր ինչքը ծածկել աղքատի տանը և այդպիսով ազատել: Շտապ էին, գնում էին հևիհև, որպեսզի ժամանակ չկորցնեն: Եվ այսպես՝ ամբողջ օրը…

Իսկ կեսօրից հետո Կարմիր բանակն արդեն Թիֆլիսում էր: Եվ ի՜նչ: Փոխանակ կոտորածի և կողոպուտի՝ բազմամարդ փողոցներ, միտինգներ, զվարթություն և ուրախություն: Շատերը արտասվում էին խանդաղատանքից: «Ռուս զորքը վերադարձավ»,- ասում էին նրանք՝ շրջապատելով զինվորներին, լսելով նրանց

պարզ, գյուղացիական խոսակցությունը։ Այս ճիշտ էր. ռուս զորքն էր վերադարձել, ռուս գյուղացին, մուժիկը՝ դարձյալ հրացանը բռնած։ Բայց այս նախկին զորքը չէր՝ ցարականը, կոպիտ, լուռ, անհաղորդակից։ Այժմ ռուս զինվորը խոսում էր, դատողություններ էր անում այնպես, որ նրան լսում էիր մեծ հաճությամբ։ Դաստիարակվել էր ռուս մուժիկը, հոգեպես կերպարանափոխվել էր, և այս որքա՜ն կարճ միջոցում… Ի՜նչ ձեռք է եղել այն ձեռքը, որ այսպես վերակազմել է ժողովրդական զանգվածներին, գիտակցություն դրել նրանց մեջ։

Պատերազմի պաշտամունքով չեն ապրում նրանք, այլ իրենց համարում են խաղաղ ու արդյունավորող կյանքի պահապաններ, շահագործվող բազմությունների զինվորներ, որոնք բերել են իսկապես նոր կարգեր, նոր կյանք, նոր գաղափարներ։ Միանգամից հասկանալի է դառնում ամբողջ հիմքն այն ահավոր ու ահռելի տակնուվրայության, որ կատարվեց ու վերջացավ Ռուսաստանում այս երեք տարիների ընթացքում։ Նոր ռեժիմ է. այդ նոր ռեժիմի մեջ ապրել և լա՛վ ապրել կարելի է, բայց միայն մի անողոք պայմանով… իմանալ՝ որ հինը պետք է քանդվի մինչև հիմքի վերջին քարը, որ նրանից ոչինչ չպիտի մնա։ Նոր սերունդ է այս, բերել է իր աշխատանքը, իր գաղափարները, իր շինարարությունը։ Խոսքը միայն սրանցն է։ Ով չի հաշտվում այս քանդումի հետ, ով չի հաշտվում այս վերաշինումի հետ, որ պիտի կատարվի նոր հիմքերի վրա, նրա առջև խելոքության մի հատ ճանապարհ կա՝ գնալ, հեռանալ ու՛ր որ ուզում է, ինչպես ուզում է… Այսպես է իրականության երկաթե օրենքը, և ի՞նչ դուրս կգա նրան ճակատ խփելուց, եթե ոչ գլուխ պատռելը։

Զարմանալի օրեր էին։ Կենդանություն, եռուզեռ, թեթևություն եք զգում կրծքի տակ, հեշտացել է շնչառությունը հենց միայն այն պատճառով, որ վերացել ու չքացել է այն նացիոնալիստական դժոխքը, որի մեջ տապակվում էինք մենք։ Այլևս այլազգի մարդիկ իրար գազանի պես չէին մտիկ տալիս՝ իրար հոշոտելու պատրաստ։ Մարդկանց մեջ փոխադարձ վստահություն, հավատ են ծնվում։ Եվ միայն այսքանը ի՜նչ մեծ նվաճում էր։ Կհասկանա միայն նա, ով տոչորվել է գազանային նացիոնալիզմի դժոխքի մեջ։

Ով ինչպես, բայց մենք՝ հայ գրողներս, զգում էինք, որ իսկապես նոր օր է բացվել մեզ համար։ Երբ Վրաստանը խորհրդայնացավ, Խորհրդային Հայաստանի դիվանագիտական ժամանակավոր ներկայացուցիչ էր Թիֆլիսում Սուրեն Երզնկյանը, որը և այդ կարևոր ժամանակամիջոցին շատ եռանդուն գործունեություն էր ծավալում։ Նրա լիազոր ներկայացուցիչն էր Արամայիս Երզնկյանը, ով աշխատում էր նույնպես մեծ եռանդով, անդուլ ու անդադար։ Երզնկյանների առաջին հոգսը եղավ հավաքել և կազմակերպել հայ գրականությունը, արվեստը, գիտությունը, պատրաստել նրանց համար տեղ ու կայան ստեղծագործող աշխատանքի համար։ Վերակենդանանում էր հայ գրողների ընկերությունը՝ մեր անմոռանալի Հովհաննես Թումանյանի նախագահությամբ։ Հիշում եմ մեր առաջին բազմամարդ և աշխույժ ընդհանուր ժողովն այժմյան Շահումյանի գրադարանի դահլիճում։

Եկավ Արամայիս Երզնկյանը և, ողջունելով մեծ հավաքումն, ասաց, որ բերել է մեզ ավետելու նոր սկզբունքներ։ Խորհրդային կարգը, որ նոր է հաստատվում Վրաստանի մեջ, իր հովանավորության տակ է առնում գրականությունը, արվեստը, գիտությունը։ Մեզանից պահանջվում է միայն աշխատանք։ Աշխատեցեք և ապրուստի մասին մի մտածեք, դուք կստանաք ձեր աշխատանքի վարձը պետությունից։ Հովհաննես Թումանյանը մի քանի խոսքով գրողների զգացմունքի թարգման հանդիսացավ՝ ասելով, որ՝ այո՛, ճիշտ է, որ հայ գրողներն առաջին անգամն են լսում այդպիսի սկզբունքներ։ Դրանք նոր են, բարերար և դուրս կբերեն հայոց գրականությունն այն աննախանձելի դրությունից, որի մեջ նա գտնվում էր մինչև այսօր։

Սկսվեցին եռուն, կազմակերպչական աշխատանքներ։ Մենք հաճախակի ժողովներ էինք անում, միանում էինք հայ երաժիշտների, նկարիչների և դերասանների հետ։ Մեզ խոստացել էին տալ հայոց ժողովարանի ամառային շինությունը, և մենք ճիշտ որ, կազմակերպեցինք այնտեղ առաջին երեկույթը, ուր հայ կոմունիստների կարկառուն դեմքերից մեկը՝ Պողոս Մակինցյանը, խոսեց գրականության մասին, ասաց, որ հայ գրողները մինչև այժմ եղել են հայ բուրժուաների ծաղրածուները, նրանց զվարճացնողները, այսուհետև պիտի դառնան անկախ և պատվավոր աշխատողներ, և նրանց կատարած գործը պետական գործ պիտի լինի։ Սակայն ժողովարանի շինության մեջ հաստատվել մեզ չհաջողվեց, և նույն Մակինցյանի՝ հայ գրականության այդ տաղանդավոր ներկայացուցչի անխոնջ ջանքերով էր, որ ստեղծվեց և կազմակերպվեց այժմյան Հայարտունը, ուր մի հարկի տակ միանում էին գրականությունը, երաժշտությունը, նկարչությունը և թատրոնը։ 1921 թվականը մեր Հայ գրողների ընկերության ամենաեռուն շրջաններից մեկն էր։ Մենք շարունակ ժողովներ էինք անում, կազմակերպչական հարցեր էինք ծեծում, նոր կանոնադրություն էինք մշակում և պատերազմական կոմունայի բոլոր արտոնություններն էինք վայելում։

Չեմ կարող չհիշատակել այստեղ մի մասնավոր, բայց շատ բնորոշ դեպք, որ ցույց է տալիս խորհրդային ռեժիմի վերաբերմունքը առհասարակ դեպի մտավոր գործունեությունը։ Դեռ նոր-նոր էր Թիֆլիսը կարմիր դարձել, իրիկնապահին մոտ ես գնում էի Հայ գրողների ընկերության ընդհանուր ժողովին, երբ բնակարանիս մուտքի մոտ հանդիպեցի երկու կարմիրբանակայինի, որոնք հայտնեցին, թե եկել են իրենց համար սենյակ վերցնելու։ Ես խնդրեցի նրանց ներս մտնել և տեսնել սենյակները, ու ինքս գնացի ժողովի։ Գիշերը վերադառնալիս ես համոզված էի, թե կգտնեմ երկու զինվորներին իմ բնակարանում։ Բայց եկա՝ ոչ ոք չկար։ Բանից դուրս եկավ, որ զինվորները, տեսնելով նախ իմ գրադարանը, որ գրավում է իմ փոքրիկ բնակարանի մեջ մի ամբողջ սենյակ, ապա մտնելով իմ սենյակը և տեսնելով սեղանիս վրա դարսված գրքերն ու թղթերը, հարցնում են փոքր աղջկանիցս, թե՝ հայրդ գրո՞ղ է, և ստանալով դրական պատասխան, գնում են՝ ասելով, թե չեն ուզում ինձ անհանգստացնել…

Բ

Բայց մինչ Թիֆլիսում նոր ժամանակի վաղ-վլվլուկներն էին ծավալվում, Հայաստանում բոլորված էր ազգամիջյան եղբայրասպան պատերազմը։ Համառ կռիվներ էին տեղի ունենում Երևանի հյուսիսային կողմերում. միևնույն ժողովրդի երկու հատվածները, իրար դեմ լցված անսահման կատաղությամբ, պատրաստվում էին իրար ոչնչացնել։ Կարմիր բանակի մասերը Վրաստանից ուղղվեցին դեպի այդ ընտանեկան պատերազմի դաշտը։ Ի՞նչ էր կատարվում Երևանի մեջ՝ հաստատապես ոչ ոք չգիտեր։ Թիֆլիսի հայկական շրջանակներում այն կարծիքն էր տիրում, թե Վրացյանն ու իր ընկերները չգիտեն, որ Վրաստանն արդեն գլխովին խորհրդայնացել է, որ մենշևիկները փախել են արտասահման, ուստի և շարունակում են կռվել՝ հույսերը դրած մենշևիկների օգնության վրա։ Այդ պատճառով որոշվեց մի պատվիրակություն ուղարկել Երևան՝ հաստատ տեղեկություններ հաղորդելու և համոզելու համար, թե դիմադրությունն այլևս ապարդյուն է։ Բայց պատվիրակության փոխարեն կարելի համարվեց ուղարկել միայն Հովհաննես Թումանյանին, որ և անհապաղ ճանապարհ ընկավ։ Վերադարձավ նա բավական ուշ, Վրացյանի արկածախնդրության վերջ դրվելուց հետո, և մի օր Հայարտան դահլիճում հանգամանորեն և փաստալից մի զեկուցում արավ նրա անդամների առջև։

Բանից դուրս եկավ, որ փետրվարյան ապստամբությունը Դաշնակցության ինքնասպանության վերջին գործողությունն էր եղել։ Դեռ նոր սարսափելի կերպով ջարդ ու փշուր եղած Քյազիմ Կարաբեքիր-փաշայից՝ դաշնակցական անխելք տղաները ձեռնարկել էին պատերազմելու արդեն Կարաբեքիրից շատ [ավելի] հզոր Ռուսաստանի դեմ։ Կապովի գժի մի գործ։ Հովհաննես Թումանյանին Վրացյանն ընդունել էր իբրև թշնամու և տնային բանտարկության էր ենթարկել՝ ասելով, թե նա վհատություն է մտցնում Հայաստանի փրկության կոմիտեի զորքերի մեջ։ «Հայաստանի փրկության կոմիտե»՝ այսպես էր իրեն հորջորջում Վրացյանի այս նոր կառավարությունը։ Ինչպե՞ս էր նա ուզում փրկել Հայաստանը։ Հովհաննես Թումանյանը բերել էր իր հետ Փրկության կոմիտեի օրգան «Անկախ Հայաստանի» մի քանի համարներ և երկար ընթերցումներ արավ նրանից։ Ընթերցումներ, որոնք ապշեցուցիչ տպավորություն թողին լսողների վրա։

Վատ թղթամոլի նման ամեն ինչ, նույնիսկ պատիվ տանուլ տված դաշնակցականները փոխանակ Ալեքսանդրապոլի խայտառակ դաշնագրից հետո գետինը մտնելու և անհայտանալու՝ հույսները հիմա դրել էին Կարաբեքիրի վրա և ուզում էին նրա հետ միանալ ու նրա հետ միասին կռվել Ռուսաստանի դեմ։ Ա՛յս եղանակով պիտի կատարվեր Հայաստանի ազատությունը։ Դաշնակցությունը մեղայական էր կարդում Թուրքիայի առաջ, դատապարտում ու նզովում էր իր ամբողջ անցյալը, իր պապերին ու սրբերին, իր հազարավոր նահատակներին։ «Մենք երեսուն տարի սխալված էինք՝ մեզ թշնամի համարելով օսմանցիությունը, - գրում էր «Անկախ Հայաստանը»,- մինչդեռ մեր իսկական թշնամին ռուսն է եղել, որից ազատվելու համար մենք պիտի միանայինք թուրքերի հետ»։

Հիշողությանս մեջ չի մնացել այդ հոդվածների ամբողջ բովանդակությունը։ Տալիս եմ հիմնական միտքը։ Հիշում եմ՝ մենք չէինք հավատում մեր ականջներին, այնքան զզվելի էին այդ մեղայականների լպիրշ դարձվածքները, այնքան ստոր էր այդ քծնող գետնաքարշությունը։ Երեսուն տարի ապրել իբրև հեղափոխական կուսակցություն և գալ հասնել այսքան նողկալի ցածության… Մարդու հավատը չէր գալիս, այնքան կոպիտ-շնական էր այս տեսարանը։ Եվ ի՜նչ։ Այս միայն լրագրական տեսություն չէր, այս մի թեորիա չմնաց, այլ, ինչպես իմացանք հետագա հաղորդագրություններից և տպված նամակներից, Վրացյանը այդպիսի մի ցնորամիտ առաջարկություն արել էր օսմանցիներին։ Բայց Կարաբեքիրը Վրացյան չէր, նա լավ գիտեր իր երկրի շահերը։ Դաշնակցական շեֆն էր, որ չէր կարողանում ըմբռնել, թե չկա այլևս մեկը, և չի կարող լինել մեկը, որ հավատ ընծայի իրեն և իր կուսակցությանը։ Չէր ըմբռնում և այն մանավանդ, որ եթե Թուրքիան ազատվել էր վերջնական խորտակումից, այդ միայն շնորհիվ Խորհրդային Ռուսաստանի օգնության էր, օգնություն, որին կարոտ էր Թուրքիան ե՛ւ այն ժամանակ, ե՛ւ հետո էլ, երկար ժամանակով։ Էլ ի՞նչը պիտի հարկադրեր, որ Թուրքիան հակառակ գնար իր այդ բարերարին։ Դաշնակցության սե՞րը։ Ո՜հ, բայց այստեղ այլևս ինչպես պահես ծիծաղդ, դառն հեգնական ծիծաղդ…

Թեև պատերազմն արդեն ամսից ավելի էր տիրում, բայց պարզ էր, որ Վրացյանի և ընկերների դրությունը հուսահատական էր, ուստի և հուսահատական էին նրանց ընդունած միջոցները։ Ինչպես հուսահատական էր օսմանցիներին դիմելը, հուսահատական էին և ժողովրդին մոլորեցնելու, խաբելու ճիգերը։ Այն ժամանակ, երբ Վրաստանում այլևս մի հատ դիմադրող մենշևիկ չէր մնացել, Երևանում հեռագրեր էին թխվում, թե մենշևիկները հաղթություններ են տանում, թե նրանց հետ բոլշևիկների դեմ կռվում են Անտանտի նավերը՝ ռմբակոծելով Սև ծովի ափերը։ Միաժամանակ դժբախտ ժողովրդին հուսահատական վճռականություն հաղորդելու համար հավատացնում էին, թե ռուս զինվորներն իրենց հետ ունեն և կացիններ և այդ կացիններով կոտորում են ժողովրդին, թե Թիֆլիսում այս կերպով ջարդել են 15 հազար մարդ, և ամբողջ Բեհբուդյան փողոցն այլևս գոյություն չունի։ Հովհաննես Թումանյանը պատմում էր, թե այս կացնի սարսափն այնքան մեծ է եղել, որ Աշտարակի կողմից մի քանի հարյուր ընտանիքներ փախել գնացել են, որ Արաքսն անցնեն և թուրքերի մոտ ապահովություն գտնեն։

Եվ հասկանալի է, որ երբ Կարմիր բանակի առաջխաղացումներն անկարելի է լինում կանգնեցնել, ամբողջ Երևանը և նրա շրջակա գյուղերը պոկվում են տեղից և փախչում Վրացյանի և նրա զորքի ետևից դեպի Զանգեզուր։ Փախչողների ընդհանուր թիվը, ինպես ասում են, հասնում էր 30-35 հազարի։ Մնացած փոքրաթիվ ժողովուրդը տեսավ Կարմիր բանակի մուտքը Երևան. տեսավ, որ նա կացիններ չունի, ոչ ոքի չի սպանում, ոչ ոքից բան չի խլում։ Եվ հանգստություն ու վստահություն տիրեց կիսով չափ ամայացած երկրում։ Հովհաննես Թումանյանը պատմում էր, թե այդ բանի մեջ մեծ դեր կատարել է Կարմիր բանակի կոմիսար Օրջոնիկիձեն։ Նա դատապարտել է

հայ կոմունիստների չափազանցությունները, որոնք դժգոհություն էին պատճառել ժողովրդին, և բաց է արել իր մի ճառի մեջ խորհրդային ռեժիմի իսկական պատկերը, որ բոլորովին չի ձգտում խլել ժողովրդից նրա ազգային ինքնուրույնությունը, այլ, ընդհակառակը, լայն հնարավորություն է տալիս զարգացնելու իր մշակութային արժեքները։

Դաշնակցական արկածախնդրությունը հիմա էլ կառչում էր Զանգեզուրի սարերից, որպեսզի այնտեղից պատերազմական գործողություններ սկսի խորհրդային Երևանի դեմ։ Վրացյանի հույսն այժմ Քյազիմ Կարաբեքիր-փաշայի վրայից թռել էր իրենց [կողմից] չափազանց փառաբանված, բայց վերջը հենց իր՝ Դաշնակցության կողմից դատապարտված «Սյունյաց սպարապետ» Նժդեհի վրա։ Բայց Երևանում կազմակերպվեց խորհրդային նոր կառավարություն, որի գլուխ անցավ Մոսկվայից նոր եկած և կոմունիստական գործիչների շարքերում անուն հանած Ալեքսանդր Մյասնիկյանը, որ մինչև այդ հայտնի էր իբրև շատ եռանդուն գրական գործիչ՝ Ալ. Մարտունի կեղծանվան տակ։ Նոր խորհրդային կառավարությունը սկսեց մի ուժեղ և եռուն գործունեություն, որի նպատակն էր ազատել քարուքանդ երկիրը քաղաքացիական պատերազմի վերջին հետքերից և վերականգնել շինարար ու խաղաղ կյանքի ընթացքը։

Առաջին կետին հասնելու համար արշավանք սկսվեց Զանգեզուրի վրա, և Նժդեհի զորքերը, անդադար ետ մղվելով, սեղմվեցին Արաքս գետին և անցան պարսկական հողը։ Վրացյանն իր ընկերներով շարունակեց իրեն համարել «հայոց կառավարություն» և այդ բարձրահնչյուն, բայց միանգամայն անշքացած տիտղոսով նստել Թավրիզում. լավ որ՝ իր հետ Երևանից փախցրել էր ժողովրդին պատկանող պետական հարստությունները։ Ճիշտ միևնույնն արել էին և Վրաստանի մենշևիկները, և Նոյ Ժորդանիայի կառավարությունն էլ ապաստան էր գտել Փարիզի մեջ։

Զանգեզուրը միացվեց Խորհրդային Հայաստանին։ Առանց այն էլ մի լեռնային աղքատ երկիր՝ այն քարուքանդ էր եղել չորս տարիներից ի վեր՝ կտրված լինելով աշխարհից և շարունակական կռիվների ասպարեզ դարձած, [այն] այժմ կարող էր միայն ծանր հոգսեր պատճառել Հայաստանի կառավարությանը։ Հարկավոր էին իսկապես հսկայական ջանքեր սովի և ավերումների հայրենիք դարձած մի այնպիսի երկրում, ինչպիսին ամբողջ Հայաստանն էր, բնականոն կյանքի նոր ծիլեր տնկելու համար։ Եվ այդ ջանքերին էր, որ ձեռնամուխ էր լինում Ալ. Մյասնիկյանի կառավարությունը։ Նախևառաջ նա ընդհանուր ներում հայտարարեց, և դրանից օգտվելով՝ Պարսկաստան փախած տասնյակ հազարներով մարդիկ հետզհետե վերադարձան խմբերով և իրենց աշխատանքները վերսկսեցին։ Սովի ու աղքատության դեմ պատերազմ էր սկսվում, և այդ բանի մեջ Հայաստանին եղբայրական օգնություն էին հասցնում հարևան խորհրդային հանրապետությունները (Ադրբեջան և Վրաստան), բայց մանավանդ Ռուսաստանը,

որ թեև ինքն էլ սաստիկ նեղված էր մեծ սովից, բայց և այնպես, միջոցներ էր գտնում լիաբուռն բաժիններ հանելու իր փոքրիկ եղբորը։ Հացի, շաքարի, նավթի, կտորեղենի պաշարներ էին մտնում Հայաստան։ Ամերիկական բարեգործությունն առաջվա պես ահագին օգնություն էր հասցնում որբերի և այրիների երկրին։

Ուտեստի ու հագուստի հոգածության հետ և նրանից ոչ պակաս չափերով հոգացվում էր և հոգևոր մշակույթի կարիքը։ Լուսավորության կոմիսար Աշոտ Հովհաննիսյանը սկիզբ էր դնում գրքերի, դպրոցական պիտույքների այն մեծամեծ գնումներին, որոնք խոշոր գումարներ էին կլանում, բայց փոխարենը լցնում էին Երևանը գրքերի, գործիքների, գեղարվեստական արտադրությունների անհուն հարստություններով։ Այդ գործը մեծ եռանդով շարունակում էր նրա հաջորդը՝ Պողոս Մակինցյանը, որի մեծ ջանքերի շնորհիվ Մոսկվայից Երևան էին փոխադրվում Լազարյան ճեմարանի հարստությունները, Էջմիածնի ձեռագրերն ու թանգարանը։ Այնպես որ, Երևանում հետզհետե իրար ետևից հրաշքի պես բսնում էին այնպիսի խոշոր հիմնարկություններ, որոնց մասին մինչև այդ մտածել անգամ չէր համարձակվել այդ դժբախտ քաղաքը՝ հանրային մեծ գրադարան, մեծ պատկերասրահ, թանգարան, պետական թատրոն՝ մշտական ներկայացումներով, համալսարան՝ բժշկական ֆակուլտետով և այլն, և այլն։

Հիշատակեմ, վերջապես, և ամենապատվավոր հանգամանքը. Հայաստանի կառավարությունն առաջինն էր Աշոտ Հովհաննիսյանի նախաձեռնությամբ, որ կենսաթոշակ էր հատկացնում հայ վաստակավոր գրողներին, գեղարվեստի գործիչներին, դերասաններին։ Կառավարության մյուս ճյուղերն էլ իրենց ձեռնահասության շրջանում կատարում են կարևոր աշխատանքներ՝ երկրի տնտեսական կարողությունը մեծացնելու համար։ Այս կողմից նշանավոր են մանավանդ հողագործության կոմիսարիատի (կոմիսար Արամայիս Երզնկյան) ջանքերը՝ գյուղատնտեսությունը զարգացնելու համար։ Ամենամեծ ուշադրություն գրավողը ոռոգման գործն է, որ Հայաստանի համար իսկապես կյանքի և մահվան հարց է։ Եվ Հայաստանի խորհրդայնացման սկզբից ծայր է առել ջրանցքաշինական մի եռանդ, որի նմանը Արարատյան նահանգը գուցե չի տեսել ուրարտական շրջանից ի վեր։

1921 թվականի օգոստոսին, ասել է՝ հազիվ չորս ամիս անցած այն օրից, երբ Դաշնակցությունը վերջին անգամ թոթափեց իր ոտքերի փոշին Երևանում և գնաց իր ախ ու վաշերով օտար հորիզոնները լցնելու, ես առիթ ունեցա Երևան գնալու։ Եվ ի՜նչ նմանություն անցյալ տարվա տեսածիս՝ հենց Թիֆլիսից սկսած։ Արդեն Կովկասյան Դաշնության (ֆեդերացիայի) հիմքերն էին դրվում. հաղորդակցության ճանապարհները միացված էին, ներքին մաքսատները՝ վերացված։ Մեր երկաթուղին առաջվանը չէ այլևս։ Անցնում ենք Սադախլոն, անցնում ենք Սանահինը, անցնում ենք Քոլագերանը, ամենքն էլ սովորական կայարաններ են և ոչ թե առաջվա տանջարանները։ Սահմանագլխային մղձավանջը վերացել է, ի՜նչ բախտ մանավանդ

տեղային ազգաբնակչության համար։ Փոխված է նաև դաշտային տեսարանը Հայաստանում։

Գյուղացին այլևս հրազենով չի գնում դաշտ՝ իր մանգաղն ու մաճը աշխատեցնելու համար։ Էջմիածնի կայարանում այլևս թնդանոթներ չկան։ Ուլուխանլուն այլևս թշնամի երկիր չէ։ Ամեն տեղ խաղաղ աշխատանքի հնարավորություն է տրված լիուլի։ Հայ ու թուրք իրար հանդիպում են, իրար հետ խոսում են, աշխատանք են կատարում, բայց արդեն ո՛չ սպանություն, իրար մորթելու աշխատանք։ Երկիրը յոթ տարուց ի վեր կարոտել էր շինարար աշխատանքի և այժմ աշխատում էր անհագ, ագահորեն։ Բայց դեռ շատ էին անցյալի արյունոտ ժառանգության մնացորդները։ Դեռ սոված ու մերկ մարդիկ շատ կային, դեռ անխնամ մնացած որբերը թափառում էին փողոցներում։ Կնքվեց Կարսի դաշնագիրը, որ վերահաստատեց Ալեքսանդրապոլի դաշնագրի սահմանները, և մենք զրկվեցինք նույնիսկ Անիից։

Փոքր էր Հայաստանը, այո՛, բայց ամրացվում էր, ապահովագրվում դժբախտ պատահարներից։ Առաջին ապահովությունն այն է, որ նրա սահմանների վրա նորից կանգնած է ռուս զինվորը։ Հետո գալիս է կոմունիստական կուսակցության խոշոր, ուղղակի հրաշալի գործը՝ Կովկասյան Ֆեդերացիան։ Կարելի՞ էր երևակայել մենշևիկի, մուսավաթականի, դաշնակցականի ժամանակ մի այսպիսի բան, որ թուրքը, հայը և վրացին ունենան միևնույն տնտեսական և արտաքին քաղաքականությունը՝ համերաշխության և փոխադարձության սկզբունքների վրա դրված։ Ասիական հողի վրա դրված այս մեծ, աննախադեպ հիմնարկությունը ֆեդերատիվ կենտրոն դարձրեց Թիֆլիսը, և Ալեքսանդր Մյասնիկյանն այնտեղ տեղափոխվեց՝ ավելի բարձր պաշտոնով, իսկ Հայաստանի կառավարության գլուխ անցավ Ս. Սրապիոնյանը (Լուկաշին), որի ղեկավարությամբ Հայաստանի վերաշինության գործը շարունակվում է նախկին եռանդով մինչև այսօր։

Անդրկովկասյան [այս] դաշինքով Հայաստանը պատյանավորվում էր մի անգամ ևս, և այս անգամ՝ վերջնականապես։ Իր ֆեդերացիայի հետ միասին նա դարձել է անդամ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության, որ բովանդակում է իր մեջ ամբողջ Ռուսաստանը։ Եվ ներկայումս նա պատիվ ունի [լինել] մեկն այն քաղաքական կազմակերպություններից, որոնք, չնայած իրենց փոքրության, անխոցելի են, քանի որ նրանց պաշտպանության համար կանգնած է 100 միլիոն ազգաբնակչություն ունեցող Ռուսաստանը։

Բայց այս արդեն այժմեություն է, չի կարող մտնել իմ հիշողությունների մեջ։

**Գ**

Այսպես գոյացավ Խորհրդային Հայաստանը և իր ձեռքն առավ հայ ժողովրդի այն հատվածի ճակատագիրը, որ նստած է իր պատմական հողի վրա։ Խորհրդային

իրականությունը ժխտումն է բոլոր հին իրականությունների։ Եվ նրա սկզբունքներն իրականացնելու համար հայ ժողովուրդը պետք ունի վերադաստիարակչական մեծ գործ կատարելու։ Հին խոսք է, թե առաջադիմության համար հարկավոր է ոչ միայն շատ բան սովորել, այլև շատ բան մոռանալ։ Մոռանալն առհասարակ ծանր աշխատանք է։ Բայց հայ ժողովրդի վերադաստիարակության համար մի շատ խոշոր և վերին աստիճանի կարևոր մոռացում պատրաստված է երեք տարիներից ի վեր տեղի ունեցող քստմնելի դեպքերով, որոնք ամենազարհուրելին են հայ ժողովրդի զարհուրելի ճակատագրի մեջ։

Այս դեպքերով խորտակվեց հայոց ազգային ֆետիշը, որ հայի բոլոր թշվառությունների պատճառն է եղել, այն է՝ կապիտալիստական Եվրոպայի պաշտամունքը։ Կոմունիստական պրոպագանդային շատ դժվարությամբ պիտի հաջողվեր սոսկ քարոզներով հայի քթից դուրս հանել այն հին Մողոքի մուխը, եթե հենց ինքը՝ Մողոքը՝ [այդ] գարշելի պաշտամունքը, իր կողմից գործադրած չլիներ ամեն ջանք ու աշխատանք։ Ահա՛ ինչպես կատարվեց այդ գործը։

Ես արդեն ասացի, որ Սևրի դաշնագրով իմպերիալիստական Անտանտը դրել էր հայերին այնպիսի մի բարձրության վրա, ուր նրանք երբեք չէին եղել։ Բայց Սևրի դաշնագիրը վերաբերվում էր Մերձավոր արևելքին, իսկ այդ Արևելքը միշտ եղել է արևմուտքցիների շահադիտական նիմֆոմանիան գրգռող։ Ամենից առաջ այս ընկնավորությամբ բռնվեց բանկիրների և բորսայականների Ֆրանսիան, այսինքն նրա կառավարությունը։ Սե՞ւրը, այո՛… Թուրքիան ոչնչացած է… Բայց կարելի՞ է ապրել առանց թուրքի, որ այնքան հլու և անհաշվագետ հարկատուն էր եղել մինչև այժմ… Եվ շահամոլությունը շտապեց թքել իր սեփական դեմքին, իր սեփական ստորագրության վրա։ Պետք է փոխել-փոփոխել Սևրը։ Անգլիան հակառակ է այդ բանին, որովհետև մեծագույն օգուտները Սևրի դաշնագրից ինքն էր ստանում։

Թուրքիայի մեջ մի ուժ էր մնացել՝ Մուստաֆա Քեմալ-փաշան. Անգլիան նրան ոչնչացնել է ուզում հույների ձեռքով, որոնց զինել է և պատերազմի հանել Զմյուռնիայի պատճառով։ Ֆրանկո-անգլիական մրցակցությունը սաստկանում է։ Ֆրանսիացիները վճռում են ուժեղացնել Մուստաֆա Քեմալին, որպեսզի նա հաղթի հույներին և դրանով ֆրանսիական շահերին նպաստող դրություն ստեղծի։ 1921թ. հոկտեմբերին ֆրանսիական կառավարության լիազոր Ֆրանկլեն Բույոնը գնում է Անկարա և գաղտնի պայմանագիր կապում Քեմալի հետ, որով Ֆրանսիան Թուրքիային է վերադարձնում Կիլիկիան, սահմանների նոր որոշում կայացնում Սիրիայի և Թուրքիայի միջև, Թուրքիայից ստանում կոնցեսիաներ, Մուստաֆա Քեմալին տալիս զենք, հագուստ, ռազմամթերք և զինվորական այլ պատկանելիքներ…

Սևրի դաշնագիրն արդեն պատռված էր։ Եվ հայերն ընկնում էին այն բարձունքներից, ուր նրանց դրել էին այդ դաշնագիրը ստորագրողները. ընկնում էին և

ջախջախվում։ Կիլիկիայի անակնկալ հանձնումը Թուրքիային՝ սարսափի էր մատնում նրա ամբողջ հայությանը, և 120 հազար հոգի փախչում էին նավերը, ցրվում աշխարհի բոլոր կողմերը կամ մնում նավերի ու նավակների վրա։ Երբ Ահարոնյանը դիվանագետի շողոքորթ լեզվով գնում էր վարչապետ Արիստիդ Բրիանի մոտ, սա շնական վեհանձնությամբ պատասխանում է, թե ինքը կարգադրություն է արել, որ հայ փախստականներին ընդունեն…

Սիրիայում։ Հիշեցե՛ք այս իսկ Բրիանին 1915-ին՝ հայկական կոտորածների ժամանակ, թե ի՛նչ խոստումներ էր անում և ի՛նչ լեզվով էր խոսում։ Հիշեցե՛ք հայասիրական հանդեսները, Անատոլ Ֆրանսին… Ո՛չ ոք, ո՛չ ոք դուրս չեկավ բողոքելու այս՝ արդեն ոչ թե թուրքական, այլ ֆրանսիական բարբարոսության դեմ… Հայերը կատարելապես լքված էին։ Նրանց արյան վրա այս վերջին վաճառքն էր, որ կատարում էր Ֆրանկլեն Բույոնը… Լուռ ու անտարբեր մնաց և Ամերիկան, թեև այնտեղ գոյություն ուներ նույնիսկ Հայաստանի անկախության ընկերություն, որի ղեկավարները ամերիկյան հայտնի պետական մարդիկ էին։ Ձայն-ծպտուն չհանեց նաև արդեն նախագահությունից ընկած Վիլսոնը։ Եվ սակայն, որքա՜ն վնասներ տվեց նա հայերին իր անպտուղ հայասիրությամբ։ Սևրի դաշնագրով տրված իրավունքով նա գծագրեց Հայաստանի սահմանները (գցելով նրանց մեջ և Տրապիզոնը) և դրանով որքան գրգռեց թուրքերին հայերի դեմ։

Ալեքսանդր Խատիսյանը ներկայացավ Ֆրանկլեն Բույոնին և հարցրեց, թե մի՞թե Ֆրանսիան լքում է Հայոց հարցը։ «Մենք սրիկաներ չենք,- պատասխանել էր նա, - որ լքենք հայերին, նրանց հարցը մնում է և կապ չունի Կիլիկիայի հետ»։ Հետագա դեպքերը ապացուցեցին, որ նրանք իսկապես սրիկաներ էին, որովհետև բոլորովին լքեցին հայերին։ Երբ ֆրանսիացի մի խումբ հասարակական և պետական գործիչներ դիմեցին Բրիանին հաջորդած Պուանկարեին և խնդրեցին պաշտպանել Հայոց հարցը, նա պատասխանեց աներևակայելի շնականությամբ (ցինիզմով). «Հայերը մեզ դաշնակիցներ են եղել, նրանց հարցը մենք կհանձնենք Ազգերի լիգային»։ Վիլսոնի հղացած, բայց այլանդակ վիժմունք դարձած այս հիմնարկությանը՝ Ազգերի լիգային, որ նույն ուժեղների, նույն Անգլիայի, Ֆրանսիայի ստրուկն էր։ Եվ ի՞նչ պատասխաներ նա, որ լավ լիներ։ «Հայոց հարցը,- ասաց,- քաղաքական հարց չէ, այլ բարեգործության հարց, իսկ մենք դրամական միջոցներ չունենք»։ Ահա՛ վերջիվերջո ինչ լեզու էր բանեցնում եվրոպական բուրժուազիան՝ ի՛նչ քաղաքական պահանջ, ի՛նչ հայրենիք, ի՛նչ դես, ի՛նչ դեն, մի քանի գրոշ կհասներ ձեզ ողորմություն, այն էլ չկա գրպանումս… հայդե՛։

1878 թվականից մինչև այս չարչիական թուքը… Համեցե՛ք…

Իսկ ինչպե՞ս էր Անգլիան։ Անգլիան սաստիկ զայրացավ Ֆրանկլեն Բույոնի կնքած պայմանագրի առիթով, բողոքեց նրա դեմ, բայց մի՛ կարծիք, թե այդ շանթերից և ամպրոպներից նույնիսկ մի հյուլե որևէ հարաբերություն ուներ Կիլիկիայի

հայության հարցի հետ։ Իսկ Սևրի դաշնագրով գոյություն առած Հայաստանն էլ արդեն Անգլիայի պետական մարդկանց համար դարձել էր մի եղջերվաքաղ (քիմեր)։ Լլոյդ Ջորջը Համայնքների պալատում Հայաստանի անունը տալիս էր հեգնական ժպիտով։ Իսկ արտաքին գործերի մինիստր Քերզոնը պարզապես ասում էր, թե հայերին չի տրվի այն ամենը, ինչ նշանակված է Սևրի դաշնագրում, այլ միայն մի «ազգային օջախ», [որի] էությունը մնում էր անորոշ։ Սա ցույց էր տալիս, որ անգլիական կառավարությունը որոշել էր քեմալական Թուրքիային բավարարություն տալ ի հաշիվ Հայաստանի։

Եվ արդյո՞ք պետք կա զարմանալու անհատների վրա, մի Քերզոնի, մի Լլոյդ Ջորջի վրա, երբ ամբողջ բուրժուական հասարակությունը ներկայացնող պառլամենտը, այն էլ այնքան գովված ու փառաբանված անգլիական պառլամենտը բարոյական ավելի մեծ արժեք չէր ներկայացնում, քան բոլոր այդ ստախոս ու խաբեբա բույոնները, բրիանները, պուանկարեները և բոլոր ուրիշները։ Ինձ մոտ բոլորովին պատահաբար մնացել է Կ.Պոլսի հայերեն թերթերից մեկը, ուր կա անգլիական պառլամենտի 1921թ. դեկտեմբերի 21-ի նիստի նկարագրությունը։ Խոսվում է Կիլիկիայի հայերի դրության մասին, մտցվում է առաջարկ, որ հայերը զոհ չդառնան ֆրանկո-թուրքական համաձայնության և պաշտպանված լինեն կոտորածից։ Տեղի ունեցած խոսակցություններից բերում եմ երկու կտոր։

«Այս առաջարկին վրա լորդ Ռոբերտ Սեսիլ ըսավ. «Պատերազմի պահուն թուրք կառավարությունը հայոց ազգին օժանդակության դիմեց՝ ըսելով, որ երբ այն բանը ընե, արժանի պիտի ըլլա ինքնավարության։ Հայերը ինքզինքնին դաշնակիցներու կողմնակից համարելով, մերժեցին այդ առաջարկը։ Ահա այս մերժումին վրա էր, որ ջարդելու ենթարկվեցան։ Պատերազմի պահուն մենք քանիցս հանձնառու եղած էինք Հայաստանի անկախությունն ընել մեր հաշտության պայմաններեն մին»։

[Այնուհետև] երեք տող ջնջված։

«Գաղթային նախարար մր. Չեմբերլեն. «Հայոց եղած հալածանքներուն և վայրագությանց հանդեպ զզվանք կը զգանք և այդ պատճառավ իսկ կը պարսավենք թուրք վարչությունը։ Մյուս կողմե՝ հարմար չէ, որ անգլիացի նախարարի մը իբր մտադրություն ըսած մեկ խոսքը իբր հանձնառություն մեկնվի։ Վարչապետը Թուրքիո առաջարկվելիք հաշտության պայմաններուն մեջ Հայաստանի ազատության և ապահովության մասին խոսած ըլլալով՝ ասիկա կը նկատեն Անգլիո կողմեն հանձնառություն մը։ Լորդ Սեսիլ այս մասին խոսած պահուն ըսավ, որ հայերը ասիկա նկատած են հանձնառություն մը, և եթե այսպիսի հանձնառություն մը չգտնվեր, հայ ազգը այժմ իր ենթարկված վտանգին ենթարկված չպիտի ըլլար։ Ես լորդ Սեսիլի այս կարծիքը ճիշտ չեմ գտներ… Նախարարի մը բերնեն ելած ամեն խոսք չի կրնար անգլիական կառավարության համար հանձնառություն նկատվիլ»։

Եվ պառլամենտը, այսինքն՝ իբր թե ամբողջ անգլիական ազգը լուռ համաձայնությամբ ընդունեց այս բացարձակ անհեթեթությունը՝ լոկ դեն շպրտելու համար իրեն [համար] զոհված մի փոքրիկ ու թշվառ ժողովրդի։

Ինչպե՞ս չկրկնել Լենինի խոսքերը՝ «բուրժուական հասարակության ծախու և փտած պառլամենտարիզմ»…

Այնուհետև բանը գնում է անգլիական պառլամենտի հավանած կարգով։ 1922-ի աշնանը Մուստաֆա Քեմալը ջարդում է դժբախտ հույներին, և Անգլիան շտապում է իսկույն ևեթ վաճառել իր այդ զոհերին, որոնց նա ինքն էր զինել ու կրակի մեջ նետել։ Զմյուռնիայի հույն ազգաբնակչությունը և հայ գաղութը ոչնչանում են։ Նորից փախստականներ՝ հարյուր հազարներով, նորից տագնապ ու թշվառություն, իսկ անգլիական և ֆրանսիական հոյակապ նավերը կանգնած են ծովեզրյա ջրերում և սարսափից խելագար դժբախտներից ո՛չ մեկին, ո՛չ մեկին օգնություն չեն անում, չեն փրկում…

Այսպիսով Ֆրանսիան հաղթություն է տանում Անգլիայի վրա Արևելքում։ Զինադադարի պայմանները որոշվեցին, Սևրի դաշնագիրը հայտարարվեց ոչնչացած։ Նոր դաշնագիր կնքելու համար կոնֆերանս հավաքվեց Լոնդոնում։ Ահարոնյանը գնաց այնտեղ, բայց նրան այլևս չընդունեցին իբրև դաշնակցող կողմ, ինչպես Սևրում էր։ Հայաստանի հարց [այլևս] չկար։ Զևը փրկած լինելու համար լորդ Քերզոնը խոսեց «հայկական օջախի» մասին, մի քանի ծամծմած, ապուշ բաներ ասաց։ Նույնիսկ այդ թշվառ գաղափարը ո՛չ ոքի կողմից պաշտպանություն չգտավ, Պուանկարեն էլ Բրիանի նման վաճառել էր «մեր դաշնակիցներին»։ Երբ Քերզոնը «հայկական օջախի» մասին էր ճառում, թուրքական պատվիրակը վեր կացավ և մեծ դժգոհությամբ դուրս գնաց՝ դուռը իր ետևից սաստիկ խփելով։ Բրիտանական առյուծը փախուստի դիմեց, և ամեն ինչ վերջացավ։ Հայերի մասին այլևս ո՛չ մի խոսք…

Ասում են, 700 հազարից պակաս չէ այն հայերի թիվը, որոնք փախան Կիլիկիայից, Զմյուռնիայից ու նրա շրջակայքներից, Մարմարա ծովի եզերքներից և Մուստաֆա Քեմալ-փաշայի ձեռքն անցած այլ տեղերից։ Այս բազմությունը ցաքուցրիվ է ընկել բոլոր հինգ աշխարհամասերում և այժմ ենթարկված է սուլթանական լծից էլ ավելի դժնդակ վիճակի։ Նրան արհամարհում են, հալածում են ամեն տեղ, ամեն կերպ խանգարում են, որ չկարողանա մի կտոր հաց աշխատել։ Ֆրանսիան Աֆրիկա է քշում իր հողի վրա կանգ առնող հայերին՝ գաղութներում ստրուկների պես աշխատեցնելու համար։ Անգլիայում հայ վաճառականներին արգելվում է գործակատարներ վերցնել փախստական հայերին։ Այսպես մեռնում և լուծվում է այդ 700 հազարանոց բազմությունն էլ…

Այժմ Թուրքահայաստան չկա։ Նա դարձել է մի վիթխարի գերեզման, որի վրա հավիտենական արձանագրված է՝ «Եվրոպայի զոհը»…

Քեմալական Թուրքիան Լոզանից վերադարձավ հաղթականի հովերով։ Ինքը՝ Քեմալը, մի ճառի մեջ պարծենում էր, թե չկա այլևս մեծ Հայաստան։ Այո՛, դա գաղտնիք չէ, Եվրոպան զոհեց Հայաստանը՝ թուրքերին գոհացնելու համար։ Բայց [Թուրքիայի համար] մխիթարությու՞ն է այս՝ Եգիպտոսը, Արաբիան, Պաղեստինը, Սիրիան և Միջագետքը կորցնելուց հետո։ Հայաստան չկա, բայց ի՛նչ է մնացել նախկին Թուրքիայից. Կ.Պոլիսն անգամ պաշտպանված սեփականություն չէ, որովհետև նեղուցները գտնվում են իրապես Անգլիայի և Ֆրանսիայի ձեռքին։ Ո՛չ, ինչու՞ պարծենալ։ Ավելի լավ չէ՞ ճշմարտությունը բաց անել, այն՝ որ Հայաստանն էլ, Թուրքիան էլ Եվրոպայի զոհերն են…

## Վերջաբան

Ես վերջացրի։

Վերջացրի այն մեծ աղետով, որ իր նմանը չունի մարդկային տարեգրությունների մեջ նոր ժամանակներում։ Այդ այն աղետն է, որ ոչնչացրեց հայ ժողովրդի խոշոր մի մասը, կեսը համարյա, քարտեզից քերեց նրա պատմական բնակավայրի մեծագույն մասը։ Տարերային աղետ, որ միմիայն մի անուն ունի՝ Եվրոպա։ Խորտակված է ամեն ինչ, և խորտակված է ամենից առաջ այն ամենը, ինչով ապրում էինք մենք մինչև երեկ։ Մինչև երեկ մեր առջև բացված ճանապարհները խցված ու անհետ կորած են միլիոնավոր դիակների լեռների տակ, մեր շինությունների ահռելի և ապաժույժ փլատակների տակ։

Բայց հայ ժողովուրդը, ինչքանը որ ազատվել է խորտակումից, պիտի նորից ապրի։ Նրա համար այլևս վերադարձ չկա դեպի երեկվա դրությունը, երբ նա պարզապես նշանակում էր մի ժողովուրդ, որին կարելի էր կոտորել անթիվ ու անհաշիվ, ինչպես ոչխարների։ Երեկը գնաց, կորավ անդառնալիորեն, փակեց և կնքեց մեր պատմության մի ամբողջ շրջանը՝ անեծքի դրոշմ ճխտելով նրա վրա։

Այսօր… Նորից պետք է սկսել ապրել, և ապրել ոչ միայն նորից, այլև նորովի։ Մեր խցված ու անեծքով խափանված ճանապարհների փոխարեն պիտի բացվեն նորերը։ Ծանր աշխատանք է, երկար աշխատանք է, ժայռեր պետք է շտկել, նրանց կրծքերի վրա արահետներ գծել։ Բայց նրանք կտանեն մեզ ուրիշ հովիտներ, ուր մենք կտեսնենք մեզ ուրիշ դրության մեջ։

Մինչև այժմ մենք հախուռն, անզգաստ «կայծողներ» էինք, ուզում էինք մենակ մեզ համար բախտ շինել, հոխորտում էինք մեր կուլտուրայով և նրանից իրավունք

ստացած էինք մեզ համարում մեր շրջապատից բարձր լինելու, ամենքի վրա տիրելու։ Երեկվա այս իրականությունը կորավ մեր խորտակման անդունդի մեջ։ Այսօր մենք տարվում ենք մի նոր աշխարհ, ուր մեզ ցույց են տալիս մեզ պատշաճ տեղը գործակից և աշխատակից ժողովուրդների շարքում՝ միասին, ընդհանուր ուժերով ընդհանուր ազատության համար։

Այսուհետև այս է միակ հնարավորը, միակ արդարն ու խելացին։ Այս րոպեիս մենք արդեն շատ նախապաշարմունքներից ենք ազատագրվել։ Գիտե՞ք, օրինակ, ի՛նչ ահագին բան է, որ մեր ֆետիշը վերջնականապես ջարդվել է մեր ոտքերի տակ, և մեզ խորին զզվանք է միայն պատճառում ոչ միայն իր ներկայով, այլև իր անցյալով։ Եթե կամենում եք, այս մի մեծ նվաճում է, թեև մենք այն ձեռք ենք բերել մեր ժողովրդի կեսը զոհ տալով։ Մենք սովորում ենք հասկանալ, որ մի Նիկոլայ ցար, մի Բրիան, մի Դեշանել, մի Պուանկարե, մի Սոլսբերի, մի Լլոյդ Ջորջ, մի Քերզոն ոչ մի բանով լավ չեն մի Աբդուլ-Համիդից, մի Մուհամմեդ Հինգերորդից, մի Թալեաթ-փաշայից, մի Էնվեր-փաշայից կամ մի Ջեմալ-փաշայից։ Շարունակենք բուժվել ուրիշ նախապաշարումներից ևս, և մենք շատ կհեշտացնենք ապագայի մեր աշխատանքը։

Արևելքը մի հատ մեծ դժբախտություն ունի՝ կրոնները։ Եթե մի օր նա ազատվի այդ հազարդարյա մղձավանջից, եթե մի օր նա ջախջախի իր վզին փաթաթված այդ հին ստրկության շղթաները, այն ժամանակ նրա բոլոր ազգերն իրար գիրկ կընկնեն, վերջապես կհասկանան, թե իրենց թշնամիները մի մտացածին Յահովե չէ, մի Քրիստոս չէ, մի Ալլահ չէ, ոչ էլ մի Ահուրա-Մազդա կամ Մելեք-Թաուզ, այլ այն մակաբույծները, որոնք ապրում են իրենց արյունով և հյութերով։ Այն ժամանակ Արևելքը կերթա ողջագուրելու Արևմուտքը։ Մենք նորից կհանդիպենք Եվրոպային միջազգային լայն պողոտայի վրա։ Բայց այդ արդեն մակաբույծների Եվրոպան չի լինի, այլ աշխատանքի Եվրոպան։ Իրենց գահերից սանդարամետ ուղարկված կլինեն բրիանների, քերզոնների նման արյան սովդաքարները, և աշխատանքն ամեն տեղ կունենա հաղթանակող մի դեմք, մի ձայն, մի հոգի։

Ինձ քիչ կյանք է մնացել։ Բայց քանի բերանումս լեզու կա, կուզեի, որ հայ ժողովուրդն ամուր ու անսասան կանգնած լիներ այդ ճանապարհին աշխատավորների հետ, ինքն էլ աշխատավոր, աշխատանքի անպարտելի հերոս։